



10

15-11-11

11-11-11

1901 4-10-1901

n 4

U.S. Census Bureau Report

1901 5-10-1901

1.459 1901

1901 19-1901

7643

1911

1911

1.6 sec, 13 cm. R<sub>1</sub>

R<sub>1</sub>, 13

237411 187-411 7117.11  
187-411 7117

up to 187-411 7117

J. P. G. L. G.

2004

Handwritten text in blue ink, possibly a signature or name, located in the upper right quadrant of the page.

Handwritten text in blue ink, possibly a date or number, located in the middle right area of the page.

5008

22  
6.79

4783 . . 214-CH

ԼՍՏՈՒԼԾԱՇՈՒՆՉ

ԳԻՐԻՔ

ՀԻՆ ԿՏԵԿՆՐԱՆՈՒ

ԵՐԵՅԵԱՆ ԲՆԵԳՐԷՆ ԹԵՐԳՄԱՆՈՒՆԵՐ

—————  
ՀԵՏՈՐ *Chroug*  
~~ԿՏԵԿՆՐԱՆՈՒ~~  
—————

Ի ՁՄԻՏ ԴԵՆՈՒ

Կ ԵՐԵՅԵՆԻ ԿՈՒԼԵԼՍՈՍ ԿՐԻՏԻՔԻ

1848





4738 - ակ

22 48.

Ա-79

## ՅԼՆԿ

ԳԻՐԿ	ԳԼՈՒԽ	ԵՐԵՍ
ՆՕՆՆԵՐՈՅ . . . . .	50 . . . . .	1
ԵՂԻՅ . . . . .	40 . . . . .	167
ՂԵՏԵՅԻՈՅ . . . . .	27 . . . . .	209
ԹՈՒՈՅ . . . . .	36 . . . . .	409
ԵՐԿՐՈՐԻ ՕՐԻՆԵՅ . . . . .	34 . . . . .	553





Հ Ե Ր Ա Ե Ի ՈՐ Ծ Ե Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ

Ե. Ես տպագրութեանս մէջ՝ տեղ տեղ բանին իմաստը բացատրելու համար բառեր աւելցուցինք, որոնք՝ բնագրին մէջը չստնուիրը իմացունելու համար՝ նօսք՝ զբով պահեցինք :

Բ. Իսկ մեր դրած ծանօթութիւնները ուր որ երկու կամ աւելի բառերու կրկնարարեցին՝ վերջի բառին վրայ աս նշանս (") դրինք :

Գ. Նաև Ե Հ Ո Ս Ե Յ անունը Երբայեքեկնին մէջը ճշմարիտ Եստուծոյ յատուկ անունը ըլլալով շատ անգամ Տ Լ Բ Թարգմանեցինք . բայց երբեմն ալ յարմար սեպեցինք նոյն անունը պահել աս Թարգմանութեանս մէջ, ժամաւանդ ուր որ հեթանոսներու բերնովը կրղուցուէր :

*Հայրազարեան Գրատարան*

Մարտի 11. Երբ Գրքի Երկր Երկր Երկր  
Կողմից Ե. Վեպեան. Երկր Երկր Երկր  
Երկր Երկր Երկր Երկր Երկր Երկր Երկր



9822-50



Գ Լ Ո Ւ Խ Ե

1 Երկնի ու երկրի, 3 լուսոյ, 6 Հաստատութեան ստեղծուիլը :  
9 Երկիրին ջուրերէն զատուիլը ու 11 պտղաբեր ըլլալը : 14 Երկին, լուսինին ու աստղերուն, 20 ձուկերուն և թռչուններուն, 24 ու գազաններուն և անասուններուն, 26 և Եստուծոյ պատկերով՝ մարդուն ստեղծուիլը : 29 կերակուրին որոշուիլը :

- 1 **Ս**կիզբէն Եստուած Երկինքը ու երկիրը ստեղծեց :
- 2 Եւ երկիրը անձև ու անկարգ էր, և անդունդին վրայ խաւար կար . ու Եստուծոյ Հոգին ջուրերուն վրայ կըլարժէր :
- 3 Եւ Եստուած ըսաւ .
- 4 Լոյս ըլլայ . ու լոյս եղաւ : Եւ Եստուած տեսաւ լոյսը որ բարի է . ու Եստուած լոյսը խաւարէն զատեց :
- 5 Եւ Եստուած լոյսին անունը Յորեկ՝ ու խաւարին անունը Գիշեր դրաւ . և իրիկուն ու առտու ըլլալով՝ առաջին օրը եղաւ : Եւ Եստուած ըսաւ . Զ յուրերուն մէջ տեղը Հաստատութիւն ըլլայ՝ որ ջուրերը ջուրերէն զատէ :
- 7 Եւ Եստուած Հաստատութիւնը ըսաւ, ու Հաստատութեան տակը եղած ջուրերը՝ Հաստատութեան վրայ եղած ջուրերէն զատեց . ու այնպէս եղաւ :
- 8 Եւ Եստուած Հաստատութիւնը Երկինք կոչեց . ու իրիկուն և առտու ըլլալով՝ երկրորդ օրը եղաւ :
- 9 Եւ Եստուած ըսաւ . Երկինքին

Ա. Երթուայն թուագրութի չոր երէկսկից  
հարս-չափէ և ծոխուցոյ շաւղած ստեղծի

տակը եղած ջուրերը մէկ տեղ ժողովուրն, ու ցա-  
մաքը տեսնուի՝ և այնպէս եղաւ : Եւ Ըս- 10  
տուած ցամաքին անունը Երկիր դրաւ, ու ջու-  
րերուն ժողովքը Պոպլեր կոչեց . և Ըստուած  
տեսաւ որ բարի է : Եւ ըսաւ Ըստուած . Եր- 11  
կիրը՝ կանանչ խոտ բուսցունէ, սերմ տուող  
խոտ, և իր տեսակին պէս պտուղ տուող պտղա-  
բեր ծառ՝ որ իր մէջը սերմ ունենայ երկրի վրայ .  
ու այնպէս եղաւ : Եւ երկիրը կանանչ խոտ՝ իր 12  
տեսակին պէս սերմ տուող՝ ու իր տեսակին պէս  
սերմ ունեցող պտղաբեր ծառ հանեց . ու Ըս-  
տուած տեսաւ որ բարի է : Եւ իրիկուն ու աւտու 13  
ըլլալով՝ երրորդ օրը եղաւ : Եւ ըսաւ Ըս- 14  
տուած . Երկինքին հաստատութեանը մէջ լու-  
սաւորներ ըլլան, որ ցորեկը գիշերէն զատեն .  
և նշաններու՝ ու աստիճաններու՝ և օրերու՝ ու տա-  
րիներու համար ըլլան . Եւ երկինքին հաստա- 15  
տութեանը մէջ լուսաւորելու համար ըլլան, որ  
երկրի վրայ լոյս տան . ու այնպէս եղաւ : Եւ 16  
Ըստուած երկու մեծ լուսաւորները բրաւ, մեծ՝  
լուսաւորը ցորեկին իշխելու համար՝ ու պզտիկ  
լուսաւորը գիշերին իշխելու համար . աստղերն  
ալ ըլլաւ : Եւ Ըստուած Երկինքին հաստա- 17  
տութեանը մէջ դրաւ զանանք, որ երկրի վրայ  
լոյս տան, Եւ ցորեկին ու գիշերին իշխեն, և 18  
լոյսը խաւարէն զատեն . ու Ըստուած տեսաւ  
որ բարի է : Եւ իրիկուն ու աւտու ըլլալով՝ 19  
չորրորդ օրը եղաւ : Եւ ըսաւ Ըստուած . Եւ 20  
բերը սողացող շնուոր կենդանիներ հանեն . և  
չորս խո ցաւակի ի վաւորաց և ի խորջուկ պ-  
կիւց Թթուրչու . յորս անձուր Բնչիւց և

Թռչունները երկրի վրայ՝ երկինքին հաստատու-

21 Թեանը երեսը Թռին : Եւ Եստուած ստեղծեց  
 մեծ կէտ ձուկ ր՝ և ամէն սողացող շնչաւոր կեն-  
 դանին՝ որ ջուրերը հանեցին իրենց տեսակին  
 պէս , ու ամէն թեաւոր Թռչունը իր տեսակին

22 պէս . և Եստուած տեսաւ որ բարի են : Եւ Ես-  
 տուած օրձնեց զանոնք՝ ըսելով . Ե՛ճեցէք , ու  
 շատցէք , և ծովերուն մէջը եղած ջուրերը լեցու-  
 ցէք . Թռչուններն ալ երկրի վրայ շատնան :

23 Եւ իրիկուն ու առաու ըլլալով՝ հինգերորդ

24 օրը եղաւ : Եւ ըսաւ Եստուած . Արկիրը Թո՛ղ  
 հանէ շնչաւոր կենդանի՝ իր տեսակին պէս . ան-  
 սուններ ու սողացողներ և երկրի գազաններ՝

25 իրենց տեսակին պէս . և այնպէս եղաւ : Եւ  
 Եստուած՝ երկրի գազանները իրենց տեսակին  
 պէս՝ և ընտանի անասունները իրենց տեսակին  
 պէս՝ և գեանի ամէն սողացողները իրենց տեսա-  
 կին պէս ըրաւ . ու Եստուած տեսաւ որ բարի

26 է : Եւ ըսաւ Եստուած . Մեր պատկերին ու  
 մեր նմանութեանը պէս մարդ ընենք , և ծովին  
 ձուկերուն ու երկինքին Թռչուններուն՝ և անա-  
 սուններուն ու բոլոր երկրին՝ և երկրի վրայ սո-

27 ղացող սղուններուն Թո՛ղ իշխէ : Եւ Եստուած  
 իր պատկերովը ստեղծեց մարդը . Եստուծոյ պատ-  
 կերով ստեղծեց զանիկայ . արու և էգ ստեղծեց

28 զանոնք : Եւ Եստուած օրձնեց զանոնք , ու Ես-  
 տուած անոնց ըսաւ . Ե՛ճեցէք , ու շատցէք ,  
 և երկիրը լեցուցէք , ու անոր տիրեցէք . և ծո-  
 վին ձուկերուն , ու երկինքին Թռչուններուն՝ և

անպակաս թիւս և թարգմանիչ :

1889 Յուլիոս 2: -

երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն իշխեցէք : Եւ ըսաւ Եստուած . Եհա՛ ձեզի տուի 29 բոլոր երկրի վրայ եղած ամէն սերմ ունեցող խոտը՝ ու ամէն ծառ՝ որուն մէջը սերմ տուող ծառի պտուղ կայ , ձեզի կերակուր պիտի ըլլայ . Եւ 30 երկրի ամէն գաղաններուն ու երկինքին բոլոր թռչուններուն՝ և երկրի վրայ բոլոր կենդանի շունչ ունեցող սողուններուն՝ ամէն կանանչ խոտը ուտելու համար պո՛ղ , և այնպէս եղաւ : Եւ Ես 31 տուած իր ամէն ըրածը տեսաւ , և ահա՛ շատ բարի էր : Եւ իրիկուն ու առտու ըլլալով՝ վեցերորդ օրը եղաւ :

## Գ Լ Ի

1 Հա՛ գատու թեան օրը . 4 Ստեղծագործութեան կերպը : 8 Եզեմին պարուէզը . 10 ու անկից ելած գետը : 17 Գիտութեան ծառոյն արգիլուիլը : 19 Ստեղծուածներուն անուանադրութիւնը . 21 Կնկան ստեղծուիլը , և ամուսնութեան հաստատուիլը :

Եւ երկինքը ու երկիրը՝ և անոնց ամէն զարդերը 1 կատարուեցաւ : Եւ Եստուած իր ըրած գործքերը 2 եօթներորդ օրը լմընցուց , ու եօթներորդ օրը հանգստացաւ իր ըրած բոլոր գործքերէն : Եւ օրջնեց Եստուած եօթներորդ օրը , ու սուրբ 3 ըրաւ ան . ինչու որ անոր մէջ հանգստացաւ Եստուած իր ամէն գործքերէն՝ որ ստեղծեց ու ըրաւ :

Եսոնք են երկինքին ու երկրին ծնունդն և 4 ըր՝ անոնց ստեղծուած ատենը , ան օրը որ Տէր Եստուած երկիրը ու երկինքը ըրաւ , Ու դաշտին 5 բոլոր բոյսերը՝ որ տակաւին երկրի վրայ եղած

- չէին, և դաշտին բոլոր խոտը՝ չբուսնելէն առաջ •  
ինչու որ Տէր Աստուած երկրի վրայ տակաւին  
անձրև բերած չէր, և գետինը գործելու մարդ  
6 չկար : Հասա երկրէն \* շոգի կելար, ու գետնի  
7 բոլոր երեսը կըջրէր : Աւ Տէր Աստուած գետ-  
նի հողէն շինեց մարդը, և անոր քիթին ծակե-  
րուն կենդանութեան շունչ փչեց, ու մարդը ապ-  
րող հոգի եղաւ :
- 8 Աւ Տէր Աստուած արեւելքին կողմը Ադեմին մէջ  
պարտէզ տնկեց, ու իր շինած մարդը հոն դրաւ :  
9 Աւ Տէր Աստուած գետնէն՝ տեսնալու հաճելի և  
ուտելու աղէկ ամէն ծառը՝ ու պարտէզին մէջ տե-  
ղը կենաց ծառը՝ և բարին ու չարը գիտնալուն  
10 ծառն ալ բուսցուց : Աւ պարտէզը ջրելու՝ Ադե-  
մէն գետ մը կելար, ու անկից չորս գլխու կրբաժ-  
11 նուէր : Այլին անունը Փիտոյն է • աս՝ Աելլատի  
12 բոլոր երկիրը կըպտըտի, որ հոն ոսկի կայ • Աւ  
ան երկրի ոսկին աղնիւ է • սուտակ ու գահանակ  
13 քար կայ հոն : Աւ երկրորդ գետին անունը Գե-  
14 հոյն է • աս՝ Քուշի բոլոր երկիրը կըպտըտի : Աւ  
երրորդ գետին անունը Տիգրիս է, աս՝ Ասորեստա-  
15 նի արեւելեան կողմը կերթայ : Աւ չորրորդ գետը  
Ափրատ է : Աւ Տէր Աստուած առաւ մարդը՝ ու  
Ադեմայ պարտէզին մէջը դրաւ, որ գործէ՝ ու պա-  
16 ճէ ան : Աւ Տէր Աստուած պատուիրեց մարդուն՝  
ըսելով • Պարտէզին ամէն ծառէն՝ համարձակ  
17 կեր • Բայց բարիի ու չարի գիտութեան ծառէն՝  
մի՛ ուտեր • քանզի անկից կերած օրդ անշուշտ  
պիտի մեռնիս :

\* Աւ՝ աղբուր :

Ալ ըսաւ Տէր Աստուած . Աղէկ չէ որ Ադամ 18  
 մինակ ըլլայ , անոր օգնական մը ընեմ իրեն յար-  
 մար : Ալ Տէր Աստուած դաշտին ամէն գազան 19  
 ները ու երկինքին բոլոր թռչունը հողէն ստեղ-  
 ծեց , և Ադամին առջևը բերաւ , որ տեսնայ՝ թէ  
 անոնց ի՞նչ անուն կրդնէ . և Ադամ՝ շնչաւոր  
 կենդանիի ի՞նչ անուն դրաւ նէ , ան եղաւ անոր  
 անունը : Ալ Ադամ ամէն անասուններուն ու եր- 20  
 կինքին թռչուններուն՝ և դաշտին բոլոր գազան-  
 ներուն անուններ դրաւ . բայց Ադամին՝ իրեն յար-  
 մար օգնական մը չգտնուեցաւ : Ալ Տէր Աստուած 21  
 Ադամին վրայ ծանր քուն մը բերաւ , ու անի-  
 կայ քնացաւ . և անոր կողին ոսկորներէն մէկը ա-  
 ռաւ , և անոր տեղը միս լեցուց : Ալ Տէր Աս- 22  
 տուած մարդէն առած կողին ոսկորը կնիկ շինեց ,  
 ու զանիկայ Ադամին բերաւ : Ալ Ադամ ըսաւ . 23  
 « Իմա ասիկայ՝ ոսկորէս ոսկոր , ու մարմինէս մար-  
 մին է . ասիկայ \* Անիկ կանչուի . ինչու որ էք † երի-  
 կէն առնուած է : Անոր համար էրիկը պիտի ձգէ 24  
 իր հայրը ու իր մայրը , և իր կնիկին կապուի . ու  
 մէկ մարմին ըլլան : Ալ Ադամ ու իր կնիկը եր- 25  
 կուքն ալ մերկ էին , ու չէին ամբշնար :

\* Եբբ . ԻՇԵ

† Եբբ . ԻՇ



## Գ Լ . Գ

1 Կնկանը օձէն խարուիլը . 6 Եղամբն ու իր կնոջը մեղքի մէջ իյնալը . 14 օձին անիծուիլը . 15 կնկանը Սերունդը , 16 Տարդկային սեռին պատիժը . 21 նախաստեղծներուն լաթերը . 22 անոնց դրախտէն վաճառուիլը :

- 1 **Ա**ւ Տէր Եստուծոյ ըրած դաշտի բոլոր գազաններէն աւելի խորամանկ էր օձը . ու կընիկին ըսաւ . Իբաւ Եստուած ըսա՛ւ՝ թէ , Պարտէզին ամէն ծառէն պիտի չուտէք : Աւ կնիկը օձին ըսաւ . Պարտէզին ծառերուն պտուղէն կուտն՝ք . Իայց Պարտէզին մէջ տեղը եղած ծառին պտուղէն՝ Եստուած ըսաւ . Ենկից մի՛ ուտէք , և անոր մի՛ դպչէք , որ չմեռնիք : Աւ օձը կնիկին ըսաւ . Չէ՛ թէ անշուշտ պիտի մեռնիք : Վանզի Եստուած գիտէ թէ ան օրը՝ որ ուտէք անկից , աչքերնիդ պիտի բացուի , և աստուածներու պէս պիտի ըլլաք՝ բարին ու չարը գիտնալով :
- 6 Աւ կնիկը տեսնալով որ ծառը աղէկ էր կերակուրի համար , և հաճելի աչքերու նայելուն համար , ու փափաքելի՞ իմաստուն ընելու՝ համար՝ առաւ անոր պտուղէն ու կերաւ . և իրեն հետ իր էրկանն
- 7 ալ տուաւ , և անիկոյ կերաւ : Աւ անոնց երկուքին աչքերը բացուեցան , ու մերկ ըլլալին գիտցան . և թուղի տերեւները կարեցին՝ ու իրենց
- 8 ծածկոցներ ըրին : Աւ ցորեկուան զով ատենը՝ պարտէզին մէջ պտըտող Տէր Եստուծոյ ձայնը լսեցին . և Եղամբ ու իր կնիկը Տէր Եստուծոյ երեսէն պարտէզին ծառերուն մէջը պահուեցան :

\* Աստ՝ տեսնալու .

Եւ Տէր Ետտուած Եղամբ կանչեց, ու ըսաւ անոր. 9  
 Ո՛ր ես : Եւ անիկայ ըսաւ. Պարտեզին մէջը քու 10  
 ձայնդ լսեցի, ու վախցայ. ինչու որ մերկ էի, ու  
 պահուեցայ : Եւ Ետտուած ըսաւ. Ո՛վ պատմեց 11  
 քեզի՞ քու մերկ ըլլալդ. արդեօք կերպի՞ր ան ծա-  
 ուէն՝ որ ես քեզի պատուիրեցի չուտել անկից : Եւ 12  
 Եղամբ ըսաւ. Ե՛ն կնիկը՝ որ ինձի հետ ըլլալու-  
 տուիր՝ ան ինձի տուաւ ծառէն, ու ես կերայ : Եւ 13  
 Տէր Ետտուած ըսաւ կնիկին. Ի՛նչ է աս քու ը-  
 րածդ. և կնիկը ըսաւ. Օճը իսխարեց, ու ես կե-  
 րայ : Եւ Տէր Ետտուած օձին ըսաւ. Ես ընելուդ 14  
 համար՝ ամէն անասուններէն և դաշտին ամէն գա-  
 զաններէն անի՞ծեալ ըլլաս. փորիդ վրայ քալես,  
 ու կեանքիդ բոլոր օրերը հող ուտես : Եւ քու կին 15  
 ու կնիկին մէջ տեղը՝ և քու կին սերունդիդ ու անոր  
 սերունդին մէջ տեղը՝ թշնամութիւն պիտի դնեմ.  
 ան քու գլուխդ պիտի ֆախջախէ, և դուն անոր  
 գարշապարը † խայթես : Եւ կնիկին ըսաւ. Վրու 16  
 յըլթեան ցաւերդ խիստ պիտի շատցունեմ, ցա-  
 ւով զաւակ ծնանիս. և էրկանդ շնորհանք ըլլաս, ու  
 անիկայ քու վրայդ իշխէ : Եւ ըսաւ Եղամբին. Ի՛նչ 17  
 քու կնիկիդ խօսքը մտիկ ընելուդ՝ և ան ծառէն  
 ուտելուդ համար՝ որուն վրայով պատուիրեցի քե-  
 զի՞ ըսելով, Չուտես անկից, երկիրը քու պատ-  
 ճառովդ անի՞ծեալ ըլլայ. կենացդ բոլոր օրերուն  
 մէջ նեղութիւնով ուտես անկից : Եւ փուշ ու 18  
 տառասակ բուսցունէ քեզի, և դաշտին խոտը ու-  
 տես : Երեսիդ քրտինքովը ուտես հացդ, մինչև 19

\* Ե՛ք : զարնէ

† Ե՛ք : զարնես

հող դառնալէ, քանզի անկից առնուեցար . ինչու որ հող էլէր դուն, և հող պիտի դառնաս :

20 Եւ Ադամ իր կնոջը անունը \* Եւայ դրաւ . ինչու որ ամէն կենդանու թիւն ունեցողներուն մայրը

21 անիկայ էր : Եւ Տէր Աստուած Ադամին ու իր կընկանը կաշիէ հանդերձներ շինեց, ու անոնց հագ-

22 ցուց : Եւ Տէր Աստուած ըսաւ . Ահա՛ Ադամ մեզմէ մէկին պէս եղաւ բարին ու չարը գիտնալու . և հիմա՛ չըլլայ որ իր ձեռքը երկնցունէ, ու կենաց ծառէն ալ առնէ, և ուտէ՝ ու ապրի յաւիտեան,

23 Ուստի Տէր Աստուած զանիկայ Ադեմի պարտէզէն դուրս ըրաւ երկիրը գործելու, ուրկից որ ինչ-

24 քը առնուեցաւ : Այսպէս վարնտեց Ադամը . և Ադեմի պարտէզին արեւելեան կողմէն քերովէները ու ամէն կողմ՝ դարձող բոցնդէն սուրը դրաւ կենաց ծառին ճամբան պահելու համար :

Գ Լ . Գ

1 Այսինին ու Հարէլին ծնունդը, արուեստը ու հաւատքը : 8 Հարէլին սպանուիլը . 11 Այսինին անիծուիլը : 17 Անուխ առաջին քաղաքը : 19 Ամէք ու իր երկու կնիկը, 25 Աէթին 26 ու Անուխին ծնանիլը :

1 Եւ Ադամ գիտցաւ իր Եւայ կնիկը, որ յղացաւ, ու † Այսինը ծնաւ, և ըսաւ . Մարդ ստացայ

2 Տէրոջմէն : Եւ դարձեալ անոր Հարէլ եղբայրը ծնաւ . և Հարէլ ոչխարի հովիւ էր, բայց Այսին երկիրը կըգործէր : Եւ եղաւ որ օրերը լըմնա-

\* ք կեանք

† ք ստացուած

Լուսն՝ Կային երկրի պտուղէն Տէրոջը ընծայ բե-  
 րաւ : Եւ Հարէլ՝ ինքն ալ իր ոչխարներուն առջի- 4  
 նեկներէն ու անոնց պարարաններէն բերաւ . և  
 Տէրը Հարէլին՝ ու անոր ընծային նայեցաւ :  
 Իսոյց Կայինին ու անոր ընծային չնայեցաւ . և 5  
 Կային խիստ բարկացաւ , ու երեսը կախեց : Եւ 6  
 Տէրը Կայինին ըսաւ . Ինչո՞ւ բարկացար , և ին-  
 չո՞ւ երեսդ կախեցիր : Թէ որ աղէկ ընես նէ , 7  
 ընդունելի չըլլա՞ր մի . և թէ որ աղէկ չընես  
 նէ , մեղքը դրանք քովը պառկած է . բայց անի-  
 կայ քեզի պիտի նազանդի , ու դուն անոր  
 պիտի իշխես :

Եւ Կային իր Հարէլ եղբօրը հետ խօսեցաւ . 8  
 և եղաւ որ ե՛րբ անոնք դաշտն էին՝ Կային իր Հար-  
 րէլ եղբօրը վրայ վազեց , ու սպաննեց զանիկայ :  
 Եւ Տէրը Կայինին ըսաւ . Եղբայրդ Հարէլը ո՞ւր 9  
 է : Եւ ան ըսաւ . Չեմ գիտեր . միթէ ես եղբօրս  
 պահապանն եմ : Եւ ըսաւ անոր . Ի՞նչ ըրիր . 10  
 եղբօրդ արիւնին ձայնը գետինէն ինծի կրբողոքէ :  
 Եւ Հիմա դուն անիծեալ ես երկիրէն , որ եղբօրդ 11  
 արիւնը քու ձեռքէդ ընդունելու՝ իր բերանը բա-  
 ցաւ : Երբոր երկիրը գործես՝ այսուհետեւ իր ար- 12  
 դիւնքը չտայ քեզի . երկրի մէջ փախստական ու  
 թափառական ըլլաս : Եւ Կային Տէրոջը ըսաւ . 13  
 \* Իմ պատիժս՝ կրելու կարողութենէս աւելի մեծ  
 է՝ : Եւ հա իս այսօր երկրին երեսէն վաճնանցիր , 14  
 և ես քու երեսէդ պիտի պահուիմ , և երկրի մէջ  
 փախստական ու թափառական պիտի ըլլամ .

\* Կ-Մ Մեղքս թողութիւն գտնալու չափէն աւելի մեծ է :

- և ըլլայ թէ՛ ո՛վ որ իս գտնայ , իս պիտի մեռցու-
- 15 նէ : Եւ Տէրը ըսաւ անոր . Ուրեմն ո՛վ որ Ասյի-
- նը սպաննէ , անկէց եօթնապատիկ վրէժ առ-
- նուի : Եւ Տէրը նշան մը դրաւ Ասյինն որ զին-
- քը գտնող մէկը չմեռցունէ զինքը :
- 16 Եւ Ասյին Տէրոջը առջեւն ելաւ , ու Եդեմի
- 17 արեւելեան կողմը՝ Ասյիդ երկիրը բնակեցաւ : Եւ
- Ասյին իր կնիկը զխոցաւ , ու անիկայ յղի եղաւ ,
- ու Ենուվքը ծնաւ . և քաղաք մը կը շինէր անու-
- րէնը , ու քաղաքին անունը՝ իր որդիին անունին
- 18 պէս Ենուվք դրաւ : Եւ Ենուվք՝ Քայերիդագը ծը-
- նաւ , և Քայերիդագ՝ Մայիէլը ծնաւ , ու Մայիէլ՝
- Մաթուսաղան ծնաւ , և Մաթուսաղա՝ Ղամէքը
- 19 ծնաւ : Եւ Ղամէք՝ իրեն երկու կնիկ առաւ . մէ-
- կին անունը Եդդա , ու մէկովին անունը Սելլի
- 20 էր : Եւ Եդդա ծնաւ Յօրէլը . որ ինքը վրաննե-
- 21 բու մէջ բնակող հովիւներուն հայրն էր : Եւ իլ
- եղբօրը անունը Յօբալ էր . որն որ բոլոր քնա-
- րահարներուն ու սրնգահարներուն հայրն էր :
- 22 Եւ Սելլան ալ թօթէլը ծնաւ , որ վարպետ պղն-
- ձագործ ու երկաթագործ էր : Եւ թօթէլին քոյրը
- 23՝ Առեմայ էր : Եւ Ղամէք իր կնիկներուն Եդդա-
- յին ու Սելլային ըսաւ . Չայնս լսեցէ՛ք ո՛վ Ղա-
- մէքի կնիկները՝ ականջ դրէ՛ք իմ խօսքիս . ինչու
- որ ես մարդ մը սպաննեցի ինձի վէրք , ու երի-
- 24 տասարդ մը՝ ինձի հարուստք ըլլալով : Թէ՛ որ
- Ասյինին համար եօթնապատիկ վրէժ առնուի
- Ղամէքին համար ալ եօթնասունն ու եօթը
- անգամ :

Եւ Մարտի տարձեալ իր կնիկը զխոցաւ, ու 25  
անիկայ զաւակ մը ծնաւ՝ և անոր անունը Պէթ  
դրաւ. ինչու որ ըստ, Եստուած ինձի կայի-  
նին մեռցուցած Հարէլին տեղը ուրիշ սերունդ  
մը տուաւ : Եւ Պէթ ալ զաւակ մը ծնաւ, ու 26  
անոր անունը Ենոյս դրաւ. անատենը սկսուե-  
ցաւ Տէրոջը անունը կանչել :

## Ի Լ . Ե

1 Եզգարանութիւն՝ Եղամբն մինչև Կոյ : 24 Ենովքին աստուած-  
ծաճաճոյ վարքը ու երկինքը փոխուից :

Եւ Եղամբն ազգարանութեան զիրքը . Ես 1  
տուած մարդը ստեղծած օրը՝ Եստուծոյ պատ-  
կերին պէս ստեղծեց զանիկայ . Երու և էգ ըս- 2  
տեղծեց զանոնք . և օր շնեց զանոնք, ու անոնց  
ստեղծուած օրը անոնց անունը † աղամ դրաւ :  
Եւ Մարտի Հարիւր երսուն տարի ապրեցաւ, 3  
և իր նմանութեամբը իր պատկերին պէս ըստ  
ծնաւ, և անոր անունը Պէթ դրաւ : Եւ Ե- 4  
ղամ Պէթը ծնանելէն ետքը՝ ութը Հարիւր  
տարի ապրեցաւ . և տղաքներ ու աղջիկներ ծը-  
նաւ : Եւ Մարտին ապրելուն բոլոր օրերը ինը 5  
Հարիւր երսուն տարի եղաւ . ու մեռաւ :

Եւ Պէթ Հարիւր Հինգ տարի ապրեցաւ, ու 6  
ծնաւ Ենոյսը : Եւ Պէթ Ենոյսը ծնանելէն ետ- 7  
քը՝ ութը Հարիւր եօթը տարի ապրեցաւ . և

\* ք դրուած :

† ք մարդ :

- 8 տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Սէթին բո-  
լոր օրերը ինը հարիւր տասներկու տարի եղաւ ,  
ու մեռաւ :
- 9 Եւ Ենուս իննսուն տարի ապրեցաւ , և Կայ-  
10 նանը ծնաւ : Եւ Ենուս Կայնանը ծնանելէն ետ-  
քը՝ ութը հարիւր տասնըհինգ տարի ապրեցաւ .
- 11 և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Ենուսին բո-  
լոր օրերը ինը հարիւր հինգ տարի եղաւ , ու մե-  
ռաւ :
- 12 Եւ Կայնան եօթանասուն տարի ապրեցաւ , ու  
13 ծնաւ Մաղաղիէլը : Եւ Կայնան Մաղաղիէլը ծնա-  
նելէն ետքը՝ ութը հարիւր քառսուն տարի ապ-  
14 րեցաւ . և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ  
Կայնանին բոլոր օրերը ինը հարիւր տասը տա-  
րի եղաւ , ու մեռաւ : <sup>==</sup>
- 15 Եւ Մաղաղիէլ վաթսունըհինգ տարի ապրե-  
16 ցաւ , և ծնաւ Յարեղը : Եւ Մաղաղիէլ Յա-  
րեղը ծնանելէն ետքը՝ ութը հարիւր երսուն  
17 տարի ապրեցաւ . և տղաքներ ու աղջիկներ ծնաւ :  
Եւ Մաղաղիէլին բոլոր օրերը ութը հարիւր  
իննսունըհինգ տարի եղաւ , ու մեռաւ :
- 18 Եւ Յարեղ հարիւր վաթսուններկու տարի  
19 ապրեցաւ , ու ծնաւ Ենուքը : Եւ Յարեղ Ե-  
նուքը ծնանելէն ետքը՝ ութը հարիւր տարի ապ-  
20 րեցաւ . և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ  
Յարեղին բոլոր օրերը ինը հարիւր վաթսուն  
երկու տարի եղաւ , ու մեռաւ :
- 21 Եւ Ենուքը վաթսունըհինգ տարի ապրեցաւ ,

ու ծնաւ Մաթուսաղան : Եւ Ենովք Մաթու- 22  
սաղան ծնանելէն ետքը՝ իրեք հարիւր տարի Ես-  
տուծոյ հետ քալեց . և տղաքներ ու աղջիկներ  
ծնաւ : Եւ Ենովքին բոլոր օրերը իրեք հարիւր 23  
վաթսուներհինգ տարի էր : Եւ Ենովք Եստուծոյ 24  
հետ քալեց , և չէր գտնուեր . ինչու որ Եստու-  
ած առաւ զանիկայ :

Եւ Մաթուսաղա հարիւր ութսունուեօթը 25  
տարի ապրեցաւ , ու ծնաւ Ղամէքը . Եւ Մա- 26  
թուսաղա Ղամէքը ծնանելէն ետքը՝ եօթը հա-  
րիւր ութսուներկու տարի ապրեցաւ . և տղաք-  
ներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Մաթուսաղային 27  
բոլոր օրերը ինը հարիւր վաթսուներկու տարի  
եղաւ , ու մեռաւ :

Եւ Ղամէք հարիւրութսուներկու տարի ապ- 28  
րեցաւ , ու տղայ մը ծնաւ . Եւ անոր անու- 29  
նը \*Նոյ դրաւ՝ ըսելով , Տէրոջը անիծած երկ-  
րին պատճառաւ՝ ասիկայ մեզ պիտի հանգստա-  
ցունէ մեր գործքերէն ու մեր ձեռքերուն աշխա-  
տութենէն : Եւ Ղամէք Նոյը ծնանելէն ետքը՝ 30  
հինգ հարիւր իննսուներհինգ տարի ապրեցաւ .  
և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Ղամէքին 31  
բոլոր օրերը եօթը հարիւր եօթանասունուե-  
թը տարի եղաւ , ու մեռաւ :

Եւ Նոյ հինգ հարիւր տարեկուն եղաւ , ու 32  
Նոյ ծնաւ Սեմը՝ Քամը ու Հարեթը :

\* Իմ հանգստութիւն :



Պ Լ . Օ

(Մարդոց շարութիւնը կը շատնայ և Մատուած ջրհեղեղը կը սպառնայ : 8 'Աոյ' Մատուծոյ առջևը շնորհք կը գտնայ : 14 Տարանին շինութիւնը :

- 1 **Ա** եղաւ որ երբ մարդիկ երկրի վրայ շատ-
- 2 նալ սկսեցին՝ ու իրենց աղջիկներ ծնան , Մա-
- տուծոյ զաւկըները մարդոց աղջիկներուն գեղե-
- ցիկ ըլլալը տեսնալով՝ ամէն իրենց ընտրածներէն՝
- 3 իրենց կնիկներ կ'առնէին : Աւ Տէրը ըսաւ . Իմ
- հոգիս միշտ մարդու վրայ պիտի շինայ . ինչու
- որ՝ անիկայ մարմին է . բայց անոր օրերը հարիւր
- 4 քսան տարի ըլլայ : Են օրերը երկրի մէջ հրս-
- կաններ կային . և անկից ետքն ալ Մատուծոյ
- զաւկըները երբոր մարդոց աղջիկներուն կը մըտ-
- նային՝ որոնք իրենց զուգորդէր կը ծնանէին , ա-
- տոնք 'ի վաղուց հետէ անուանի ու զօրաւոր էին :
- 5 Աւ Տէրը երբեք տեսաւ որ մարդոց շարութիւնը
- երկրի մէջ կը շատնար՝ և անոնց սրտին խորհուրդ-
- ներուն բոլոր գաղափարը միայն շար էին ամէն
- 6 օր , Տէրը երկրի վրայ մարդը ստեղծելուն՝ զըզ-
- 7 ջացաւ , ու իր սրտին մէջ տրտմեցաւ , Աւ ըսաւ .
- Աորանցունեմ մարդը՝ որ ստեղծեցի , մարդէն
- մինչև անասունները և սողացողները՝ ու երկին-
- քին թռչունները , ինչու որ զանոնք ստեղծելուս
- 8 կը զոջամ : Բայց 'Աոյ' Տէրոջը առջևը շնորհք
- գտաւ :
- 9 Ես է 'Աոյի' ծնունդը . 'Աոյ' իր սերունդին մէջը
- արդար ու կատարեալ մարդ մըն էր . 'Աոյ' Ես-

տուճոյ հետ քալեց : Աւ Նոյ ծնաւ իրեք որդի , 10  
 Սէմը՝ Քամը ու Յաբեթը : Աւ երկիրը Աս- 11  
 տուճոյ առջևը ապականեցաւ . ու երկիրը անի-  
 րաւութեամբ լեցուեցաւ : Աւ Աստուած երկրի 12  
 վրայ նայեցաւ , որ ահա ապականած էր . ինչու  
 որ՝ երկրի վրայ ամէն մարմին իր ճամբան աւրած  
 էր : Աւ Աստուած Նոյին ըսաւ . Բոլոր մար- 13  
 մինին վերջը հասած է իմ առջիւ . ինչու որ եր-  
 կիրը անոնց միջոցովը անիրաւութեամբ լեցուե-  
 ցաւ . և ահա ես զանոնք երկրի հետ պիտի աւ-  
 րեմ : Երդ՝ դուն քեզի խիժարեր փայտէն տա- 14  
 պան մը շինէ . տապանին մէջ խորշեր շինէ . և  
 զանիկայ ներսէն ու դուրսէն ձիւթով ծեփէ : Աւ 15  
 աս ձեռով շինես . Տապանին երկոյնութիւնը ի-  
 րեք հարիւր կանգուն՝ լայնութիւնը յիսուն կան-  
 գուն և բարձրութիւնը երսուն կանգուն ըլլայ :  
 Տապանին յարկը շինես , ու ան մէկ կանգունի 16  
 չափ լինցունես վերէն , և տապանին դուռը Զէ-  
 կողմէն դնես . ներքնատունով՝ միջնատունով ու  
 վերնատունով շինես ան : Աւ ես՝ ահա երկրի 17  
 վրայ ջրհեղեղ պիտի բերեմ , երկինքին տակը  
 կենդանութեան շունչ ունեցող բոլոր մարմինը  
 կորսնցունելու համար . երկրի մէջ ի՞նչ որ կայ  
 նէ՝ պիտի սատկի : Բայց քեզի հետ իմ ուխտս պի- 18  
 տի հաստատեմ , ու դուն տապանը մտնանս , դուն  
 ու քու որդիներդ՝ և կնիկդ ու որդիներուդ կնիկ-  
 ները քու հետդ : Աւ ամէն անասուններէն՝ ամէն 19  
 մարմինէն երկու երկու հատ տապանը բերես , որ  
 քեզի հետ ողջ մնան . արու և էգ ըլլան անոնք :

\* Սէմ պատուհան :

20 ԹՈՒՆՈՒՆՆԵՐԷՆ իրենց տեսակ ն պէս՝ և ընդունել  
անասուններէն իրենց տեսակին պէս, երկրի բո-  
լոր սողացողներէն իրենց տեսակին պէս՝ ամենէն  
երկու երկու հատ քեզի գան՝ ողջ մնալու համար :  
21 Եւ դուն ա՛ռ ամէն ուտելիքներէն՝ որ կուտվին, ու  
քովդ ժողվէ, որ քեզի ու անոնց ուտելիք ըլլայ :  
22 Եւ ըրաւ՝ ԱՅ՝ Աստուծոյ իրեն բոլոր պատուի-  
րածին պէս, այնպէս ըրաւ :

Գ Լ • Է

1 \*Այ իբ ընտանիքովը ու ամէն տեսակ կենդանիներով հասարակ  
կրմունէ : 17 \*Քհնդեղեղի սկիզբը և տեւը :

1 **Ա**՛ւ Տէրը ըսաւ՝ Ային • Գուն քու բոլոր տու-  
նովդ տապանը մտիր • Ինչու որ աս դարուս  
2 մէջ քեզ իմ առջև արդար տեսայ : Ամէն մա-  
քուր անասուններէն անննս քեզի եօթնական  
3 հատ արու և էգ • և անմաքուր անասուններէն  
երկու երկու հատ անննս արու և էգ : Երկինքին  
4 Թռչուններէն ալ եօթնական հատ անննս արու  
և էգ, բոլոր երկրի վրայ անննս սերունդը ողջ  
5 պահելու համար : Ինչու որ եօթը օրէն ետքը՝  
երկրի վրայ քառասուն օր ու քառասուն գիշեր անձ-  
րև պիտի տամ, և ամէն էակը՝ որ ըրի, երկրի  
6 վրայէն պիտի կորսնցունեմ : Եւ \*Այ՝ Տէրօջը ի-  
րեն բոլոր պատուիրածին պէս ըրաւ : Եւ ջրհեղեղը  
7 երկրի վրայ եզամ ատենը՝ \*Այ վից հարիւր տա-  
րեկան էր : Եւ \*Այ՝ ու իբ որդիները և իբ  
կնիկը ու իբ որդիներուն կնիկները իբ հետը ջր-

2\* L

05-22874



Հեղեղին պատճառաւը տապանը մտան : Մա- 8  
 քուր անասուններէն ու անմաքուր անասուննե-  
 րէն և թռչուններէն ու երկրի վրայ ամէն սո-  
 ղացողներէն , Չոյգ զոյգ արու և էգ տապանին 9  
 մէջ ‘Ային գացին , ինչպէս որ Մատուած ‘Ային  
 պատուիրած էր : Աւ եղաւ որ եօթը օրէն ետ- 10  
 քը՝ ջրհեղեղին ջուրերը երկրի վրայ եկան : ‘Ա- 11  
 յին կենացը վեցհարիւրերորդ տարին՝ երկրորդ  
 ամիսը՝ ամառն տասնուեօթներորդ օրը՝ նոյն օրը  
 մեծ անդունդին աղբիւրները ձեղքուեցաւ , ու եր-  
 կինքին պատուհանները բացուեցան . Աւ երկրի 12  
 վրայ քառսուն օր ու քառսուն գիշեր անձրև ե-  
 կաւ : Ղիշո՛ւնոյն օրը՝ ‘Այ և ‘Ային որդիները 13  
 Սէմ ու Քամ և Յարեթ՝ և ‘Ային կնիկը՝ ու  
 անոր որդիներուն իրեք կնիկները իրենց հետ  
 տապանը մտան . Անոնք՝ և բոլոր գազանները 14  
 իրենց տեսակին պէս՝ ու բոլոր ընդունի անա-  
 սունները իրենց տեսակին պէս՝ և երկրի վրայ  
 սողացող բոլոր սողունները իրենց տեսակին պէս՝  
 և բոլոր թռչունները իրենց տեսակին պէս՝ ամէն  
 տեսակ թեաւոր թռչուն . Աւ ամէն կենդա- 15  
 նութեան շունչ ունեցող մարմինէն երկերկու  
 հատ ‘Ային քով տապանը մտան : Աւ քառսու- 16  
 նը մտնողները՝ արու և էգ մտան ամէն մարմի-  
 նէն , ինչպէս որ Մատուած անոր պատուիրեր էր .  
 և Տէրը անոր ետեւէն քառսունը գոցեց : Աւ 17  
 երկրի վրայ քառսուն օր ջրհեղեղ եղաւ . և  
 ջուրերը շատցան , ու տապանը վերցուցին , և ան՝

- 18 երկրէն բարձրըցաւ : Աւ ջուրերը զօրացան , ու  
 խիստ շատցան երկրի վրայ . և տապանը ջու-  
 19 րերուն վրայ կը պտըտէր : Աւ ջուրերը երկրի  
 վրայ պինտ սաստիկ զօրացան , ու բոլոր երկին-  
 քին տակը եղած ամէն բարձր լեռները ծածկուե-  
 20 ցան : Թ ջուրերը տասներհինգ կանգուն վեր բարձ-  
 21 րացան , և լեռները ծածկուեցան : Աւ երկրի  
 վրայ շարժող ամէն մարմին՝ թէ՛ թռչուն՝ թէ՛  
 անասուն՝ թէ՛ գազան՝ և թէ՛ երկրի վրայ սո-  
 ղացող ամէն զեռուն՝ և ամէն մարդ մեռաւ :  
 22 Յամաքը եղած ան ամէնը՝ որ քիթին ծակը կեն-  
 դանութեան շունչ՝ ունէր ամէնն ալ մեռաւ :  
 23 Աւ երկրի երեսին վրայ ամէն մարմին կորսուե-  
 ցաւ , մարդէն մինչև անասունը՝ սողացողէն մին-  
 չև երկինքին թռչունը . և անոնք ջնջուեցան  
 երկրէն . ու մինակ՝ Աոյ մնաց և իրեն հետ տա-  
 24 պանին մէջ եղողները : Աւ ջուրերը երկրի վը-  
 րայ հարիւր յիսուն օր <sup>6</sup>բարձրացած մնացին՝ :

## ԳԼՈՒԽ Ը

1 Թ ջուրերը քաշուելով , 4 Տապանը Արարող լեռներուն վրայ  
 կը նստի : 7 Ազուարը և Աղաւնին : 15 'Աոյ' Աստուծոյ հրամա-  
 նով Տապանէն դուրս կելէ : 20 Սեղան շինելով՝ զո՛հ կը մա-  
 տուցանէ : 21 Եստուած ան զո՛հը կը նդունի , ու խօսք կուտայ  
 որ մէյ մէն ալ երկիրը շանիծէ :

- 1 Աւ Աստուած՝ 'Աոյը ու անոր հետ տապա-  
 նին մէջ եղած բոլոր կենդանիները ու անա-  
 սունները յիշեց . և Աստուած երկրի վրայ հով  
 2 մը հանեց , ու ջուրերը դադրեցան : Անդուն-

\* Աէր . զօրացան իմ զօրութիւն ունեցան :

դին աղբիւրներն ալ, ու երկինքին պատուհանները  
 զոցուեցան, և երկինքէն անձրևը կտրուե-  
 ցաւ : Աւ երկիրէն շարունակ ջուրերը կը քա- 3  
 շուէր, ու հարիւր յիսուն օրէն ետքը ջուրերը  
 քիչցան : Աւ եօթներորդ ամիսը՝ ամսուն տաս- 4  
 նուեօթներորդ օրը՝ տասանը Արարագ լեռնե-  
 րուն վրայ նստաւ : Աւ ջուրերը շարունակ կը 5  
 քիչնար մինչև տասներորդ ամիսը . և տասներորդ  
 ամիսին առաջին օրը՝ լեռներուն գլուխները երե-  
 ցան :

Աւ եղաւ որ քառսուն օրէն ետքը, 'Այ իր 6  
 շինած տասանին պատուհանը բացաւ . Աւ ազ- 7  
 ոաւը թող տուաւ, որ անդին առդին կը պտը-  
 տէր՝ մինչև երկրի վրայէն ջուրերուն ցամքիլը :  
 Աղանին ալ թող տուաւ, որ տեսնայ թէ ար- 8  
 դեօք երկրի վրայէն ջուրերը քիչցած է : Այց 9  
 աղանին իր ոտքին թաթը գնելու տեղ չգը-  
 տաւ, ու գէպի անոր՝ տասանը դարձաւ . ին-  
 չու որ բոլոր երկրի երեսը ջուրեր կային, անա-  
 տներ իր ձեռքը երկրնցուց ու առաւ զանիկայ,  
 ու իր քովը տասանը բերաւ : Աւ եօթը օր ալ 10  
 սպասեց, ու նորէն աղանին թող տուաւ : Աւ 11  
 իրիկուան դէմ աղանին իրեն կհաւ, և ահա իր  
 բերանը ձիթենիի վրցուցած տերև կար . ուստի  
 'Այ գիտցաւ որ ջուրերը երկրի վրայէն քիչցած  
 էր : Աւ եօթը օր ալ սպասեց, ու նորէն ա- 12  
 ղանին թող տուաւ, որ ալ մէյ մըն ալ իրեն  
 չդարձաւ :

- 12 Եւ եղաւ որ Վոյնն Էնայոլ վեց հարիւր ու մէկ տարիին առաջին ամիսին առջի օրը՝ ջուրերը երկրի վրայէն քաշուեցան . և Վոյ տապանին ծածկոցը վերցուց ու նայեցաւ , և ահա երկրի երեսը ցամ-
- 14 քեր էր : Եւ երկրորդ ամիսը՝ ամսուն քսանը-
- 15 եօթներորդ օրը երկիրը չորցաւ : Եւ Աստուած
- 16 խօսեցաւ Վոյին , ու ըսաւ . Տապանէն դուրս ելիք , դուն՝ ու քու կնիկդ և որդիներդ և քու որդի-
- 17 ներուդ կնիկները քեզի հետ : Քեզի հետ եղած ամէն կենդանին ամէն մարմինէն , թէ՛ թռչուն-
- նէրը՝ թէ՛ անասունները՝ և թէ՛ երկրի վրայ սողացող բոլոր զնուանները քու հետդ հանէ . և երկրի վրայ աճին , ու երկրի վրայ աւելնան , ու
- 18 շատնան : Եւ Վոյ ու իր որդիները և իր կնիկը ու իր որդիներուն կնիկները իր հետը ելան .
- 19 Ամէն անասուն և ամէն սողացող ու ամէն թռչուն՝ երկրի վրայ ամէն սողացողները իրենց տեսակին
- 20 պէս տապանէն ելան : Եւ Վոյ սեղան մը շինեց Տէրոջը , ու ամէն մարուք անասունէն և ամէն մարուք թռչունէն առաւ , ու սեղանին վրայ ող-
- 21 ջակեցներ մատուց : Եւ Տէրը անուշ հոտը հոտուրտաց , և Տէրը իր սրտին մէջը ըսաւ . Ալ մէյ մըն ալ մարդուն համար նորէն երկիրը պիտի չանիծեմ . \* թէև մարդուն սրտին խորհուրդը իր մանկութենէն չար է . ոչ ալ նորէն պիտի ջարդեմ ամէն կենդանի մարմինը ինչպէս որ ըրի :
- 22 Քանի՛ որ երկիրը կըմնայ՝ սերմ ու հունձք՝ ցուրտ ու տաքութիւն՝ ամառ ու ձմեռ՝ և ցորեկ ու գիշեր չպիտի դադարին :

\* Ամբ ինչու որ :

## Գ Լ . Թ

1 'Այլ Մատուցմէ կօրչուի : 5 Մարդասպանութեան սաստիկ  
արդիւրիւր : 8 Մատուցոյ ուխտը , և 13 իբրև անոր 'նշան' ա-  
ղեղը դրուիւր : 18 'Այլի սերունդը բազմանայր : 20 'Այլ այդի  
կրօնիէ ու 21 կրօնիսնայ , և իր 'Քամ' զաւկէն ծաղր կըլլայ .  
25 'Քանանը կանխուի : 26 Աէմին ու 27 Հարեթին օրչուի-  
ւր : 29 'Այլի մահը :

**Ա**ւ Մատուցմէ օրչուի 'Այլը ու անոր որդիներն 1  
ըրը , և ըսաւ անոնց . Աճեցէ՛ք ու շատցէ՛ք ,  
և երկիրը լեցուցէ՛ք : Աւ երկրի բոլոր անասունն 2  
ները ու երկինքին բոլոր թռչունները ձեզմէ դո-  
ղալով վախնան . անոնք՝ երկրի բոլոր սողացող-  
ներուն հետ ու ծովին բոլոր ձուկերուն հետ ձեռ-  
քերնիդ տրուած են : Ամէն շարժուն կենդանին 3  
ձեզի կերակուր ըլլայ . ամէնը ձեզի բանջարի պէս  
տուի : Բայց միայն ողջութիւնովը՝ իմ անոր արիւ- 4  
նովը չուտէ՛ք : Աւ անշուշտ ձեր կենացը համար՝ 5  
արիւննիդ պիտի խնդրեմ . ամէն դազանին ձեռ-  
քէն ու մարդուն ձեռքէն պիտի խնդրեմ ան , մար-  
դուն կեանքը եղբօրը ձեռքէն պիտի խնդրեմ :  
Ո՛վ որ մարդու արիւն կըթափէ , իր արիւնն 6  
աւ մարդէ պիտի թափուի . ինչո՛ւ որ՝ Մատուցմ  
իւ պատկերին պէս ստեղծեց մարդը : Աւ դուք 7  
աճեցէ՛ք ու շատցէ՛ք . երկիրը լեցուցէ՛ք , ու ա-  
նոր մէջ բազմացէ՛ք : Աւ Մատուցմ 'Այլին ու իր 8  
հետը եղած իր որդիներուն խօսեցաւ՝ ըսելով ,  
Աւ ես՝ ահա ձեզի հետ և ձեզմէ կտրը եղած 9  
ձեր սերունդին հետ իմ ուխտս պիտի հաստատեմ ,  
Աւ ձեզի հետ եղած ամէն շնչաւոր կենդանիին 10



- Հետ , Թէ՛ Թռչունին՝ Թէ՛ անասունին՝ և Թէ՛  
 ձեզի Հետ եղած երկրի ամէն գազանին Հետ՝ տա-  
 պանէն ելածներուն ամէնուն Հետ , քի՛ երկրի բո-
- 11 Ըր գազանին Հետ : Աւ ձեզի Հետ իմ ուխտս  
 պիտի հաստատեմ , որ մէյ մըն ալ ամէն մարմին  
 ջրհեղեղին ջուրերէն չկորսուի . ու ո՛չ ալ նո-
- 12 րէն ջրհեղեղ ըլլայ երկիրը աւրելու համար : Աւ  
 ըսաւ Եստուած . Իմ ու ձեր մէջը՝ և ձեզի Հետ  
 եղած ամէն շնչաւոր կենդանիին մէջը՝ յաւիտեան  
 իրենց ցեղին մէջ ըրած ուխտիս նշանը աս է :
- 13 Իմ աղեղս ամպին մէջ պիտի դնեմ , և ան պիտի  
 ըլլայ իմ ու երկրի մէջ տեղը եղած ուխտին
- 14 նշանը : Աւ ըլլայ որ՝ Երբ երկրի վրայ ամպ բե-
- 15 րեմ նէ , աղեղը ամպին մէջ պիտի տեսնուի . Աւ  
 իմ ու ձեր մէջ տեղը՝ ու ամէն մարմինէն ամէն  
 շնչաւոր կենդանիին մէջ տեղը եղած իմ ուխտս  
 պիտի յիշեմ . և մէյ մըն ալ ամէն մարմինը կոր-  
 սընցունելու համար՝ ջուրերը հեղեղ չպիտի ըլլայ :
- 16 Աւ աղեղը ամպին մէջ պիտի ըլլայ . ու քանի՛  
 որ տեսնեմ ան , Եստուծոյ՝ ու երկրի վրայ ե-  
 ղած ամէն մարմինէն բոլոր կենդանի անասունին
- 17 մէջ տեղը եղած ուխտը պիտի յիշեմ : Աւ Ես-  
 տուած՝ Առջին ըսաւ . Ե՛ս է ան ուխտին նշա-  
 նը՝ որն որ ես հաստատեցի իմ ու երկրի վրայ  
 եղած ամէն մարմինին մէջ տեղը :
- 18 Աւ՝ Առջին տապանէն ելած որդիները՝ Մեմ ,  
 Քամ , ու Յարեթ էին . և Քամ՝ Քանանու
- 19 հայրն էր . Առջին իրեք որդիները ասոնք էին ,

որոնցմէ բոլոր երկիրը տարածեցան : Եւ 'նոյ 20  
 սկսաւ երկիրը գործել . ու այգի տնկեց : Եւ 21  
 գինիէն խմեց , ու գինովեցաւ . և իր վրանին մէջ  
 տեղը մերկացաւ : Եւ Քանանու հայրը Քամ 22  
 իր հօրը մերկութիւնը տեսաւ , ու դուրս ելաւ  
 իր երկու եղբայրներուն պատմեց : Եւ Սէմ 23  
 ու Յարեթ հանդերձ առին ու իրենց ուսերուն  
 վրայ դրին , և ետ ետ երթալով իրենց հօրը մեր-  
 կութիւնը ծածկեցին . և իրենց երեսը ետեւին  
 դարձուցած ըլլալով՝ իրենց հօրը մերկութիւ-  
 նը չտեսան : Եւ 'նոյ իր գինիէն արթննալով՝ 24  
 իր պղտի տղուն իրեն ըրածը իմացաւ . Եւ ըսաւ . 25  
 Ընծեալ ըլլայ Քանանը . ծառաներու ծառայ  
 ըլլայ իր եղբայրներուն : Եւ ըսաւ . Օրհեալ 26  
 ըլլայ Սէմին Տէր Ըստուածը , և Քանան անոր  
 ծառան ըլլայ : Ըստուած թո՛ղ ընդարձակէ Յա- 27  
 բեթը , ու Սէմին վրանները բնակի՛ . և Քա-  
 նան \*անոր ծառան ըլլայ : Եւ 'նոյ ջրհեղեղէն 28  
 ետքը՝ իրեք հարիւր յիսուն տարի ապրեցաւ :  
 Եւ 'նոյին բոլոր օրերը ինը հարիւր յիսուն տա- 29  
 րի եղաւ , ու մեռաւ :

## Գ Լ . Ժ

1 'նոյի ազգաբանութիւնը : 2 Յարեթի զաւկըները : 6 Քամի  
 զաւկըները : 8 'նեբրովթ առաջին թագաւորը : 21 Սէմին  
 որդիքը :

Եւ 'նոյին որդւոցը Սէմին՝ Քամին ու Յա- 1  
 բեթին ազգաբանութիւնը աս է . և ջրհեղեղէն

\* Կամ՝ անոնց

- 2 ետքը անոնց որդիներ ծնաւ : Յարեթին որդիքը՝  
 Գամէր ու Սագօզ և Սադայ ու Յաւան և թու  
 3 բէլ ու Սոսոք և թիրաս էին : Եւ Գամէրին  
 որդիքը՝ Էսքանաս ու Րիփագ և թորգոմա էին :  
 4 Եւ Յաւանին որդիքը՝ Եղիսայ և թարսիս՝ Աի-  
 5 տիացիք ու \* Սողացիք էին : Եզգերուն կզգինե-  
 րը ամէն մէկը իր լեզուն պէս՝ ազգերուն մէջ  
 իրենց տոհմերովը ասոնցմէ բաժնուեցան :  
 6 Եւ Վամին որդիքը՝ Վուշ և Սեսորեմ  
 7 Փուդ և Վանան էին : Եւ Վուշին որդիքը Սա-  
 րայ և Եւիլայ ու Սարաթայ և Սեգմայ ու Սա-  
 րակաթայ էին : Եւ Սեգմային որդիքը Սարայ  
 8 և Յուդագան էին : Եւ Վուշ ծնաւ՝ Սերուլթը  
 9 ասիկայ սկսաւ զօրաւոր ըլլալ երկրի վրայ : Ետի-  
 կայ Տէրոջը առջեւ զօրաւոր որսորդ մըն էր :  
 Ընոր համար՝ կըսուի, Տէրոջը առջեւ՝ Սեր-  
 10 րուլթին պէս զօրաւոր որսորդ : Եւ իր թա-  
 զաւորութեան սկիզբը Բարիլոն և Երեզ ու  
 Եքադ և Վալանէ էր Սենաար երկրին մէջ :  
 11 Ըն երկիրէն † Ետրեստան գնաց, ու՝ Աինուէ և  
 12 Ստրուլթ քաղաքը՝ և Վաղանը շինեց . Աինուէ  
 ու Վաղանին մէջ տեղը Սէսէնն ալ շինեց . աս  
 13 մեծ քաղաք մըն էր : Եւ Սեսորեմ ծնաւ Ղու-  
 գիիմացիները ու Սենիիմացիները և Տաղբի-  
 14 մացիները ու՝ Ասիթաղիիմացիները . Եւ Պատ-  
 րոսոնիիմացիները ու Վասղոնիիմացիները, (ուր-  
 կից որ Վղըշտացիք ելան), և Ասիթաղիիմացիք ու :

\* Աս Վողացիք

† Եթէ . Ետր

Եւ Վանան ծնաւ իր առջինեկ զաւակը Սիդօնը 15  
 և \* Վեաացին , ու Յերուսացին և Ըմօրհացին 16  
 ու Գերգեսացին և Խեւսցին ու Երուսկացին և 17  
 Եննացին , Եւ Երազիոնացին ու Սամարա- 18  
 ցին և Ըմաթացին ծնաւ . անկից ետքը Վա-  
 նանացւոց ցեղերը տարածուեցան : Եւ Վանա-  
 նացւոց սահմանը Սիդօնէն Գերարա անցնելով 19  
 մինչև Գազայ՝ և Սոգամ ու Գամօր և Յազմայ՝  
 ու Սերոյիմէն մինչև Գասայ է : Եւ Վամին 20  
 որդիները իրենց առհմերովը՝ իրենց լեզուներովը  
 իրենց երկիրներուն ու սզգերուն մէջ ասոնք են :  
 Եւ Երեբրին բոլոր որդիներուն հոյրը՝ Յա- 21  
 բեթին մեծ եղբօրը Աէմին ալ որդիներ եղան :  
 Աէմին որդիները՝ Ելամ ու Եսուր և Երփաք- 22  
 սադ և Գուդ ու Երամ էին : Եւ Երամին 23  
 որդիները՝ Հուս և Հուլ ու Գադեր և Սաշ  
 էին : Եւ Երփաքսադ ծնաւ Սաղան . և Սաղայ 24  
 ծնաւ Երեբը : Եւ Երեբրին երկու որդի ծնաւ . 25  
 մէկուն անունը † փաղէկ էր . քանզի անոր օրերը  
 երկիրը բաժնուեցաւ . և անոր եղբօրը անունը  
 Յեկաան էր : Յեկաան ալ ծնաւ Եղմօդադը 26  
 և Սողեբը ու Եսարմօդը և Յարաբը , և Ոգո- 27  
 բամը ու Եղէլը և Գէկղան , և Գերաղը ու Ե- 28  
 բիմէլը և Սարեէին , և Ուփիրը ու Եւիղան և  
 Յօբաբը : Ըմէն ասոնք Յեկաանին որդիներն 29  
 են : Եւ ասոնց բնակուածիւնը եղաւ Սասերայէն 30  
 մինչև Սօփեր արևելեան լեռը : Աէմին որդիներն 31

\* Ս-Վեաոր ու Յերուսօն և Ըմօրհին ու Գերգեսօն և Խեւսին  
 ու Երբին և Եննին , Եւ Երփաօն ու Սամարին և Ըմաթին :

† Ի՞նչ բաժանուեց

րը իրենց առհմերովը՝ իրենց լեզուններովը՝ իրենց  
 երկիրներուն մէջ, իրենց ազգերովը ասոնք են :  
 32 'Առջին որդւոցը ցեղերը՝ իրենց ճնունդներուն  
 ու ազգերուն նայելով՝ ասոնք են . և ջրհեղե-  
 ղէն ետքը երկրի վրայ ազգերը ասոնցմէ տարա-  
 ծուեցան :

## Գ Լ . Ժ Ե

1 Եւտարհի մէջ ձեկ լեզու խօսուիլը : 3 Եւտարակաշինութիւն ,  
 և 6 լեզուներուն խօսանուիլը : 10 Սէփն ազգարանութիւնը :  
 27 Եւրամի հորը (ճարային ազգարանութիւնը : 31 (ճարան  
 Սերէն խօսան կերթայ :

- 1 Եւ ամէն երկրի լեզուն մէկ՝ ու խօսուածքը
- 2 մէկ էր : Եւ եղաւ որ՝ երբ արեւելքէն կը  
 շուէին , Սենաար երկրին մէջ դաշտ մը գտան ,
- 3 ու հոն բնակեցան : Եւ մէկգմէկու ըսին . Այլէք  
 աղիւսներ շինենք , ու անոնք կրակով եփենք :  
 Եւ աղիւսները անոնց քարի տեղ եղաւ , ու ձիւթը
- 4 անոնց ցելսի տեղ եղաւ : Եւ ըսին . Այլէք մե-  
 զի քաղաք մը ու աշտարակ մը շինենք , որ անոր  
 գլուխը մինչև երկինքը հասնի , և մեզի անուն ըս-  
 տանանք . չըլլայ որ՝ բոլոր երկրի վրայ ցրուինք :
- 5 Եւ Տէրը՝ մարդոց որդիներուն շինած քաղաքը
- 6 ու աշտարակը տեսնելու իջաւ : Եւ Տէրը ը-  
 սաւ . Եւհա ասոնք մէկ ժողովուրդ մըն են . ու ամէ-  
 նուն լեզուն մէկ է . և ասիկայ շինելու սկսեցին .  
 և հիմա ինչ որ շինել ուզեն , անոնցմէ չպիտի
- 7 արգելուի : Այլէք իջնանք , և անոնց լեզուն  
 հոն խառնենք , որ մէկգմէկու լեզուն չհասկընան :

Եւ Տէրը անկից բոլոր երկրի երեսը ցրուեց զա- 8  
նոնք . ու քաղաքը շինելէն դադրեցան : Ընոր 9  
համար անոր անունը \* Նարիլոն կոչուեցաւ .  
ինչու որ հոն Տէրը բոլոր երկրի լեզուն խառ-  
նեց , և Տէրը զանոնք անկից բոլոր երկրի երեսը  
ցրուեց :

Սէմին ազգաբանութիւնը աս է . Սէմը հարիւր 10  
տարեկան էր երբոր ծնաւ Արփաքսադը , ջրհե-  
ղեղէն երկու տարի ետքը : Եւ Սէմ Արփաք- 11  
սադը ծնանելէն ետքը՝ հինգ հարիւր տարի ապ-  
րեցաւ , և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ 12  
Արփաքսադ երսունհինգ տարի ապրեցաւ , ու  
ծնաւ Սաղան : Եւ Արփաքսադ Սաղան ծնանե- 13  
լէն ետքը՝ չորս հարիւր իրեք տարի ապրեցաւ ,  
և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Սաղա եր- 14  
սուն տարի ապրեցաւ , ու ծնաւ Երեբը : Եւ 15  
Սաղա Երեբը ծնանելէն ետքը՝ չորս հարիւր ի-  
րեք տարի ապրեցաւ , և տղաքներ ու աղջիկներ  
ծնաւ : Եւ Երեբ երսունը չորս տարի ապրեցաւ , 16  
ու ծնաւ Փաղէքը : Եւ Երեբ Փաղէքը ծնանե- 17  
լէն ետքը՝ չորս հարիւր երսուն տարի ապրե-  
ցաւ , և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Փա- 18  
ղէք երսուն տարի ապրեցաւ , ու ծնաւ Ռազա-  
ւը : Եւ Փաղէք Ռազաւը ծնանելէն ետքը՝ եր- 19  
կու հարիւր ինը տարի ապրեցաւ , և տղաքներ  
ու աղջիկներ ծնաւ : Եւ Ռազաւ երսուներկու 20  
տարի ապրեցաւ , ու ծնաւ Սերուքը : Եւ Ռա- 21  
զաւ Սերուքը ծնանելէն ետքը՝ երկու հարիւր  
եօթը տարի ապրեցաւ , և տղաքներ ու աղջիկ-

\* իս Խառնակութիւն

- 22 ներ ծնաւ : Եւ Սերուք երսուն տարի ապրե-  
 23 ցաւ , ու ծնաւ 'Սաքովորը : Եւ Սերուք 'Սաքով-  
 րը ծնանելէն ետքը՝ երկու հարիւր տարի ապրե-  
 24 ցաւ , և տղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ 'Սա-  
 քովը քսանուինը տարի ապրեցաւ , ու ծնաւ  
 25 Թարան : Եւ 'Սաքովը՝ Թարան ծնանելէն ետ-  
 քը՝ հարիւր տասնուինը տարի ապրեցաւ , և տը-  
 26 ղաքներ ու աղջիկներ ծնաւ : Եւ Թարայ եօ-  
 Թանասուն տարի ապրեցաւ , ու ծնաւ Երրամը՝  
 'Սաքովորը և Ըռանը :  
 27 Եւ Թարային ազգաբանութիւնը ասէ . Թարայ  
 ծնաւ Երրամը՝ 'Սաքովորը՝ ու Ըռանը . և Ըռան  
 28 ծնաւ Պոլտը : Եւ Ըռան մեռաւ իր հօրը Թա-  
 րային առջևը իր ծնած երկրին՝ Քաղզէացւոց  
 29 Ուր տաղաւին մէջ : Եւ Երրամ ու 'Սաքովը ի-  
 րենց կնիկներ առին . Երրամին կնոջը անունը  
 Սարայ՝ և 'Սաքովըին կնոջը անունը Մեղքայ էր  
 Ըռանին աղջիկը , որ Ըռան Մեղքային ու Յես-  
 30 քային հայրն էր : Եւ Սարայ ամուլ էր , ու  
 31 չէր ծնաներ : Եւ Թարայ իր որդին Երրամը  
 ու իր Թոռը Ըռանին որդին Պոլտը՝ և իր Եր-  
 րամ որդիին կնիկը՝ իր հարսը Սառան՝ ա-  
 ռաւ , ու անոնց հետ Քաղզէացւոց Ուր տաղա-  
 ւին ելաւ դէպի Քանան երկիրը երթալու հա-  
 մար . և եկան մինչև Խառանը , ու հոն բնա-  
 32 կեցան : Եւ Թարային օրերը երկու հարիւր  
 հինգ տարի եղան . ու Թարան Խառանին մէջ  
 մեռաւ :

## Գ Լ . Ժ Բ

1 Բառուած Եբրամը կը կանչէ , և Վրիստոսը խոստանալով՝  
կօրնէ զանիկայ : 4 Եբրամ՝ Ղովտին հետ խառանէն կերթայ .  
6 Վանանու երկրէն կանցնի . 7 Ես երկիրը տեսիլքի մէջ ի-  
րեն կը խոստացուի : 10 Սովի պատճառով Եբրամ՝ Կզիպտոս  
կերթայ . 11 Ղովտնալով իր կնկանը համար՝ ստութեամբ իր  
քոյրն է կրտէ : 14 Սարան իր քոյր բերել կուտայ Փարաւօն ,  
որ պատժուելով ետ կը վարձունէ :

Եւ Տէրը ըսաւ Եբրամին . Վրու երկիրէդ՝ և 1  
քու ազգականներէդ՝ ու քու հօրդ տունէն զը- 2  
նա՛նք երկիրը՝ որ ես քեզի պիտի ցուցնեմ . Եւ 3  
քեզ մեծ ազգ պիտի ընեմ , ու քեզ պիտի օրհնեմ ,  
և անունդ պիտի մեծցունեմ . ու դուն օրհնեալ  
պիտի ըլլաս : Եւ քեզ օրհնողները պիտի օրհ- 3  
նեմ , ու քեզ անիծողները պիտի անիծեմ . և  
երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին :  
Եւ Եբրամ՝ Տէրոջը իրեն ըսածին պէս՝ գնաց , 4  
Ղովտն ալ անոր հետը գնաց . և Եբրամ խա-  
ռանէն ելած ատենը եօթանասունըհինգ տարե-  
կան էր : Եւ Եբրամ իր կնիկը Սարան ու իր 5  
եղբօրը որդին՝ Ղովտը և իրենց բոլոր ստացուած-  
քը և խառանին մէջ իրենց ստացած հոգի- 6  
ները առաւ , ու Վանանու երկիրը երթալու  
եկան . և Վանանու երկիրը եկան : Եւ Եբրամ ան 6  
երկիրէն մինչև Սիւքեմին տեղը՝ Սօրէ կաղնին  
անցաւ . և անատենը Վանանացիները կային ան  
երկրին մէջ : Եւ Տէրը երևեցաւ Եբրամին՝ ու 7  
ըսաւ . Վրու սերունդիդ պիտի տամ աս երկի-  
րը : Եւ հոն ինքը սեղան շինեց Տէրոջը՝ որ ի-



- 8 բնն երեցաւ : Աւ անկից դէպի Բեթէլին արեւելեան կողմը եղած լեռը չուեց , ու իր վրանը բացաւ , Բեթէլը արեւմտեան կողմը՝ ու Անգէն արեւելեան կողմը «անհետացաւ» . և հոն Տէրոջը սեղան շինեց , ու Տէրոջը անունին աղաղակեց : Աւ
- 9 Աբրամ միշտ դէպի հարաւ կը չուէր :
- 10 Աւ ան երկրին մէջ սով կար , ու Աբրամ Ագիպտոս իջաւ հոն ատեն մը բնակելու համար .
- 11 ինչու որ ան երկրին մէջ սովը սաստիկ էր : Աւ եղաւ որ՝ երբ Ագիպտոս մտնալու մօտիկցաւ , իր կնոջը Սարային ըսաւ . Ահա՛ գիտեմ որ գունդեղեցիկ տեսքով կնիկ մըն ես . Աւ ըլլայ որ՝ երբ Ագիպտացիները քեզ տեսնան , ըսեն , Ասիկայ անոր կնիկն է , ու իս մեոցունեն՝ բայց քեզ ողջ թողուն : Անորհրէ՛ք ըրէ՛ք որքն եմ ըսէ .
- 12 անանկ որ՝ քուկին պատճառովդ ինձի աղէկ ըլլայ , ու քու պատճառովդ իմ անձս սպրի : Աւ եղաւ որ՝ երբ Աբրամ Ագիպտոս մտաւ , Ագիպտացիները տեսան կնիկը՝ որ շատ գեղեցիկ էր :
- 13 Փարաւօնին իշխաններն ալ տեսան , ու գովեցին անիկայ՝ Փարաւօնին առջևը . և Փարաւօնին
- 14 տունը անուեցաւ կնիկը : Աւ անոր համար Աբրամին պատիւ ըրաւ . ու անիկայ ոչխարներ ու արջառներ և էշեր ու ծառաներ և աղախիներ
- 15 ու էշ էշեր ու ուղտեր ունեցաւ : Աւ Տէրը պատճեց Փարաւօնը ու անոր տունը՝ մեծ պատիւ
- 16 ժով , Աբրամին կնոջը Սարային համար : Աւ Փարաւօն կանեց Աբրամը ու ըսաւ . Աս ի՞նչ

է քու ինծի ըրածդ . ինչո՞ւ ինծի չըսիր որ աս  
քու կնիկդ է . Ինչո՞ւ ըսիր որ՝ Եսիկայ քոյրս է . 19  
և շէշ հոսոյ որ անիկայ ինծի կնիկ պիտի առնէի ,  
բայց հիմա ասա՛ կնիկդ՝ ա՛ռ ու դնա՛ : Եւ Փա- 20  
բաւօն էր մարդոցը պատուիրեց անոր համար .  
ու անիկայ իր կնիկովը ու իր բոլոր ստացուած-  
քովը խրկեցին :

## Գ Լ . Ժ Գ

1 Երբամին ու Ղոլտին Եզիպտոսէն դառնալը : 7 Հոլիւնե-  
րուն անմիարանութեանը համար իրարմէ բաժնուիլը : 10  
Ղոլտին Սողոմ՝ Երթալը : 11 Երբամին եղած խոստմունքին  
նորոգութիւնը : 18 Երբամ՝ Վերբոն երթալով հոն Սեղան  
կըլինէ :

Եւ Երբամ իր կնիկովը և բոլոր իր ունեցած- 1  
ներովը՝ Եզիպտոսէն գէպի Վանանոս հարա-  
ւակողմը ելաւ , ու Ղոլտն ալ իր հետը : Եւ 2  
Երբամ շատ հարուստ էր անասունով՝ արծա-  
թով՝ ու ոսկիով : Եւ ճամբորդութեամբ գը- 3  
նաց հարաւային կողմէն մինչև Բեթէլ , ան տե-  
ղը՝ ուր էր առաջ իր վրանը , Բեթէլին ու Ըն- 4  
գէին մէջ տեղը . Ըն սեղանին տեղը՝ որն որ ա-  
ռաջ ըրեր էր . և Երբամ հոն Տէրոջը անու-  
նը կոչեց :

Եւ Երբամին հետ գացող Ղոլտն ալ՝ ոչխար- 5  
ներ ու արջառններ և վրաններ ունէր : Եւ ան 6  
երկիրը բաւական չէր անոնց մէկ տեղ բնակելու .  
ինչու որ անոնց ստացուածքը շատ ըլլալով՝ չէին  
կրնար մէկ տեղ բնակելու : Եւ Երբամին անա- 7

- առններուն հովիւներուն՝ ու Ղ ուլտին անասուն-  
 ներուն հովիւներուն մէջ տեղը՝ վէճ կար . և ան  
 ստենը Քանանացիները ու Փերէզացիները կը  
 8 բնակէին ան երկրին մէջ : Եւ Աբրամ Ղ ուլտին  
 ըսաւ . Կաղաչեմ քեզի , իմին ու քուկին մէջ տե-  
 ղը՝ և իմ հովիւներուս ու քու հովիւներուդ  
 մէջ տեղը վէճ չըլլայ . ինչո՛ւ որ մենք եղբայր ենք :  
 9 Բոլոր երկիրը քու առջևդ չէ՞ . Կաղաչեմ՝  
 զատուէ ինձմէ . թէ որ դուն ձախ կողմը եր-  
 թաս , ևս աջ կողմը կերթամ . և թէ որ աջ  
 10 կողմը երթաս , ևս ձախ կողմը կերթամ : Եւ  
 Ղ ուլտ իր աչքերը վեր վերցուց՝ ու Յորդանանու  
 ամէն կողմը նայեցաւ՝ որ ամէն տեղ ջրուած էր ,  
 Տէրը Սոդոմը ու Գոմորը կորսնցունելէն ա-  
 ռաջ՝ մինչև Օտորայ՝ Տէրոջը դրախտին պէս՝ Ե-  
 11 զիպատոսի երկրին պէս էր : Եւ Ղ ուլտ Յորդա-  
 նանու բոլոր կողմը բնարեց իրեն , ու դէպի ա-  
 12 րևելքը չուեց . և մէկզմէկէ զատուեցան : Աբ-  
 րամ Քանանու երկիրը բնակեցաւ . Ղ ուլտն ալ  
 դաշտի քաղաքներուն մէջ բնակեցաւ , ու իր  
 13 վրանը Սոդոմի քով բացաւ : Եւ Սոդոմի մար-  
 ղիկը պինտ չար ու մեղաւոր էին Տէրոջը առջևը :  
 14 Եւ Տէրը Աբրամին ըսաւ՝ Ղ ուլտը իրմէն զա-  
 տուելէն ետքը . Հիմա աչքերդ՝ վեր վերցուր ,  
 ու քու եղած տեղէդ դէպի հիւսիս և հարաւ՝ ու  
 դէպի արևելք ու արևմուտք նայէ՛ . Ինչու որ  
 15 ամէն երկիրը՝ որ կըտեսնաս , քեզի ու քու սե-  
 բունդդ երկրի փոշին պէս անլէ՛ւ պիտի ընեմ .

անսնկ որ՝ եթէ մէկը երկրի փոշին կրնայ համ-  
րել , քու սերունդդ ալ կը համրուի : Եւր 16  
ատ երկրին երկայնութեանը ու լայնութեանը  
պարտէ . քանզի ան՝ քեզի պիտի տամ : Եւ 17  
Երբամ վերցուց իր վրանը ու եկաւ և բնակեցաւ  
Մամբրէի կաղնիներուն մէջ . որ Վերբոնին  
մէջն է . և հոն սեղան շինեց Տէրօջը :

## Գ Լ . Ժ Գ

1 Չորս թագաւորներուն՝ հինգ թագաւորի հետ ըրած պատե-  
րազմը : 11 Ղովա դերի կառնուի , ու 14 Երբամ զանիկայ  
կը թալանէ : 18 Մելքիսեդեկ Երբամը կորնէ . 20 Երբամ ալ  
անոր տասանորդ կուտայ : 22 Եւսած աւարէն իր հետը եղողնե-  
րուն բամին տալէն ետքը , մնացածը Սոգոմի թագաւորին  
եւ կուտայ :

1 Եւ եղաւ որ՝ Սենաարին թագաւորը Ըմարիաղին 1  
Սելասարին թագաւորը Երիօքին՝ ու Եզամի  
թագաւորը Վոզողազոմբին և Գոյիմին թագա-  
ւորը թարգաղին ժամանակները . Եսոնք Սո- 2  
գոմին թագաւորը Բաղակին հետ՝ և Գոմորին  
թագաւորը Բարսոյին հետ՝ Եդամային թա-  
գաւորը Սենային հետ՝ և Սերոյիմին թագաւորը  
Պամբորին հետ՝ ու Բաղակին (այսինքն Սեգոմ-  
բին) թագաւորին հետ պատերազմեցան : Եսոնց 3  
ամէնքը հաւքուեցան Սիդդիմ ձորին մէջ՝ որ է  
Եղի ծով : Տասներկու տարի Վոզողազոմբ- 4  
ին ծառայութիւն ըրին , և երեքտասանե-  
րորդ տարիին ապստամբ եղան : Եւ չորեքտա- 5  
սաներորդ տարիին Վոզողազոմբ ու իր հետը  
եղած թագաւորները եկան , ու Եստարօթ կառ-

- նայիմին մէջ եղած Բէֆայեցիները՝ ու Համին  
 Քէջ Օւզեցիները՝ և Հաւէ Գիրեաթայիմին  
 6 մէջ Ոմիմնները՝ Եւ Վոռացիները իրենց Սէիր  
 լեռը՝ մինչև անապատին վրայ եղած \*ԼԶ Փա-  
 7 ասնը զարկին : Եւ դարձան , ու †ԼԶ Միշ-  
 փաթ (այսինքն Կադէս) եկան , և Ըմաղեկացւոց  
 բոլոր նահանգը՝ ու Ըսասանթամարին մէջ բը-  
 8 նակող Ըմօրհացիներն ալ զարկին : Եւ Սո-  
 դոմին թագաւորը ու Գոմնրին թագաւորը և  
 Ըդամային թագաւորը ու Սերոյիմին թագա-  
 ւորը և Բաղակին (այսինքն Սեգուլին) թագա-  
 ւորը ելան , ու Սիդդիմ ձորին մէջ անոնց հետ  
 պատերազմելու համար ճակատ ճակատի եկան ,  
 9 այսինքն Եղամի թագաւոր Վոդողազոմօրին հետ՝  
 և Գոյիմի թագաւոր Թարգաղին հետ՝ ու Սե-  
 նասարի թագաւոր Ըմարփաղին հետ՝ և Սելասարի  
 թագաւոր Ըրիօքին հետ՝ աս չորս թագաւորը  
 10 ան հինգին հետ : Եւ Սիդդիմ ձորը նաւթի  
 հորերով լեցուն էր , և Սոդոմին ու Գոմնրին  
 թագաւորները փախան , և հոն ինկան , ու մը-  
 11 նացածն բը լեռը փախան : Եւ անոնք Սոդո-  
 մին ու Գոմնրին ամէն բարիքը ու անոնց բոլոր  
 12 պսչարները առին ու գացին : Եւ Սոդոմին  
 մէջ բնակած Ըբրամին եղբօր որդին Ղուլտը՝ ու  
 անոր բոլոր բարիքը առին ու գացին :  
 13 Եւ փախստական մը եկաւ , ու Եբրայեցի  
 Ըբրամին պատմեց , և անկից Եսքողին ու  
 (Նանին եղբօրը Ըմօրհացի Սամբրէին կաղնի-

\* իմ փաստանին բեկնին

† իմ դատաստանի աղբիւր

ին տակը կրճնակէր . ինչու որ ասոնք Աբրամին  
 Հետ դաշինք բրած էին : Եւ Աբրամ երբոր իր 14  
 եղբօրը գերի առնուիլը ընց , իր տանը մէջ  
 ծնածներէն իրեք հարիւր տասնուութը հոգի ըս-  
 պառաղիննց , ու անոնց ետեէն ինկաւ մինչև  
 Վան : Եւ ինքը ու իր ծառաները գիշերանց 15  
 Գոնի գոնի բաժնուելով՝ անոնց վրայ գիմեցին ,  
 ու զարկին անոնք . և քչեցին անոնք մինչև Վո-  
 բաղը , որ Վամասիոսի հիւսիսային կողմն է :  
 Եւ բոլոր բարեքը ետ բերաւ . և իր եղբայրը 16  
 Ղովան ալ ու անոր բարեքը՝ և կնիկները ու  
 ժողովուրդն ալ ետ բերաւ :

Եւ ինքը՝ Վոգողազոմորը ու անոր Հետ եղած 17  
 Թագաւորները զարնելէն ու դառնալէն ետքը ,  
 Սոդոմի Թագաւորը զինքը զիմաւորելու ելաւ  
 դէպի Շաւէի ձորը՝ (այսինքն Թագաւորի ձորը) :  
 Եւ Սաղեմին Թագաւորը Սելքիսեղեկ՝ հաց ու 18  
 գինի հանեց . ու անիկոյ բարձրեալ Աստուծոյ  
 քահանան էր : Եւ օրնեց անիկոյ , ու ը- 19  
 սաւ . Օրնեալ ըլլաւ Աբրամ՝ երկնից ու երկ-  
 րի Տէր՝ բարձրեալ Աստուծմէն : Եւ օրնեալ 20  
 ըլլաւ բարձրեալ Աստուածը՝ որ քու թշնամի-  
 ներդ քու ձեռքդ մատնեց . և անիկոյ ամենէն  
 տասանորդ տուաւ անոր :

Եւ Սոդոմին Թագաւորը ըսաւ Աբրամին . 21  
 Մարդիկը ինձի տուր , ու բարեքը դուն քեզի  
 աւ : Եւ Աբրամ ըսաւ Սոդոմի Թագաւորին . 22  
 Երկնից ու երկրի Տէրնք բարձրեալ Տէր Աս-  
 տուծոյ վերցուցի իմ ձեռքս , Ար գերձանէն 23

մինչև կօշիկին կապը մնալով բան մը չպիտի առնեմ ինչ որ քուկդ է , որ չըլլայ թէ՛ Եբրամը 24 ես հարստացուցի ըսես . Բաց ՚ի տղաքներուն կերածէն՝ ու ինծի հետ եկող մարդոցը՝ այսինքն Օնանին և Կսթողին ու Սամբրէին բաժիններէն . թո՛ղ անոնք իրենց բաժինը առնեն :

Գ Լ . Ժ Ե

1 Եստուած՝ Եբրամը կը բաժնաւորէ : 2 Եբրամ՝ անորդի ընտանին համար կը գանգատի : 3 Եստուած Եբրամին զաւակ մը տալու , ու նաև անոր սերունդը շատցունելու կը խոստանայ : 4 Եբրամին հաւատարմով արգարանայը : 5 Վանանու երկիրը նորէն իրեն կը խոստացուի նշանով մը , 12 և ստիւգով :

- 1 **Ե**ս բաներէն ետքը , տեսիլքի մէջ Տէրոջը խօսքը եղաւ Եբրամին , ըսելով . **Մ**ի վախնայ ո՛վ Եբրամ , ես քեզի հովանի եմ , «- քու վարձքըդ խիստ շատ պիտի ըլլայ : **Ե**ւ ըսաւ Եբրամ . **Ո՛վ Տէր Եստուած** , ես քանի՛ որ առանց զաւակի կըմնամ՝ և տունիս տիրողը աս **Վա. մասկացի Կղեազարն** է , ինծի ինչ պիտի տաս :
- 3 **Ե**ւ ըսաւ Եբրամ . որովհետև ինծի սերունդ չտուիր , ահա՛ տունիս ծառան ինծի ժառանգ կըլլայ : **Ե**ւ ահա՛ Տէրոջը խօսքը եկաւ իրեն ըսելով . **Ընիկայ քեզի ժառանգ պիտի չըլլայ . բայց ան պիտի ըլլայ քու ժառանգդ՝ որ քու մէջքէդ պիտի ելլայ :** **Ե**ւ դուրս հանել զանիկայ , ու ըսաւ . **Հիմա դէպի երկինքը նայ՝ ու աստղերը համրէ՛ , թէ որ զանոնք համրելու կարող ես . և ըսաւ անոր . Քու սերունդդ ա.**

սանկ պիտի ըլլայ : Եւ անիկայ հաւատաց 6  
 Տէրոջը , որ անոր արդարութիւն ըլլալ սեպեց :  
 Եւ ըսաւ անոր . Ես եմ Տէրը՝ որ քեզ 7  
 Քաղղէացեաց Ուր Կողմէն հանեցի՝ աս երկիրը  
 քեզի ժառանգութիւն տալու համար : Եւ 8  
 անիկայ ըսաւ . Ո՛վ Տէր Եստուած , ի՞նչպէս  
 դիտնամ՝ թէ ես ան պիտի ժառանգեմ : Եւ ը- 9  
 սաւ անոր . Ինծի՛ իրեք տարեկան երինջ մը ու  
 իրեք տարեկան սյծ մը և իրեք տարեկան խոյ  
 մը ու տատրակ մը և աղաւնիի ձագ մը ա՛ռ :  
 Եւ անիկայ առաւ իրեն բոլոր ասոնք , ու ասոնց 10  
 մէջ տեղերնուն կտրեց , և ամէն մէկ կտորը իր մա-  
 սին հետ դիմացէ՛ դիմաց դրաւ . բայց թըռ-  
 չունները չկտրեց : Եւ երբ դիերուն վրայ թըռ- 11  
 չունները իջան , Երբամ վաճառեց զանոնք :  
 Եւ երբոր արեւը մարը կըմանար , Երբամին վը- 12  
 բայ խորունկ քուն մը իջաւ . և ահա անոր վրայ  
 մեծ մթութեան վախ մը ինկաւ : Եւ \*ձայն 13  
 մը եկաւ՝ Երբամին . Ստոյգ գիտցի՛ր որ քու  
 սերունդդ իրենցը չեղած երկրին մէջ պան-  
 դուխտ պիտի ըլլան , և ծառայութիւն պիտի ը-  
 նեն , ու հոն չորս հարիւր տարի պիտի շարձարեն  
 զանոնք : Բայց ան ազգը՝ որուն պիտի ծառա- 14  
 յեն , ես պիտի դատեմ . և անկից ետքը շատ  
 ստացուածքով պիտի ելլան : Եւ դուն խաղա- 15  
 ղութեամբ քու հայրերուդ պիտի երթաս , ա-  
 ղէկ մը ձերացած պիտի թաղուիս : Եւ ա- 16  
 նոնք չորրորդ դարին մէջ հոս պիտի դառնան .  
 ինչու որ Եմօրհացիներուն անօրէնութիւնը



- 17 Մինչև հիմա սալուստիւն լեցուած չէ : Եւ եղաւ որ երբ արևը մարը մտաւ , ու խաւար եղաւ , ահա միսած Նոց մը ու վառած ջած մը՝ ան կը-
- 18 տորներուն մէջ տեղէն անցաւ : Են նոյն օրը Տէրը Եբրամին հետ ուխտ մը ըրաւ՝ ըսելով . Քու սերունդիդ տուի աս երկիրը՝ Ազիպտոսի գետէն մինչև մեծ գետը՝ քի Եփրատ գետը .
- 19 Կենեցիները և Կենեզացիները՝ Կեդմոննացիները՝
- 20 Եւ Քետացիները ու Փերեզացիները և Ուսի-
- 21 մացիները , Եւ Եմօրհացիները ու Քանանացի-  
ները և Գերգեսացիները ու Յերուսացիները :

Գ Լ . Ժ Օ,

1 Սարայ իր ամուսնեանը համար՝ Եգարը Եբրամին կուտայ : 6 Եգար իր տիկինը արհամարհելուն՝ նեղութիւն կրելով կրփախէ : 7 Հրեշտակ մը զանիկայ ետ կըխրկէ , 11 անոր զաւակ ծնանելուն աւետիս տալով : 15 Խամայէի ծնունդը :

- 1 Եւ Եբրամին կնիկը Սարայ՝ չէր ծնաներ անոր . ու մէկ աղախին մը ունէր , որուն անունը
- 2 Եգար էր : Եւ Սարայ ըսաւ Եբրամին . Եհա հիմա Տէրը արգիլեց իս ծնանելէն . ուրեմն աղախինիս մտի՛ր , որ ըլլայ թէ անկէց զաւակ ըստանամ : Եւ Եբրամ՝ Սարային խօսքը մտի՛կ ը-
- 3 րաւ . Եւ Եբրամին՝ կնիկը Սարայ իր Ազիպտացի աղախինը առաւ , Եբրամ Քանանու երկիրը տասը տարի ընտելեղէն ետքը , և անիկայ իր էրկանը
- 4 Եբրամին տուաւ կնիկը ըլլալու : Են ալ մտաւ Եգարին , որ յղացաւ . և երբ իր յղե ըլլալը իմացաւ , իր տիկինը իր աչքին անարգ

երեցաւ : Եւ Սարայ ըսաւ Եբրամին • Ինձի 5  
 եղած անիրաւութիւնը քու վրայդ ըլլայ , ես իմ  
 աղախինս գիրկդ տուի , ու անիկայ երբ իմա-  
 ցաւ իր յղի ըլլալը , ես անոր աչքին անարգ ե-  
 րեցայ • Տէրը քուկինն ու իմին մէջ տեղը՝ դա- 6  
 տաստան ընէ : Եւ Եբրամ ըսաւ Սարային • Ե-  
 չա՛ աղախինդ քու ձեռքդ է , ինչ որ կուզես՝  
 անանկ ըրէ անոր , և երբ Սարայ նեղեց  
 զանիկայ , իրեն երեսէն փախաւ Եգիպտոս : Եւ 7  
 Տէրոջը հրեշտակը գտաւ զանիկայ անապատին  
 մէջ ջուրի աղբիւրի մը քովը՝ Սուրի ճանապարհ-  
 չին մէջ եղած աղբիւրին քովը • Եւ ըսաւ • ո՛վ 8  
 Սարային աղախինը Եգար , ուսկի՞ց կուգաս , և  
 ո՛ւր կերթաս • Եւ անիկայ ըսաւ • իմ Սա-  
 րայ տիկինիս երեսէն է որ կը փախչիմ : Եւ 9  
 Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր • Իարձիր քու  
 տիկինիդ , ու անոր ձեռքին տակը նստանալու ե-  
 ղիր : Եւ Տէրոջը հրեշտակը ըսաւ անոր • 10  
 Քու սերունդդ խիստ պիտի շատցունեմ , և  
 նանկ որ շատութենէն չհամրուի : Եւ Տէրոջը 11  
 հրեշտակը ըսաւ անոր • Ե՛չա՛ դուն յղի ես , ու  
 որդի պիտի ծնանիս , և անոր անունը \* Իսայէլ  
 դնես , ինչու որ Տէրը տառապանքդ լսեց : Եւ 12  
 անիկայ վայրենի մարդ մը պիտի ըլլայ , անոր  
 ձեռքը ամէնուն վրայ՝ ու ամէնուն ձեռքն ալ անոր  
 վրայ պիտի ըլլայ , և անիկայ իր բոլոր եղբայր-  
 ներուն առջևը պիտի բնակի : Եւ անիկայ ի- 13  
 բն հետ խօսող Տէրոջը անունը կանչեց , Եւ Եւզ-  
 Դուն իմ տեսիլքիս մէջ երեւցած Եստուածն ես •

\* Ի՛նչ Եստուած պիտի լսէ

քանզի ըսաւ . Երդեօք <sup>\*ողջ</sup> եմ<sup>ա</sup> հոս իմ տեսիլ-  
 14 քէս ետքը : Ենոր համար ան ջրհորին անունը  
 † Լահայրոյի ջրհոր<sup>ա</sup> դրաւ . ահա ան կաղէսին ու  
 15 Խարադին մէջ տեղն է : Եւ Եգար Եբրամին  
 տղայ մը ծնաւ : Եւ Եբրամ<sup>ա</sup> Եգարին իրեն ծը-  
 16 նած տղուն անունը Խամայէլ դրաւ : Եւ Եբ-  
 րամ ու թսուներկեց տարեկան էր՝ երբ որ Եգար  
 Խամայէլը ծնաւ Եբրամին :

Գ Լ . Ժ Լ Է

1 Եստուած իր ուխտը կընորոգէ , 5 և Եբրամին անունը Եբ-  
 րահամ կըզօնէ : 10 Թլխատու թեան պատուէրը : 15 Սարայ՝  
 Սարրա կանուանի : 17 Խահակին խոստացուիլը : 23 Եբ-  
 րահամին և Խամայէլին թլխատուիլը :

- 1 Եւ երբ Եբրամ իննսունուինը տարեկան էր ,
- Տէրը Եբրամին երեցաւ , ու ըսաւ անոր .
- 2 Ես եմ ամենակարող Եստուածը . իմ առջևս  
 քայլէ , ու կատարեալ եղիւր : Եւ իմին ու քու-  
 կին մէջ տեղը՝ իմ ուխտս պիտի դնեմ , ու խիստ  
 3 պիտի շատցունեմ քեզ : Եւ Եբրամ իր երեսին  
 վրայ ինկաւ , ու Եստուած անոր հետ խօսեցաւ՝  
 4 ըսելով , Եհա քեզի հետ է իմ ուխտս , և շատ  
 5 ազգերուն հայր պիտի ըլլաս : Եւ այսուհետև  
 քու անունդ <sup>\*\*</sup>Եբրամ չըսուի , հապաքու անունդ  
 †† Եբրահամ ըլլայ . ինչու որ քեզ շատ ազգե-  
 6 բու հայր ըրի : Եւ քեզ մեծապէս պիտի շատ-

\* Եբր . կըտեսնեմ<sup>մ</sup>  
 † Իմ տեսիլքիս կենդանի Եստուծոյ ջրհորը  
 \*\* Իմ հայր բարձր  
 †† Իմ հայր բազմութեան  
 4 \* L

քունեմ, ու քեզ ազգեր պիտի ընեմ . և քեզ  
 մէ թագաւորներ պիտի ելլան : Եւ իմին ու 7  
 քուկին մէջ տեղը՝ ու քեզմէ ետքը քու սերունդիդ  
 մէջ տեղը իրենց ցեղերուն մէջ իմ ուխտս պիտի  
 հաստատեմ՝ յաւիտենական ուխտ մը , որ քու-  
 կին ու քեզմէ ետքը քու սերունդիդ Մտուածը  
 ըլլամ : Եւ պիտի տամ քեզի ու քեզմէ ետքը 8  
 քու սերունդիդ յաւիտենական ժառանգութեան  
 համար ան երկիրը՝ ուր որ պանդուխտ եղար ,  
 բոլոր Քանանու երկիրը . և անոնց Մտուածը  
 պիտի ըլլամ : Եւ Մտուած ըսաւ Մբրահամին . 9  
 Աւտի դուն՝ ու քեզմէ ետքը քու սերունդդ ի-  
 րենց ցեղին մէջ՝ պահէք իմ ուխտս : Եւ է իմին 10  
 ու ձեր մէջ տեղը , և քեզմէ ետքը քու սե-  
 րունդիդ մէջ տեղը Էղած իմ ուխտս՝ որ պիտի  
 պահէք . Չեզմէ ամէն արու զաւակ թլիատուի :  
 Եւ ձեր անթլիատութեան մարմինը թլիատէք , 11  
 ու աս՝ իմին ու ձեր մէջ տեղի ուխտին նշանը  
 ըլլայ : Եւ ձեր ցեղերուն մէջը ամէն ութ օ- 12  
 րուան արու զաւակներ՝ կամ տունը ծնածը կամ  
 քու սերունդէդ չեղած բոլոր օտարականներէն  
 ստակով ծախու առնուածը՝ թլիատուի : Քու 13  
 տունդ ծնածը և ստակով ծախու առնուածը՝  
 թող անշուշտ թլիատուի . և իմ ուխտս ձեր  
 մարմինին մէջը յաւիտենական ուխտ մը ըլլայ :  
 Եւ անթլիատ արուն՝ որուն անթլիատութեան 14  
 մարմինը թլիատած չէ , պիտի ստակի ան անձը  
 իր ժողովուրդէն . անիկայ իմ ուխտս անարգած  
 է : Եւ Մտուած ըսաւ Մբրահամին . Քու կնիկդ 15

- Սարային անունը Սարայ մի՛ կանչեր , հապա ա-
- 16 նոր անունը \* Սարրա ըլլայ : Եւ պիտի օրհնեմ  
անիկայ , և անկից որդի մըն ալ պիտի տամ քե-  
զի . և պիտի օրհնեմ անիկայ , ու ազգերու հայր  
պիտի ըլլայ . Ժողովուրդներու թագաւորներ
- 17 պիտի ելլան անկից : Եւ Եբրահամ երեսի վրայ  
ինկաւ՝ ու խնդաց , և իր սիրտին մէջը ըսաւ . Հա-  
րիւր տարեկան մարդուն զաւակի կըլլայ արդեօք .  
և Սարրա՝ որ իննսուն տարեկան է , պիտի ծնա-
- 18 նի՞ : Եւ Եբրահամ ըսաւ Եստուծոյ . Թող
- 19 Իսմայէլը ապրի քու առջեզ : Եւ Եստուած ը-  
սաւ . Եյ՛ , քու կնիկդ Սարրան որդի պիտի ծը-  
նանի քեզի , ու անոր անունը † Իսահակ դնես . և  
անոր հետ՝ ու անկից ետքը անոր սերունդին հետ  
իմ ուխտս պիտի հաստատեմ յաւիտենական ուխտ
- 20 մը : Եւ Իսմայէլին համար ալ լսեցի քեզի .  
ահա՛ օրհնեցի անիկայ , և պիտի աճեցունեմ ա-  
նիկայ , ու խիստ պիտի շատցունեմ . տասներկու  
իշխան պիտի ծնանի ան , և մեծ ազգ մը պիտի
- 21 ընեմ անիկայ : Իսայց զալ տարի առ ատենա՝  
Սարրային քեզի ծնանելու Իսահակին հետ՝ ուխ-  
տըս պիտի հաստատեմ :
- 22 Եւ անոր հետ խօսիլը լմնցուց , ու Եստուած
- 23 Եբրահամին քովէն վեր ելաւ : Եւ առաւ Եբ-  
րահամ իր որդին Իսմայէլը՝ ու բոլոր իր տունը  
ճնածները՝ և բոլոր ստակով ծախու առնուած-  
ները՝ Եբրահամին ընտանեացը մէջ զանուած  
ամէն արուն , ու անոնց անթլիատութեան

\* քի իշխանուհի

† քի խնդուութիւն

մարմինը նոյն օրը թլփատեց , Ետուճոյ իրեն  
 ըսածին պէս : Եւ Եբրահամ իննսունուինը <sup>24</sup>  
 տարեկան էր՝ երբոր իր անթլփատութեան մար-  
 մինը թլփատուեցաւ : Եւ իր որդին Իամայէ- <sup>25</sup>  
 լը տասնիրեք տարեկան էր՝ երբոր իր անթլփա-  
 տութեան մարմինը թլփատուեցաւ : ‘Աոյն օրը <sup>26</sup>  
 թլփատուեցաւ Եբրահամ , ու իր որդին Իամա-  
 յէլը : Եւ իր տունին բոլոր մարդիկը , թէ իր <sup>27</sup>  
 տունը ճնած՝ և թէ օտարականներէն ստակով  
 ծախու առնուած՝ իրեն հետ թլփատուեցան :

## ԳԼ . ԺԸ

1 Եբրահամ իրեք հրեշտակները կընդունի : 9 Սարբա խըն-  
 դալուն համար կըյանդիմանուի : 17 Սոգոմի կործանումը  
 Եբրահամին կոչայանուի : 23 Եբրահամ կըբարեխօսէ Սո-  
 դոմացուց համար :

Եւ Տէրը երեցաւ անոր՝ Սամբրէի կաղնիին <sup>1</sup>  
 տակը : Եւ ինքը 1<sup>1</sup> օրուան տաք ատենը  
 վրանին դուռը նստեր էր , Ու իր աչքերը վեր- <sup>2</sup>  
 ցուց ու նայեցաւ , և ահա՛ իրեք մարդիկ կայ-  
 ներ էին իրեն մօտ , և երբ տեսաւ անոնք՝ վը-  
 րանին դռնէն վազեց զանոնք դիմաւորելու , և  
 մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ , Եւ ը- <sup>3</sup>  
 սաւ . Տէր իմ , հիմա թէ որ շնորհք գտայ քու  
 առջևդ , կաղաչեմ քեզի՝ ծառայիդ բնակարա-  
 նէն մի անցնիր . Կաղաչեմ ձեզի , քիչ մը ջուր <sup>4</sup>  
 բերուի , ու ոտքերնիդ լուացէք , և ծառին տակը  
 հանգստացէք . Եւ պատառ մը հաց բերեմ , <sup>5</sup>  
 ու սրտերնիդ զօրացուցէք , ետքը անցէք . քան-  
 զի անոր համար ձեր ծառային եկաք : Եւ ա-

- նոնք ըսին . Ինչպէս որ ըսիր , անանկ ըրէ :
- 6 Եւ Եբրաճամ դէպի վրանը Սարրային վազեց ,  
 ու ըսաւ . Շուտով իրեք դրիւ բարակ ալուր
- 7 շաղէ , ու շօթեր շինէ' : Եւ վազեց Եբ-  
 րաճամ արջառներուն , ու մատղաշ և աղէկ որթ
- 8 մը առաւ՝ ու պատանիի մը տուաւ . և անիկայ  
 շուտով պատրաստեց : Եւ կարադ ու կաթ ա-
- 9 կայնեցաւ , ու անոնք կերան : Եւ ըսին իրեն .  
 Ո՞ւր է քու Սարրա կնիկդ . ու ինքը ըսաւ .
- 10 Ե՛հա՛ վրանին մէջն է : Եւ անիկայ ըսաւ . \*Գալ  
 տարի՝ նորէն քեզի պիտի դամ . և ա՛հա Սարրա  
 կնիկդ որդի մը պիտի ունենայ . և Սարրա մտիկ  
 կընէր վրանին դրանը մէջ՝ որ Ենոր ետեն էր :
- 11 Եւ Եբրաճամ ու Սարրա ծերացած էին ու օ-  
 րերնին անցուցած . և Սարրայէն պակասձ էր կը-
- 12 նիկներուն օրէնքին մէջ ըլլալը : Եւ Սարրա իր  
 մտքին մէջը խնդաց՝ ըսելով , Ես պառաւնալէս  
 ետքը զուարճութի՞ւն պիտի ունենամ , տէրս ալ
- 13 ծերացած ըլլալով : Եւ Տէրը ըսաւ Եբրաճա-  
 մին . Սարրան ինչո՞ւ խնդաց , ըսելով թէ՛ Ես  
 իրաւցունէ պիտի ծնանի՞մ , որ պառուեր եմ :
- 14 Տէրոջը առջևը դժուարին բան մը կա՞յ արդեօք .  
 սա՛հմանուած ժամանակին՝ \*գալ տարի՝ քեզի պի-  
 տի դառնամ , ու Սարրան որդի մը պիտի ու-
- 15 նենայ : Եւ Սարրան ուրացաւ՝ ըսելով թէ՛  
 Չխնդացի . ինչու որ վախցաւ : Եւ Ենիկայ ը-  
 սաւ . Չէ՛ , խնդացիր :

\* Եբր . կենաց ժամանակին

Եւ մարդիկը ելան անկից , ու դէպի Սողոմ 10 նայեցան . և Եբրահամ զանոնք յուղարկելու համար հետերնին գնաց : Եւ Տէրը ըսաւ . Ես 17 Եբրահամէն պիտի պահէմ ինչ որ կընեմ . Որովհետեւ Եբրահամ անշուշտ մեծ ու զօ- 18 րաւոր ազգ մը պիտի ըլլայ . և երկրի բոլոր ազգերը անով պիտի օրհնուին : Քանզի դիտեմ անիկայ , 19 որ իր որդիներուն ու իրմէն ետքը իր տունին պիտի պատուիրէ , և անոնք արդարութիւն ու դատաստան ընելու համար՝ Տէրոջը ճամբան պիտի պահեն . որ Տէրը Եբրահամին վրայ բերէ ինչ որ խօսեցաւ : Եւ ըսաւ Տէրը . Սողոմին 20 ու Գոմորին աղաղակը շատնալուն համար , և անոնց մեղքը շատ մեծնալուն համար , Հիմա 21 պիտի իջնամ տեսնալու՝ թէ բոլորովին ինծի եկած աղաղակին պէս ըրին . և թէ որ չէ , դիտեմ : Եւ ան մարդիկը անկից ելան , ու 22 դէպի Սողոմ գացին . և Եբրահամ տակաւին Տէրոջը առջին կայներ էր :

Եւ Եբրահամ մօտեցաւ՝ ու ըսաւ . Երդեօք 23 ամբարիշտին հետ՝ արդարն ալ պիտի կորսնցունես . Քուցէ ան քաղաքին մէջը յիսուն արդար 24 ըլլան , արդեօք անոր մէջը եղած յիսուն արդարին համար չինայելով պիտի կորսնցունես ան տեղը : Քաւ լիցի քեզ սասնկ բան ընելը՝ որ 25 արդարը ամբարիշտին հետ մեռցունես , ու արդարը ամբարիշտի պէս ըլլայ . քաւ լիցի քեզ , արդեօք բոլոր երկրին Վատաւորը արդարութիւն չընեն : Եւ Տէրը ըսաւ . Թէ որ Սո- 26



- դոմին մէջ յիսուն արդար գտնամ՝ քաղաքին մէջը , անոնց համար բոլոր տեղը պիտի խնայեմ :
- 27 Եւ Երրահամ պատասխան տուաւ ու ըսաւ .  
 Եհա հիմա՛ ես որ հող ու մոխիր եմ , Տէրոջը
- 28 հետ խօսելու սկսեցի . Գուցէ յիսուն արդարէն հինգ պակաս ըլլայ , ան հինգին համար բոլոր քաղաքը պիտի կորսնցունեն<sup>օ</sup> : Եւ Են ըսաւ . Թե՛ որ հոն քառսունը հինգ գտնամ , չեմ
- 29 կորսնցուներ : Եւ դարձեալ խօսեցաւ անոր ու ըսաւ . Գուցէ հոն քառսուն գտնուի : Եւ Ենիկայ ըսաւ . Քառսունին համար ալ չեմ ը-
- 30 ներ : Եւ ինքը ըսաւ . Ո՛հ Տէրը չըարկանայ , ու խօսիմ . Գուցէ հոն երսուն գտնուի : Եւ Տէրը ըսաւ . Թե՛ որ հոն երսուն գտնամ , չեմ
- 31 ըներ : Եւ ինքը ըսաւ . Եհա հիմա՛ Տէրոջը հետ խօսելու սկսեցի . Գուցէ հոն քսան գրտնուի : Եւ Ենիկայ ըսաւ . Քսանին համար ալ
- 32 չեմ կորսնցուներ : Եւ ինքը ըսաւ . Ո՛հ Տէրը չըարկանայ , ու մինակ աս անգամ խօսիմ . Գուցէ հոն տասը գտնուի : Եւ Ենիկայ ըսաւ .
- 33 Տասնին համար ալ չեմ կորսնցուներ : Եւ Տէրը Երրահամին հետ խօսիլը լմնցուցածին պէս՝ գնաց . Երրահամ ալ իր տեղը դարձաւ :

## ԳԼ . ԺԹ

1 Ղովտ երկու հրեշտակները կընդունի : 4 Չար Սողոմոնցիք կու-  
րութեամբ կըղարնուին : 12 Ղովտ լեռը կըխրկուի : 18 Սե-  
գովթ երթալու հրաման կառնէ : 24 Սողոմի և Գոմորի կոր-  
ծանումը : 26 Ղովտին կնիկը աղի արձան կըլայ : 30 Ղովտ  
այրի մը մէջ կըրնակի : 31 Սովարին և Եմինին սպորինաւոր  
ծնունդը :

Եւ ան երկու հրեշտակները իրիկուան զէմ 1  
Սողոմ եկան . և Ղովտ Սողոմին դուռը  
նստեր էր . և Ղովտ տեսնալով՝ զանոնք գի-  
մաւորելու ելաւ , ու իր երեսը մինչև գետինը  
ծռելով խոնարհութիւն ըրաւ . Ու ըսաւ . Ե- 2  
ղէ՛ իմ տէրերս՝ կաղաչեմ , ձեր ծառային տունը  
դարձէք , ու աս գիշեր հոն կեցէք , և ոտքերնիդ  
լուացէք . ու առտուանց կանուխ ելէք ու ձեր  
ճամբան դացէք : Եւ անոնք ըսին , Զէ՛ գի-  
շերը փողոցը կըկենանք . Եւ շատ բռնադա- 3  
տեց անոնք , ու անոնք անոր դարձան , և ա-  
նոր տունը մտան . ու անոնց խնջոյք ըրաւ , և  
քաղարջ եփեց , ու կերան :

Իսոյց անոնց պառկելէն առաջ՝ քաղաքին մար- 4  
դիկը , ոյնն Սողոմոնցիք՝ երիտասարդներէն  
մինչև ձերերը՝ բոլոր ժողովուրդը պատեցին տու-  
նը . Եւ Ղովտը կանչեցին՝ ու անոր ըսին . Ո՛ւր են 5  
ան մարդիկը՝ որ աս գիշեր քեզի եկան . անոնք  
դուրս հանէ՛ մեզի , ու գիտնանք անոնք : Եւ Ղովտ 6  
դռնէն դուրս ելաւ անոնց քովը , ու ետեւէն դու-  
ռը գոցեց . Եւ ըսաւ . Ե՛ղբայրներ՝ կաղաչեմ 7  
ձեզի՛ չարութիւն մի՛ ընէք : Եւ հա հիմա երկու 8  
աղջիկ ունիմ՝ որ էրիկ մարդ չեն գիտեր , անոնք

- Հիմա ձեզի դուրս հանեմ , ու ձեր աչքին աղէկ եղածը ըրէք անոնց . բայց միայն աս մարդոցը բան մը մի' ընէք . քանզի անոր համար իմ յար-
- 9 կիս շուքին տակը մտան : Աւ անոնք ըսին , մէկ գի' կեցիր . ու ըսին ալ . Ասիկայ պանդըխտութեան եկաւ , ու դատաստան ընել կուզէ . Հիմա քեզ անոնցմէ գէշ կրննք :
- 10 Աւ սաստիկ բռնադատեցին մարդը՝ այսինչն՝ Ղ ուլտը , ու դուռը կոտորելու մօտիկցան :
- 11 Բայց ան մարդիկը ձեռքերնին երկընցուցին , ու Ղ ուլտը տունին մէջ քո-
- 12 վերնին առին , ու դուռը գոցեցին : Աւ տունին դուռը կայնած մարդիկը կուրու թեամբ զարկին պզտիկէն մինչև մեծը . անանկ որ՝ դուռը
- 13 գտնապէն թուլցան : Աւ մարդիկը ըսին Ղ ուլտին . Հոս ուրիշ ուլ ունիս . փեսադ ու որդիներդ և աղջիկներդ ու քաղաքին մէջ ինչ որ ու-
- 14 նիս , աս տեղէն հանէ անոնք : Ինչու որ մենք աս տեղը պիտի կորսնցունենք . քանզի անոնց ազազակը Տէրոջը առջևը մեծ եղաւ . ու Տէ-
- 15 րը մեզ անիկայ կորսնցունելու խրկեց : Աւ Ղ ուլտը ելաւ , ու իր աղջիկները առնող փեսաներուն խօսեցաւ , ու ըսաւ . Այլէ՛ք ու աս տեղէն զացէ՛ք . Ինչու որ Տէրը պիտի կորսնցունէ աս քաղաքը . բայց իր փեսաներուն ծաղը ընող մը երևցաւ :
- 16 Աւ առտու եղածին պէս , հրեշտակները արտորցուցին Ղ ուլտը՝ ըսելով , Այլի՛ր՝ կնիկդ ու հոս գտնուած երկու աղջիկդ առ , որ քաղաքին պատի-
- 17 ժին մէջ չկորսուիս : Աւ երբ անիկայ կըսնտընար , ան մարդիկը բռնեցին անոր ձեռքէն՝ ու ա

նոր կնիանք ձեռքէն՝ և անոր աղջիկներուն ձեռքէն՝ Տէրօջը անոր ողորմելովը . ու հանեցին անիկայ , ու քաղաքին դուրսի դին դրին : Եւ եղաւ որ 17 երբ դուրս հանեցին զանոնք՝ Դէլը ըսաւ . Ենձդ աղափէլը համար փախի՛ր . ետիդ մի՛ նայիր , և բոլոր դաշտին մէջ մի՛ կայնիր . լեռը փախի՛ր , չըլլայ որ կորսուիս : Եւ Ղուլտ ըսաւ անոնց . 18 չէ՛ Տէր իմ՝ շնորհք ըրէ . Եհա հիմա ծառադ 19 քու առջևդ շնորհք դտաւ , և Իմ անձս ազատելով՝ ինձի մեծ երախտիք ըրիր . և ես չեմ կրննար լեռը փախչիլ , չըլլայ որ չարիք հասնի ինձի ու ես մեռնիմ : Եհա աս քաղաքը՝ ո՞ր հոն 20 փախչելու մօտ է , ու ան պղտիկ է . շնորհք ըրէ՛ հոն փախչիմ , ( չէ՞ որ անիկայ պղտիկ է , ) և իմ անձս ողջ մնայ : Եւ ըսաւ անոր . Եհա ատ բանին 21 մէջն ալ աղաչանքդ ընդունեցի , որ աս քաղաքը չկորսնցունեմ՝ որուն համար խօսեցար : Եւ 22 ըրէ՛ հոն փախի՛ր . քանզի դուն մինչև որ հոն չհասնիս՝ ես բան մը չեմ կրնար ընել , անոր համար ան քաղաքին անունը \* Սեզովը դրաւ : Եւ 23 բերք երկրի վրայ կը ծագէր՝ երբոր Ղուլտ Սեզովը մտաւ : Ենատենը Տէրը Սողոմոն ու Գոմորին 24 վրայ ծծումբ ու կրակ տեղաց Տէրօջը կողմանէ երկինքէն : Եւ ան քաղաքները՝ ու բոլոր դաշտը՝ 25 ար՝ և ան քաղաքներուն բոլոր բնակիչները՝ ու երկրի վրայ բուսածը կորսնցուց : Եւ Ղուլտին 26 կնիկը ետին նայեցաւ , ու աղի արձան եղաւ :

Եւ Եբրահամ առտուանց կանուխ ելելով՝ 27 Տէրօջը առջևը կայնած տեղը էլու : Եւ Սա 28

\* ք՝ պղտիկ

- գոմին ու Գոմորին և բոլոր դաշտին վրայ նայե-  
լով՝ տեսաւ որ , ահա ան տեղէն՝ Հնոցի մուխին
- 29 պէս մուխ կելլար : Եւ յապէս եղաւ որ երբ Ես-  
տուած՝ ան դաշտին քաղաքները կը կորսնցունէր ,  
Եստուած Եբրահամը միտքը բերաւ . ու երբ որ  
Ղովտին բնակած քաղաքները կը կորսնցունէր՝  
ան կործանումին մէջ տեղէն Ղովտը հանեց :
- 30 Եւ Ղովտը Սեգովոնէն ելաւ , ու լեռը բնակե-  
ցաւ՝ և իր երկու աղջիկները իր հետը . ինչու որ  
Սեգովոնին մէջ բնակելու կը վախնար . և բնակե-  
ցաւ այրի մը մէջ՝ ինքը ու իր երկու աղջիկ-
- 31 ները : Եւ մեծ աղջիկը պղտիկին ըսաւ . Մեր  
հայրը ծեր է , ու երկրին մէջ մէկը չկայ՝ որ ա-
- 32 մէն երկրին օրէնքին պէս մեզի մտնայ : Եկ՛ուր  
մեր հօրը գինի խմցունենք , ու իր հետը պառ-
- 33 կինք , և մեր հօրմէն սերունդ պահենք : Եւ  
ան գիշերը՝ իրենց հօրը գինի խմցուցին , ու մեծ  
աղջիկը մտաւ՝ և իր հօրը հետ պառկեցաւ . և
- 34 Ղովտը չիմացաւ անոր պառկիլ ելալը : Եւ ե-  
ղաւ որ հետեւեալ օրը մեծ աղջիկը պղտիկին ը-  
սաւ . Եհա՛ երէկ գիշեր հօրս հետ պառկեցայ .  
աս գիշեր ալ անոր գինի խմցունենք , և մտիւր ու  
իր հետը պառկէ՛ , և մեր հօրմէն սերունդ պա-
- 35 հենք : Եւ ան գիշերն ալ իրենց հօրը գինի խմ-  
ցուցին , և պղտիկ աղջիկը ելաւ , ու անոր հետ  
պառկեցաւ . և Ղովտը անոր պառկիլ ելալը չի-
- 36 մացաւ : Եւ յապէս Ղովտին երկու աղջիկները ի-
- 37 բնց հօրմէն յղի մնացին : Եւ մեծը որդի մը  
ծնաւ , ու անոր անունը Սովաբ դրաւ . ասիկայ՝

Սուլաբացուոց հայրն է մինչև այսօր : Եւ պղտիկն<sup>38</sup>  
ալ որդի մը ծնաւ , ու անոր անունը Բենամմի  
դրաւ . ասիկայ՝ Ըմմոնացուոց հայրն է մինչև այս-  
օր :

## ԳԼ . Ի

1 Եբրահամ՝ Գերարա կրօնակի , և Սարրան՝ իր կնիկը ընտել  
կուրանայ : 3 Եբիմելէք կըլանդիմանուի Եբրահամին կնկանը  
համար . և 9 ինքն ալ զԵբրահամ կըլանդիմանէ : 14 Եբի-  
մելէք Սարրան ետ կուտայ , 16 ու զանիկայ ալ կըլանդի-  
մանէ : 17 Եբրահամին աղօթքովը Եբիմելէքին ընտանիքը  
կըրժկուին :

Եւ Եբրահամ անկից դէպի հարաւային եր- 1  
կիրը չուեց . և կադէսին ու Սուբին մէջ տե-  
ղը բնակեցաւ , ու Գերարային մէջ պանդուխտ  
եղաւ : Եւ Եբրահամ իր կնիկը Սարրային հա- 2  
մար՝ Եսիկայ իմ քոյրս է ըսաւ . և Գերարային  
Թաղաւորը Եբիմելէք խրկեց ու առաւ Սարրան :  
Բայց Եստուած եկաւ Եբիմելէքին զիշերը երա- 3  
զին մէջ՝ ու ըսաւ անոր . Եհս՝ ան կնկանը հա-  
մար՝ որ դուն առիր , կըմեռնիս . ինչու որ անի-  
կայ էրիկ ունի : Բայց Եբիմելէք անոր մօտե- 4  
ցած չէր : Եւ ըսաւ . Ո՛վ Տէր՝ արդար աղգ  
ալ պիտի մեռցունն<sup>5</sup> : Ինքը ինծի անիկայ 5  
իմ քոյրս է ըսաւ . և աս ալ՝ անիկայ իմ եղ-  
քայրս է ըսաւ . ես աս ուղիղ սրտով ու մա-  
քուր ձեռքերով ըրի : Եւ Եստուած անոր ե- 6  
րազին մէջը ըսաւ . Ես ալ զիտցայ որ՝ դուն աս  
ուղիղ սրտով ըրիր , ու քեզ ալ ինծի դէմ  
մեղք գործելէն խնայեցի . անոր համար քեզ չթո-

- 7 զուցի որ անոր մօտենաս : Բայց հիմա կնիկը  
իր էրկանը դարձուր . քանզի անիկայ մարդարէ  
է , և քեզի համար աղօթք թող ընէ՝ որ դուն  
ապրիս . և թէ որ դուն անկոյ ետ չտաս , գիտ-  
ցի՛ր որ անշուշտ պիտի մեռնիս դուն՝ և ամէն
- 8 քուկիններդ : Ուստի առտուանց կանուխ ելաւ  
Աբիմէք , ու կանչեց բոլոր իր ծառաները՝ և  
բոլոր աս բաները անոնց պատմեց . ու մարդիկը
- 9 շատ վախցան : Եւ Աբիմէք կանչեց Աբրա-  
համը՝ ու ըսաւ անոր . Մեզի ի՞նչ ըրիր . և ես  
քեզի ի՞նչ յանցանք ըրի որ իմ վրաս ու թագա-  
ւորութեանս վրայ մեծ մեղք մը բերիր . չգոր-
- 10 ծուելու գործեր գործեցիր ինձի : Եւ Աբիմէք  
ըսաւ Աբրահամին . Ի՞նչ տեսար որ աս բանը ը-
- 11 ըրիր : Եւ Աբրահամ ըսաւ . Ես կարծեցի որ  
իրաւցունէ աս տեղ Աստուծոյ վախը չկայ , ու
- 12 կնկանս համար իս կըմեռցունեն : Եւ տակա-  
ւին իրաւցունէ իմ քոյրս է՝ հօրս աղջիկն է ,  
բայց իմ մօրս աղջիկը չըլլարիլ՝ իմ կնիկս ե-
- 13 ղաւ : Եւ եղաւ որ Աստուած իս հօրս տու-  
նէն հանած ատենը՝ ըսի ատոր . Ինձի ընելու  
չնորհքդ աս ըլլայ . Ա՛ւր տեղ որ երթալու  
ըլլանք , հոն ինձի համար ըսես որ՝ Իմ եղբայրս
- 14 է : Եւ Աբիմէք՝ ոչխարներ ու արջառներ և  
ծառաներ ու աղախիններ առաւ , և Աբրահամին  
տուաւ . անոր կնիկը Սարրան ալ անոր ետ
- 15 տուաւ : Եւ Աբիմէք ըսաւ . Ահա իմ եր-  
կիրս առջևդ է . ո՛ւր որ կուզես՝ բնակէ : Եւ
- 16 Սարրային ըսաւ . Ահա եղբորդ հաղար կտոր

արձաթ տուի • ահա ան քեզի աչքերու ծածկոց  
 ըլլայ , բոլոր քեզի հետ եղողներուն առջևը և ա-  
 մէնուն : Եսանկ անիկայ յանդիմանուեցաւ :  
 Եւ Եբրազամ՝ աղօթք ըրաւ Եստուծոյ , և Ես-17  
 տուած բժշկեց Եբիմեէքը ու անոր կնիկը և ա-  
 նոր սղախինները , ու ծնան : Քանզի Տէրը 18  
 Եբրազամին կնոջը Սարրային համար՝ Եբիմեէ-  
 քին ընտանեացը բոլոր արգանդը գլխովին գո-  
 ցեր էր :

## Գ Լ • Ի Ը

1 Իսահակին ծնունդը , 4 ու թըխատութիւնը : 6 Սարրա կու-  
 բախանայ : 9 Եգարը ու Իամայէլը գուրս կըձգուին : 15 Ե-  
 գար կընեղուի , ու 17 Հրեշտակէն կըմխիթարուի : 22 Ինը-  
 սարէէի մէջ՝ Եբիմեէքին Եբրազամի հետ ըրած ուխտը :

Եւ Տէրը իր ըսածին պէս այցելութիւն ըրաւ 1  
 Սարրային • և Սարրային իր զուրցածին պէս  
 ըրաւ : Եւ Սարրա յղացաւ , և ծնաւ որդի մը 2  
 Եբրազամին իր ձերութեան ատենը՝ ան նոյն  
 ժամանակին՝ որ Եստուած ըսեր էր անոր : Եւ 3  
 Եբրազամ՝ իրեն ծնած՝ այսինքն Սարրային իրեն  
 ծնած՝ իր որդիին անունը Իսահակ դրաւ : Եւ 4  
 Եբրազամ թըխատեց իր որդին Իսահակը՝ եր-  
 բոր ութօրուան եղաւ , ինչպէս որ Եստուած ի-  
 ընն պատուիրեր էր : Եւ Եբրազամ հարիւր 5  
 տարեկան էր , երբոր իր որդին Իսահակ ծնաւ  
 իրեն : Եւ Սարրա ըսաւ • Եստուած իս խըն- 6  
 դացուց , ամէն լսողը ինձի հետ պիտի խնդայ :  
 Եւ ըսաւ ալ • Եբրազամին ո՞վ կըսէր , որ 7



- Սարրան տղաքներ պիտի սնուցանէ . ինչու որ իր  
 8 ճերութեան ատենը իրեն որդի ծնայ : Եւ տղան  
 մեծցաւ , ու կաթէն կտրուեցաւ . և Եբրա-  
 չամ մեծ խնջոյք ըսաւ Իսահակին կաթէն կըտ-  
 րուած օրը :
- 9 Եւ Սարրա տեսնելով որ Եզիպտացի Եգա-  
 րին որդին՝ որն որ Եգիպտոս Եբրաչամին ծնաւ՝  
 10 ճաղը կընէ , ըսաւ Եբրաչամին . Վա՛րնտէ՛ աս ա-  
 ղախինը ու անոր որդին . ինչու որ աս աղախի-  
 նին որդին՝ իմ որդիիս Իսահակին հետ ժառանգ  
 11 պիտի չըլլայ : Եւ աս բանը Եբրաչամին շատ  
 12 դժուար երեցաւ՝ իր որդիին պատճառաւ : Եւ  
 Եստուած ըսաւ Եբրաչամին . Տղին համար ու ա-  
 ղախինիդ համար՝ ատ քեզի թող զժուար չե-  
 րեայ . Սարրային քեզի ըսած բոլոր խօսքը մտի՛կ  
 13 չուի : Եւ աղախինին որդին ալ ազգ մը պիտի  
 14 ընեմ . ինչու որ անիկայ քու սերունդդ է : Եւ  
 Եբրաչամ առտուանց կանուխ ելաւ , ու հաց և  
 տիկ մը ջուր առաւ՝ ու Եգարին ուսին վրայ դրաւ  
 և տղան ալ տուաւ՝ ու խրկեց անիկայ , և գնաց  
 անիկայ ու Բերսարէէի անապատին մէջ ան-  
 15 դին ասդին կըպտըտէր : Եւ տիկէն ջուրը  
 հատաւ , ու մացառներուն մէկուն տակը ձգեց  
 16 տղան : Եւ նետընկէցի մը չափ հեռուն գնաց ու  
 դիմացը նստեցաւ . ինչու որ ըսաւ . Տղուն մեռ-  
 նիլը չտեսնամ : Եւ դիմացը նստեցաւ , և իր  
 17 ձայնը վերցուց ու լացաւ : Եւ Եստուած տղին  
 ձայնը լսեց . ու Եստուծոյ հրեշտակը կանչեց

Ազարը երկինքէն՝ ու ըսաւ անոր . Ազար ի՞նչ եղաւ քեզի, մի՛ վախնար . Ինչու որ Աստուած տրդուն ձայնը՝ անոր եղած տեղէն լսեց : Ալի՛ր, 18 տղան վերցնէր, ու ձեռքովդ օգնէ՛ անոր . Ինչու որ մեծ ազգ մը պիտի ընեմ՝ անիկայ : Աւ Աստուած Աշուրին աչքերը բացաւ, ու ջուրի հոր մը տեսաւ . և դնաց ու տիկը ջուրով լեցուց, ու տրդուն խմցուց : Աւ Աստուած տղուն հետ էր, որ 20 մեծցաւ, ու անապատը բնակեցաւ և մեծ աղեղնաւոր եղաւ : Աւ փառանի անապատին մէջ բնա- 21 կեցաւ՝ և մոյրը անոր կնիկ մը առաւ Ադիպտոսէն :

Աւ եղաւ որ անուաներ Աբիմէլէք և իր փեքօղ 22 սպորապետը խօսեցան Աբրահամին ըսելով, Աստուած քեզի հետ է ամէն բանի մէջ՝ ի՞նչ որ գործես : Աւ հիմա հոս ինձի երդում՝ ըրէ՛ Աստուածով, որ ինձի ու իմ որդիիս և իմ որդիիս որդիին հետ նենդութեամբ չվարուիս . հապա իմ քեզի ըրած երախտիքիս պէս պիտի ընես ինձի՝ ու աս երկրիս՝ որուն մէջ բնակեր ես : Աւ Աբրահամ 24 համ ըսաւ . Աս երդում կընեմ : Աւ Աբրահամ 25 համ յանդիմանեց Աբիմէլէքը ջուրի հորի մը համար՝ որն որ Աբիմէլէքին ծառաները բռնութեամբ առած էին : Աւ Աբիմէլէք ըսաւ . Ատ ո՞վ ընելը 26 չեմ գիտեր . և դուն ալ չզատմեցիր ինձի, ու ես ալ չէի լսեր՝ բայց միայն այսօր : Աւ Աբրահամ 27 ոչխարներ ու արջառներ առաւ և Աբիմէլէքին տուաւ, ու երկուքնին ալ ուխտ ըրին : Աւ Աբրահամ 28 քահամ ոչխարներէն եօթը հատ էդ դառներ զատ

- 29 գրաւ : Եւ Աբիմելէք ըսաւ Աբրահամին . Ի՞նչ  
 են ատ եօթը էգ գառինքը՝ որ դուն զատ գրիր :
- 30 Եւ անիկայ ըսաւ . Ես եօթը էգ գառինքը առ-  
 նե՛ս ձեռքէս , որ անոնք աս հորը ես փորելուս ինձի
- 31 վկայութիւն ըլլան : Ենոր համար՝ ան տեղը  
 \*Բերսաբէէ կոչեց . ինչու որ երկուքնին ալ հոն
- 32 երդում ըրին : Եւ Բերսաբէէին մէջ ուխտ ը-  
 րին . անատենը ելաւ Աբիմելէք ու անոր փէքօղ  
 սպարապետը , և փղշտացիներուն երկիրը դար-  
 ձան :
- 33 Եւ Աբրահամ Բերսաբէէին մէջ ծառեր  
 տնկեց . և հոն յաւիտենական Տէր Աստուծոյ ա-
- 34 նունը կոչեց : Եւ Աբրահամ փղշտացիներուն  
 երկրին մէջ պանդխտութիւն ըրաւ շատ օրեր :

Գ Լ . Ի Բ

1 Աստուած Աբրահամը կրփորձէ՝ հրամայելով որ իր Խաճակ  
 որդին զհօ ընէ : 3 Աբրահամին հաւատքը և Նաղանդութիւ-  
 նը : 11 Հրեշտակը կարգիէ որ Խաճակը չմորթէ . 13 Որուն  
 տեղը Աբրահամ խոյ մը կը զոհէ : 14 Ես տեղը Եհօփայիէ  
 կանուանի : 15 Աբրահամ նորէն կօրչուի : 20 Նաբոլբի ազ-  
 գահամարը մինչև Սերեկոյ :

- 1 Եւ եղաւ որ աս բաներէն ետքը , Աստուած փոր-  
 ձեց Աբրահամը՝ ու ըսաւ անոր . Ո՛վ Աբրա-  
 2 համ . և անիկայ ըսաւ . Ե՛հա ես հոս եմ : Եւ Ան  
 ըսաւ . Հիմա՞ քու կին սիրած մէկ հատիկ Խաճակ  
 զաւակդ ան , ու Սօբիա երկիրը գնան . և հոն  
 անիկայ ողջակէզ ըրէ՝ լեռներուն մէկուն վրայ՝ որն  
 3 որ ես քեզի պիտի ըսեմ : Եւ Աբրահամ առ-  
 տուանց կանուխ ելաւ , ու իր իշուն համետը դը-  
 \* ք՝ ջրհոր երգման

բաւ և իր հետը երկու ծառայ ու իր Իսահակ որ-  
 դին առաւ . և ողջակէզի համար փայտ ճեղքեց ,  
 ու ելաւ գնաց ան տեղը՝ որն որ Եստուած իրեն  
 ըսաւ : Եւ երրորդ օրը Եբրահամ իր աչքերը 4  
 վեր վերցուց՝ ու հեռուէն ան տեղը տեսաւ : Եւ 5  
 Եբրահամ ծառաներուն ըսաւ . Ինչ իշուն հետ  
 հոս մնացէ՛ք , և ես ու տղան մինչև հոն երթանք  
 և երկրպագութիւն ընենք , ու նորէն ձեզի կը  
 դառնանք : Եւ Եբրահամ ողջակէզին փայտերը 6  
 առաւ՝ ու իր Իսահակ որդիին վրայ դրաւ , և ին-  
 քը իր ձեռքը առաւ հուրը ու սուրը՝ ու երկուք-  
 նին մէկտեղ գացին : Եւ Իսահակ իր հօրը Եբ- 7  
 բրահամին խօսեցաւ ու ըսաւ . Հայր իմ . և ան-  
 իկայ ըսաւ . Եհա ես հոս է՛մ , որդիս : Եւ ին-  
 քը ըսաւ . Եհա հուրը և փայտը , բայց ողջակէ-  
 զի համար գառը ո՞ւր է : Եւ Եբրահամ ըսաւ . 8  
 Եստուած իրեն ողջակէզի համար գառը պիտի  
 պատրաստէ , որդեակ իմ : Եյսպէս երկուքը մէկ-  
 տեղ գացին : Եւ եկան ան տեղը՝ որն որ Ես- 9  
 տուած իրեն ըսեր էր . ու Եբրահամ հոն սեղան  
 շինեց , և փայտերը շարեց . և իր որդին Իսահակը  
 կապեց , ու անիկայ սեղանին փայտերուն վրայ դը-  
 րաւ : Եւ Եբրահամ իր ձեռքը երկընցուց ու սուրը 10  
 առաւ՝ որ իր որդին մօրթէ : Եւ Տէրօջը հրեշ- 11  
 տակը երկինքէն անոր կանչեց ու ըսաւ . Եբրա-  
 համ՝ Եբրահամ . և անիկայ ըսաւ . Եհա ես հոս  
 է՛մ : Եւ ըսաւ . Տղուն մի՛ դպչիր , և անոր բան 12  
 մը մի՛ ընեիր . քանզի հիմա գիտցայ որ Եստուած մէ-  
 կը վախնաս . որովհետև քու մէկ հատիկ որդիդ

- 13 Ինձ մէ չխնայեցիր : Եւ Եբրահամ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ , և ահա իր ետեւը խիտ մացառներուն մէջը եղջիւրներէն բռնուած խոյ մը կար . ու Եբրահամ գնաց և խոյը առաւ , ու
- 14 անկկայ իր որդիին տեղը ողջակէզ մատուց : Եւ Եբրահամ ան տեղին անունը \* Եհովայիբէ դրաւ , որ մինչև այսօր կըսուի՝ Տէրը լեռին մէջ պիտի
- 15 երևայ : Եւ Տէրոջը հրեշտակը երկրորդ ան-
- 16 ամ Եբրահամը կանչեց , Ու ըսաւ . Տէրը կըսէ որ՝ իմ անձիս վրայ երդում ըրի , թէ աս բանը որ ըրիր , ու ինձի համար քու սիրելի
- 17 որդիիդ չխնայեցիր , Քեզ օրհնելով պիտի օրհնեմ , ու քու սերունդդ երկինքին աստղերուն և ծովեզերքը կղած աւաղին պէս խիստ պիտի շատցունեմ . և քու սերունդդ իր թշնամիներուն քա-
- 18 ղաքները պիտի ժառանգեն . Եւ երկրի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհնուին . որով-
- 19 հետև իմ խօսքիս նազանդեցար : Եսանկ՝ Եբրահամ իր ծառաներուն դարձաւ , և ելան ու մէկտեղ Քերասբէէ դացին . և Եբրահամ Քերասբէէին մէջ կը բնակէր :
- 20 Եւ եղաւ որ աս բաներէն ետքը , Եբրահամին պատմուեցաւ՝ ըսելով , Եհա Մեղքան՝ ինքն ալ
- 21 որդիներ ծնաւ քու եղբօրդ՝ Ասքովին . Եզիննեկ որդին Ովքար , և անոր եղբայրը Բաւը , ու
- 22 Երամին հայրը կամուէլը , Եւ Քաղազը՝ ու Եսաւը՝ և Փաղղասը ու Յեղթաիը , և Բաթուէլը :
- 23 Եւ Բաթուէլ ծնաւ Ուրեկան . աս ութը որդիները Մեղքան ծնաւ Եբրահամին եղբօրը՝ Աս-

\* Թ՝ Տէրը պիտի տեսնայ , Կամ Տէրը պիտի նախախնամէ

քովընն : Եւ անոր հարձը՝ որուն անունը Ոսեմայ 24 էր , անիկայ ալ ծնաւ Տարեկը՝ և Ղաամը՝ ու Տորոսը և Սովքան :

## Գ Լ . Ի Գ

1 Սարրայի կենացը օրերը ու մահը : 3 Մագփելայի այրը ծախուկանէ Եբրահամ , 19 ու Սարրան հոն կըթաղէ :

Եւ Սարրա՝ հարիւր քսանուեօթը տարի ապրե- 1  
ցաւ . այսոն էլան Սարրային կենացը տա-  
րիները : Եւ Սարրա Քանան երկրին մէջ՝ Վեր- 2  
բոն ըսուած Գիբեաթարբոկին մէջ մեռաւ . և  
Եբրահամ Սարրային համար սուգ ընելու ու ող-  
բալու եկաւ : Եւ Եբրահամ իր մեռելին քո- 3  
վէն ելաւ , ու Քեաին որդիներուն հետ խօսեցաւ  
ըսելով , Ես ձեր մէջը օտարական ու պանդուխտ 4  
եմ . ձեր քովը գերեզմանի ստացուածք տուէ՛ք  
ինձի , որ երեսիս առջևէն իմ՝ մեռելս թաղեմ : Եւ 5  
Քեաին որդիները պատասխան տուին Եբրահա-  
մին՝ ըսելով անոր . Տէ՛ր իմ՝ մեզի մօտիկ ըրէ , 6  
դուն մեր մէջը իշխան Եստուծոյ ես , մեր ամե-  
նէն ընտիր գերեզմանին մէջը թաղէ՛ քու մեռելդ .  
քու մեռելդ թաղելու համար՝ մեզմէ մէկը չինայեր  
իր գերեզմանը քեզի տալու : Եւ Եբրահամ ե- 7  
լաւ , ու խոնարհութիւն ըրաւ ան երկրին ժողո-  
վըրդոցը՝ Քեաին որդիներուն . Եւ անոնց զրու- 8  
ցեց՝ ըսելով , թիէ որ միտք ունիք՝ որ ես երեսիս  
առջևէն իմ մեռելս թաղեմ , ինձի մօտիկ ըրէք . և  
ինձի համար Սահաին որդիին Ափրոնին հետ  
խօսեցէ՛ք , Որ իր արտին ծայրը եղած \*Մագփե- 9

\* ք՝ կրկնութիւն .

- լայի այրը ինձի տայ . ան՝ ինձի ձեր մէջը գերեզմանի ստացուածք ըլլալու համար՝ լման գնով տայ :
- 10 Եւ Եփրոն Քետին որդւոցը մէջ կրնասէր : Եւ Քետացի Եփրոնը պատասխան տուաւ Եբրահամին՝ իր քաղաքին դուռը մտնող բոլոր Քետին որդիներուն լսելուն , ըսելով , Չէ՛ տէր իմ , ինձի մտիկ ըրէ . արտը քեզի կուտամ , և հոն եղած այրն ալ քեզի կուտամ . իմ ժողովուրդիս
- 11 առջևը ան քեզի տուի . թողէ՛ քու մեռելդ : Եւ Եբրահամ ան երկրին ժողովուրդը առջևը խոնարհու թիւն ըրաւ , Եւ ան երկրին ժողովուրդը լսելուն՝ Եփրոնին խօսեցաւ՝ ըսելով . Բայց թէ որ առ ինձի որդիս , կաղաչեմ քեզի՛ ինձի մտիկ ըրէ . Ես արտին ստակը տամ , առ ինձմէ ,
- 12 ու ես իմ մեռելս հոն թողեմ : Եւ Եփրոն Եբրահամին պատասխան տուաւ՝ ըսելով անոր . Տէ՛ր իմ լէ՛ ինձի . գետինը չորս հարիւր սիկղ արծաթոյ խաբէ , իմին ու քուկին մէջ տեղը ան ի՞նչ
- 13 է . ուստի թողէ՛ քու մեռելդ : Եւ Եբրահամ Եփրոնին մտիկ ըրաւ . և Եբրահամ կշռեց արծաթը՝ — — — Եփրոնին , ինչպէս որ ան Քետին որդիներուն ներկայութեանը խօսեր էր , քիչ չորս հարիւր սիկղ արծաթոյ վաճառականներուն
- 14 մէջ անցած գնով : Եւ Եփրոնին արտը՝ որ Մագդիւլային մէջ Մամբրէին գիմացն է , և արտը ու հոն եղած այրը՝ և անոր բոլորտիքի տասմաններուն մէջ եղած արտին մէջի ծառերը , Եբրահամին ստացուածք ըլլալու համար հաստատուեցաւ Եսոր քաղաքին դռնէն մտնող բոլոր Քետի որդիներուն առջևը : Եւ անկէց ետքը Եբ-

բաճաճ իր կնիկը Սարրան Քանանու երկրին մէջ  
 Քերրոն ըսուած Կամբրէին գիմացը Կազփելայի  
 արտին սյրին մէջը թաղեց : Եւ արար՝ ու հոն 20  
 եղած այրը՝ Քետին որդիներէն Եբրաճամին գե-  
 բեզմանի ստացուածք ըլլալու համար հաստա-  
 տուեցաւ :

## ԳԼ . ԻԴ

1 Եբրաճամ կերդմեցունէ իր ծառան : 10 Ծառային Կամբր-  
 դութիւնը , 12 և աղօթքը : 15 Սերեկան անոր կըհանդիպի  
 զհորին քովը , 18 ջուր կըխմցունէ , 22 և պարզ և կընդունի :  
 24 ու իր որսւ ջեղէ ըլլալը կըծանուցանէ անոր : 29 Եբրան  
 կընդունի զանիկայ իր տունը . 34 Ծառան իր գարուն պատ-  
 ճառը կըպատմէ : 50 Եբրան և Փաթուէլ կընդունին ծառային  
 առաջարկութիւնը : 58 Սերեկան կըհամարէ երթալու : 62 Ի-  
 սահակ կըհանդիպի անոնց՝ դաշտին մէջ :

Եւ Եբրաճամ օրը անցուցած ու ծերացած էր . 1  
 և Տէրը ամէն բանի մէջ օրհնեց Եբրաճամը :  
 Եւ Եբրաճամ ըսաւ իր տանը երէց ծառային 2  
 որ իր բոլոր ունեցածին վերակացունէր . կաղաչեմ  
 քեզի ձեռքդ իմ երանքիս տակը դիր . Եւ քեզ 3  
 կերդմեցունեմ Տէրոջմով՝ որ երկինքին Ես-  
 տուածը ու երկրին Եստուածն է , որ իմ որդիիս  
 կնիկ չառնե՛ս Քանանացիներուն աղջիկներէն , ու  
 րոնց մէջը որ ես կըքնակիմ : Հասցա իմ երկրիս 4  
 ու իմ ազգականիս երթաս , և իմ որդիիս Իսա-  
 հակին կնիկ առնես : Եւ ծառան ըսաւ անոր . 5  
 Գուցէ կնիկը իմ ետեւէս աս երկիրը գալ չուզէ ,  
 կըլլայ որ քու որդիդ ան երկիրը գարձունեմ՝  
 ուրկից դուն ելար : Եւ Եբրաճամ ըսաւ անոր . 6  
 չըլլայ որ իմ որդիս հոն գարձունես : Երկինքին 7



- Տէր Աստուածը՝ որ իս իմ հօրս տունէն ու  
 իմ ծնած երկիրէս հանեց, և որ խօսեցաւ ինձի՝ ու  
 երդում ըրաւ ինձի, ըսելով. Աս երկիրը քու  
 սերունդիդ պիտի տամ. Անիկայ իր հրեշտակը  
 քու առջևդ պիտի խրկէ, ու դուն անկէց իմ որ-
- 8 դիս կնիկ պիտի առնես: Աւ թէ որ կնիկը քու  
 ետեւէդ դալ չուզէ, աս իմ երդումէս դուն ան-  
 պարտ կըլլաս. միայն թէ իմ որդիս հոն պիտի
- 9 չդարձունն'ս: Աւ ծառան իր տիրոջը Աբրա-  
 համին երանացը տակը դքսաւ իր ձեռքը, ու աս  
 քանին համար երդում ըրաւ անոր:
- 10 Աւ ծառան իր տիրոջը ուղտերէն տասը ուղտ  
 տաւ՝ ու գնաց. քանզի իր տիրոջը բոլոր բա-  
 րութիւնները իր ձեռքն էր: Աւ ելաւ ու դէպի
- 11 Սիջագեառ Ասքուլին քաղաքը գնաց: Աւ քա-  
 ղաքին դուրսի դին ջրհորի մը քովը իրիկուան գէմ  
 կնիկներուն ջուր քաշելու ելած ատներ՝ ուղ-
- 12 տերը նստեցուց. Աւ ըսաւ. Ո՛վ իմ տիրոջս Աբ-  
 րահամին Տէր Աստուածը, կաղաչեմ քեզի՝ յա-  
 ջողէ՛ ինձի այսօր, և իմ տիրոջս Աբրահամին բարե-
- 13 բարութիւն ըրէ՛: Ահա ես ջուրի աղբիւրին  
 քովը կըկայնիմ, և աս քաղաքին բնակիչներուն
- 14 աղջիկները ջուր հանելու կերան: Աւ ըլլայ  
 որ երբ աղջիկին ըսելու ըլլամ թէ՛ շնորհք ըրէ  
 օստորդ իջեցնուր որ խմեմ. ու անիկայ ըսելու  
 ըլլայ թէ, Խամ՝ ու քու ուղտերուդ ալ խմցու-  
 նեմ, քու Խասակ ծառայիդ համար սահմա-  
 նածդ՝ թող անիկայ ըլլայ. և անով գիտնամ  
 որ իմ տիրոջս բարեբարութիւն ըրիր:

Աւելաւ որ տակաւին իր խօսքը չըմնացու- 15  
 ցած, ահա Աբրահամին եղբօրը՝ Ապրովրին կնո-  
 ջը Սեղբային որդին Քաթուէլին ծնած Սե-  
 բեկան եկաւ, իր ուսին վրայ սափոր մը ունե-  
 նալով: Աւ աղջիկը շատ գեղեցիկ տեսքով 16  
 կոյս մըն էր, ու էրիկ մարդ մը չէր գիտեր զա-  
 նիկայ. և իջաւ անիկայ աղբիւրը, և լեցուց ջու-  
 րին ամանը ու կրդառնար: Աւ ծառան անոր առ- 17  
 ջևը վազեց՝ ու ըսաւ. «Նորհա՛ք ընդ՝ քու սափո-  
 րէդ ինձի քիչ մը ջուր խմցուր: Աւ անիկայ՝ իւր- 18  
 մէ՛ տէր իմ, ըսաւ: Աւ շուտով սափորը իր ձեռ-  
 քին վրայ իջեցուց՝ ու խմցուց անոր: Աւ երբոր 19  
 զանիկայ խմցունելը լմնցուց՝ ըսաւ. Ուղտերուդ  
 ալ ջուր քաշեմ, մինչև որ ամէնքը խմեն: Աւ 20  
 շուտով սափորը աւազանին մէջ պարպեց, և նո-  
 րէն հորը վազեց ջուր քաշելու, և անոր բոլոր ուղ-  
 տերուն համար ջուր քաշեց: Աւ մարդը զար- 21  
 մանալով անոր, լուռ կրմնար հոռի թէ ար-  
 գեօք Տէրը անոր ճամբան յաջող ըրաւ՝ թէ չէ:  
 Աւ եղաւ որ երբ ուղտերը լմնցուցին խմելը, մար- 22  
 քը կէս սիկղ ոսկիէ օղակ մը՝ ու անոր ձեռ-  
 քերուն համար տասը սիկղ ոսկիէ երկու ա-  
 պարանջան հանեց ու հոռի. Ու ըսաւ. Ինչ 23  
 որ ինչ աղջիկն ես, կաղաչեմ ընդ՝ ինձի. քու հօրդ  
 տունը գիշերը կենալու տեղ կայ մեզի: Աւ ա- 24  
 նիկայ ըսաւ անոր. Այս Սեղբային որդին Քա-  
 թուէլին աղջիկն եմ, որն որ Սեղբօս Ապրովրին  
 ծնաւ: Այս ըսաւ անոր. Ենք շատ յարգ 25  
 ու ճարակ ունինք, և գիշերը կենայու տեղ ալ:

- 26 Եւ մարդը խոնարհեցուց իր գլուխը՝ ու Տէրոջը  
 27 երկրպագութիւն ըսաւ : Եւ ըսաւ . Օրհնեալ  
 ըլլայ իմ տիրոջս Աբրահամին Տէր Աստուածը՝  
 որ իմ տէրս իր ողորմութենէն ու իր ճշմար-  
 տութենէն չզրկեց , ես ճամբան եղած ատենս՝  
 Տէրը իս իմ տիրոջս եղբայրներուն տունը ա-  
 28 ռաջնորդեց : Եւ աղջկը վազեց ու աս բաները  
 իր մօրը տունը պատմեց :
- 29 Եւ Ռեբեկան եղբայր մը ունէր . Լաբան ա-  
 նունով . և Լաբան դուրս վազեց դէպի աղբիւրը  
 30 մարդուն քովը : Ինչու որ օղակը տեսնալով՝ և  
 իր քրոջը ձեռքերուն վրայի ապարանջանները , ու  
 ըսելով իր քրոջը Ռեբեկային խօսքերը , ըսելով  
 թէ՛ ան մարդը ասանկ խօսեցաւ ինձի . մարդուն  
 եկաւ , և ահա անիկայ ուղտերուն քովը աղբիւ-  
 31 ըին յօր կայներ էր : Ու ըսաւ անոր . Եկու՛ք՝ ո՛վ  
 Տէրոջը օրհնեալը , ինչո՞ւ դուրսը կայներ ես .  
 քանզի պատրաստեցի տունը՝ և ուղտերուն համար  
 32 տեղ մը : Եւ մարդը տուն եկաւ , ու ուղտերը  
 քակեց և ուղտերուն յարդ ու ճարակ՝ և անոր  
 ոտքերը ու անոր հետ եղած մարդոցը ոտքերը  
 33 լուալու ջուր տուաւ : Եւ անոր առջևը կե-  
 րակուր դրուեցաւ . բայց անիկայ ըսաւ թէ՛ Մին-  
 չի որ խօսքերս չզրուցեմ , չեմ ուտեր . և ինքը  
 34 ըսաւ . Օրոքէ՛ նայի՛ : Եւ անիկայ ըսաւ . Ես  
 35 Աբրահամին ծառան եմ : Եւ Տէրը մեծապէս  
 օրհնեց իմ տէրս , և մեծ մարդ մը եղաւ . և ան-  
 որ հօտեր ու արջառներ և արծաթ . ու ոսկի և  
 ծառաներ ու աղախիներ և ուղտեր ու էջեր

տուաւ : Աւ իմ տիրոջս կնիկը Սարրան իր ծե- 36  
բութեանը մէջ իմ տիրոջս որդի մը ծնաւ , որ  
բոլոր իր ունեցածը անոր տուաւ : Աւ իմ տէրս 37  
ինձի երգում ընել տուաւ՝ ըսելով , Իմ որ-  
դիիս Քանանացիներուն աղջիկներէն՝ որոնց եր-  
կիրը ես կրքնակիմ , կնիկ չառնե՛ս : Զապա իմ 38  
հօրս տունը ու իմ ազգականիս երթաւս , ու իմ  
որդիիս կնիկ առնես : Աւ ես իմ տիրոջս ըսի . 39  
Քուցէ կնիկը իմ ետեւէս չգար : Աւ անիկայ 40  
ինձի ըսաւ . Տէրը՝ որուն առջևը ես կրքալեմ ,  
իբ հրեշտակը քեզի հետ պիտի խրկէ , ու քու  
ճամբագ պիտի յաջողէ . և իմ որդիիս կնիկ առ-  
նես իմ ազգականէս ու իմ հօրս առնէն : Ըն 41  
ատենը դուն իմ երգումէս անպարտ կրլլաս՝ եր-  
բոր իմ ազգականիս երթալով , քեզի մէջ չտան ,  
իմ երգումէս անպարտ կրլլաս : Աւ աղ- 42  
բիւրը եկայ այսօր՝ ու ըսի . Ո՛վ իմ տիրոջս Եր-  
րահամին Տէր Եստուածը , թէ որ հիմա առ իմ  
երթալու ճամբաս դուն կրյաջողես , Եհա ես 43  
ջուրի աղբիւրին քովը կրկայնիմ . և ըլլայ որ  
աղջիկը ջուր քաշելու գայ , և ես անոր ըսեմ թէ՛  
Շնորհք ըտէ , ինձի քու սափորէդ քիչ մը ջուր  
տո՛ւր խմելու , Աւ անիկայ ինձի՛ Քուն ալ խմէ՛ , 44  
և ուղտերուդ համար ալ ջուր քաշեմ ըսէ , թող  
անիկայ ըլլայ Տէրոջը սահմանած կնիկը իմ տի-  
րոջս որդիին համար : Աւ իմ սրտիս մէջը տա- 45  
կաւին խօսքը չե՞ցուցած , ահա Սիբեկայ կելար  
սափորը իր ուսին վրայ , և աղբիւրը իջաւ՝ ու  
ջուր քաշեց . և ըսի անոր : Շնորհք ըտէ ինձի

- 46 ջուր խմցուր : Ալ անիկայ շուտով սափորը իր ուսէն վար առաւ՝ ու ըսաւ . Իսմէ՛ , և ուղտերուդ ալ խմցունեմ . ուստի խմեցի , ու ուղտերուն ալ խմցուց : Ալ հարցուցի անոր ու ըսի . Գուն որի՞ն աղջիկն ես . և անիկայ ըսաւ . Մեղքայի՛ . Ապրովրին ճնած որդին Բաթուէլին աղջիկն եմ . անատենը օղակը անոր քիթը ու արարանջանները անոր ձեռքերուն վրայ դրի : Ախոնարհեցուցի գլուխս ու Տէրոջը երկրպագութիւն ըրի , և իմ տիրոջս Աբրահամին Տէր Աստուածը օրհնեցի , որ իմ տիրոջս եղբօրը աղջիկը իր որդիին առնելու համար՝ իս ուղիղ ճամբան առաջնորդեց : Ալ հիմա թէ՛ որ իմ տիրոջս շնորհք ու ճշմարտութիւն պիտի ընէք , ինծի պատմեցէ՛ք . և թէ՛ չէ՛ նորէն ինծի ըսէ՛ք , որ ես աջ կողմը կամ ձախ կողմը դառնամ :
- 50 Ուստի Աբրահան ու Բաթուէլը պատասխան տուին ու ըսին . Աս բանը Տէրոջմէն է , մենք քեզի գէշ
- 51 կամ աղէկ չենք կրնար ըսել : Ահա Ռեբեկան քու առջեդ է , առ ու գնա՛ . և Տէրոջը ըսածին պէս թող քու տիրոջդ որդիին կնիկ ըլլայ :
- 52 Ալ եղաւ որ երբ Աբրահամին ծառան անոնց խօսքերը լսեց , մինչև գետինը երկրպագութիւն ըրաւ Տէրոջը : Ալ ծառան ոսկի ամաններ ու արծաթ ամաններ և հանդերձներ հանեց ու Ռեբեկային տուաւ . և անոր եղբօրը ու
- 54 մօրը պատուական ընծաներ տուաւ : Ալ կերան ու խմեցին՝ ինքը և իր հետը եղած մարդիկները , ու գիշերը կոն մնացին . և առտուանց ե-

լան , ու ինքը ըսաւ . Իս իմ տիրոջս խրկեցէք :  
 Եւ աղջիկին եղբայրը ու մայրը ըսին . Թող աղ- 55  
 ջիկը քանի մը օր , գոնէ տասը օր մեր քովը կե-  
 նայ , ետքը երթայ : Եւ ինքը ըսաւ անոնց . 56  
 Իս մի՛ արգիլէք . ինչու որ Տէրը իմ ճամբաս  
 յաջողեց . Թող տուէք իս՝ որ տիրոջս երթամ :  
 Եւ անոնք ըսին . Աղջիկը կանչենք ու իր բե- 57  
 բանը փնտրուենք : Եւ կանչեցին Սեբեկան , ու 58  
 ըսին անոր . Ես մարդուն հետ կերթամ . և ա-  
 նիկայ՝ կերթամ ըսաւ : Եւ իրենց քոյրը Սե- 59  
 բեկան՝ ու անոր դայեակը և Եբրահամին ծա-  
 ոան՝ ու անոր մարդիկը խրկեցին : Եւ օրհնե- 60  
 ցին Սեբեկան՝ ու ըսին անոր . Իսն մեր քոյրն  
 ես , հազարաւոր բիւրերու հոյ՞ ըլլաս , և քու  
 տերունդդ թշնամիներուդ քաղաքները թող  
 ժառանգէ : Եւ Սեբեկան ու իր նաժիշտները 61  
 ելան՝ ու ուղտերը հեծան՝ և ան մարդուն ետեւէն  
 գացին : Եւ ծառան՝ առաւ Սեբեկան ու  
 գնաց :

Եւ Իսահակ՝ Լահայրոյի հորէն դարձած 62  
 կուգար . ինչու որ անիկայ հարաւային երկիրը  
 կը բնակէր : Եւ Իսահակ իրիկուան դէմ դաշ- 63  
 տը աղօթք ընելու ելեր էր . և իր աչքերը  
 վերցուց ու նայեցաւ , և ահա ուղտեր կուգային :  
 Եւ Սեբեկայ իր աչքերը վերցուց՝ ու երբոր 64  
 Իսահակը տեսաւ , ուղտէն վար իջաւ : Եւ ը- 65  
 սաւ ծառային . Իսաշտին մէջ դէպի մեզի եկող  
 մարդը ո՛վ է . և ծառան ըսաւ , Իմ տէրս է .  
 և ինքը քօղը առաւ ու ծածկուեցաւ : Եւ ծա- 66

ուան իր բոլոր ըրած բաները պատմեց Խսահակին :  
 67 Եւ Խսահակ զանիկայ իր մօրը Սարրային վրանը  
 տարաւ , ու Ռեբեկան առաւ , որ իր կնիկը եղաւ .  
 և ինքը սիրեց զանիկայ : Եւ Խսահակ մխի-  
 թարուեցաւ իր մօրը վըայով :

Գ Լ . Ի Ե

1 Եբրահամն Վետուրայէն ունեցած զուակները . 5 իր բա-  
 տացուածքը որդւոցը կըբաժնէ : 7 Իր կենացը օրերը ու մա-  
 ճը , 8 և թաղուիլը : 12 Իսմայէլի ազգարանութիւնը , 17  
 անոր կենացը օրերը և մաճը : 21 Ռեբեկայի ամուսնանը հա-  
 մար՝ Խսահակ կաղօթէ : 22 Ռեբեկայի արգանդին մէջ տը-  
 ղայքը կըկուտին : 24 Եսաւի ու Յակօբի ծնունդը , 27 և ի-  
 բարմէ տարբեր ըլլալնին : 29 Եսաւ իր անդրանկութիւնը կը  
 ծախէ :

1 Եւ Եբրահամ նորէն կնիկ մը առաւ , ու անոր  
 2 անունը Վետուրա էր : Եւ անիկայ իրեն  
 3 Օլեմբանը ու Յեկսանը և Մադանը ու Մադի-  
 4 անը և Յեսթիկը ու Սովիէն ծնաւ : Եւ Յեկ-  
 5 սան ծնաւ Սօբան ու Գադանը . և Գադանին  
 որդիքը Եսուրիիմ ու Լատուսիիմ և Լովովիիմ  
 6 էին : Եւ Մադիանին որդիքը Գեփար ու Էփէր  
 և Ենովք ու Եբիգա և Եդրադա էին , սասոնք  
 7 ամէնը Վետուրային որդիներն էին : Եւ Եբ-  
 րահամ իր բոլոր ունեցածը Խսահակին տուաւ :  
 8 Իսայց Եբրահամ իր հարճերուն որդւոցը պար-  
 գեններ տուաւ , և քանի՜ որ ինքը կենդանի էր՝  
 զանոնք իր որդին Խսահակին քովէն դէպի ա-  
 9 բեկեք արեւելեան երկիրը խրկեց : Եւ Եբրա-  
 համին կենացը տարիներուն օրերը՝ որ ինքը ապ-

բեցաւ, հարիւն եօթանասունըհինգ տարի էր :  
 Եւ Ըբրահամ աղէկ ծերութեամբ ծերացած և  
 իր օրերը անցուցած աւանդեց իր հոգին ու մե- 8  
 աւ, և իր ժողովուրդին խառնուեցաւ : Եւ իր 9  
 որդիքը Իսահակ ու Իսմայէլ զինքը Վազիելա-  
 յի սյրին մէջ թաղեցին, որ ան՝ Քետացի Սահա-  
 ռին որդին Եփրոնին արտին մէջ Վամբէին դի-  
 մացն է . Որ ան արտը Ըբրահամ՝ Քետին որ- 10  
 դիններէն ծախու առած էր : Հոն թաղուեցաւ  
 Ըբրահամ ու իր կնիկը Սարրան :

Եւ եղաւ որ Ըբրահամին մեռնելէն ետքը՝ Ըս- 11  
 աուած օրհնեց անոր որդին Իսահակը . և Իսա-  
 հակ լահայրոյի հորին քովը բնակեցաւ :

Եւ ասոնք են ճնունդները Ըբրահամին Իսմա- 12  
 յէլ որդիին, որն որ Սարրային Եգիպտացի ա-  
 ղախինը Ըգարը ճնաւ Ըբրահամին : Եւ Իս- 13  
 մայէլին որդւոցը անունները ասոնք են՝ իրենց ա-  
 նուններովը ու իրենց ճնունդներովը . Իսմայէլին  
 առջինեկ որդին՝ Նարէօթ, և Կեդար՝ ու Ըբ-  
 դեէլ՝ և Սարսամ, Եւ Սասմա՝ և Իդումա՝ 14  
 ու Սասէ, Եւ Քողզադ՝ ու Թեմա՝ Յետուր՝ 15  
 Նափէս՝ և Կեդմա : Ըսոնք են Իսմայէլին որ- 16  
 դիները . և իրենց վրաններովը ու իրենց գեղե-  
 րովը անուններնին ասոնք են . իրենց աղգերուն  
 պէս տասներկու իշխաններ էին : Եւ Իսմայէլ- 17  
 լին կենացը օրերը հարիւր երսունուեօթը տարի  
 էլան . և աւանդելով հոգին՝ մեռաւ, և իր ժո-  
 ղովուրդին խառնուեցաւ : Եւ բնակեցան Իս- 18  
 յէլոցէր Եւիլայէն մինչև Սուր, որ Եգիպտոսի



- գիմացը Ետրեստան երթալու ճամբուն մէջ տեղն  
 է . բոլոր իր եղբայրներուն առջևը բնակեցաւ :  
 19 Եւ Երրաճամին որդին Խաաճակին ծնունդ-  
 ները ասոնք են . Երրաճամ ծնաւ Խաաճակ :  
 20 Եւ Խաաճակ քառսուն տարեկան էր՝ երբոր Մի-  
 ջագետէն Ետրի Բաթուէլին աղջիկը Ետրի Լա-  
 21 բանին քոյրը Ռեբեկան՝ իրեն կնիկ առաւ : Եւ  
 Խաաճակ աղաչեց Տէրոջը իր կնկանը համար՝  
 ամուլ ըլլալուն պատճառաւ . և Տէրը անոր  
 աղաչանքը ընդունեց , ու անոր կնիկը Ռեբեկան  
 22 յղեկաւ : Եւ աղաքները անոր արգանդէն մէջ կը  
 կոուէին , և ըսաւ . Թիէ որ այսպէս է , ինչո՞ւ ե-  
 ղաւ ինձի ստիկայ . և Տէրոջմէն հարցունելու գը-  
 23 նաց : Եւ Տէրը ըսաւ անոր . Երկու ազգ կան  
 արգանդիդ մէջը , և քու որովայնէդ երկու ժողո-  
 վուրդ պիտի զատուի . և ժողովուրդին մէկը՝ մե-  
 կալէն զօրաւոր պիտի ըլլայ , ու մեծը պիտի ծա-  
 24 ապէ պզտիկին : Եւ երբ օրերը լեցուեցան ծնա-  
 նելու , աճա երկուորեակ էին անոր արգանդին  
 25 մէջը : Եւ առջինեկը ելաւ կարմրագոյն , բոլոր  
 մարմինը մազոտ մորթի պէս էր . և անոր անունը  
 26 Եսաւ դրին : Եւ անկէց ետքը անոր եղբայրը  
 ելաւ , և անոր ձեռքը Եսաւին գարշապարէն բռ-  
 ներ էր , և անոր անունը Գնակոր դրին . և ա-  
 նոնց ծնած ատենը Խաաճակ վաթսուն տարեկան  
 27 էր : Եւ մանկուները մեծցան . և Եսաւ դաշտի  
 մարդ՝ վարպետ որսորդ եղաւ . և Գնակոր հան-  
 28 գարտ բարձրով մարդ էր վրանը բնակելով : Եւ

\* ք՝ մազոտ

† ք՝ գարշապարը բռնող , ևս խարտղ

Իսահակ կըսիրէր Եսաւը, ինչու որ անոր որսէն  
կուտէր. բայց Ռեբեկան Յակոբը կըսիրէր: Օր<sup>29</sup>  
մը Յակոբ ապուր կեփէր, ու Եսաւ դաշտէն ե-  
կաւ և հոգնած էր: Եւ Եսաւ Յակոբին ըսաւ.<sup>30</sup>  
Շնորհք ըրէ, առ շիկաթ անէն տուր որ ուտեմ,  
քանզի հոգնած եմ. անոր համար անոր անունը  
Յղովմ կոչուեցաւ: Եւ Յակոբ ըսաւ. Ծաւ<sup>31</sup>  
խէ ինծի այսօր քու անդրանկութեանդ իրա-  
ւունքը: Եւ Եսաւ ըսաւ. Ե՛հա մեռնելու կը<sup>32</sup>  
մօտենամ, և անդրանկութիւնը ինծի ի՞նչ օ-  
գուտ ունի: Եւ Յակոբ ըսաւ. Ե՛յսօր ինծի<sup>33</sup>  
երգում ըրէ, և անիկայ երգում ըրաւ անոր,  
ու ինքը իր անդրանկութեան իրաւունքը ծախեց  
Յակոբին: Ե՛ն ատենը Յակոբ հաց ու ռօպէ ա-<sup>34</sup>  
պուր տուաւ Եսաւին. և անիկայ կերաւ, ու  
խմեց, և ելաւ ու գնաց. այսպէս Եսաւ իր անդ-  
րանկութիւնը անարգեց:

## ԳԼ. ԻՅ

1 Իսահակ սովի պատճառով Գերարա կերթայ: 2 Եսաւած  
դանիկայ կըխրատէ ու կօրնէ: 7 Իր կինը ուրանալուն համար  
Եբիմեչէքէն կը յանդիմանուի: 12 Իր հարստութիւնը: 18  
Իսահակ ջրհորներ կըխորէ: 26 Եբիմեչէք Ինքսարէէի մէջ  
Իսահակին հետ ուխտ կընէ: 34 Եսաւի կնիկները:

Եւ երկրին մէջ սով եղաւ, առջի եղած սովէն 1  
զատ՝ որ Եբրահամին օրերը եղեր էր. և Իսա-  
հակ Գերարա գնաց Փղըշտացոց Եբիմեչէք  
թագաւորին: Եւ Տէրը երեցաւ անոր՝ ու ը- 2  
սաւ. Եղիպտոս մի՛ իջնար, բնակէ ան երկրին  
մէջ՝ որն որ քեզի պիտի ըսեմ: Պանդուխտ ե- 3

ղի՛ր աս երկրին մէջ , և ես քեզի հետ պիտի ըլ-  
 լամ , ու քեզ պիտի օրհնեմ . ինչու որ բոլոր աս  
 գաւառները քեզի՝ ու քու սերունդիդ պիտի տա՛մ ,  
 և քու հօրդ Աբրահամին ըրած երդումս պիտի  
 4 հաստատեմ : Եւ քու սերունդդ երկինքին  
 աստղերուն չափ պիտի շատցունեմ , և բոլոր աս  
 գաւառները քու սերունդիդ պիտի տամ . ու երկ-  
 րի բոլոր ազգերը քու սերունդովդ պիտի օրհ-  
 5 նուին , ինչու որ Աբրահամ իմ խօսքերս մտիկ  
 ըրաւ , և իմ հրամաններս ու պատուիրանքներս՝  
 6 իմ իրաւունքներս ու օրէնքներս պահեց : Եւ  
 7 Իսահակ բնակեցաւ Գերարային մէջ : Եւ ան  
 տեղին մարդիկը հարցուցին անո՞յ իր կնիկանը հա-  
 մար . և անիկայ ըսաւ , Իմ քոյրս է . քանզի իմ  
 կնիկս է ըսելու վախցաւ , Չըլլայ որ՝ ըսաւ , ան  
 տեղին մարդիկը իս մեռցունեն Ռեբեկային հա-  
 8 մար . ինչու որ անիկայ տեսքով գեղեցիկ էր : Եւ  
 եղաւ որ երբ հոն շատ ատեն կեցաւ , Փղըշտա  
 ցոց թագաւորը Աբիմելէք պատուհանէն նայե-  
 ցաւ ու տեսաւ , և ահա Իսահակ իր կնիկանը Ռե-  
 9 բեկային հետ կըխաղար : Եւ Աբիմելէք կան-  
 չեց Իսահակը ու ըսաւ . Ահա՛ իրաւցունէ անի-  
 կայ քու կնիկդ է . և ինչու Անիկայ իմ քոյրս  
 է ըսիր . և Իսահակ ըսաւ անոր . Քանզի ըսի  
 10 թէ՛ Չըլլայ որ անոր պատճառովը մեռնիմ : Եւ  
 Աբիմելէք ըսաւ . Ի՞նչ է աս քու մեզի ըրածդ .  
 քի՛չ մնաց որ ժողովուրդէն մէկը քու կնիկիդ  
 հետ կըպառկէր , ու մեր վրայ յանցանք պիտի  
 11 բերէիր : Եւ Աբիմելէք բոլոր ի՞նչ ազգին պա-

առերեց՝ ըսելով, Ո՛վ որ աս մարդուն՝ կամ ա-  
 նոր կնիկին մօտելու ըլայ, անշուշտ պիտի սպան-  
 նուի: Եւ Խաւսակ ան երկրին մէջ ցանեց, 12  
 ու ան տարին հարիւրապատիկ արդէնք քաղեց.  
 Եւ Տէրը օրհնեց զանկիայ: Եւ մարդը բարձ- 13  
 քացաւ, և երթալով մեծցաւ. անանկ որ խիստ  
 մեծ եղաւ: Եւ ունեցաւ ոչխարներ ու ար- 14  
 ջառներ և շատ ծառաներ. ու փղըշտացիները  
 նախանձեցան անոր: Եւ իր հայրը Երրահա- 15  
 մին օրերը՝ իր հօրը ծառաներուն փորած բոլոր  
 հորերը փղըշտացիները գոցեցին, և հողով լե-  
 ցուցին զանոնք: Եւ Երթմուէք ըսաւ Խաւսա- 16  
 կին. Քնա՛ մեզմէ. ինչու որ մեզմէ շատ էվելի  
 գօրաւոր եղար: Եւ Խաւսակ գնաց անկէջ, ու 17  
 Քերարայի ձորը իջաւ, և հոն բնակեցաւ:

Եւ Խաւսակ նորէն փորեց ան հորերը՝ որոնք իր 18  
 հօրը Երրահամին օրերը փորեցին՝ ու Երրահա-  
 մին մեռնելէն ետքը՝ փղըշտացիները գոցեցին,  
 և իր հօրը դրած անուններուն պէս անոնց ա-  
 նուններ դրաւ: Եւ Խաւսակին ծառաները ան 19  
 ձորին մէջ փորեցին, ու հոն վազուն ջուրի հոր  
 գտան: Եւ Քերարային հովիւները Խաւսակին 20  
 հովիւներուն հետ կրկուուէին՝ ըսելով, Թշուրը  
 մերն է. անոր համար ան հորին անունը \* Եսէք  
 դրաւ. ինչու որ անոր հետ կուուեցան: Եւ ու- 21  
 բիշ հոր մը փորեցին, ու անոր համար ալ կուուե-  
 ցան. և անոր անունը † Սիդնա դրաւ: Եւ 22  
 անկից ելաւ ու ուրիշ հոր մը փորեց, և անոր

\* Թ՝ կուու

† Թ՝ Թնամութիւն

- Համար չկուեցան . և անոր անունը \* Ոորով  
 դրաւ՝ ու ըսաւ . Վանզի Հիմա Տէրը մեզ ընդ-  
 արձակեց և երկրի մէջ պողարեր պիտի ըլլանք :
- 23 Եւ անկէց Բերսաբէէ գնաց : Եւ ան գիշեր
- 24 Տէրը երևցաւ անոր ու ըսաւ . Ես քու հօրդ Եր-  
 րահամին Եստուածն եմ . մի՛ վախնար , ինչու  
 որ հետդ եմ , և իմ ծառաս Երրահամին Համար  
 քեզ պիտի օրհնեմ ու քու սերունդդ պիտի շատ-
- 25 ցունեմ : Եւ հոն սեղան մը շինեց՝ ու Տէրօջք  
 անունը կարդաց , և հոն իր վրանը բացաւ . ու  
 Խաահակին ծառաները հօր մը փորեցին ան տեղ :
- 26 Եւ Երիմեէք ու իր բարեկամը Աբողաթ՝ և  
 իր սարրապետը Փիքօղ՝ Վերարայէն անոր դա-
- 27 ցին : Եւ Խաահակ ըսաւ անոնց . Ի՞նչ պատ-  
 ճառաւ ինձի եկաք . քանզի իս ատեցիք , ու իս
- 28 ձեզմէ վռնտեցիք : Եւ ըսին . Ստուգիւ տե-  
 սանք որ Տէրը քեզի հետ է , և ըսինք . Հիմա մեր  
 մէջը՝ քուկին ու մեր մէջ տեղը երգում մը ըլ-
- 29 լայ , և քեզի հետ ուխտ ընենք , Որ մեզի գէշու-  
 թիւն չընես , ինչպէս որ մենք քեզի բան մը չը-  
 րինք , միայն թէ քեզի աղէկութիւն ըրինք , ու  
 քեզ խաղաղութեամբ յուղարկեցինք : Վուն հի-
- 30 մա Տէրօջք օրհնալն էս : Եւ ինքը անոնց խնջոյք
- 31 ըրաւ . ու անոնք կերան ու խմեցին : Եւ առտուանց  
 կանուխ ելան՝ ու մէկզմէկու երգում ըրին . և  
 Խաահակ յուղարկեց անոնք , ու անոնք իրմէն
- 32 խաղաղութեամբ գացին : Եւ եղաւ որ նոյն օրը  
 Խաահակին ծառաները եկան , և իրենց փորած

\* ք՝ ընդարձակութիւն

Հորին համար պատմեցին անոր՝ ու ըսին . Տուր 33  
 քտանք : Այլ ինքը անոր անունը \* Սարէ դը-  
 րաւ . անոր համար մինչև այսօր ան քաղաքին  
 անունը Ռէրսարէէ է :

Այլ Ասաւ քառսուն տարեկան էր՝ երբոր իրեն 34  
 կնիկ առաւ Վեստացի Ռէերային աղջկիկը Յու-  
 դիթը , ու Վեստացի Ալոյմային աղջկիկը Ռասե- 35  
 մայթ : Այլ անոնք ցաւ եղան Ասահակին ու Ռե-  
 բեկային :

## ԳԼ . ԻԷ

1 Ասահակ՝ Ասաւը որսի կըխրկէ : 6 Ռեբեկան՝ Յակոբը կըխը-  
 բատէ՝ որ հօրը օրջնութիւնը առնէ : 15 Յակոբ՝ Ասաւի գցեսա-  
 ները հազնելով՝ օրջնութիւնը կառնէ : 30 Ասաւ իր որսը կը  
 բերէ : 33 Ասահակ կըսարսափի : 34 Ասաւ կըզանդատի , ու  
 շատ թախանձանքով օրջնութիւն մը կառնէ , ու 41 Յակոբը  
 մեռցունելու կըսպառնայ : 42 Ռեբեկա՝ Ասաւի բարկու-  
 թեանը առջևը կառնէ :

Այլ եղաւ որ երբ Ասահակ ծերացաւ՝ ու իր աշ- 1  
 քերը տկարացան տեսնալու զօրութենէն , իր  
 մեծ որդին Ասաւը կանչեց՝ ու ըսաւ անոր .  
 Ո՛րդեակ իմ . և անիկոյ ըսաւ , Ահա էաւ եմ :  
 Այլ Ասահակ ըսաւ . Ահա հիմա ես ծեր եմ , մեռ- 2  
 նելուս օրը չեմ գիտեր : Այլ հիմա գէնքերդ՝ 3  
 կապարճդ ու աղեղդ ա՛ն , և ինձի որս մը որսա՛ .  
 Այլ իմ սիրածիս պէս ինձի խորտիկներ ըրէ , ու 4  
 ինձի բեր ուտեմ՝ որ մեռնելէս առաջ իմ հողիս  
 քեզ օրհնէ : Այլ Ասահակ իր Ասաւ որդիին 5  
 զուրցած ատենը , Ռեբեկան լսեց . և Ասաւ դաշ-  
 տը գնաց , որս որսալու բերելու : Այլ Ռեբե- 6

- կան իր Յակոբ որդիին զուրցեց՝ ըսելով , Ահա  
 քու հայրդ՝ լսեցի որ քու Ասաւ եղբորդ խօսեցաւ՝  
 7 ու ըսաւ , Ինձի որս բեր , ու ինձի համար խոր-  
 տիկներ ըրէ որ ուտեմ , ու մեռնելէս առաջ քեզ  
 8 Տէրօջը առջևը օրհնեմ : Աւ հիմա որդեակ  
 իմ , ես քեզի ինչպէս որ պատուիրեմ , իմ խօսքս  
 9 մտիկ ըրէ . Հիմա դէպի հօտը գնա , ու ան-  
 կէց ինձի երկու աղէկ ուլ բեր այժերէն , և  
 զանոնք հօրդ խորտիկներ ընեմ իր սիրածին պ'ս .  
 10 Ու հօրդ տար՝ որ ուտէ , և իր մեռնելէն առաջ  
 11 քեզ օրհնէ : Աւ Յակոբ ըսաւ իր մօրը Ռե-  
 բեկային : Ահա իմ եղբայրս Ասաւ մազոտ մար է  
 12 մըն է , ու ես լերկ մարդ մըն եմ . Գուցէ  
 հայրս իս իր ձեռքովը շոշափէ , ու ես իր աչքին  
 խաբողի մը պէս երևամ . և իմ վրաս անէծք  
 13 բերեմ ու չէ՛ թէ օրհնութիւն : Աւ իր մայրը  
 ըսաւ իրեն . Մըդեակ իմ , քեզի ելա՛նք անէծքը  
 իմ վրաս ըլլայ . միայն թէ դուն իմ խօսքս մտիկ  
 14 ըրէ՛ ու գնա՛ ինձի բեր զանոնք : Աւ անիկայ  
 գնաց , ու առաւ և իր մօրը բերաւ . ու մայրը  
 15 անոր հօրը սիրածին պէս խորտիկներ ըրաւ . Աւ  
 Ռեբեկա իր մեծ որդին Ասաւին ազնիւ զգեստները  
 առաւ՝ որն որ տանը մէջ իր քովն էր , ու իր  
 16 պզտիկ որդին Յակոբին հաղցուց : Աւ այժի  
 ուլերուն մորթը անոր ձեռքերուն ու անոր լերկ  
 17 վիզին հաղցուց : Աւ իր ըրած խորտիկները ու  
 18 հացը իր Յակոբ որդիին ձեռքը տուաւ : Աւ ան-  
 իկայ իր հօրը եկաւ , ու ըսաւ . Մի՛ հայր իմ .  
 և անիկայ ըսաւ . Ահա հոս եմ , ով ես դուն՝ եր-

դեակ իմ : Եւ Յակոբ իր հօրը ըսաւ . Ես քու 19  
 անդրանիկ որդիդ Եսաւն եմ . ինձի ըսածիդ պէս  
 ըրի . շնորհք ըրէ ելիր , նստէ , և իմ որսէս  
 կէ՛ր՝ որ հոգիդ իս օր՛նէ : Եւ Խասհակ ըսաւ իր 20  
 որդիին . Ի՞նչպէս այսչափ շուտով գտար՝ որ-  
 դեակ իմ . և անիկայ ըսաւ . Վանզի Տէրը քու  
 Ըստուածդ իմ առջիս բերաւ : Եւ Խասհակ ըսաւ 21  
 Յակոբին . Մօտ եկու՛ր , քեզ ձեռքովս շոշափեմ՝  
 թէ արգեօք դուն իմ որդիս Եսաւն ես՝ թէ չէ :  
 Եւ Յակոբ իր հօրը Խասհակին մօտիկցաւ , որ 22  
 իր ձեռքովը շոշափեց զանիկայ՝ և ըսաւ . Չայնը  
 Յակոբին ձայնն է՝ բայց ձեռքերը Եսաւին ձեռ-  
 քերն է : Եւ յպէս չճանչցաւ զանիկայ , ինչու 23  
 որ անոր ձեռքերը իր եղբօրը Եսաւին ձեռքե-  
 րուն պէս մազոտ էին . և օր՛նեց զանիկայ . Եւ 24  
 ըսաւ . Ի՞նչն ես իմ որդիս Եսաւը . և անիկայ  
 ըսաւ . Ես եմ : Եւ ինքը ըսաւ . Մօտ բեր 25  
 ինձի , ու իմ որդիիս որսէն ուտեմ , որ իմ հոգիս  
 քեզ օր՛նէ . և մօտիկցուց անոր , ու կերաւ . և  
 գինի բերաւ անոր , ու խմեց : Եւ անոր հայրը 26  
 Խասհակ ըսաւ անոր . Հիմա մօտիկցիր ու իս  
 համբուրէ՛ որդեակ իմ : Եւ անիկայ մօտիկ- 27  
 ցաւ ու համբուրեց զանիկայ . և անոր հանգեր-  
 ձին հօտը հետուրտաց , ու օրհնեց զանիկայ և  
 ըսաւ . Տե՛ս իմ որդիիս հօտը՝ Տէրոջը օրհնած  
 արտին հօտին պէս է : Ուստի Ըստուած տա՛յ 28  
 քեզի երկինքին ցօղէն ու երկրի պարարտութե-  
 նէն՝ և ցորենի ու գինիի առատութենէն . Թո՛ղ 29  
 ժողովուրդները քեզի ծառայեն , և ազգերը քեզ



- խնարհութիւն ընեն . քու եղբայրներուդ տէրը եղիր , և մօրդ որդիները քեզի խնարհութիւն ընեն . քեզ անիծողը անիծեալ ըլլայ , ու քեզ
- 30 օրհնողը՝ օրհնեալ : Եւ եղաւ որ Խաւհակ՝ Յակոբը օրհնածին պէս , ու Յակոբ իր հօրը Խաւհակին առջեւէն ելածին պէս , իր եղբայրը Եսաւ որսէն
- 31 եկաւ : Եւ անիկայ ալ խորտիկներ ըրաւ՝ ու իր հօրը բերաւ , և անոր ըսաւ . Թող իմ հայրս ելլայ , ու իր որդիին որսէն ուտէ , որ հողիդ իս օրհնէ :
- 32 Եւ անոր հայրը Խաւհակ ըսաւ անոր . Գուն ո՞վ ես . և անիկայ ըսաւ . Ես անգրանիկ որդիդ Եսաւն եմ : Եւ Խաւհակ խիստ շատ սարսափեցաւ ու ըսաւ . Ըն որսը բռնող ու ինծի բերողը ո՞վ էր , որ ես քուկին գալէդ առաջ ամենէն կերայ , և օրհնեցի զանիկայ . ալ անշուշտ անիկայ օրհ-
- 34 նեալ պիտի ըլլայ : Եւ երբոր Եսաւ իր հօրը խօսքերը լսեց , խիստ մեծ ու դառն լացով լացաւ , և իր հօրը ըսաւ . Իս՝ ի՞ս ալ օրհնէ՞ ո՞վ հայր
- 35 իմ : Եւ անիկայ ըսաւ . Վու եղբայրդ եկաւ նեն-
- 36 գութիւնով՝ ու քու օրհնութիւնդ առաւ : Եւ ինքը ըսաւ . անոր անունը Յակոբ կոչուելուն համար է որ տա երկու անգամ իս խաբեց . իմ անգրանիկութեան իրաւունքս առաւ , և ահա հիմա օրհնութիւնս ալ առաւ : Եւ ըսաւ հօրը . Ին-
- 37 ծի համար օրհնութիւն մը չթողուցի՞ր : Եւ Խաւհակ պատասխան տուաւ ու ըսաւ Եսաւին . Ըհա անիկայ քեզի տէր ըրի , և անոր բոլոր եղբայրները իրեն ծառանէր ըլլալու տուի , ու անի-

կայ ցորենով և գինիով հաստատեցի . ալ հիմա  
 քեզի ի՞նչ ընեմ որդեակ իմ : Եւ Եսաւ իր 38  
 հօրը ըսաւ . Ո՞վ հայր իմ , քու օրհնութիւնդ  
 միայն մէկ մէն է . իս օրհնէ , իս ալ հայր իմ .  
 և Եսաւ իր ձայնը վերցուց ու լացաւ : Եւ իր 39  
 հայրը Խառհակ պատասխան տուաւ՝ ու ըսաւ ա-  
 նոր . Ե՛հա քու բնակութիւնդ երկրին պարար-  
 տութենէն՝ և վերէն՝ երկինքին ցողէն ըլլայ . Եւ 40  
 սուրովդ ապրիս , ու եղբօրդ ծառայութիւն ընես .  
 և ըլլայ որ՝ «նիկ» զատուած ատենդ՝ անոր լուծը  
 քու վիզէդ կտարես :

Եւ Եսաւ ատեց Յակոբը ան օրհնութեանը 41  
 համար՝ որով իր հայրը օրհնեց անիկայ . ու Ե-  
 սաւ իր սրտին մէջը ըսաւ . Իմ հօրս սուգին օրերը  
 մօտ են , անատենը իմ եղբայրս Յակոբը կը մեռ-  
 ցունեմ : Եւ Ռեբեկային պատմուեցաւ իր մեծ 42  
 որդին Եսաւին խօսքերը , և իր պղտիկ որդին  
 Յակոբը կ'անչել տուաւ՝ ու ըսաւ անոր . Ե՛հա  
 Եսաւ եղբայրդ քեզ մեռցունել կարճով՝ քու  
 վրայովդ ինքզինքը կը մխտի : Եւ հիմա որ 43  
 գեսակ իմ , իմ խօսքիս նաղանդէ՝ . ու ելի՛ր գուն  
 դէպի Խառան իմ Լաբան եղբօրս փախի՛ր . Եւ 44  
 անոր քովը ատեն մը կեցի՛ր , մինչև եղբօրդ  
 բարկութիւնը անցնիլը . Մինչև որ եղբօրդ 45  
 բարկութիւնը քեզմէ անցնի , ու քու անոր ըրածդ  
 մտնայ , «- ետքը քեզ անկից բերել կուտամ՝  
 ինչո՞ւ երկուքէդ ալ մէկ օրին մէջ զգուցիմ :  
 Եւ Ռեբեկա ըսաւ Խառհակին . Քետին աղջիկ- 46  
 ներուն պատճառաւը հոգիէս զգուեր եմ . թէ որ

Յակոբ աս երկրին աղջիկներէն՝ ասոնց պէս՝ Վերտին աղջիկներէն կնիկ առնէ , ալ աս կեանքս ի՞նչ պէտք է ինծի :

## Գ Լ . Ի Ը

1 Իսաճակ Յակոբը կօրձէ , ու զանիկայ Միջագետ կըխրկէ : 6  
Եսաւ՝ Իսմայէլին աղջիկը իրեն կնիկ կառնէ : 10 Յակոբի՝  
սանդուխին տեսիլքը : 18 Իեթէլի քարը : 20 Յակոբին ուխտը :

- 1 **Ե**ւ Իսաճակ կանչեց Յակոբը՝ ու օրձեց անիկայ ,  
և անոր պատուիրեց ու ըսաւ . Վանանու աղ-
- 2 ջիկներէն կնիկ չառնես : Ելիբ՝ դէպի Միջագետ  
մօրդ հայրը Բաթուէլին տունը գնա՛ , և քեզի  
անկից՝ մօրդ Լաբան եղբօրը աղջիկներէն կնիկ
- 3 առ : Եւ ամենակարող Եստուած քեզ օրձէ՛ ,  
ու քեզ աճեցունէ՛ , և քեզ շատցունէ՛ . ու շատ
- 4 ժողովուրդներու հայր ըլլաս : Եւ քեզի Եր-  
րաճամին օրձութիւնը տայ , քեզի՝ ու քեզի հետ  
քու սերունդիդ . որ ժառանգես ան պանդուխտ  
եղած երկիրդ՝ որն որ Եստուած Երրաճամին
- 5 տուաւ : Եւ Իսաճակ խրկեց Յակոբը , և անի-  
կայ գնաց դէպի Միջագետ՝ Եսորի Բաթուէլի  
որդին Լաբանին՝ « Ե Յակոբին ու Եսաւին մօրը  
Սեբեկային եղբայրն էր :
- 6 Եւ Եսաւ երբ տեսաւ որ Իսաճակ օրձեց Յա-  
կոբը , ու խրկեց անիկայ դէպի Միջագետ՝ ան-  
կից իրեն կնիկ առնելու համար , և որ օրձեց  
զանիկայ , ու պատուիրեց անոր՝ ըսելով , Վա-
- 7 նանու աղջիկներէն քեզի կնիկ չառնես , Եւ որ

Յակոր Նազանդեցաւ իր, հօրը ու իր մօրը, ու  
 Միջագետ գնաց, Եսաւ ալ տեսնալով որ Քանաւ 8  
 նու աղջիկները իր Խասակ հօրը հաճելի չեն, Ըն- 9  
 ատենը Եսաւ Խամայէլին գնաց, և իր սուրբ կը-  
 նիկներէն 'ի զատ՝ Եբրահամին որդին Խամայէլին  
 աղջիկը՝ Նաբեութին քոյրը. Սայէլէթը իրեն  
 կնիկ առաւ :

Եւ Յակոր Բերսաբէէն ելաւ ու դէպի Խաւ 10  
 ուան գնաց : Եւ տեղ մը հասաւ, ու գիշերը հոն 11  
 մնաց, ինչու որ արեւը մարը մտած էր. և ան  
 տեղի քարերէն առաւ, ու իր գլխուն տակը դը-  
 րաւ, և ան տեղը պառկեցաւ : Եւ երազ մը տե- 12  
 սաւ, թէ ահա սանդուխ մը երկրի վրայ դրուած  
 էր՝ որուն գլուխը երկինքը կը հասնէր, և Եստու-  
 ծոյ հրեշտակները անկից կելլային ու կիջնային :  
 Եւ ահա Տէրը կայնեցաւ անոր վրայ ու ըսաւ 13  
 Ես Եհովայ՝ քու հօրդ Եբրահամին Եստուա-  
 ծը ու Խասակին Եստուածն եմ. ատ երկիրը՝  
 որուն վրայ դուն կը պառկիս, քեզի՛ ու քու սերուն-  
 դիդ պիտի տամ : Եւ քու սերունդդ երկրի աւա- 14  
 ղին չափ շատ պիտի ըլլայ, ու դէպի արեմուտք և  
 արեւելք՝ ու դէպի հիւսիս ու հարաւ պիտի տարա-  
 ծուի. և երկրի բոլոր ցեղերը քեզմով ու քու սե-  
 րունդովդ պիտի օրհնուին : Եւ ահա ես քեզի հետ 15  
 եմ, ու ամէն ուր որ երթաս, քեզ պիտի պահեմ,  
 ու քեզ սա տեղը պիտի դարձունեմ. ինչու որ  
 մինչև ես քեզի զուրցածս չընեմ, քեզ չպիտի  
 թողում : Եւ Յակոր արթընցաւ իր քունէն ու 16  
 ըսաւ. Իրաւցունէ՛ Տէրը սա տեղ է եղեր, և ես

- 17 չգիտցայ : Աւ վախցաւ ու ըսաւ . Ի՞նչ ահա-  
 գին է աս տեղը . աս ուրիշ բան չէ՝ միայն Աս-  
 18 տուծոյ տունը , ու աս է երկինքին դուռը : Աւ  
 Յակոբ առտուանց կանուխ ելաւ , ու իր գլխին  
 տակը դրած քարը առաւ՝ և սն արձան կանգնե-  
 19 ցուց , ու անոր գլուխը եղ թափեց . Աւ ան  
 տեղին անունը \* Ինթէլ դրաւ , բայց առաջ ան  
 20 քաղաքին անունը Լուզ էր : Աւ Յակոբ ուխտ  
 ըրաւ՝ ըսելով , թէ որ Աստուած ինձի հետ ըլլայ՝  
 ու աս երթալու ճամբուս մէջ իս պահէ , և ին-  
 ծի ուտելու հաց՝ ու հագնելու հանգերձ տայ ,  
 21 Աւ իմ հօրս տունը խաղաղութեամբ դառնամ ,  
 22 Տէրը ինձի Աստուած ըլլայ . Աւ աս քարը՝ որն  
 որ ես արձան կանգնեցի , Աստուծոյ տունը ըլլայ .  
 և ան ամենէն՝ որ ինձի պիտի տաս , քեզի տա-  
 սանորդ պիտի տամ :

## ԳԼ . Ի Թ

1 Յակոբ իսառանի հօրը կըհամարէ . 9 Ռաբէլի հետ ճանչու-  
 թութիւն կընէ : 13 Լարան՝ զանիկայ իր տունը կընդունի :  
 18 Յակոբ՝ Ռաբէլին համար խօսք կըկապէ : 23 Խաբէու-  
 թեամբ Լիան իրեն կըտորուի : 28 Յակոբ՝ Ռաբէլն ալ իրեն  
 կնիկ կառնէ , ու անոր համար եօթը տարի ալ կըծառայէ : 32  
 Լիան կըծնանի Ռաբէլը , 33 Եմաւօնը , 34 Դէին , 35 և  
 Յուդան :

- 1 Աւ Յակոբ ճամբայ ելաւ՝ ու արեւելքին ժողո-  
 2 վըրդոցը երկիրը եկաւ : Աւ նայեցաւ , ու ահա  
 գաշտին մէջ հօր մը կար , և ահա հոն անոր  
 քովը իրեք ոչխարի հօտ պառկեր էր . ինչու որ ան  
 հօրէն կըխմցունէին հօտերը . ու հորին բերանը

\* Թ՝ Աստուծոյ տունը

Տես քար մը կար : Եւ բոլոր հօտերը հոն կը <sup>3</sup>  
 ժողովուէին , և Լաւի-նէ-րը հորին բերնէն քարը մէկ  
 դի կը գլտորցունէին ու հօտերը կը խմցունէին , և  
 նորէն քարը հորին բերանը կը դնէին : Եւ Յա- <sup>4</sup>  
 կոր ըսաւ անոնց . Ո՛վ եղբայրներս՝ ուսկի՞ց էք .  
 և անոնք ըսին . Մենք Խառանէն ենք : Եւ ը- <sup>5</sup>  
 սաւ անոնց . Կաքովրին որդին Լաբանը գիտէ՞ք .  
 և անոնք ըսին . Գիտենք : Եւ ըսաւ անոնց . <sup>6</sup>  
 Ողջ առողջ է . և անոնք ըսին . Ողջ է , և ահա  
 անոր Ուաքէլ աղջիկը ոչխարներուն հետ կուգայ .  
 Եւ անիկայ ըսաւ . Եհա տակաւին իրիկուն ը- <sup>7</sup>  
 լալու շատ ատեն կայ , և հօտերուն ժողովուելուն  
 ատենը չէ . ոչխարները խմցուցէք ու գացէք ա-  
 բաժեցէք : Եւ անոնք ըսին . Մենք չենք կրնար , <sup>8</sup>  
 մինչև որ բոլոր հօտերը մէկ տեղ ժողովուին . ու  
 երբ հորին բերնի քարը մէկ դի գլտորցունեն՝  
 անորէն ոչխարները կը խմցունենք : Եւ երբ <sup>9</sup>  
 տակաւին անոնց հետ կը խօսէր , Ուաքէլ իր հօ-  
 րը ոչխարներուն հետ եկաւ . ինչու որ անիկայ էր  
 անոնց հովիւը : Եւ եղաւ որ երբ Յակոր իր <sup>10</sup>  
 մօրեղբօրը Լաբանին Ուաքէլ աղջիկը ու իր մօր-  
 եղբօրը Լաբանին ոչխարները տեսաւ , անորէն  
 Յակոր մօտիկցաւ , ու քարը հորին բերնէն գլտո-  
 րեց , և իր մօրեղբօրը Լաբանին ոչխարները խմ-  
 ցուց : Եւ Յակոր համբուրեց Ուաքէլը . և ձայնը <sup>11</sup>  
 վերցունելով լացաւ : Եւ Յակոր պատմեց Ուա- <sup>12</sup>  
 քէլին՝ իր անոր հօրը ազգականը ու Ուեբեկայի  
 որդին ըլլալը . և անիկայ վաղեց ու իր հօրը պատ-  
 մեց : Եւ եղաւ որ երբ Լաբան իր քրոջը որդին <sup>13</sup>

- Յակորին վրայով ընց , անոր գիմաւորելու վազնց , և գրկեց ու համբուրեց զանկիայ , և իր տունը տարաւ . և անկիայ պատմեց Ղարանին բո-
- 14 լոր սա բաները : Եւ Ղարան ըսաւ անոր . Իբաւցունէ դուն իմ ոսկորս ու մարմինս ես . և անոր հետ լման ամիս մը կեցաւ :
- 15 Եւ Ղարան ըսաւ Յակորին . Գուն իմ եղբայրս ըլլալուդ համար՝ ինծի ձրի պիտի ծառայես .
- 16 ըէ ինծի՝ ի՞նչ վարձք կուզես : Եւ Ղարան երկու աղջիկ ունէր . մեծին անունը Ղիա՝ ու պղղ-
- 17 տիկին անունը Ուաբէլ էր : Եւ Ղիային աչքերը տկար էն՝ բայց Ուաբէլ գեմբով ու տեքով
- 18 գեղեցիկ էր : Եւ Յակոր սիրեց Ուաբէլը ու ըսաւ . Քու պզտիկ աղջիկդ Ուաբէլին համար՝
- 19 քեզի կօթը տարի կը ծառայեմ : Եւ Ղարան ըսաւ . Ընկիայ քեզի տալը՝ ուրիշ մարդու մը
- 20 տալէն լու է . բնակէ ինծի հետ : Եւ Յակոր Ուաբէլին համար կօթը տարի ծառայեց . և զանկիայ սիրելուն պատճառաւ՝ իրեն քանի մը օրի չամի երեցաւ :
- 21 Եւ Յակոր ըսաւ Ղարանին . Իմ կնիկս տուր . ինչու որ օրերս լեցուած են , որ ես անոր մտնամ :
- 22 Եւ Ղարան ան տեղին բոլոր մարդիկը ժողովեց ,
- 23 ու խնջիք ըրաւ : Եւ եղաւ որ իրիկունը իր աղջիկը Ղիան առաւ ու անոր բերաւ . և անկ-
- 24 կայ անոր մտաւ : Եւ Ղարան իր աղախինը Օկողիան՝ իր աղջկանը Ղիային աղախին տուաւ :
- 25 Եւ երբ որ առաւ եղաւ , ահա՛ անկիայ Ղիան էր . ու Ղարանին ըսաւ . Ի՞նչ է սա քու

ինձի ըրածդ . ես քեզի Ոսաբէլին համար չծա-  
 ռայեցի<sup>o</sup> . ուստի ինչո՞ւ իս խարեցիր : Եւ Լա- 26  
 բան ըսաւ . Սեր երկրին մէջ ասանկ՝ պղտիկը  
 մեծէն առաջ տալ չըլար : Լմընցուր ասոր հարս- 27  
 նիւն շարսթը , և ինձի եօթը տարի ալ ծա-  
 ռայելուդ համար՝ ան ալ քեզի տամ : Եւ Յա- 28  
 կոբ անանկ ըրաւ , և Լիային շարսթը ըմընցուց .  
 և Լարան իր Ոսաբէլ աղջիկը՝ անոր կնիկ ըլ-  
 տուաւ : Եւ Լարան իր Բաղդա աղախինը՝ իր 29  
 աղջկանը Ոսաբէլին աղախին տուաւ : Եւ Յա- 30  
 Ռաբէլին ալ մտաւ . ու նաև Ոսաբէլը Լիայէն  
 աւելի սիրեց : Եւ Լմընցուր եօթը տարի ալ  
 ծառայեց :

Եւ Տէրը երբ Լիային ատելի ըլլալը տեսաւ , 31  
 անոր արդանդը բացաւ . բայց Ոսաբէլ ամուլ  
 էր : Եւ Լիա յղացաւ՝ ու որդի մը ծնաւ , և ա- 32  
 նոր անունը <sup>o</sup>Սուբէն դրաւ . քանզի ըսաւ .  
 Տէրը իմ տառապանքիս նայելուն համար , ա-  
 կից ետքը էրիկս իս պիտի սիրէ : Եւ նորէն յղա- 33  
 ցաւ՝ ու որդի մը ծնաւ , և ըսաւ . Քանզի Տէ-  
 րը իմ ատելի ըլլալս լսեց , անոր համար ինձի  
 աս որդին ալ տուաւ . ու անոր անունը †Շմա-  
 ւօն դրաւ : Եւ դարձեալ յղացաւ՝ ու որդի մը 34  
 ծնաւ , և ըսաւ . Հիմա աս անգամին էրիկս ինձի  
 հետ կըմիաւորի . քանզի անոր իրեք որդի ծնայ .  
 անոր համար՝ անոր անունը <sup>o</sup>Վի դրաւ : Եւ 35  
 մէյ մըն ալ յղացաւ՝ ու որդի մը ծնաւ , և ըսաւ .

<sup>o</sup> Թ՛ ահա որդի

† Թ՛ լսել

<sup>o</sup> Թ՛ միաւորութիւն



Ես անգամ պիտի գոհանամ Տէրոջմէն . անոր  
համար՝ անոր անունը \* Յուդա դրաւ . ու գաղ-  
թեցաւ ծնանելէն :

ՊԼ . Լ

1 Սաբէլ իր ամուսնեանը համար ցաւելով՝ իր Բաղդա աղա-  
խինը Հակոբին կուտայ : 5 Բաղդան կրծնանի՝ Վանը և՛ Անֆ-  
թաղիմը : 9 Իհան ալ իր Օղեղիայ ալախինը կուտայ Յա-  
կոբին , որ Վաղը և Եսերը կրծնանի : 14 Սարենին գամ  
մանրագործերը : 17 Իհան՝ Խաարըը , Օարուղունը և Վինան  
կրծնանի : 22 Սաբէլ՝ Հովսէփը կրծնանի : 25 Յակոբ իր  
հայրենիքը դառնալ կուզէ : 27 Լարան՝ նորէն խօսք կապե-  
լով մը զանիկայ բովը կըպահէ : 37 Յակոբի ֆարքը ու ա-  
նով իր հարստանալը :

- 1 **Ե**ւ երբ Սաբէլ տեսաւ որ ինքը Յակոբին  
չաւելնէր չծնաւ , Սաբէլ իր քրոջը նախան-  
ձեցաւ . և Յակոբին ըսաւ . Ինձի զաւակներ ա՛ւր ,
- 2 եթէ ոչ՝ կըմնանիմ : Եւ Յակոբին բարկու-  
թիւնը բորբոքեցաւ Սաբէլին դէմ , ու ըսաւ .  
Ես Ըստուծոյ տեղն եմ , որ քու արդանդէդ
- 3 պտուղը արգիլեց : Եւ անիկայ ըսաւ . Ըհա  
իմ աղախինս Բաղդա՝ անոր մտի՛ր . ու անիկայ  
իմ ծունկերուս վրայ ծնանի՛ , և ես ալ անկեց
- 4 որդիներ ւտանամ : Եւ իր Բաղդա՝ աղախինը՝  
անոր կնիկ ըլլալու տուաւ , ու Յակոբ անոր
- 5 մտաւ : Եւ Բաղդա յղացաւ՝ ու Յակոբին որդի
- 6 մը ծնաւ : Եւ Սաբէլ ըսաւ . Ըստուած ինձի  
դատատան ըրաւ , ու իմ ձայնս ալ լսեց , և ին-  
ձի որդի մը տուաւ . անոր համար՝ անոր անունը
- 7 † Իհան դրաւ : Եւ Սաբէլին Բաղդա աղախինը

\* ք՝ գոհութիւն

† ք՝ դատող

գարձեալ յղացաւ՝ ու Յակոբին երկրորդ որդի  
մը ծնաւ : Եւ Ռաբէլ ըսաւ . Իմ քրոջս հետ 8  
մեծ ըմբշամարտութիւնով մարտնչեցայ , և յաղ-  
թեցի . ու անոր անունը \*Սեփթաղիմ՝ դրաւ :

Երբոր Լիա տեսաւ որ ինքը ծնանելէն գաղա- 9  
րեցաւ , իր Օղղիսայ աղախինը առաւ , ու Յա-  
կոբին կնիկ ըլլալու տուաւ զանիկայ : Եւ Լիա-10  
յին Օղղիսայ աղախինը՝ Յակոբին որդի մը ծնաւ :

Եւ Լիա ըսաւ . Բաղդս յաջողեցաւ . ու անոր ա-11  
նունը †Բադ դրաւ : Եւ լիսյին Օղղիսայ ա-12  
ղախինը՝ Յակոբին երկրորդ որդի մը ծնաւ : Եւ 13

Լիան ըսաւ . Երանելի՛ եմ ես . ինչու որ աղ-  
ջկիները ինձի Երանի՛ պիտի ըսեն . ու անոր ա-  
նունը \*\*Եսեր դրաւ : Եւ Ռաբէն գնաց ցորեն 14

Նձեկու օրերը , ու մանրագորներ գտաւ , և ա-  
նոնք իր մօրը Լիսյին քերաւ . ու Ռաբէլ՝ Լիսյին  
ըսաւ . Կաղաչեմ՝ տուր ինձի որդիիդ մանրա-  
գորներէն : Եւ անիկայ ըսաւ անոր . Իմ էրիկս 15

առնելդ . քիչ եկաւ , որ որդիիս մանրագորներն  
ալ պիտի առնես . և Ռաբէլ ըսաւ . Ուստի քու  
որդիիդ մանրագորներուն համար՝ աս զիշեր քե-

զի հետ պառկի : Եւ իրիկունը որ Յակոբ գաշ-16  
տէն եկաւ , Լիան անոր զէմը ելաւ ու ըսաւ .

Ինձի պիտի մանաս . քանզի իրաւցունէ վորձ-  
քով առի քեզ իմ որդիիս մանրագորներովս .  
և ան զիշեր անոր հետ պառկեցաւ : Եւ Ես-17

\* Թ՝ ըմբշամարտութիւնս

† Թ՝ բաղդ

\*\* Թ՝ երանելի

- տուած լսեց Լիային . և յղացաւ՝ ու Յակոբին՝
- 18 Հինգերորդ որդի ծնաւ : Եւ ըսաւ Լիա .  
 Եղախինս իմ էրիկիս տալուս համար՝ Եստուած  
 ինձի իմ վարձքս տուաւ . և անոր անունը \*Խ-
- 19 սաքար դրաւ : Եւ լիան նորէն յղացաւ՝ ու-
- 20 Յակոբին՝ վեցերորդ որդի ծնաւ : Եւ Լիան  
 ըսաւ . Եստուած ինձի բարի պարգև մը պար-  
 գեւեց . սա անգամին էրիկս ինձի հետ պիտի բնա-  
 կի . ինչու որ վեց որդի ծնայ անոր . ու անոր
- 21 անունը †Օգարուղն դրաւ : Եւ անկէց ետքը  
 աղջիկ մը ծնաւ , և անոր անունը \*\*Գինս դրաւ :
- 22 Եւ Եստուած յիշեց Ոսաբէլը , ու Եստուած լսեց  
 23 անոր , և անոր արգանդը բացաւ : Եւ յղացաւ՝  
 ու որդի մը ծնաւ . և ըսաւ . Եստուած իմ նա-
- 24 խատինքս վերցուց : Եւ անոր անունը ††Յով-  
 սէփ դրաւ՝ ու ըսաւ . Տէրը ինձի ուրիշ որդի
- 25 մըն ալ պիտի տայ : Եւ եղաւ որ՝ երբ Ոսաբէլ  
 Յովսէփը ծնաւ , Յակոբ ըսաւ Լարանին .
- 26 Թամ : Իմ կնիկներս ու տղաքներս՝ որոնց  
 համար քեզի ծառայեցի , տուր ինձի որ երթամ՝  
 ինչու որ քեզի ըրած ծառայութիւնս գուն գի-
- 27 տես : Եւ Լարան ըսաւ անոր . Թե՛ որ քու առ-  
 ջևդ շնորհք գտայ՝ կաղաչեմ քեզի , ի՜նչի՛նչ . ամո՛ն  
 վարձով սորվեցայ որ Տէրը քեզի համար իս օրհ-
- 28 նեց : Եւ ըսաւ . Քու ծառայութեանդ վարձ-

\* ք՝ վարձք

† ք՝ բնակութիւն

\*\* ք՝ դատաստան

†† ք՝ պիտի աւելցունէ

քը ինձի խնայուք ու պիտի վճարեմ : Եւ <sup>29</sup>  
 անիկայ ըսաւ անոր . Գու՛ն դիտես որ ես ինչպէս  
 ծառայեցի քեզի , ու անասուններդ ինչպէս էին  
 իմ քովս : Ինչու որ իմ գալէս առաջ քիչ <sup>30</sup>  
 էր քու ունեցածդ , և իմ գալուս պատճառաւը  
 խիստ շատցաւ , ու Տէրը քեզ օրհնեց , և հիմա  
 ես իմ տունիս համար ալ ե՞րբ պիտի աշխատիմ :  
 Եւ անիկայ ըսաւ . Քեզի ի՞նչ տամ : Եւ <sup>31</sup>  
 Յակոբ ըսաւ . Ինձի բան մը մի՛ տար , թէ որ  
 աս բանը ինձի ընես , նորէն քու հօտերդ կա-  
 րածեմ «- կըպահեմ . Եւ յօր քու բոլոր հօտե- <sup>32</sup>  
 րուդ մէջէն անցնիմ , անկից ամէն խոյտախարիւ  
 ու պիսակոտ ոչխարը՝ և ամէն սև ոչխարը՝ ու պի-  
 սակոտ և խոյտախարիւ այծերը զատնեք , և իմ  
 վարձքս անոնք ըլլան : Եւ ասկից ետքը իմ <sup>33</sup>  
 արդարութիւնս քու առջևդ պիտի յայտնուի ,  
 երբոր իմ վարձքիս հող տանիս . իմ քովս գրա-  
 նուած ամէն խոյտախարիւ ու պիսակոտ չեղած  
 այծը՝ և սև չեղած ոչխարը դողողուած սեպուի :  
 Եւ Լաբան ըսաւ . Ե՛հա՛ ըսածիդ պէս ըլլայ : <sup>34</sup>  
 Եւ ան օրը զատեց բոլորախայտ ու պիսակոտ <sup>35</sup>  
 նոխաղները՝ և բոլոր խոյտախարիւ ու պիսակ  
 էդ այծերը՝ և ամէն ճերմակ ունեցողը՝ ու բոլոր  
 սև ոչխարը , և իր որդիներուն ձեռքը տուաւ :  
 Եւ իր ու Յակոբին մէջ անող իրեք օրուան <sup>36</sup>  
 ճամբայի միջոց դրաւ . և Յակոբ Լաբանին  
 մնացած հօտերը կարածէր :

Եւ Յակոբ իրեն գալար կաղամախի և նուշի ու <sup>37</sup>

- սօսիի գաւազաններ առաւ , և անոնց վրայ քերթելով կեղևնին հանեց՝ ու գաւազաններուն մէջը եղած ձերմակը կերևնար : Եւ ան իր ըստը կած գաւազանները՝ ջուր խմցունելու աւազաններուն մէջը դրաւ , որ երբ հօտերը ջուր խմելու գան , ան գաւազանները ոչխարներուն առջևը ըլլան , և անոնք խմելու եկած ատեննին տաք-
- 39 նան : Եւ ոչխարները գաւազաններուն առջևը տաքնալով՝ բոլորախայտ՝ խայտախարիւ և պիսա-
- 40 կոտ գառինք կըձնանէին : Եւ Յակոբ կըզատէր գառները , ու հօտերուն երեսը՝ Լարանին հօտերուն մէջ եղած դէպի բոլորախայտ ու ամէն սև ոչխարներուն կըդարձունէր . և իր հօտերը զատ դրաւ , ու զանոնք Լարանին հօտերուն քօլը
- 41 չդրաւ : Եւ երբ որ զօրաւոր ոչխարները կըջնունուին , Յակոբ գաւազանները ոչխարներուն աչքին առջևը՝ աւազաններուն մէջը կըդնէր , որ
- 42 գաւազաններուն առջևը տաքնան : Բայց տկար ոչխարներուն չէր դնէր . սասնկով՝ տկարները Լարանինը՝ ու զօրաւորները Յակոբինը կըլա-
- 43 յին : Եւ մարդը խիստ հարուստցաւ , ու շատ հօտեր և աղախիններ ու ծառաներ և ուղտեր ու էշեր ունեցաւ :

## Գ Լ . ԼԵ

1 Յակոբ ներդանալով՝ Լարանէն գաղտուկ Քամբայ կելէ : 19  
Ուաքէլ իր հօրը կուռքերը կըգողնայ : 22 Լարան Յակոբին  
ետեւէն կէյնայ , 26 ու եղած գողութեան համար կըգանդա-  
տի : 34 Ուաքէլ իր հօրը կուռքերը ուղտին համեաին տակը  
կըպահէ : 36 Յակոբին՝ Լարանին դէմ ըրած գանգաոր : 44  
Լարանին ու Յակոբին Վաղաադ լեռան վրայ ըրած ուխտը :

**Լ**ու լսեց Լարանին որդիներուն զուրցածները , 1  
որ կըսէին , Յակոբ՝ մեր հօրը բոլոր ունեցածը  
առաւ , ու բոլոր աս փառքը մեր հօրը ստացուածքէն  
ստացաւ : Լու Յակոբ Լարանին երեսը տեսաւ , 2  
և ահա իրեն՝ երէկուան ու մէկալ օրուան պէս  
չէր : Լու Տէրը ըսաւ Յակոբին . Վու հայ- 3  
րերուդ երկիրը ու քու ազգականներուդ դար-  
ձի՛ր . ու քեզի հետ պիտի ըլլամ : Լու Յակոբ 4  
Տէրը խրկեց ու Ուաքէլը և Լիան դուռը իր հօ-  
տերուն քովը կանչել տուաւ . Ու ըսաւ անոնց . 5  
Ես ձեր հօրը երեսը տեսայ , որ ինձի՛ երէկուան  
ու մէկալ օրուան պէս չէ . բայց իմ հօրս Լու-  
տուածը ինձի հետ եղաւ : Լու դուք գիտէք որ 6  
ես իմ բոլոր զօրութիւնովս ձեր հօրը ծառայե-  
ցի : Լու ձեր հայրը իս խաբեց , ու իմ վարձքս 7  
տասը անգամ փոխեց . բայց Լատուած չեմ  
դուց զանիկայ՝ որ ինձի վնաս մը ընէ : Վասն 8  
դէ թէ որ անիկայ այսպէս ըսէր , Վու վարձքդ  
խայտախարհները ըլլան , անատենը բոլոր ոչ-  
խարները խայտախարիւ կըծնանէին . և թէ որ  
այսպէս ըսէր , Վու վարձքդ պիտակոտները ըլլան ,  
անատենը բոլոր ոչխարները պիտակոտ կըծնա-

- 9 նէին : Ե յսպէս՝ Եստուած ձեր հօրը հօտե-
- 10 բը առաւ , ու ինձի տօլաւ : Աւ եղաւ որ՝  
հօտերը ջերմացած առննին , աչքերս վերցուցի ,  
ու երագի մէջ տեսայ , և ահա հօտերուն հետ  
զուգաւորոյ նոխազները և խոյները՝ ամէն ալ
- 11 պիտակտա՝ խոյտախարիւ ու օրէխաուն էին : Աւ  
Եստուծոյ հրեշտակը ըսաւ ինձի երագի մէջ .
- 12 Վ՛իջ Յսկոր . և ես ըսի . Եհա էո՞ւ եմ : Աւ-  
ըսաւ . Հիմա աչքերդ վեր վերցնէր , ու հօտե-  
րուն հետ զուգաւորոյ նոխազներուն նայէ՛ . ա-  
մէնքը պիտակտա՝ խոյտախարիւ ու օրէխաուն են .  
ինչու որ Լարանին բոլոր քեզի ըրածները տե-
- 13 սոյ : Աս թեթեւին Եստուածն եմ , որ հոն  
արձան կանգնելով՝ ինձի ուխտ ըրիր . հիմա  
եղի՛ր դնո՛ւ առ երկիրէն , ու ծնած երկիրդ դար-
- 14 ձի՛ր : Աւ Ուրբէլը ու Լիան պատասխան տուին  
ու ըսին անոր . հակաւին մեր հօրը տունը մեզի
- 15 համար բաժին ու ժառանգութիւն կո՞յ : Անք  
օտարականներ չեպուեցանք անոր . քանզի վա-  
ճառեց մեզ , և ստակնիս ալ ըտրրովին կերաւ :
- 16 Ինչու որ բոլոր հարստութիւնը՝ որ Եստուած  
մեր հօրմէն վերցուց , մերն է ու՛մեր զաւկըներունն  
է , և հիմա Եստուած քեզի ի՛նչ որ ըսաւ , ըրէ՛ :
- 17 Ուստի Յսկոր եղաւ՝ և իր որդիները ու կնիկները
- 18 ուղտերուն վրոյ հեծցուց : Աւ իր բոլոր անա-  
տունները ու իր բոլոր ստացուածքը՝ որն որ ինքը  
ստացաւ , իր ստացած անասունները որն որ Սի-  
ջազետին մէջ ստացաւ , Քանանու երկիրը դէպի

իր Խառնակ հօրը երթալու տարաւ : Եւ Լարան իր 19  
 խաչինքը ասրակառուր ընելու գացեր էր . և Սա-  
 քէլ իր հօրը կուռքերը գողցաւ : Եւ Յակոբ՝ Ը- 20  
 սորի Լարանէն գաղտուկ փախաւ . ինչու որ իր  
 փսխչիլը չգիտցուց անոր : Ըյնպէս՝ անիկայ իր 21  
 բողոր ունեցածովը փախաւ , և ելաւ ու Գետէն  
 անցաւ . և իր երեսը գէպի Գաղաադ լեռը շիա-  
 կեց : Եւ երրորդ օրը Յակոբին փսխչիլը Լարա- 22  
 նին պատմուեցաւ : Եւ անիկայ իր եղբայրները 23  
 հետը առնելով , անոր ետեւէն եօթը օրուան ճամ-  
 բայ գնաց , և անոր հասաւ Գաղաադ լեռը :  
 Եւ Ըստուած եկաւ Ըսորի Լարանին ան գիշերը 24  
 երազի մէջ , ու ըսաւ անոր . Օգոյշ կեցիր  
 որ Յակոբին կամ աղէկ կամ գէշ չզուրցես :  
 Ուստի Լարան հասաւ Յակոբին , և Յակոբ իր 25  
 վրանը լեռը բացեր էր . և Լարան իր եղբայր-  
 ներուն հետ Գաղաադ լեռը իջաւ : Եւ Լա- 26  
 բան ըսաւ Յակոբին . Ի՞նչ է ասքու ըրածդ  
 որ ինձ մէն գաղտուկ փախար , և իմ աղջիկներս  
 սուրով առնուած գերիներու պէս վարեցիր :  
 Ի՞նչու փսխչիլդ գաղտուկ պահեցիր , և ինձ- 27  
 մէն փսխար՝ ու ինձի չիմացուցիր , որ ես քեզ  
 ուրախութիւնով ու ցնձութիւնով՝ թրմ-  
 բուկներով ու քնարներով խրկէի : Եւ չթո- 28  
 ղուցիր իս՝ որ իմ որդիներս ու աղջիկներս պսգ-  
 նէի . հիմա աս՝ անմտութեամբ ըրիր : Չեզի չա- 29  
 բիք ընելու ձեռքս զօրութիւն ունիմ . բայց ձեր  
 հօրը Ըստուածը զուրցեց ինձի երէկ գիշեր՝ ըսե-  
 լով , Օգոյշ կեցիր՝ որ Յակոբին աղէկ կամ



- 30 գէշ չղուրցես : Եւ հիմա՝ թէպէտե քու հօրդ տունը շատ փափաքելուդ համար գացիր , բայց
- 31 ինչու իմ աստուածներս գողցար : Եւ Յակոբ պատասխան տուաւ՝ ու ըսաւ Լարանին . Վաղ-  
որի էր՝ երբեքս պարտաւոր ան էր ոք վախցայ ,  
քանզի ըսի , չըլայ որ քու աղջիկներդ բռնու-
- 32 թեամբ ինձմէ տունես : Բայց քու աստուած-  
ներդ որո՞ք քով գտնաս , թող անիկայ չապրի .  
մեր եղբայրներուն առջևը քննէ ու նայէ , թէ որ  
իմ քոյս քու մէկ բանդ գտնուի՝ ա՛ն . քանզի  
Յակոբ չէր գիտեր որ Ռաբէլը գողցեր էր զա-
- 33 նոնք : Եւ Լարան Յակոբին վրանը ու Լիային  
վրանը և երկու աղախինին վրանը մտաւ , բայց  
չգտաւ . ետքը Լիային վրանէն ելաւ՝ ու Ռա-
- 34 քելին վրանը մտաւ : Եւ Ռաբէլ առաւ կուռ-  
քերը՝ ու անոնք ուղտի համետին տակը դրաւ ,  
ու վրան նստաւ . և Լարան բոլոր վրանը փնտը-
- 35 ռեց , բայց չգտաւ : Եւ անիկայ իր հօրը ըսաւ .  
Վու առջևդ չկանգնիլս՝ իմ տիրոջս աչքերուն  
ծանր չերեայ . ինչու որ կանանց սուխորու-  
թեանը մէջն եմ : Եւ յայէս փնտրուեց , բայց
- 36 կուռքերը չգտաւ : Եւ Յակոբ բարկացաւ ու  
Լարանին հետ կրփիճէր . և Յակոբ պատաս-  
խան տուաւ ու ըսաւ Լարանին . Ի՞նչ է իմ  
յանցանքս , ի՞նչ է իմ մեղքս , որ տաքու-
- 37 թիւնով ետեւէս ինկար : Որովհետեւ իմ բո-  
լոր կարասիքս խառնեցիր՝ քու տանդ ամէն կա-  
րասիքէն ինչ որ գտար , հոս իմ եղբայրներուս  
ու քու եղբայրներուդ առջևը դի՛ր , որ երկուք-

նուս մէջ տեղը դատաստան կտրեն : Եւ ման 38  
 քսան տարի է որ քեղի հետ եմ • ոչխարներդ  
 ու այծերդ ձագ չծգեցին • և հօտիդ խոյերը  
 չկերայ : Գաղաններէն փառատուածը չբերի 39  
 քեզի • փնասը ես կըքաշէի • ցորենը դողցուածը  
 ու գիշերը դողցուածը ինձմէ կըպահանջէիր : Եւ 40  
 պէ՞ն էի • ցորենը տաքը՝ ու գիշերը ցուրտը կը  
 մաշէր զիս , և աչքերէս քունս կըխախտէր :  
 Եւ յսպէս եղայ քսան տարի քու տանդ մէջ • քու 41  
 երկու աղջիկներուդ համար տասներչորս տարի  
 ծառայեցի քեզի , և հօտերուդ համար վեց տարի  
 ծառայեցի , և իմ վարձքս տաքը անդամ փոխե-  
 ցիր : Թե որ հօրս Եստուածը , Երբասամին 42  
 Եստուածը և Իսահակին Երկիւղը ինձի հետ չըլ-  
 ար , իրաւցունէ իս հիմա դատարի կըխարկէիր •  
 Եստուած՝ իմ տառապանքս ու իմ ձեռքիս աշխա-  
 տութիւնը տեսաւ , և երէկ գիշեր շեղ յանդիմա-  
 նեց : Եւ Եւրան պատասխան տուաւ ու ըսաւ Յա- 43  
 կոբին • Եւ աղջիկները իմ աղջիկներս են՝ և աս  
 որդիները իմ որդիներս են՝ և աս անասունները  
 իմ անասուններս են , և ամէնը՝ որ կըտեսնաս , իմն  
 են • և ի՞նչ ընեմ այսօր աս իմ աղջիկներուս ու  
 իրենց ծնած զաւկներուս : Աւտի հիմա ե- 44  
 կոբ երկու քնիս ու խաւ ընենք , որ իմին ու քու-  
 կին մէջ տեղը վկայութեան համար ըլլայ : Եւ 45  
 Յակոբ քար մը առաւ , ու արձան կանգնեց  
 ան : Եւ Յակոբ իր եղբայրներուն ըսաւ • Քա- 46  
 րեր ժողովեցէք • և անոնք քարեր ժողովեցին՝ ու  
 գէղ մը ըրին , և հան գէղին վայ կայ կերան :

47 Եւ Լարան անոր անունը \* Եւկար Սահատութա  
 դրաւ , բայց Յակոբ անոր անունը † Գաղաադ  
 48 դրաւ : Եւ Լարան ըսաւ . Ես գէզը իմին ու  
 քուկին մէջ տեղը վկայ մըն է այսօր . անոր  
 49 համար անոր անունը † Գաղաադ ըսուեցաւ . Եւ  
 \*\* Միզփա ալ ըսէր . ինչու որ ըսաւ թէ՛  
 Մենք մէկզմէկէ զատուած ատեննիս , իմին ու  
 50 քուկին մէջ տեղը Տէրը դիտէ : Թէ որ իմ  
 աղջիկներս վշտացունէս՝ և կամ թէ որ իմ աղ-  
 ջիկներուս վրայ ուրէշ կնիկներ առնես , հետեր-  
 նիս մէկը չկայ . ահա իմին ու քուկին մէջ տե-  
 51 ղը վկայ՝ Եստուած է : Եւ Լարան ըսաւ  
 Յակոբին . Եհա սս գէզը , և ահա իմին ու քու-  
 52 կին մէջ տեղը իմ կանգնած քարս . Ես գէզը  
 վկայ՝ ու սս արձանը վկայ է , որ սս գէզը չանց-  
 նիմ քեզի գալու , և դուն սս գէզը չանցնիս  
 53 ինձի գալու , չարիք ընելու համար : Եբրահա-  
 մին Եստուածը՝ և Կաթովին Եստուածը՝ ա-  
 նոնց հայրերուն Եստուածը մեր մէջը դատաւոր  
 ըլլան : Եւ Յակոբ իր Իսահակ հօրը Երկիւ-  
 54 ղովը երդում ըրաւ : Եւ Յակոբ զոհեր ըրաւ  
 լեռին վրայ , և իր եղբայրները հաց ուտելու  
 հրաւիրեց . և հաց կերան , ու գիշերը լեռը մը-  
 55 նացին : Եւ Լարան առտուանց կանուխ ելաւ ,  
 և իր որդիները ու իր աղջիկները համբուրեց՝

\* ք՝ վկայութեան գէզ . ( Գաղաադէն )

† ք՝ վկայութեան գէզ . ( Եբրայերէն )

\*\* ք՝ դիտանոց

ու օրհնեց անոնք . և Լարան դարձաւ ու իր տեղը գնաց :

## Գ Լ . ԼԲ

<sup>1</sup> Յակոբին Մահանայիմ տեսիլքը : <sup>3</sup> Իր Եսաւ եղբօրը պատգամաւոր կըխրկէ : <sup>6</sup> Ենոր գայէն կըվաինայ : <sup>9</sup> Խալքսելու համար կաղօթէ : <sup>13</sup> Եսաւին ընծաներ կըխրկէ : <sup>24</sup> Հրեշտակի մը հետ կըմըշամարտի , ու հոն Խորայէլ կըկանչուի :

**Եւ** Յակոբ իր ճամբան գնաց , ու Եստուծոյ <sup>1</sup>  
հրեշտակները իրեն պատահեցան : **Եւ** <sup>2</sup>  
Յակոբ երբոր տեսաւ զանոնք՝ ըսաւ . Ես Եստուծոյ բանակն է . և ան տեղին անունը \*Մահանայիմ՝ դրաւ :

**Եւ** Յակոբ իր առջևէն պատգամաւորներ խորհեց իր Եսաւ եղբօրը դէպի Սէիր երկիրը՝ Եդոմի սահմանը : **Եւ** պատուիրեց անոնց՝ ըսելով , <sup>3</sup>  
Իմ տիրոջս Եսաւին ասանկ ըսէք . Քու ծառադ Յակոբը ասանկ կըսէ . Լարանին քովը կեցայ , ու մինչև հիմա հոն էի . **Եւ** ունիմ <sup>4</sup>  
արջառներ ու էշեր , հօտեր ու ծառաներ և ազակիներ . և խրկեցի իմ տիրոջս իմացունելու , որ քու առջևդ շնորհք գանամ . **Եւ** պատգամաւորները դարձան Յակոբին՝ ըսելով , Քու եղբօրդ Եսաւին գացինք , և անիկայ ալ չորս հարիւր մօրդով քեզ դիմաւորելու կուգայ : **Եւ** <sup>5</sup>  
Յակոբ խիստ վախեցաւ ու խռովեցաւ . և իր հետը եղած ժողովուրդը ու հօտերը և արջառները ու ազակերը երկու խումբի բաժնեց , ու ըսաւ . Ի՞նչ որ Եսաւ մէկ խումբին հասնի ու <sup>6</sup>  
<sup>7</sup>

\* ք՝ երկու բանակներ

- ան զարնելու ըլլայ , մէկու մնացած խումբը
- 9 կազատի : Աւ Յակոբ ըսաւ . Ո՛վ իմ հօրս  
 Աբրահամին Աստուածը ու իմ հօրս Իսահակին  
 Աստուածը , ո՛վ Տէր՝ որ ըսիր ինձի . Քու  
 երկիրդ ու քու հայրենիքդ դարձիր , ու քեզի
- 10 բարիք ընեմ . Աբժանի չեմ ան ամէն ողորմու-  
 թիւններուն և հաւատարմութեանը , որն որ  
 դուն քու ծառայիդ ցըցուցիր . ինչու որ մէկ  
 գաւազանովս անցայ աս Յորդանանէն , և հիմա
- 11 երկու խումբի տէր եղայ : Աստուած քեզի ,  
 իս իմ Ասաւ եղբօրս ձեռքէն ազատէ . ինչու որ  
 ես անկէց կը վախնամ որ չըլլայ թէ դայ ու
- 12 մեռցունէ զիս և մայրը տղաքներովը : Աւ դուն  
 ըսիր թէ՛ Անշուշտ քեզի բարիք պիտի ընեմ ,  
 և քու սերունդդ ծովի աւազին չափ պիտի ընեմ ,
- 13 որ շատութենէն չհամբուիր : Աւ ան գի-  
 շեր հոն կեցաւ . և իր ձեռքը գտնուածէն իր  
 Ասաւ եղբօրը համար ընծաներ պատրաստեց ,
- 14 Արկու հարիւր այժ և քսան նոխազ . երկու հա-  
 15 թիւր էգ ոչխար՝ և քսան խոյ , Արսուն ծիծ տուող  
 ուղտ իրենց ձագերովը՝ քառսուն կով ու տասր
- 16 ցուլ՝ քսան էգ էջ և տասը աւանակ : Աւ ա-  
 մէն մէկ հօտը զատ զատ իր ծառաներուն ձեռ-  
 քը յանձնեց , ու ըսաւ իր ծառաներուն . Առջևս  
 անցէք , ու հօտերը իրարմէ քիչ մը հեռու թո-
- 17 ղուցէք : Աւ առջևէն գացողին պատուիրեց՝  
 ըսելով , Արբոր իմ Ասաւ եղբայրս քեզի պա-  
 տահի՛ ու քեզի հարցունէ , ըսելով թէ՛ Դուն

որոնն ես , և ուր կերթաս , և աս առջևդ եղած-  
 ները որոնն են . Ընատենը ըսէ որ՝ Քու ծառաւ 18  
 յիդ Յակոբինն է , որ իմ աիրոջս Ասաւին խրկած  
 ընծան է . և ահա անիկոյ ալ ետենիս է : Եւ 19  
 այսպէս երկրորդին ու երրորդին և հօտերուն և-  
 տեէն բոլոր գացողներուն պատուիրեց՝ ըսելով ,  
 Ըս խօսքին պէս զուրցեցէք Ասաւին՝ երբոր զինքը  
 դանաք . Եւ ահա Յակոբ ծառայ ալ ետենիս 20  
 է՝ ըսէք . քանզի ըսաւ . Ընջեւ գացող ըն-  
 ծաներով անոր երեսը կրկակուղորենմ՝ , և ան-  
 կէց ետքը անոր երեսը կըտեսնամ . գուցէ իս  
 ընդունի : Ըյսպէս՝ ընծաները անոր առջևէն 21  
 գացին . և ինքը ան գիշեր հոն մնաց բանակին  
 մէջ : Եւ ան գիշերը ելաւ , ու իր երկու կնիկ- 22  
 ները և իր երկու աղախինները ու իր տասնըմէկ  
 որդիները առաւ , և Յարոկին անցրէն անցաւ :  
 Եւ առաւ զանոնք ու վտակէն անցուց , և բոլոր 23  
 իրեն ունեցածը անցուց :

Եւ Յակոբ մինակ մնաց , և մարդ մը կը 24  
 մարտընչէր անոր հետ մինչև արշարյոս : Եւ 25  
 երբ տեսաւ որ իր ուժը անոր չհասաւ , անոր  
 զտին ամոլաջիկն դպաւ , և անոր հետ մարտըն-  
 չած ատենը՝ Յակոբին զտին ամոլաջիկը թմրե-  
 ցաւ : Եւ անիկայ ըսաւ . Թող տուր իս , ին- 26  
 չու որ առտու եղաւ . և Յակոբ ըսաւ . Չեմ  
 թողուր քեզ՝ մինչև որ իս չօրհնես : Եւ անի- 27  
 կայ ըսաւ անոր . Ի՞նչ է անունդ , ու ան ալ  
 ըսաւ . Յակոբ է : Եւ անիկայ ըսաւ . Ըլ մէյ- 28

մէն ալ բու անունդ Յակոբ չըսուի , հասցա  
\* Խորայէլ ըստ ինչու որ Եստուծոյ հետ ու  
մարդոց հետ ըմբշամարտեցար , և ուժդ հասաւ :

29 Եւ Յակոբ հարցուց ու ըսաւ . Ենորհօք ըրէ՛ ա-  
նունդ ըսէ՛ ի՞նչ . Եւ անիկոյ ըսաւ . Ինչո՞ւ  
իմ անունս կը հարցունես . և հոն օրհնեց զանի-

30 կայ : Եւ Յակոբ ան տեղին անունը † փէնիէլ  
դրաւ . քանզի տեսայ ըստ զԵստուած դէմ առ

31 դէմ , ու իմ անձս ապրեցաւ : Եւ փէնիէլէն  
անցածին պէս՝ անոր վրայ արևը ծագեցաւ . և

32 իր զատին վրայ կը կադար : Ընոր համար Խորա-  
յիլի որդիները զատին վրայի թմբած ջիղը չեն  
ուտեր մինչև այսօր . ինչու որ Յակոբին զատին  
թմբած ջիղին դպաւ :

ԳԼ . ԼԳ

1 Յակոբ ու Եսաւ մեկգմեկու հանդիպելով իրարու սեր կը  
ցուցնեն : 17 Յակոբ Սոկրովթ կերթայ : 18 Սայեմի մէջ  
գալտ մը ծախու աւանդով՝ հոն սեղան մը կը խնէ որ լշէլօնի  
Խորայէլ կանուանէ :

1 Եւ Յակոբ իր աչքերը վեր վերցուց՝ ու նայե-  
ցաւ , և ահա Եսաւ կուգար՝ և իր հետը չորս  
հարիւր հոգի ալ . և Լիային ու Ռաքելին՝ և  
երկու աղախիններուն բաժնեց իրենց զաւկըները :

2 Եւ աղախինները իրենց զաւկըներովը առջևը դը-  
րաւ , և Լիան իրեն զաւկըներովը ետևէն , և

3 Ռաքելը ու Յովսէփը ամէնուն ետևը : Եւ ին-

\* Թ՝ Եստուծոյ հետ ըմբշամարտող

† Թ՝ Եստուծոյ երեսը

քը անոնց առջևը անցաւ , ու մինչև իր եղբօրը  
 մօտենալուն , գետնին հաւասար եօթը անգամ  
 խոնարհութիւն ըրաւ : Աւ Եսաւ գիմաւորելու 4  
 վազեց , ու գրկեց զանիկայ՝ և անոր վիզը ին-  
 կաւ , ու համբուրեց . և ըսցին անոնք : Աւ 5  
 Ես - իր աչքերը վեր վերցուց՝ ու տեսաւ կը  
 նիկները ու զաւկրները , և ըսաւ . Ըստնք քու-  
 կին ի՞նչն են . և անիկայ ըսաւ . Ըստուծոյ՝ քու  
 ծառայիդ պարգևած զաւկրներն են : Ընտներ 6  
 աղախինները ու անոնց զաւկրները մօտեցան ,  
 ու խոնարհութիւն ըրին : Աւ Եհան ու իրեն 7  
 զաւկրները մօտեցան , ու խոնարհութիւն ը-  
 րին . և ետքը Յովսէփ ու Ռաբէլ մօտեցան ,  
 ու խոնարհութիւն ըրին : Աւ Ես - ըսաւ . Ըս 8  
 քու բոլոր խումբդ ի՞նչ պիտի ըլլայ , որուն ես  
 պատահեցայ . և Յովնէ ըսաւ . իմ տիրոջս առ-  
 ջևը շնորհք գտնալու համար է : Աւ Եսաւ ը- 9  
 սաւ . Ես շատ ունիմ՝ եղբայր իմ , քուկինդ  
 քեզի ըլլայ : Աւ Յակոբ ըսաւ . Չէ , կազաչիմ 10  
 քեզի թէ որ հիմա քու առջևդ շնորհք գտայ ,  
 իմ ձեռքէս ընծաս ընդունէ՞ . ինչու որ քու ե-  
 րեւոյ՝ Ըստուծոյ երեսը տեսնալու պէս տեսայ ,  
 և ինձի հաճեցար : Ընորհք ըրէ , քեզի բե- 11  
 րուած ընծաս ա՛ռ . քանզի Ըստուած ողորմեցաւ  
 ինձի , և քանզի ես ամէն բան ունիմ . և ստի-  
 պեց անոր , ու անալ ընդունեց : Աւ անիկայ ը- 12  
 սաւ . Այլանք երթանք . և ես քու առջևէդ  
 կերթամ : Աւ ըսաւ անոր . Իմ տէրս գիտէ որ 13  
 զաւկրները մատղաշ են , ու հետս եղած հօտե-



- ըը ու արջառները ձագերով են . և թէ որ մէկ  
 օր բռնուծեան վարեն զանոնք , բոլոր հօտերը  
 14 կըմեռնին : Աւրեմն՝ թող իմ տէրս իր ծա-  
 աային առջևը անցնի . ու ես կամաց կամաց  
 առջևս եղած անասուններուն ոտքովը ու տղաք-  
 ներուն ոտքովը կերթամ , մինչև իմ տիրոջս  
 15 դէպի Սէիր հասնիմ : Եւ Եսաւ ըսաւ . Երդ՝  
 ինձի հետ եղած ժողովուրդէն քու քովդ ձգեմ .  
 և անիկայ ըսաւ . Ի՞նչ պէտք է . թող իմ  
 16 տիրոջս առջևը շնորհք գտնամ : Եսնպէս Ե-  
 սաւ ան օրը իր ճամբան դէպի Սէիր դարձաւ :  
 17 Եւ Յակոբ դէպի Սոկթովթ չուեց , և իրեն  
 տուն մը շինեց , և իր հօտերուն փարախներ  
 շինեց . անոր համար ան տեղին անունը \*Սոկ-  
 քովթ ըսուեցաւ :  
 18 Եւ Յակոբ Միջագետէն դարձած ատենը՝  
 Քանանու երկրին մէջ եղած Սիւքեմացուոց Սա-  
 ղէմ քաղաքը եկաւ , և քաղաքին առջին բնա-  
 19 կեցաւ : Եւ իր վրանը բացած արտին կալուած-  
 քը Սիւքեմին հայրը Եմովրին որդիներէն ծա-  
 20 խու առաւ †հարիւր կտոր ստակի : Եւ հոն  
 սեղան մը շինեց , ու անունը \*\*Լլէլօհէ Խորա-  
 յէլ՝ գրաւ :

\* ք՝ փարախներ

† Ամ՝ հարիւր գառնուկի

\*\* ք՝ Եստուած Խորայելէ Եստուածը

## ԳԼ . ԼԳ

1 'Իննա Սիւքեմէն կը պղծուի : 4 Սիւքեմ կաշաչէ որ իրեն կնիկ ըլլալու տան զանիկայ : 13 Յակոբի որդիքը Սիւքեմացիներուն թշխատուիլ կառաջարկեն : 20 Եմովը և Սիւքեմ իրենց քաղաքացիները թշխատուելու կը շահնեն , 25 որոնց թշխատութենէն ետքը՝ Յակոբի որդիքը զանոնք կը ջարդեն , 27 ու անոնց քաշաքը կը իջուցանեն : 30 Յակոբ՝ Շամարն ու Ղևին կը շնորհակալուի :

Լ Եւ Լիւյին Յակոբին ծնած աղջիկը 'Իննա' ան 1  
 երկրին աղջիկները տեսնողու ելաւ : Եւ 2  
 ան երկրին իշխանը Խեւացի Եմովին որդին Սիւքեմը տեսաւ զանիկայ՝ ու առաւ և պսակեցաւ անոր հետ , ու պղծեց զանիկայ : Եւ իր հոգին 3  
 Յակոբին 'Իննա աղջկանը յարեցաւ . ու սիրեց աղջիկը , և աղջիկին կամայք պէս խօսեցաւ : Եւ Սիւքեմ իր հօրը Եմովին զուրցեց՝ ըսելով , Ինձի աս աղջիկը կնիկ աւա : Եւ 4  
 Յակոբ լսեց որ անիկայ իր 'Իննա աղջիկը պղծեց՝ արդ՝ իր որդիները իր արջատներուն հետ գաշտն էին . և մինչև անոնց գալը՝ Յակոբ լուսկեցաւ : Եւ Սիւքեմին հայրը Եմովը գնաց 6  
 Յակոբին՝ որ անոր հետ խօսի : Եւ Յակոբին 7  
 որդիները լսածնուն պէս՝ գաշտէն եկան , և մարդիկները դժուարեցան , ու շատ բարկացան . ինչու որ Յակոբին աղջիկին հետ պսակելով՝ Խորայելին մէջ խոյտառակութիւն բրաւ , որ ասանկ ըլլալու չէր : Եւ Եմովը խօսեցաւ անոնց հետ՝ ըսելով , Իմ Սիւքեմ որդիիս հոգին 8  
 ձեր աղջիկին սիրահարեցաւ . կաղաչեմ ձեզի ,

- 9 զանիկայ անոր կնութեան տուէ՛ք : Եւ մեզի  
 հետ խնամութիւն ըրէ՛ք . ձեր աղջիկները մեզի  
 10 տուէ՛ք , ու մեր աղջիկները ձ'զի՛ առէ՛ք : Եւ  
 մեզի հետ բնակեցէ՛ք , և աս երկիրը ձեր առջևը  
 պիտի ըլլայ . հոն բնակեցէ՛ք ու առուտուր ը-  
 11 րէ՛ք , և հոն կալուածներ ստացէ՛ք . Եւ Սիւ-  
 քէմ ըսաւ աղջիկին հօրը ու անոր եղբայրնե-  
 րուն . Սիւքն ձեր առջևը շնորհք գանամ , և  
 12 ինչ որ ինձի ըսէ՛ք , կուտամ : Խնդրեցէ՛ք  
 ինձմէ խիստ շատ օժիտ ու ընծայ , և ես ինձի  
 ըսածնուդ պէս պիտի տամ . բայց աղջիկը ինձի  
 13 կնիկ ըլլալու տուէ՛ք : Եւ Յակոբին որդի-  
 ները խարէութեամբ պատասխան տուին Սիւ-  
 քեմին ու անոր հօրը Եմօլրին , ու ըսին .  
 (Քանզի անիկայ իրենց Գինա քոյրը պղծեց) .  
 14 Եւ ըսին անոնց . Սենք աս բանը չենք կրնար ը-  
 նել , որ մեր քոյրը անթլփատ մարդու մը տանք .  
 15 ինչու որ ատ մեզի ամօթ բան մըն է . Բայց  
 միայն ասով կը հաճինք ձեզի . թէ որ ձեզմէ ա-  
 16 մէն արու թլփատուելով մեզի պէս ըլլաք , Ըն  
 ատենը մեր աղջիկները ձեզի կուտանք , և ձեր  
 աղջիկները մեզի կառնենք . ու ձեզի հետ կրբնա-  
 կինք , ու ձեզի հետ մէկ ժողովուրդ կըլլանք :  
 17 Բայց թէ որ մեզի մտիկ չընելով՝ չթլփատուիք ,  
 անատենը մենք մեր աղջիկը կառնենք ու կեր-  
 18 թանք : Եւ անոնց խօսքը հաճելի եղաւ Ե-  
 19 մօլրին՝ և Եմօլրին որդին Սիւքեմին : Եւ  
 ան պատանին աս բանը ընելու չուշացաւ . քան-

զի անիկայ Յակոբին աղջիկին զմայլած էր . և  
 իր հօրը տանը մէջ եղողներուն ամենէն պատուա-  
 կանն էր ինքը : Եւ Եմովրու անոր որդին Սիւ- 20  
 քէմ իրենց քաղաքին դուռը եկան , և իրենց քա-  
 ղաքին մարդոցը հետ խօսեցան՝ ըսելով . Ըս 21  
 մարդիկը խաղաղութեամբ կը վարուին մեզի հետ .  
 ուստի թող աս երկրին մէջ բնակին , ու հոս  
 թող առուտուր ընեն . ինչու որ ահա երկիրը  
 ընդարձակ է անոնց առջևը . եկէ՛ք անոնց աղ-  
 ջիկները մեզի կնիկներ ըլլալու առնենք , և մեր  
 աղջիկները անոնց տանք : Իսկ մեզի հետ բը- 22  
 նակելու , մէկ ժողովուրդ ըլլալու համար ան  
 մարդիկը միայն աս բանով կը հաճին մեզի , որ  
 անոնց թլիփատուելուն պէս՝ մեզմէն ալ ամէն արու-  
 թլիփատուի : Ընոնց հօտերը ու անոնց ստա- 23  
 ցուածքը և ամէն անասունները մերինը չըլլար .  
 միայն թէ մենք անոնց հաճինք , ու անոնք մեզի  
 հետ բնակին : Եւ Եմովրին ու անոր որդին 24  
 Սիւքեմին մտիկ ըրին ան ամէնը՝ որ քաղաքին  
 դռնէն դուրս կելային . և ամէն արու՝ որ քա-  
 ղաքին դռնէն դուրս կելար , թլիփատուեցաւ :  
 Եւ եղաւ որ երրորդ օրը զեռ անոնք ցաւին մէջն 25  
 էին , Յակոբին երկու որդիքը Շմաւօն ու  
 Ղլի Գինային եղբայրները , ամէն մէկը իր սուրը  
 առաւ , ու համարձակ քաղաքը մտան , ու սպան-  
 նեցին ամէն արու : Եւ Եմովրը ու անոր որ- 26  
 դին Սիւքէմը սուրի բերնէ անցուցին . և Սիւքե-  
 մին տունէն առին Գինան ու դուրս ելան : Եւ 27  
 Յակոբին որդիները սպանուածներուն վրան և-

- կան , և իրենց քոյրը պղծելնուն համար կողոպ-  
 28 տեցին քաղաքը : Ենոնց ոչխարները ու անոնց  
 եզերը ու էշերը՝ և քաղաքին մէջ եղածը ու դաշ-  
 29 տին մէջ եղածը առին : Եւ անոնց բոլոր ստա-  
 ցուածքը ու անոնց բոլոր տղաքները ու կնիկները  
 գերի առին , և տուներուն մէջ բոլոր գտնուածը  
 30 կողոպտեցին : Եւ Յակոբ ըսաւ Շմաւօնին  
 ու Վլէին . Իս սա երկրին բնակչացը՝ Վանա-  
 նացիներուն ու փերեզացիներուն մէջք ատելի  
 ընելով՝ իս փորձանքի մէջ ձգեցէք . և ինձի  
 հետ քիչ մարդիկ ըլլալով՝ անոնք իմ վրաս պի-  
 տի հաւարուին , ու իս պիտի զարնեն , և ես ու  
 31 իմ տունս պիտի կորսուինք : Եւ անոնք ըսին .  
 Հապա մեր քոյրը բողի պէս գործածել պէ՞տք էր  
 անոր :

## ԳԼ . ԼԵ

1 Եստուած Յակոբը Բեթէլ կրեցէկ : 2 Յակոբ իր տունը  
 կուսքերէն կրմարբէ : 6 Բեթելի մէջ սեղան կը շինէ : 3  
 Դերօբայի մահը : 9 Եստուած Բեթելի մէջ կորհնէ Յակո-  
 բը : 16 Ուաքէլ՝ Բենիամինը կը ծնանի , ու Լփրատի ճամ-  
 բան կը մտնի : 22 Ուուբէն՝ Բաղդայի հետ կը ննջէ : 23 Յա-  
 կոբի զաւակները : Յակոբ Բերրոն կուգայ իր Իսահակ հօ-  
 րը : 28 Իսահակին կենաց օրերը , մահը , և թաղուիլը :

- 1 Եւ Եստուած ըսաւ Յակոբին . Ելի՛ր՝ վեր  
 դէպի Բեթէլ գնա՛ , ու հոն բնակէ . և հոն  
 սեղան մը շինէ Եստուծոյ՝ որ քեզի երեցաւ , քու  
 2 Եսաւ եղբօրդ երեսէն փախած ատենդ : Եւ  
 Յակոբ իր ընտանիքին ու բոլոր իրեն հետ եղող-

ներուն ըսաւ . Չեր մէջը եղած օտար աստուած-  
 ները վերցուցէք , ու մաքրուեցէ՛ք և հանդերձ-  
 նիդ փոխեցէ՛ք . Եւ ելէ՛ք վեր դէպի Բեթէլ 3  
 երթանք . ու հոն սեղան մը շինեմ՝ Եստուծոյ ,  
 որ իմ նեղութեանս օրը ինձի լսեց , ու իմ դա- 4  
 ցած ճամբուս մէջ ինձի հետ էր : Եւ իրենց  
 ձեռքը եղած օտար աստուածները՝ ու իրենց ա-  
 կանջը եղած օղերը Յակոբին տուին . և Յակոբ  
 թաղեց զանոնք Սիբեմի մօտ եղած բեկեղնիին 5  
 տակը : Եւ ճամբայ ելան . և իրենց բոլորակ-  
 քը եղած քաղաքներուն վրայ Եստուծոյ վախճ  
 ինկաւ , ու Յակոբին որդւոցը կտակէն շինկան : 6  
 Եւ Յակոբ ինքը և իր հետը եղած բոլոր ժողո-  
 վուրդը եկան Լուզ՝ ք Բեթէլ : Եւ հոն սեղան 7  
 մը շինեց , և ան տեղին անունը ԼՂ Բեթէլ  
 դրաւ . քանզի իր եղբօրը երեսէն փախած  
 ատենը՝ Եստուած հոն իրեն երեցեր էր : Եւ Ուե- 8  
 բեկային դայեակը Վեբօրա մեռաւ , և Բեթե-  
 լին վարի կողմը՝ կաղնիին տակը թաղուեցաւ . ու  
 անոր անունը \* Երնպախօթ դրաւ : Եւ Ես- 9  
 տուած նորէն երեցաւ Յակոբին՝ երբոր անի-  
 կայ Սիջազեակէն դարձեր էր , ու օրջնեց անի-  
 կայ : Եւ Եստուած ըսաւ անոր . Քու անունդ 10  
 Յակոբ է . ալ մէյ մըն ալ քու անունդ Յա-  
 կոբ չըսուի , հապա Իսրայէլ ըլլայ . և անոր  
 անունը Իսրայէլ դրաւ : Եւ Եստուած ըսաւ 11  
 անոր . Ես ամենախորոզ Եստուած եմ . ամբ/ս  
 ու շատնաս . քեզմէ ազգ՝ ու ազգերու ժողովներ

\* ք՝ կաղնի սղոյ

- ըլլան, և քու կրանքէդ թագաւորներ ելան :
- 12 Եւ ան երկիրը՝ որն որ Աբրահամին ու Իսահակին տուի, քեզի պիտի տամ . և քեզմէ ետքը քու սերունդիդ պիտի տամ ան երկիրը :
- 13 Եւ Աստուած ան տեղը՝ ուր որ անոր հետ խօսեալ
- 14 ցաւ, անոր քովէն վեր ելաւ : Եւ Յակոբ քարէ արձան մը կանգնեց ան տեղը՝ ուր որ Աստուած իրեն հետ խօսեցաւ . և անոր վրան թափելու նուէր
- 15 ընծայեց, ու անոր վրան եղ թափեց : Եւ Յակոբ ան տեղին անունը՝ ուր որ Աստուած իր հետը
- 16 խօսեցաւ, Բեթէլ գրաւ : Եւ Բեթէլէն Ճամբայ ելան, ու Եփրատ չեղած քիչ մը ճամբայ մնաց՝ Ռաբէլ ճնաւ, և ճնած ատենը շատ
- 17 դժուարութիւն քաշեց : Եւ եղաւ որ երբ իր ճնանելուն շատ դժուարութիւն կը քաշէր, ծընուցիչը ըսաւ անոր . Մի՛ վախնար . ինչու որ
- 18 աս ալ քեզի որդի է : Եւ եղաւ որ երբ անոր հոգին կելար՝ ( քանզի կը մեռնէր, ) անոր անունը Գէնոսի գրաւ . բայց անոր հայրը՝ Իսնիաւ
- 19 մին ըսաւ անոր : Եւ Ռաբէլ մեռաւ, ու թաղուեցաւ Եփրատին ճամբան՝ որ Բեթէլէ
- 20 հէմն է : Եւ Յակոբ անոր գերեզմանին վրայ արձան մը կանգնեց, որ մինչև այսօր Ռաբէլ
- 21 լին գերեզմանին արձանն է : Եւ Իսրայէլ ճամբայ ելաւ ու իր վրանը Քաղերի աշտարակին
- 22 մէկալ կողմը բացաւ : Եւ եղաւ որ երբ Իսրայէլ ան երկիրը կը գնակէր, Ռաբէլն գնաց

\* Թ՝ նեղութեանս որդին

† Թ՝ ալ մեռքին որդին

ու իր հօրը Բաղդա հարձին հետ պառկեցաւ .  
և Խորայէլը լսեց աս :

Երդ՝ Յակոբին որդիքը տասներկու էին :  
Լիային որդիները՝ Յակոբին առջինները Ու- 23  
բէն՝ Էմուօն և Ղևի ու Յուդա և Խաբար  
ու Չարուղոն : Ուաքելին որդիները՝ Յով 24  
սէփ ու Բենիամին : Եւ Ուաքելին Բաղդա 25  
աղախինին որդիները՝ Գան ու Վեփթաղիմ :  
Եւ Լիային Չեղիայ աղախինին որդիները՝ 26  
Գադ ու Էսեր : Յակոբին որդիները ասոնք  
են , որոնք Միջագետ ճնան : Եւ Յակոբ 27  
եկաւ իր Խաւհակ հօրը դէպի Մամբրէ՝ Եր-  
բոկի քաղաքը՝ ի՞նչ Վերրոն , ուր որ Եբրահամ  
ու Խաւհակ պանդուխտ կեցան : Եւ Խաւ- 28  
հակին օրերը հարիւր ութսուն տարի եղաւ :  
Եւ Խաւհակ ծերացած ու օրերը լեցուած ըւ- 29  
լալով՝ աւանդեց հողին ու մնաւ և իր ժողո-  
վուրդին խառնուեցաւ . և իր որդիները Եսաւ  
ու Յակոբ թաղեցին անիկայ :

Գ Լ . Լ , Չ

1 Եսաւին իրեք կնիկները , 6 և Սէիր լեռը երթալը : 9 Իբ  
տղաքները : 15 Ես տղաքներէն ելած իշխանները : 20 Սէ-  
րի տղաքը և իշխանները : 31 Եզովփի թագաւորները : 40  
Եսաւէն ելած իշխանները :

Եւ ասոնք են Եսաւին ճնունդները՝ որ է Ե- 1  
զովմ : Եսաւ իրեն կնիկներ առաւ Քա- 2  
նանու աղջիկներէն , Քետացի Լլոնին աղջիկը  
Եզգան՝ և Իսկացի Սերեգօնին աղջիկը՝ Ենային



- 3 աղջիկը Ողիբաման . Եւ Իամայէլին աղջիկը՝  
 4 Նարեութային քոյրը Բասեմաթը : Եւ Եդ-  
 5 ճնաւ Որազուէլը : Եւ Ողիբամա ճնաւ Յեուսը  
 ու Յեզղօմը և Կորխը . Ըսոնք են Եսաւին որդի-  
 ները՝ որ ճնան իրեն՝ Քանանու երկրին մէջ :
- 6 Եւ Եսաւ առաւ իր կնիկները ու տղաքները և  
 աղջիկները ու իր ասնը բոլոր մարդիկը՝ և իր  
 հօտերը ու իր անասունները՝ և բոլոր իր ստա-  
 ցուածքը՝ որ ինքը Քանանու երկրին մէջ ստա-  
 ցաւ , և իր Յակոբ եղբօրը երեսէն «չէլ եր-  
 7 կիր մը գնաց : Ինչու որ իրենց ստացուածքը  
 շատ ըլլալուն համար՝ մէկ տեղ չէին կրնար  
 բնակիլ . և իրենց հօտերուն պատճառովը՝ պան-  
 8 իրենց : Եւ Եսաւ Սէիր լեռը բնակեցաւ . Ե-  
 սաւը՝ Եդումն է :
- 9 Եւ Սէիր լեռը եղած Եդումացւոց հայրը Ե-  
 10 սաւին ճնունդները ասոնք են : Եսաւի որդւոցը  
 անունները ասոնք են . Եսաւին կնկանը Եդդա-  
 յին որդին Եղիփազ , և Եսաւին կնկանը Բասե-  
 11 մաթին որդին Որազուէլ : Եւ Եղիփազին որ-  
 12 քինները՝ Թեման՝ Օմար՝ Սեփո և Գոթամ ու  
 13 սոնք էին : Եւ Որազուէլին որդիները ասոնք  
 են . Նաբոթ՝ Օարեհ՝ Սամմա ու Սէզա . աս-  
 ոնք էին Եսաւին կնկանը Բասեմաթին որդի-

ները : Եւ Եսաւին կնկանը Սեբեղօնին աղ- 14  
 ջիկը՝ Ընային աղջիկը Ողբամային որդիները  
 ասոնք են . և ճնաւ Եսաւին Յեուար՝ ու Յեզ-  
 ղօմը և Կորխը : Եսաւին որդիներէն եղած 15  
 իշխանները ասոնք են . Եսաւին առջիննկը Ե-  
 ղիփազին որդիները թեման իշխանը՝ Օմար իշ-  
 խանը՝ Սեփո իշխանը՝ Կենեղ իշխանը , Կորխ 16  
 իշխանը՝ Գոթամ իշխանը՝ Ըմաղէկ իշխանը . Ե-  
 դովմի երկրին մէջ Եղիփազէն եղած իշխանները  
 ասոնք են : Ըսոնք Եդդայի որդիներն են :  
 Եւ Եսաւին որդին Ռագուէլի որդիները ասոնք 17  
 են . Կակոթ իշխան՝ Չարէ իշխան՝ Սամայ  
 իշխան՝ Մէղա իշխան . Եդովմի երկրին մէջ Ռա-  
 գուէլէն եղած իշխանները ասոնք են . Եսաւին  
 կնկանը Բասեմաթին որդիները ասոնք են : Եւ 18  
 Եսաւին կնկանը Ողբամային որդիները ասոնք  
 են . Յեուս իշխան՝ Յեզղօմ իշխան՝ Կորխ իշ-  
 խան . Եսաւին կնիկը Ընային աղջիկը Ողբա-  
 մայէն եղած իշխանները ասոնք են : Ըսոնք են 19  
 Եսաւին յ Եդովմին որդիները , և ասոնք են  
 անոնց իշխանները :

Եւ ան երկրին մէջ բնակող Քոռեցի Սե- 20  
 իրին որդիները ասոնք են . Դոտան և Սորաղ՝  
 ու Սեբեղօն և Ընա , Եւ Գիսօն ու Եսեր և 21  
 Գիսան , ասոնք են Քոռեցիներուն իշխանները  
 Սէիրին որդիները Եդովմի երկրին մէջ : Եւ 22  
 Դոտանին որդիներն էին Քոռի ու Եմման՝ և  
 Դոտանին քչրը թամնայ : Եւ Սորաղին որդի- 23

- ները ասոնք են . Գաղղուան ու Սանաբաթ՝ և Գե-  
 24 բաղ Սեփո ու Օնան : Եւ Սերեգօնին որդի-  
 ները ասոնք են . Եյիէ ու Օնան . աս ան Օ-  
 նանն է՝ որ իր Սերեգօն հօրը էշերը արածած  
 ասոնք՝ անասաբաթին մէջ ջերմուկները գտաւ :  
 25 Եւ Ընային որդիները ասոնք են . Գիսօն՝ ու Ը-  
 26 նային աղջիկը Ողիբամայ : Եւ Գիսօնին որդի-  
 ները ասոնք են . Ըմադան ու Եսբան՝ և Յեթ-  
 27 բան ու Վառան : Ըսերին որդիները ասոնք  
 28 են . Բաղղան ու Օգաւան և Ըկան : Գիսանին  
 29 որդիները ասոնք են . Օս ու Ըռան : Վոռե-  
 ցիներուն իշխանները ասոնք են . Գոտան իշ-  
 խան՝ Սորաղ իշխան՝ Սերեգօն իշխան՝ Ընա  
 30 իշխան , Գիսօն իշխան՝ Ըսեր իշխան՝ Գիսան իշ-  
 խան՝ . ասոնք են Վոռեցիներուն իշխանները Սե-  
 իբի երկրին մէջ իրենց իշխանութեանը գաւառ-  
 31 ներուն համեմատ : Եւ աս թագաւորներն էին՝  
 որ թագաւորեցին Եդովմի երկրին մէջ , Իսրա-  
 յէլի որդւոցը վրայ թագաւոր մը թագաւորելէն  
 32 առաջ : Եւ Փեթորին որդին Բէղան թագա-  
 ւորեց Եդովմին մէջ . ու անոր քաղաքին անունը  
 33 Գեննարա էր : Եւ Բէղան մեռաւ , ու անոր  
 տեղը Բոսսօրացի Օարէհին որդին Յօբաբը  
 34 թագաւորեց : Եւ Յօբաբը մեռաւ , ու անոր  
 տեղը թաւմանացւոց երկրէն Ըսօմը թագաւորեց :  
 35 Եւ Ըսօմը մեռաւ , ու անոր տեղը Բադադին  
 որդին Ըգադը թագաւորեց՝ որ Սովարի դաշ-  
 տին մէջ Սադիամացիները կոտորեց , և անոր  
 36 քաղաքին անունը Ըվիդ էր : Եւ Ըգադը մե-

աաւ , ու անոր տեղը Մասեկացի Սամաղան թա-  
 գաւորեց : Եւ Սամաղան մնաաւ , ու անոր<sup>37</sup>  
 տեղը գետին քովը Ռորբովթէն եղած Սաւուղը  
 թագաւորեց : Եւ Սաւուղը մնաաւ , ու անոր<sup>38</sup>  
 տեղը Ռթորօրին որդին Բաղդայինօն թագաւո-  
 րեց : Եւ Ռթորօրին որդին Բաղդայինօն մնաաւ ,<sup>39</sup>  
 ու անոր տեղը Ըգարը թագաւորեց . և իր քա-  
 ղաքին անունը Փոգով էր . ու իր կնիկանը ա-  
 նունը՝ Մազորին աղջկանը Մատրեթին աղջիկը՝  
 Մետարեէլ էր : Եւ իրենց ցեղին պէս ու իրենց<sup>40</sup>  
 տեղին պէս իրենց անուններովը՝ Եսաւէն եղած  
 իշխաններուն անունները ասոնք են . թամանայ  
 իշխան՝ Գաղուայ իշխան՝ Յեթաթ իշխան , Ողի-<sup>41</sup>  
 բամայ իշխան՝ Էեղա իշխան՝ Փենօն իշխան ,  
 Կենէղ իշխան՝ Թեման իշխան՝ Մազար իշխան ,<sup>42</sup>  
 Մագեդիէլ իշխան՝ Իբամ իշխան : Ըսոնք են<sup>43</sup>  
 Եգովթի իշխանները՝ իրենց բնակութեանը պէս ,  
 իրենց օտարուածքին երկրին մէջ . սոս է Եսաւ  
 Եգովմայեցւոց հայրը :

## Գ Լ . Լ Լ :

4 Յովսէփն եղբայրները զենքը կատեն : 5 Իր երկու երաջը :  
 13 Յակոբ կըխրիէ Յովսէփը որ իր եղբայրները տեսնէ : 18  
 Իր եղբայրները անիկայ մեռցունելու կըմիտարանին : 21 Ռու-  
 բէն զանիկայ կըխալտէ : 26 Յովսէփ Լամայեղացիներուն կը  
 ծախուի . 31 ու Յակոբ անոր արխանտ կապայէն խարուե-  
 լով՝ սուդ կըբռնէ : 36 Յովսէփ Եգիպտոս Պետափրէսին կը  
 ծախուի :

Եւ Յակոբ իր հօրը օտարական եղած երկրին՝ 1  
 Բանանու երկրին մէջ բնակեցաւ : Ըսոնք 2

- են Յակորին ճնունդները . Յովսէփ տասնու-  
 եօթը տարեկան էր, երբոր իր եղբայրներուն հետ  
 հօտերը կարածէր՝ և պատանի ըլլալով՝ իր հօ-  
 րը կնիկներուն Բաղդային որդիներուն հետ ու  
 Օղղփային որդիներուն հետ էր . և Յովսէփ  
 3 անոնց չար լուրը իր հօրը կը բերէր : Աւ Խա-  
 րայէլ իր բոլոր որդիներէն աւելի կը սիրէր Յով-  
 սէփը . ինչու որ իր ձերութեանը որդին էր ա-  
 նիկայ . և բազմազոյն պատմութեան մը շինեց ա-  
 4 նոր : Աւ անոր եղբայրները տեսան որ իրենց  
 հայրը կը սիրէ անիկայ՝ բոլոր եղբայրներէն աւել-  
 լի, ատեցին անիկայ . ու խաղաղութեամբ չէին  
 5 կրնար խօսիլ անոր հետ : Աւ Յովսէփ երազ մը  
 տեսաւ, ու իր եղբայրներուն պատմեց . և անոնք  
 6 աւելի ատեցին զանիկայ : Աւ ըսաւ անոնց . կա-  
 զաչեմ՝ ձեզի, մտիկ ըրէք աս իմ տեսած երազս .  
 7 Ահա մենք գաշտին մէջը որաներ կը կապէինք, և  
 ահա իմ որաս երու ու շիտակ կանգնեցաւ . և ա-  
 հա ձեր որաները անոր բոլորտիքը կայնեցան՝ ու  
 8 իմ որոյիս երկրպագութիւն ըրին : Աւ անոր  
 եղբայրները ըսին անոր . Իբաւցունէ մեր վրայ  
 պիտի թագաւորե՞ս, կամ իրաւցունէ մեր վրայ  
 պիտի տիրե՞ս . և անոր երազներուն ու խօս-  
 9 քերուն համար էվելօք ատեցին զանիկայ : Աւ  
 ուրիշ երազ մըն ալ տեսաւ, ու ան իր եղ-  
 բայրներուն պատմեց՝ ու ըսաւ . Ահա երազ մըն  
 ալ տեսայ, և ահա արեւը ու լուսինը՝ և տասնը-  
 10 մէկ աստղեր ինձի երկրպագութիւն ըրին : Աւ  
 իր հօրը ու իր եղբայրներուն պատմեց, և իր

Հայրը չ'իսնց զանիկայ՝ ու ըսաւ անոր . Ի՞նչ  
 է սա քու տեսած երազդ . ես՝ ու քու մայրդ՝ և  
 քու եղբայրներդ իրաւցունէ՞ պիտի գանք քեզի  
 մինչև գետինը խոնարհութիւն ընելու : Եւ 11  
 եղբայրները նախանձեցան անոր . բայց հայրը  
 իր միտքը պահեց սա խօսքը : Եւ անոր եղ- 12  
 բայրները Սիւքէմ գացին իրենց հօրը հօտերը  
 արածելու : Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփին . Քու 13  
 եղբայրներդ Սիւքէմին մէջ չե՞ն արածեր ոչ-  
 նէրը . եկուր ես քեզ անոնց խրկեմ . ու անիկայ  
 ըսաւ . Ե՛հա ես է՞մ է՛ : Եւ ըսաւ անոր . Գնա՛ 14  
 նայէ՛ թէ քու եղբայրներդ ողջ առողջ են , և  
 հօտերը ողջ են , ու ինձի լուր մը բեր . Եւ յո-  
 պէս խրկեց զանիկայ Քերրոնի ձորէն , և ան  
 ալ Սիւքէմ եկաւ : Եւ մարդ մը գտաւ զանի- 15  
 կայ , որ դաշտին մէջ կը պարտէր . և ան մար-  
 դը հարցուց անոր՝ ըսելով , Ի՞նչ կը փնտռես :  
 Եւ անիկայ ըսաւ . Իմ եղբայրներս կը փնտռեմ . 16  
 կաղաչեմ՝ ըսէ՛ ինձի , անոնք ո՞ւր կ'արածեն :  
 Եւ ան մարդը ըսաւ . Եսկից ելան . քանզի լսե- 17  
 ցի որ Գօթայիմ երթանք՝ կըսէին : Եւ Յով-  
 սէփ իր եղբայրներուն կտեէն գնաց , ու զանոնք  
 Գօթայիմին մէջ գտաւ : Եւ երբ զինքը հե- 18  
 ոուէն տեսան , դեռ ինքը անոնց մօտ չեկած , ա-  
 ոաջ՝ զանիկայ մեռցունելու միտքանեցան : Եւ 19  
 մէկզմէկու ըսին . Ե՛հա ան երազ տեսնողը կու-  
 գայ : Ուստի հիմա եկէ՛ք մեռցունենք զանիկայ , 20  
 ու գուրին մէկին մէջը նետենք ու ըսենք , թէ՛  
 Չար գազան մը կերաւ զանիկայ . և տեսնանք

- 21 Թէ անոր երազները ի՞նչ պիտի ըլլան : Աւ  
Ռուբէն լածին պէս՝ անոնց ձեռքէն ազատեց
- 22 զանիկայ , ըսելով . Չմեռցունենք զանիկայ : Աւ  
Ռուբէն ըսաւ անոնց . Երիւն մի՛ թափէք , Բայց  
զանիկայ առ դուքը նետեցէք որ անապատին մէջն  
է , և անոր ձեռք մի՛ զարնէք . առ իւրեք՝ որ  
կարենայ ազատել զանիկայ անոնց ձեռքէն՝ իր
- 23 հօրը դարձունելու համար : Աւ եղաւ որ Յով-  
սէփ իր եղբայրներուն քովը եկածին պէս՝ մեր-  
կացուցին Յովսէփը իր պատմութեանէն , այնչափ  
24 իր վրայի բազմազոյն պատմութեանէն : Աւ ա-  
ռին անիկայ՝ ու դուքը նետեցին . և դուքը դա-  
25 տարկ էր , այսինքն՝ մէջը ջուր չկար : Աւ նրա-  
տան հաց ուտելու . և իրենց աչքերը վերցուցին  
ու տեսան , և սհա Խամայէլացիներուն մէջ կարա-  
ւանը կուգար Քաղապէն , որ իրենց ուղտերը  
համեմելով և բալասանով ու զմուռսով բեռնաւ-
- 26 ւորած էին՝ Ազխատոս տանելու երթալով : Աւ  
Յուզա ըսաւ իր եղբայրներուն . Ի՞նչ օգուտ  
կրլայ՝ թէ որ մեր եղբայրը մեռցունենք ու ա-  
27 նոր արիւնը ծածկենք : Այլէք Խամայէլացիներ-  
ուն ծախենք անիկայ , և մեր ձեռքը անոր չգրպ-  
չի . ինչու որ անիկայ մեր եղբայրը . մեր մարմինն
- 28 է . և անոր եղբայրները հաճեցան : Աւ Մադի-  
անայի վաճառականներ որ կանցնէին՝ Յովսէփը  
դուբէն քաշեցին ու դուրս հանեցին իւրեք  
նէրը , և Խամայէլացիներուն ծախեցին անիկայ  
քսան կտոր արծաթի . ու անանք ալ Յովսէփը
- 29 Ազխատոս տարին : Աւ Ռուբէն դէպի դուքը

դարձաւ , և ահա Յովսէփը զուբին մէջը չէր .  
 ու իր հանդերձը պատուակեց : Եւ դարձաւ իր 30  
 եղբայրներուն ու ըսաւ . Տղան չկայ , և ես  
 ուր երթամ : Եւ առին Յովսէփին պատմուճաւ 31  
 նը , ու սյծի ձագ մը մորթեցին՝ և պատմուճանը  
 արիւնը թաթխեցին : Եւ խրկեցին բաղմազոյն 32  
 պատմուճանը , ու ան իրենց հօրը տարին ու բ-  
 սին . Ես դտանք մենք , զխոցի՛ր հիմա թէ ա-  
 քու որդիիդ պատմուճա՞նն է՝ թէ չէ : Եւ ա- 33  
 նիկայ ճանչցաւ ան՝ ու ըսաւ . Իմ որդիիս պատ-  
 մուճանն է , շար գաղան մը կերած է զանիկոյ .  
 Յովսէփը անշուշտ փառասուեցաւ : Եւ Յակոբ 34  
 պատուակեց իր հանդերձը , ու քուրձ հազաւ իր  
 մէջքը , և իր որդիին համար շատ օր սուգ ը-  
 բաւ : Եւ իր բոլոր որդիները ու իր բոլոր աղ- 35  
 ջիկները զինքը մխիթարելու ելան , բայց ինքը  
 մխիթարուիլ չէր ուզեր . ու ըսաւ . Ես սու-  
 գով պիտի իջնամ գերեզմանը՝ իմ որդիիս քովը :  
 Եւ յապէս՝ հոյրը լացաւ անոր համար : Եւ Սա- 36  
 դիանացիները ծախեցին զանիկոյ Եգիպտոսի  
 մէջ՝ Փարաւօնին դահճապետը ներքինի պե-  
 տափրէսին :



## ԳԼ. ԼԸ

1 Յուդան՝ Լշրը, Օնանը և Սելոմը կրճնանի : 6 Լշրը՝ Թամարին հետ կրկարգուի : 8 Օնանին հանցանքը : 11 Թամար՝ Սելոմին կրուպակ , 13 կրխարէ Յուդան , 27 ու փարէսը և Օւրան երկուորեակ կրճնանի :

- 1 **Լ**ե եղաւ որ անատենը՝ Յուդա իր եղբայրնե-  
րուն քովէն իջաւ , ու Ոգողամացի մէկու մը
- 2 քովը դնաց , որուն անունը Իրաս էր : Եւ  
Յուդան՝ Շաւայ անունով Քանանացիի մը  
աղջիկը տեսաւ , ու առաւ զանիկայ՝ և մտաւ ա-
- 3 նոր : Եւ անիկայ յղացաւ՝ ու որդի մը ծնաւ ,  
4 և անոր անունը Լշր դրաւ : Եւ նորէն յղա-  
ցաւ՝ ու որդի մը ծնաւ , և անոր անունը
- 5 Օնան դրաւ : Եւ դարձեալ որդի մըն ալ  
ծնաւ , ու անոր անունը Սելոմ՝ դրաւ . և  
Յուդան Քասիրին մէջն էր՝ երբոր իւրը ծը-
- 6 նաւ զանիկայ : Եւ Յուդա իր առջինեկ տղան  
Լշրին՝ կնիկ մը առաւ , որուն անունն էր
- 7 Թամար : Եւ Յուդային առջինեկը Լշր չար էր  
Տէրոջը առջևը . ու Տէրը մեռցուց զանիկայ :
- 8 Եւ Յուդան ըսաւ Օնանին . Ստի՛ր քու եղբորդ  
կնկանը , ու անոր հետ ամուսնացի՛ր՝ և քու եղ-
- 9 բորդ սերունդ հանէ : Եւ Օնան դիտցաւ որ  
սերունդը իրենը պիտի չըլլայ . անոր համար եր-  
բոր իր եղբորը՝ կնկանը կրմանար , սերմը գե-  
տինը կրթափէր՝ որ իր եղբորը սերունդ չտայ :
- 10 Եւ աս ըրած բանը Տէրոջը առջին գէշ երե-
- 11 ցաւ ու զանիկայ ալ մեռցուց : Եւ Յուդա իր :

Թաամար հարօին ըսաւ . Որբէվորի նստէ քու հօրդ  
 տունը՝ մինչև որ իմ Սելոմ որդիս մեծնայ . ին-  
 չու որ ըսաւ , շքլայ որ սա ալ իր եղբայրներուն  
 պէս մեռնի . և Թաամար գնաց ու իր հօրը տու-  
 նը նստեցաւ : Եւ շատ օրերէն ետքը մեռաւ <sup>12</sup>  
 Հաւային աղջիկը՝ Յուդային կնիկը . և Յուդա  
 միսիթարուեցաւ , ու Թաամայ գնաց իր հօտերը  
 ասրակաուր ընողներուն՝ ինքը ու իր բարեկամը  
 Ոգողմացի Իրասը : Եւ զուրցուեցաւ Թաամա <sup>13</sup>  
 ըին՝ ըսելով , Եհա քու սկեսրայրդ դէպի Թամ-  
 նայ կեղւայ՝ իր սէլարները ասրակաուր ընելու :  
 Են ալ իր որբէվարութեան հանդերձները <sup>14</sup>  
 հանեց իր վրայէն , ու քօղով մը ծածկուեցաւ ,  
 և սլլուեցաւ՝ ու Թաամային ճամբուն մէջ եղած  
 Ինանու դուռը նստեցաւ . քանզի տեսաւ որ  
 Սելոմը մեծցաւ , ու ինքը անոր կնիկ ըլլալու  
 չտրուեցաւ : Երբոր Յուդան տեսաւ զանիկայ , <sup>15</sup>  
 բող կարծեց , ինչու որ իր երեսը ծածկեր էր :  
 Եւ ճամբան անոր դարձաւ ու ըսաւ . Հնորհք <sup>16</sup>  
 ըրէ , քեզի մտնամ . քանզի անոր իր հարսը ըլ-  
 լաղը չէր գիտեր : Եւ անիկայ ըսաւ . Ինձի մրտ-  
 նալու համար ի՞նչ կուտաս : Են ալ ըսաւ . Ես <sup>17</sup>  
 քեզի այժի ուլ մը կըխրկեմ հօտերէն . և անիկայ  
 ըսաւ . Իրաւ մը կուտաս՝ մինչև խրկելդ : Եւ <sup>18</sup>  
 ինքն ալ ըսաւ . Ի՞նչ գրաւ տամ քեզի . ու  
 անիկայ ըսաւ . Պու մասնիդ ու ժապաւէնդ և  
 ձեռքիդ գաւազանը քո՛ւր . և ինքը տուաւ ան-  
 նոր , ու մտաւ անոր . և անիկայ իրմէն յղի մը-  
 նաց : Եւ ելաւ ու գնաց , և իր վրայէն քօղը <sup>19</sup>

- 20 հանեց, ու իր որբէվարու թեան հանդերձները հա-  
 մը Ողորմացիին ձեռքովը, որ կնիկին ձեռքէն  
 21 գրաւը առնէ. բայց չգտաւ զանիկայ: Եւ ան  
 տեղի մարդոցը հարցուց՝ ըսելով, Կնանու մէջ  
 եղած ճամբուն վրայի բողբ ո՞ւր է. և անոնք  
 22 ըսին. Հոս բող չկար: Եւ դարձաւ Յուդային՝ ու  
 ըսաւ. Չգտայ զանիկայ. և ան տեղի մարդիկն  
 23 ալ ըսին, թէ՛ Հոս բող չկար: Եւ Յուդան  
 ըսաւ. Ընտր ըլլայ ան, որ ծաղը չըլլանք. ա-  
 հա ես աս ուր խրկեցի, ու դուն չգտար անիկայ:  
 24 Եւ եղաւ որ իրեք ամիսէն ետքը՝ Յուդային  
 զուրցուեցաւ՝ ըսելով, Քու հարսդ թաւաւ  
 պոռնրկեցաւ, նաև ահա պոռնրկութենէն յղի  
 մնաց. և Յուդան ըսաւ. Հանեցէք անիկայ,  
 25 ու երուի: Երբոր զանիկայ զուրս կը հանէին՝ Գը-  
 ռուսի իր սկեսրայրին խրկեց՝ ըսելով, Ես  
 աս բաներուն տիրոջմէն յղի եմ. և ըսաւ,  
 Ընտր հրէ՛ աս մատնին ու ժապաւէնը և  
 26 գաւազանը գիտցի՛ր՝ թէ որի՞նն է: Եւ Յու-  
 դան ձանչցաւ ու ըսաւ. Ընիկայ ինձմէն ար-  
 դար է. ինչու որ զանիկայ իմ որդիիս Սելո-  
 մին չառուի. և մէյ մըն ալ նորէն չգիտցաւ զու-  
 27 նիկայ: Եւ եղաւ որ անոր ծնած ատենը՝ ահա  
 28 անոր արգանդին մէջը երկուորեակ էին: Եւ ե-  
 ղաւ որ երբ ծնաւ, Էկը ձեռքը երկընցուց. և  
 մանկաբարձը առաւ ու անոր ձեռքին վրայ կար-  
 միր դերձան կապեց՝ ըսելով, Ըռաջ աս եղաւ:  
 29 Եւ անիկայ իր ձեռքը ետ քաշածին պէս՝ ահա

անոր եղբայրը ելաւ . և մանկաբարձը ըսաւ .  
 Ինչո՞ւ ցանգը պատուեցիր . \* պատասաւմը քու  
 վրագ ըլլայ . անոր համար անոր անունը <sup>Փ</sup> փարէս  
 դրուեցաւ : Եւ ետքը՝ ձեռքին վրայ կարմիր <sup>30</sup>  
 գերձան ունեցող եղբայրը ելաւ , և անոր ա-  
 նունը Օլարա դրուեցաւ :

## Գ Լ . ԼԹ

1 Յովսէփ՝ Պետափրէսին տանը մէջ կը յատաջանայ : 7 Իբ փ-  
 կինին փորձու թեանը՝ դէմ կը կենայ : 13 Խառնութեամբ ամ-  
 բաստանուելով , 20 բանտը կը ձգուի : 21 Ի անտին մէջը  
 Եստուած անոր հետ կը ըսայ :

Եւ Եգիպտոս իջուցին Յովսէփը . և փա- 1  
 բաւօնին ներքինին՝ Եգիպտոսցի Պետափրէս  
 դահճապետը ծախու առաւ զանիկայ Իսմայէ-  
 լացիներուն ձեռքէն , որոնք զանիկայ հոն իջու-  
 ցին : Եւ Տէրը Յովսէփին հետ էր , ու անի- 2  
 կայ յաջողակ էր . և իր Եգիպտոսցի տիրոջը տունն  
 էր անիկայ : Եւ անոր տէրը տեսաւ որ Տէրը 3  
 անոր հետն է . քանզի ինչ որ ընէր , Տէրը կը  
 յաջողէր անոր ձեռքովը : Եւ Յովսէփ շնորհք 4  
 գտաւ անոր առջևը , ու կը ծառայէր անոր , որ իր  
 տանը վրայ վերակացու ըրաւ զանիկայ , ու բոլոր  
 իր ունեցածը անոր ձեռքը յանձնեց : Եւ եղաւ 5  
 որ զանիկայ իր տանը ու իր բոլոր ունեցածին վը-  
 րայ վերակացու ըրած Ժամանակէն՝ Տէրը Եգիպ-  
 տոսցիին տունը օրինեց Յովսէփին համար . և թէ՛  
 տանը մէջ և թէ՛ դաշտին մէջ՝ անոր բոլոր ու-  
 նեցածին վրայ Տէրոջը օրհնութիւնը եղաւ : Եւ 6

\* Ք՝ պատասաւմն

- իր բոլոր ունեցածը Յովսէփին ձեռքը թողուց .  
 ու տանը մէջը ինչ որ կար՝ չէր գիտեր , իր կե-  
 րած հացէն զատ : Եւ Յովսէփ գեղեցիկ էր ե-  
 7 րեսով ու գեղեցիկ տեսքով : Եւ եղաւ որ աս  
 բաներէն ետքը՝ անոր տիրոջը կնիկը աչք տնկեց  
 Յովսէփին վրայ , ու ըսաւ . Պառկէ՛ ինձի հետ :  
 8 Բայց անիկայ չհաճեցաւ , ու իր տիրոջը կնկանը  
 ըսաւ . Եհա իմ տէրս տունին մէջ իմ քովս ինչ  
 որ կայ՝ չգիտեր . և իր բոլոր ունեցածը իմ ձեռքս  
 9 յանձնեց : Ես տունին մէջ ինձմէ մեծ չկայ .  
 և բան մը ինձմէն արգիլուած չէ՛ քեզմէ զատ՝  
 ինչու որ դուն անոր կնիկն ես . ու բնմն ես ինչ-  
 պէս աս մեծ չարութիւնը ընեմ , ու Եստուծոյ  
 10 դէմ մեղանչեմ : Եւ եղաւ որ՝ քանի որ ան-  
 նիկայ Յովսէփին կըզուրցէր ամէն օր՝ իրեն հետ  
 պառկելու համ իրեն հետ ըլլալու՝ մտիկ չէր ըներ :  
 11 Եւ եղաւ որ օր մը իր գործին համար տուն եկաւ .  
 12 ու հոն տանը մարդերէն մէկը չկար : Եւ տի-  
 կինը բռնեց անոր հանգերձէն՝ ըսելով , Ինձի  
 հետ պառկէ . և անիկայ իր հանգերձը անոր  
 13 ձեռքը թողուց ու փախաւ դուրս ելաւ : Եւ ե-  
 ղաւ որ երբ տեսաւ՝ թէ անիկայ իր հանգերձը  
 14 թողուց՝ ու դուրս փախաւ , Իր տանը մարդիկը  
 կանչեց , և զուրցեց անոնց՝ ըսելով . Նայեցէ՛ք ,  
 մեզի Եբրայեցի մը բերաւ՝ մեզ խայտառակ ը-  
 նելու համար . անիկայ ինձի եկաւ՝ ինձի հետ  
 պառկելու համար , ու ես բարձր ձայնով պօռա-  
 15 ցի : Եւ եղաւ որ երբ լսեց իմ բարձր ձայնով  
 պօռալս , իր հանգերձը քովս թողուց՝ ու փախաւ

դուրս ելաւ : Եւ մինչև որ անոր տէրը տուն 16  
 եկաւ , անոր հանդերձը իր քովը պահեց : Եւ 17  
 խօսեցաւ անոր աս խօսքերուն պէս՝ ըսելով , Ըն  
 Երբայցեցի ծառան որ դուն մեզի բերիր , իս խայ-  
 տառակ ընելու համար եկաւ ինձի : Եւ եղաւ 18  
 որ երբ իմ ձայնս հանեցի ու ստուացի , իր հան-  
 դերձը քովս թողուց , ու դուրս փախաւ : Եւ 19  
 եղաւ որ երբ անոր տէրը լսեց իր կնիկանը խօս-  
 քերը՝ որ զուրցեց իրեն՝ ըսելով , Քու ծառայ  
 ինձի սյսպէս ըրաւ , իր բարկութիւնը բորբո-  
 քեցաւ : Եւ Յովսէփին տէրը առաւ զինքը ու 20  
 բանտը դրաւ , ան տեղը՝ ուր որ թագաւորին  
 բանտարկեալները կապուած էին . և հոն բան-  
 տին մէջը մնաց : Բայց Տէրը Յովսէփին հետն 21  
 էր ու ողորմութիւն ցրեցուց անոր . և բան-  
 տապետին առջևը շնորհք գտնել տուաւ անոր :  
 Եւ բանտապետը Յովսէփին ձեռքը յանձնեց 22  
 բանտին մէջը եղած բոլոր բանտարկեալները . և  
 հոն ամէն գործը ընողը անիկայ էր : Բան-  
 տապետը՝ անոր ձեռքը եղած մէկ բանին չէր  
 նայեր . ինչու որ Տէրը անոր հետն էր , ու ամէն  
 անոր ըրածները Տէրը կը յաջողէր :

## ԳԼ . Ի

1 փարաւօնին Սատակարարը ու հացագործը բանտին մէջ : 4  
 Ֆանտապետը ասոնք Յովսէփին պահպանութեանը կը յանձ-  
 նէ : 5 Յովսէփ անոնց երազները կը մեկնէ , 20 որ նոյն մեկ-  
 նութեանը համեմատ կը կատարուին : 23 Սատակարարին ա-  
 պերախտութիւնը :

- 1 **Ս**ը կըլաւ որ աս բաներէն կտքը՝ Եզիպտոսի  
 թագաւորին մատակարարը ու հացագործը ի-  
 րենց տիրոջը Եզիպտոսի թագաւորին դէմ յան-  
 2 ցանք գործեցին : Եւ փարաւօն բարկացաւ երկու  
 ներքինիներուն՝ այսինքն մատակարարապետին ու  
 3 հացագործապետին : Եւ զանոնք դահճապետին  
 տանը բանտին մէջ դրաւ՝ ուր որ Յովսէփը  
 4 կար : Եւ դահճապետը Յովսէփին ապապրեց  
 անոնց համար , ու անիկոյ կը ծառայէր անոնց .  
 5 և անոնք ատեն մը բանալ մնացին : Եւ բան-  
 տին մէջ կապուած Եզիպտոսի թագաւորին մա-  
 տակարարը ու հացագործը՝ երկուքն ալ մէկ գի-  
 6 նշանակութեանը պէս : Եւ Յովսէփ տատուանց  
 անոնց եկաւ , ու տեսաւ զանոնք՝ որ խռովեր էին :  
 7 Եւ իր տիրոջը տունը իր հետը բանտարկուած  
 փարաւօնին ներքինիներուն հարցուց՝ ըսելով ,  
 8 Ինչո՞ւ ձեր երեսները արտում են այսօր : Եւ  
 անոնք ըսին անոր . Երազ տեսանք , ու ան մեկնող  
 չկայ . և Յովսէփ ըսաւ անոնց . Չէ՞ որ Ըստու-  
 9 պատմեցէ՞ք ինձի : Եւ մատակարարապետը իր  
 երազը պատմեց Յովսէփին ու ըսաւ անոր . Ե-

բազիս մէջը տեսայ որ առջեւ որթ մը կար . Եւ 10  
 որթին վրայ իրեք ուռ կային . և ան բողբոջելուն  
 պէս՝ ծաղիկ կրբանար՝ ու անոր ողկոյղները խա-  
 ղող հասցուցին . Եւ Փարաւօնին գաւաթը 11  
 ձեռքս էր . ու խաղողները առի , և Փարաւօնին  
 գաւաթին մէջ ճմլեցի , ու գաւաթը Փարաւօնին  
 ձեռքը տուի : Եւ Յովսէփ ըսաւ անոր . Ը-12  
 սոր մեկնութիւնը աս է . իրեք ուռը՝ իրեք օր է :  
 Իրեք օրէն ետքը Փարաւօն քեզ պիտի յիշէ ու 13  
 նորէն քեզ պաշտօնիդ պիտի դարձունէ . և Փա-  
 րաւօնին գաւաթը անոր ձեռքը պիտի տաս՝ անոր  
 մատակարարը եղածիդ առջի սովորութեանը պէս :  
 Բայց քեզի բարեք եղած ատենը՝ իս միտքդ բեր , 14  
 և կաղաչեմ՝ քեզ՝ ինձի բարերարութիւն ընէ՛ .  
 և իս Փարաւօնին յիշելով՝ իս աս տունէն դուրս  
 հանէ : Քանզի իրաւցունէ իս գողցան Եբրա- 15  
 յեցւոց երկիրէն . և հոս ալ բան մը չըրի որ իս աս  
 գուրը նետեն : Եբրօր հացագործսպետը տե- 16  
 սաւ՝ թէ մեկնութիւնը աղէկ է , ըսաւ Յովսէփին .  
 Աս ալ երազիս մէջը տեսայ՝ որ գլխուս վրայ իրեք  
 ճերմակ սակառ ունէի . Եւ ամէնուն վրայի սա- 17  
 կառին մէջ հացագործի շինած Փարաւօնին ամէն  
 կերակուրներէն իտ . ու թռչունները կուտէին  
 զանոնք գլխուս վրայի սակառէն : Եւ Յովսէփ 18  
 պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Ընոր մեկնու-  
 թիւնը աս է . Իրեք սակառը՝ իրեք օր է : Ի- 19  
 րեք օրէն ետքը՝ Փարաւօն վրայէդ քու գլուխդ  
 պիտի վերցունէ , ու քեզ ծառէ մը պիտի  
 կախէ . և թռչունները վրայէդ քու մարմինդ



- 20 պիտի ուտեն : Եւ եղաւ որ երրորդ օրը՝ փարաւօնին ճննդեան օրն էր, որ իր բոլոր ծառաներուն խնջոյք ըրաւ . և իր ծառաներուն մէջը իր միտքը ինկաւ մատակարարապետը ու հա-
- 21 ցագործապետը : Եւ դարձուց մատակարարապետը իր պաշտօնին, ու անիկայ գաւաթը փարաւօնին ձեռքը տուաւ . Բայց կախել տուաւ հացագործապետը՝ ինչպէս որ Յովսէփ մեկնեց
- 23 անոնց : Եւ մատակարարապետը միտքը չբերաւ Յովսէփը, հապա մոռցաւ զանիկայ :

## ԳԼ . ԽԵ

1 փարաւօն երկու երազ կրտսնէ : 25 Յովսէփ զանոնք կը մեկնէ, 33 ու փարաւօնին խորհուրդ կուտայ : 38 Յովսէփին յառաջադիմութիւնը : 50 Սանասէին ու Եփրեմին ծընունդը : 54 Սովք կըսկսի :

- 1 Եւ եղաւ որ լման երկու տարիէն ետքը՝ փարաւօն երազին մէջ տեսաւ՝ որ գետին եզերքը
- 2 կայներ էր : Եւ ահա գետէն գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմինով եօթը երինջ դուրս ելան , ու մարգագետինն վրայ կարած էին : Եւ ահա անոնց ետեէն՝ գետէն ուրիշ եօթը երինջ դուրս ելան զազիր տեսքով ու նիհար մարմինով, ու Տէփուլ երինջներուն քովը՝ գետին եզերքը կայ-
- 4 ներ էին : Եւ զազիր տեսքով ու նիհար մարմինով երինջները կերան ան գեղեցիկ տեսքով ու պարարտ մարմինով երինջները : Եւ յայտն փարաւօն արթընցաւ : Եւ քնացաւ, ու երկրորդ անգամ՝ երազին մէջ տեսաւ՝ որ մէկ ծղօտին վրայ
- 5

եօթը պարարտ ու աղէկ հասկեր կելլային : Աւ 6  
 ահա անոնց ետեւէն եօթը նիհար ու խորշակա-  
 հար հասկեր կըբուսնէին : Աւ ան եօթը նի- 7  
 հար հասկերը կըկլէին եօթը պարարտ ու լեցուն  
 հասկերը : Աւ փարաւօն արթընցաւ , և Ահա 8  
 երազ էր : Աւ եղաւ որ՝ առտուանց անոր հո-  
 գին նեղացաւ , ու խրկեց կանչեց Ագիստոսի բո-  
 լոր մոգերը և ան տեղի բոլոր խմաստունները .  
 ու փարաւօն պատմեց անոնց իր երազները , բայց  
 զանոնք փարաւօնին մեկնելու մէկը չկար :

Անատենը մատակարարապետը զուրցեց փա- 9  
 րաւօնին՝ ըսելով , Այսօր ես իմ յանցանքներս  
 կըբխեմ : Փարաւօնը բարկացաւ իր ծառա- 10  
 ներուն , ու իս՝ դահճապետին տունը բանտը  
 դրաւ , իս՝ ու հացադորձապետը : Աւ ես ու ա- 11  
 նիկայ մէկ գիշեր երազ տեսանք . ամէն մէկերնիս  
 իր երազին նշանակութեանը պէս երազ տեսանք :  
 Աւ հոն մեզի հետ դահճապետին ծառան՝ Ար- 12  
 բայեցի պատանի մը կար , ու անոր պատմեցինք ,  
 և անիկայ մեկնեց մեզի մեր երազները . ամէն  
 մէկերնուս՝ իր երազին պէս մեկնեց : Աւ եղաւ 13  
 որ՝ անիկայ ինչպէս մեզի մեկնեց , անանկ եղաւ .  
 իս՝ իմ պաշտօնիս դարձուց , ու զանիկայ կախեց :

Անատենը փարաւօն խրկեց ու կանչեց Յով- 14  
 սէփը , և շուտով բանտէն հանեցին զանիկայ .  
 և ամիլուեցաւ ու իր հանդերձը փոխեց , և փա-  
 րաւօնին եկաւ : Աւ փարաւօն ըսաւ Յովսէփին . 15  
 Արազ մը տեսայ , ու անիկայ մեկնող մը չկայ .  
 և քեզի համար լսեցի որ կըսեն , թէ լսած երազդ

- 16 կը մեկնես : Եւ Յովսէփ պատասխան տուաւ  
 փարաւօնին՝ ըսելով , Չէ՛ թէ ես . Ըստուած  
 պիտի տայ խաղաղութեան պատասխան փարա-
- 17 ւօնին : Եւ փարաւօն ըսաւ Յովսէփին . Ե-  
 րազիս մէջը տեսայ՝ որ գետին եզերքը կայներ
- 18 էի : Եւ ահա գետէն եօթը պարարտ մարմինով  
 ու գեղեցիկ տեսքով երինջներ ելան , և մարգա-
- 19 գետինին վրայ կարած էին : Եւ ահա անոնց ե-  
 տեէն ուրիշ եօթը նիհար ու խիստ զազիր տես-  
 քով և վտիտ մարմինով երինջներ ելան , որ ա-  
 նոնց պէս զազիր բնաւ չտեսայ Ազիպտոսի բոլոր  
 երկրին մէջ :
- 20 Եւ նիհար ու զազիր երինջները կերան ան  
 21 առջի եօթը պարարտ երինջները . Եւ անոնք՝  
 անոնց փորը մանալը չէր գիտցուեր . հասկա ա-  
 նոնց տեսքը առջինին պէս զազիր էր : Եւ յս-
- 22 պէս արթընցայ : Եւ Դաւթեալ երազիս մէջը  
 տեսայ՝ որ ահա մէկ ծղօտին վրայ եօթը լեցուն
- 23 ու աղէկ հասկեր կելլային : Եւ ահա անոնց  
 ետեէն եօթը բարակ՝ նիհար՝ « խորշակահար
- 24 հասկեր կը բուսնէին : Եւ ան նիհար հասկե-  
 րը կլեցին եօթը աղէկ հասկերը . Եւ պատմեցի  
 մոզբուն , բայց մէկը չկար որ մեկնէ : Եւ
- 25 Յովսէփ ըսաւ փարաւօնին . Մէկ է փարաւօ-  
 նին երազը . Ըստուած իր ընկերքը յայտնեց փա-
- 26 րաւօնին : Եօթը աղէկ երինջները՝ եօթը տա-  
 րի են , և եօթը աղէկ հասկերը՝ եօթը տարի
- 27 են . երազը մէկ է : Եւ անոնց ետեէն ելած  
 եօթը նիհար ու զազիր երինջը՝ եօթը տարի

է , և եօթը պարապ ու խորշակահար հասկերը՝  
 եօթը տարուան սոյն է : Փարաւօնին զուր- 28  
 ցած խօսքս աս է . Եստուած իր ընկելքը փա-  
 րաւօնին ցըրուցեր է : Եհա բոլոր Եգիպ- 29  
 տոսի երկրին մէջ եօթը տարի մեծ առատու-  
 թիւն պիտի գայ : Եւ անոնց ետեէն եօթը 30  
 տարի սով պիտի գայ , և Եգիպտոսի երկրին  
 մէջ բոլոր առատութիւնը պիտի մոռցուի . ու  
 սովը պիտի սպառէ երկիրը : Եւ երկրին մէջ 31  
 առատութիւնը պիտի չգիտցուի՝ անկից ետքը  
 գալու սովին պատճառաւ . ինչու որ խիստ  
 սաստիկ պիտի ըլլայ : Եւ երազը՝ երկու ան- 32  
 գամ Փարաւօնին կրկնուելուն պատճառը աս  
 է՝ որ աս բանը Եստուածէ հաստատուեցաւ , և  
 Եստուած շուտով պիտի ընէ ան : Ուստի հիմա 33  
 թող Փարաւօն իմաստուն ու գիտուն մարդ  
 մը գանայ , ու զանիկայ Եգիպտոսի երկրին վը-  
 րայ կեցունէ : Թող Փարաւօն ասնի ընէ , 34  
 ու երկրին վրայ գործակալներ գնէ . և Ե-  
 գիպտացիներէն առատութեան եօթը տարիին  
 մէջ՝ հինգէն մէկը առնէ : Եւ ան գալու աղէկ 35  
 տարիներուն բոլոր պաշարը ժողովն , ու փարա-  
 ւօնին ձեռքին տակը ցորեն հաւքն , և բազմոքնե-  
 րուն մէջը պաշար պահեն : Եւ Եգիպտոսի երկ- 36  
 րին մէջ ըլլալու եօթը տարուան սովին դէմ աս  
 պաշարը երկրին համար պահուի՝ որ երկիրը սո-  
 վէն չկորսուի :

Եւ աս բանը Փարաւօնին աչքին ու իր բոլոր 37  
 ծառաններուն աչքին աղէկ երեցաւ : Եւ փա- 28

- բաւօն ըսաւ իր ծառան՝ րուն . կրնա՞նք գտնալ  
ասոր պէս մէկը՝ որ իր ներսի գինն Աստուծոյ Հո-
- 39 գին ունի : Եւ Փարաւօն ըսաւ Յովսէփին .  
Որովհետեւ Աստուած աս ամէնը քեզի ցրցուց ,
- 40 քեզի պէս հանճարեղ ու գիտուն չկայ : Դուն  
իմ տանս վըսյ կեցիր , և բոլոր իմ ժողովուրդս  
քու բերանդ նայի՞ն . ես միայն ակամար քեզ-
- 41 մէ մեծ ըլլամ : Եւ Փարաւօն ըսաւ Յովսէփին .  
Ահա քեզ Ազիպտոսի բոլոր երկրին վըսյ կա-
- 42 ցուցի : Եւ Փարաւօն հանեց մատնին իր ձեռ-  
քէն , ու Յովսէփին ձեռքը դրաւ , և անոր բեհզէ  
հանդերձներ հագցուց , ու անոր վեղը ոսկի շէթայ
- 43 անցուց : Եւ զանիկայ իր երկրորդ կառքը հեծ-  
ցուց . և կըպօռային անոր առջևէն . Ծնրադրու-  
թիւն ըրէք . և բոլոր Ազիպտոսի երկրին վըսյ
- 44 կեցուց զանիկայ : Եւ Փարաւօն ըսաւ Յով-  
սէփին . Ես Փարաւօն եմ . և առանց քեզի  
բնաւ մէկը իր ձեռքը կամ իր ոտքը չվերցունէ՞
- 45 Ազիպտոսի բոլոր երկրին մէջ : Եւ Փարաւօն  
Յովսէփին անունը փսոմիթոմփանէ դրաւ , և  
\*Արեգ քաղաքին՝ Պետափրեա քուրմին աղջիկը  
Ասանէթը՝ անոր կնիկ ըլլալու տուաւ . և Յով-  
սէփ Ազիպտոսի երկիրը պարտելու ելաւ :
- 46 Եւ Յովսէփ Փարաւօնին առջևը ելած ատենը  
երսուն տարեկան էր : Եւ Յովսէփ Փարաւօ-  
նին առջևէն ելաւ , ու բոլոր Ազիպտոսի երկի-
- 47 ըը պարտեցաւ : Եւ առատութեան եօթը տա-  
րիին մէջ երկիրը էվել էվելըք արդիւնք տուաւ :
- 48 Եւ Ազիպտոսի երկրին մէջ եղած եօթը տարի-

ին բոլոր պաշարը ժողովեց , ու քաղաքներուն  
 մէջը դրաւ պաշարը , ամէն քաղաքին բոլորտի-  
 քը եղած արտերուն պաշարը՝ նշն քաղաքը դը-  
 րաւ : Եւ Յովսէփ ծովի աւաղի չափ խիստ շատ 49  
 ցորենն հաւքեց . անս'նկ որ հաշիւի չգալուն հա-  
 մար՝ չափելը ձգեց : Եւ սովին տարիները գա- 50  
 լէն առաջ՝ Յովսէփին երկու որդի ծնաւ , որ  
 Երեդ քաղաքի՝ Վետտիրեա քուրմին աղջիկը Ե-  
 սանէկթը ծնաւ անոր : Եւ Յովսէփ առջինն 51  
 կին անունը՝ Վանասէ դրաւ . ինչու որ Ես-  
 րտուած ինձի մտնալ տուաւ իմ բոլոր վեշ-  
 տերս ու իմ հօրս բոլոր տունը : Եւ երկրոր- 52  
 դին անունը՝ Եփրեմ դրաւ . ինչու որ Ես-  
 րտուած իմ տառապանքիս երկրին մէջ աճե-  
 ցուց իս :

Եւ Եգիպտոսի երկրին մէջ եղած առատու- 53  
 թեան կօթը տարին անցաւ : Եւ Յովսէփին 54  
 ըսածին պէս՝ սովին կօթը տարին գալ սկսեց .  
 և բոլոր երկիրներուն մէջ սով եղաւ , բայց Ե-  
 գիպտոսի բոլոր երկրին մէջ հաց կար : Եւ 55  
 երբ բոլոր Եգիպտոսի երկիրը անօթեցաւ , ժո-  
 ղովուրդը աղաղակեց Փարաւօնին՝ հացի համար .  
 և Փարաւօն ըսաւ բոլոր Եգիպտացիներուն .  
 Յովսէփին գացէք . ինչ որ ձեզի ըսէ , ան ը-  
 րէք : Եւ երկրին բոլոր երեսին վրայ սով ե- 56  
 ղաւ . և Յովսէփ բացաւ բոլոր շտեմարանները ,  
 ու Եգիպտացիներուն ծախեց . և սովը սաստ-

\* Ի՛ մոցրնող

† Ի՛ աճեցու մե

57 կացաւ Ազիպտոսի երկրին մէջ : Եւ բոլոր աշխարհն Ազիպտոս կուգային , Յովսէփէն պաշար ծախու առնելու . ինչու որ ամէն երկրի մէջ սոյք սաստկացաւ :

ՊԼ . ԽԲ

1 Յակոբ ցորեն ծախու առնելու համար իր տասը տղաքը Ազիպտոս կրկրիէ : 16 Յովսէփ զանոնք բանալ կըզնէ լրտես էք ըսելով , 18 ու ետքը կազատէ զանոնք ան պայմանով՝ որ Իննիամիսը բերեն : 21 Յովսէփը ծախելնին միտք բերելով կըխոջան : 24 Շմաւօն՝ Իննիամիսին տեղը գրաւ կըպահուի : 25 Միւսները ցորեն առնելով՝ ետ կըդառնան , 29 ու աս բաները Յակոբին կըպատմեն : 36 Յակոբ՝ Իննիամիսը խըրկել շուգէր :

- 1 **Եւ** Յակոբ երբ իմացաւ Ազիպտոսի մէջ պաշար ըլլալը , Յակոբ ըսաւ իր որդիներուն .
- 2 Ինչո՞ւ մէկզմէկու կընայիք : Եւ ըսաւ . Եհսալսեցի որ Ազիպտոսի մէջ պաշար կայ . հոն իջէք ու անկից մեզի ծախու առէք , որ ողջ մընանք ու չմեռնինք :
- 3 Եւ Յովսէփին տասը եղբայրները Ազիպտոս իջան ցորեն ծախու առնելու :
- 4 Իսայց Յակոբ՝ Յովսէփին եղբայրը Իննիամիսը՝ եղբայրներուն հետ չխրկեց . ինչու որ ըսաւ . չըլլայ որ փորձանք մը պատահի անոր :
- 5 Եւ Իսրայէլին որդիները հոն գացողներուն հետ ցորեն ծախու առնելու եկան . քանզի Բանանու երկրին մէջ սով կար :
- 6 Եւ Յովսէփ ան երկրին իշխանն էր . Եւ ինքն էր՝ որ երկրին բոլոր ժողովուրդին կըծախէր . ու Յովսէփին եղբայրները եկան , և իրենց երեսները մինչև գետինը

խոնարհութիւն ըրին անոր : Եւ Յովսէփ իր 7  
 եղբայրները տեսածին պէս՝ ճանչցաւ անոնք ,  
 բայց ինքզինքը չճանչցուց անոնց , ու խստու-  
 թեամբ խօսեցաւ , և ըսաւ անոնց . Ո՛ւսկից ե-  
 կաք . և անոնք ըսին . Քանանու երկիրէն կե-  
 րակուր ծախու առնելու էկանք : Եւ Յովսէփ 8  
 իր եղբայրները ճանչցաւ , բայց անոնք զինքը  
 չճանչցան : Եւ Յովսէփ անոնց վրայով իր տե- 9  
 սած երազները միտքը բերաւ , ու ըսաւ անոնց .  
 Գուք լրտեսներ էք , երկրին տկարութիւնը  
 տեսնալու եկած էք : Եւ ըսին անոր . Չէ՛ տէր 10  
 իմ . հապա քու ծառաներդ կերակուր ծախու  
 առնելու եկանք : Մենք ամէնքս մէկ մարդու 11  
 մը որդիներ ենք . մենք շխտակ մարդիկ ենք .  
 ծառաներդ լրտեսներ չեն : Եւ անիկայ ըսաւ 12  
 անոնց . Չէ՛ . հապա երկրին տկարութիւնը տես-  
 նալու եկած էք : Եւ անոնք ըսին . Մենք ծա- 13  
 ռաներդ Քանանու երկրին մէջ մէկ մարդու մը  
 որդիքը ըլլալով՝ տասներկու եղբայրներ ենք . և  
 ահա ամենէն պզտիկը այսօր մեր հօրը քոյն է ,  
 ու մէկալը ողջ չէ : Եւ Յովսէփ ըսաւ անոնց . 14  
 Ես է որ ձեզի զուրցեցի՝ ըսելով , թէ՛ Գուք  
 լրտեսներ էք . Եսով պիտի փորձուիք . փարա- 15  
 ւօնին կենացը համար՝ դուք սակից չէք ելար ,  
 թէ որ ձեր պզտիկ եղբայրը չգայ : Չեզմէ մէկը 16  
 ձեր եղբայրը բերելու խրկեցէք , ու դուք բան-  
 տը դրուիք , որ ձեր խօսքերը փորձուին , թէ  
 արդեօք ձեր մէջը ճշմարտութիւն կայ . թէ չէ՛  
 փարաւօնին կենացը համար՝ դուք լրտեսներ



- 17 էք : Այլ իրեք օր բանտը դրաւ զանոնք :
- 18 Այլ երրորդ օրը Յովսէփ ըսաւ անոնց . Աս ըրէք որ ողջ մնաք . Ինչո՞ւ ես Աստուծոյ կրկնախնամ :
- 19 Թէ որ դուք շխտակ մարդիկ էք , ձեր եղբայրներէն մէկը ձեր բանտին մէջը բանտարկուի . և դուք գացէք : ձեր տանը անօթութեանը հա-
- 20 մար պաշար տարէք . Այլ ձեր պղտիկ եղբայրը բերէք ինձի , որ ձեր խօսքերը շխտակ ելլան , ու
- 21 չմնանիք : Այլ անանկ ըրին : Այլ մէկզմէկու ըսին . Իրաւցունէ մեր եղբօրը վըայով յանցաւոր ենք . ինչու որ մենք տեսանք անոր հոգիին նեղութիւնը՝ երբ ինքը մեզի աղաչեց , ու մտիկ չըրինք . անոր համար՝ աս նեղութիւնը վրանիս
- 22 եկաւ : Այլ Ռուբէն պատասխան տուաւ անոնց՝ ըսելով , Աս ձեզի չզուրցեցի՞ ըսելով թէ , Տըղուն մեզը մի՛ մանաք . ու դուք ինձի մտիկ չըրիք . և ահա հիմա անոր արիւնը մեզմէ կը պա-
- 23 հանջուի : Այլ անոնք չէին գիտեր որ Յովսէփ կը հասկընար . ինչու որ թարգմանով կը խօսէր
- 24 իրենց հետ : Այլ անոնցմէ զատուեցաւ ու ըսցաւ . և նորէն անոնց դարձաւ՝ ու խօսեցաւ անոնց հետ . և անոնցմէ Շմաւօնը առաւ՝ ու ան-
- 25 ոնց աչքին առջևը կապեց զանիկայ : Ատքը Յովսէփ հրաման ըրաւ որ անոնց սմանները ցորենով լեցունեն՝ ու ամէն մէկուն ստակը իր քուրձին մէջը դնեն՝ և անոնց ճամբու պաշար տան :
- 26 Այլ ասանկ ըրաւ անոնց : Այլ անոնք իրենց շերտն բռցուցին ցորենը՝ ու գացին անկից :
- 27 Այլ անոնցմէ մէկը՝ իջած տեղերնին՝ իր իշուն կեր

տալու համար իր քուրձը բացածին պէս՝ իր ստա-  
կը տեսաւ, որ ահա իր քուրձին բերանն էր :  
Եւ իր եղբայրներուն ըսաւ . Իմ ստակս եւ 28  
տրուեցաւ, և ահա հոս իմ քուրձիս մէջն է . ու  
անոնց սիրտը փրթաւ, և վախնալով մէկզմէկու  
ըսին . Ի՞նչ է աս՝ որ Աստուած ըրաւ մեզի : Եւ 29  
եկան Վանանու երկիրը իրենց հօրը Յակոբին,  
և բոլոր իրենց զուխը եկածները պատմեցին ա-  
նոր՝ ըսելով, Ան երկրին տէրը եղող մարդը 30  
մեզի խստութեամբ խօսեցաւ, ու մեզ երկրին  
լրտեսներուն տեղը դրաւ : Եւ ըսինք անոր . 31  
Մենք շխտակ մարդիկ ենք . լրտեսներ չենք :  
Մենք մեր հօրը որդիները՝ տասներկու եղբայր- 32  
ներ ենք . մէկը չկայ, և ամենէն պղտիկը Վա-  
նանու երկրին մէջ մեր հօրը քոյն է այսօր : Եւ 33  
ան երկրին տէրը եղող մարդը ըսաւ մեզի . Չեր  
շխտակ յարդի՞ք ըլլալը ասկից գիտնամ . ձեր եղ-  
բայրներուն մէկը իմ քովս ձգեցէք, և ձեր տանը  
անօթութեանը համար պաշտօն սաէք ու գացէք .  
Եւ ինձի բերէք ձեր ամենէն պղտիկ եղբայրը, ու 34  
գիտնամ որ լրտեսներ չէք, հասցա շխտակ մար-  
դիկ էք . պիտի՞նք ձեր եղբայրը ձեզի կուտամ, ու  
աս երկրին մէջ առուտուր ըրէք : Եւ եղաւ որ 35  
անոնք իրենց քուրձերը թափած ատեննին, ահա  
ամէն մէկուն ստակին ծրարը իր քուրձին մէջն էր .  
և իրենք ալ ու իրենց հայրն ալ ստակին ծրար-  
ները տեսածնուն պէս՝ վախցան : Եւ անոնց 36  
հայրը Յակոբ ըսաւ անոնց . Իս անորդի թո-  
ղուցիք . Յովսէփը չկայ, Ամուսներ չկայ, Ինչ

37 նիամինն ալ պիտի առնէք . ասոնց ամէնը իմ  
 ըսելով , թէ որ զանիկայ քեզի չբերեմ , իմ  
 երկու որդիս մեռցնուր . անիկայ իմ ձեռքս յանձ-  
 38 նէ՛ , ու ես քեզի ետ բերեմ անիկայ : Բայց  
 Յովնէ ըսաւ . Իմ որդիս ձեզի հետ չերթար .  
 ինչու որ անոր եղբայրը մեռած է , ու անիկայ  
 մինակ մնաց . և երթալու ճամբանուդ մէջը ա-  
 նոր փորձանք մը պատահելու ըլլայ : իմ ճերմակ  
 մտղերս տրամութիւնով զերեզմանը կիջնցու-  
 նէք :

Գ Լ . Խ Գ

1 Յակոբ՝ Իննիստմանը խրկելու դժուարաւ կը համոզուի : 15  
 Յովնէի իր եղբայրները կը նուրբ . 31 անոնց խնջոյք մը  
 կընէ :

1 **Ա**լ սովը սաստիկացաւ երկրին մէջ : Ալ եղաւ  
 2 որ երբ Եգիպտոսէն բերած պաշարնին կերան  
 հատցուցին , հայրերնին ըսաւ անոնց . Գա-  
 ցէք նորէն՝ մեզի քիչ մը ուտելիք ծախու առէք :  
 3 Ալ Յուդան զուրցեց անոր՝ ըսելով , Ըն՝ մար-  
 4 տերնիդ չըլլայ : Թէ որ մեր եղբայրը մեզի հետ  
 խրկես , կիջնանք ու քեզի ուտելիք ծախու կառ-  
 5 նենք : Բայց թէ որ չխրկես , չենք խջնար .  
 ինչու որ ան մարդը ըսաւ մեզի . Իմ երես պի-  
 տի չտեսնաք , թէ որ ձեր եղբայրը հետերնիդ  
 6 չըլլայ : Ալ Խարոյէը ըսաւ . Ինչո՞ւ համար

չարութիւն ըրէք ինձի, ան մարդուն իմացունելով  
 թէ ուրիշ եղբայր ունիք : Եւ անոնք ըսին . 7  
 Ըն մարդը մեզի համար ու մեր ազգականներուն  
 համար ճշդիւ հարցուց՝ ըսելով , Չեր հայրը  
 տակաւին ողջ է , ուրիշ եղբայր ունիք . և մենք  
 աս խօսքերուն համեմատ պատասխան տուինք ա-  
 նոր . Երդեօք մենք կրնայի՞նք գիանալ , որ ա-  
 նիկոյ պիտի ըսէ թէ , Չեր եղբայրը իջեցու-  
 ցէք : Եւ Յուդան իր Իսրայէլ հօրը ըսաւ . 8  
 Տղան ինձի հետ խրկէ , ու ելանք երթանք ,  
 որ ողջ մնանք ու չմեռնինք , մենք ալ՝ դուն ալ՝  
 և մեր ընտանիքներն ալ : Աս երաշխաւոր կը- 9  
 լամ անոր համար . իմ ձեռքէս ուզէ զանիկոյ .  
 թէ որ անիկոյ քեզի չըրեմ , ու քու առջեզ  
 չկայնեցունեմ , յաւիտեան քեզի յանցաւոր ը- 9  
 լամ : Վանզի թէ որ չյապաղէինք , մինչև 10  
 հիմա երկրորդ անգամ դարձած կըլլայինք : Եւ 11  
 անոնց Իսրայէլ հայրը ըսաւ անոնց . Ընանկ է  
 նէ , հիմա աս ըրէք . Չեր ամաններուն մէջը  
 երկրիս ամենէն աղէկ պտուղներէն առէք՝ ու  
 մարդուն ընծայ տարէք , քիչ մը բալասան և  
 քիչ մը մեղր՝ համեմ ու զմուսս՝ փտաուղ ու  
 նուշ : Եւ ձեռքերնիզ կրկնապատիկ ստակ ա- 12  
 ռէք . և ձեր քուրձերուն բերանը եղած ստակը՝  
 որ ետ բերուեցաւ , ձեռքերնիզ աստ՝ ետ տա-  
 րէք . գուցէ սխալմունք եղած էր : Եւ եղբայր- 13  
 նիզ առէք ու կէք՝ ան մարդուն գացէք : Եւ 14  
 ամենակարող Մատուածը ձեզի շնորհք գտնալ  
 տայ ան մարդուն առջեք , որ ձեր մէկալ եղ-

բայրը ու Ռենիամինը թող տայ . և ես թէ որ անզաւակ մնալու ըլլամ , թող անզաւակ մնամ :

- 15 Եւ մարդիկը առին սա ընծաները , ու ձեռքերնին կրկնապատիկ ստակ՝ և Ռենիամինը , ու ելան Եզիպտոս իջան , և Յովսէփին առջևը կայնե-
- 16 ցան : Եւ երբ Յովսէփ Ռենիամինը անոնց հետ տեսաւ , իր տանը վերակացուն ըսաւ . Տուն տանք սա մարդիկը , ու պարարակ կենդանիներ մորթէ՛ , և պատրաստէ . ինչու որ սա մարդիկ
- 17 կէսօրին ինծի հետ պիտի ճաշեն : Եւ ան մարդը Յովսէփին ըսածին պէս ըրաւ . ու ան մարդը
- 18 Յովսէփին տունը տարաւ մարդիկը : Եւ մարդիկը վախցան Յովսէփին տունը տարուելուն համար , ու ըսին . Ընչի անգամին մեր քուրձերուն մէջը դարձած ստակին համար կըտարուինք , որ վրանիս յարձակի ու մեր վրայ իյնայ ,
- 19 մեզ ծառաներ առնէ՛ , ու մեր էշերը : Եւ Յովսէփին տանը վերակացուն՝ եղած մարդուն մօտեցան , ու տանը դրանը մէջ զուրցեցին ա-
- 20 նոր , Ու ըսին . Ո՛վ տէր , ասկից առաջ կերակուր ծախու առնելու իջանք : Եւ եղաւ որ
- 21 երբ իջեանը եկանք ու մեր քուրձերը բացինք , ահա ամէն մէկերնուս ստակը իր քուրձին բերանն էր , մեր ստակը ըման կշառքովը . և ան
- 22 մեր ձեռքովը ետ բերինք : Եւ ձեռքերնուս մէջ ուրիշ ստակ բերինք կերակուր ծախու առնելու համար . շէնք գիտեր թէ ո՛վ դրաւ մեր
- 23 ստակը մեր քուրձերուն մէջ : Եւ անիկայ ըսաւ .

Խաղաղութիւն ձեզի , մի՛ վախնաք . ձեր Ես-  
 տուածք և ձեր հօրը Եստուածք զանձ տուաւ  
 ձեզի ձեր քուրձերուն մէջ . ես առի ձեր ստակը :  
 Եւ Շմաւօնը դուքս հաննց անոնց : Եւ ան<sup>24</sup>  
 մարդը Յովսէփին տունը տարաւ մարդիկը . և  
 անոնց ոտքերը լուսլու ջուր տուաւ , ու անոնց  
 էշերուն կեր տուաւ : Եւ անոնք ընծաները<sup>25</sup>  
 սրատրաստեցին՝ մինչև Յովսէփին կէսօրուան դա-  
 լը . ինչու որ իրենց հոն հաց ուտելը իմացան :  
 Եւ երբ Յովսէփ տունը եկաւ , իրենց ձեռքը<sup>26</sup>  
 եղած ընծաները անոր մատուցին տանը մէջ , և  
 մինչև զետինը ծախել անոր խոնարհութիւն  
 րին : Եւ անոնց ողջութիւնը հարցուց՝ ըսե-<sup>27</sup>  
 լով , Են ձեր ձեր հայրը՝ որ ըսիք ինձի , աղէկ  
 է . տակաւին ողջ է : Եւ ըսին . Ձեր ծառան<sup>28</sup>  
 մեր հայրը աղէկ է , տակաւին ողջ է . և ճակ-  
 ցան ու խոնարհութիւն րին : Եւ իր աչքե-<sup>29</sup>  
 րը վերցուց՝ ու իր մօրը որդին իր Բենիամին  
 եղայրը տեսաւ , և ըսաւ . Ես է ձեր պզտիկ  
 եղբայրը , որուն վրայով խօսեցաք ինձի : Եւ  
 ըսաւ Բենիամին . Եստուած ողորմի քեզի որ-  
 գեակիմ : Եւ Յովսէփ շուտով ելաւ . քանզի իր<sup>30</sup>  
 աղիքը գալարեցան իր եղբօրը վրայ , և լալու  
 տեղ կրիւնտուէր . ու ներսի սենեակը մտաւ և  
 հոն լացաւ : Եւ լուաց իր երեսը՝ ու դուքս ելաւ .<sup>31</sup>  
 և զսպեց ինքզինքը՝ ու ըսաւ . Հաց բերէք :  
 Եւ իրեն զատ՝ ու անոնց զատ՝ և իրեն հետ ու-<sup>32</sup>  
 տալ Եգիպտացիներուն զատ գրին , քանզի Ե-  
 գիպտացիները Երբայեցուց հետ հաց չէին կր-

նար ուտել , ինչու որ Ազխատացիներուն զգուելի  
 33 էր : Ալ նստան անոր առջևը՝ առջինեկը իր  
 առջինեկութեանը պէս , և պզտիկը իր պզտի-  
 կութեանը պէս . և մարդիկը իրարու մէջ զար-  
 34 մացան : Ալ անիկոյ բաժիններ խրկեց անոնց  
 իր առջևէն . բայց Բենիամինին բաժինը մե-  
 կալներուն բաժինէն հինգ անգամ աւելի էր .  
 և խմեցին , ու անոր հետ մէկ տեղ ուրախա-  
 ցան :

## Գ Լ . Խ Գ

1 Յովսէփ իր եղբայրները ճամբայէն ետ դարձունելու համար  
 ճարք կրբանեցունէ : 14 Յուդային աղաչանքը :

1 Ալ իր տանը վերակացուն հրաման ըրաւ , ը-  
 սելով . Աս մարդոցը քուրճերը տանել կրբ-  
 ցածնուն չափ ուտելիք լեցնէր , ու ամէն մէկուն  
 2 ստակը իր քուրճին բերանը դիր : Ալ ամենէն  
 պզտիկին քուրճին բերանը իմ գաւաթս՝ ար-  
 ծաթ գաւաթը՝ ու իր պաշարին ստակը դիր :  
 Ալ անիկայ Յովսէփին ըսածին պէս ըրաւ :  
 3 Ալ առտու եղածին պէս մարդիկը խրկուեցան ,  
 4 իրենք՝ ու իրենց էշերը : Անոնք քաղաքէն ել-  
 լալով հեռու չգացած , Յովսէփ իր տանը վե-  
 րակացուն ըրաւ . Ալ՛ր՝ ան մարդոցը ետեւէն  
 վազէ , ու անոնց հասիր , և ըսէ անոնց . Ին-  
 5 չու՞ բարիին փոխարէն չար հատուցիք . Աս ան  
 չէ՞ որուն մէջէն իմ տէրս կըլամէ , ու անոր մէջը  
 կըհմայէ , առանկ ընելով՝ գէշութիւն ըրիք :

Եւ անիկայ հասաւ անոնց . և ըսաւ անոնց աս 6  
 նոյն խօսքերը : Եւ ըսին անոր . Ինչո՞ւ իմ 7  
 տէրս ասանկ խօսքեր կըզուրցէ . քաւ լիցի՞ որ  
 քու ծառաներդ ասանկ բան մը ընեն : Ըհա 8  
 մեր քուրձերուն բերանը գտած ստակնիս Վա-  
 նանու երկիրէն քեզի ետ բերինք . ուրեմն ի՞նչ  
 պէս քու տիրոջդ տունէն արծաթ կամ ոսկի պի-  
 տի գողնանք : Վու ծառաներուդ որին քովը որ 9  
 գանուի , անիկայ մեոնի . և մնաք ալ իմ տի-  
 րոջս ծառաներ ըլլանք : Եւ անիկայ ըսաւ . 10  
 Հիմա ճիշդ ձեր ըսածին պէս թո՛ղ ըլլայ . ո-  
 րին քովը գանուի , անիկայ ինձի ծառայ ըլլայ ,  
 ու դուք անպարտ ըլլաք : Աստի շուտով ա- 11  
 մէն մէկը իր քուրձը գետինը իջեցուց , ու ամէն  
 մէկը իր քուրձը բացաւ : Եւ անիկայ մեծէն 12  
 սկսեց փնտրուել , ու մինչև պզտիկը նայեցաւ . և  
 դաւաթը Բենիամինին քուրձին մէջ գանուե-  
 ցաւ : Աստի իրենց հանդերձը պատուեցին . և 13  
 ամէն մէկը իր էջը բեռցուց , ու քաղաքը դար-  
 ձան : Եւ Յուդա ու անոր եղբայրները Յով- 14  
 սէփին տունը եկան , և անիկայ տակաւին հոն  
 էր . ու անոր առջևը գետինը ինկան : Եւ Յով- 15  
 սէփ ըսաւ անոնց . Ըս ի՞նչ բան է որ ըրէք .  
 է՛ք գիտէր որ ինձի պէս մարդ մը անշուշտ կը  
 հմայէ : Եւ Յուդան ըսաւ . Իմ տիրոջս ի՞նչ 16  
 ըսեմք , ի՞նչ խօսինք , և ի՞նչպէս արդարա-  
 ցունենք ինքզինքնիս . Ըստուած քու ծառանե-  
 րուդ յանցանքը բռնեց . ահա մենք մեր տիրոջը  
 ծառաներ ենք , մենք ալ՝ անիկայ ալ՝ որուն



- 17 քովը գաւաթը գտնուեցաւ : Աւ անիկայ ըսաւ .  
Վա՛ւ լիցի՛ որ ես ասանկ ընեմ . հասկանան մար-  
դը՝ որուն քովը գաւաթը գտնուեցաւ , անիկայ  
ինծի ծառայ ըլլայ , ու դուք խաղաղութեամբ
- 18 ձեր հօրը ելէ՛ք : Ենատենը Յուդան մօտիկցաւ  
անոր՝ ու ըսաւ . Ո՛վ տէր իմ , շնորհք ըրէ՛  
թող քու ծառայ խօսք մը խօսի իմ տիրոջս ,  
ու ծառայիդ վրայ քու բարկութիւնդ չըրբորքի .
- 19 Ինչու որ դուն Փարաւօնին պէս ես : Իմ տէրս  
իր ծառաներուն հարցուց՝ ըսելով , Հայր
- 20 կամ եղբայր ունի՞ք : Աւ մենք ըսինք մեր  
տիրոջը , թէ՛ Սենք ձեր հայր մը ունինք , և  
որն որ է՛ ձերութեանը ծնած պզտիկ որդի մը  
նի . ու անոր եղբայրը մեռած է , և միայն ա-  
նիկայ իր մօրմէն մնաց , ու անոր հայրը կրտսերէ
- 21 զանիկայ : Աւ քու ծառաներուդ ըսիր . Ինծի՛
- 22 բերէք անիկայ , որ տեսնեմ : Աւ իմ տիրոջս  
ըսինք . Տղան իր հայրը չկրնար ձգել . Ին-  
չու որ իր հայրը ձգելու ըլլայ , կրմեանի անի-  
կայ :
- 23 Աւ քու ծառաներուդ ըսիր . Թէ՛ որ ձեր  
պզտիկ եղբայրը ձեզի հետ չիջնայ , իմ երեսս
- 24 մէյ մըն ալ պիտի չտեսնաք : Աւ եղաւ որ երբ  
եկանք քու ծառայիդ իմ հօրս , իմ տիրոջս խօս-
- 25 քերը պատմեցինք անոր : Աւ մեր հայրը ըսաւ .  
Վացէ՛ք նորէն , ու մեզիքիչ մը կերակուր ծա-
- 26 խու առէք : Աւ մենք ըսինք , Չենք կրնար  
իջնալ . Թէ՛ որ մեր պզտիկ եղբայրը մեր հետը  
ըլլայ՝ անատենը կիջնանք . Ինչու որ պիտի  
չկրնանք տեսնալ ան մարդուն երեսը , թէ՛ որ

մեր պղտիկ եղբայրը մեր հետը չըլլայ : Եւ 27  
 քու ծառագ իմ հայրս ըսաւ մեզի . Գուք գի-  
 տէք որ իմ կնիկս երկու որդի ծնաւ ինձի : Եւ 28  
 մէկը քովէս ելաւ , ու ես ըօի , Ենչուչտ Գու-  
 քը չտեսայ : Աւ թէ որ ասիկայ ալ քովէս առ- 29  
 նէք , ու անոր փորձանք մը պատահի , իմ  
 ճերմակ մաղերս տրամուծիւնով գերեզմանը  
 կիջնցունէք : Ուստի հիմա՝ ե՛րբ քու ծառա- 30  
 յիգ իմ հօրս երթամ , ու տղան մեր հետը չըլ-  
 լայ , անոր հողին տղուն հողին հետ կապուած  
 ըլլալով , Արբոր տեսնայ թէ տղան Գուքը 31  
 չէ , պիտի մեռնի . և ծառաներգ՝ քու ծառա-  
 յիգ մեր հօրը ճերմակ մաղերը տրամուծիւնով  
 գերեզմանը պիտի իջնցունենք : Ինչու որ ծա- 32  
 ռագ՝ տղուն համար իմ հօրս երաշխաւոր եղայ՝  
 ըսելով , թէ որ ես անիկայ քեզի չըերեմ ,  
 իմ հօրս յաւիտեան յանցաւոր ըլլամ : Ուստի 33  
 հիմա կաղաչեմ քեզի , տղուն տեղը՝ ծառագ  
 իմ տիրոջս ծառայ մնայ . և տղան իր եղբայրնե-  
 րուն հետ ելլայ : Քանզի թէ որ տղան իմ 34  
 հետս չըլլայ , ինչպէս ելլամ իմ հօրս . չըլ-  
 լայ որ իմ հօրս գալու փորձանքը տեսնամ :

## Գ Լ . Խ Ե

1 Յովէէփ զինքը իր եղբայրներուն կը ճանչցունէ : 5 Ես բաները Եստուծոյ նախախնամութեանը տալով՝ կը մխիթարէ զանոնք , 9 ու կը խորհէ որ իր հայրը բերեն : 16 Փարսաօն աս բանին կը հաճի : 21 Յովէէփ անոնց ճամբուն պաշարը կուտայ , ու զանոնք կը յորդորէ որ խառնութիւն չունենան մէջերնին : 25 Յակոբ իր որդւոյն լուրը աննելով՝ կը զօրանայ :

- 1 <sup>1</sup> Յովէէփ չկրցաւ զսպել ինքզինքը բոլոր իր քովը կայնողներուն առջևը , ու պօռայ . Գուրս հանեցէ՛ք բոլոր մարդիկը քովէս . և երբ Յովէէփ ինքզինքը իր եղբայրներուն ճանչցուց ,
- 2 քովը մարդ մը չկեցաւ : Եւ բարձր ձայնով լացաւ . և Եգիպտացիները լսեցին , ու Փարսաօնին տունն ալ լսեց : Եւ Յովէէփ ըսաւ իր եղբայրներուն . Ես Յովէէփն եմ՝ , իմ հայրս տակաւին ողջ է . ու եղբայրները չկրցան պատասխան տալ անոր . ինչու որ անոր առջևը ապշած մնացին :
- 3 Եւ Յովէէփ ըսաւ իր եղբայրներուն . ինձի մօտ եկէ՛ք , անոնք ալ մօտ եկան . և ըսաւ . Ես ձեր եղբայրը Յովէէփն եմ , որ Եգիպտոս քաղաքէն ծախեցիք : Ուստի հիմա իս հոս ծախելուդ համար մի՛ վշտանաք , ու ձեզի ծանր չերևայ . ինչու որ Եստուած խրկեց իս ձեր առջևէն , կեանք պահելու համար :
- 4 Քանզի երկրիս վրայ սովին երկրորդ տարին է աս . և տակաւին հինգ տարի կայ՝ որ ոչ վարուցան , ոչ ալ հունձ պիտի ըլլայ : Եւ Եստուած իս ձեր առջևէն խրկեց՝ որ երկրի վրայ ձեզի սերունդ
- 5
- 6
- 7

պահէ , և մեծ ազատութիւնով ձեզ ապրեցու-  
 նէ : Եւ հիմա իս հոս խրկողք դուք չէք , 8  
 հայա Մատուած է . ու իս փարաւօնին հայր՝ և  
 բոլոր իր տունին տէր՝ ու Եգիպտոսի բոլոր երկ-  
 րին իշխան դրաւ : Եւ տով իմ հօրս ել՝ք , 9  
 ու ըսէք ան օր . Եւ յապէս կրօսէք . Յստեփ որ-  
 դից . Եւ տուած իս բոլոր Եգիպտոսին տէր ը-  
 րաւ . շուշանաս՝ ինձի՛ իջնաս : Եւ Գեեսեմի երկ- 10  
 րին մէջ բնակիս՝ ու ինձի մօտ ըլլաս . դուն՝  
 ու քու որդիներդ՝ և որդւոցդ որդիները՝ և հօտե-  
 րըդ՝ ու արջառներդ՝ և քու ամէն ունեցածդ : Եւ 11  
 հոն քեզ պիտի սնուցանեմ՝ . ինչու որ տակաւին  
 հիւզ տարի տով կ'ոյ . շրջոյ որ դուն՝ ու քու  
 տանդ՝ և քու բոլոր ունեցածդ չքաւորութիւն  
 քոյէք : Եւ ահա ձեր աչքերը ու իմ եզրօրս 12  
 Բենիամինին աչքերը կրտեսանան որ ձեզի խօսողք  
 իմ բերանս է : Եւ Եգիպտոսի մէջ իմ ու- 13  
 նեցած բոլոր փտքս ու ձեր բոլոր տեսածը պատ-  
 մեցէք իմ հօրս . և շուտով իմ հայրս հոս ի-  
 ճեցուցէք : Եւ իր Բենիամին եզրօրը վեղը ին- 14  
 կա՝ ու ըսցաւ . Բենիամինն ալ անոր վեղին վը-  
 րոյ ըսցաւ : Եւ իր բոլոր եզրայրները համբու- 15  
 րեց՝ ու անոնց վրոյ ըսցաւ . և անկից ետքը իր  
 եզրայրները իրեն խօսեցին : Եւ սա ըւրը փա- 16  
 րաւօնին տանը մէջ լաւ՝ցու՝ թէ Յովէփին եզ-  
 րայրները եկան . և փարաւօնն ու անոր ծա-  
 ւաներուն հաճելի եղաւ : Եւ փարաւօն ըսաւ 17  
 Յովէփին . Քու եզրայրներուդ ըսէ , Եւ ը-  
 րէք՝ ձեր անասունները բնացուց՝ք , ու Քանս-

- 18 նու երկիրը գացէք . Եւ ձեր հայրը ու ձեր բն-  
տանէքնէրը առէք՝ ու խնձի եկէք . և Եզիպտոսի  
երկրին ազէկ տեղը ձեզի տամ , ու երկրին պա-  
19 րարտութենէն ուտէք : Եւ քեզի հրաման ե-  
ղաւ . սոս բռէք . ձեր տղաքներուն համար ու  
ձեր կնիկներուն համար կառքեր սռէք ձեզի ,  
20 և ձեր հայրը բերէք ու եկէք : Եւ ձեր կա-  
րասիքին մի՛ նայէք . խնչււ ՚ր բոլոր Եզիպտոսի  
21 երկրին բարեքը ձերն է : Եւ Խորայէլին որ-  
գիները ասանկ ըրին . և Յովսէփ անոնց կառ-  
քեր տուաւ Փարաւօնին խօսքին պէս , ու ծամ-  
22 բու համար պաշար տուաւ անոնց : Ըմէն մե-  
կուն զատ զատ փոխելու հանդերձներ տուաւ ,  
բայց Բենիամինին իրեք հարիւր կառք արծաթ՝  
23 ու հինգ ձեռք փոխելու հանդերձ տուաւ : Եւ  
իր հօրը ասոր պէս բաներ խրկեց . տասը էշ  
Եզիպտոսի բարեքէն բեռցած՝ և տասը էգ էշ  
ցորենով ու հոցով և ուտելիքներով բեռցած :  
24 Եւ յայնչ իր եղբայրները խրկեց , ու գոցին . և  
ըսաւ անոնց . Նամբան չխորվիք :25 Եւ անոնք Եզիպտոսէն ելան՝ ու զէպի Քա-  
26 նանու երկիրը իրենց Յակոբ հօրը գացին : Եւ  
պատմեցին անոր՝ ըսելով , Յովսէփը տակաւին  
ողջ է , ու բոլոր Եզիպտոսի երկրին կառս վարը  
անկիայ է : Եւ Յակոբին սիրտը մարեցաւ . խն-  
27 չու որ շհաւտաց անոնց : Եւ անոնք պատմեցին  
անոր՝ Յովսէփին բոլոր խօսքերը որ իրենց ը-  
սաւ , ու երբ տեսաւ Յովսէփին խրկած կառ-  
քերը զինքը տանելու համար , անոնց հօրը Յա-

կորին հոգին ողջ ընցաւ : Եւ Իսրայէլ ըսաւ . 28  
 Բաւական է ինձի՝ որ իմ Յովսէփ որդիս տակա-  
 ւին ողջ է . երթամ ու մեռնելէս առաջ տեսնամ  
 անիկայ :

Գ Լ . Խ Գ

1 Բերսաբէի մէջ Յակոր կըմտիթարուի : 5 Ընկից իր ընտա-  
 նիքովը Եգիպտոս կերթայ : 8 Եգիպտոս դացող իր ընտա-  
 նիքին համբանքը : 29 Յովսէփ իր Յակոր հայրը գիմարե-  
 լու կեցայ :

Եւ Իսրայէլ իր բոլոր ունեցածովը ճամբայ 1  
 ելաւ , ու Բերսաբէէն եկաւ . ու իր Իսահակ 2  
 հօրը Ըստուծոյն զոհեր մատուց : Եւ Ըստուած 3  
 խօսեցաւ Իսրայէլին՝ գիշերուան անտիքի մէջ  
 ու ըսաւ . Յակոր Յակոր , և անիկայ ըսաւ .  
 Ըհա ես հոս եմ : Եւ ըսաւ անոր . Ես եմ Ըս- 3  
 տուած՝ քու հօրդ Ըստուածը . Եգիպտոս իջնա-  
 լու մի վախնար . ինչու որ քեզ հոն մեծ ազգ 4  
 պիտի ընեմ : Ես քեզի հետ Եգիպտոս պիտի 4  
 իջնամ , նաև քեզ անշուշտ պիտի հանեմ , ու  
 Յովսէփ պիտի դնէ իր ձեռքը քու աչքերուդ 5  
 վայ : Եւ Յակոր ելաւ Բերսաբէէն . ու Իս- 5  
 րայէլին որդիները տարին իրենց Յակոր հայրը՝  
 ու իրենց տղաքները՝ և իրենց կնիկները ան կառ-  
 քերով , որոնք որ Փարաւօն խրկեց զանիկայ 6  
 տանելու համար : Եւ առին իրենց անասուն- 6  
 ները ու իրենց ստացուածքը՝ որն որ Վանանու  
 երկրին մէջ ստացան , ու Եգիպտոս եկան՝ Յա- 7  
 կորը ու անոր բոլոր սերունդը իրեն հետ : Իր 7  
 որդիները ու իր որդւոցը որդիները իր հետը՝ իր

աղջիկները ու իր որդւոցը աղջիկները՝ և իր բո-  
լոր սերունդը իր հետը՝ Եգիպտոս բերաւ :

- 8 Եւ ասոնք են Իսրայէլի որդւոցը անունները՝  
որ Եգիպտոս եկան . Յակոբ ու անոր որդիները .
- 9 Յակոբին առջինեկը Ռուբէն : Եւ Ռուբէնին  
որդիները՝ Ենուք ու Փաղղուս և Եսրոն ու
- 10 Քարմի : Եւ Շամուօնին որդիները՝ Յամուէլ  
ու Յամին և Եհուդ ու Յաքին և ՍաՀառ ու
- 11 Քանանացի կնիկին որդին Սաուուղ : Եւ Գլիին  
12 որդիները՝ Գերսոն՝ Կահաթ՝ ու Մերարի : Եւ  
Յուդային որդիքը՝ Լըր ու Օնան և Սելուփ ու  
Փարէս և Օարա . բայց Լըր ու Օնան Քանա-  
նու երկրին մէջ մեռան . և Փարեսին որդիները
- 13 Եսրոն ու Յամուէլ : Եւ Իսաքարին որդիները՝  
Թուվղայ ու Փուայ և \* Յասուր ու Սամբափ :
- 14 Եւ Օարուղոնին որդիները՝ Սիրեդ ու Եղղօն և
- 15 Եղէլ : Եսոնք են Լեւիին որդիները , որոնք ծնաւ  
Յակոբին ու անոր Գինա աղջիկը Միջագետին  
մէջ , անոր բոլոր որդիները ու աղջիկները երաւն-  
ու իրեք հոգի էին : Եւ Գադին որդիները՝ Սա-  
փն ու Ենգի՝ Սունի և Լըսրօն՝ Լըրի ու Երօտի և
- 17 Երեւի : Եւ Եսերին որդիները՝ Յեմնա ու  
Յեսուա և Յեսուի ու Բարիա և անոնց քոյրը  
Սարա , և Բարիային որդիները՝ Քորթոր ու Մեղ-  
18 բիէլ : Եսոնք են Օզգիային որդիները՝ որն  
որ Լաբան իր Լիա աղջիկին առաւ . և անիկայ  
19 ծնաւ ասոնք Յակոբին ասանը վեց հոգի : Յա-  
կոբին կնիկանը Ռաքելին որդիները՝ Յուլէփ ու

Բենիամին : Եւ Յովսէփին՝ Ազխատոսի երկրին 20  
 մէջ Սանասէն ու Եփրեմը ծնան , որ Երեզ քա-  
 ղաքին քուրմը Պետափրէին աղջիկը Եսանէթը  
 զանոնք ծնաւ անոր : Եւ Բենիամինին որդի- 21  
 ն'ըր՝ Բաղա ու Բաքօր և Եսբէլ՝ Գէէրա ու  
 'Նէէման' Լէհի ու Ռօս' Սուփիմ' և Ոփիմ' ու  
 Երեզ : Եսոնք են Սաքելին որդիները՝ որոնք 22  
 ինքը ծնաւ Յակոբին , տասնը շորս հոգի : Եւ 23  
 Գանին որդիները շուսիմ' : Եւ 'Նեփթաղիմին 24  
 որդիները՝ Եսիէլ ու Գօն' և Յասեր ու Սիլ-  
 լիմ' : Եսոնք են Բաղալային որդիները՝ որն որ 25  
 Լաբան իր Սաքէլ աղջիկին տուաւ . ու անիկայ  
 Յակոբին ստոնք ծնաւ , որ ամէնը եօթը հոգի  
 են : Բոլոր հոգիները՝ որ Յակոբին հետ Ե- 26  
 գիպտոս եկան , որ իր երանքէն ելած էին , Յա-  
 կոբին որդւոցը կնիկներէն զատ՝ ամէնը վաթ-  
 սունը վեց հոգի էին : Եւ Յովսէփին Ազխա- 27  
 տոսի մէջ ծնած որդիները երկու հոգի էին . Ա-  
 գիպտոս գացող Յակոբին տունին ամէնը եօ-  
 թանասուն հոգի էին : Եւ անիկայ Յուդան իր 28  
 աղջկէն խըրկեց Յովսէփին , որ Գեսմը ցուցը-  
 նէ իրեն . և անոնք Գեսեմի երկիրը եկան : Եւ 29  
 Յովսէփ իր կտորը պատրաստեց , ու իր Իս-  
 րայէլ հայրը դիմաւորելու համար Գեսեմը ելաւ .  
 և երբ անոր դէմը ելաւ՝ անոր վեղը ինկաւ , ու  
 խել մը ատեն անոր վեղին վրայ լացաւ : Եւ Իս- 30  
 րայէլը ըսաւ Յովսէփին . շիմա քու երեսդ  
 տեսնալէս ետքը՝ Թող մեռնիմ' . ինչու որ տա-  
 կաւին ողջ ես : Եւ Յովսէփ իր եղբայրներուն 31



ու իր հօրը տունին ըսաւ . Ելամ՝ և Փարաւօնին պատմեմ ու ըսեմ անոր . Իմ եղբայրներս ու իմ հօրս ընտանիքը՝ որ Վանանու երկրին  
 32 մէջն էին , ինծի եկան . Եւ ան մարդիկը հովիւներ  
 են . ինչու որ անասուններու աէք են . և իրենց հօտերը ու իրենց արջառները և բոլոր ու-  
 33 նեցածնին բերին : Եւ ըլլայ որ երբ Փարաւօն ձեզ կանչէ , ու ըսէ թէ՛ Ի՞նչ է արհեստնիդ .  
 34 Ըսէք . Վաւ ծառաներդ մեր մանկութենէն մինչև հիմա մենք ալ՝ մեր հայրերն ալ՝ խաչներ սնուցանող ենք . որ Գեսեմի երկրին մէջ բնակէք . ինչու որ Եզրպատացիներուն առջև սմէն հովիւը գարշելի է :

## ԳԼ . ԽԷ

1 Յովսէփ իր եղբայրներուն հինգը , 7 ու իր հայրը Փարաւօնին կրնե՞րկայացունէ : 11 Ի՞նչնց բնակութիւն ու ապրուստ կուտայ : 13 Ի՞նչոր Եզրպատացւոց ստակը , 16 անասունները , 18 ու կայուածքը Փարաւօնին համար ծախու կառնէ : 22 Քուրմերուն երկիրը ծախու շառներ : 23 Երկրի արմօթքներուն հինգերորդ մասը թագաւորին տալու պայմանով երկիրը Եզրպատացւոց կուտայ : 28 Հակօրին տարիքը : 29 Ենիկայ կերդմընցունէ Յովսէփը որ զինքը իր հայրերուն հետ թաղէ :

1 Եւ Յովսէփ եկաւ և պատմեց Փարաւօնին՝ ու ըսաւ . Իմ հայրս ու եղբայրներս և անոնց հօտերը ու արջառները և անոնց բոլոր ունեցածը եկան Վանանու երկիրէն , և ահա Գեսեմի երկիրն են : Եւ իր եղբայրներուն մէջէն հինգ մարդ առաւ , ու զանոնք Փարաւօնին առ-  
 2 ջիւր ներկայացուց : Եւ Փարաւօն ըսաւ անոր

եղբայրներուն . Ի՞նչ է ձեր արհեստը . և անոնք փարաւօնին ըսին . Քու ծառաներդ հովիւներ ենք , մենք ալ՝ մեր հայրերն ալ : Կան ըսին փարաւօնին , Ըս երկրին մէջ բնակելու եկանք . ինչու որ Քանանու երկրին մէջ սովը սատկ ան սղուն համար , քու ծառաներուդ հօտերուն արծելիք չկայ . ուստի հիմա շնորհք ըրէ՛ ծառաներդ Գեսեմի երկրին մէջ բնակինք : Եւ փարաւօն խօսեցաւ Յովսէփին՝ ըսելով , Քու հայրդ ու եղբայրներդ քեզի եկան , Եգիպտոսի երկիրը առջևդ է . քու հայրդ ու եղբայրներդ երկրին ամենէն աղէկ տեղը բնակեցուր . Գեսեմի երկրին մէջ թո՛ղ բնակին . և թէ որ անոնց մէջը ճարպիկ մարդիկ ըլլալը գիտես , զանոնք իմ հօտերուս վրայ վերսկոցու ըրէ՛ : Եւ Յովսէփ իր Յակոբ հայրը բերաւ՝ ու փարաւօնին առջևը հանեց . և Յակոբ օրհնեց փարաւօնը : Եւ փարաւօն ըսաւ Յակոբին . Քու կենացդ տարիներուն օրերը քան՞ են : Եւ Յակոբ ըսաւ փարաւօնին . Իմ պանդխտութեանս տարիներուն օրերը հարիւր երսուն տարի է . իմ կենցա տարիներուն օրերը քիչ ու ցաւով եղան , ու իմ հայրերուս պանդխտութեան օրերուն մէջ եղած իրենց կենաց տարիներուն օրերուն չհասան : Եւ Յակոբ օրհնեց փարաւօնը , ու դուրս ելաւ փարաւօնին առջևէն : Եւ Յովսէփ Եգիպտոսի ամենէն աղէկ կողմը՝ Ռամսասէի երկրին մէջ՝ իր հայրը ու եղբայրները բնակեցուց և անոնց կալուած տուաւ ինչպէս որ փարաւօն հրամայեր էր

- 12 <sup>է</sup>էն : Եւ Յովսէփ իր հոյրը ու եղբայրները .  
 և իր հօրը բոլոր տունը անոնց ընտանիքներուն  
 նայելով՝ հացով կրնուցանէր :
- 13 Եւ բոլոր երկրին մէջ հաց չկար . ինչու որ  
 սովը յոյժ սաստկացաւ . և Եգիպտոսի երկիրը  
 ու Քանանու երկիրը սովին պատճառովը նուա-  
 14 զեցաւ : Եւ Յովսէփ պաշար ծախու առնողներէն՝  
 Եգիպտոսի երկրին մէջ ու Քանանու երկրին  
 մէջ գտնուած ամէն ստակը ժողովեց . և Յով-  
 15 սէփ փարաւօնին տունը տարաւ ստակը : Եւ  
 երբ Եգիպտոսի երկրին՝ ու Քանանու երկրին  
 մէջ ստակը հատաւ , բոլոր Եգիպտացիները ե-  
 կան Յովսէփին ու ըսին . Մեզի հաց տուր .  
 բանզի ստակ չըլլալուն համար ինչ<sup>ո</sup> մեռնինք քու  
 16 առջեգ : Եւ Յովսէփ ըսաւ . Չեր անասուն-  
 ները բերէք , և թէ որ ստակը հատաւ , ձեր  
 17 անասուններուն փոխարէն տամ ձեզի : Եւ ա-  
 նոնք իրենց անասունները Յովսէփին բերին ,  
 և Յովսէփ հաց տուաւ անոնց՝ ձիերուն՝ փոխա-  
 րէն , ու ոչխարներուն փոխարէն , և առջառնե-  
 րուն փոխարէն , ու էշերուն փոխարէն , և ան  
 տարին կերակրեց զանոնք հացով՝ իրենց անա-  
 18 սուններուն փոխարէն : Եւ ելք ըմբացաւ ան  
 տարին , հետեւալ տարին եկան անոր ու ըսին .  
 մեր տիրոջմէն չենք պահեր որ ստակը հատաւ ,  
 և մեր անասուններն ալ մեր տիրոջը եղաւ . ալ  
 բան մը չմնաց մեր տիրոջը առջեւ , բայց մեր  
 19 անձերը ու երկիրը : Ինչ<sup>ո</sup> համար քու աչ-  
 քիդ առջեւ մեռնինք , մենք՝ ու մեր երկիրը . մեզ՝

ու մեր երկիրը հասցով ծախու առ , և մենք մեր  
 երկիրովը փարաւօնին ծառաներ ըլլանք . և  
 սերմ առնը Զգէ որ սպրինք ու չմանինք , և եր-  
 կիրը աճոյն չմնայ : Եւ Յովսէփ բոլոր Եգիպտ- 20  
 տոսի երկիրը փարաւօնին համար ծախու առաւ .  
 քանզի Եգիպտացիներուն վրայ սովը լատիկ ըլ-  
 լարուն համար՝ անոնց ամէն մէկը իր արտը ծա-  
 խեց , ու զետինը փարաւօնին կաւ : Եւ Ե- 21  
 գիպտոսի սահմանին մէկ ծայրէն մինչև մէկալ  
 ծայրը՝ ժողովուրդը քաղաքներու անցւց : Մի- 22  
 այն քուրմերուն երկիրը ծախու շտաւ . ինչու  
 որ քուրմերը փարաւօնէն կուտային բաժին ուե-  
 ին , ու կուտային իրենց բաժինը , որ փարաւօն  
 կուտար անոնց . անոր համար իրենց երկիրը  
 չծախեցին : Եւ Յովսէփ ըսաւ ժողովուրդին . 23  
 Եհնա՛ այսօր ծախու առի ձեզ՝ և ձեր երկիրը  
 փարաւօնին համար . արդ ձեզի սերմ կուտային ,  
 ու սերմանեցի՛ք երկիրը : Եւ ըլլայ որ ետե՛ր ար- 24  
 դիւնքին հինգէն մէկը փարաւօնին տա՛ք , ու չորս  
 մասը ձերը ըլլայ , որ արտին սերմ ու ձեզի և  
 ձեր տանը մէջը եղողներուն՝ ու ձեր տղաքներուն  
 ուտելիք ըլլայ : Եւ ըսին . Մեզ սպրեցու- 25  
 ցիր . թող մեր տիրոջը առջիւր չնորհք գանանք ,  
 ու փարաւօնին ծառաներ ըլլանք : Եւ Յովսէփ 26  
 սա օրէնքը հաստատեց Եգիպտոսի երկրին մէջ  
 մինչև այսօր՝ որ հինգէն մէկը փարաւօնին ըլ-  
 լայ . բաց ՚ի քուրմերուն երկիրէն՝ որ փարաւօ-  
 նինը չեղաւ :

Եւ Իսրայէլ կըննակեր Եգիպտոսի երկրին 27

- մէջ՝ Գեւեմի երկիրը . ու հոն կալուած ստա-  
 28 ցաւ , և աճնցան ու խիտ շատցան : Եւ Յա-  
 կոր Ազխատոսի երկրին մէջ տասնուեօթը տարի  
 ապրեցաւ . ու Յակորին կենացը տարիներուն  
 օրերը հարիւր քառասունուեօթը տարի եղաւ :  
 29 Աւ երբոր Խորայէլին մեռնելու օրերը մօտիկցաւ՝  
 կանչեց իր Յովսէփ որդին , ու ըսաւ անոր .  
 թէ որ քու առջնդ շնորհք գտայ , կազանմ  
 քեզի՝ ձեռքդ իմ երանքիս տակը դիր , ու ինձի  
 մարգասիրութիւն և ճշմարտութիւն ըրէ . կա-  
 ղաչեմ քեզի իս Ազխատոսին մէջ մի՛ թաղեր :  
 30 Հապա իմ հայրերուս հետ պառկիմ , ու դուն  
 իս Ազխատոսէն հանես , և իս անոնց գերեզմանը  
 թաղես : Եւ անիկայ ըսաւ . Ես քու ըսա-  
 31 ծիդ պէս պիտի ընեմ : Եւ ինքը ըսաւ . Ինձի  
 երգում ըրէ . և անիկայ երգում ըրաւ անոր :  
 Եւ Խորայէլ <sup>՝</sup> անկողինին գլխուն վրայ երկրպա-  
 դութիւն ըրաւ :

## ԳԼ . Ի Ը

1 Յովսէփ իր որդիներով՝ հօրը հիւանդութեանը տես կեր-  
 թայ : 3 Յակոր իշեն եղած ուխտը կրպատմ . 5 Ափրեմը  
 ու Մանասէն իր գաւկրներուն կարգը կրդնէ . 7 Յովսէփին  
 մօրը գերեզմանին ուր ըլլաւ կրտէ . 9 կօրնէ Ափրեմը ու  
 Մանասէն . 17 պղտիկը մեծէն վեր կրդնէ : 21 Անոնց նո-  
 րէն Քանան դառնալուն համար կրմարգարեանայ :

- 1 **Ա**ւ եղաւ որ աս բաներէն ետքը Յովսէփին  
 ըսուեցաւ . Ըհա՛ քու հայրդ հիւանդ է . և  
 անիկայ իր երկու որդիքը Մանասէն ու Ափրեմը  
 2 իր հետը առաւ : Եւ Յակորին պատմուեցաւ ու

\* Ամ գաւազանին

ըսուեցաւ . Ահա՛ քու Յովսէփ որդիդ քեզի  
 կուգայ , և Խորայէլ ուժովդաւ ու անկողինին  
 վրայ նստեցաւ : Աւ Յակոբ ըսաւ Յովսէփին . 3  
 Ըմենակարող Ըստուածը Քանանու երկիրը Լու-  
 զին մէջ երեցաւ ինձի՛ ու օրհնեց իս : Աւ ը- 4  
 սաւ ինձի . Ահա՛ քեզ պիտի աճեցունեմ ու պիտի  
 շատցունեմ , և քեզ շատ ժողովուրդներու տէր  
 ընեմ . և աս երկիրը քեզմէ ետքը քուկին սե-  
 բունդիդ յաւիտենական կալուածք ըլլալու պիտի  
 տամ : Աւ հիմա՛ քու երկու որդիքդ՝ որ ծնան 5  
 քեզի Ազիպտոսի երկրին մէջ՝ քեզի Ազիպտոս  
 գալէս առաջ , իմն են . Ափրեմը ու Սանաակն՝  
 Սուբենին ու Շամուօնին պէս իմն պիտի ըլլան :  
 Աւ անոնցմէ ետքը քու ծնած զաւկըներդ՝ քու- 6  
 կըդ ըլլան . ու իրենց ժառանգութեանը մէջ  
 իրենց կըըսյրներուն անուններովը կանչուին :  
 Աւ ես երբոր Սիջագեառէն կուգայի , Քանանու 7  
 երկրին մէջ ա՛ն ճամբուն վրայ՝ որ տակաւին  
 Ափրաթա երթալու քիչ մը տեղ կայ , Սա-  
 քէլը մեռաւ իմ քովս . ու զանիկայ հոն Ափրա-  
 թային , այսինքն՝ Բեթլէհեմին ճամբուն մէջ  
 թաղեցի : Աւ Խորայէլ տեսաւ Յովսէփին որ- 8  
 գիները՝ ու ըսաւ , Որո՞նն են ասոնք : Աւ Յով- 9  
 սէփ ըսաւ իր հօրը . Անոնք իմ որդիներս են  
 որ Ըստուած ինձի տուաւ . և անիկայ ըսաւ ,  
 Շնորհք ըրէ՛ զանոնք ինձի՛ բեր , որ օրհնեմ :  
 Աւ Խորայէլին աչքերը ձերութենէն ճանրացած 10  
 էին , ա՛ն ա՛ն որ՝ չէր կրն սր տեսնալ . և զանոնք  
 մօտեցուց անոր , և անիկայ համբուրեց զանոնք

- 11 և գրկեց : Եւ Իսրայէլ ըսաւ Յովսէփին .  
 Ես չէի յուսար որքու երեսդ տեսնամ , և ահա
- 12 Ըստուած ինձի քու սերունդդ ալ ցրցուց : Եւ  
 Յովսէփ հաննց զանոնք անոր ծունկերէն , և  
 իր երեսը մինչև գետինը խոնարհութիւն ըրաւ :
- 13 Եւ Յովսէփ առաւ անոնց երկուքն ալ՝ Եփրեմը  
 իր աջ ձեռքովը Իսրայէլին ձախ կողմը՝ և Մանասէն իր  
 ձախ ձեռքովը Իսրայէլին աջ կողմը՝
- 14 ու մօտեցուց անոր : Եւ Իսրայէլ իր աջ  
 ձեռքը երկընցուց՝ ու Եփրեմին գլխուն վրայ  
 դրաւ , որ պղտիկն էր , ու իր ձախ ձեռքը Մանասէին  
 գլխուն վրայ . անիկայ խորհրդով իր  
 ձեռքերը փոխեց . ինչու որ Մանասէն անդրանիկ
- 15 էր : Եւ օր նեց զՅովսէփ ու ըսաւ . Ըն Ըստուածը՝  
 որուն առջևը իմ հայրերս Եբրահամը  
 ու Իսահակը քալեցին , ան Ըստուածը՝ որ ծնած
- 16 աստնէս մինչև այսօր իս կերակրեց , Ըն Հրեշտակը՝  
 որ իս ամէն շարիքներէն ազատեց , օր նէ՛ աս  
 տղաքները , և իմ անունս՝ ու իմ հայրերուս  
 Եբրահամին և Իսահակին անունը՝ ասոնց վրայ  
 թող կանչուի , ու երկրին մէջ տեղը խիստ
- 17 շատնան : Եւ Յովսէփ երբ տեսաւ որ հայրը  
 իր աջ ձեռքը Եփրեմին գլխուն վրայ դրաւ  
 իրեն հաճելի չեղաւ . և իր հօրը ձեռքը բռնեց  
 որ ան Եփրեմին գլխուն վրայէն Մանասէին գրե-
- 18 խուն վրայ փոխադրէ : Եւ Յովսէփ ըսաւ իր  
 հօրը . Ո՛չ այսպէս՝ հայր իմ . ինչու որ առջինեկը  
 աս է . քու աջ ձեռքդ անոր գլխուն
- 19 վրայ դիր : Եւ իր հայրը շուզեց ու ըսաւ . Գի-

տեմ՝ որդեակ իմ, գիտե՛մ. ասիկայ ալ ժողովուրդ պիտի ըլլայ, և ասիկայ ալ մեծ պիտի ըլլայ. բայց անոր պզտիկ եղբայրը անկէջ աւելի մեծ պիտի ըլլայ, ու անոր սերունդը խիստ մեծ ազգ պիտի ըլլայ: Եւ ան օրը օրհնեց զանոնք<sup>20</sup> ու ըսաւ. Խորայէլը՝ ձեզմով օրհնէ, «Եստուած քեզ Լփրեմին պէս ու Մանասէին պէս ընէ» ըսելով: Եւ Լփրեմը Մանասէէն առաջ դրաւ: Եւ Խորայէլ ըսաւ Յովսէփին. Եհս<sup>21</sup> ես կըմեռնիմ, և Եստուած ձեզի հետ պիտի ըլլայ, ու ձեզ նորէն ձեր հայրերուն երկիրը պիտի դարձունէ: Եւ ես քու եղբայրներէդ մէկ<sup>22</sup> բաժին աւելի տուի քեզի, որ ան Եմօրհացիներուն ձեռքէն իմ սուրովս ու աղեղովս առի:

## ԳԼ. ԽԹ

<sup>1</sup> Յակոբ իր տղոցը օրհնութիւն տալու համար՝ զանոնք կը կանչէ: <sup>3</sup> ու յատուկ յատուկ կօչնէ: <sup>29</sup> Իր թաղութիւն վրայով անոնց պատուէր կուտայ: <sup>33</sup> Իր մահը:

Եւ Յակոբ կանչեց իր որդիները ու ըսաւ. <sup>1</sup> Եհս յոյժուեցէք, որ վերջին օրերը ձեր գլխուն գալիքը պատմեմ ձեզի:

Եհս յոյժուեցէք ու մտէք ըրէք, ո՛վ Յակոբին <sup>2</sup> որդիները,

Ու ձեր Խորայէլ հօրը լսեցէք:

Ո՛վ Ուրէն, իմ առջիննկս՝

Իմ ոյժս ու իմ զօրութեանս սկիզբը,

<sup>3</sup> Եհս, քեզմով



Յարգութեան կատարելութիւնը ու զօրութեան կատարելութիւնը գուն է :

4 Սշուրի պէս եռացիր , առաջին պիտի չըլլաս .

Ինչու որ քու հօրդ անկողինը ելար .

Ընտանիքը պղծեցիր անկողինս ելաւ : (Իմ անկողինս ելաւ :)

5 Շմուճնը ու Վեֆն եղբայրներ էն ,

Օգնքերնին անիրաւութեան գործիքներ են :

6 Իմ հոգիս անոնց խորհուրդներուն չմտնայ ,  
Իմ պատիւս անոնց ժողովքին հետ չմիանայ .

Ինչու որ իրենց բարկութեամբը մարդ սպաննեցին ,

Եւ իրենց կամօքը ցուլի ջեղ կտրեցին :

7 Ընծեալ ըլլայ անոնց բարկութիւնը , ինչու որ խիստ էր .

Ու անոնց սրտմտութիւնը , ինչու որ սաստիկ էր .

Օգնոնք Յակոբին մէջ պիտի բաժնեմ ,

Ու զանոնք Խորայէլին մէջ ցրուեմ :

8 Ո՛վ Յուդա՝ քու եղբայրներդ քեզ պիտի գովեն .

Քու ձեռքդ քու թշնամիներուդ վիզը ըլլայ .

Քու հօրդ որդիները քեզի երկրպագութիւն ընեն :

9 Յուդան առիւծի ձագ է .

Ո՛րդեակ իմ՝ կողոպուտէն ելար :

Ըռիւծի պէս ծունկ չոքեց , մատակ առիւծի պէս պառկեցաւ .

Օգնիկայ ո՛վ պիտի արթնցունէ :

10 Իշխողութիւնը Յուդայէն չպիտի պակսի ,

- Ոչ ալ անոր ոտքերուն մէջ տեղէն օրէնագիր ,  
 Մինչև որ <sup>՝</sup>Սկոյլը գայ ,  
 Ու ժողովուրդները անոր պիտի նազանդին :  
 Իր յաւանակը որթին պիտի կապէ . 11  
 Ու իր էգ էշին ձագը ամենէն աղէկ որթին .  
 Իր պատմուճանը գինիով պիտի լուայ ,  
 Ու իր հանդերձը խաղողի արիւնով :  
 Իր աչքերը գինիէն կարմիր՝ 12  
 Ու իր ակռաները կաթէն ճերմակ պիտի ըլլայ :  
 Օգարուղներ ծովին կերքը պիտի բնակի , 13  
 Ու անիկայ նաւերուն հանդիստը պիտի ըլլայ ,  
 Եւ անոր սահմանը մինչև Սիզոնը պիտի հասնի :  
 Խտրարը զոմերուն մէջ տեղը պատկող ուժեղ 14  
 էշ մըն է :  
 Եւ տեսաւ որ հանդստութիւնը աղէկ է , 15  
 Ու երկիրը՝ որ գեղեցիկ էր ,  
 Եւ իր ուսը բեռցունելու խոնարհեցուց ,  
 Ու հարկատու եղաւ :  
 Գանը իր ժողովուրդը պիտի գատէ , 16  
 Իսրայէլի ցեղերէն մեկուն պէս :  
 Գանը ճամբուն վրայ օձ մը՝ 17  
 Ու ճամբուն վրայ իժ մը պիտի ըլլայ ,  
 Որ ձիին գարշապարը խածնէ ,  
 Ընտանի որ հեծեալը ետեւ իյնայ :

Ո՛վ Տէր քու փրկութեանդ սպասեցի : 18

<sup>1</sup> Թ՝ խաղաղը , խա՛ն որուն կրկայելէ

- 19 Գաղին՝ գունդ մը վրան պիտի յարձակի .  
Բայց վերջապէս ինքը պիտի յարձակի :
- 20 Եսերին հացը պարարտ պիտի ըլլայ .  
Ու ինքը թագաւորի արժան կերակուր պիտի տայ :
- 21 Նեփթաղիմը գեղեցիկ խօսքեր տուող  
Ըզատ թողուած եղջերու մըն է :
- 22 Յովսէփը պաղատու ոստ մըն է ,  
Ըջելւրի քով պտղաբեր սոտ մը՝  
Որուն բողբոջները պատի վրայ կելան :
- 23 Ըղեղնաւորները ցաւցուցին զանիկայ ,  
Ու նետածիգ եղան անոյ , ու ատեցին զանիկայ .
- 24 Բայց անոր աղեղը զօրաւոր մնաց ինչ  
Եւ իր ձեռքերուն թևերը ուժովցան ,  
Յակորին կարող Եստուծոյն ձեռքերովը :  
Խորայէլին ապառաժը եղած հովիւը անկէց է .
- 25 Եւ ինչ քու հօրդ Եստուծմէն է՝ որ քեզի  
պիտի օգնէ ,  
Եւ Ըմենակարողէն՝ որ քեզ պիտի օրհնէ :  
Վերէն՝ երկինքին օրհնութիւններովը ,  
Ու վարը պառկող խորունկութեան օրհնութիւն-  
ներովը ,  
Օրհներուն ու արգանդին օրհնութիւններովը :
- 26 Քու հօրդ օրհնութիւնները՝ իմ նախնիքիս  
օրհնութիւններէն՝  
Սինչե յաւիտենական լեռներուն գագաթը զօ-  
րացան .

Յովսէփին գլխուն վրայ՝

Եւ անոր գլխուն վրայ պիտի ըլլան ,  
Որ իր եղբայրներէն զատուած է :

Բենիամինը փառատող գայլ պիտի ըլլայ , 27

Ըռտուանց որսը պիտի ուտէ՝  
Եւ գիշերը կողոպուտը պիտի բաժնէ :

Ըմէն ասոնք Խորայէլի տասներկու ցեղերն են . 28

և այսպէս անոնց հայրը օրհնեց զանոնք՝ ու ըսաւ անոնց . ամէն մէկուն իր օրհնութեանը պէս օրհնեց զանոնք :

Եւ պատուիրեց անոնց , ու ըսաւ . Ես իմ ժողովուրդիս պիտի խառնուիմ . 29

իմ հայրերուս հետ՝ ան այրին մէջ թաղեցէք իս , որ Քետացի Եփրոնին արտին մէջն է . Ըն այրին մէջ՝ որ Քանանու երկիրը՝ Մամբրէի առջևը եղած Մադփելայի արտին մէջն է , որն որ Ըբրահամ արտին հետ մէկ տեղ գերեզմանի կառուածք ըլլալու՝ Քետացի Եփրոնէն ծախու առաւ :

Ըբրահամը՝ ու իր Սարրա կնիկը հոն թաղեցին . Իսահակը՝ ու իր Ռեբեկա կնիկը հոն թաղեցին . ևս ալ Լիան հոն թաղեցի :

Ըն արտը ու հոն եղած այրը Քետին օրդիններէն ծախու առնուեցաւ :

Եւ Յակոբ երբ լմընցուց իր օրդիններուն պատուէր տալը , իր ուղբերը անկողինին մէջ ժողվեց ; ու հողին աւանդեց , և իր ժողովուրդին խառնուեցաւ :

Ըն արտը ու հոն եղած այրը Քետին օրդիններէն ծախու առնուեցաւ :

Եւ Յակոբ երբ լմընցուց իր օրդիններուն պատուէր տալը , իր ուղբերը անկողինին մէջ ժողվեց ; ու հողին աւանդեց , և իր ժողովուրդին խառնուեցաւ :

Եւ Յակոբ երբ լմընցուց իր օրդիններուն պատուէր տալը , իր ուղբերը անկողինին մէջ ժողվեց ; ու հողին աւանդեց , և իր ժողովուրդին խառնուեցաւ :

## ԳԼ. Ծ

1 Հակոբին մուսնելուն սուգը : 4 Յովսէփ իր հօրը թաղմանը երթալու համար՝ փարաւօնէն հրաման կառնէ : 7 Յուզարկաւորութեան հանդէսը : 15 Յովսէփ կրմխիթարէ իր եղբայրները , որոնք ներում խնդրեցին : 22 Յովսէփին տարիքը : 23 Իր տղոցը մինչև երրորդ ցեղը կըտեսնայ : 24 Իր եղբայրներուն կրմարդարեանայ թէ Վանանու երկիրը պիտի ժառանգեն : 25 Իր ոսկորներուն համար զանոնք կերդմնցունէ : 26 Արմուտի ու արկղի մէջ կըդրուի :

- 1 **Ա**յլ Յովսէփ իր հօրը երեսին վըայ ինկաւ , ու լացաւ անոր վըայ , և համբուրեց զանիկայ :
- 2 **Ա**յլ Յովսէփ իր բժիշկ ծառաներուն հրամայեց՝ որ իր հայրը զմտենն . և բժիշկները զմտեցին :
- 3 **Ի**սրայէլը : **Ա**յլ անոր քառսուն օրը լմընցաւ . ինչու որ զմտուածներուն օրերը ասանկ կըլմմընայ . և **Ա**ղիպտացիները անոր համար եօ-
- 4 թանասուն օր սուգ ըրին : **Ա**յլ երբ անոր սուգին օրերը անցան , Յովսէփ զուրցեց փարաւօնի տունին՝ ըսելով , թէ որ հիմա ձեր առջևը շնորհք գտայ , կաղաչեմ ձեզի՝ փարաւօ-
- 5 նին ահանջին զուրցեցէք ըսելով , Իմ հայրս ինծի երդում ընել տուաւ՝ ըսելով . **Ա**յսու ես կը մուսնիմ . իմ գերեզմանիս մէջը՝ որ ես ինծի համար Վանանու երկրին մէջ փորեցի , իս հոն թաղես . և հիմա շնորհք ըրէ՛ իմ հայրս թաղելու ելլամ , ու նորէն գամ :
- 6 **Ա**յլ փարաւօն ըսաւ . **Ա**յլ իր , ու թաղէ քու հայրդ՝ անոր քեզի երդում տուածին պէս :
- 7 **Ա**յլ Յովսէփ իր հայրը թաղելու ելաւ . և

փարաւօնին բոլոր ծառաները՝ անոր տանը ծե-  
 բերը՝ ու Եզիպտոսի երկրին բոլոր ծերերը անոր  
 հետ գացին . Եւ Յովսէփին բոլոր տունը՝ ու ա- 8  
 նոր եղբայրները՝ և անոր հօրը տունն ալ . միայն  
 իրենց տղաքները ու անոնց հօտերը և անոնց  
 արջառները Վեսեմի երկրին մէջ թողուցին : Եւ 9  
 անոր հետ կառքեր ու ձիաւորներ ելան , ու շատ  
 մեծ բանակ մը եղաւ : Եւ եկան Ետադին կալը՝ որ 10  
 Յորդանանու մէկալ կողմն է , հոն մեծ ու խիստ  
 սաստիկ լացով մը ողբացին . և իր հօրը համար  
 եօթը օր սուգի հանդէս ըրաւ : Եւ ան երկ- 11  
 րին մէջ բնակող Քանանացիները երբ տեսան  
 Ետադին կալին մէջի սուգին հանդէսը , ըսին .  
 Ես մեծ սուգ մը ըլլալու է Եզիպտացիներուն՝  
 անոր համար անոր անունը \* Երէւմիսրաիմ՝ դը-  
 րին , որ Յորդանանու մէկալ կողմն է : Եւ 12  
 անոր որդիները՝ անոր պատուիրածին պէս ըրին :  
 Եւ անոր որդիները Քանանու երկիրը տարին 13  
 զանիկայ , ու թաղեցին զանիկայ Մագփեւայի  
 արտին այրին մէջը , որն որ Եբրահամ ծախու  
 առաւ արտով մէկ տեղ Քետացի Լփրոնէն՝  
 Մամբրէին դիմացը : Եւ Յովսէփ իր հայրը 14  
 թաղելէն ետքը , Եզիպտոս դարձաւ , ինքը՝ ու  
 իր եղբայրները՝ և ան ամէնը որ իրեն հետ իր  
 հայրը թաղելու ելան :

Եւ Յովսէփին եղբայրները երբ տեսան՝ թէ 15  
 իրենց հայրը մեռաւ , ըսին ինչն իրեննին . Գուցէ  
 Յովսէփ ո՞ր պահելով՝ պիտի հատուցանէ մեզի  
 ան ամէն չարիքը՝ որն որ ըրինք իրեն : Եւ Յով- 16

\* Գ՝ սուգ Եզիպտոսի

- սէփին պատգամաւոր խրկեցին՝ ըսելով , Վա-  
 հայրդ մեռնելէն առաջ պատուիրեց Տէրէ՛ ու ը-  
 17 սաւ . Յովսէփին ասանկ ըսէք . Հիմա շնորհք  
 ըրէ՛ քու եղբայրներուդ յանցանքը ու անոնց  
 մեղքը ներէ՛ , ինչու որ քեզի չարութիւն ըրին .  
 և Հիմա կաղաչենք քեզի՛ քու հօրդ Աստուծոյն  
 ծառաներուն . յանցանքը ներէ՛ : Եւ Յովսէփ  
 18 լացաւ՝ երբոր անոնք խօսեցան իրեն : Եւ եղ-  
 բայրներն ալ գացին , ու անոր առջևը ինկան ,  
 19 և ըսին . Եհա՛ մենք քու ծառաներդ ենք : Եւ  
 Յովսէփ ըսաւ անոնց . Մի՛ վախնաք . միթէ  
 20 ես Աստուծոյ տե՞ղն եմ : Եւ թէպէտ դուք  
 ինձի չարութիւն մտմացիք , Բայց Աստուած ան  
 աղէկի դարձնելու մտմոսց . անանկ որ՝ աս օ-  
 րուան եղածին պէս՝ շատ ժողովուրդ ապրեցունէ :  
 21 Եւ Հիմա մի՛ վախնաք . ես ձեզ՝ ու ձեր տղաք-  
 ները պիտի կերակրեմ : Եւ միտարեց զանոնք  
 22 քաղցրութեամբ խօսելով : Եւ Յովսէփ Ազիպ-  
 տոս բնակեցաւ , ինքը՛ և իր հօրը տունը . և  
 23 Յովսէփ հարիւր տասը տարի ապրեցաւ : Եւ  
 Յովսէփ Ափրեմին որդիները՝ մինչև երբորդ սե-  
 բունդը տեսաւ , և Մանասէին որդին Մաքիբին  
 որդիներն ալ Յովսէփին ծունկերուն վրայ ծնան :  
 24 Եւ Յովսէփ իր եղբայրներուն ըսաւ . Եհա՛ ես  
 կըմեռնիմ , ու Աստուած անշուշտ ձեզի այցելու-  
 թիւն պիտի ընէ , ու ձեզ աս երկիրէն պիտի  
 հանէ գէպի ան երկիրը՝ որն որ ինքը՛ երդում ը-  
 25 բաւ Եբրահամին՝ Իսահակին ու Յակոբին : Եւ  
 Յովսէփ Իսրայէլի որդիներուն երդում ընել

տուաւ՝ բսելով , Ըստուած անշուշտ ձեզի այցել-  
 ւութիւն պիտի ընէ , ու իմ՝ ոսկորներս ասկից  
 հանէք : Եւ Յովսէփ հարիւր տասը տարեկան<sup>26</sup>  
 լլուլով մեռաւ . ու զմոսեցին զանիկայ , և  
 Եգիպտոսի մէջ՝ տասպանի մը մէջ  
 դրին :





# Գ Ի Բ Բ Ե Լ Ի Յ

## Գ Լ . Ե

1 Յովսէփին մեռնելէն ետքը՝ Իսրայէլի որդիքը կը շատնան :  
8 Կոր թագաւորը թէն կը շարշարէ՝ բայց անոնք աւելի կը  
շատնան : 15 Մանկաբարձները Եստուծակ վախնալով՝ արու  
զաւակները կապրեցունեն : 22 Փարաւօնը կը հրամայէ արու  
զաւակները գետը նետել :

- 1 **Ե**ւ Եգիպտոս գացող Իսրայէլի որդւոցը ա-  
նունները ասոնք են . ամէն մէկը իր տունովը  
2 Յակորին հետ գնաց . Ռուբէն՝ Շմաւօն՝ Դ և ի  
3 ու Յուդա , Իսաքար՝ Չարուզոն և Բենիամին ,  
4 Գան ու Եփթաղիմ , Փաղ ու Եսեր : Եւ  
5 Յակորին երանքէն ելած բոլոր հոգիները եօ-  
թանասուն հոգի էին . Յովսէփն ալ Եգիպտոս  
6 էր : Եւ Յովսէփ ու անոր բոլոր եղբայրները  
7 և բոլոր ան ցեղը մեռան : Եւ Իսրայէլի որդիքը  
աճեցան ու բազմացան և շատցան , ու խիստ զօ-  
րացան , և ան երկիրը անոնցմով լեցուեցաւ :  
8 Երգ՝ Եգիպտոսի վրայ մէկ նոր թագաւոր մը  
9 ելաւ , որ Յովսէփը չէր ճանչնար : Եւ անիկայ  
ըսաւ իր ժողովուրդին . Ե՛հա Իսրայէլի որդւոցը  
10 ժողովուրդը մեզմէ շատ ու զօրաւոր են : Եկէք  
խմաստութեամբ վարուինք անոնց հետ , որ չըլ-  
լայ թէ շատնան՝ որ երբ պատերազմ պատա-

Հելու ըլլայ, անոնք ալ մեր թշնամիներուն հետ  
 մէկ ըլլան՝ ու մեզի հետ պատերազմին՝ և աս եր-  
 կիրէն ելան : Ընոր համար՝ գործավարներ զրին <sup>11</sup>  
 անոնց վրայ, որ շարժարէն զանոնք ծանր  
 գործքերով, և Փարաւօնին շահմարանի քա-  
 ղաքներ՝ Փիդօնը ու Սամսէն շինեցին : Եւ որ- <sup>12</sup>  
 չափ կըշարժարէին զանոնք, այնչափ ալ աւելի  
 կըշատնային ասոնք ու կաճէին : Եւ անոնք <sup>13</sup>  
 Խորայէլի որդւոցմէն ձանձրացան : Եւ Ազիպ-  
 տացիք բռնութեամբ կըծառայեցունէին Խորայէլի  
 որդիները : Եւ անոնց կեանքը ծանր գործով՝ <sup>14</sup>  
 կաւով ու աղիւսներով և գաշտին ամէն գործովը  
 կըդառնացունէին . ինչ ծառայութիւն որ ընել  
 տային՝ բռնութեամբ էր :

Եւ Ազիպտոսի թագաւորը խօսեցաւ Աբրա- <sup>15</sup>  
 յեցւոց մանկաբարձներուն՝ որոնց մէկին անունը  
 Սեպփորա ու մէկալին անունը Փուա էր, Ու ը- <sup>16</sup>  
 սաւ . Աբրայեցի կնիկներուն տղաքները առած  
 ատեննիզ՝ նստարաններուն վրայ նայիք, թէ որ  
 տղայ է՝ մեռցունէք անիկայ, և թէ որ աղջիկ է՝  
 թող ողջ մնայ : Բայց մանկաբարձները վախ- <sup>17</sup>  
 ցան Աստուծոյ, ու Ազիպտոսի թագաւորին ի-  
 բենց ըսածին պէս չըրին . հապա արունները ողջ  
 կըթողէին : Եւ Ազիպտոսի թագաւորը կանչեց <sup>18</sup>  
 մանկաբարձները, ու ըսաւ անոնց . Ինչո՞ւ աս  
 բանը ըրիք, ու արունները ողջ թողուցիք : Եւ <sup>19</sup>  
 մանկաբարձները ըսին Փարաւօնին . Քանզի  
 Աբրայեցի կնիկները Ազիպտոսի կնիկներուն պէս  
 չեն . ինչու որ անոնք առոյգ են . մանկաբարձ-

- 20 ներքը անոնց չգացած՝ կը ծնանին : Ընոր համար  
 Ըստուած մանկաբարձներուն բարիք ըրաւ . և  
 21 ժողովուրդը շատցաւ , ու շատ ուժովցաւ : Եւ  
 եղաւ որ մանկաբարձները Ըստուծմէ վախնալնուն  
 22 համար , անոնց տուներ շինեց : Եւ Փարաւօն  
 իր բոլոր ժողովուրդին հրամայեց՝ ըսելով , Ըմէն  
 ծնած տղան գետը նետեցէք , և ամէն աղջիկը  
 ողջ թողուցէք :

Գ Լ . Բ

1 Սոփէս կը ծնածի , 3 և տապանով մը շամբերուն մէջ կը  
 ձգուի : 5 Փարաւօնին աղջիկը կը դռնայ զանիկայ ու իրեն որ-  
 դեգիր կընէ : 11 Սոփէս՝ Լզիպտացի մը կը սպաննէ . 13  
 Լըբայեցի մը կը շիտէ . 15 և Սագիամ փախչելով , 21 հոն  
 Սեպտորան իրեն կնիկ կառնէ : 22 Գերսամին ծնունդը : 23  
 Իսրայէլացւոց աղաղակը Ըստուծոյ կը հասնի :

- 1 Եւ Ղեիին տունէն մէկը գնաց , ու Ղեիին  
 2 մէկ աղջիկը ինչի առաւ : Եւ կնիկը յղացաւ ,  
 ու որդի մը ծնաւ . և անոր գեղեցիկ ըլլալը տես-  
 3 նալով՝ իրեք ամիս պահեց զանիկայ : Եւ երբ ալ  
 չէր կրնար պահել անիկայ , պրտուեղէն տապա-  
 նակ մը առաւ անոր համար , ու կպրածիւթով  
 ծեփեց ան , և տղան մէջը դրաւ , ու ան գետին  
 4 եզերքը եղած շամբին մէջ ձգեց : Եւ անոր  
 քոյրը հեռու կայնեցաւ որ տեսնէ ի՞նչ ի՛նչ պի-  
 5 տի պատահի անոր : Եւ Փարաւօնին աղջիկը  
 գետը իջաւ լուացուելու , և անոր աղախինները  
 գետին եզերքը կը պտրտէին . և երբ անիկայ շամ-  
 բին մէջ տեղը տապանակը տեսաւ , իր աղախինը  
 6 խրկեց , որ բերաւ անիկայ . Եւ երբոր բացաւ ,

տղան տեսաւ , և ահա տղան կուլար . և մեղքը  
 ցաւ ու ըսաւ . Եսիկայ Եբբայեցիներուն տը-  
 ղաքներէն է : Ետքը անոր քոյրը ըսաւ փա- 7  
 րաւօնին աղջիկին . Երթամ ու քեզի Եբբա-  
 յեցիներէն ծիծ տուող կնիկ մը կանչեմ , որ  
 տղան սնուցանէ քեզի համար : Եւ փարաւօնին 8  
 աղջիկը ըսաւ անոր . Վնա՛ . և աղջիկը գնաց՝ ու  
 տղուն մայրը կանչեց : Եւ փարաւօնին աղջիկը 9  
 ըսաւ անոր . Ը՛ն աս տղան որ սնուցանե՛ս ինձի  
 համար , և ես քու վարձքդ կուտամ . և կնիկը  
 առաւ տղան ու սնուց անիկայ : Երբոր տղան 10  
 մեծցաւ , փարաւօնին աղջկանը բերաւ զանիկայ ,  
 ու անոր որդին եղաւ . և անոր անունը \*Սովսէս  
 դրաւ , ու ըսաւ . Քանզի ջուրէն հանեցի զա-  
 նիկայ :

Եւ եղաւ որ ան օրերը երբ Սովսէս մեծցաւ՝ 11  
 իր եղբայրներուն ելաւ , ու անոնց ծանր գործ-  
 քերուն նայեցաւ . և տեսաւ Եգիպտացի մը՝ որ  
 իր եղբայրներէն Եբբայեցիին մէկը կրճեճէր : Եւ 12  
 երբ անդին ասդին նայելով՝ տեսաւ որ մէկը չկայ ,  
 մեռցուց Եգիպտացիին , ու աւագին մէջը թաղեց  
 զանիկայ : Եւ երբ երկրորդ օրը ելաւ , ահա 13  
 երկու Եբբայեցի մարդիկ կրկուուէին իրարու  
 հետ . և ըսաւ անոր՝ որ իրաւունք չունէր . Ին-  
 չո՞ք քու ընկերիդ կրդարնես : Եւ անիկայ ըսաւ . 14  
 Ի՞նչ քեզ մեր վրայ իշխան ու դատաւոր դրաւ .  
 ի՞նչ ալ մեռցունելու միտք ունիս , ինչպէս Եգիպ-  
 տացիին մեռցուցիր : Եւ Սովսէս վախցաւ՝ ու  
 ըսաւ . Ընշուշտ աս բանը գիտցուեցաւ : Եւ երբ 15

\* Ք՝ ջուրէն հանուած

- Փարաւօն լսեց աս բանը , Մովսէսը մեռցունե-  
 լու իրփրնտուէր . բայց Մովսէս փարաւօնին ե-  
 րեսէն փախաւ , ու Մադիամու երկիրը բնակե-  
 16 ցաւ . և հորին քովը նստեցաւ : Եւ Մադիամին  
 քուրմը եօթը աղջիկ ունէր . ու անոնք եկան՝ և  
 ջուր քաշեցին , ու իրենց հօրը հօտերը ջրելու  
 17 համար աւազանները լեցուցին : Եւ հովիւները  
 եկան՝ ու վաճնտեցին զանոնք . և Մովսէս ե-  
 լաւ՝ ու օգնեց անոնց , և անոնց հօտերուն ջուր  
 18 խմցուց : Եւ երբ անոնք իրենց Սադուէլ հօրը  
 եկան , անիկայ ըսաւ . Ե, յօր ի՞նչ պատճառով  
 19 շուտ եկաք : Եւ ըսին . Սէկ Ագիպտացի մը մեզ  
 հովիւներուն ձեռքէն ազատեց , և մեզի ալ շատ  
 20 ջուր քաշեց՝ ու հօտին խմցուց : Եւ ան ալ ըսաւ  
 իր աղջիկներուն . Եւ ո՞ւր է անիկայ . ինչո՞ւ ան  
 21 մարդը թող տուիք , կանչեցէ՛ք որ հաց քաէ : Եւ  
 Մովսէս ան մարդուն հետ բնակելու հաճեցաւ , ու  
 անիկայ իր Սեպփօրա աղջիկը Մովսէսին տուաւ :  
 22 Եւ կնիկը որդի մը ծնաւ , և անիկայ անոր անունը  
 \*Գերսամ դրաւ . ինչու որ ըսաւ . ( )տարական  
 23 եղայ օտար երկրի մէջ : Եւ եղաւ որ շատ օրե-  
 րէն ետքը Ագիպտոսի թագաւորը մեռաւ , և Իս-  
 րայէլի որդիները ծառայութեան պատճառաւ հա-  
 ռաչեցին ու ազատակեցին . և ծառայութեան հա-  
 24 մար անոնց ազատակը՝ Եստուծոյ ելաւ : Եւ Ես-  
 տուած անոնց հեծութիւնը լսեց . ու յիշեց Ես-  
 տուած Եբրահամին՝ Իսահակին ու Յակոբին հետ  
 25 ըրած իր ուխտը : Եւ Եստուած նայեցաւ Իս-  
 րայէլի որդւոցը , ու գիտցաւ անոնց վեճովը :

\* ք՝ հոն պանդխտացած

1 Մոխէս իր Յոթոր աներին հօտը կարած է : 2 Ընթուող մորենին մէջ Ըստուած կերենայ Մոխէսին , 9 ու զանիկայ Լզդիպտոս կրեւրիէ Խարայէլը փրկելու : 14 Ըստուծոյ անունը , 15 և Խարայէլացոց խրկած Իր պատգամը :

Եւ Մոխէս՝ Մագիսանու քուրմին իր Յոթոր աներին հօտը կարած էր . ու հօտը անապատին ետին քշելով՝ Ըստուծոյ Վորերը լեռը եկաւ : Եւ Տէրօջը հրեշտակը կրակի բոցով մորենին մէջէն երեցաւ անոր . և անիկայ տեսաւ որ ահա՛ մորենին կրակով վառած էր , ու մորենին չէր այրեր : Եւ Մոխէս ըսաւ . Հիմա դառնամ ու աս մեծ տեսիլքը տեսնամ , ինչո՞ւ համար մորենին չայրիւր : Եւ երբ Տէրը տեսաւ որ անիկայ տեսնալու դարձաւ , Ըստուած մորենին մէջէն կանչեց անոր ու ըսաւ . Մոխէս Մոխէս . և անիկայ ըսաւ . Ըհա՛ հո՞ եմ : Եւ Ըստուած ըսաւ . Հոս մի՛ մօտենար , քու կօշիկներդ հան՛է՛ քու ոտքերէդ . ինչու որ ան տեղը՝ ուր որ դուն կայներ ես , սուրբ տեղ է : Ես և ըսաւ անոր . Ես եմ՝ քու հօրդ Ըստուածը՝ Ըբրահամին Ըստուածը՝ Խսահակին Ըստուածը ու Յակոբին Ըստուածը . և Մոխէս իր երեսը պահեց . ինչու որ Ըստուծոյ նայելու վախցաւ : Եւ Տէրը ըսաւ . Եզդիպտոսի մէջ եղած իմ Ժողովուրդիս չարչարանքը յիրաւի տեսայ , և գործավարներուն պատճառովը եղած անոնց աղաղակը լսեցի . ինչու որ անոնց նեղութիւնները գիտեմ : Եւ անոնք

- Ազիպտացիներուն ձեռքէն ազատելու՝ ու անոնք  
 ան երկիրէն մէկ աղէկ ու լայնարձակ երկիր մը՝  
 կաթ ու մեղր բղխող երկիր մը՝ Քանանացւոց ու  
 Քետացւոց և Ըմօրհացւոց ու Փերեզացւոց և  
 Խեւացւոց ու Յերուսացւոց տեղը հանելու իջայ :  
 9 Եւ ահա հիմա Իսրայէլի որդւոցը աղաղակը ին-  
 ծի հասած է . ու Ազիպտացիներուն անոնց ը-  
 10 բած անօրէնութիւնը տեսայ : Ուստի եկներ հի-  
 մա՝ քեզ փարաւօնին խրկեմ , և իմ ժողովուրդս  
 11 Իսրայէլի որդիքը Ազիպտոսէն հանես : Եւ  
 Մովսէս ըսաւ Եստուծոյ . Ես ո՞վ եմ որ փա-  
 րաւօնին երթամ , և Իսրայէլի որդիքը Ազիպ-  
 12 տոսէն հանեմ : Եւ ըսաւ . Ընչուչա ես քեզի  
 հետ պիտի ըլլամ . և աս ըլլայ քեզի նշան՝ որ ես  
 քեզ խրկեմ եմ . Երբոր ժողովուրդը Ազիպ-  
 տոսէն հանես , աս լեռանը վրայ պիտի պաշտէք  
 13 զԵստուած : Եւ Մովսէս ըսաւ Եստուծոյ .  
 Ըհա՛ ես կերթամ Իսրայէլի որդւոցը՝ ու կըսեմ  
 անոնց . Չեր հայրերուն Եստուածը իս ձեզի  
 խրկեց . և երբ ըսեն ինծի թէ , Ի՞նչ է անոր  
 14 անունը , ի՞նչ ըսեմ անոնց : Եւ Եստուած ը-  
 սաւ Մովսէսին . ԵՍ ԵՍ՝ ՈՐ Է՛ն : Եւ ըսաւ .  
 Եյսպէս պիտի ըսես Իսրայէլի որդւոցը , Ի՞ս  
 15 ՈՐ Է՛ն խրկեց ձեզի . Եւ դարձեալ Եստուած  
 ըսաւ Մովսէսին . Եսանկ պիտի ըսես Իսրայէլի  
 որդւոցը . Չեր հայրերուն Եհովայ Եստուածը՝  
 Երբահամին Եստուածը՝ Իսահակին Եստուածը  
 ու Յսկոբին Եստուածը իս ձեզի խրկեց . իմ  
 անունս յաւիտեան աս է , և աղգէ մինչև ազգ

իմ յիշատակս աս է : Գնա՛ Խորայէլի ծերերը 16  
 մէկ տեղ ժողովէ , ու ըսէ՛ անոնց . Չեր հայրե-  
 րուն Տէր Եստուածը՝ Եբրահամին՝ Խսահակին ու  
 Յակոբին Եստուածը երեցաւ ինձի՛ ըսելով ,  
 Ելցելու թիւն ըրի ձեզի , ու Եգիպտոսի մէջ ձեր  
 քաշածը փխայ . Եւ ըսի որ ձեզ Եգիպտոսի չար- 17  
 չարանքէն՝ դէպի Քանանացւոց ու Քետացւոց  
 և Էմօրհացւոց ու Փերեզացւոց և Խեացւոց ու  
 Յերուացւոց երկիրը՝ կաթ ու մեղր բղխող եր-  
 կիրը պիտի հանեմ : Եւ անոնք քու խօսքդ մտիկ 18  
 պիտի ընեն . և դուն ու Խորայէլի ծերերը Ե-  
 գիպտոսի թագաւորին պիտի մոնսպ՝ ու ըսէք ա-  
 նոր . Եհովայ Եբրայեցիներուն Եստուածը մեզի  
 հանդիպեցաւ . և հիմա կաղաչենք՝ իրեք օրուան  
 ճամբայ երթանք դէպի անապատը , որ մեր  
 Եհովայ Եստուծոյն զոհ մատուցանենք : Եւ ես 19  
 գիտեմ որ Եգիպտոսի թագաւորը պիտի չթողու-  
 ձեզ որ երթաք , \* ոչ ալ՝ զօրաւոր ձեռքով :  
 Եւ ես ձեռքս պիտի երկընցունեմ , ու պիտի 20  
 զարնեմ Եգիպտոսը իմ ամէն հրաշքներովս՝ որ  
 անոր մէջը ընելու եմ . և անկից ետքը ձեզ պի-  
 տի թողու որ երթաք : Եւ աս ժողովուրդին 21  
 չնորհք պիտի տամ Եգիպտացիներուն առջևը .  
 և ըլլայ որ երբ ելլաք , դատարկ պիտի չելլաք :  
 շապա ամէն կնիկ իր դրօցիէն ու իր տանը մէջ 22  
 բնակող կնիկէն արծաթ ամաններ ու ոսկի աման-  
 ներ և հանդերձներ խնդրէ , ու անոնք ձեր որ-  
 դիններուն ու աղջիկներուն վրայ դնէք . և Ե-  
 գիպտոսը կողոպտէք :

\* Գո՛մ եթէ ոչ :



ԳԼ . Գ

1 Մովսէսին գաւազանը օձ կըլլայ : 6 Իր ձեռքը բորոտ կըլլայ : 10 Մովսէս ան գործին համար շուշեր Եգիպտոս երթալ : 14 Եստուած՝ Եհարօնը անոր օգնական կուտայ : 18 Մովսէս կըզատուի իր Յոթոր աներէն : 21 Փարաւօնին խորհուած Եստուծոյ պատգամը : 24 Սեպփօրան իր որդին կը թշխատէ : 27 Եհարօն՝ Մովսէսը դիմաւորեցաւ կելլէ : 31 Ժողովուրդը ասոնց կըհաւատան :

1 **Ե**ւ Մովսէս պատասխան տուաւ ու ըսաւ . Բայց անոնք ահա՛ ինձի պիտի չհաւատան՝ ո՛չ ալ իմ՝ խօսքս մտիկ պիտի ընեն . ինչու որ պիտի  
 2 ըսեն թէ՛ Տէրը քեզի չերեցաւ : Եւ Տէրը ըսաւ անոր . Ե՛ր քու ձեռքինդ ի՞նչ է . և անիկայ ըսաւ . Գաւազան : Եւ ըսաւ անոր . Գետինը ձգէ՛ ան . և անիկայ գետինը ձգեց , ու օձ եղաւ , և Մովսէս անոր տաքեէն փախաւ : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Չե՞սքդ երկընցուց ու պոչէն բռնէ՛ ան . և անիկայ իր ձեռքը երկընցուց ու բռնեց , և գաւազան եղաւ իր ձեռքին մէջը :  
 5 Որ հաւատան՝ թէ անոնց հայրերուն Տէր Եստուածը՝ Երբահամին Եստուածը՝ Իսահակին Եստուածը ու Յակոբին Եստուածը երեցաւ քեզի : Եւ Տէրը դարձեալ ըսաւ անոր . Ընդմա քու ձեռքդ ծոցդ դէ՛ր . ու անիկայ իր ձեռքը ծոցը դրաւ , և երբ դուրս հանեց , ահա՛ իր  
 7 ձեռքը ձիւնի պէս ճէ՛րմալ՝ բորոտ եղաւ : Եւ ըսաւ անոր . Չե՞սքդ նորէն ծոցդ դէ՛ր . և անիկայ նորէն իր ձեռքը ծոցը դրաւ , և երբ դուրս հանեց՝ ահա՛ նորէն իր բնա՛ն մարմինին պէս

եղաւ : Եւ ըլլայ որ՝ եթէ քեզի չհաւտան՝ ու Յ  
 առջի նշանին ձայնը մտիկ չընեն , ետքի նշանին  
 ձայնին պիտի հաւտան : Եւ ըլլայ որ աս եր- 9  
 կու նշաններուն ալ չհաւտան՝ ու քու խօսքդ  
 ալ մտիկ չընեն , գետին ջուրէն առ ու ցասաք  
 գէ-րէնը թափէ . և սին ջուրը՝ որ գետէն առիր ,  
 ցամաք գէ-րէնը վրայ արիւն պիտի ըլլայ : Եւ 10  
 Սովետս ըսաւ Տէրօջը . Մ՛՛՛՛՛ Տէր իմ , ես ճար-  
 տարախօս չեմ , ոչ երէկուքնէ ու մէկալ օրուքնէ ,  
 ոչ ալ ծառայիդ հետ խօսելէդ ետե . հապա  
 ես ծանրախօս ու ծանրալեզու եմ : Եւ Տէրը 11  
 ըսաւ անոր . Մ՛՛՛՛՛ տուաւ մարդուն՝ բերան .  
 կամ ո՛՛՛ ըրաւ համբը ու խուլը՝ և աչք ու նոցողը  
 ու կոյրը . չէ՞ որ ես Տէրս : Ուստի գնա՛ հի- 12  
 մա , ու ես քու բերնիդ հետ պիտի ըլլամ , և  
 ես քեզի պիտի սորվեցունեմ ի՛նչ որ պիտի խօ-  
 սիս : Եւ անիկայ ըսաւ . Մ՛՛՛՛՛ Տէր իմ , 13  
 կաշաչեմ՝ ա . պա-րէ-տի-ն օրուն ձեռքովը որ կու-  
 զես խրկել՝ խրկէ : Եւ Տէրօջը բարկու- 14  
 թիւնը բորբոքեցաւ Սովետսին դէմ , ու ըսաւ .  
 Վէտացի Եհարօնը քու եղբայրդ չէ՞ . ես գի-  
 տեմ որ անիկայ ճարտարախօս է . նաև ահա  
 անիկայ քեզ դիմաւորելու պիտի ելլայ , և քեզ  
 տեսածին պէս իր սրտին մէջը պիտի ուրախանայ :  
 Եւ խօսէ անոր , ու անոր բերանը խօսքեր 15  
 դի՛ր . և ես քու բերնիդ ու անոր բերնին հետ  
 պիտի ըլլամ , ու ձեզի պիտի սորվեցունեմ ի՛նչ  
 որ պիտի ընէք : Եւ քու տեղդ անիկայ թող 16  
 խօսի ժողովուրդին . և անիկայ քեզի բերնի տեղ

- ըլայ , ու դուն անոր աստուծոյ տեղ ըլլաս :
- 17 Եւ աս գաւազանը ձեռքդ ա՛ռ , որ անոր հետ նշանները ընես :
- 18 Եւ Մովսէս գնաց , ու իր Յոթոր աներին դարձաւ , ու ըսաւ անոր . Ազգաչեմ՝ Հրա՛հան . . . որ երթամ , ու Ազիպտոսի մէջ եղած իմ եղբայրներուս գառնամ , և նայիմ թէ տակաւին ո՞ղջ են անոնք . ու Յոթոր ըսաւ Մովսէսին .
- 19 Գնա՛ խաղաղութեամբ : Եւ Տէրը Մադիամին մէջ ըսաւ Մովսէսին . Գնա՛ Ազիպտոս դարձի՛ր . ինչու որ քու կեանքդ փնտրող բոլոր
- 20 մարդիկը մեռան : Եւ Մովսէս իր կնիկը ու որդիները առաւ , ու իշուն վրայ հեծցուց զանոնք , և Ազիպտոսի երկիրը դարձաւ . և Մով-
- 21 սէս Աստուծոյ գաւազանը իր ձեռքը առաւ : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Երբոր գառնաս՝ Ազիպտոս երթաս , նայէ՛ որ Փարաւօնին առջևը բոլոր հրաջքները ընես , որն որ քու ձեռքդ դրի . և ես անոր սիրտը պիտի պինտցունեմ , որ ժողո-
- 22 վուրդը պիտի չթողու : Եւ ըսե՛ս Փարաւօնին . Տէրը այսպէս կըսէ . Խորայէլը իմ որդիս է՝ իմ
- 23 առջիննկս : Եւ քեզի կըսեմ . Իմ որդիս թող աուր՝ որ իս պաշտէ . բայց թէ որ անիկայ թող տալ չուզես , ահա՛ ես քու որդիդ՝ Խանաանդ քու առջիննկդ կըսպաննեմ :
- 24 Եւ եղաւ որ ճամբան իջած տեղը՝ Տէրը անոր պատահեցաւ , և ուզեց սպաննել զանիկայ :
- 25 Ուստի Սեպֆորան սուր քար մը առաւ՝ ու իր որդիին անթլփատութիւնը թլփատեց , և անոր

ուսքերուն ձգեց, ու ըսաւ. Իբաւցունէ  
դուն ինձի արիւնոտ էրիկ մըն ես : Եւսպէս 26  
Թող տուաւ զանիկայ . անատենը Թլիատու-  
Թեանը համար Սէղիօրան ըսաւ . Երիւնոտ էրիկ  
մըն ես :

Եւ Տէրը ըսաւ Եհարօնին . Գնա՛ անապա- 27  
տը Մովսէսը դիմաւորելու . և անիկայ գնաց՝  
ու Եստուծոյ լեռանը վրայ պատահեցաւ անոր ,  
և համբուրեց զանիկայ : Եւ Մովսէս պատմեց 28  
Եհարօնին՝ Տէրոջը բոլոր խօսքերը՝ որ իրկեց  
զինքը , և բոլոր նշանները՝ որ իրեն պատուի-  
րեց :

Եւ Մովսէս Եհարօնին հետ գնաց՝ ու Ես- 29  
բայէլի որդւոցը բոլոր ձերերը ժողովեցին : Եւ 30  
Եհարօն՝ Տէրոջը Մովսէսին ըսած բոլոր խօսքե-  
րը զուրցեց անոնց . ու ժողովուրդին առջևը  
նշանները ըրաւ : Եւ ժողովուրդը հաւտաց . 31  
և Երբ լսեցին թէ՛ Տէրը այցելու թիւն ըրած է  
Խորայէլի որդւոցը , և թէ՛ անոնց առաջ նեղու-  
թիւններուն նայած է , գլուխն ծակեցին ու եր-  
կըրպագութիւն ըրին :

## Գ Լ . Ե

1 Փարաւօն՝ Մովսէսը ու Եհարօնը յանդիմանելով՝ իրենց բերած պատգամներուն համար , 5 Խորայէլացիներուն գործքերը կը ծանրացունէ , 15 ու անոնց զանպատը կը մերժէ : 20 Ուստի Խորայէլացիք կը զանգատին Մովսէսէն ու Եհարօնէն : 22 Մովսէսն ալ Եստուծոյ կաղաղակէ :

- 1 **Ե**ւ ետքը Մովսէս ու Եհարօն Փարաւօնին մըտան՝ ու ըսին . Խորայէլին Եհարօնայ Եստուածը սյսպէս կըսէ . Իմ ժողովուրդս թող տուր՝ որ անապատին մէջ ինձի տօնախմբութիւն ընեն :
- 2 Եւ Փարաւօն ըսաւ . Եհարօնն ո՞վ է , որ անոր խօսքը մտիկ ընելով Խորայէլը թող տամ . Եհարօն չե՛մ ճանչնար , և Խորայէլն ալ չեմ թողուր :
- 3 Եւ անոնք ըսին . Երբայց ցիներուն Եստուածը մեզի հանդիպեցաւ . հրաման տուր որ իրեք օրուան ճամբոյ անապատը երթանք , ու Տէրօջը մեր Եստուծոյն զո՞հ մատուցանենք . որ չըլլայ թէ ժանտախտով կամ սուրով մեզի դէմ ելլայ :
- 4 Եւ Եզիպտոսի թագաւորը ըսաւ անոնց . Ո՞վ Մովսէս ու Եհարօն՝ ինչո՞ւ ժողովուրդը իրենց աշխատութիւններէն ետ կը թողուք . գործքերնի՞դ գացէք :
- 5 Եւ Փարաւօն ըսաւ . Եհարօն հիմա երկրին ժողովուրդը շատ է , ու դուք կը հանգստացունէք զանոնք իրենց գործերէն :
- 6 Եւ Փարաւօն ան օրը ժողովուրդին գործաւարներուն ու անոնց վերակացուններուն հրամայեց՝ ըսելով , Երէկուան ու մէկալ օրուան պէս

ալ մէյ մըն ալ ժողովուրդին աղիւսարկութիւն  
 րնելու համար յարդ մի' տաք . թո՛ղ իրենք  
 երթան ու իրենց յարդ ժողվեն : Աւ աղիւս- 8  
 ներուն թիւը ինչպէս որ առաջ կըշինէին՝ անոնց  
 վրան դրէք , անկից մի' պակսեցունէք . ինչու որ  
 ծոյլ կըլլան , ու անոր համար կըպօռան՝ ըսե-  
 լով , Արթա՛նք մեր Եստուծոյն զո՛հ մատու-  
 ցանենք : Թո՛ղ գործը աս մարդոցը վրայ 9  
 ծանրընայ , որ անով աշխատին՝ ու փուճ խօս-  
 քերը մտիկ չընեն : Աւ ժողովուրդին գործա- 10  
 վարները ու վերակացուները ելան , և ժողովուր-  
 դին զուրցեցին՝ ըսելով , Փարաւօնը ասանկ  
 կըսէ . Աս ձեզի յարդ չեմ տար : Ի՛նչքա 11  
 ցէք ձեզի յարդ առէք՝ ուր տեղ որ կրնաք գրա-  
 նալ . բայց ձեր գործը պիտի չպակսի : Եսանկ՝ 12  
 ժողովուրդը բոլոր Ագիպտոսի երկրին մէջ յար-  
 դի տեղ՝ խողան ժողվելու ցրուեցան : Աւ գոր- 13  
 ծազարները կըստիպէին Վե՛նն՝ ըսելով , Չեր  
 ամէն օրուան գործը ըմնցուցէք , ինչպէս որ՝ երբ  
 յարդ ունէիք : Աւ Փարաւօնին գործավարները 14  
 ծեծեցին Խորայէլի որդւոցը վրայ իրենց դրած  
 վերակացուները , ու ըսին . Չեզի սակ արկուած  
 աղիւսները երէկ ու այսօր ինչո՞ւ չըմնցուցիք  
 առջինին պէս : Աւ Խորայէլի որդւոցը վերա- 15  
 կացուները եկան ու Փարաւօնին բողոքեցին՝ ը-  
 սելով , Ինչո՞ւ քու ծառաներուդ ասանկ կընես :  
 Քու ծառաներուդ յարդ չե՛ն տար , ու մեզի կը- 16  
 նեն թէ՛ Եղիւսներ շինեցէք . և ահա քու ծա-  
 ռաներդ ծեծ կերան , ու յանցանքը քու ժողո-

- 17 Վուրդիդն է : Եւ անիկայ ըսաւ . Օ՛րջլ էք  
 դուք ծոյլ . անոր համար դուք՝ Երթանք
- 18 Տէրոջը զո՛հ մատուցանենք կըսէք : Ուստի գացէք  
 հիմա բանեցէք , ու ձեզի յարդ չտրուի , բայց  
 աղիւսները սակ արկուածին պէս պիտի տաք :
- 19 Եւ երբոր ըսուեցաւ թէ՛ Մէն օրուան ձեզի  
 սակ արկուած աղիւսներէն պակաս պիտի չըլայ՝  
 անտէնը Իսրայէլի որդւոցը վերակացունները
- 20 ինքզինքնին փորձանքի մէջ տեսան : Եւ փարա-  
 ւօնէն դուրս ելած ատեննին՝ հանդիպեցան Սով-  
 սէսին ու Մհարօնին , որոնք իրենց դիմաւորելու
- 21 կըսպասէին . Ու ըսին անոնց . Տէրը ձեզի նայի  
 ու դատէ . ինչու որ գարշելի ըրէք մեր հօտը  
 փարաւօնին առջևը ու անոր ծառաներուն առ-  
 ջևը , մեզ սպաննելու համար անոնց ձեռքը  
 սուր տուիք :
- 22 Եւ Սովսէս Տէրոջը դարձաւ ու ըսաւ . Տէր ,  
 ինչո՞ւ աս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեցիր , և
- 23 իս ինչո՞ւ խրկեցիր . Մասն զի քանի՛ որ քու անու-  
 նովդ փարաւօնին զուրցելու եկեր եմ , անիկայ  
 աս ժողովուրդը փորձանքի մէջ ձգեց . ու դուն  
 բնաւ չխրկեցիր քու ժողովուրդդ :

1 Եստուած իր խոստմունքը կրնորոգէ՝ իր Եհովայ անունը յայտնելով : 14 Եզրարանութիւն Ուրբնին , 15 Շմաւոնին , 16 Վէիին՝ ուսկից որ Մովսէսը ու Եհարօնը եղան :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւօնին ինչ 1  
ընելիքս հիմա պիտի տեսնաս . որ հզօր ձեռ-  
քով պիտի թողու զանոնք , ու հզօր ձեռքով  
պիտի հանէ զանոնք իր երկիրէն : Եւ Եստուած 2  
խօսեցաւ Մովսէսին՝ ու ըսաւ անոր . Ես եմ  
Տէրը . Եւ Եբրահամին՝ Իսահակին ու Յակոբին 3  
Եմնակարող Եստուծոյն անունովը երեցայ .  
բայց իմ ԵՎՈՎՅՅ անունովս անոնց չյայտ-  
նուեցայ : Եւ հաստատեցի ալ իմ ուխտս անոնց 4  
հետ՝ Քանանու երկիրը անոնց տալու , անոնց  
ճամբորդութեան երկիրը՝ ուր որ պանդխտեցան :  
Եւ ընցի ալ Խորայէլի որդւոցը հառաչանքը , 5  
որ Եզիպտացիները ծառայեցուցին , ու իմ ուխտըս յիշեցի : Ընոր համար Խորայէլի որդւոցը 6  
ըսէ . Ես եմ Տէրը . և ես ձեզ Եզիպտացի-  
ներուն ծանր գործին տակէն պիտի հանեմ , ու  
ձեզ անոնց ծառայութենէն պիտի ազատեմ , և  
ձեզ բարձր բազուկով ու մեծ դատաստաններով  
պիտի փրկեմ : Եւ ձեզ ինծի ժողովուրդ պի- 7  
տի առնեմ , ու ձեզի Եստուած պիտի ըլլամ .  
և պիտի գիտնաք որ ձեզ Եզիպտոսի ծանր  
գործքերուն տակէն հանող Տէրը ձեր Եստուածը  
ես եմ : Եւ ձեզ ան երկիրը պիտի տանիմ , 8  
որն որ Եբրահամին՝ Իսահակին ու Յակոբին



- տալու երդում՝ ըրի , ու ան ձեզի ժառանգու-
- 9 թիւն ըլլալու պիտի տամ . ես եմ Տէրը : Եւ  
Մովսէս Խորոյէլի որդւոցը ասանկ զուրցնց .  
բայց անոնք հոգիի նեղութենէն ու դործին ծան-  
րութենէն մտիկ չըրին Մովսէսին :
- 10 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով ,  
11 Մտի՛ր խօսէ Եզիպտոսի թագաւորը փարաւօնին՝  
որ Խորոյէլի որդիները իր երկիրէն արձրիկէ :  
12 Եւ Մովսէս խօսեցաւ Տէրոջը առջևը՝ ըսելով ,  
Ե՛հ՛մ Խորոյէլի որդիքը ինձի մտիկ չըրին , հասա  
փարաւօնը ինձի ի՞նչպէս մտիկ պիտի ընէ . որ ես  
13 ծանրալեզու եմ : Եւ Տէրը խօսեցաւ Մով-  
սէսին ու Եհարօնին , ու հրաման տուաւ անոնց՝  
որ Խորոյէլի որդւոցը ու Եզիպտոսի թագաւորը  
փարաւօնին եղբան , Խորոյէլի որդիները Եզիպ-  
տոսէն հանելու համար :
- 14 Ենոնց հայրերուն տուներուն գլուխները ասոնք  
են . Խորոյէլին առջինն էր Ռուբենին որդիները ,  
Ենուր ու Փաղղուս՝ Եսրովմ և Քարմի . ասոնք  
15 են Ռուբենին տոհմերը : Եւ Շմաւօնին որ-  
դիները՝ Յամուէլ ու Յամին և Եհուդ ու Յա-  
բին և Սալաա և Քանանացի կնիանը որդին Սա-  
16 ւուդ . ասոնք են Շմաւօնին տոհմերը : Եւ  
Ղևիին որդւոցը անուները իրենց ճնուեղներուն  
պէս ասոնք են . Քերսօն ու Կահաթ և Սե-  
բարի : Եւ Ղևիին կենացը տարիները հարիւր  
17 երսունուեօթը տարի էին : Քերսօնին որդի-  
ները իրենց տոհմերուն պէս Ղորենի ու Սեմէի  
18 էին : Եւ Կահաթին որդիները՝ Եմրամ ու Ի-

սահառ և Քերրոն ու Ողիէլ : Եւ Կահաթին  
 կենացը տարինները հարիւր երսունուիրեք տարի  
 էին : Եւ Մերարիին որդիները՝ Մողի ու 19  
 Սուսի . Դ և իին առհմերը իրենց ծնունդներուն  
 պէս ասոնք են : Եւ Ըմրամ իր հօրը քոյրը 20  
 Յոբաբեզը իրեն կնիկ առաւ , որ ծնաւ իրեն  
 Ըհարօնը ու Սուխէսը : Եւ Ըմրամին կենացը  
 տարինները հարիւր երսունուեօթը տարի եղան :  
 Եւ Իսահառին որդիները՝ Կորխ ու Կարեզ և 21  
 Օկքրի : Եւ Ողիէլին որդիները՝ Մխսայէլ ու 22  
 Եղիսափան և Սէթրի : Եւ Ըհարօն իրեն  
 կնիկ առաւ Ըմինադարին աղջիկը՝ Կասսոյին 23  
 քոյրը Կղիսաբեթը , և ծնաւ իրեն Կադարը  
 ու Ըբիուզը՝ Եղիազարը ու Իթամարը : Եւ 24  
 Կորխին որդիները՝ Ըսիր ու Եղկանայ և Ըբիա-  
 սափ . ասոնք են Կորխեցիներուն առհմերը :  
 Եւ Ըհարօնին Կղիազար որդին՝ Փուտիէլին աղ- 25  
 ջիկներէն իրեն կնիկ առաւ , և ծնաւ իրեն Փե-  
 նէհէսը : Դ և տացիներուն իրենց առհմերուն  
 պէս՝ իրենց հայրերուն գլուխները ասոնք են :  
 Ըսոնք են ան Ըհարօնը ու Սուխէսը՝ որոնց ըսաւ 26  
 Տէրը , Հանեցէ՛ք Իսրայէլի որդիքը Եղիպտոսի  
 երկրէն իրենց զօրքերովը : Իսրայէլի որդի- 27  
 ները Եղիպտոսէն հանելու համար՝ Եղիպտոսի  
 թագաւոր Փարաօնին խօսողները ասոնք են . սս  
 Սուխէսը ու Ըհարօնը : Եւ եղաւ որ ան օրը՝ 28  
 երբ Տէրը խօսեցաւ Սուխէսին՝ Եղիպտոսի երկ-  
 րին մէջ , Ընասնէր Տէրը Սուխէսին զուրցեց  
 ըսելով , Ես եմ՝ Եհօվան , զուրցէ՛ Կղիպտոսի 29

Թաղաւորը Փարաւօնին ամէն ի՛նչ որ քեզի կը-  
 30 սեմ : Եւ Մովսէս Տէրօջը առջևը ըսաւ . Ե-  
 չա ես \* ծանրակեղու եմ , ու Փարաւօն ի՛նչպէս  
 մտիկ պիտի ընէ ինձի :

Գ Լ . Է

1 Եստուած կը քաջալերէ Մովսէսը որ համարձակ Փարաւօնին  
 առջևը ելլէ : 7 Մովսէսին տարիքը . 8 անոր դաւազանը օձ  
 կըլլայ : 11 Մոգերն ալ նոյն բանը կընեն : 13 Փարա-  
 ւօնին սիրտը կը կարծրանայ : 19 Գեաթին ջուրը արիւնի կը  
 դառնայ :

- 1 **Ե**ւ Տէրը ըսաւ Մովսէսին . ‘Նայէ , քեզ փա-  
 րաւօնին Եստուած ըրի , ու քու եղբայրդ
- 2 Եհարօնը քու մարգարէդ ըլլայ . ‘Իսուն խօ-  
 սիս ան ամէնը՝ որ քեզի կը հրամայեմ . և քու  
 եղբայրդ Եհարօնը թող զուրցէ Փարաւօնին՝  
 որ Խորայէլի որդիները իր երկիրէն թող տայ :
- 3 Եւ ես Փարաւօնին սիրտը պիտի պինտցունեմ ,  
 ու իմ նշաններս և հրաշքներս Եգիպտոսի երկ-  
 4 րին մէջ պիտի շատցունեմ : Եւ Փարաւօն  
 ձեզի մտիկ պիտի չընէ . ու ես իմ ձեռքս Եգիպ-  
 տոսի վրայ պիտի ձգեմ , և իմ զօրքերս՝ իմ ժո-  
 ղովուրդս Խորայէլի որդիները մեծ դատաստան-  
 5 ներով պիտի հանեմ Եգիպտոսէն : Եւ երբ  
 իմ ձեռքս Եգիպտոսի վրայ երկընցունեմ՝ ու  
 Խորայէլի որդիքը անոնց մէջէն հանեմ , պիտի  
 6 գիտնան Եգիպտացիները՝ թէ ես եմ Տէրը : Եւ

\* Եբ . . անթիշխատ պոկունքով

Մովսէս ու Եհարօն Տէրոջը իրենց պատուիրած  
 ծին պէս ըրին . անանկ ըրին : Եւ Մովսէս ու թ- 7  
 սուն տարեկան էր ու Եհարօն ու թսունուիրեք  
 տարեկան էր , երբոր փարաւօնին հետ խօսե-  
 ցան :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Եհարօնին՝ 8  
 ըսելով , Երբոր փարաւօն ձեզի խօսի՝ ըսելով , 9  
 Չեզի համար հրաշք ցրցուցէք , անասներ Ե-  
 հարօնին ըսեա թէ՛ Գաւազանդ ա՛ռ , ու  
 փարաւօնին առջևը նետէ , և ան վիշապ պիտի  
 ըլլայ : Եւ Մովսէս ու Եհարօնը մտան փա- 10  
 րաւօնին՝ ու Տէրոջը պատուիրածին պէս ըրին .  
 և Եհարօն իր գաւազանը նետեց փարաւօնին  
 առջևը՝ ու անոր ծառաներուն առջևը , և վիշապ  
 եղաւ : Եւ Փարաւօն ալ իր իմաստունները 11  
 ու կախարդները կանչեց , և Լգիպտոսի մողերը՝  
 անոնք ալ իրենց կախարգութիւններովը անանկ  
 ըրին : Եւ ամէն մէկը իր գաւազանը նետեց , 12  
 ու անոնք վիշապներ եղան . բայց Եհարօնին  
 գաւազանը անոնց գաւազանները կլկեց : Եւ 13  
 փարաւօնին սիրտը պինտցաւ՝ ու անոնց մտիկ  
 չըրաւ , ինչպէս որ Տէրը զուրցեց : Եւ Տէ- 14  
 րը ըսաւ Մովսէսին . Փարաւօնին սիրտը կարծ-  
 րացաւ . ժողովուրդը թող տալէն հրաժարե-  
 ցաւ : Գնա՛ ֓արաւօնին առտուանց , ահա՛ ա- 15  
 նիկոյ գէպի ջուրը գուրս կելլայ . ու գուն գե-  
 տին եզերքը անոր գիմացը կայնէ , և ան օձ  
 գարձած գաւազանը ձեռքդ ա՛ռ . Ու ըսէ ա- 16  
 նոր . Երբայց իներուն Եհովայ Ետուածը իս

- քեզի խրիեց՝ ըսելով , Իմ ժողովուրդս թող  
 տուր՝ որ անապատին մէջ իս պաշտեն . և ահա՛
- 17 մինչև հիմա իս մտիկ չըրիք : Այսպէս կըսէ  
 Տէրը . Ասկից գիտնաս որ ես եմ Տէրը . Ահա՛
- 18 ես իմ ձեռքս եղած գաւազանով գետին մէջը ե-  
 ղած ջուրերուն պիտի զարնեմ , ու արիւն պիտի
- 19 դառնան . Այլ գետին մէջ եղած ձուկերը պիտի  
 մեռնին , ու գետը պիտի հոտի . և Ազխպտացի-
- 20 ները գետէն ջուր խմելու պիտի զգուին : Այլ  
 Տէրը ըսաւ Սովետին . Ընէ՛ Ահարօնին .  
 Քաւազանդ ա՛ն , ու ձեռքդ երկրնցս՛ր Ազխպտոսի
- ջուրերուն վրայ՝ անոնց առուններուն վրայ՝ անոնց
- գետերուն վրայ ու լիճերուն՝ և անոնց բոլոր ջու-
- 21 րերուն ժողովներուն վրայ , որ արիւն ըլլան . և
- բոլոր Ազխպտոսի երկրին մէջ թէ՛ փայտէ և թէ՛
- 22 քարէ եղած ամաններուն մէջի ջուրէ՛րը արիւն
- 20 ըլլան : Այլ Սովետս ու Ահարօնը Տէրոջը
- պատուիրածին պէս ըրին , և վերցուց գաւա-
- 21 զանը՝ ու Փարաւօնին առջևը և անոր ծառանե-
- 22 րուն առջևը գետին մէջի ջուրերուն զարկաւ , և
- 23 գետին մէջը եղած բոլոր ջուրերը արիւնի դար-
- 21 ձան : Այլ գետին մէջը եղած ձուկերը մեռան ,
- ու գետը հոտեցաւ , և Ազխպտացիները չէին
- 22 կրնաը գետէն ջուր խմել . ու բոլոր Ազխպտոսի
- 23 երկրին մէջ արիւն էր : Այլ Ազխպտոսի մոզերն
- ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին .
- և Փարաւօնին սիրաը կարծրացաւ , և Տէրոջը
- 23 ըսածին պէս անոնց մտիկ չըրաւ : Այլ Փարա-
- ւօնը գարձաւ՝ ու իր տունը եկաւ , ու սս ալ իր

սրտին չդպաւ : Եւ բոլոր Եգիպտացիները գե- 24  
տին բոլորութիւքը փորեցին խմելու ջուրի համար .  
ինչու որ գետին ջուրէն չէին կրնար խմել : Եւ 25  
Տէրը գետը զարնելէն ետքը՝ եօթը օրը լմրն-  
ցաւ :

ԳԼ . Ը

1 Եգիպտոսին վրայ գորտեր, կրեւրկուին , 8 Փարաւօնը կա-  
ղաչէ Մովսէսին , 12 Մովսէսն ալ աղօթքով զանոնք կրկեր-  
ցունէ : 16 Վրջին ոջիլ կըլլայ , բայց մոգերը չեն կրնար  
նոյնը ընել : 20 Շանաճանճին հարուածքը : 25 Փարաւօնը  
քիւ մը կըկակղընայ . 32 կրկին սիրտը կըկարծրանայ :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Գնա՛ փարա- 1  
ւօնին , ու ըսէ՛ անոր թէ Տէրը ասանկ կը-  
սէ . (Թող տուր իմ ժողովուրդս որ պաշտեն իա :  
Եւ թէ որ զանոնք թող տալէն հրաժարիս , 2  
ահա՛ ես քու բոլոր սահմաններդ գորտերով պի-  
տի զարնեմ : Եւ գետը շատ գորտեր պիտի 3  
հանէ , ու անոնք պիտի ելլան ու քու տանդ և  
անկողինի սենեակիդ ու անկողինիդ և քու ծառա-  
ներուդ տուներուն և ժողովուրդիդ ու քու նոց-  
ներուդ և խմորի տաշտերուդ մէջ պիտի մըտ-  
նան : Եւ գորտերը քու վրայ և ժողովուր- 4  
դիդ վրայ ու բոլոր ծառաներուդ վրայ պիտի ել-  
լան : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Եհարօնին 5  
այսպէս ըսէ . Եռուներուն վրայ՝ գետերուն վը-  
րայ ու լիճերուն վրայ ձեռքդ երկընցնուր քու  
գաւազանովդ , որ Եգիպտոսի երկրին վրայ գոր-  
տեր հանեն : Եւ Եհարօն երկընցուց իր ձեռքը 6

- Եգիպտոսի ջուրերուն վրայ • և գորտերը ելան  
 7 ու Եգիպտոսի երկիրը ծածկեցին : Եւ մոգերն  
 ալ իրենց կախարդութիւններովը անանկ ըրին ,  
 ու Եգիպտոսի երկրին վրայ գորտեր հանեցին :  
 8 Եւ Փարաւօն կանչեց Մովսէսը ու Եհարօնը՝ և  
 ըսաւ • Եղաչեցէք Տէրոջը՝ որ ինձմէ ու իմ ժո-  
 ղովուրդէս վերցունէ գորտերը , ու թող տամ  
 9 ժողովուրդը՝ որ Տէրոջը զոհ մատուցանեն : Եւ  
 Մովսէս ըսաւ Փարաւօնին • Եւսմանակ դիւր ին-  
 ծի • ե՞րբ քեզի համար ու ծառաներուդ համար  
 և ժողովուրդիդ համար աղաչեմ , քեզմէ ու քու  
 տունէդ գորտերը կորսընցունելու , որ միայն գե-  
 10 տին մէջը մնան : Եւ անիկայ ըսաւ • Վաղը •  
 Եւ ինքը ըսաւ : Բու խօսքիդ պէս ըլլայ •  
 մինչև որ գիտնաս թէ՛ Տէրոջը մեր Եստուծոյն  
 11 պէս չկայ • Եւ քեզմէ ու քու տուներէդ և ծա-  
 ռաներէդ ու քու ժողովուրդէդ գորտերը պի-  
 տի երթան , միայն գետին մէջը պիտի մնան :  
 12 Եւ Մովսէս ու Եհարօնը ելան Փարաւօնէն •  
 ու Մովսէս աղաղակեց Տէրոջը՝ ան գորտերուն  
 13 համար՝ որ ինքը Փարաւօնին վրայ բերեր էր : Եւ  
 Տէրը՝ Մովսէսին ըսածին պէս ըրաւ • ու տու-  
 ներէն՝ սրաճերէն և արտերէն գորտերը մեռան :  
 14 Եւ դէզ դէզ ժողովեցին զանոնք , ու երկիրը  
 15 հոտեցաւ : Բայց երբ Փարաւօն հանգստու-  
 թիւն ըլլալը տեսաւ , իր սիրտը պինացուց , ու  
 անոնց մօտիկ չըրաւ Տէրոջը ըսածին պէս :  
 16 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին • Ըսէ՛ Եհարօնին •  
 Բու գաւազանդ երկընցուր , ու երկրի հողին

զարկ , որ բոլոր Ազխատոսի երկրին մէջ \* ոջիլ  
 ըլլայ : Եւ անանկ ըրին . ինչու որ Ահարօն<sup>17</sup>  
 իր գաւաղանովը իր ձեռքը երկընցուց , ու երկրի  
 հողին զարկաւ , և մարդոց վրայ ու անասուննե-  
 րուն վրայ \* ոջիլ եղաւ . բոլոր Ազխատոսի երկ-  
 րին մէջ բոլոր երկրին հողը \* ոջիլ եղաւ : Եւ<sup>18</sup>  
 մողերն ալ իրենց կախարդութիւնովը անանկ  
 ըրին , որ \* ոջիլներ հանեն , բայց չկրցան . այս-  
 պէս՝ մարդոց ու անասուննեկուն վրայ \* ոջիլ ե-  
 ղաւ : Եւ մողերը ըսին Փարաւօնին . Եւ<sup>19</sup>  
 Աստուծոյ մասն է . և Փարաւօնին սիրտը կարծ-  
 րացաւ , ու անոնց մտիկ չըրաւ Տէրոջը ըսա-  
 ծին պէս :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Աստուանց կա-<sup>20</sup>  
 նուխ ելի՛ր , ու Փարաւօնին առջևը կայնէ՛ .  
 (ահա՛ անկիցայ դէպի ջուրը կերթայ .) և ըսէ՛  
 անոր . Տէրը ասանկ կրսէ . Իմ ժողովուրդս  
 թող տուր որ իս պաշտեն . Հապա թէ որ իմ<sup>21</sup>  
 ժողովուրդս թող չտաս , ահա՛ ևս քու վրագ ու  
 քու ծառաներուդ վրան և քու ժողովուրդիդ վը-  
 րան՝ ու քու տուներուդ վրան շանաճանճ պիտի  
 խրկեմ , և Ազխատացիներուն տուները ու անոնց  
 բնակած գետինը շանաճանճով պիտի լեցուի :  
 Եւ ան օրը իմ ժողովուրդիս բնակած Գեսեմի<sup>22</sup>  
 երկիրը պիտի որոչեմ , ու հոն շանաճանճ չըլլայ .  
 որ գիտնաս թէ երկրին մէջ տեղը ես եմ՝ Տէրը :  
 Եւ իմ ժողովուրդիս ու քու ժողովուրդիդ մէջ<sup>23</sup>  
 խտրոց մը պիտի գնեմ : Այդը աս նշանը պիտի  
 ըլլայ : Եւ Տէրը ասանկ ըրաւ , ու Փարաւօնին<sup>24</sup>



- տունին՝ և անոր ծառաներուն տուններուն՝ և բոլոր  
 Եգիպտոսի երկրին վրայ շատ շանաճանճ՝ եկաւ .  
 -- շանաճանճին պատճառովը երկիրը աւրուե-
- 25 ցաւ : Եւ փարաւօն կանչեց Մոլսէսը ու Ե-  
 չարօնը՝ և ըսաւ . Գացէ՛ք ձեր Եստուծոյն զո՛հ
- 26 մատուցէ՛ք աս երկրին մէջ : Եւ Մոլսէս ը-  
 սաւ . Երժան չէ՛ ասանկ ընել . ինչու որ Ե-  
 գիպտացիներուն զարչելի <sup>նշողութեամբ</sup>՝ Տէրոջը  
 մեր Եստուծոյն զո՛հ պիտի մատուցանենք . թէ որ  
 Եգիպտացիներուն զարչելի <sup>նշողութեամբ</sup> իրենց  
 աչքին առջևը զո՛հ մատուցանելու ըլլանք : չպիտի
- 27 քարհոճեն մեզ : Մենք իրեք օրուան ճամ-  
 բայ պիտի երթանք դէպի անապատը , ու զո՛հ  
 պիտի մատուցանենք մեր Տէր Եստուծոյն՝
- 28 ինչպէս որ ինքը մեզի պատուիրէ : Եւ փա-  
 րաւօն ըսաւ . ես ձեր Եհովայ Եստուծոյն զո՛հ  
 մատուցանելու թող կուտամ ձեզ , միայն թէ  
 շատ հեռու չերթա՛ք . ինձի համար աղաչեցէ՛ք :
- 29 Եւ Մոլսէս ըսաւ . Եհօ՛ ես քու քովէդ կելամ ,  
 ու Տէրոջը կաղաչեմ՝ որ վաղը փարաւօնէն՝  
 անոր ծառաներէն ու անոր ժողովուրդէն շա-  
 նաճանճը երթայ . բայց փարաւօն մէյ մըն ալ  
 հեղ չխարէ ժողովուրդը թող չտալով Տէրոջը
- 30 զո՛հ մատուցանելու : Եւ Մոլսէս փարա-
- 31 ւօնին քովէն ելաւ՝ ու Տէրոջը աղաչեց : Եւ  
 Տէրը Մոլսէսին խօսքին պէս ըրաւ , ու փա-  
 րաւօնէն՝ անոր ծառաներէն և անոր ժողովուր-  
 դէն շանաճանճը վերցուց . մէկ հատ մըն  
 ալ չմնաց : Եւ փարաւօն ան անգամին ալ

իր սիրտը պինացուց , ու ժողովուրդը թող  
չտուաւ :

## Գ Լ . Թ

1 Անասուններուն մահը : 8 Առեցքներ ու խաղաւարտներ :  
22 Կարկուտը : 27 Փարաւօն կարկուտին համար կա-  
ղաւէ Սոլսէսին , 35 բայց սակայն սիրտը կը կարծրանայ :

Եւ Տէրը ըսաւ Սոլսէսին . Փարաւօնին 1  
մտիբ , ու զուրցէ՛ անոր . Աբրայեցիներուն  
Տէր Աստուածը այսպէս կըսէ . Թող տուր  
իմ ժողովուրդս՝ որ իս պաշտեն : Քանզի թէ որ 2  
Թող չտաս անոնք՝ ու տակաւին պինդ բռնես  
զանոնք , Ահա՛ Տէրօջը ձեռքը դաշտին մէջը ե- 3  
ղած քու հօտերուդ վրայ ըլլալով , քու ձիերուդ՝  
էշերուդ՝ ուղտերուդ՝ արջառներուդ ու ոչխար-  
ներուդ վրայ սաստիկ կոտորած մը պիտի ըլլայ :

Եւ Տէրը Խարայէլի հօտերուն ու Ագիպտոսի 4  
հօտերուն մէջ տեղը պիտի զտակ . և Խարայէլի  
որդւոցը մէկ անասունը պիտի չմննի : Եւ 5  
Տէրը ատեն սահմանեց՝ ըսելով , Այդը Տէրը աս  
բանը պիտի ընէ երկրին վրայ : Եւ հետեւեալ 6  
օրը Տէրը աս բանը ըրաւ , ու Ագիպտոսի  
բոլոր հօտը մեռաւ . բայց Խարայէլի որդւոցը  
հօտէն մէկը չմեռաւ : Եւ Փարաւօնը հարդ 7  
խրկեց , ու ահա Խարայէլի հօտերէն մէկն ալ  
մեռած չէր . և Փարաւօնին սիրտը կարծրացաւ ,  
ու ժողովուրդը թող չտուաւ :

Եւ Տէրը ըսաւ Սոլսէսին ու Ահարօնին . 8

- Մ. Ա. Է. ք ձեզի ձեռքերնիդ լեցուն շնոցի մոխիր, և  
 Մովսէս դէպի երկինքը ցանէ ան՝ Փարաօնին  
 9 առջևը : Աւ բոլոր Եգիպտոսի երկրին մէջ փոշի  
 ըլլայ, ու բոլոր Եգիպտոսի երկրին մէջ մարդոց  
 ու անասուններուն վրայ խաղաւարտներ հանող  
 10 ուռեցքներ պիտի ըլլայ : Աւ շնոցէն մոխիրը  
 առին, ու Փարաօնին առջևը կայնեցան . և  
 Մովսէս դէպի երկինքը ցանեց ան, ու մարդոց  
 և անասուններուն վրայ խաղաւարտներ հանող  
 11 ուռեցքներ եղաւ : Աւ Մոզերը ուռեցքներուն  
 պատճառովը չերցան կոյնիլ Մովսէսին առջևը .  
 ինչու որ ուռեցքները մոզերուն վրան ալ ու բո-  
 12 լոր Եգիպտացիներուն վրան ալ եղաւ : Աւ  
 Տէրը պինտցուց Փարաօնին սիրտը, ու անոնց  
 մտիկ չըբաւ՝ Տէրոջը Մովսէսին ըսածին պէս :  
 13 Աւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըստուանց կա-  
 նուխ ելի՛ր, ու Փարաօնին առջին կայնէ, ու  
 անոր ըսէ՛ . Եբրայեցիներուն Տէր Ըստուածը  
 ասանկ կըսէ . Թող տուր իմ ժողովուրդս՝ որ  
 14 իս պաշտեն : Վանզի աս անգամ իմ բոլոր հա-  
 բուածներս պիտի խրկեմ քու վրայ և քու ծա-  
 րաններուդ ու քու ժողովուրդիդ վրան . որ զխո-  
 նաս՝ թէ բոլոր երկրի մէջ ինձի պէս մէկը չկայ :  
 15 Վանզի հիմա իմ ձեռքս կերկրնցունեմ՝ որ քեզ  
 ու քու ժողովուրդդ մահով զարնեմ, ու երկ-  
 16 րէն պիտի կորսուիս : Աւ ասոր համար քեզ  
 վերցուցի որ իմ զօրութիւնս քեզմով ցուցը-  
 նեմ, ու բոլոր երկրի մէջ իմ անունս պատ-  
 17 մուի : Գուն տակաւին իմ ժողովուրդիս գէ

կենալով՝ թող պիտի չտաս անոնք : Ահա ես 18  
 վաղը աս ատեն խիտ սաստիկ կարկուտ պիտի  
 տեղացունեմ , որ անոր պէս Ազխատոսի մէջ չե-  
 ղաւ՝ անոր հաստատուած օրէն մինչև հիմա :  
 Աւ հիմա խրկէ՛ , «- թողվէ՛ քու հօտդ՝ ու դաշ- 19  
 տին մէջ ինչ որ ունիս . անպէ՛ ամէն մարդ ու  
 անասուն որ դաշտին մէջ գանուի՝ ու տուները  
 թողվուած չըլլայ , անոր վրայ կարկուտ պիտի  
 իջնայ , ու անոնք պիտի մեռնին : Փարաւօնին ծա- 20  
 ուաներէն Տէրօցը խօսքէն վախցողը՝ իր ծառանե-  
 րը ու հօտը տուները թողվեց . Աւ անիկայ որ 21  
 Տէրօցը խօսքը բանի տեղ չգրաւ՝ իր ծառաները  
 ու իր հօտը դաշտին մէջ թողուց : Աւ Տէրը 22  
 ըսաւ Մովսէսին . Քու ձեռքդ գէպի երկինքը  
 երկընցնէր , ու բոլոր Ազխատոսի երկրին մէջ  
 մարդոց ու անասուններուն վրայ՝ և Ազխատոսի  
 մէջ եղած արտերուն բոլոր խոտին վրայ կար-  
 կուտ պիտի գայ : Աւ Մովսէս իր գաւազանը 23  
 գէպի երկինքը երկընցուց . ու Տէրը որոտում  
 ու կարկուտ խրկեց , և երկրին վրայ կրակ կը  
 վազէր . ու Տէրը Ազխատոսի երկրին վրայ կար-  
 կուտ տեղացուց : Աւ կարկուտ՝ ու կարկուտին 24  
 մէջ տեղը խառնուած կրակ եկաւ . անա՛նկ սաս-  
 տիկէր՝ որ բոլոր Ազխատոսի երկրին մէջ ազգ  
 ըլլալէն հետէ անոր պէս եղած չէր : Աւ կար- 25  
 կուտը բոլոր Ազխատոսի երկրին մէջ՝ դաշ-  
 տը եղածին ամէնը՝ մարգէն մինչև անասուն  
 զարկաւ . և կարկուտը դաշտին բոլոր խոտը  
 զարկաւ , ու դաշտին բոլոր ծառերը կոտրեց :

- 26 Միայն Գեսեմի երկրին մէջ ուր որ Խորայէլի  
 27 որդիքը իւրեանցին, կարկուտ չեղաւ : Աւ  
 Փարաւօն խրկեց, և կանչեց Մովսէսը ու Ա-  
 Տարօնը և ըսաւ անոնց . Աս անգամ մեզան-  
 չեցի . Տէրը արդար է, և ես ու իմ Ժողովուրդս  
 28 յանցաւոր ենք : Ազատեցէ՛ք Տէրօջը որ Աստու-  
 ծոյ որոտումները ու կարկուտը \* զադարին . ու  
 29 ձեզ թող տամ, և ալ պիտի չկենաք : Աւ  
 Մովսէս ըսաւ անոր . Քաղաքէն դուրս ելածիս  
 պէս՝ իմ ձեռքերս Տէրօջը պիտի երկընցունեմ  
 ու որոտումները պիտի դադարին, և կարկուտն  
 ալ պիտի չըլլայ . որ գիտնաս թէ երկիրը Տէ-  
 30 րօջն է : Բայց ես գիտեմ որ դուն ու քու ծա-  
 ւաներդ տակաւին Տէր Աստուծմէն չէք վախ-  
 31 նար : Աւ քթանը ու դարին զարնուեցաւ .  
 ինչու որ դարին հասած էր ու քթանը սերմի դա-  
 32 ցած : Բայց ցորենը ու հաճարը չզարնուեցաւ .  
 33 ինչու որ ուշ կըրուանին : Աւ Մովսէս փա-  
 րաւօնին քովէն քաղաքէն դուրս ելաւ, ու իր  
 ձեռքերը Տէրօջը երկընցուց, և որոտումները ու  
 կարկուտը դադարեցաւ, և երկրին վրայ անձրե-  
 34 չկաթեցաւ : Աւ Փարաւօն երբ անձրեին ու  
 կարկուտին և որոտումին դադարիլը տեսաւ, նո-  
 րէն մեղանչեց, ու սիրտը պինացուց՝ ինքը ու իր  
 35 ծառաները : Այսպէս փարաւօնին սիրտը կարծ-  
 րացաւ, ու Խորայէլի որդիները թող չտուաւ,  
 ինչպէս որ Տէրը Մովսէսին ձեռքովը ըսեր էր :

\* ԱՔԻՆՆԵՐԷ Է

1 Եստուած կըսպանայ մարտինները խրկելու : 7 Փարաւօ՛ իբր  
 ծառաներուն աղաչանքէն յիշ մը կըհամոզուի Խորայէլա-  
 ցիները թող տողու : 12 Մարտինները կուգան, որոնց հա-  
 մար Փարաւօնը կաղաչէ Սոլսէսին : 21 Խաւարին հարուա-  
 ծը : 24 Փարաւօն նորէն կաղաչէ Սոլսէսին , 27 բայց  
 տակաւին սիրտը կըկարծբանայ :

Սէրը ըսաւ Սոլսէսին . մտիբ փարա- 1  
 ւօնին . ինչու որ ես անոր սիրտը՝ ու անոր  
 ծառաներուն սիրտը պի՛նացուցի , որ տա իմ նը-  
 շաններս ցուցընեմ անոնց մէջը . Եւ որ պատ- 2  
 մես քու որդիիդ ու քու որդիիդ որդիին ահանջ-  
 ներուն՝ ինչ որ ըրի Ազիպտացւոց ու անոնց մէջ  
 տ՛ղը իմ ըրած նշաններս , որ գիտնաք թէ ես  
 եմ Տէրը : Եւ Սոլսէս ու Եհարօն մտան 3  
 Փարաւօնին , ու ըսին անոր . Աբրայեցիներուն  
 Տէր Եստուածը այսպէս կըսէ . Սինչև ե՞րբ պի-  
 տի չկամիս ինքզինքդ խոնարհեցունել իմ առ-  
 ջևս . Թ՛ող տուր իմ ժողովուրդս որ իս պաշ-  
 տեն : Հասպա թէ որ իմ ժողովուրդս թող 4  
 տալ չես ուզեր , ահա վաղը քու սահմաններուդ  
 վրայ մարտիններ պիտի խրկեմ . Ու երկրին 5  
 երեսը պիտի գոցեն , և մէկը պիտի չկրնայ տես-  
 նալ երկիրը . ու կարկուտէն աշխուժած ձեզի  
 մնացածը՝ պիտի ուտեն , և արտին մէջ բուսած  
 ձեր բոլոր ծառերը պիտի ուտեն : Եւ քու տու- 6  
 ներդ՝ ու քու բոլոր ծառաներուդ տունները՝ և ա-  
 մէն Ազիպտացիներուն տունները պիտի լեցուին .

- ար ոչ քու հայրդ ոչ ալ քու հայրերուդ հայրերը  
 տեսան, իրենց երկրի վրայ եղած օրէն մինչև այսօր :  
 Եւ դարձաւ ու փարաւօնին քովէն դուրս ելաւ :  
 7 Եւ Փարաւօնին ծառաները ըսին անոր . Մինչև  
 ե՞րբ աս մարդը մեզի որոգայթ պիտի ըլլայ .  
 թող տուր մարդիկը՝ որ իրենց Եհովայ Ես-  
 տուածը պաշտեն . տակաւին չե՞ս գիտեր որ Ե-  
 8 զիպտոսը աւրուեցաւ : Եւ Մովսէսը ու Եհա-  
 րօնը փարաւօնին դարձուցին , և անիկայ ըսաւ  
 անոնց . Գացէք պաշտեցէք ձեր Եհովայ Ես-  
 9 տուածը . բայց որո՞նք են գացողները : Եւ  
 Մովսէս ըսաւ . Մեր մանկուսներովը ու մեր  
 ծերերովը պիտի երթանք , մեր տղաքներովը ու  
 մեր աղջիկներովը , մեր հօտերովը ու մեր արջառ-  
 ներովը պիտի երթանք . քանզի տօն պիտի բռն-  
 10 նենք Տէրօջը : Եւ ըսաւ անոնց . Ինչպէս որ  
 ես ձեզ ու ձեր տղաքները թող կուտամ , ա-  
 նմանկ ալ Տէրը ձեր հետը ըլլայ . Օգուշացէք ,  
 11 քանզի չարիք կան ձեր առջևը : Ա՛յ այսպէս .  
 հիմա դուք էրիկ մարդիկներդ գացէք ու Տէրը  
 պաշտեցէք . ինչու որ դուք ատիկայ կուգէիք :  
 Եւ փարաւօնին առջևէն վռնտեցին զանոնք :  
 12 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Երկրնցուր քու  
 ձեռքդ Եզիպտոսի երկրին վրայ մարտիններուն  
 համար , ու Եզիպտոսի երկրին վրայ ելլան , և  
 երկրին բոլոր խտար՝ կարկուտէն բոլոր մնացածը  
 13 ուտեն : Եւ Մովսէս երկրնցուց իր գաւազանը  
 Եզիպտոսի երկրին վրայ , ու Տէրը բոլոր ան  
 օրը ու բոլոր գիշերը երկրին վրայ արևելեան հով

փչել տուաւ . և երբ առտու եղաւ՝ արեւելեան  
 հովը մարախները բերաւ : Եւ մարախները բո- 14  
 լոր Ագիպտոսի երկրին վրայ ելան , ու բոլոր Ա-  
 գիպտոսի սահմանին վրայ իջան . խիտ սաստիկ  
 էին . անոնցմէ առաջ անանկ մարախ չեղաւ ,  
 անոնցմէ ետքն ալ անանկ պիտի չըլլայ : Եւ բո- 15  
 լոր երկրին երեսը ծածկեցին , ու երկիրը մթըն-  
 ցաւ , և երկրին բոլոր խտը՝ ու կարկուտն  
 մնացած ծառերուն ամէն պտուղները կերան . և  
 բոլոր Ագիպտոսի երկրին մէջը եղած ծառերուն  
 վրայ ու արտին խտերուն վրայ կանանչեղէն  
 չմնաց : Ուստի Փարաւօն շուտով կանչեց Մով- 16  
 սէսը ու Եհարօնը , և ըսաւ . ձեր Տէր Եստու-  
 ծոյն՝ ու ձեզի դէմ յանցանք ըրի : Եւ հիմ- 17  
 շնորհք ըրէք՝ միայն աս անգամ ալ ներեցէ՛ք  
 իմ յանցանքս , ու ձեր Տէր Եստուծոյն աղաչե-  
 ցէ՛ք որ իմ վրայէս միայն աս մահը վերցունէ :  
 Եւ անիկայ Փարաւօնին քովէն դուրս ելաւ , ու 18  
 Տէրոջը աղաչեց : Եւ Տէրը խիտ սաստիկ արեւ- 19  
 մտեան հով մը խրկեց , որ մարախները վերցուց ,  
 ու կարմիր ծովը քշեց զանոնք . բոլոր Ագիպտոսի  
 սահմանին մէջ մէկ մարախ մը չմնաց : Բայց 20  
 Տէրը կարծրացուց Փարաւօնին սիրտը , ու անի-  
 կայ Խորայէլի որդիները թող չտուաւ :  
 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Քու ձեռքդ 21  
 դէպի երկինքը երկընցնէր , որ Ագիպտոսի երկրին  
 վրայ խաւար ըլլայ , շօշափելի խաւար մը ըլ-  
 լայ : Եւ Մովսէս իր ձեռքը դէպի երկինքը 22  
 երկընցուց , ու բոլոր Ագիպտոսի երկրին մէջ



- 23 Թանձր խաւար եղաւ իրեք օր : Ա՛նկղմէկ չէին տեսնար , և իրեք օր մէկը իր տեղէն չելաւ . բայց բոլոր Իսրայէլի որդիքը իրենց բնակութեանը մէջ լոյս ունէին :
- 24 Եւ Փարաւօն կանչեց Վոփսէսը ու ըսաւ . Գացէ՛ք պաշտեցէ՛ք Եհովան , միայն ձեր հօտերը ու ձեր արջառները մնան . ձեր ընտանիքներն
- 25 ալ ձեզի հետ երթան : Եւ Վոփսէս ըսաւ . Գուն մեզի զոհեր ու ողջակէզներ պարտիս տալ ,
- 26 որ մեր Տէր Ըստուծոյն զոհ մատուցանենք : Եւ մեր հօտերն ալ մեր հետը պիտի երթան , անոնցմէ մէկ կ՛ձգակ մը չմնայով . ինչու որ Եհովան մեր Ըստուածը պաշտելու համար անոնցմէ պարտինք առնել . ու մենք մինչև հոն չերթանք , չենք
- 27 գիտեր թէ ի՛նչով պիտի պաշտենք Տէրը : Եւ Տէրը կարծրացուց Փարաւօնին սիրտը , որ չու-
- 28 զեց թող տալ անոնք : Եւ Փարաւօն ըսաւ անոր . Քոյէս գնա՛ , զգուշութիւն ըր՛ : Ինքզինքիդ , մէյ մըն ալ իմ երես : շտեսնաս . քանզի ան օրը՝ որ իմ երեսս տեսնաս , պիտի մեռ-
- 29 նիս : Եւ Վոփսէս ըսաւ . Եղէ՛կ ըսիր . մէյմըն ալ քու երեսդ պիտի շտեսնամ :

## Գ Լ . Ժ Ը

1 Եսասուած կըդատուիրէ Խորայեւացիներուն՝ որ իրենց դրացիներէն ծանրագին բաներ ուզեն : 4 Մովսէս կըսպանայ Փարաւօնին՝ անդրանիկներուն մասը :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Փարաւօնին վրայ <sup>1</sup>  
 ու Եգիպտոսի վրայ հարուած մըն ալ պիտի  
 բերեմ , անկից ետքը ձեզ ասկից թող պիտի  
 տայ . Եւ երբոր ձեզ թող տայ , ձեզ ասկից  
 բողբոլիին պիտի հանէ : 2 Էիմա խօսէ՛ ժողովուրդին  
 անհաշիւներուն , ու ամէն մէկ մարդ իր  
 դրացիէն՝ և ամէն մէկ կնիկ իր դրացիէն ար-  
 ծաթ ամաններ ու ոսկի ամաններ խնդրեն : 3 Եւ  
 Տէրը շնորհք տուաւ ժողովուրդին՝ Եգիպտացի-  
 ներուն առջև . Մովսէս ալ Եգիպտոսի երկ-  
 րին մէջ Փարաւօնին ծառաներուն առջև՝ ու  
 ժողովուրդին առջև խիստ մեծ մարդ մըն էր :  
 Եւ Մովսէս ըսաւ . Տէրը այսպէս կըսէ . 4 Եւ  
 կէս գիշերին Եգիպտոսի մէջ տեղը պիտի ելլամ :  
 Եւ Եգիպտոսի երկրին մէջ ամէն առջինեկը <sup>5</sup>  
 պիտի մեռնի , իր աթոռին վրայ նստող Փարա-  
 ւօնին առջինեկէն՝ մինչև աղացքին ետեք եզրը  
 աղախինին առջինեկը՝ ու բոլոր անասուններուն  
 առջինեկը : 6 Եւ բոլոր Եգիպտոսի երկրին մէջ  
 մեծ աղաղակ պիտի ըլլայ , անանկ որ անոր պէս  
 ոչ եղաւ , ոչ ալ նորէն պիտի ըլլայ : 7 Եւ  
 Խորայեւի որդիներուն դէմ մարդէն մինչև ան-  
 ասուն՝ շուն մըն ալ պիտի չշարժէ իր լեզուն .  
 որ գիտնաք՝ թէ Տէրը Եգիպտացիներուն ու

Խորայէլի մէջ տեղը տարբերութիւն կրնէ :  
 8 Եւ բոլոր աս քու ծառաներդ ինձի պիտի իջնան ,  
 ու ինձի խոնարհութիւն ընեն՝ ըսելով , Գու՛ն ու  
 բոլոր քեզի հպատակող ժողովուրդը ելէ՛ք . ու  
 անկից ետքը պիտի ելլամ : Եւ Սոփսէս մեծ  
 9 բարկութիւնով Փարաւօնէն դուրս ելաւ : Եւ  
 Տէրը ըստ Սոփսէսին . Փարաւօն ձեզ մտիկ  
 պիտի չընէ . որ իմ հրաշքներս շատցունեմ Ե-  
 10 զիպատսի երկրին մէջ : Եւ Սոփսէս ու Եհարօն  
 ամէն աս հրաշքները Փարաւօնին առջևը  
 ըրին . և Տէրը կարծրացոյց Փարաւօնին սիր-  
 տը , ու Խորայէլի որդիները իր երկրէն թող  
 չառուաւ :

Գ Լ . Ժ Բ

1 Տարւոյն սկիզբը կրկնուի : 3 Օգտակի սահմանուիլը ,  
 11 ու անոր կանոնները : 15 Ընկոմոր հաց ուտելու հրա-  
 մանը : 29 Ընդդրանիկներուն մահը : 31 Եզիպտացիք կար-  
 տորան երկիրէն դուրս հանել Խորայէլացիները , 37 որոնք  
 Սոկրովթ կը հասնին : 43 Օգտակին համար պատուէրներ :

1 Եւ Տէրը խօսեցաւ Սոփսէսին ու Եհարօնին  
 2 Եզիպատսի երկրին մէջ՝ ըսելով , Ես ամիսը  
 ձեզի ամիսներուն սկիզբը ըլլայ . ձեզի տարիին  
 3 առջի ամիսը ըլլայ : Խորայէլի բոլոր ժողովուր-  
 դին զուրցեցէ՛ք՝ ըսելով , Ես ամիսին տասնին՝ ա-  
 մէն մէկը իրեն գառնուկ մը առնէ՝ իրէնց հայ-  
 րերուն տունին նայելով , ոյ՛նն՝ տան գլուխ  
 4 մէջմէկ գառնուկ : Եւ թէ որ մէկ տունը մէկ  
 գառնուկին քիչ կուգայ , ան մարդը իր տանը

քովը եղած դրացիին հետ՝ հողիններուն համբան-  
 քին համեմատ առնէ՛ . դառնուելին վրայով ամէն  
 մէկուն իր կերածին չափ հաշիւ ընէք : Չեր 5  
 դառնուելը անարատ՝ արու՛ մէկ տարուան ըլլայ .  
 ոչխարներէն կամ այծերէն առնէք ան : Եւ 6  
 մինչև աս ամիսին չորեքտասաներորդ օրը պա-  
 հէք ան . ու Խարոյէլի ժողովուրդին բազմու-  
 թիւնը մօրթեն ան՝ իրիկուան դէմ : Եւ արիւ- 7  
 նէն առնեն ու տանը երկու կողմի դրանդեացը  
 ու վերի սեմին վրայ քսեն : Եւ միտը ան գիշերը 8  
 ուտեն . կրակի վրայ խորոված՝ բազարջով ու  
 լեղի խոտերով ուտեն ան : Անկից՝ հում 9  
 կամ ջուրի մէջ եփած շուտէք , բայց կը-  
 րակի վրայ խորոված անոր դուխը ոտքերը ու  
 փորոտիքովը մէկ տեղ ուտէք : Եւ անկից 10  
 բան մը չթողուք մինչև առտու . ու անկից ինչ  
 որ առտուան կըմնայ՝ կրակով էրէք : Եւ այս- 11  
 պէս ուտէք ան . Չեր գօտիները մէջքերնիդ՝  
 ու ձեր կօշիկները ոտքերնիդ՝ և ձեր ցուպերը  
 ձեռքերնիդ ըլլալով . շուտով ուտէք . Տէրօջը  
 զատիկն է ան : Եւ ան գիշերը Ազիպտոսի 12  
 երկրէն պիտի անցնիմ , ու Ազիպտոսի երկրի  
 մէջ ամէն առջինեկը՝ մարդէն մինչև անասուն  
 պիտի զարնեմ . և Ազիպտոսի բոլոր առտուած-  
 ներուն դատաւտան պիտի ընեմ . ես եմ Տէ-  
 րը : Եւ արիւնը ձեր եղած տուններուն վրայ 13  
 նշանի համար ըլլայ , ու երբ արիւնը տեսնամ՝  
 ձեր վրայէն պիտի անցնիմ . և հարուածը ձեր  
 վրայ պիտի չզայ յիշու կորսընցունելու , երբոր Ա-

- 14 գիպտոսի երկիրը զարնեմ : Եւ ան օրը ձեղի յիշատակի համար ըլլայ , անիկայ Տէրոջ տօն պահէք , ձեր սերունդին մէջը յաւիտենա-
- 15 կան կանոնով մը տօն պահէք ան : Եթէ օր բաղարջ ուտէք . նոյն խկ առաջին օրը ձեր տուներէն դուրս ձգէք խմորը . ինչու որ առջի օրէն մինչև եթէ օրը ո՛վ որ խմորեալ հաց ուտէ , ան հոգին Խորայէլէն թող կորսուի :
- 16 Եւ առաջին օրը սուրբ ժողով մը ըլլայ , եթէ ներորդ օրն ալ ձեզի սուրբ ժողով մը ըլլայ . ան օրերը բան չբանուի , բոլոր ձեզմէ ամէն
- 17 մէկուն ուտելիքը , ան միայն պատրաստուի : Եւ բաղարջին ո՛նչ պահէք . ինչու որ նոյն օրը ձեր զօրքերը Եգիպտոսի երկրէն հանեցի . ուստի ձեր սերունդին մէջ յաւիտենական կանոնով
- 18 մը ան օրը պահէք : Եւ առաջին ամսուն չորեքտասաներորդ օրին իրիկունէն՝ մինչև ամսուն քսանմէկերորդ օրին իրիկունը՝ բաղարջ ու-
- 19 տէք : Եթէ օր տուներնիդ խմոր չգտնուի . քանզի ո՛վ որ խմորեալ հաց ուտէ , ան հոգին Խորայէլի ժողովուրդէն թող կորսուի , թէ՛ օտարական ըլլայ և թէ՛ երկրին բնակիչէն :
- 20 Խմորեալ բան մը պիտի չուտէք . ձեր բոլոր բնակութեանցը մէջ բաղարջ ուտէք :
- 21 Եւ Սուրբ կանչեց Խորայէլի բոլոր ձերերը , ու ըսաւ անոնց . Ձեր ընտանիքին նայելով ընտրեցէք , ու առէք ձեզի մէկ գառն , ու
- 22 զատկին համար մորթեցէք : Եւ զոսպի փունջ մը առէք ու կոնքին մէջ եղած արիւնին թաթ-

խնայէ՛ք, և դրանք վրայի սեմին ու երկու քովի  
դրանդեացը վրայ կոնքին մէջ եղած արիւնէն քր-  
սեցէ՛ք, և մինչև առտու ձեզմէ մէկը իր տանը  
դռնէն դուրս չիլայ : Ինչու որ Տէրը Ազիպ-23  
տօսը զարնելու պիտի անցնի, և երբ դրանք  
վրայի սեմին ու երկու կողմի դրանդեացը վրայ ա-  
րիւնը տեսնայ, Տէրը ան դրանք վրայէն պիտի  
անցնի, և պիտի չթողու սատակիչը ձեր տունը  
մտնալու յ՝-ը զարնելու համար : Աւ աս բանը 24  
քեզի ու քու որդիներուդ կաննն ըլլալու համար  
պահէ՛ք յստիտեան : Աւ ըլլայ որ երբ ան եր-25  
կիրը գաք՝ որն որ Տէրը ձեզի պիտի տայ իր  
ըսածին պէս, աս պաշտօնը պահէ՛ք : Աւ ըլլայ 26  
որ երբ ձեր որդիները ձեզի ըսնն թէ, Աս պաշ-  
տօնով ի՞նչ ըսել կուզէք, ըսէ՛ք որ, Աս՝ 27  
Տէրօջը զատիկին զո՞ն է. որ Ազիպտոսի մէջ  
Խորայէլի որդւոցը տուներուն վրայէն անցաւ  
երբոր Ազիպտացիները զարկաւ, ու մեր տու-  
ները ազատեց : Աւ ժողովուրդը խանարհեցաւ  
ու երկրպագութիւն ըրաւ : Աւ Խորայէլի որ-28  
դիները գացին, և Տէրօջը՝ Մովսէսին ու Ահա-  
րօնին պատուիրածին պէս ըրին, անանկ ըրին :  
Աւ եղաւ որ կէս գիշերին Տէրը Ազիպտոսի 29  
մէջ բոլոր առջինները զարկաւ, թողաւ նըս-  
տող փարաւօնին առջիններէն մինչև բանտի  
մէջ եղած գերիին առջինները՝ և ամէն սնասու-  
նին առջինները : Աւ ան գիշերը ելաւ փարաւօն 30  
ու անոր բոլոր ծառաները և ամէն Ազիպտացի-  
ները, ու Ազիպտոսի մէջ մեծ աղաղակ մը ե-

- ղաւ . քանզի տուն մը չկար՝ որ անոր մէջը մե-
- 31 աեալ չըլար : Եւ գիշերով կանչեց Մովսէսը ու  
 Եհարօնը՝ և ըսաւ . Երիք , ու ելէք իմ ժո-  
 ղովուրդիս մէջէն դուք ալ և Իսրայէլի որդիքն  
 ալ , ու դացէք պաշտեցէք Եհովան՝ ինչպէս որ
- 32 ըսիք : Եւ ան ձեր հօտերը ու ձեր արջառները  
 առէք ինչպէս որ ըսիք , ու դացէք . և իս ալ
- 33 օրհնեցէք : Եւ Եդիպտացիները բռնադատեցին  
 ժողովուրդը՝ որ շուտով ան երկիրէն դուրս  
 խրկին զանոնք . քանզի ըսին . Եմէնքս ալ
- 34 կըմնանինք : Եւ ժողովուրդը իրենց զանդուածը  
 չխմորած՝ իրենց խմորի տաշտերը իրենց լաթե-  
 րովը ուսերնուն վրայ փաթթելով վերցուցին :
- 35 Եւ Իսրայէլի որդիները Մովսէսին խօսքին  
 պէս ըրին . ու Եդիպտացիներէն արծաթ ա-  
 մաններ և ոսկի ամաններ ու լաթեր խնդրե-
- 36 ցին : Եւ Տէրը ժողովուրդին շնորհք տուաւ  
 Եդիպտացիներուն առջևը , անանկ որ՝ Եդիպ-  
 տացիները անոնց տուին . ու անոնք կողոպտե-  
 ցին Եդիպտացիները :
- 37 Եւ Իսրայէլի որդիները Ուամհասէէն դէպի  
 Սոկքովթ չուեցին . ընտանիքներէն զատ՝ վեց  
 հարիւր հազարի չափ հետևակ էրիկ մարդիկ
- 38 էին : Եւ խառնիճաղանճ բազմութիւն ալ ելաւ  
 անոնց հետ . և ոչխարները ու արջառները մէկ
- 39 խիստ մեծ հօտ էին : Եւ Եդիպտոսէն իրենց  
 հանած զանդուածէն անխմոր շօթեր եփեցին ,  
 ինչու որ խմորեալ չէր . քանզի Եդիպտոսէն

վառնաուած առնննին՝ չէին կրնար մնալ . ու  
իրենց պաշար ալ չէին պատրաստեր :

Եւ Ազիպտոսի մէջ Իսրայէլի որդւոցը բնաւ 40  
կութիւնը չորս հարիւր երսուն տարի էր :

Եւ եղաւ որ չորս հարիւր երսուն տարիին վեր- 41  
ջը՝ ան նոյն օրը Տէրոջը բոլոր զօրքերը Ազիպ-

տոսի երկրէն ելան : Աս՝ Տէրոջը համար պա- 42  
հելու գիշեր մըն է . ինչու որ զանոնք Ազիպտոսի  
երկրէն հանեց . աս ան գիշերն է Տէրոջը հա-  
մար Իսրայէլի բոլոր որդիներէն պահուելու :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին ու Ահարօնին . 43  
Աս է զատիկին կանոնը . անկից օտարական մը

պիտի չուտէ . Բայց ստակով ծախու առնուած 44  
ամէն մարդուն ծառան՝ երբոր զանկից թըլ-

փատես , անատենը թող ուտէ անկից : Օ- 45  
տարական ու վարձկան ծառան անկից պիտի

չուտէ : Այլ տանը մէջ պիտի ուտուի ան . 46  
տունէն դուրս չհաննես ան միտէն . ու անոր ոս-

կորը պիտի չկտորէք : Իսրայէլի բոլոր ժողովը 47  
ընէ ան : Եւ երբ օտարական մը քեզի հետ 48

բնակելու ըլլայ , ու Տէրոջը զատիկ ընելու ըլ-

լայ , անոր ամէն տրուն թող թըլիատուի , և  
անատենը ան ընելու մօտենայ , ու ինքը երկրին

բնակիչին պէս ըլլայ . քանզի մէկ անթըլիատ  
մը անկից պիտի չուտէ : Արկրին բնակիչին ու 49  
ձեր մէջը բնակող օտարականին մէկ օրէնք

ըլլայ : Եւ Իսրայէլի բոլոր որդիները՝ Տէրոջը 50  
Մովսէսին ու Ահարօնին պատուիրածին պէս ը-

րին . անանկ ըրին : Եւ եղաւ որ՝ ան նոյն օ- 51



ըը Տէրը հանեց Եզիպտոսի երկրէն Խորայէլի որդիները իրենց զօրքերովը :

Գ Լ . Ժ Գ

1 Ենդբանիկները Եստուծոյ նուիրելու , 3 և Օչտակի յիշատակութիւնը պահելու հրամանը : 11 Ենամոց անդրանիկները (ւ) պիտի նուիրուին : 17 Խորայէլացիք Եզիպտոսէն դուրս կելլան , և Հոյսէփին ոսկորները հետեւնին կանոնն , 20 ու Սթոմ կուգան : 21 Եստուած Խորայէլացւոց կառաջնորդէ ամպի ու կրակի սիւնով :

1 **Ս**էրը խօսեցաւ Սոյսէսին՝ ըսելով , Արբէ  
 2 ինձի ամէն առջինեկը՝ որ արգանդը կըբա-  
 նայ Խորայէլի որդւոցը մէջ , մարդէն ալ՝ անա-  
 3 տունէն ալ . ան իմն է : Եւ Սոյսէս ըսաւ ժո-  
 ղավուրդին . Յիշեցէք աս օրը որ Եզիպտոսէն՝  
 ծառայութեան տունէն ելաք . ինչու որ Տէրը  
 4 ձեզ ասկից զօրաւոր ձեռքով հանեց . և խմո-  
 5 լելալ հաց պիտի չուտուի : Գուք այսօր ելաք ,  
 6 Եպիպ ամսուն մէջ : Եւ ըլլայ որ երբ Տէրը  
 տանելու ըլլայ քեզ Քանանացիներուն ու Քե-  
 տացիներուն և Եմօրհացիներուն ու Խեացիներ-  
 7 ուն և Յերուսացիներուն երկիրը՝ որն որ քե-  
 ղի տալու համար քու հայրերուդ երդումը ըրաւ ,  
 անասնկ երկիր մը՝ որ կաթ ու մեղր կըբղխէ , և  
 8 աս ամսուն ընես աս պաշտօնը : Եօթը օր ան-  
 խմօր հաց պիտի ուտես , և եօթներորդ օրը տօն  
 9 ըլլայ Տէրոջը : Եօթը օր անխմօր հաց պիտի  
 ուտուի . ու քովդ խմորեալ հաց պիտի չտես-  
 նուի . և քու բոլոր սահմաններուդ մէջ՝ քովդ

խմոր պիտի չտեսնուի : Եւ ան օրը քու որ- 8  
 դիւիդ պիտի պատմես՝ ըսելով , Ես անոր համար  
 է՝ որ Տէրը ըրաւ ինձի , երբոր ես Ազխատոսէն  
 ելայ : Եւ ան քեզի նշանի համար պիտի ըլլայ 9  
 ձեռքիդ վրայ , ու քու աչքիդ առջևը յիշատակի  
 համար , որ Տէրօջը օրէնքը քու բերնիդ մէջը  
 ըլլայ . ինչու որ Տէրը քեզ զօրաւոր ձեռքով  
 հանեց Ազխատոսէն : Ուստի դուն աս կանոնը 10  
 տարիէ տարի իր ատենին պիտի պահես : Եւ 11  
 ըլլայ որ՝ երբ Տէրը քեզ Քանանացոց երկիրը  
 տանելու ըլլայ՝ ինչպէս որ քեզի ու քու հայրե-  
 բուդ երգում ըրաւ , ու ան քեզի տալու ըլլայ ,  
 Եւ մէնը՝ որ արգանդը կրբանայ , Տէրօջը հա- 12  
 մար պիտի զատես . և քու ունեցած անասունիդ  
 ամէն առջիննէկ արունները Տէրօջը պիտի ըլլայ :  
 Եւ իշուն ամէն առջիննէկը գառնուկով մը փըր- 13  
 կես . և թէ որ չփրկես , անոր վիզը պիտի  
 կտրես . ու քու որդիներուդ մէջ մարդոց ամէն  
 առջիննէկը պիտի փրկես : Եւ ըլլայ որ երբ 14  
 քու որդիդ \* օր մը քեզի հարցունէ ըսելով ,  
 Ի՞նչ է աս , անոր պիտի ըսես թէ՛ Տէրը  
 մեզ Ազխատոսէն՝ ծառայութեան տունէն զօ-  
 րաւոր ձեռքով հանեց : Եւ եղաւ որ երբ փա- 15  
 բաւօն խտացաւ ու մեզ թող տալ չուզեց ,  
 Տէրը Ազխատոսի երկրին մէջ ամէն առջիննէկը՝  
 մարդու առջիննէկէն մինչև անասունի առջիննէկը  
 մնացուց . անոր համար ես ամէն արգանդ բացող  
 արուն Տէրօջը զոհ կրնեմ , ու իմ որդիներուս  
 ամէն առջիննէկը կրփրկեմ : Եւ ան՝ քու ձեռ- 16

- Քիզ վրայ նշանի համար՝ ու աչքիդ առջևը ճա-  
կատի կապի համար ըլլայ • Ինչու որ Տէրը մեզ  
Եգիպտոսէն զօրաւոր ձեռքով հանեց :
- 17 Եւ եղաւ որ երբ փարաւօն ժողովուրդը թող  
տուաւ , Եստուած զանոնք փղըշտացւոց երկրին  
ճամբայէն շտարաւ , թէև ան ճամբան մտա էր •  
Քանզի Եստուած ըսաւ • Չըլլայ որ ժողովուրդը  
զղջայ , երբոր պատերազմը տեսնայ , ու Եգիպտոս  
18 դառնայ : Եւ Եստուած ժողովուրդը կարմիր  
ծովին անապատին ճամբայէն պտըտցուց • ու  
Խորայէլի որդիները գունդ գունդ Եգիպտոսի  
19 երկրէն ելան : Եւ Սովսէս՝ Յովսէփին ոսկորները  
իր հետը առաւ • Ինչու որ անիկայ Խորայէլի  
որդւոցը հաստատ երդում ընել տուաւ՝ ըսելով ,  
Ենչուշտ Եստուած այցելութիւն պիտի ընէ ձեզի ,  
ու իմ ոսկորներս ասկից հետերնիդ հանեցէ՛ք :
- 20 Եւ Սոկրովթէն չուեցին՝ ու Ոթովին մէջ սնա-  
21 պատին ծայրը իջան : Եւ Տէրը անոնց առջևէն  
կերթար ցորեկը ամպի սիւնով՝ անոնց ճամբան  
ցուցնելու համար , ու գիշերը կրակի սիւնով՝  
անոնց ըյս՝ տալու համար , որ ցորեկ ու գիշեր  
22 երթան : Յորեկը ամպի սիւնը՝ ու գիշերը  
կրակի սիւնը՝ ժողովուրդին առջևէն չկորսըն-  
ցուց :

## Գ Լ . Ժ Գ

1 Եստուած Խորայեւացոց կիմացունէ իրենց երթալու ճամբան : 5 Փարաւօն անոնց ետեւէն կիյնայ : 10 Խորայեւացիք արասնջ կրնեն : 13 Մոլսէս կըմբի թարե դանօնք , 15 ու Եստուծմէ հրաման կընդունի իր ընկերքին համար : 19 Եւսլը բանակին ետին կըդառնայ : 21 Խորայեւացիք կարփի ծովէն կանցնին , 23 իսկ Ազիպտացիք կըխելչուին :

Եւ Տէրը խօսեցաւ Մոլսէսին՝ ըսելով , 1  
 2 Օչուրցէ՛ Խորայեւի որդւոցը՝ որ դաննան ու  
 Փիաիթիթին առջևը՝ Մագդողին ու ծովին մէջ  
 տեղը բանակ դնեն . Իէեղսեփոնին առջին՝ ա-  
 նոր գիմացը ծովին քովը բանակ դրէք : Եւ 3  
 Փարաւօն պիտի ըսէ Խորայեւի որդւոցը համար  
 թէ՛ Արկրին մէջ թողորած են , անսպառ անոնց  
 բոլորակքը պատեց : Եւ Փարաւօնին սիրտը 4  
 պիտի կարծրացունեմ՝ , որ անոնց ետեւէն իյնայ .  
 ու ես Փարաւօնին վրայ ևւնոր բոլոր զօրքե-  
 րուն վրայ պիտի փառաւորուիմ , ու Ազիպտա-  
 ցիները դիտնան որ ես եմ Տէրը : Եւ անոնք  
 անանկ ըրին : Եւ իմացցին Ազիպտոսի թա- 5  
 զաւորին թէ՛ ժողովւորդը փսխաւ , Փարաւօնին  
 ու անոր ծառաներուն սիրտը ժողովւորդին դէմ  
 դարձաւ՝ ու ըսին . Մենք ինչո՞ւ ըրինք աս  
 բանը , որ Խորայեւը մեզի ծառայութիւն ընե-  
 լէն թող տուինք : Եւ իր կառքը պատրաս- 6  
 տեց , ու իր ժողովուրդը իր հետը առաւ : Եւ 7  
 վեց հարիւր ընտրուած կառքեր՝ ու Ազիպտոսի  
 բոլոր կառքերը՝ և անոնց ամէն մէկին վրայ ու-

- 8 տիկաններ առաւ : Եւ Տէրը Եզիպտոսի թա-  
գաւորը փարաւօնին սիրտը կարծրացուց , ու  
անիկոյ Խորայէլի որդւոցը ետեւէն ինկաւ . և  
Խորայէլի որդիները բարձր ձեռքով ելան :
- 9 Իսցց Եզիպտացիները անոնց ետեւէն ինկան՝  
փարաւօնին ամէն ձիերը ու կառքերը և անոր  
ձիաւորները ու զօրքերը , և հասան անոնց՝ որ  
բնակած էին ծովին մօտ փիաիրօթին քովը՝ Բե-
- 10 եղսեփոնին առջին : Եւ երբ փարաւօն մօտե-  
ցաւ՝ Խորայէլի որդիները իրենց աչքերը վերցու-  
ցին , և ահ ս' Եզիպտացիները իրենց ետեւէն կու-  
գային , ու խիստ վախցան . և Խորայէլի որդի-
- 11 ները աղաղակեցին Տէրոջը : Եւ ըսին Մովսէ-  
սին . Եզիպտոսին մէջ գերեզմաններ չըլլալուն  
համար էր՝ որ մեզ անսպատին մէջ մեռնելու  
բերիր . մեզ Եզիպտոսէն հանելով՝ ի՞նչ է աս
- 12 մեզի ըսածդ : Եւ չէ՞ր ան խօսքը՝ որ զուրցի-  
ցինք քեզի Եզիպտոսին մէջ՝ ըսելով , (Թո՛ղ տուր  
մեզ որ Եզիպտացիներուն ծառայութիւն ընենք .  
քանզի աւելի աղէկ է մեզի Եզիպտացիներուն  
ծառայութիւն ընել , քան թէ անսպատին մէջը
- 13 մեռնիլ : Եւ Մովսէս ըսաւ ժողովւորդին . Արի  
վախնաք , կայնեցի՛ք , ու տեսի՛ք Տէրոջը վեր-  
կու թիւնը՝ որն որ այսօր պիտի ընէ ձեզի . ին-  
չու որ ասօրուան ձեր տեսած Եզիպտացիները՝
- 14 մէյ մըն ալ պիտի չտեսնաք յաւիտեան : Տէրը  
ձեզի համար պիտի սրտերազմի , ու դուք լուս-
- 15 կեցեք : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ինչո՞ւ  
ինձի՛ կաղաղակես . ըսէ՛ Խորայէլի որդւոցը՝ որ

չուեն : Եւ դուն գաւազանդ վերցնուր , ու ձեռքդ 16  
 ծովին վրայ երկընցնուր , ու ճեղքէ ան . և  
 Խորայէլի որդիները ծովին մէջ տեղը ցամաքէն  
 երթան : Ու ես ահա Եգիպտացիներուն սիր- 17  
 տը պիտի պինտցունեմ , ու իրենք անոնց ետեէն  
 պիտի երթան . ու ես փառաւորեալ պիտի  
 ըլլամ Փարաւօնին ու անոր բոլոր զօրքերուն՝  
 անոր կառքերուն ու անոր ձիաւորներուն վրայ :  
 Եւ երբ ես Փարաւօնին վրայ ու անոր կառքե- 18  
 րուն և անոր ձիաւորներուն վրայ փառաւորեալ  
 ըլլամ , Եգիպտացիները գիտնան որ ես եմ  
 Տէրը : Եւ Ըստուծոյ հրեշտակը՝ որ Խորայէ- 19  
 լի բանակին առջեւէն կերթար՝ ելաւ , ու անոնց  
 ետեւը գնաց . և ամպի սիւնը ելաւ անոնց առ-  
 ջեւէն՝ ու անոնց ետին կայնեցաւ : Եւ Եգիպ- 20  
 տացիներուն բանակին ու Խորայէլի բանակին  
 մէջ տեղը եկաւ՝ ու Եգիպտացիներուն ամպ ու  
 խաւար եղաւ , բայց Խորայէլացիներուն գիշերը  
 լոյս կուտար . և բոլոր գիշերը մէկզմէկու չմօ-  
 տիկցան :

Եւ Մովսէս իր ձեռքը ծովին վրայ երկըն- 21  
 ցուց , ու Տէրը սաստիկ արեւելեան հովով դար-  
 ձուց ծովը բոլոր գիշերը , և ծովը ցամաք ըրաւ ,  
 ու ջուրերը ճեղքուեցան : Եւ Խորայէլի որ- 22  
 դիները ծովին մէջ տեղը ցամաքէն քալեցին .  
 ու ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն  
 սրարիսպ եղան : Եւ Եգիպտացիները անոնց 23  
 ետեւը ինկան , ու Փարաւօնին բոլոր ձիերը՝  
 կառքերը ու ձիաւորները անոնց ետեւէն ծովին

- 24 մէջ տեղը գացին : Եւ եղաւ որ առաւօտեան պահուն Տէրը Եզիպտացիներուն բանակին նա-  
յեցաւ կրակի ու ամպի սիւնէն , և Եզիպտացի-  
25 ներուն բանակը ցրուեց : Եւ անոնց կառքե-  
րուն անիւները հանեց որ դժուարութեամբ ա-  
ռաջ կերթային . անանկ որ Եզիպտացիները ը-  
սին . Փախչի՞նք Խորայէլին երեսէն . ինչու որ  
ա՛հա՛ Եհովան անոնց համար Եզիպտացիներուն  
26 հետ կըպատերազմի : Եւ Տէրը ըսաւ Մով-  
սէսին . Քու ձեռքդ ծովին վրայ երկընցուր ,  
որ ջուրերը Եզիպտացիներուն՝ անոնց կառքե-  
րուն ու անոնց ձիաւորներուն վրայ դառնայ :  
27 Եւ Մովսէս իր ձեռքը ծովին վրայ երկընցուց ,  
և առտուան դէմ՝ ծովը իր տեղը դարձաւ , ու  
Եզիպտացիները անորձգիմացէն փախան . և Տէ-  
րը թօթօվեց Եզիպտացիները ծովին մէջ տեղը :  
28 Եւ ջուրերը դարձան՝ ու ծածկեցին Փարաւօնին  
կառքերը ու ձիաւորները և բոլոր զօրքերը . ու  
29 անոնցմէ մէկն ալ չմնաց : Բայց Խորայէլի որ-  
դիները ծովին մէջ ցամաքէն կերթային , և  
ջուրերը անոնց աջ կողմէն ու ձախ կողմէն պա-  
30 րիսպ էին : Եւ Տէրը ա՛ն օրը Եզիպտացինե-  
րուն ձեռքէն ազատեց Խորայէլը . ու Խորայէլ-  
մեռած տեսաւ Եզիպտացիները ծովին կզերբը :  
31 Եւ Խորայէլ տեսաւ ան գործը՝ որն որ Տէրը  
ըրաւ Եզիպտացիներուն վրայ . ու ժողովուրդը  
վախցաւ Տէրոջմէն՝ ու հաւատաց Տէրոջը և անոր  
ճառան Մովսէսին :

## Գ Լ • Ժ Ե

1 Մովսէսին երգը : 22 ձողովուրդը խմբու ջուր լցանար :  
 23 Մեռացի լեզի ջուրերը , 25 փայտով մը կը թաղցրա-  
 նան : 27 Լըզեմի տասներկու ջրի աղբիւրները և եօթա-  
 նասուն արմաւենիները :

1 **Մ**ահառներ Մովսէս ու Իսրայէլի որդիները աս 1  
 երգերը երգեցին Տէրոջը՝ ըսելով ,  
 Վիտի օրհնեմ Տէրը , ինչու որ փառքով փա-  
 ռաւորեալ է .

Չին ու անոր հեծնողը ծովը նեանց :  
 Տէրն է իմ զօրութիւնս ու իմ զովութիւնս , 2  
 Եւ իմ փրկութիւնս եղաւ .

Ինքն է իմ Ըստուածս , ու պիտի փառաւորեմ  
 զինքը .

Իմ հօրս Ըստուածն է , ու պիտի բարձրա-  
 ցունեմ զինքը :

Տէրը հզօր պատերազմող է , 3  
 Ընոր անունը Ե Հ Ո Վ Ա Յ է :

Փարաւօնին կառքերը ու անոր զօրքերը ծովը նե- 4  
 սեց .

Եւ անոր ընտրեալ իշխանները կարմիր ծո-  
 վին մէջ ընկղմեցան :

Ընդունդները ծածկեցին զանոնք . 5  
 Բարի պէս խորունկը իջան :

Քու աջ ձեռքդ՝ ո՛վ Տէր , փառաւորեալ է 6  
 զօրութեամբ .

Քու աջ ձեռքդ՝ ո՛վ Տէր , խորասկեց թըշ-  
 նամին :



- 7 Եւ քու փառքիդ շատութիւնովը քեզի դէմ կե-  
ցողները կործանեցիր .  
Քու բարկութիւնդ խրկեցիր , « Ե զանոնք  
յարդի պէս կերաւ :
- 8 Եւ քու շունչիդ փչելովը ջուրերը ժողովուեցան .  
Հեղեղները դեզի պէս կայնեցան .  
Չօտլին մէջ տեղը անդունդները պաղեցան :
- 9 Թշնամին ըսաւ . Ալիտի հալածեմ՝ ալիտի հաս-  
նիմ՝  
Եւարը ալիտի բաժնեմ ,  
Իմ անձս անոնցմէ ալիտի կշտանայ .  
Իմ սուրս ալիտի քաշեմ ,  
Իմ ձեռքս անոնց ալիտի տիրէ :
- 10 Քու հովդ փչեցիր , ծովը զանոնք ծածկեց .  
Օջորաւոր ջուրերուն մէջ կապարի պէս ըն-  
կըղմեցան :
- 11 Ո՛վ Տէր , աստուածներուն մէջը քեզի պէս ո՞վ  
կայ .  
Արբութեան մէջ փառաւորեալ՝ օրհու-  
թեան մէջ սքանչելի՝  
Հրաշքներ ընող ո՞վ կայ քեզի նման :
- 12 Քու աջ ձեռքդ երկընցուցիր ,  
Երկիրը զանոնք կլլեց :
- 13 Քու ողորմութիւնովդ առաջնորդեցիր աս ժո-  
ղովուրդին՝ որ դուն ազատեցիր .  
Քու զօրութիւնովդ տարիր զանոնք քու սուրբ  
բնակութիւնդ :
- 14 Ժողովուրդները ալիտի լսեն , « ալիտի վախնան .  
Փղըշտացւոց երկրի բնակիչներուն ցաւ բռնեց :

Ընատենը Եդովմի իշխանները պիտի տագնաւ 15  
պին .

Մովարին զօրաւորները պիտի դողան .

Վանանու բոլոր բնակիչները պիտի հալին :

Ընոնց վրայ վախ ու դող պիտի իյնայ . 16

Վու բազուկիդ մեծութենէն քար պիտի կըտ-  
րին ,

Մինչև որ անցնի քու ժողովուրդդ սվ Տէր ,

Մինչև որ անցնի աս ժողովուրդը՝ որ դուն  
ստացար :

Պիտի բերես զանոնք , ու քու ժառանգութեանդ 17  
լնուր պիտի անկես զանոնք ,

Ո՛վ Տէր ան տեղը՝ որն որ քեզի համար բնա-  
կելու շինեցիր :

Ո՛վ Տէր , ան սրբութեան մէջը՝ որն որ քու  
ձեռքերդ շինեցին :

Տէրը պիտի թագաւորէ յաւիտեանս յաւիտե 18  
նից :

Վանգի Փարաւօնին ձիերը անոր կառքերովը 19  
ու ձիաւորներովը ծովը մտան , և Տէրը ծովին  
ջուրերը անոնց վրայ դարձուց . բայց Խորայէլի  
որդիները ծովին մէջ տեղը ցամաքէն գացին :

Եւ Ըհարօնին քոյրը Մարիամ մարգարէն 20  
թմբուկը իր ձեռքը առաւ . ու բոլոր կնիկները  
թմբուկներով ու պարերով անոր ետեւէն ելան :  
Եւ Մարիամ պատասխան տուաւ անոնց .

Երգեցէք Տէրոջը՝ ինչու որ փառքով փառաւ 21  
ւորեալ է .

Չին ու անոր հեծնողը ծովը նետեց :

- 22 Այլ Մովսէս կարմիր ծովէն անցուց Իսրայէլը , ու  
 Սուրի անապատը ելան . և իրեք օրուան ճամբայ  
 23 դացին անապատին մէջ ու ջուր չգտան : Այլ երբ  
 Մեռայ եկան , չէին կրնար խմել Մեռային ջուրե-  
 րէն , ինչու որ լեղի էին . անոր համար անոր անունը  
 24 \* Մեռայ դրին : Այլ ժողովուրդը տուտնաց Մով-  
 25 սէսին զէմ՝ ըսելով , Ի՞նչ խմենք : Այլ անիկայ  
 Տէրոջը աղաղակեց , ու Տէրը անոր ծառ մը  
 ցըցուց , որն որ ջուրերուն մէջ դրածին պէս՝  
 ջուրերը անուշցան : Հոն անոնց կանոն ու  
 26 օրէնք դրաւ , և հոն փորձեց զանոնք , Այլ ը-  
 սաւ . թէ որ Տէրոջը քու Աստուծոյդ խօսքին  
 աղէկ մտիկ ընես , և ի՛նչ որ անոր առջին շե-  
 տակ է՝ ընես , և անոր պատուիրանքներուն ա-  
 կանջ դնես , ու անոր բոլոր կանոնները պահես ,  
 աս աստերուն մէկը քու վրայ պիտի չբերեմ ,  
 որն որ Ազխատոսի վրայ բերի . ինչու որ ես եմ  
 Տէրը՝ որ քեզ կը բռնէի :
- 27 Այլ եկան Աղիմ . ու հոն տաաներկու ջուրի  
 աղբիւր ու եօթանասուն արմաւենի կային . և  
 հոն ջուրերուն քովը բանակ դրին :

\* Թ՛ դատն

## ԳԼ . Ժ . Թ

1 Խորայեղացիք Մին անապատը կըհասնին , 2 ու կերակուրի համար տրտունջ կընեն : 4 Աստուած երկինքէն հաց տալ կը խոստանայ : 11 Խորամարդիները , 14 և մանանան կըխրկուին : 16 Մանանայ ժողովելու կանոնը : 25 Շարաթ օրերը մանանայ չէր իջնար : 32 Ընկից մէկ օմէր պահել կըպատուիրէ Աստուած :

Եւ չուեցին Եղիմէն , ու Խորայելի որդւոցը 1  
բոլոր ժողովուրդը եկան Մին անապատը՝ որ  
Եղիմին ու Մինային մէջ տեղն է , Եգիպտոսէն  
ելլայնուն ետքը՝ երկրորդ ամսուն տասնըհինգին :  
Եւ Խորայելի որդւոցը բոլոր ժողովուրդը 2  
անապատին մէջ Մովսէսին ու Ահարօնին  
դէմ տրտունջ ըրին : Եւ Խորայելի որդի- 3  
ները ըսին անոնց . Երանի թէ Տէրօջը ձեռքովը  
մեռած ըլլայինք Եգիպտոսի երկրին մէջ , եր-  
բոր միսի կաթսաներուն քովը նստած էինք ու  
կուշտ հաց կուտէինք . քանզի մեզ աս անա-  
պատը հանեցիք , որ բոլոր աս ժողովուրդը անօ-  
թու թենէն մեռցունէք : Եւ Տէրը ըսաւ Մով- 4  
սէսին . Ահա ևս ձեզի երկինքէն հաց պիտի տե-  
ղացունեմ , և ժողովուրդը պիտի հլլայ՝ ու օրէ օր  
ժողովէ ամէն մէկ օրուան պէտք եղածը . որ փոր-  
ձեմ զանոնք՝ թէ իմ օրէնքիս մէջը պիտի քա-  
լնն թէ չէ : Եւ ըլլայ որ վեցերորդ օրը բե- 5  
րածնին պատրաստեն , և անիկայ ամէն օրուան  
ժողովածներնուն կրկինը ըլլայ : Եւ Մովսէս 6  
ու Ահարօն ըսին Խորայելի բոլոր որդւոցը . Աս  
երիկուն պիտի գիտնաք որ ձեզ Եգիպտոսի երկ-

- 7 րէն հանողը Եհովան է : Եւ առաւօտուն պիտի տեսնաք Տէրօջը փառքը , ինչու որ իրեն դէմ ձեր ըրած տրտունջը Տէրը լսեց . և մենք <sup>ն</sup> վ
- 8 ենք՝ որ մեզի դէմ կըտաւորուաք : Եւ Մովսէս ըսաւ . Երբ որ Տէրը ձեզի իրիկունը ուտելու միս , ու առաւօտուն կուշտ ուտելու հաց տայ , ղերի գերիտար որ Տէրը լսած է իրեն դէմ ըրած տրտունջնիդ . Եւ մենք <sup>ն</sup> վ ենք . ձեր տրտունջը մեզի դէմ չէ , հասկա Տէրօջը դէմ : Եւ Մովսէս ըսաւ Եհարօնին . Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովին ըսէ . Տէրօջը առջևը մօտիկցէք .
- 10 ինչու որ ձեր տրտունջը լսեց : Եւ եղաւ որ երբ Եհարօն Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովին կըխօսէր՝ անոնք դէպի անապատը դարձան , և
- 11 ահա Տէրօջը փառքը ամպին մէջ երեցաւ : Եւ
- 12 Տէրը զուրցեց Մովսէսին՝ ըսելով , Իսրայէլի որդւոցը տրտունջը լսեցի . խօսէ՛ անոնց՝ ըսելով , Իրիկուան դէմ միս պիտի ուտէք , ու առտուանց հացով պիտի կշտանաք . և գիտնաք որ
- 13 ես եմ՝ Եհովայ ձեր Եստուածը : Եւ եղաւ որ իրիկունը լորամարգիներ ելան , ու բանակը ծածկեցին . և առտուանց բանակին բոլորտիքը
- 14 ցօղ ինկաւ : Եւ երբ ցօղին իյնալը անցաւ , ահա անապատին երեսին վրայ մանր կլոր բան մը
- 15 կար՝ եղեամի պէս ճերմակ գետնին վրայ : Եւ երբ Իսրայէլի որդիները տեսան , մէկզմէկու ըսին . \* Ի՞նչ է աս՝ . քանզի ինչ բլալը չէին գիտեր . ու Մովսէս ըսաւ անոնց . Ես է ան
- 16 հացը՝ որ Տէրը ձեզի ուտելու տուաւ : Տէրօջը

ցատուիրած բանը աս է . Ժողովեցէք անկից  
 ամէն մէկը իր կերածին չափ . ամէն մէկերնիդ իր  
 վրաննն մէջը եղողներուն համար ձեր հողիներուն  
 համբանքին նայելով՝ մարդ գլուխ մէյ մէկ օմէր  
 առնէք : Եւ Խարայէլի որդիները ասանկ ըրին . 17  
 և որը շատ ու որը քիչ ժողովեց : Եւ երբ օ- 18  
 մերով կը չափէին՝ շատ ունեցողինը չաւելցաւ , ու  
 քիչ ունեցողինը չափսեցաւ . ամէն մէկը իր կե-  
 րածին չափ ժողովեց : Եւ Վոստէս ըսաւ անոնց . 19  
 Մէկը անկից մինչև առտու չափսէ : Բայց 20  
 մտիկ չըրին Վոստէսին , հապա ոմանք թողուցին  
 անկից մինչև առտու , և որդնտեցաւ ու հօտե-  
 ցաւ . և Վոստէս բարկացաւ անոնց : Եւ ամէն 21  
 մէկը իր կերածին չափ կը ժողովէր անկից . ու  
 արևը տարցածին պէս կը հարէր : Եւ եղաւ որ 22  
 վեցերորդ օրը կրկնապատիկ ուտելիք՝ այնչէն  
 ամէն մէկուն համար երկու օմէր ժողովեցին . և  
 ժողովին բոլոր իշխանները եկան ու պատմեցին  
 Վոստէսին : Եւ անիկայ ըսաւ անոնց . Ըս է 23  
 Տէրօջը ըսածը . Վսողը հանգստութեան սուրբ  
 շաբաթն է Տէրօջը . ի՛նչ որ պիտի եփէք՝ եփե-  
 ցէք , և ի՛նչ որ պիտի եռացունէք՝ եռացուցէք ,  
 ու բոլոր էփելը բըր ձեզի համար առտուան թո-  
 ղուցէք : Եւ ան առտուան թողուցին Վոստէ- 24  
 սին հրամայածին պէս . և ո՛չ հոտեցաւ , ոչ ալ  
 անոր մէջը որդ եղաւ : Եւ Վոստէս ըսաւ . 25  
 Ըսօր կերէ՛ք ան . ինչու որ այսօր շաբաթ է  
 Տէրօջը . դաշտին մէջ ան պիտի չգտնաք այսօր :  
 Վեց օր ժողովեցէ՛ք . բայց եօթներորդ օրը՝ որ 26

- 27 շարաթ է , պիտի չգտնուի : Եւ եղաւ որ  
 եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք ժողվելու .
- 28 ելան , ու չգտան : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին .  
 Մինչև ե՞րբ չէք ուզեր պահել իմ պատուի .
- 29 բանքներս ու օրէնքներս : Վայեցէք որ Տէրը  
 տուաւ ձեզի շարաթը , անոր համար վեցերորդ  
 օրը ինքը ձեզի երկու օրուան հաց կուտայ .  
 ամէն մէկերնիդ իր տեղը թող նստի . մէկը իր
- 30 տեղէն չելայ եօթներորդ օրը : Եւ ժողովուր-  
 31 զը հանդատացաւ եօթներորդ օրը : Եւ Խ-  
 րայէլին որդիքը անոր անունը Ման դրին . ու  
 ան գինձի սերմի պէս ձերմակ՝ ու անոր համը
- 32 մեղրով շնորհ կաթայի պէս էր : Եւ Մովսէս  
 ըսաւ . Ըս բանն է որ Տէրը կըհրամայէ . Են-  
 կից օմէր մը լեցուցէք՝ որ ձեր ցեղերուն մէջ պու-  
 հուի . որ անոնք տեսնան ան հացը՝ որն որ ձե-  
 ղի կերցուցի անապատին մէջ՝ երբոր ձեզ Ե-
- 33 զիպտոսէն հանեցի : Եւ Մովսէս ըսաւ Եհա-  
 րօնին . Սափոր մը ա՛ռ , ու անոր մէջը օմէր  
 մը լեցուն Մանանայ դի՛ր . և ան՝ ձեր ցեղերուն
- 34 մէջ պահուելու համար Տէրօջը առջևը դի՛ր : Ինչ-  
 պէս որ Տէրը Մովսէսին պատուիրեց , անձնի ալ  
 Եհարօն վկայութեան առջևը՝ պահուելու դրաւ .
- 35 ան : Եւ Խորայէլի որդիները քառսուն տարի  
 կերան մանանան , մինչև որ շէն երկիր եկան .  
 կերան մանանան՝ մինչև որ Քանանու երկրին
- 36 սահմանը եկան : Եւ օմէրը արդուին տասնե-  
 րորդ բաժինն է :

## Գ Լ . Ժ Է

- 1 Ժողովուրդը ջուրի համար կըտարունջայ Բափիդիմին մէջ :  
 5 Ըստուած Քորեբի մէջ ժայռէ մը ջուր հանել կուտայ :  
 8 Մովսէս իր ձեռքը վեր բռնելով Ըմաղէկը կըլաղթուի :  
 15 Մովսէս սեղան մը կըբնէ ու զանիկայ կանուանէ Եհովա-  
 նիսի :

**Ն**ախապէի որդւոցը բոլոր ժողովը Տէրոջը 1  
 խօսքին պէս իրենց գնացքին նայելով Սին  
 անապատէն չուեցին , և Բափիդիմին մէջ բա-  
 նակ դրին , ու ժողովուրդին համար խմելու ջուր  
 չկար : Եւ ժողովուրդը Մովսէսին հետ վիճե- 2  
 ցաւ ու ըսաւ . Մեզի ջուր տուր , որ խմենք .  
 և Մովսէս ըսաւ անոնց . Ինչո՞ւ ինձի հետ կը  
 վիճիք . ինչո՞ւ Տէրը կըփորձէք : Եւ ժողո- 3  
 վուրդը հոն ջուրի համար ծարւեցաւ . ու ժո-  
 ղովուրդը Մովսէսին գէմ տրտունջ ըրաւ ու ը-  
 սաւ . Ըսոր համար մեզ Եգիպտոսէն հանեցիր ,  
 որ մեզ ու մեր որդիները և մեր հօտերը մեռ-  
 ցունես ծարւութենէն : Եւ Մովսէս աղաղակեց 4  
 Տէրոջը՝ ըսելով , Ի՞նչ ընեմ աս ժողովուր-  
 դին . գրեթէ պատրաստ են իս քարկոծելու :  
 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ժողովուրդին առ- 5  
 ջեէն գնա՛ , ու Իսրայէլի ձերերէն քու հետդ  
 առ , և քու գաւազանդ՝ որով գետը զարկիր ,  
 ձեռքդ առ , ու գնա՛ : Ըհա՛ Քորեբին մէջ 6  
 ժայռին վրայ՝ հոն քու առջևդ կըկայնիմ , և  
 ժայռին զարկ , ու անկից ջուր պիտի ելլայ , և  
 ժողովուրդը պիտի խմէ : Եւ Մովսէս անանկ ը-



- 7 Բաւ Խորայէլի ձերերուն առջեւ : Եւ ան տեղին անունը \* Սասա ու † Սերիպա դրաւ . ինչու որ Խորայէլի սրդէքը հոն վիճեցին և Տէրը փորձեցին՝ բսելով , Տէրը մեր մէջն է՝ թէ շէ :
- 8 Ընտաննը Ըմաղէկը եկաւ՝ ու Ռափիդիմին մէջ
- 9 Խորայէլին հետ պատերազմեցաւ : Եւ Վովսէս ըսաւ Յեսուին . Սեզի մարդիկ զատէ՛ ու Ըմաղեկին հետ պատերազմելու ելի՛ր . վաղը ևս բլուրին գլուխը պիտի կայնիմ՝ Ըստուծոյ զաւազանը
- 10 իմ ձեռքս : Եւ Յեսու Վովսէսին ըսածին պէս ըրաւ , ու Ըմաղեկին հետ պատերազմեցաւ , և Վովսէսը՝ Ըհարօնը ու Ովրը՝ բլուրին գլուխը ելան :
- 11 Եւ կըլլար որ՝ երբ Վովսէս իր ձեռքերը կըվերցունէր , Խորայէլը կըյաղթէր . ու երբ իր ձեռքերը կիջեցունէր , Ըմաղէկը կըյաղթէր :
- 12 Եւ Վովսէսին ձեռքերը ծանրանալուն՝ քար մը առին ու անոր տակը գրին , և ինքը անոր վրան նստաւ . ու Ըհարօնը և Ովրը՝ մէկը մէկ կողմէն և մէկալը մէկալ կողմէն՝ անոր ձեռքերը վեր բռնեցին , ու մինչև արեգակին մարը մանալը անոր
- 13 ձեռքերը հոստատուն մնացին : Եւ Յեսուսուրի բերնէ անցուց Ըմաղէկը ու անոր ժողովուրդը :
- 14 Եւ Տէրը ըսաւ Վովսէսին . Եսիկայ յիշատակի համար գիրքի մէջ գրէ՛ , ու Յեսուին իմացուր որ Ըմաղեկին յիշատակը երկինքին
- 15 տակէն բոլորովին պիտի ջնջեմ : Եւ Վովսէս

\* Ի՛նչ փորձուցիւն

† Ի՛նչ վիճարանութիւն

սեղան մը շինեց, ու անոր անունը \*ՆՏովա-  
նիսի դրաւ, Ու ըսաւ. Քանցի Տէրը երգում 16  
ըսաւ. «Եւ ազգէ ազգ պիտի պատերազմի Եմաղե-  
կին դէմ» :

## Գ Լ . Ժ Լ

1 Յոթոր կը բերէ Մովսէսին իր կնիկը ու աշարձերը : 7 Մով-  
սէս անիկայ իրրն հիւր կը նշուանի, 13 ու անոր խրատները  
կը բունէ : 27 Յոթոր կը մեկնի :

Եւ Մովսէսին աները՝ Մադիամու քուրմը Յո- 1  
թոր լսեց Եստուծոյ բոլոր ըրածը Մովսէսին  
ու իր Խորայէլ ժողովուրդին, և Տէրոջը Ե- 2  
գիպտոսէն Խորայէլը հանելը : Եւ Մովսէսին ա- 2  
նելը Յոթոր առաւ Մովսէսին կնիկը Սեպփօրան,  
անիկայ ետ խրկելէն ետքը . Եւ անոր երկու 3  
որդիները՝ որ մէկին անունը Գերսամ էր . ինչու  
որ ինքը ըսեր էր . Օտար երկրի մէջ պան- 3  
դուխտ եմ . Եւ մէկալին անունը † Եղիազար էր . 4  
ինչու որ ըսէր էր . Իմ հօրս Եստուածը իմ  
օգնականս էր, ու իս փարաւօնին սուրէն ազա- 4  
տեց : Եւ Մովսէսին աները Յոթոր՝ անոր որ- 5  
դիներովը ու անոր կնիկովը եկաւ Մովսէսին դե- 5  
պի անապատը՝ ուր որ անիկայ բանակ գրեր էր  
Եստուծոյ լեռանը քովը : Եւ իմացուց Մովսէսին 6  
ընկալ . Եւ քու աներդ Յոթոր քեզի կուգամ  
և քու կնիկդ ու անոր երկու որդիները իր հե-

\* Թ՝ Տէրը իմ դրօշակս է

† Թ՝ իմ Եստուածս օգնականս

- 7 տը : Եւ Մովսէս իր աները դիմաւորելու ելաւ , և անոր խոնարհութիւն ըրաւ ու համբուրեց զանիկայ , և իրարու ողջութիւնը հարցուցին՝ ու խորանը մտան : Եւ Մովսէս պատմեց իր աներին ան ամէնը՝ ինչ որ Տէրը ըրաւ Փարաօնին ու Եգիպտացիներուն՝ Խորայէլին համար , և ճամբուն մէջ բոլոր իրենց քաշած աշխատութիւնը , ու Տէրոջը զանոնք ազատելը :
- 9 Եւ Յոթոր ուրախացաւ բոլոր բարութիւններուն համար որ Տէրը ըրաւ Խորայէլին , և փրկեց զանոնք Եգիպտացիներուն ձեռքէն : Եւ Յոթոր ըսաւ . Օրհնակ ըլլայ Տէրը՝ որ ազատեց ձեզ Եգիպտացիներուն ձեռքէն՝ ու Փարաօնին ձեռքէն , ինչու որ ազատեց ժողովուրդը Եգիպտացիներուն ձեռքին տակէն : Իմա զիտեմ որ Տէրը բոլոր աստուածներէն մեծ է . քանզի ինչ բանի մէջ որ կը հպարտանային , անոնցմէ վեր էրեցաւ : Եւ Մովսէսին աները Յոթոր ողջակէզներ ու զոհեր բերաւ Եստուծոյ , և Եհարօն ու Խորայէլի բոլոր ձերերը Մովսէսին աներոջը հետ Եստուծոյ առջևը հաց ուտելու եկան :
- 13 Եւ եղաւ որ վաղուան օրը Մովսէս ժողովուրդը դատելու նստաւ , ու ժողովուրդը առաւօտէն մինչև իրիկուն Մովսէսին քովը կայնեցաւ : Եւ Մովսէսին աները երբոր տեսան ինչ որ կընէր Մովսէսը ժողովուրդին , ըսաւ . Ինչ է աս բանը՝ որ դուն կընես ժողովուրդին . ինչո՞ւ դուն մինակ կընասիս , ու բոլոր ժողովուրդը առաւօտէն մինչև իրիկուն քու քովը

կրկայնի : Եւ Մովսէս ըսաւ իր աներին . 15  
 Քանզի ժողովուրդը կուգայ ինձի՝ Ետուծմէ դու-  
 րսան հարցունելու : Երբոր անոնք բան մը 16  
 ունենան՝ ինձի կուգան , և ես անոնց մէջ տեղը  
 դատաստան կընեմ , ու Ետուծոյ կանոնները  
 ու օրէնքները անոնց կըդիտցունեմ : Եւ Մով- 17  
 սէսին աները ըսաւ անոր . Քու ըրածդ աղէկ  
 բան չէ : Իրաւցունէ դուն պիտի մաշիս , դուն 18  
 ալ «- քու հետդ եղած աս ժողովուրդն ալ .  
 ինչու որ աս բանը քեզի շատ ծանր է , դուն  
 մինակ չես կրնար ընել ատ : Էիմա իմ խօսքս 19  
 մտիկ ըրէ , ես քեզի խրատ տամ ու Ետուծ  
 քեզի հետ պիտի ըլլայ . Ժողովուրդին հա-  
 մար Ետուծոյ առջևը դուն գնա՛ , որ բաները  
 դուն մատուցանես Ետուծոյ . Եւ անոնց սոր- 20  
 վեցուր կանոնները ու օրէնքները , և դիտցուր  
 անոնց՝ իրենց քալելու ճամբան ու իրենց ընկու-  
 գործը : Ուստի դուն բոլոր ժողովուրդէն կա- 21  
 բող մարդիկ՝ Ետուծմէ վախցող՝ իրաւարար «-  
 ազահու թիւնը ատող մարդիկ ընտրէ , ու ասան-  
 հազարապետներ՝ հարիւրապետներ՝ յիսնապետ-  
 ներ ու տասնապետներ դիր անոնց վրայ . Ու 22  
 ամէն ատեն թող անոնք դատեն ժողովուրդը .  
 և ամէն մեծ բանը քեզի իմացունեն , ու ամէն  
 պզտիկ բանը անոնք դատեն . ասանկ քեզի օգ-  
 նելով՝ քու վրայէդ Էւ-ը կըթեթեցունեն :  
 Ի՞նչ որ աս բանը ընես , ու Ետուծ ալ քեզի 23  
 «-անկ պատուիրէ , անատենը կարող կըլլաս գի-  
 մանալու , և բոլոր աս ժողովուրդն ալ խաղաղու-

- 24 Թեամբ իրենց տեղը կերթան : Այսպէս Մովսէս իր աներին խօսքը մտիկ ըրաւ , ու անոր
- 25 ամէն ըսածը ըրաւ : Աւ Մովսէս բոլոր Իսրայէլէն կարող մտրդիկ ընտրեց , ու զանոնք ժողովուրդին վրայ գլուխներ՝ 5 : Հազարապետներ՝ հարիւրապետներ՝ յիսնապետներ ու տասնապետներ կարգեց : Աւ ամէն ատեն անոնք կը գատէին ժողովուրդը . դժուարին բանը Մովսէսին կիմացունէին , ու բոլոր պզտիկ բանը իրենք կը գատէին : Աւ Մովսէս իր աները ճամբայ հանեց , որ իր երկիրը գնաց :

## ԳԼ . ԺԹ

† Ժողովուրդը Սինայ անապատը կուգայ : 3 Աստուծոյ պատգամը Մովսէսի ձեռքը լեռնէն ժողովուրդին կը երկուի : 8 Մովսէս ժողովուրդին պատասխանը Աստուծոյ կը տանի : 10 Ժողովուրդը երբորդ օրուան համար կը պատրաստուի : 12 Լեռան մօտենալը կարգիլուի : 16 Աստուծոյ ահագին երևոյթը լեռանը վրայ :

- 1 Բոլորդ ամսուէն մէջ՝ Իսրայէլի որդիները Ազիպատսի երկրէն ելլալէն ետքը , նոյն օրը
- 2 Սինայի անապատը եկան : Քանզի Ուափիդիմէն չուեցին , ու Սինայի անապատը եկան՝ ու անապատին մէջ բանակ դրին . և Իսրայէլը հոն
- 3 լեռանը գիմացը բանակ դրաւ : Աւ Մովսէս Աստուծոյ ելաւ . ու Տէրը լեռէն կանչեց զանիկայ՝ ըսելով , Յսկոբին տանը ստանի ըսես , և
- 4 Իսրայէլի որդւոցը իմացունես . Ինչ տեսաք Ազիպատացիներուն ինչ որ ըրի . Թէ ի՞նչուէ՞ն ձեզ

արծիւի թևերուն վրայ վերցուցի ու քովս բերի :  
 Եւ հիմա թէ որ իրաւցունէ իմ խօսքս մտիկ 5  
 ընէք՝ ու իմ ուխտս պահէք , դուք ինծի սեփ-  
 հական ժողովուրդ պիտի ըլլաք ամէն ազգե-  
 րէն . ինչու որ բոլոր երկիրը իմն է : Եւ 6  
 դուք ինծի քահանաներու թագաւորութիւն ու  
 սուրբ ազգ մը պիտի ըլլաք . Խորայելի որդւոցը  
 զուրցելու խօսքերդ ասոնք են :

Եւ Սովսէս եկաւ ու ժողովուրդին ձերերը 7  
 կանչեց , և Տէրոջը իրեն բոլոր պատուիրած խօս-  
 քերը անոնց առջևը դրաւ : Եւ բոլոր ժողու 8  
 վուրդը մէկ տեղ պատասխանեցին ու ըսին . Տէ-  
 րոջը բոլոր ըսածները պիտի ընենք : Եւ Սով-  
 սէս ժողովուրդին խօսքերը Տէրոջը դարձուց :

Եւ Տէրը ըսաւ Սովսէսին . Ե՛հա՛ ես քեզի 9  
 կուգամ թանձր ամպի մը մէջ , որ ժողովուրդը  
 իմանայ երբոր ես քեզի խօսելու ըլլամ , ու նաև  
 յստիտեան քեզի հաւտայ : Եւ Սովսէս ժողո-  
 վուրդին խօսքերը Տէրոջը զուրցեց : Եւ Տէրը 10  
 ըսաւ Սովսէսին . Գ՛նա՛ ժողովուրդին , և զա-  
 նոնք սրբէ՛ պսօր ու վաղը , և թո՛ղ իրենց լա-  
 թերը լուան , և երբորդ օրուան համար պատ- 11  
 րաստ ըլլան . քանզի երբորդ օրը Տէրը բոլոր  
 ժողովուրդին աչքին առջևը Սինա լեռանը վրայ  
 պիտի իջնայ : Եւ դուն ժողովուրդին բոլոր- 12  
 տիքը սահման դնես՝ ըսելով , Ինքզինքնիդ լեռը  
 ելլալէն՝ կամ անոր ծայրին դալչելէն զուշացու-  
 ցէ՛ք . ո՛վ որ լեռանը դալչի , անշուշտ պիտի  
 սպաննուի : Ե՛նոր ձեռք չպիտի դալչի . քանզի 13

- անպատճառ պիտի քարկոծուի, կամ նե-  
տով զարնուի, թէ անասուն ըլլայ՝ թէ մարդ  
չպիտի ապրի. երբոր փողին ձայնը երկան հըն-  
14 չուի, անոնք լեռը պիտի ելան : Եւ Մովսէս  
լեռնէն դէպի ժողովուրդը իջաւ, ու սրբեց ժո-  
ղովուրդը . և անոնք իրենց լաթերը լուացին :
- 15 Եւ անիկայ ըսաւ ժողովուրդին . Երբորդ օ-  
րուան համար պատրաստ եղիք, կնիկներնուդ  
մի՛ մերձենայք :
- 16 Եւ եղաւ որ երբորդ օրը առտուանց որոտում-  
ներ ու կայծակներ և թանձր ամպ մը կային  
լեռանը վրայ՝ ու խիտ սաստիկ էր փողին ձայնը,  
և բանակին մէջը եղած բոլոր ժողովուրդը վախ-  
17 ցաւ : Եւ Մովսէս՝ բանակէն Ըստուծոյ առջևը  
հաննց ժողովուրդը . ու անոնք լեռանը տակը  
18 կայնեցան : Եւ Սինա լեռը բոլորովին կըմխար .  
ինչու որ Տէրը անոր վրայ կրակով իջաւ . ու  
անոր մուխը չնոցի մուխի պէս կեըար, և բոլոր  
19 լեռը սաստիկ կըրողար : Եւ քանի որ փողին  
ձայնը կըսաստկանար, Մովսէս խօսեցաւ, ու  
Ըստուած ձայնով մը անոր պատասխան տուաւ :  
20 Եւ Տէրը Սինա լեռանը վրայ՝ լեռանը գլուխը  
իջաւ . ու Տէրը կանչեց Մովսէսը լեռանը  
21 գլուխը, և Մովսէս ելաւ : Եւ Տէրը ըսաւ  
Մովսէսին . Իջի՛ր ժողովուրդին պատուիրէ՛ որ  
չըլլայ թէ Տէրը տեսնալու համար սահմանէն  
22 անցնին, ու անոնցմէ շատերը կորսուին : Եւ  
Տէրոջը մօտիկցող քահանաներն ալ սրբուին  
23 որ չըլլայ թէ Տէրը կորսընցունէ զանոնք : Եւ

Մովսէս ըսաւ Տէրոջը . Ժողովուրդը չկրնար ել-  
լալ Սինա լեռը . ինչու որ դուն մեզի խօսեցար՝  
ըսելով , Սահման դիր լեռանը , ու անիկայ  
սրբէ : Եւ Տէրը ըսաւ անոր . Գնա՛ վար ի-<sup>24</sup>  
ջիր , ու դուն Եհարօնին հետ մէկ տեղ ելիր .  
քայց քահանաները ու Ժողովուրդը Տէրոջը ել-  
լալու համար՝ սահմանէն չանցնին , որ չըլայ թէ  
զանոնք կորսընցունէ : Ու Մովսէս Ժողովուր-<sup>25</sup>  
դին իջաւ , և առնի ըսաւ անոնց :

## Գ Լ . Ի

1 Տասը պատուիրանքները : 18 Ժողովուրդը կը վախնայ , 20  
ու Մովսէսէն կը մխիթարուի : 22 Կուռք շինելը կարգիլուի :  
24 Սեղան շինուելուն կերպը :

Եւ Եստուած բոլոր աս խօսքերը զուրցեց՝ ը- 1  
սելով ,

Ես եմ՝ Եհովայ քու Եստուածդ՝ որ քեզ Ե- 2  
գիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հա-  
նեցի :

Իմ առջևս ուրիշ աստուածներ չպիտի՛ ու- 3  
նենաս :

Դուն քեզի կուռք չպիտի՛ շինես , ո՛չ ալ վե- 4  
րը երկինքին մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ  
երկրին տակի ջուրերուն մէջ եղած Բաներուն  
բնաւ մէկ նմանութիւնը . Ընոնց երկրպագու- 5



- Թիւն չպիտի ընես, ու զանոնք չպիտի պաշտես .  
ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ  
Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն  
մեղքը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երրորդ ու  
6 չորրորդ ցեղը՝ որ կատեն զիս . Եւ կողորմիմ  
անոնց մինչև հազար ցեղը՝ որ կը սիրեն զիս ու  
իմ պատուիրանքներս կը պահեն :
- 7 Տէրօջը քու Աստուծոյդ անունը պարապ  
տեղը Էփրայի չպիտի առնես . Ինչու որ Տէրը՝  
իր անունը պարապ տեղը բերան առնողը՝ անմեղ  
պիտի չսեպէ :
- 8 Հանգստութեան օրը մի՛ տքդ բեր՝ անիկայ  
9 սուրբ պահելու համար : Այց օր պիտի աշխա-  
10 տիս, ու բոլոր գործդ ընես . Բայց եօթներ-  
րորդ օրը՝ Տէրօջը քու Աստուծոյդ հանգստու-  
թեան օրն է . ա՛յ օրը գործ մը չպիտի գոր-  
ծես, ո՛չ դուն՝ ո՛չ որդիդ՝ ո՛չ քու աղ-  
ջիկդ՝ ո՛չ քու ծառայ ու աղախինդ՝ ո՛չ քու  
անասունդ՝ ո՛չ ալ տանդ մէջը եղած օտարա-  
11 կանդ . Բանզի Տէրը վեց օրին մէջ ըրաւ եր-  
կինքը ու երկիրը և ծովը ու անոնց մէջի բոլոր  
եղածները, և եօթներորդ օրը հանգստացաւ .  
անոր համար Տէրը օր՛նեց հանգստութեան  
օրը ու սրբեց ան :
- 12 Վատուէ՛ քու հայրդ ու մայրդ . որ քու օ-  
րերդ երկան ըլլան ան երկրին վրայ՝ որն որ  
քու Տէր Աստուածդ կուտայ քեզի :
- 13 Սպանութիւն մի՛ ըներ :

Շնութիւն մի՛ ընեք : 14

Պողութիւն մի՛ ընեք : 15

Վու գրացիիդ գէմ՝ սուտ վկայութիւն մի՛ ընեք : 16

Վու գրացիիդ սունին մի՛ ցանկար . քու գը- 17  
րացիիդ կնկանը կամ անոր ծառային կամ անոր  
աղախինին կամ անոր եղին կամ անոր իշուն՝  
և քու գրացիիդ ամենեին մէկ բանին մի՛ ցան-  
կար :

Եւ բոլոր ժողովուրդը կըտեսնային որոտում- 18  
ները ու կայծակները և փողին ձայնը ու լեռանը  
մխալը : Եւ երբ ժողովուրդը տեսաւ ան , ետ  
քաշուեցաւ ու հեռու կայնեցաւ : Եւ ըսին 19  
Մովսէսին . Պո՛ւն խօսէ մեզի հետ , ու մտիկ  
կընենք . բայց Մատուած թող չխօսի մեզի հետ  
որ չմեռնինք : Եւ Մովսէս ըսաւ ժողովուր- 20  
դին . Մի՛ վախնաք . ինչու որ Մատուած ձեզ  
փորձելու եկաւ . անանկ որ անոր վախը ձեր մէ-  
ջը ըլլայ , որ չմեղանէք : Եւ ժողովուրդը հեռու 21  
կայնեցաւ . ու Մովսէս մօտիկցաւ ան թանձր  
խաւարին՝ ուր որ Մատուած էր :

Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ես անկ պիտի ը- 22  
սես Իսրայէլի որդւոցը . Վուք անաք որ ձեզի  
հետ երկինքէն խօսեցայ : Ինձմէ զատ ոչ ար- 23  
ծաթ աստուածներ , ոչ ալ ոսկի աստուածներ  
պիտի չլինէք ձեզի : Ինձի հողէ սեղան մը չի- 24  
նես . ու անոր վրայ քու ողջակէզներդ ու խա-  
ղաղութեան զոհերդ՝ քու ոչխարներդ ու արջառ-  
ներդ զոհ ընես . և ամէն տեղ՝ ուր որ իմ՝ ա-

նունս յիշել կուտամ , քեզի պիտի դամ , ու  
 25 քեզ պիտի օրհնեմ : Աւ թէ որ ինձի քարէ  
 սեղան շինելու ըլլաս , տաշած քարէ չչինե՛ս  
 ան . քանզի թէ որ անոր վրայ երկաթ գոր-  
 26 ծիք վերցունես , կըսողնես անիկայ : Աւ աս-  
 տիճաններով չելլա՛ս իմ սեղանս , որ քու մեր-  
 կու թիւնդ չբացուի անոր վրայ :

## ԳԼ . ԵՆ

1 Օջանաղան կանոններ ծառաներուն համար : 5 Ըն ծառա-  
 յին համար՝ որուն ականջը պիտի ծակուէր : 7 Եղախիննե-  
 բուն համար : 12 Սարգասպանութեան համար : 16 Սարգ-  
 զողցողի համար : 17 Ճնողաց հայհոյութիւն բնողներուն հա-  
 մար : 18 Օարնողներուն համար : 22 Պատահմամբ վնաս մը  
 ըլլալուն համար : 28 Օարնող եզի համար : 33 Վնասի մը  
 պատճառ ըլլողին համար :

1 **Ա**ւ անոնց առջևը դնելու դատաստաններդ  
 2 ասոնք են . թէ որ Աբրայեցի ծառայ մը  
 ծախու առնելու ըլլաս , անիկայ վեց տարի պի-  
 տի ծառայէ . և հօթներորդ տարին ձրի ազատ  
 3 պիտի ելլայ : Թէ որ մինակ մտաւ , մինակ պի-  
 տի ելլայ . թէ որ կնիկ ունէր , կնիկն ալ իր  
 4 հետը պիտի ելլայ : Թէ որ իր տէրը իրեն կնիկ  
 տուաւ՝ ու անիկայ իրեն որդիներ կամ աղջիկ-  
 ներ ծնած է , կնիկը ու անոր աղաքները տի-  
 բոջը պիտի բլան , ու ինքը մինակ պիտի ելլայ :  
 5 Հապա թէ որ ծառան յայտնի ըսելու ըլլայ  
 թէ , Աս կըսիրեմ իմ տէրս՝ իմ կնիկս ու իմ

տղաքներս , չեմ ուզեր որ երթամ և ազատ ըլ-  
լամ . Ընտանենք անոր տէրը դատուորներուն 6  
պիտի տանի զանիկայ , և դբանք՝ կամ սեմին  
մօտիկցունէ . ու անոր տէրը անոր սկանջը հե-  
րիւնով պիտի ծակէ , և անիկայ յաւիտեան ծա-  
ռայ պիտի ըլլայ անոր :

Եւ թէ որ մէկը իր աղջիկը աղախին ըլլալու 7  
համար ծախէ , անիկայ ծառաներուն ելածին պէս  
պիտի չելլայ : Թէ որ անիկայ՝ իր հետը նշա- 8  
նուած տիրոջը աչքին հաճելի չերեայ , փր-  
կել տայ զանիկայ . բայց զանիկայ օտար աղջի  
ծախելու կարող չըլլայ , ինչու որ անիրաւութիւն  
ըրաւ անոր : Եւ թէ որ զանիկայ իր որդիին 9  
նշանած է , աղջիկներուն օրէնքին պէս պիտի ը-  
նէ անոր : Թէ որ իրեն ուրիշ 1711 առնէ , 10  
անոր ուտելիքը՝ հանգերծը ու մերձաւորու-  
թիւնը չպիտի կտրէ : Եւ թէ որ անոր աս 11  
իրեք բանը չընէ , անտանենք անիկայ առանց  
ստակի ձրի պիտի երթայ :

Սարդ զարնող մեռցունողը՝ անշուշտ պիտի 12  
մեռցուի : Եւ թէ որ կամաւ չըլլայ , հապա 13  
Ըստուած կըմատնէ զանիկայ անոր ձեռքը , քեզի  
տեղ մը պիտի սահմանեմ , որ անիկայ հոն փախ-  
չի : Բայց թէ որ մէկը իր դրացիին ռխ ունե- 14  
նայ և զանիկայ մեռցունել ուզէ , իմ սեղանէս  
ալ պիտի առնես զանիկայ որ մեռնի : Եւ իր 15  
հայրը ու մայրը ճեճողը անշուշտ պիտի մեռցուի :  
Եւ մարդ գողցողը՝ թէ որ զանիկայ ծախած ըլ- 16  
լայ կամ իր ձեռքը գտնուի , անշուշտ պիտի

- 17 մեռցուի : Ալ իր հայրը կամ մայրը անիծողը  
 18 անշուշտ պիտի մեռցուի : Ալ թէ որ ոմանք  
 իրարու հետ ծեծկուին , ու մէկը մեկալին քարով  
 կամ բռունցցով զարնէ՝ ու անիկայ չմեռնի , հասպա  
 19 անկողինը պառկի , թէ որ նորէն ելլայ ու ցու-  
 պով պտըտի , զարնողը անպարտ ըլլայ , միայն  
 անոր կորսընցուցած ժամանակին արժէք հատու-  
 ցանէ , ու բոլորովին առողջացունէ զանիկայ :  
 20 Ալ թէ որ մէկը զաւազանով իր ծառան կամ  
 իր աղախինը զարնէ՝ ու անիկայ իր ձեռքին տա-  
 կը մեռնի , անշուշտ ինքը պիտի պատժուի :  
 21 Բայց թէ որ օր մը կամ երկու օր ապրի , ին-  
 քը չպատժուի . ինչու որ անիկայ իր ստակն  
 22 է : Ալ թէ որ մարդիկ կուրին՝ ու յղի կնկան  
 մը զարնելով՝ անոր տղան անցունել տան , և  
 մնաս մը չըլլայ ալ , անիկայ անշուշտ  
 պիտի պատժուի . ան կնիկին էրկանը իր վրայ  
 դրած տոյժը քաշելով , ու զատաւորներուն զա-  
 23 տատանին պէս հատուցանելով : Բայց թէ որ  
 24 մնաս մը չըլլայ , անձի տեղ՝ անձ պիտի տաս , Աչքի  
 տեղ՝ աչք , ակոյցի տեղ՝ ակոյց , ձեռքի տեղ՝  
 25 ձեռք , ոտքի տեղ՝ ոտք , Խարանի տեղ՝ խարան ,  
 վէրքի տեղ՝ վէրք , հարուածի տեղ՝ հարուած :  
 26 Ալ թէ որ մէկը իր ծառային աչքը կամ իր ա-  
 ղախինին աչքը զարնէ ու կուրցունէ , զանիկայ  
 27 իր աչքին տեղը՝ ազատ թող տայ : Ալ թէ  
 որ իր ծառային ակուան՝ կամ իր աղախինին ակ-  
 ոան թափէ , զանիկայ իր ակոյցին տեղը՝ ազատ  
 թող տայ :

Աւ թէ որ եզ մը իր եղջիւրովը մարդ մը<sup>28</sup>  
 կամ կնիկ մը զարնէ մեռցունէ , եզը անշուշտ պի-  
 տի քարկոծուի , ու անոր միտը պիտի չուտուի .  
 բայց եզին տէրը անսպարտ ըլլայ : Հապա<sup>29</sup>  
 թէ որ եզը երէկուրնէ Վ՛ մէկալ օրուրնէ  
 զարնող է , և անոր տիրոջն ալ զուրցուած է  
 ու զանիկայ պահած չէ , թէ որ մարդ մը կամ  
 կնիկ մը մեռցունելու ըլլայ , եզը պիտի քարկո-  
 ծուի , ու անոր տէրն ալ պիտի մեռցուի : Թէ<sup>30</sup>  
 որ փրկանք մը ձգուի անոր վրայ , անիկայ իր  
 անձին ազատութեանը համար՝ իր վրան ձգուածը  
 պիտի տայ : Թէ տղայ մը՝ թէ աղջիկ մը զար-<sup>31</sup>  
 նելու ըլլայ ՚հը , աս դատաստանին պէս ըլլայ  
 անոր : Թէ որ եզը ծառայ մը կամ աղախին<sup>32</sup>  
 մը իր եղջիւրովը զարնէ , անոնց տիրոջը երսուն  
 սիկղ արծաթ պիտի տայ , ու եզը քարկոծուի :  
 Աւ թէ որ մէկը փոս մը բանայ , կամ մէկը փոս<sup>33</sup>  
 մը փորէ՝ ու չծածկէ , հոն եզ մը կամ էշ մը  
 իյնալու ըլլայ , փնասը փոսին տէրը պիտի քաշէ ,<sup>34</sup>  
 ու անոնց տիրոջը ստակ պիտի տայ , և մեռածը  
 իրը պիտի ըլլայ : Աւ թէ որ մէկու մը եզը իր<sup>35</sup>  
 դրացիին եզը զարնէ մեռցունէ , ողջ եզը պիտի  
 ծախեն , ու անոր ստակը բաժնեն , և մեռածն  
 ալ բաժնեն : Հապա եզին երէկուրնէ Վ՛<sup>36</sup>  
 մէկալ օրուրնէ զարնող ըլլալը գիտցուած ըլլա-  
 ւով , թէ որ տէրը զանիկայ չէ պահեր , եզին  
 տեղը եզ պիտի հատուցանէ , ու մեռածը իրը  
 պիտի ըլլայ :

Գ Լ . Ի Բ

1 Գողթութեան համար : 5 Կոստանուստի վնասին համար : 14  
 Գոթա առնելու համար : 16 Պոռնիկութեան համար : 18 Հր-  
 մայութեան համար : 19 Կնամոց հետ պղծութեան համար :  
 20 Կոստանուստի համար : 21 Օտարներուն՝ որբեզարի-  
 ներուն և որբերուն համար : 25 Կրամբ վարձրի ապու հա-  
 մար : 26 Կրաններու համար : 28 Իշխողները պատուելու  
 համար : 29 Իքսիայքիներուն համար :

- 1 **Թ**է որ մէկը արջառ մը կամ ոչխար մը գողնայ  
 ու մորթէ կամ ծախէ զանիկայ , մէկ ար-  
 ջառին տեղը հինգ արջառ՝ ու մէկ ոչխարին տե-  
 2 ղը չորս ոչխար պիտի հատուցանէ : Թէ որ  
 գող մը քան ծակելու վրայ գտնուի , ու զար-  
 նուի մեռնի , անոր համար արիւն չթափուի :
- 3 Թէ որ անոր վրայ արևը ծագեր է , անոր հա-  
 մար արիւն պիտի թափուի , անիկայ լման կրո-  
 նար հատուցանել . Թէ որ բան մըն ալ չունենար ,  
 անատենը իր գողցած բանին համար կրնոր  
 4 ծախուիլ : Թէ որ գողցածը իր ձեռքը ողջ  
 գտնուի , Թէ եզ ըլլայ՝ Թէ էշ ըլլայ՝ Թէ ոչ-  
 խար ըլլայ , կրկինը պիտի հատուցանէ :
- 5 Թէ որ մէկը արտի մը կամ այգիի մը վնաս  
 տայ , Թող տալով իր անատունը ուրիշի մը ար-  
 տին մէջ արծելու , իր արտին ամենէն աղէկ աղ-  
 6 պիտի հատուցանէ : Թէ որ կրակ ցաթկէ՝ ու  
 ցանկն փուշերուն դաշի , և դիզուած՝ կամ չհրն-  
 ձուած ցորենը կամ արտը այրի , կրակը վառողը՝  
 այրածին արժէքը լման պիտի հատուցանէ :

թէ որ մէկը իր դրացիին ստակ կամ ամաններ 7  
 տայ պահելու համար , և ան մարդուն տունէն  
 գողցուի , թէ որ գողը գտնուի՝ անիկայ կրկինը  
 պիտի հատուցանէ : թէ որ գողը չգտնուի 8  
 տունին տ րը դատաւորներուն պիտի տարուի , իր  
 ձեռքը իր դրացիին ստացուածքին չդպցունելը  
 համար : Եւ մէն կերպ անիրաւութեան 9  
 համար , թէ եզն թէ իշու՝ թէ ոչխարի՝ և թէ  
 հանդերձի համար , իսկ ամէն կերպ կորսուած  
 բանի մը համար՝ որն որ ուրիշ մէկը կը հաստատէ  
 թէ իրն է , երկու կողմին դատը դատաւորներուն  
 առջին տարուի , ու դատաւորները որուն վրան  
 վճռելու ըլլան , անիկայ իր դրացիին կրկինը  
 պիտի հատուցանէ : թէ որ մէկը իր դրացիին 10  
 էջ մը կամ եղ մը՝ կամ ոչխար մը՝ կամ ինչ  
 անասուն որ ըլլայ՝ պահելու համար տայ , ու ան  
 մեռնի՝ կամ վնասի՝ կամ թշնամին առնէ տա-  
 նի՝ ու տեսնող մը չըլլայ , Եւ ուրիշն երկուքին 11  
 մէջ տեղը ճէրօջը երգումը ըլլայ իր դրացիին  
 ստացուածքին ձեռք չդպցունելուն համար . ու  
 անոր տէրը պիտի ընդունի երգումը , և ինքը  
 չպիտի հատուցանէ : Եւ թէ որ իրաւցունէ 12  
 իր քովէն գողցուեր է , ինքը անոր տիրոջը պի-  
 տի հատուցանէ : թէ որ գաղանէ փառատուած 13  
 է , թէ ոչ բերէ ան՝ վկայութիւն ըլլալու  
 համար . ու փառատուածին շինը պիտի հատու-  
 ցանէ : Եւ թէ որ մէկը իր դրացիին անասուն 14  
 փոխ առնէ , ու անիկայ վնասուելու կամ մեռնե-  
 լու ըլլայ՝ տէրը իր հետը չըլլալով , ինքը ան-



- 15 շուշտ պիտի հատուցանէ . Բայց թէ որ տէրը  
իր հետն էր , չպիտի հատուցանէ . թէ որ վարձ-  
քով առնուած է , վարձքին տեղը սեպուի :
- 16 Եւ թէ որ մէկը չնշանուած աղջիկ մը խաբէ  
ու անոր հետ պառկի , անշուշտ անոր օժիտը  
ինքը տալով՝ անիկայ իրեն կնիկ պիտի ընէ :
- 17 Թէ որ անոր հայրը ամենեին չուզէ անոր տալ ,  
անիկայ կոյսերուն օժիտին պէս ստակ պիտի  
տայ :
- 18 Աստարդ կնիկը չպիտի՝ ապրեցունես :
- 19 Ո՛վ որ անասունի հետ կըպառկի , անշուշտ  
պիտի մեռցուի :
- 20 Միայն Տէրոջմէն 'ի զատ՝ «-ընչ աստուածնե-  
րու զոհ ընողը պիտի կորսուի :
- 21 Եւ օտարականը մի՛ չարչարեր , ու անիկայ  
մի՛ նեղեր . ինչու որ դուք ալ Ազիպտոսի երկ-  
22 րին մէջ օտարական էիք : Որբէվարին ու որբը  
23 մի՛ չարչարէք : Թէ որ զանոնք չարչարէք ինչ  
և իցէ կերպով , ու անոնք ինձի բողոքելու ը-  
լան , անշուշտ պիտի ըսմ՝ անոնց աղաղակը .
- 24 Եւ իմ բարկութիւնս պիտի բորբոքի , ու ձեզ  
սրով պիտի մեռցունեմ . և ձեր կնիկները որ-  
բէվարի՝ ու ձեր տղաքները որբ պիտի ըլան :
- 25 Թէ որ իմ ժողովուրդէս քու քովդ եղած  
աղքատ մէկու մը փոխ ստակ տաս , վաչխ առ-  
նողի պէս մի՛ ըլլար անոր , ու անոր վրան վաչխ
- 26 մի՛ դներ : Թէ որ քու դրացիիդ հանգերձը  
գրաւ առնես , արևը մարը չմտած՝ իրեն ետ
- 27 դարձունես : Ինչու որ ան է մինակ անոր ծած-

կոցը , իր մարմինին հանդերձն է ան . ինչով  
պիտի պառկի . և ըլլայ որ ինձի աղաղակէ , պի-  
տի լսեմ , քանզի ես ողորմած եմ :

Վատաւորները մի' նախատեր , և քու Ժու 28  
ըմբռնող իշխանը մի' անիծեր :

Վու արմտիքներուդ ու հեղանիւթներուդ 29  
երախայրինները մի' ուշացուներ , և քու որդինե-  
րուդ առջինեկները ինձի պիտի տաս : Վու եւ 30  
զիդ ու ոչխարիդ ալ ասանկ պիտի ընես . եօթը  
օր մօրը հետ պիտի ըլլայ . ութերորդ օրը ան  
ինձի պիտի տաս :

Եւ դուք ինձի սուրբ մարդիկ պիտի ըլլաք . 31  
և դաշտին մէջ գազաններէն փառատուածին  
միւր չպիտի' ուտէք . շուներուն պիտի նետէք  
ան :

## Գ Լ . Ի Գ

1 Եւստասանայ և սուտ վկայութեան համար : 3 , 6 Երգար  
դատաստանի համար : 4 Թշնամին սիրելու համար : 10  
Հանգստութեան տարւոյն համար : 12 Հարաթին համար :  
14 Իրեք տօնախմբութիւններուն համար : 18 Օգհերուն ա-  
րիւնին ու ճարպին համար : 20 Տէրը անոնց հրեշտակ մը  
խրկելու կրտստանայ , զանոնք օրհնելով թէ որ իրեն հա-  
ղանդին :

**Ս**ուտ լուր չպիտի տարածես . անօրէնի հետ 1  
ձեռքդ չպիտի դնես սուտ վկայ ըլլալով :  
Չարութիւն ընելու համար՝ բաղմութեանը 2  
չպիտի հետեիս . ու դատաստանի մէջ իրաւունք  
դարձունելու համար շատերուն ետեւէն խոտո-

- 3 րելու խօսք չպիտի՛ տաս : Աւ աղքատին աչա-  
 ոու թիւն չպիտի՛ ընես իր դատաստանին մէջ :
- 4 Թէ որ քու թշնամիիդ մոլորուած եզին կամ  
 իշուն հանդիպելու ըլլաս , անշուշտ իրեն պիտի  
 5 դարձունես անիկայ : Թէ որ քեզ ատողին էջը  
 բռի տակ ինկած տեսնաս , ու անոր օգնելէն ետ  
 կենալու ալ ըլլաս , անշուշտ անոր պիտի օգնես :
- 6 Այու աղքատիդ դատաստանին մէջ իր իրաւուն-  
 7 քը չպիտի՛ դարձունես : Սուտ խօսքէն հեռու  
 կեցի՛ր . և անմղը ու արդարը մի՛ մեղցուներ .  
 8 ինչու որ ես չարը չպիտի՛ արդարացունեմ : Աւ  
 կաշառ չպիտի՛ առնես . ինչու որ կաշառը աչքը  
 բաց մարդիկը կրկուրացունէ , և արդարներուն  
 9 խօսքերը կրխանգարէ : Աւ օտարականը մի՛  
 նեղեր . ինչու որ դուք օտարականին սիրտը գի-  
 տէք . որովհետեւ դուք ալ Ազիպտոսի երկրին  
 մէջ օտարական էիք :
- 10 Աւ քու հողդ վեց տարի պիտի սերմանես , ու  
 11 անոր արդիւնքը ժողվես . Բայց եօթներորդ  
 տարին հանգստացունես ու թողուս ան , որ քու  
 ժողովուրդիդ աղքատները ուտեն , և անոնցմէ  
 մնացածը դաշտին անասունները պիտի ուտեն .  
 քու այգիիդ ու ձիթատանիդ ալ ասանկ պիտի  
 12 ընես : Վեց օր քու գործդ բանէ , ու եօթ-  
 ներորդ օրը հանգստացի՛ր . որ քու եզդ ու էջդ  
 հանգստանայ , և քու աղախինիդ որդին ու  
 13 օտարականը շունչ առնէ : Աւ բոլոր ձեզի  
 զուրջածներս պիտի պահէք , և ուրիշ աստուած-  
 ներուն անունը չպիտի՛ յիշէք . ձեր բերնէն

անգամ չլսուի : Տարին իրեք անգամ ինձի տօն 14  
 բռնէ : Բաղարջակերին տօնը պահէ՛ , քեզի 15  
 պատուիրածիս պէս Եպիպ ամսուն մէջ սահմա-  
 նուած ժամանակին՝ եօթը որ անխմոր հաց պիտի  
 ուտես . ինչու որ ան ամսուն մէջ Եգիպտոսէն  
 ելար . և բնաւ մէկը յետոյ զատարկ չերեայ  
 իմ առջևս : Եւ արտին մէջ ցանկելու աշխա- 16  
 տութեանդ երախայրի պտուղը նձկելու տօնը՝ ու  
 տարիին վերջը երբոր արտէն քու աշխատու-  
 թիւնդ կը հաւքես՝ ժողվելու տօնը պիտի ուտես :  
 Տարին իրեք անգամ քու ամէն արուդ Տէր Ես- 17  
 տուծոյ առջևը պիտի երեւան : Իմ զոհիս ա- 18  
 թիւնը խմորեալ հացով չպիտի մատուցանես ,  
 ու իմ տօնիս ճարպը մինչև առտու չպիտի  
 մնայ : Քու հողիդ առջի երախայրիները քու 19  
 Տէր Եստուծոյդ տունը պիտի տանիս :  
 Ուր իր մօրը կաթին մէջ չպիտի եփես : 20  
 Եհնա քու առջևէդ հրեշտակ մը կը խրկեմ , որ  
 քեզ ճամբուն մէջ պահպանէ , ու իմ պատ-  
 րաստած տեղս տանի քեզ : Ենկէց զզուշացի՛ր , 21  
 ու անոր խօսքը մտիկ ըրէ , անոր աննաղանդ  
 մի՛ ըլլար . ինչու որ անիկայ քուկին յանցանքդ  
 չպիտի ներէ , քանզի իմ անունս անոր վրայ է :  
 Բայց թէ որ անոր խօսքը աղէկ մտիկ ընես՝ ու 22  
 իմ բողոք ըսածս ընես , անատենը քու թշնա-  
 միներուդ՝ թշնամի պիտի ըլլամ , և քու հակա-  
 ոակորդներուդ՝ հակառակորդ : Քանզի իմ հրեշ- 23  
 տակս քու առջևէդ պիտի երթայ , և քեզ Ե-  
 մօրհացիներուն՝ ու Քետացիներուն՝ և Փերեզա-

- ցիներուն՝ ու Քանանացիներուն՝ Խեացիներուն  
 ու Յերուսացիներուն պիտի տանի , և ես պիտի  
 24 կոտորեմ զանոնք : Ընոնց աստուածներուն  
 երկրպագութիւն կամ ծառայութիւն չպիտի  
 ընես , ու անոնց ըրածին պէս չպիտի՛ ընես .  
 Հապա բոլորովին պիտի կործանես զանոնք , ու  
 25 անոնց կուռքերը բոլորովին կոտորես : Եւ ձեր  
 Տէր Ետուածը պիտի պաշտէք , ու ինքը ձեր  
 Հացը ու ջուրը պիտի օրհնէ . և ձեր մէջէն  
 26 Հիւանդութիւնը պիտի վերցունէ : Քու երկ-  
 րիդ մէջը վիժող ու ամուլ չպիտի՛ ըլլայ . քու  
 27 օրերուդ Համբանքը պիտի լեցունեմ : Իմ  
 երկիւղս քու առջևէդ պիտի խրկեմ , և պիտի  
 կորսընցունեմ ան բոլոր ժողովուրդը՝ որուն որ  
 չուն կերթաս , ու քու բոլոր թշնամիներուդ  
 28 կոնակը քեզի պիտի դարձունեմ : Եւ քու առ-  
 ջևէդ իշամեղուն պիտի խրկեմ , որ Խեացիները՝  
 Քանանացիները ու Քետացիները քու առջևէդ  
 29 վաւրնտէ : Ընոնք քու առջևէդ մէկ տարիին  
 մէջ չպիտի՛ վաւրնտեմ , որ չըլլայ թէ երկիրը  
 ամայի մնայ՝ ու քու վրադ դաշտին գազանները  
 30 շատնան : Ընոնք քու առջևէդ կամաց կամաց  
 պիտի վաւրնտեմ , մինչև որ դուն շատնաս ու  
 31 երկիրը ժառանգես : Եւ քու սահմաններդ  
 Կարմիր ծովէն մինչև Փղըշտացւոց ծովը , ու  
 անապատէն մինչև Եփրատ գետը պիտի դնեմ .  
 ինչու որ ան երկրին բնակիչները ձեր ձեռքը պի-  
 տի տամ , ու անոնք քու առջևէդ պիտի վաւրն-  
 32 տես : Ընոնց Հետ ու անոնց աստուածներուն

Հետ ուխտ չպիտի՛ դնես : Քու երկրիդ մէջ 33  
չպիտի՛ բնակին , որ քեզի մեզք գործել չտան  
ինձի դէմ . ինչու որ եթէ անոնց աստուածները  
պաշտես , անշուշտ ան քեզի որոգայթ պիտի  
ըլայ :

## Գ Լ . Ի Գ

1 Մովսէս լեռան վրայ ելլելու կրկանչուի : 3 ժողովուրդը  
հնազանդ ըլլալու խօսք կուտայ : 4 Մովսէս սեղան մը կը շե-  
նէ , ու տասներկու վէմ կրկանգնեցունէ : 6 Օրհերուն ա-  
րիւնը կը սրսկէ : 9 Եստուծոյ փառքը կը յայտնուի : 14 ժո-  
ղովուրդին կառավարութիւնը Եհարօնին ու Ուրփն կը յանձ-  
նուի : 15 Մովսէս լեռը ելլալով՝ հոն կը մնայ քառասուն օր  
և քառասուն գիշեր :

Ս Եւ րսաւ Մովսէսին . Տէրօջը ելիր՝ գուն ու 1  
Եհարօնը՝ Նադաբ ու Եփուզը՝ և Խարայէ-  
լի ձերերէն եօթանասուն հօգի , ու հեռուէն  
երկրպագութիւն ըրէք : Եւ միայն Մովսէսը 2  
մօտիկնայ Տէրօջը , ու անոնք չմօտիկնան , ոչ  
ալ ժողովուրդը անոր հետ ելլայ : Եւ Մով- 3  
սէս եկաւ՝ ու Տէրօջը բոլոր խօսքերը և բոլոր  
դատաստանները պատմեց ժողովուրդին . և բո-  
լոր ժողովուրդը միաձայն պատասխան տուին ու  
ըսին . Տէրօջը բոլոր զուրցած խօսքերը պիտի  
ընենք : Եւ Մովսէս Տէրօջը բոլոր խօսքերը 4  
գրեց , ու աստուանց կանուխ ելաւ՝ և լեռանը  
տակը սեղան մը շինեց . ու Խարայէլին տասներ-  
կու ցեղերուն նայելով՝ տասներկու քար արձան  
խնդնեց : Եւ Խարայէլի որդւոցմէ պատանիներ 5  
խրկեց , ու ողջակէզներ մատուցին և խաղաղուն

- զոհերու համար զուարակներ զոհեցին Տէրոջը :  
 6 Եւ Սովսէս արիւնին կէսը առաւ ու կոնքերուն  
 մէջը գրաւ . և արիւնին կէսը սեղանին վրայ  
 7 սրակեց : Եւ առաւ ուխտին գիրքը ու ժողո-  
 վուրդին ականջներուն կարդաց , և անոնք ըսին .  
 Տէրոջը բոլոր ըսածը պիտի ընենք , ու անոնք  
 8 պիտի նազանդինք : Եւ Սովսէս առաւ արիւնը՝  
 ու ժողովուրդին վրան սրակեց , ու ըսաւ . Եհս  
 բոլոր աս խօսքերուն համեմատ՝ Տէրոջը ձեզի  
 9 հետ ըրած ուխտին արիւնը : Ընատենը Սովսէս  
 ու Եհարօն՝ Կարգար ու Երիուզ՝ և Իսրայէլի  
 10 ձերերէն եօթանասուն հոգի ելան : Եւ Իսրայէ-  
 լի Ըստուածը տեսան , ու անոր ոտքերուն տա-  
 կը աղիւսով յատակածի պէս շափիւղայ՝ և պայ-  
 11 ծառութեամբ՝ երկինքին պէս էր : Եւ Իսրայէ-  
 լի որդւոցը ընտրեալներուն վրայ իր ձեռքը  
 շերկընցուց . և զԸստուած տեսան , ու կերան և  
 խմեցին :  
 12 Եւ Տէրը ըսաւ Սովսէսին . Լեռը ելի՛ր ին-  
 ծի , ու հոն կայնէ , և քարեղէն տախտակները  
 պիտի տամ քեզի ու իմ գրած օրէնքս և պա-  
 13 տուիրանքներս՝ որ անոնց սորվեցունես : Եւ  
 Սովսէս ու իր պաշտօնեան Յեսուն ելան , և  
 14 Սովսէս Ըստուծոյ լեռը ելաւ : Եւ ըսաւ ձե-  
 րերուն . Ի ու ք հոս կայնեցի՛ք , մինչև որ մենք  
 ձեզի դառնանք . և ահա՛ Եհարօնը ու Ովրը ձեր  
 հետն են . թէ որ մէկը դատաստան մը ունե-  
 նայ՝ թող անոնց երթայ :  
 15 Եւ Սովսէս լեռը ելաւ , ու ամպը պատեց

լեռը : Եւ Տէրոջը փառքը Աինա լեռանը վրան 16  
 իջաւ , ու ամպը պատեց զանիկայ վեց օր . և  
 եօթներորդ օրը ամպին մէջէն կանչեց Մովսէսը :  
 Եւ Տէրոջը փառքին տեսիլը լեռանը գաղաթին 17  
 վրայ մաշող կրակի պէս էր Խորայէլի որդւոց առ-  
 ջնը : Եւ Մովսէս ամպին մէջը մտաւ՝ ու լեռը  
 ելաւ , և Մովսէս քառսուն օր ու քառսուն գի-  
 շեր լեռը կեցաւ :

## Գ Լ Ի Ե

1 Խորանին շինութեանը համար՝ Խորայէլացիներուն տալու ըն-  
 ծաները : 10 Տապանակին ձևը : 17 Քառսթիւնը և քե-  
 բոյրէնները : 23 Սեղանը՝ իր անօթներովը : 31 Եշտա-  
 նակը իրեն գործիքներովը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Օգուր- 1  
 ցէ՛ Խորայէլի որդւոցը՝ որ ինձի ընծաներ բե- 2  
 րեն . ամէն իր կամօքը տուող մարդէն պիտի  
 առնէք իմ ընծաս : Եւ ձեր անոնցմէ առնե- 3  
 լու ընծան աս է . Ոսկի և արծաթ ու պղինձ՝ Եւ 4  
 կապուտակ ու ծիրանեգոյն և կրկնակի կարմիր  
 ու բարակ քթան և այծի մազ՝ Եւ կարմիրներ- 5  
 կուած խոյի մորթեր՝ ու թէհաշի մորթեր և  
 Սատիմայ փայտեր , Եւ յսի համար եղ՝ օծ- 6  
 ման եղի համար՝ ու անուշահոտ խունկի համար  
 համեմներ , եղնգնաքարեր , և \* եփուտին ու լան- 7  
 ջապանակին վրայ գամուելու քարեր :

Եւ ինձի սրբութիւն մը շինեն օր անոնց մէ- 8  
 ջը բնակիմ : Խորանին օրինակը և անոր բոլոր 9

\* ք՝ փակասին



կարասիքին օրինակը բոլոր քեզի ցըցուցածիս  
պէս՝ ճիշդ անանկ պիտի շինէք :

- 10 Եւ Սատիմայ փայտէն տապանակ մը շինե՛ն .  
անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս՝  
և անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս՝ և  
անոր բարձրութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ :
- 11 Եւ անիկայ զուտ ոսկիով պիտի պատես , ներ-  
սէն ու դուրսէն պիտի պատես ան . և անոր վը-  
րան բողբոսիքը՝ ոսկի շրջանակ մը պիտի շինես :
- 12 Եւ անոր համար ոսկիէ շորս օղակ ձուլես , ու  
անոր շորս անկիւնները պիտի դնես զանոնք , որ  
անոր մէկ կողմը երկու օղակ՝ ու մէկալ կողմը
- 13 երկու օղակ ըլլայ : Եւ Սատիմայ փայտէն ձողեր  
պիտի շինես , ու զանոնք ոսկիով պիտի պատես :
- 14 Եւ ձողերը տապանակին քովը եղած օղակներուն  
պիտի անցունես՝ որ տապանակը անոնցմով վեր-
- 15 ցուի : Չողերը տապանակին օղակներուն մէջը
- 16 պիտի մնան . անկից չպիտի հանուին : Եւ  
տապանակին մէջը դնես վկայութիւնը՝ որն որ  
քեզի պիտի տամ :
- 17 Եւ զուտ ոսկիէ քաւութիւն մը պիտի շինես ,  
անոր երկայնութիւնը երկու կանգուն ու կէս՝ և  
անոր լայնութիւնը մէկ կանգուն ու կէս ըլլայ :
- 18 Եւ ոսկիէ երկու քերովբէներ պիտի շինես . քա-  
ւութիւնին երկու ծայրին վրայ † կոածոյ պիտի
- 19 շինես զանոնք : Եւ մէկ քերովբէն մէկ ծայ-  
րէն՝ ու մէկալ քերովբէն մէկալ ծայրէն պիտի  
շինես . քերովբէները քաւութիւնէն՝ անոր եր-

\* Ա՛մ կախարիւ

† Ա՛մ ճախարակեայ

կու ծայրերուն վրայ պիտի շինես : Եւ քե- 20  
րովբէները թեւերնին վերէն տարածելով՝ իրենց  
թեւերովը քաւութիւնը պիտի ծածկեն . և ա-  
նոնց երեսները մէկզմէկու պիտի նային . քերով-  
բէներուն երեսները դէպի քաւութիւնը պիտի  
ըլլայ : Եւ քաւութիւնը տասպանակին վրան 21  
պիտի դնես . և քեզի տալու վկայութիւնս՝ տա-  
պանակը պիտի դնես : Եւ հոն ես քեզի պիտի 22  
յայտնուիմ . ու քաւութեանը վրայէն՝ վկայու-  
թեան տասպանակին վրան եղած երկու քերովբէ-  
ներուն մէջ տեղէն՝ Խորայէլի որդւոցը համար  
բոլոր քեզի պատուիրելու Էմնէլու վրայով պիտի  
խօսիմ քեզի հետ :

Եւ Սատիմայ փայտէն սեղան մը պիտի շինես . 23  
անոր երկայնութիւնը երկու կանգուն՝ և անոր  
լայնութիւնը մէկ կանգուն՝ ու անոր բարձրու-  
թիւնը մէկ կանգուն ու կէս պլէտի ըլլայ : Եւ 24  
անիկայ զուտ ոսկիով պիտի պատես . ու անոր  
բոլորտիքը ոսկի շրջանակ մը պիտի շինես : Եւ 25  
անոր չորս մասնաչափ սպառուած մը պիտի շի-  
նես . ու սպառուածին բոլորտիքը ոսկի շրջանակ մը  
պիտի շինես : Եւ անոր չորս ոսկի օղակ պիտի 26  
շինես . ու անոր չորս ոտքին քովը՝ չորս ան-  
կիւնը պիտի դնես օղակները : Օղակները սպա- 27  
ռուածին քովը պիտի ըլլան , որ սեղանը վեր-  
ցունելու համար՝ ձողերուն տեղեր ըլլան : Եւ 28  
ձողերը Սատիմայ փայտէն պիտի շինես , ու զա-  
նոնք ոսկիով պիտի պատես . և սեղանը անոնց-  
մով պիտի վերցուի : Եւ անոր սկուտեղները ու 29

անոր խնկամանները և բաժակները ու գաւաթները պիտի շինես , որ անոնցմով թափելու նուէր պիտի մատուցուի . զանոնք զուտ ոսկիէ

30 պիտի շինես : Աւ սեղանին վրան առաջաւորութեան հացը պիտի դնես միշտ իմ առջևս :

31 Աւ զուտ ոսկիէ աշտանակ մը պիտի շինես . կռածոյ պիտի ըլլայ աշտանակը , ու անոր բունը՝ ճիւղերը՝ սկահակները՝ գնդակները ու ծաղիկները իրմէն պիտի ըլլան :

32 Աւ անոր քովերէն վեց ճիւղեր պիտի ելլան . աշտանակին մէկ քովէն իրեք ճիւղ՝ և աշտանակին մէկալ քովէն իրեք

33 ճիւղ տակէ ելլան : Մէկ ճիւղին վրայ նշաձե իրեք բաժակ գնդակով ու ծաղիկով , և մէկալ ճիւղին վրայ նշաձե իրեք բաժակ՝ գրնդակով ու ծաղիկով պիտի ըլլայ . աշտանակէն

34 ելած վեց ճիւղերը ասանկ պիտի ըլլան : Աւ աշտանակին վրայ չորս նշաձե սկահակ պիտի ըլլայ իրենց գնդակներովը ու ծաղիկներովը :

35 Աւ աշտանակէն ելած վեց ճիւղերուն՝ երկու ճիւղին տակը իրմէն մէկ գնդակ՝ ու երկու ճիւղին տակը իրմէն մէկ գնդակ՝ և երկու ճիւղին

36 տակը իրմէն մէկ գնդակ պիտի ըլլայ : Անոնց գնդակները ու ճիւղերը իրմէն պիտի ըլլան . աշտանակէն մէկ գնդակ պիտի ըլլայ :

37 Աւ անոր եօթը ճրագարանները պիտի շինես . ու անոնց ճրագարանները վառուած տտենը լոյսը

38 առջևէն տան : Աւ անոր ունելիները ու անոր բազմակայները զուտ ոսկիէ պիտի ըլլան : Անիկայ՝ բոլոր աս գործիքներով տաղանդ մը զուտ

ոսկիէ պիտի շինես : Աւ նայէ որ լեռը քեզի<sup>40</sup>  
ցուցուած օրինակին պէս շինես զանոնք :

## Փ Լ . Ի . Օ .

1 Խորանին տասը վարագուրները : 7 Այծի մազէ շինուած  
տասնըմէկ վարագուրները : 14 Խոյի մորթերով ծածկոցը :  
15 Խորանին տասնօսկնները՝ իրենց խարխախներովը ու նիզե-  
րովը : 31 Տաղանակին առջևի վարագուրը : 36 Իրան վա-  
րագուրը :

Աւ պիտի շինես խորանը տասը վարագուրէն՝ 1  
մանուած բարակ քթանէ ու կապուտակէ և  
ճիրանեղոյնէ և կրկն սկի կարմիրէ . վարպետի  
գործ շինես զանոնք քերովըէներով : Այլ վա- 2  
րագուրին երկայնութիւնը քսանուութը կան-  
գուն՝ և մէկ վարագուրին լայնութիւնը չորս  
կանգուն պիտի ըլլայ . բոլոր վարագուրներուն  
չափը մէկ պիտի ըլլայ : Աւարագուրներուն չին- 3  
գը մէկըմէկու պիտի կցուին . և Տէլալ վարագուր-  
ներուն չինգը մէկըմէկու պիտի կցուին : Աւ կը- 4  
ցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ  
կապուտակեայ օղակներ պիտի շինես . մէկալ  
կցուածքին ծայրի վարագուրին եզերքն ալ ա-  
նանկ պիտի ընես : Այլ վարագուրին վրան 5  
յիսուն օղակ պիտի շինես , և մէկալ կցուածքին  
վրան եղած վարագուրին ծայրն ալ յիսուն օղակ  
պիտի շինես . օղակները դիմացէ դիմաց պիտի  
ըլլան : Աւ յիսուն կարթածև ոսկի ճարմանդներ 6  
պիտի շինես . ու վարագուրները ճարմանդներով

- 7 պիտի կոճկես , և մէկ խորան պիտի ըլլայ : Աւ-  
խորանին վրան ծածկոց ըլլալու համար այժի մա-  
զէն վարագուրներ պիտի շինես . տասնըմէկ
- 8 վարագուր պիտի ընես անոնք : Այլ վարա-  
գուրին երկայնութիւնը երսուն կանգուն՝ և մէկ  
վարագուրին լայնութիւնը չորս կանգուն պիտի  
ըլլայ . տասնըմէկ վարագուրներուն չափը մէկ
- 9 պիտի ըլլայ : Աւ հինգ վարագուրները զատ՝  
ու վեց վարագուրները զատ պիտի կցես . և  
վեցերորդ վարագուրը խորանին առջևի կողմէն
- 10 երկպատիկ պիտի ընես : Աւ կցուածքին ծայրը  
եղած մէկ վարագուրին եզերքին վրայ յի-  
սուն օղակ՝ ու մէկալ կցուածքին ծայրը եղած վա-  
րագուրին եզերքին վրայ յիսուն օղակներ պիտի
- 11 շինես : Աւ պղինձէ յիսուն կարթածն ճարմանդ-  
ներ պիտի շինես . ու ճարմանդները օղակներուն  
պիտի անցունես , և վրանը պիտի կոճկես , ու մէկ
- 12 պիտի ըլլայ : Աւ վրանին վարագուրներէն ա-  
ւելցուք մնացածը՝ այնչէն վարագուրին աւելցած  
կէսը՝ խորանին ետևէն կախուած պիտի մնայ :
- 13 Աւ վրանին վարագուրներուն երկայնութենէն  
մէկ կանգուն մէկ կողմէն՝ ու մէկ կանգուն մէկալ  
կողմէն աւելցածը՝ խորանին քովերը մէկ կողմէն  
ու մէկալ կողմէն ծածկելու համար կախուած
- 14 պիտի մնայ : Աւ կարմիր ներկուած խոյի մոր-  
թերէն ծածկոց մը , ու անոր վրայէն թէհաշի  
մորթերէն ծածկոց մը պիտի շինես :
- 15 Աւ խորանին տախտակները Սատիմայ փայտէն
- 16 շինելով պիտի կանգնես : Այլ տախտակին եր-

կայնու թիւնը տասը կանգուն՝ և մէկ տախտակին կին լայնու թիւնը մէկ ու կէս կանգուն պիտի ըլլայ : Եւ մէն մէկ տախտակը երկերկու ագուցիկ 17 ծայրեր պիտի ունենայ մէկը մէկու քով . խորանին բոլոր տախտակներուն ասանկ պիտի ընես : Եւ խորանին տախտակները պիտի շինես . դէ- 18 պի հարաւ՝ հարաւային կողմը քսան տախտակ ունի : Եւ քսան տախտակներուն տա- 19 կը քառսուն արծաթ խարիսխ պիտի շինես . մէկ տախտակին տակը իր երկու ագուցիկ ծայրը անցունելու համար երկու խարիսխ՝ և մէկալ տախտակին տակը իր երկու ծայրը անցունելու համար երկու խարիսխ պիտի ըլլայ : Եւ խորան- 20 նին մէկալ կողմին համար հիւսիսային կողմը՝ քսան տախտակ , Եւ անոնց քառսուն արծաթ 21 խարիսխ , մէկ տախտակին տակը երկու խարիսխ՝ ու մէկալ տախտակին տակը երկու խարիսխ ունի : Եւ խորանին ետեւի կողմին համար արեւ- 22 մտեան կողմը վեց տախտակ պիտի շինես : Եւ 23 խորանին անկիւններուն համար՝ ետեւի կողմը երկու տախտակ պիտի շինես : Եւ վարէն պիտի 24 կցուին , ու վերէն մէկ օղակով կցուած մէկ պիտի ըլլան . երկուքն ալ ասանկ պիտի ըլլայ , անոնք երկու անկիւններուն համար պիտի ըլլան . Եւ ոյ-ոյ-ն՝ ասոնք ութը տախտակ պիտի ըլլան . 25 ու անոնց արծաթ խարիսխները տասնըվեց խարիսխ պիտի ըլլայ . մէկ տախտակին տակը երկու խարիսխ՝ ու մէկալ տախտակին տակը երկու խարիսխ ունի : Եւ Սատիմայ փայտէն 26

- նիգեթ պիտի շինես • խորանին մէկ քովի տախ-  
 27 տակներուն համար հինգ նիգ՝ Եւ խորանին մե-  
 կալ քովի տախտակներուն համար հինգ նիգ՝ ու  
 խորանին արեւմտեան կողմը եղած տախտակնե-  
 28 բուն համար հինգ նիգ պիտի ըլլայ : Եւ մէջ  
 տեղի նիգը , «յսինն» տախտակներուն մէջ տեղը  
 եղածը՝ մէկ ծայրէն մէկալ ծայրը պիտի անցնի :  
 29 Եւ տախտակները ոսկիով պիտի պատես , ու  
 անոնց օղակները՝ «յսինն» նիգերուն տեղերը ոս-  
 կիէ պիտի շինես • և նիգերը ոսկիով պիտի պա-  
 30 տես : Եւ պիտի կանգնես խորանը ան ձեւին՝  
 պէս՝ որն որ լեռանը վրայ քեզի ցուցուեցաւ :  
 31 Եւ կապուտակէ՝ ու ծիրանեղոյնէ՝ և կրկնակի  
 կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ՝ վա-  
 րսգուր մը պիտի շինես • անիկայ վարպետի  
 32 գործ քերտւոլէներով պիտի շինես : Եւ անիկայ  
 Սատիմայ զայսինն չորս ոսկիապատ սիւներու վը-  
 րաց պիտի դնես • անոնց \* ճանկերը ոսկի պիտի  
 ըլլան • — չորս արծաթ խարիտիներու վրայ  
 33 պիտի ըլլան : Եւ վարագուրը ճարմանդներէն  
 վար պիտի կախես , ու հոն վարագուրին ներսի  
 կողմը վկայութեան տապանակը պիտի բերես •  
 և վարագուրը ձեղի պիտի բաժնէ սրբութիւնին՝  
 34 ու սրբութեանց սրբութիւնին մէջ տեղը : Եւ  
 քառութիւնը վկայութեան տապանակին վրայ՝  
 սրբութեանց սրբութիւնին մէջը պիտի դնես :  
 35 Եւ վարագուրին դուրսի դին սեղանը , ու սեղանին

\* Ամէ խոյակները

դիմացը խորանին հարաւային կողմը՝ աշտանակը պիտի դնես . ու սեղանը հիւտիսային կողմը պիտի դնես :

Եւ վրանին դրանք համար կապուտակէ՝ ու ծիրաւ 36 նեղոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ՝ ասեղով բանուած դրան վարագուր մը պիտի շինես : Եւ դրան վարագուրի համար 37 Սատիմայ փայտէն հինգ սիւն պիտի շինես . ու զանոնք ոսկիով պիտի պատես , և անոնց ճանկերը ոսկիէ պիտի ըլլան . ու անոնց համար պղինձէ հինգ խարիսխ պիտի ձուլես :

### Գ Լ . Ի Լ :

1 Աղջակէզին սեղանը իրեն գործիքներովը : 2 Խորանին սրահը՝ վարագուրներով ու սիւներով , 18 ու անոր երկայնութիւնը և լայնութիւնը : 20 Եղիտի համար եղ :

Եւ Սատիմայ փայտէն սեղան մը պիտի շինես . 1 երկայնութիւնը հինգ կանգունն ու լայնութիւնը հինգ կանգուն՝ սեղանը քառանկիւն պիտի ըլլայ , և անոր բարձրութիւնը իրեք կանգուն պիտի ըլլայ : Եւ անոր եղջիւրները անոր չորս անկիւնին վրայ պիտի շինես . անոր եղջիւրները իրմէն պիտի ըլլան . ու ան պղինձով պիտի պատես : Եւ անոր մոխիրը ժող- 3 վերու համար անոր թաղարները՝ ու անոր թիակները՝ և անոր կոնքերը՝ ու անոր մսահանները՝ ու անոր կրակի ամանները պիտի շինես . բոլոր անոր գործիքները պղինձէ պիտի շինես : Եւ ան- 4



- նոր ցանցակերպ կասկարայ մը պիտի շինես պը-  
 ղինձէ . ու ցանցին վրայ չորս պղինձէ օղակ  
 5 պիտի շինես անոր չորս անկիւնին մէջ : Աւ պիտի  
 դնես անիկայ սեղանին շրջանակին տակը ներ-  
 քէէն , որ ցանցը գրեթէ սեղանին մէջ տեղը ըլ-  
 6 լայ : Աւ սեղանին համար ձողեր պիտի շինես .  
 ձողերը Սատիմայ փայտէն պիտի ըլլան . ու զա-  
 7 նոնք պղինձով պիտի պատես : Աւ անոր ձողե-  
 րը օղակներուն պիտի անցուին . ու անիկայ վեր-  
 ցունելու համար ձողերը սեղանին երկու քովերը  
 8 պիտի ըլլան : Անիկայ տախտակներէն՝ մէջը  
 դատարկ պիտի շինես . լեռը քեզի ցուցուածին  
 պէս՝ անանկ պիտի շինեն անիկայ :
- 9 Աւ խորանին սրահը պիտի շինես . հարաւային  
 կողմէն՝ սրահին վարագուրները մանուած բա-  
 րակ քթանէ ըլլալով՝ մէկ քովի երկայնութիւնը  
 10 հարիւր կանգուն պիտի ըլլայ : Աւ անոր քսան  
 սիւները ու անոնց քսան խարիսխները պղին-  
 ձէ՝ սիւներուն ճանկերը և անոնց կապերը  
 11 արծաթէ պիտի ըլլան : Աւ նոյնպէս հիւսիսային  
 կողմին երկայնութեանը նայելով՝ վարագուրները  
 հարիւր կանգուն երկան պիտի ըլլան . ու քսան  
 սիւները և անոնց քսան խարիսխները պղինձէ .  
 սիւներուն ճանկերը ու անոնց կապերը արծա-  
 12 թէ պիտի ըլլան : Աւ սրահին լայնութեանը հա-  
 մար՝ արեւմտեան կողմէն վարագուրները յիսուն  
 կանգուն պիտի ըլլան . անոնց սիւները տասը՝  
 ու անոնց խարիսխները տասը պիտի ըլլան :
- 13 Աւ սրահին արեւելեան կողմին համար՝ անոր լայ-

նութիւնք արեւելեան կողմէն յիսուն կանգուն  
 պիտի ըլլայ : Եւ զբաւոյն մէկ քովին վարա- 14  
 գուրները տասնըճինգ կանգուն պիտի ըլլան .  
 անոնց սիւները իրեք՝ ու անոնց խարիսխները ի-  
 րեք ուղիւն ըլլան : Եւ մէկալ քովին վարա- 15  
 գուրները տասնըճինգ կանգուն պիտի ըլլան .  
 անոնց սիւները իրեք՝ ու անոնց խարիսխները  
 իրեք պիտի ըլլան : Եւ սրահին գրանը համար՝ 16  
 կապուտակէն՝ ու ծիրանեզոյնէն՝ և կրկնակի կար-  
 միրէն՝ ու մանուած բարակ քթանէն՝ ասեղով  
 բանուած քսան կանգունի վարագուր մը ուղիւն  
 ըլլան . անոնց սիւները չորս՝ ու անոնց խարիսխ-  
 ները չորս ուղիւն ըլլան : Արահին բոլորաթիւք 17  
 եղած բոլոր սիւները արծաթ կապով՝ ու ան-  
 ոնց ճանկերը արծաթէ՝ և անոնց խարիսխնե-  
 րը պղինձէ պիտի ըլլան : Արահին երկայնու- 18  
 թիւնը հարիւր կանգուն՝ ու լայնութիւնը ա-  
 մէն կողմէն յիսուն՝ և բարձրութիւնը ճինգ  
 կանգուն . շարժողովն մանուած բարակ քթա-  
 նէ պիտի ըլլայ . ու անոնց խարիսխները  
 պղինձէ պիտի ըլլան : Խորանին բոլոր գործիք- 19  
 ները իր ամէն պաշտօնին համար՝ և անոր բոլոր  
 ցիցերը՝ ու սրահին բոլոր ցիցերը պղինձէ պիտի  
 ըլլան :

Եւ դուն պիտի պատուիրես Խարայէլի որդ- 20  
 ւոցը՝ որ ձեռնուած մարուր ձէթ բերեն քեզի  
 լըյսի համար , որ կանթեղները միշտ վառին :  
 Եւ հարօնը ու անոր որդիները ժողովքի խորա- 21  
 նին մէջ՝ վկայութեան առջևի վարագուրին գուր-

«ի դին՝ իրիկուընէ մինչև առաւ Տէրօջը առջևը  
ան լաւ լաւ կարգադրեն . սա՛ննոնց յաւիտենա-  
կան կանոն ըլլայ իրենց ցեղին մէջ Խորայէլի որդ-  
ւոցը համար :

ՊԼ . Ի Ը

1 Եւ զարօնը ա իր տղարները քահանայութեան համար կրնա-  
րուին : 2 Սուրբ զգեստներ շինելու հրամանը : 6 Եփու-  
տը : 15 Տասներկու պատուական քարերով զարդարուած  
լանջապանակը : 30 Սարիմը ու թուամիմը : 31 Եփուտին  
պատմուճանը նուագով և զանգակներով : 36 Խոյրին առ-  
ջևի կողմի թիթեղը : 39 Ակարագործ շապիկը : 40 Եւ զա-  
րօնին տղոցը զգեստները :

1 **Ե**ւ դուն քեզի մօտեցնէր քու եղբայրդ Եւս-  
րօնը՝ ու անոր որդիները իր հետը՝ Խորա-  
յէլի որդւոցը մէջէն , որ ինձի քահանայութիւն  
ընեն . Եւսարօնը և Եւսարօնին որդիները՝ Մա-  
դարը ու Երիուզը՝ Եղիազարը ու Իթամարը :  
2 Եւ քու եղբօրդ Եւսարօնին սուրբ զգեստներ  
3 պիտի շինես պատիւի ու փառքի համար : Եւ  
դուն ըսէ՛ բոլոր իմաստուն միտք ունեցողներուն՝  
որոնք որ ես իմաստութեան հոգիով լեցուցի ,  
Եւսարօնին զգեստները շինեն՝ անիկայ օրէնելու  
4 համար՝ որ ինձի քահանայութիւն ընէ : Եւ  
անոնց շինելու զգեստները ասոնք են . լանջա-  
պանակ՝ ու եփուտ՝ և պատմուճան՝ ու ասեղով  
քանուած շապիկ՝ խոյր՝ և գօտի . և սուրբ  
զգեստներ շինեն քու եղբօրդ Եւսարօնին ու ա-



ները ճարմանդներուն պիտի անցունես :

- 15 Աւ դատաստանի լանջապանակը վարպետի  
 գործ պիտի շինես . անիկայ եփուտին շինուած  
 քին պէս պիտի շինես . ոսկիէ՛ կապուտակէ՛ ու  
 ծիրանեգոյնէ՛ և կրկնակի կարմիրէ՛ ու մանուած  
 16 բարակ քթանէ պիտի շինես : Վառանկիւն ու  
 երկուքի ծալուող պիտի ըլլայ . անոր երկայ-  
 նութիւնը մէկ թիզ՝ ու անոր լայնութիւնը մէկ  
 17 թիզ պէ՛տէ՛ ըլլայ : Աւ անոր մէջ սկունքնե-  
 րու գամուածք ըլլալով՝ չորս կարգ քարեր պի-  
 տի դամես . աւ կարգը՝ սարգիտն , տպագիտն ու  
 18 զմրուխտ՝ առաջին կարգը պիտի ըլլայ : Աւ երկ-  
 րորդ կարգը պիտի ըլլայ կարկեհան՝ շափիւղայ  
 19 ու անդամանդ . Աւ երրորդ կարգը պիտի ըլ-  
 20 լայ գոճազմ՝ սկաս ու մեղեփիկ . Աւ չորրորդ  
 կարգը պիտի ըլլայ յակկնթ՝ կոնգնաքար ու  
 յասպիս . անոնք ոսկի խորշերու մէջ դամուած  
 21 պիտի ըլլան : Աւ քարերը Խարսյէլի որդւոցը  
 անուններուն պէս տասներկուք պիտի ըլլան ,  
 անոնց անուններուն համեմատ՝ ամէն մէկը իր  
 անունովը տասներկու ցեղին համեմատ , կնիք փո-  
 րագրողի գործով փորագրուած պիտի ըլլան :  
 22 Աւ լանջապանակին վրան զուտ ոսկիէ հիւսած  
 23 եղերքի շթաներ պիտի շինես : Աւ լանջապա-  
 նակին վրան երկու ոսկի օղակներ պիտի շինես ,  
 ու ան երկու օղակները լանջապանակին երկու  
 24 ծայրը պիտի դնես : Աւ ան երկու հիւսուած  
 շթաները՝ լանջապանակին ծայրը եղած երկու  
 25 օղակներուն պիտի անցունես : Աւ երկու հիւ-

սուսմ շղթաներուն ճշտ իրիւ ծայրերը՝ ան  
 երկու ճարմանդներուն պիտի անցունես . ու  
 զանոնք եփուտին առջևի կողմէն ուսերուն վրան  
 պիտի դնես : Եւ երկու սկիի օղակներ ալ պի- 26  
 տի շինես . ու զանոնք լանջապանակին ներսի  
 կողմէն՝ եփուտին կցուած եզերքին երկու ծայրե-  
 ըր պիտի դնես : Եւ ուրիշ երկու սկիի օ- 27  
 ղակներ պիտի շինես . ու զանոնք եփուտին եր-  
 կու ուսերուն վարէն՝ անոր առջևի կողմի կցուած-  
 քին մօտ՝ եփուտին ժապաւէնին վրայէն պիտի  
 անցունես : Եւ լանջապանակը իր օղակներէն 28  
 եփուտին օղակներուն կապուտակէ շը-ւո՞ շուա-  
 նով կապեն , որ եփուտին ժապաւէնին վրայ  
 ըլլայ , ու լանջապանակը եփուտէն շղատուի :  
 Եւ Ահարօնը երբոր սրբութիւնը մանայ , Իս- 29  
 րայէլի որդւոցը անունները Տէրոջը առջևը  
 յիշատակի համար՝ իր սրտին վրայ եզած դատաս-  
 տանի լանջապանակին վրայ պիտի կրէ : Եւ դա- 30  
 տաստանի լանջապանակին վրայ \* Աւրիմը ու  
 Թաւմիմը՝ պիտի դնես . և Ահարօն՝ Տէրոջը առ-  
 ջևը երթալու ատենը՝ անոնք իր սրտին վրայ պի-  
 տի ըլլան . ու Ահարօն Տէրոջը առջևը միշտ իր  
 սրտին վրայ պիտի կրէ Իսրայէլի որդւոցը դա-  
 տաստանը :

Եւ եփուտին պատմութեանը բոլորովին 31  
 կապուտակէ պիտի շինես : Եւ անոր մէջ 32  
 տեղը գլուխ անցունելու ճեղքուածք մը պի-  
 տի ըլլայ , ճեղքուածքին բոլորաթիբը զրահի ե-  
 զերքին պէս հիւսուած եզերք ունենայ՝ որ շղատու-

\* Թ՝ լայր և ճշմարտութիւնը

- 33 ուի : Եւ անոր քղանցներուն եզերքը կապու-  
տակէ՝ ու ծիրաննագոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝  
նուռեր պիտի շինես քղանցներուն բոլորախէքը , ու  
անոնց մէջ տեղը շուրջանակի ոսկի զանգակներ :
- 34 Այսամուճանին եզերքին բոլորախէքը ոսկի զանգակ  
մը ու նուռ մը՝ ոսկի զանգակ մը ու նուռ մը պի-  
տի ըլլայ :
- 35 Եւ պաշտօնի համար՝ անիկայ Ահարոնին  
վրան պիտի ըլլայ . ու Տէրոջը առջև  
սրբութիւնը մտած ու ելած ատենը՝ իր ձայնը  
պիտի լսուի որ շմռանի :
- 36 Եւ զուտ ոսկիէ մէկ թիթեղ մը պիտի շի-  
նես , ու անոր վրան կնիք փորագրածնուն պէս
- 37 ՍԸԻՈՒԹՒԻՆՆԵՆ ՏԵՆՈՒՆ փորագրել տաս : Եւ  
կապուտակ ժապաւէն մը անցունես անոր՝ որ խոյ-  
րին վրան դրուի . և խոյրին վրան՝ անոր առ-
- 38 ջնի կողմը ըլլայ : Եւ ան՝ Ահարոնին ճակատին  
վրան պիտի ըլլայ , որ Խարայելի որդւոցը  
նուիրած իրենց բոլոր սուրբ ընծաներուն մեղքը  
Ահարոնը կրէ . ու միշտ իր ճակատին վրան  
պիտի ըլլայ , որ անոնք ընդունելի ըլլան Տէ-  
րոջը առջև :
- 39 Եւ շապիկը բարակ քթանէ նկարէն հիւ-  
սես , ու խոյրը բարակ քթանէ պիտի շինես ,  
և գօտին ասեղով բանուած պիտի շինես :
- 40 Եւ Ահարոնին որդւոցը շապիկներ պիտի շինես ,  
ու անոնց գօտիներ պիտի շինես . և պատիւի  
ու փառքի համար անոնց ապարօշներ պիտի շի-
- 41 նես : Եւ զանոնք քու Ահարոն եղբօրդ ու իր  
հետը իր որդւոցը հագցունես . ու անոնք պի-

տի օձես , և պիտի օրհնես ու սրբես անոնք՝  
որ ինձի քահանայութիւն ընեն :

Եւ անոնց կտաւէ անդրազարտիքներ պիտի<sup>42</sup>  
շինես , իրենց մարմինին մերկութիւնը ծածկելու  
համար . անոնց մեջքերէն մինչև ծունկերնին  
պիտի հասնին : Եւ անոնք Ահարօնին ու իր<sup>43</sup>  
որդւոցը վրան պիտի ըլլան՝ երբոր ժողովքի խո-  
րանը մտնան , կամ երբոր սեղանին մօտենան  
սրբութիւնին մէջ պաշտելու համար , որ ըլլայ  
թէ յանցաւոր ըլլան ու մեռնին . աս՝ յաւիտե-  
նական կանոն մը ըլլայ իրեն ու իրմէ ետքը  
իր սերունդին :

### Գ Լ . Ի Թ

1 Քահանայի օրհնութեան զոհերը ու սրբաօղութիւնները :  
38 Աշունօրհնաւոր ողջակեզը : 45 Ատուած կըխօսուանայ  
բնակիչ Իսրայէլացւոց մէջ :

Եւ աս է որ անոնց պիտի ընես՝ զանոնք սրբ- 1  
բելու համար , որ ինձի քահանայ ըլլան .  
զուարակ մը ու երկու անարատ խոյ պիտի առ-  
նես . Եւ անխմոր հաց՝ ու եղով շաղուած ան- 2  
խմոր շօթեր՝ և եղով օծուած անխմոր լաւաշ-  
ներ առնի . անոնք ցորենի բարակ պլիւրհն պի-  
տի շինես : Եւ սակառի մը մէջ պիտի դնես . 3  
ու անոնք սակառին մէջ , և զուարակը ու երկու  
խոյերը պիտի մատուցանես : Եւ Ահարօն ու 4  
անոր որդիները ժողովքի խորանին դրանը



- պիտի մօտեցունես , ու անոնք ջուրով պիտի  
 5 լուսա : Եւ զգեստները պիտի առնես , ու  
 շապիկը և եփուտին պատմուճանը ու եփուտը և  
 լանջապանակը Ահարօնին պիտի հազցունես . ու  
 եփուտին ժապաւէնովը պիտի գօտեորես զանի-  
 6 կայ : Եւ խոյրը անոր զլուխը պիտի դնես .  
 7 ու խոյրին վրայ սուրբ պօսակը պիտի դնես : Եւ  
 օձման եղը պիտի առնես , ու անոր զլխուն վրայ  
 8 թափելով՝ պիտի օձես զանիկայ : Եւ անոր  
 որդիները պիտի մօտիկցունես , ու անոնց շա-  
 9 պիկներ պիտի հազցունես : Եւ գօտիներով  
 պիտի գօտեորես անոնք՝ ( ք Ահարօնը ու իր  
 որդիները , ) ու անոնց գլուխը ապարօշներ պի-  
 տի դնես : Այսպէս պիտի օրնես Ահարօնը  
 ու անոր որդիները՝ որ քահանայութիւնը անոնցը  
 10 ըլլայ յաւիտենական կանոնով : Եւ զուարակը  
 ժողովքի խորանին առջևը պիտի մօտեցունես .  
 ու Ահարօն և անոր որդիները իրենց ձեռքը  
 11 զուարակին զլխուն վրայ պիտի դնեն : Եւ  
 ժողովքի խորանին դրանը բովը՝ Տէրօջը առջևը  
 12 պիտի մօրթես զուարակը : Եւ զուարակին ա-  
 րիւնէն պիտի առնես՝ ու մատովդ սեղանին եղ-  
 ջիւրներուն վրան պիտի դնես . և հապտ թորթ  
 13 արիւնը սեղանին տակովը պիտի թափես : Եւ փո-  
 րտիքը ծածկող ամէն ճարպը՝ ու լեարդին վրան  
 եղած թաղանթը՝ և երկու երկկամունքը՝ ու ան-  
 ոնց վրան եղած ճարպը պիտի առնես , և ևե-  
 14 զանին վրայ պիտի էրես : Բայց զուարակին  
 միւր ու անոր մօրթը և անոր աղըը բանակին

դուրսի դին պիտի էրես . աս մեղքի պատարագ  
 է : Խոյերուն մէկը պիտի առնես , և Մհարօնը 15  
 ու անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն  
 վրայ պիտի դնեն : Աւ խոյը պիտի մորթես , 16  
 ու անոր արիւնը պիտի առնես՝ և սեղանին վրայ  
 շուրջանակի պիտի սրսկես : Աւ խոյը կտոր կտոր 17  
 պիտի ընես . ու անոր փորոտիքը և անոր  
 ոտքերը պիտի լուսա , ու պաննն անոր կտոր-  
 ներուն և գլխուն վրայ պիտի դնես : Աւ բո- 18  
 լոր խոյը պիտի էրես սեղանին վրայ . աս ու-  
 ջակէզ է Տէրօջը . անուշ հոտով պատարագ  
 մին է Տէրօջը : Աւ մէկալ խոյը պիտի առ- 19  
 նես . ու Մհարօնը և անոր որդիները իրենց  
 ձեռքերը խոյին գլխուն վրայ պիտի դնեն : Աւ 20  
 խոյը պիտի մորթես . ու անոր արիւնէն պիտի  
 առնես՝ և Մհարօնին աջ ահանջին բլթակին  
 վրայ՝ ու անոր որդւոցը աջ ահանջներուն բլթ-  
 թակին վրայ՝ և անոնց աջ ձեռքին մեծ մա-  
 տին վրայ՝ ու անոնց աջ ոտքին մեծ մատին վր-  
 րայ պիտի դնես , և Խոյած արիւնը սեղանին  
 վրայ շուրջանակի պիտի սրսկես : Աւ սեղա- 21  
 նին վրայ եղած արիւնէն ու օճման եղէն պիտի  
 առնես , և Մհարօնին վրան ու անոր զգեստնե-  
 րուն վրան՝ և անոր հետը իր որդւոցը վրան  
 Աւ իր որդւոցը զգեստներուն վրան սրսկես . և  
 անիկայ՝ ու անոր զգեստները՝ և անոր հետը իր  
 որդիները՝ ու իր որդւոցը զգեստները սուրբ  
 ըլան : Աւ խոյէն պիտի առնես ճարպը՝ ու 22  
 դմակը՝ և փորոտիքը ճածկող ճարպը՝ և լեար-

- 7ին շեայն թաղանթը ու երկու երկհամունքը  
 և անոնց վրայ եղած ճարպը ու աջ զխտը .  
 ինչու որ աս աւանանայն օրհնութեան խոյն է :
- 23 Եւ Տէրօջը առջևը եղած անխմոր հացի սակա-  
 ուն մէկ պան հացի՝ ու մէկ եղով հացի շօթ՝ և
- 24 մէկ լաւաշ ունի . Եւ ամէնը Ահարօնին  
 ձեռքը ու անոր որդւոցը ձեռքը պիտի դնես ,  
 և անոնք Տէրօջը առջևը երերցունելու ընծայ
- 25 մատուցանես : Եւ անոնց ձեռքէն առնես զա-  
 նոնք , ու ողջակէզի սեղանին վրայ էրես Տէ-  
 րօջը առջևը անոյշ հոտի համար . ստիկայ պա-
- 26 տարագ մըն է Տէրօջը : Եւ Ահարօնին աւա-  
 նայ օրհնուելուն համար պատրաստուած խոյէն՝  
 երբուճը պիտի առնես , ու ան Տէրօջը առջևը  
 երերցունելու ընծայ մատուցանես . և ան քու
- 27 բաժինդ ըլլայ : Եւ Ահարօնին համար ու  
 անոր որդւոցը համար եղած աւանանայն օրհնու-  
 թեան խոյէն երերցունելու երբուճը ու բարձ-
- 28 րացունելու զխտը պիտի սրբես : Եւ ստիկայ  
 Ահարօնին ու անոր որդւոցը պիտի ըլլայ՝ Իսրա-  
 յէլի որդւոցը կողմանէ յախտենական կանոնով  
 մը . ինչու որ աս բարձրացունելու ընծայ է . և  
 պիտի ըլլայ բարձրացունելու ընծայ՝ Իսրայէլի  
 որդւոցմէն իրենց խաղաղութեան զոհերէն Բու-  
 իրենց բարձրացունելու ընծան դէպի Տէրօջը :
- 29 Եւ Ահարօնին սուրբ զգեստները իրմէն ետքը իր  
 որդւոցը պիտի ըլլան , որ անոնցմով օծուին ,
- 30 ու անոնցմով օրհնուին : Եւ իր տեղը քահա-  
 նայ եզոզ որդին՝ որ պաշտօն մատուցանելու

Համար ժողովքի խորանը՝ սրբարանը պիտի մշտ-  
 նայ , զանոնք եօթը օր պիտի հագնի : Եւ աւ- 31  
 շանայ : օր Նութեան խոյը պիտի առնես՝ ու ա-  
 նոր միսը սուրբ տեղ մը կսկես . Ու Եհարօն 32  
 և անոր որդիքը պիտի ուտեն խոյին միսը ու  
 սակառին մէջի հացը՝ ժողովքի խորանին դրանը  
 քովը : Եւ անոնք պիտի ուտեն ան բաները՝ 33  
 որ իրենց օր Նուկլուն ու սրբուկլուն Համար  
 անոնցմով քաւութիւն խղաւ , և օտարական  
 մը անոնց չպիտի ուտէ . ինչու որ անոնք սուրբ  
 են : Եւ թէ որ օր Նութեան միակն ու հացէն 34  
 մինչև առտու մնայ , աս աւելցածը կրակով պի-  
 տի էրես . ան չպիտի ուտուի , ինչու որ սուրբ  
 է : Եւ Եհարօնին ու անոր որդեոցը բոլոր 35  
 քեզի ապրսպրածիս պէս պիտի ընես . եօթը  
 օրուան մէջ պիտի կատարես անոնց օր Նու-  
 թիւնը :

Եւ օրը մէկ զուարակ մեղքի պատարագ ը- 36  
 նես քաւութեան համար . ու սեղանին համար  
 քաւութիւն ըրած ատենդ պիտի մաքրես սեղանը՝  
 և սուրբ ընելու համար պիտի օծես զանկայ :  
 Սեղանին համար եօթը օր քաւութիւն պիտի 37  
 ընես , ու սուրբ ընես ան . և սեղանը խիստ  
 սուրբ պիտի ըլլայ . ինչ որ սեղանին դպչի՝  
 սուրբ պիտի ըլլայ :

Եւ սեղանին վրայ ընելու զնէ աւ է . Միշա 38  
 սմէն օր մէկ տարեկան երկու գառինք . Մէկ 39  
 գառը առտուանց պիտի մատուցանես , ու մե-  
 կալ գառը իրիկուան դէմ : Եւ մէկ գառին 40

- հետ մէկ հիմննի քառորդ ծեծուած ձէթով շա-  
ղուած մէկ տասանորդ բարակ այլեր, և թա-  
փելու նուէրին համար մէկ հիմննի քառորդ մը
- 41 գինի <sup>հարս-պակու</sup> : Եւ մէկալ գառը իրիկուան  
դէմ պիտի զոհես . ու առտուան հացի ընծային  
պէս և անոր թափելու նուէրին պէս պիտի ը-  
նես . սա անուշահոտ պատարագ մըն է Տէ-
- 42 բոջը : Ես մշտնջենաւոր ողջակէզ պիտի ըլլայ  
Տէրոջը առջևը ժողովքի խորանին գրանը  
հո , ուր որ քեզի պիտի հանդիպիմ՝ քեզի հետ
- 43 խօսելու : Եւ հան Իսրայէլի որդւոցը պիտի  
հանդիպիմ , ու խորանը իմ փառքովս սուրբ  
պիտի ըլլայ :
- 44 Եւ ժողովքի խորանը ու սեղանը սուրբ պի-  
տի ընեմ . Եւ հարօնը ու անոր որդիներն ալ  
պիտի սրբեմ , որ ինձի քահանայութիւն ընեն :
- 45 Եւ Իսրայէլի որդւոցը մէջը պիտի բնակիմ , ու
- 46 անոնց Եստուածը պիտի ըլլամ . Եւ պիտի գիտ-  
նան որ անոնց Տէր Եստուածը ես եմ , որ անոնց  
մէջը բնակելու համար՝ Եգիպտոսի երկրէն  
հանեցի զանոնք : Ես եմ անոնց Եհովայ  
Եստուածը :

## Գ Լ . Լ

1 խունկին սեղանը : 11 Հոգիներուն փրկութեան սուրբը :  
 17 Պղինձէ աւազանը : 22 Օծման սուրբ եղբ : 34 Ենու-  
 շահոտ խունկի բաղադրութիւնը :

Եւ խունկ ծխելու սեղան մը պիտի շինես . 1  
 Սատիմայ փայտէն պիտի շինես ան : Ենոր 2  
 երկայնութիւնը կանգուն մը՝ ու անոր լայնու-  
 թիւնը կանգուն մը՝ քառանկիւն պիտի ըլլայ , և  
 անոր բարձրութիւնը երկու կանգուն . անոր  
 եղջիւրները իրմէն ոչորէ ըլլան : Եւ անոր վրան՝ 3  
 ու անոր քովերը շուրջանակի՝ և անոր եղջիւր-  
 ները զուտ ոսկիով պիտի պատես . ու շուրջա-  
 նակի ոսկի պսակ մը պիտի շինես անոր : Եւ 4  
 երկու ոսկի օղակներ պիտի շինես անոր . պսա-  
 կին տակէն՝ անոր երկու քովերը երկու կող-  
 մերէն պիտի շինես , որ ան՝ անոնցմով վերցուե-  
 լու համար ձողերուն անցնելու տեղերը ըլլան :  
 Եւ ձողերը Սատիմայ փայտէն պիտի շինես , ու 5  
 անոնք ոսկիով պատես : Եւ ան պիտի դնես 6  
 վկայութեանը վրայի քառութիւնին առջևը՝  
 վկայութեան տապանակին քովը եղած վարա-  
 գուրին առջևը , ուր տեղ ես քեզի պիտի հան-  
 դիպիմ : Եւ Եհարօն անոր վրան անոյշ հո- 7  
 տով խունկ պիտի ծխէ . ամէն առտու ճրա-  
 գարանները վառած ստենը՝ հօն խունկ պիտի  
 ծխէ : Եւ Եհարօն իրիկուան դէմ ճրա- 8  
 գարանները վառած ստենը խունկ պիտի ծխէ

- Տէրոջը առջևը՝ խունկ մշտատև ձեր ցեղե-  
 9 բուն մէջ : Ընոր վրան օտար խունկ՝ կամ  
 ողջակէզ կամ հացի ընծայ չպիտի մատուցա-  
 նես . ոչ ալ անոր վրան նուէր պիտի թափես :
- 10 Եւ Ըհարօն տարին անգամ մը անոր եղջիւրներուն  
 վրայ քաւութիւն պիտի ընէ . անիկայ քաւու-  
 թիւններուն մեղքի պատարագին արիւնովը քա-  
 ւութիւն պիտի ընէ տարին անգամ մը անոր վրայ՝  
 ձեր ցեղերուն մէջ . ասիկայ խիստ սուրբ է Տէրոջը :
- 11 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Եր-  
 12 բոր Խորայէլի որդւոցը գումարը առնելու ըլլաս՝  
 իրենց թիւին նայելով , անատենը անոնց ամէն  
 մէկը իր հոգիին փրկանքը պիտի տայ Տէրոջը՝  
 զանոնք թուելու որ ըլլաս . որ անոնց մէջը մահ  
 13 չըլլայ՝ երբոր զանոնք թուելու ըլլաս : Ընոնք աս  
 պիտի տան . Ըմէն մէկը՝ որ անոնց մէջէն կանցնի  
 կըհամրուի , սրբութեան սիկդին նայելով՝ կէս  
 սիկդ արծաթ պիտի ունայ . մէկ սիկդը քսան կերատ  
 14 է . Տէրոջը ընծան կէս սիկդ պիտի ըլլայ : Ը-  
 մէն քսան տարեկանէն ՚ի վեր ըլլողը՝ որ անոնց  
 մէջէն կանցնի կըհամրուի , ու ընծան Տէրոջը  
 15 պիտի տայ : Երբոր ձեր հոգիներուն համար  
 քաւութիւն ընելու Տէրոջը ընծայ տան , կէս  
 սիկդէն ոչ հարուստը աւելի ու ոչ աղքատը  
 16 պակաս պիտի տայ : Եւ Խորայէլի որդիներէն  
 քաւութեան արծաթը պիտի առնես , ու ժողով-  
 քի խորանին պաշտօնին պիտի տաս . որ յիշա-  
 տակ ըլլայ Տէրոջը առջևը Խորայէլի որդւոցը՝  
 ձեր հոգիներուն քաւութիւն ընելու համար :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով 17  
 Վասն լուալու համար պղնձէ աւազան մը պի- 18  
 տի շինես , ու անոր ոտքն ալ պղինձէ ըլլայ .  
 և ժողովքի խորանին ու սեղանին մէջ տեղը պի-  
 տի դնես ան , ու անոր մէջը ջուր պիտի լե-  
 ցունես : Եւ Ըհարօնը ու անոր որդիները ի- 19  
 բնց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան անկից :  
 Երբոր անոնք ժողովքի խորանը մտնալու ըլ- 20  
 լան , կամ երբոր սեղանին մօտիկնալու ըլլան՝  
 պաշտելու -- կրակով Տէրօջը զո՛հ ընելու հա-  
 մար , ջուրով պիտի լուացուին՝ որ չմեռնին .  
 Ըսանկ՝ իրենց ձեռքերը ու ոտքերը պիտի լուան՝ 21  
 որ չմեռնին : Եւ աս իրենց յաւիտենական  
 կանոն մը պիտի ըլլայ , իրեն ալ ու իր սե-  
 րունդին ալ իրենց ցեղերուն մէջ :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Պա- 22  
 տուական համեմներ սնօ քեզի , զուտ զմուս 23  
 հինգ հարիւր «լիլ» , և անոր կէսին չափ՝ այ ինչ  
 երկու հարիւր յիսուն «լիլ» անոյշ հոտով  
 կին ման , ու երկու հարիւր յիսուն «լիլ» ա-  
 նուշահոտ խունկեղէգն , Եւ հինգ հարիւր 24  
 «լիլ» կասիայ՝ սրբութեան սիկզին նայելով , ու  
 մէկ հիմէն ձէթ . Եւ սուրբ օծման եղ պիտի 25  
 շինես ան՝ իւղազործի արհեստով բաղադրուած .  
 անիկայ սուրբ օծման եղ պիտի ըլլայ :  
 Եւ անով պիտի օծես ժողովքին խորանը՝ ու 26  
 վկայութեան տապանակը՝ Եւ սեղանը ու անոր 27  
 ամէն անօթները՝ և աշտանակը ու անոր գործիք-  
 ները՝ և խունկին սեղանը , Եւ ողջակէզին սե- 28



- 29 զանը իր ամէն գործիքներուն հետ մէկ տեղ , և  
 անոնք , որ ամենասուերք ըլլան . ինչ որ անոնց  
 30 սուերք պիտի ըլլայ : Աւ Ահարօնը ու  
 անոր որդիները պիտի օծես , ու սուերք պիտի  
 ընես անոնք , որ ինծի քահանայութիւն ընեն :  
 31 Աւ Իսրայէլի որդւոցը պիտի զուրջես՝ ըսելով :  
 Աս էլ զի ինծի սուերք օծման եղ պիտի ըլլայ ձեր  
 32 ցեղերուն մէջ : Մարդու մարմինի վրայ պիտի  
 չլծափուի՝ ան , և անոր բաղադրութեանը պէս  
 անոր նմանը պիտի չշինէք . աս սուերք է .  
 33 ձեզ՝ սուերք պիտի ըլլայ : Ա՛յլ որ անոր նմանը  
 շինէ , կամ ո՛վ որ անկից օտարականի վրայ  
 դնէ , իր ազգէն պիտի կորսուի :  
 34 Աւ Տէրը ըսաւ Մովսէսին . Քեզի անուշա-  
 հոտ համեմներ ան , այնչէ՛ր ստաշին ու եղունգն  
 և քաղցան , ու անուշահոտ համեմները մա-  
 քուր կնդրուկով . ամէնը հաւասար կշտաքով  
 35 պիտի ըլլան . Աւ անոնք իւղագործի արհես-  
 տով <sup>9</sup> իրար խառնուած՝ անուշահոտ բաղադրու-  
 36 թիւն մը պիտի շինես մաքուր ու սուերք : Աւ  
 անկից ո՛ր ի՞նչ պիտի ձեծես շատ բարակ՝ ու  
 Ժողովքի խորանին մէջը վկայութիւնին առջևը  
 դնես , ուր որ ես քեզի պիտի հանդիպիմ . ան՝  
 37 ձեզի ամենասուերք պիտի ըլլայ : Աւ ան քու  
 շինելու անուշահոտ բաղադրութեանդ արհես-  
 տովը դուք ձեզի համար չպիտի շինէք անկից .  
 ան ձեզի սուերք պիտի ըլլայ Տէրօջը համար :

Ո՛վ որ հաստատելու համար անոր նմանը շինելու 38  
ըլայ , իր ազգէն պիտի կորսուի :

## ԳԼ . ԼԸ

1 Տէրը կընտրէ Բեսելիէլը ու Աղիաբը՝ խորանին գործքերը ը-  
նելու . 12 և շարաթը պահելու պատուերը կընտրողէ :  
18 Մոզսէս երկու տասնուակնները կընդունի :

Սէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ահա՛ 1  
3ուգային ցեղէն Ովրին որդիին Ուրիին որ- 2  
դին Բեսելիէլը անունովը կանչեցի . Եւ Աս- 3  
տուծոյ Հոգիովը՝ իմաստութիւնով ու հանճա-  
րով և գիտութիւնով ու ամէն կերպ ճարտա-  
րութիւնով լեցուցի անիկայ . Որ վարպետի 4  
գործեր նարելով՝ ոսկիով ու արծաթով և  
պղինձով գործէ . Եւ դամելու համար քարեր 5  
բանելով՝ ու փայտեր քանդակելով՝ ամէն  
կերպ արհեստը բանի : Եւ ահա Գաւնին ցեղէն 6  
Աքիսամայիին որդին Աղիաբը տուի անոր հետ .  
ու ամէն իմաստունին սրտին մէջ իմաստութիւնը  
է՞ գրի , որ բոլոր քեզի պատուիրածս ընեն .  
Վոզովքի խորանը և տապանակ ուխտին ու ա- 7  
նոր վրայ եղած քաւութիւնը՝ և խորանին բո-  
լոր կարասիները , Եւ սեղանը ու անոր անօթ- 8  
ները՝ և մարուր աշտանակը իր բոլոր գոր-  
ծիքներովը՝ և խունկին սեղանը , Եւ ողջակէ- 9  
զին սեղանը իր բոլոր գործիքներովը՝ և աւազանը  
ու անոր օտքը , Եւ պաշտօնին զգեստները՝ 10  
ու Ահարօն քահանային սուրբ զգեստները՝ և

- անոր որդւոցը զգեսաները՝ քահանայութիւնը -
- 11 ներու համար : Եւ օժման եղը՝ ու սուրբ աս-  
տուծան համար անուշահոտ խունկը՝ բոլոր քեզի պա-  
տուիրածիս պէս պիտի ընեն :
- 12 Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին և ըսաւ .
- 13 Օգուրց՝ նաև Խորայէլի որդւոցը՝ ըսելով , Են-  
չուշտ իմ շարաթներս պիտի պահէք . ինչու  
որ աս նշան մըն է իմ ու ձեր մէջ տեղը ձեր  
ցեղերուն մէջ , որ գիտնաք թէ ձեզ սուրբը -
- 14 նող Տէրը ևս ևմ : Ուստի շարաթը պիտի  
պահէք . ինչու որ ան ձեզի սուրբ է . ամէն  
ով որ անիկայ պղծէ՝ անշուշտ պիտի մեռնի .  
քանզի ով որ ան օրը գործ մը գործէ , ան  
անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի :
- 15 Վեց օր գործ պիտի գործուի , բայց եօթնե-  
րորդ օրը հանգստեան շարաթը սուրբ պիտի  
ըլլայ Տէրոջը . ով որ շարաթ օրը գործ մը
- 16 գործէ , անշուշտ պիտի մեռցուի : Ենոր հա-  
մար Խորայէլի որդիները պիտի պահեն շարա-  
թը , որ իրենց ցեղերուն մէջ յաւիտենական
- 17 ուխտ մը ըլլայ : Են յաւիտենական նշան մըն  
է իմ ու Խորայէլի որդւոցը մէջ տեղը . քան-  
զի Տէրը վեց օրին մէջ ստեղծեց երկինքը ու  
երկիրը , և եօթներորդ օրը դադարեցաւ ու հան-  
գրտացաւ :
- 18 Եւ երբոր Սինա լեռանը վրայ Սովսէսին հետ  
խօսիլը լմնցուց , վկայութեան երկու տախ-  
տակները տուաւ անոր . Եստուծոյ մատուց  
գրուած՝ քարէ տախտակներ :

## ԳԼ . ԼԲ

1 ժողովուրդը՝ Մովսէսին հեռաւորութեան ժամանակը՝ Ահարոնին որթ մը շինել կուտայ : 7 Եստուած կրքարեանայ ասբանիս վրայ , 11 Բայց Մովսէսին ազաշանքովը բարկութիւնը կը դարարի : 15 Մովսէս լեռնէն կիշնայ իր ձեռքը ունենալով երկու տախտակները , 19 որոնք կը կոտորէ : 20 Այժմը փոշի կը ընէ : 22 Ահարոն զինքը կարդարացունէ : 25 Մովսէս կը պատուիրէ կուսպաշունները մուցունել : 31 ժողովուրդին համար կաղօթէ :

Եւ ժողովուրդը տեսն սլով որ Մովսէսը ուշացաւ 1  
 լեռնէն իջնալու , Ահարոնին քովը ժողովուե-  
 ցան՝ ու ըսին անոր . Ելի՛ր , մեզի աստուածներ  
 շինէ՛ որ մեր առջեւէն երթան . քանզի ան Մով-  
 սէսը՝ ան մեզ Եզխպտոսի երկրէն հանող մար-  
 դը , շէնք գիտեր թէ ի՛նչ եղաւ անոր : Եւ 2  
 Ահարոն ըսաւ անոնց . Չեր կնիկներուն ու ձեր  
 տղաքներուն և ձեր աղջիկներուն ականջները ե-  
 դած ոսկի օղերը հանեցէք ու ինձի բերէք : Եւ 3  
 բոլոր ժողովուրդը իրենց ականջները եղած ոս-  
 կի օղերը հանեցին՝ ու Ահարոնին բերին : Եւ 4  
 անիկայ առաւ անոնց ձեռքէն , ու քանդակագործ  
 տիպով մը շինեց և ձուլածոյ որթ մը ըրաւ :  
 Եւ ըսին . Ո՛վ Ի՛րայէլ , ասոնք են քու աս-  
 տուածներդ՝ որ քեզ Եզխպտոսի երկրէն հանե-  
 ցին : Եւ երբ Ահարոն տեսաւ ասիկայ , 5  
 սեղան մը շինեց անոր առջեւ . և Ահարոն հրա-  
 տ սրակել տուաւ՝ ըսելով , Վաղը տօն է Տէրոջը :  
 Եւ միւս առտուն կանուխ ելան , ու ողջակէզներ 6

մատուցին և խաղաղութեան զոհեր բերին . և ժողովուրդը ուտելու ու խմելու նստեցան , ու խաղաղու ելան :

- 7 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Գնա՛ , իջի՛ր .  
ինչու որ անօրինեցաւ քու ժողովուրդդ՝ որ Ե-  
8 զիպտոսի երկրէն հանեցիր : Ընոնք շուտով  
դուրս ելան ան ճամբայէն՝ որն որ իրենց պա-  
տուիրեցի . իրենց ձուլածոյ որթ շինեցին , և  
անոր երկրպագութիւն ըրին՝ ու անոր զոհեր  
մատուցին՝ ու ըսին . Ո՛վ Իսրայէլ , ասոնք են  
քու աստուածներդ՝ որ քեզ Եզիպտոսի երկրէն  
9 հանեցին : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ես  
տեսայ աս ժողովուրդը , և ահա՛ աս խստապա-  
10 բանոց ժողովուրդ մըն է : Ուտի հիմա թող  
տուր խ՝ որ իմ բարկութիւնս անոնց վրայ բը-  
ւրնկի՛ , ու փճացունեմ անոնք . և քեզ մեծ  
11 ազգ մը ընեմ : Եւ Մովսէս իր Տէր Եստու-  
ծոյն առջևը աղաչեց , ու ըսաւ . Ո՛վ Տէր , ին-  
չո՛ւ քու բարկութիւնդ բուրնկի քու ժողովուր-  
դիդ վրայ , որ Եզիպտոսի երկրէն հանեցիր  
12 մեծ զօրութիւնով ու զօրաւոր ձեռքով : Ին-  
չո՛ւ համար Եզիպտացիները խօսին ու ըսն  
թէ՛ Չարութեան համար հանեց զանոնք՝ որ  
լեռները մեռցունէ , ու անոնք երկրի երեսէն  
փճացունէ . դարձի՛ր քու բարկութեանդ սրբա-  
մտութենէն , ու դադարէ աս չարիքը քու ժո-  
13 ղովուրդիդ վրայ Բեբէլէն : Յիշէ՛ քուկին Եր-  
բահամ՝ Իսահակ ու Իսրայէլ ծառաներդ , ու  
րոնց դուն քու անձովդ երգում ըրիր , ու ը-

սիր անոնց . Չեր սերունդը երկինքին աստ-  
ղերուն պէս պիտի շատցունեմ , և բոլոր աս եր-  
կիրը՝ որուն վրայով խօսեցայ , ձեր սերունդին  
պիտի տամ , ու ան պիտի ժառանգեն յաւի-  
տեան : Եւ Տէրը իր ժողովուրդին ընելու խոր- 14  
հած չարիքէն դադարեցաւ :

Եւ Մովսէս դարձաւ ու լեռնէն իջաւ , ու 15  
վկայութեան երկու տախտակները իր ձեռքն  
էին . տախտակները իրենց երկու քովերէն գը-  
րուած էին . անոնք մէկ կողմէն ու մէկալ կող-  
մէն գրուած էին : Եւ տախտակները Ըստու- 16  
ծոյ գործքն էին . ու տախտակներուն վրայ փո-  
րագրուած գիրը Ըստուծոյ գրածն էր : Եւ 17  
Յետեւ երբ պօռացող ժողովուրդին ձայնը լսեց՝  
ըսաւ Մովսէսին . Բանակին մէջ պատերազ-  
մի ձայն կայ : Եւ անիկայ ըսաւ . աս յաղ- 18  
թողներու աղաղակի ձայն չէ , ոչ ալ յաղ-  
թուածներու աղաղակի ձայն է . հասցաւ խաղի ձայն  
կրլսեմ ես : Եւ եղաւ որ բանակին մօտիկեա- 19  
լով՝ որթը ու պար բռնելները տեսածին պէս ,  
Մովսէսին բարկութիւնը բռնկեցաւ . ու տախ-  
տակները իր ձեռքէն նետեց՝ ու լեռանը վա-  
րի դին կոտորեց անոնք : Եւ անոնց շինած որ- 20  
թը առաւ , ու կրակով էրեց . ու մանրեց փո-  
շի ըրաւ , և ջուրին վրայ ցանեց՝ ու Խորայէլ՝  
որդւոցը խմցուց :

Եւ Մովսէս ըսաւ Ըհարօնին . Ըս ժողովուր- 21  
դը ի՞նչ ըրաւ քեզի , որ անոնց վրայ այսչափ  
ձեծ մեղք մը բերիր : Եւ Ըհարօն ըսաւ . Թնօղ 22

- իմ տիրոջս բարկութիւնը չբռնկի . դուն գիտես աս ժողովուրդը՝ որ չարին հակամիտած են :
- 23 Վանգի ըսին ինծի թէ՛ Մեզի աստուածներ չինէ՛ , որ մեր առջեւն երթան . ինչու որ ան Մովսէսը՝ մեզ Ազիպտոսի երկրէն հանող մար-
- 24 դը՝ չենք գիտեր թէ անոր ինչ եղաւ : Աւես ըսի անոնց . Ո՛վ որ ոսկի ունի , թող հանէ . ու բերին ինծի . և կրակը ձգեցի ան՝ ու
- 25 աս որթը ելաւ : Աւ երբ Մովսէս ժողովուրդին կողոպտուիլը տեսաւ , ինչու որ Ահարոն կողոպտեց անոնք՝ իրենց թշնամիներուն մէջը խայտա-
- 26 ռակ ըլլալու չափ , Անատները Մովսէս բանակին դուռ կայնեցաւ՝ ու ըսաւ . Ո՛վ որ Տէրոջը կողմէն է , ինծի՛ դայ . և Ղէիին բոլոր որդի-
- 27 ները անոր քովը ժողովուեցան : Աւ ըսաւ անոնց . Իսրայէլին Տէր Աստուածը ասանկ կըսէ . Ամէն մարդ իր սուրը թող իր մէջքը դնէ , ու բանակին մէջ դնէ դուռ անցնին դառնան , և ամէն մարդ իր եղբայրը՝ ու ամէն մարդ իր բարեկամը՝ և ամէն մարդ իր դրացին թող մեռ-
- 28 ցունէ : Աւ Ղէիին որդիները Մովսէսին խօսքին պէս ըրին . ու ան օրը ժողովուրդէն իրեք
- 29 հազար մարդու չափ ինկան : Վանգի Մովսէս ըսեր էր թէ՛ Այսօր ամէն մէկը իր որդիին վրայ ու իր եղբօրը վրայ՝ ինքզինքը Տէրոջը նուիրէ՛ , որ ձեր վրայ օրհնութիւն տայ այսօր :
- 30 Աւ եղաւ որ միւս առտուն Մովսէս ըսաւ ժողովուրդին . Գուք մեծ մեղք գործեցիք . ու հիմա Տէրոջը պիտի ելամ , գուցէ քաւութիւն

մը ընեմ ձեր մեղքերուն համար : Եւ Սովսէս<sup>31</sup>  
 դարձաւ Տէրոջը՝ ու ըսաւ . Ո՛հ , աս ժողո-  
 վուրդը մեծ մեղք գործեց , իրեն սակիէ աստուած-  
 ներ շինելով : Բայց հիմա թէ որ անոնց<sup>32</sup>  
 մեղքերը կընեբես՝ նէրէ , թէ չէ՝ կաղաչեմ աւ-  
 րէ իս քու գրած գիրքէդ : Եւ Տէրը ըսաւ<sup>33</sup>  
 Սովսէսին . Ո՛վ որ ինծի մեղանչեց , անիկայ  
 իմ գիրքէս պիտի աւրեմ : Ուստի հիմա գնա՛ ,<sup>34</sup>  
 ժողովուրդը ան տեղը տա՛ր , որն որ քեզի ըսի .  
 ահա իմ հրեշտակս քու առջևէդ պիտի երթայ .  
 բայց այցելութիւն ընելու օրս՝ անոնց մեղքերը  
 իրենց վրայ պիտի բերեմ : Եւ Տէրը զար-<sup>3 5</sup>  
 կաւ ժողովուրդը , Եհարօնին շինած որթը շի-  
 նկնուն համար :

## ԳԼ . ԼԿ

<sup>1</sup> Տէրը շօթարիբ ժողովուրդին հետ երթալու իր առջի խօսան-  
 մանը պէս : <sup>2</sup> Ժողովուրդը աս բանիս վրայ կըտրամի :  
<sup>7</sup> Խորանը բանակէն դուրս կըհանուի : <sup>9</sup> Տէրը դէմ առ դէմ  
 կըխօսի Սովսէսին հետ : <sup>12</sup> Սովսէս կըցանկայ Եստուծոյ  
 փառքը տեսնալու :

Եւ Տէրը ըսաւ Սովսէսին . Ելի՛ր ասկէ դուն<sup>1</sup>  
 ու ժողովուրդն ալ՝ որ Եգիպտոսի երկրէն  
 հանեցիր , ա- գնա՛ ան երկիրը՝ որն որ երգում  
 ըրի Եբրահամին՝ Իսահակին ու Յակոբին՝ ը-  
 սելով , Քու սերունդիդ պիտի տամ ան : Եւ<sup>2</sup>  
 քու առջևէդ հրեշտակ մը պիտի խրկեմ . ու  
 Քանանացին՝ Եմօրհացին և Քետացին՝ ու



- 3 փերեզացին և Խեւացին ու Յերուսացին պիտի վաճառեմ . կաթ ու մեղր բղետոյ երկիրը ոչ ոք էլ չու . ինչու որ ես ձեր \* չետը պիտի չելամ . քանզի դուն խստապարանոց ժողովուրդ մին ես . չըլլայ որ քեզ ճամբուն մէջ փճացունեմ :
- 4 Եւ երբ ժողովուրդը աս չար խօսքերը լսեց , սուգ ըրաւ , և մէկը իր զարդը իր վրան չըրաւ :
- 5 Ինչու որ Տէրը ըսած էր Մովսէսին . Ըսէ՛ Խորայէլի որդւոցը , Գուք խստապարանոց ժողովուրդ մին էք . մէկ բոպէ ձեր մէջը ելլալու ըլլամ , ձեզ պիտի փճացունեմ . ուստի չիմա վրանուդ ձեր զարդերնիդ վերցուցէք , որ ձեզի
- 6 ընելիքս գիտնամ : Եւ Խորայէլի որդիները իրենց զարդերը չանեցին Վորեբ լեռանը քովը :
- 7 Եւ Մովսէս առաւ խորանը՝ ու բանակին դուրսի գին՝ բանակէն չեռու կանգնեց ան , և անոր անունը Երուզելի Խորան դրաւ . Եւ սի որ Տէրը կը խնդրէր , բանակին դուրսի գին ե-
- 8 ղած ժողովքի խորանը կելար : Եւ երբ Մովսէս խորանը կերթար , բոլոր ժողովուրդը կելար , ու ամէն մէկը իր վրանին դուռը կը կայնէր , ու Մովսէսին ետեէն կընայէր , մինչև որ
- 9 անիկայ խորանը կը մտնար : Եւ Մովսէս խորանը մտածին պէս՝ ամպի սիւնը կիջնար ու խորանին դուռը կը կայնէր , և Տէրը Մովսէսին
- 10 կը լսօսէր : Եւ բոլոր ժողովուրդը կը տեսնէր որ ամպի սիւնը խորանին դուռը կը կայնի . ու բոլոր ժողովուրդը կելար՝ և ամէն մէկը իր վրանին

\* Եբր . մէջը

դուռը երկրպագութիւն կընէր : Եւ Տէրը 11  
կըսօսէր Մովսէսին հետ դէմ առ դէմ , ինչ-  
պէս որ մարդ մը իր բարեկամին հետ կըսօսի .  
ու նորէն բանակը կըդառնար . բայց անոր ծա-  
ռան Նաուէին որդին Յեսու պատանին՝ խորանէն  
դուրս չէր ելլար :

Եւ Մովսէս ըսաւ Տէրօջը . Նայէ՛ , դուն 12  
կըսես ինձի , Հանէ՛ աս ժողովուրդը . ու դուն  
ինձի չգիտցուցիր՝ թէ ո՞վ ինձի հետ պիտի խը-  
կես . Աւ ըսիր . Քեզ անունովդ կըճանչնամ ,  
և իմ առջև շնորհք գտար : Աւտի հիմա 13  
կաղաչեմ , թէ որ քու առջևդ շնորհք գտայ ,  
ինձի ցըցուր ուրեմն քու ճամբադ՝ որ ճանչնամ  
քեզ , անանկ որ՝ քու առջևդ շնորհք գտնամ .  
ու միտքդ բեր որ աս ազգը քու ժողովուրդդ է :  
Եւ անիկայ ըսաւ . Իմ ներկայութիւնս 14  
է՛րբ պիտի երթայ , ու քեզ պիտի հանդստա-  
ցունեմ : Եւ Մովսէս ըսաւ անոր . Թէ որ 15  
քու ներկայութիւնդ Տէր է՛րբ չերթայ , մեզ աս  
տեղէն մի հաներ : Քանզի ինչո՞վ պիտի գիտ- 16  
ցուի թէ ես ու քու ժողովուրդդ քու առջևդ  
շնորհք գտանք , չէ՞ որ քուկին մեզի հետ եր-  
թալովդ . այսպէս ես ու քու ժողովուրդդ երկրի  
մրայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զա-  
տուինք : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Ըս բանն 17  
ալ պիտի ընեմ՝ որ դուն ըսիր . ինչու որ իմ  
առջև շնորհք գտար , ու ես քեզ անունովդ  
կըճանչնամ : Եւ անիկայ ըսաւ . Կաղաչե՛մ , 18  
քու փառքդ ցըցուր ինձի . Եւ Տէրը ըսաւ . 19

Իմ բոլոր բարութիւնս քու առջևէդ պիտի  
անցունեմ , ու Տէրօջը անունը քու առջևէդ  
պիտի կանչեմ , և որուն որ պիտի ողորմիմ՝  
կողորմիմ , ու որուն վրայ որ պիտի գլծամ՝ կը  
20 գլծամ : Ու ըսաւ . Գուն իմ երեսս չես  
կրնար տեսնալ . ինչու որ մարդ չկրնար իս  
21 տեսնալ ու ապրիլ : Եւ Տէրը ըսաւ . Եհս  
քովս տեղ մը կայ , ու ժայռին վրայ կայնէ .  
22 Եւ ըլլայ որ երբ իմ փառքս անցնելու ըլլայ ,  
քեզ ժայռին խոռոչին մէջը դնեմ , ու քեզ իմ  
23 ձեռքովս ծածկեմ , մինչև որ ես անցնիմ . Եւ  
իմ ձեռքս պիտի վերցունեմ , ու իմ ետիս պի-  
տի տեսնաս , քայց իմ երեսս պիտի չտեսնուի :

Գ Լ . Լ Գ

1 Մովսէս երկու նոր տախտակներ կը կոփէ : 5 Տէրը իր անունը  
կըհրատարակէ : 8 Մովսէս կազաչէ որ Եստուած իրենց հե-  
տը երթայ : 10 Եստուած աս աղաչանքը կընդունի՝ ու ուխտ  
կրնէ անոնց հետ՝ քանի մը պատուիրանները նորոգելով : 28  
Մովսէս քառասուն օր լեռը մնալէն ետև՝ անկից կիջնայ՝ նոր  
տախտակները իր հետը բերելով , 29 և իր երեսը լուսափայլ  
ըլլալուն համար՝ քոզով մը կըծածկէ :

1 Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Եռջիններուն  
պէս երկու հատ քարէ տախտակներ կոփէ .  
ու ան տախտակներուն վրայ պիտի գրեմ առջի  
տախտակներուն վրայի խօսքերը՝ որ անոնք դուն  
2 կ'օտրտեցիր : Եւ առտուան համար պատրաստ  
եղիր , ու առտուանց Սինա լեռը ելիր , և հոն  
3 լեռանը գլուխը առջևս կայնէ : Ու մէկը պի-

տի չեւայ քեզի հետ , և մէկը պիտի չտեսնուի՝  
բոլոր լեռանը վրայ , ո՛չ ալ ատ լեռանը ստորո-  
տը ոչխար կամ արջառ պիտի արածուի :

Եւ առջիններուն պէս երկու քարէ տախտակ- 4  
ներ կոփեց . ու Սոլսէս առտուանց կանուխ ե-  
լաւ , ու Տէրօջը իրեն պատուիրածին պէս Սի-  
նա լեռը գնաց , և երկու քարէ տախտակները  
իր ձեռքը առաւ : Եւ Տէրը ամպով իջաւ՝ ու հոն 5  
անոր քովը կեցաւ , ու Սոլսէս Տէրօջը անունը  
կանչեց : Եւ Տէրը անոր առջեւն անցաւ , 6  
ու կանչեց . Տէր՝ Տէր Աստուած ողորմած ու  
բարեբար՝ երկայնամիտ և առատ ողորմութիւ-  
նով ու ճշմարտութիւնով , հազարներուն ու 7  
ղորմութիւն ընող՝ չարութիւնը ու անօրէնու-  
թիւնը և մեղքը ներող՝ բոց յանցաւորս ամե-  
նեին անպարտ չթողուր . հայրերուն անօրէ-  
նութիւնը որդիներուն վրայ՝ ու որդւոցը որդի-  
րուն վրայ մինչև իրեք ու չորս ցեղը հատուցա-  
նելով : Եւ Սոլսէս աճապարելով մինչև գե- 8  
տինը խոնարհեցաւ ու երկրպագութիւն ըրաւ ,  
Ու ըսաւ . Ո՛վ Տէր՝ թէ որ հիմա քու առջևդ 9  
չնորհք գտայ , կողուչեմ՝ թող իմ Տէրս մեր  
հետը երթայ . \*ինչու որ՝՝ ասիկայ խտտապարանոց  
ազգ մըն է . և ներէ՛ մեր անօրէնութիւնը ու մեր  
մեղքերը՝ և մեզ քու ժառանգութիւնդ ըրէ :

Եւ Տէրը ըսաւ . Ահա ես ուխտ մը կրնեմ . 10  
բոլոր քու ժողովուրդիդ առջևը՝ ամէն երկրի  
մէջ ու ամէն ազգերու մէջ չեղած սքանչելիք-  
ներ պիտի ընեմ , և բոլոր ժողովուրդը՝ որուն

- մէջն ես գուն, պիտի տեսնան Տէրոջը գործը .  
 քանզի հիանալի է ան բանը՝ որ քեզի պիտի ը-  
 11 նեմ : Միւթք պահէ ինչ որ ես քեզի կը պատուի-  
 րեմ այսօր . ահա՛ պիտի վերնտեմ քու առ-  
 ջեէդ Ամօրհացին ու Վանանացին և Վետա-  
 ցին ու Փերեզացին և Խեացին ու Յերուսա-  
 12 ցին : Օգոյշ կեցիր քու անձիդ , չըլայ՝ որ  
 քու երթալու երկրիդ բնակիչներուն հետ ուխտ  
 ընես , չըլայ՝ որ անիկայ քու մէջ տեղդ որո-  
 13 գայթ ըլլայ : Հապա անոնց բազինները պի-  
 տի կործանէք , ու անոնց կուռքերը պիտի փըշ-  
 րէք , և անոնց անտաղները պիտի կտորտէք :  
 14 Ինչու որ ուրիշ աստուծոյ երկրպագութիւն  
 չպիտի ընես . քանզի Ահուան Մոխանձոտ կը  
 15 կոչուի , և նախանձոտ Աստուած մըն է . Չըլ-  
 լայ՝ որ ան երկրին բնակիչներուն հետ ուխտ ը-  
 նես , և անոնք իրենց աստուածներուն ետեէն  
 երթալով՝ պոռնրկութիւն ըրած ատեննին՝ ու  
 իրենց աստուածներուն զոհ ըրած ատեննին՝ քեզ  
 16 կանչեն , ու գուն անոնց զոհէն ուտես . Աւ չըլլայ  
 որ անոնց աղջիկներէն քու որդիներուդ ինչ առ-  
 նես , ու անոնց աղջիկները իրենց աստուածնե-  
 րուն ետեէն երթալով՝ պոռնրկութիւն ըրած  
 ատեննին՝ քու որդիներուդ ալ պոռնրկութիւն  
 ընել տան իրենց աստուածներուն ետեէն , ու-  
 17 չըլլայ զիստի : Քեզի ձուլածոյ աստուածներ չպի-  
 18 տի շինես : Բաղարջակերաց տօնը պիտի պա-  
 հես . Ապիպ ամսուն ատեննին քեզի պատուի-  
 րածիս պէս՝ եօթը օր անխմոր հաց պիտի ու-

տես . ինչու որ Ապիպ ամսուն մէջ Ազիպտոսէն  
 ելար : Ամէն իւր արդանդը բացողը իմս է . և 19  
 քու անասուններուդ մէջը ամէն արու առջինները՝  
 թէ՛ արջառ ըլլայ և թէ՛ ոչխար՝ իմս է : Բայց 20  
 իշուն առջինները գառնուկով պիտի փրկես . և  
 թէ՛ որ չես փրկեր , անատներ անոր վիզը պիտի  
 կտրես . Քու որդիներուդ ամէն առջինները պի-  
 տի փրկես . ու մէկը իմ առջևս ձեռնունայն չե-  
 րենայ : Այց օր պիտի գործես , ու եօթներ 21  
 րորդ օրը պիտի հանգստանաս . թէ՛ վարուցան  
 ընելու և թէ՛ չնձելու ատները պիտի հանգս-  
 տանաս : Աւ շարաթներուն՝ այսինչ ցօրենի 22  
 հունձքին երախայրիներուն տօնը , ու տարին  
 վերջին՝ արհրիւնէրը ժողվելու տօնը պիտի բռ-  
 նես : Չեր ամէն արու զաւակը տարին իրեք 23  
 անգամ Իսրայէլի Աստուծոյն Ահովայ Տէրօջը  
 առջևը պիտի երևայ : Ինչու որ քու առջևէդ 24  
 ազգերը պիտի մերժեմ , և քու սահման-  
 ներդ պիտի ընդարձակեմ . ու տարին իրեք  
 անգամ քու Տէր Աստուծոյդ առջևը երև-  
 ցած ատենդ՝ մէկը քու երկրիդ չպիտի ցանկայ :  
 Իմ \* զոհերս խմորեալ հացով չպիտի նուիրես՝ 25  
 ու զատկի տօնին զոհը մինչև առտու չպիտի  
 մնայ : Քու երկրիդ արմտիքներուն առջիններ 26  
 րը քու Տէր Աստուծոյդ տունը պիտի բերես :  
 Աւ իր մօրը կաթին մէջ չպիտի եփես :  
 Աւ Տէրը ըսաւ Մովսէսին . Քրէ աս խօս- 27  
 քերը . ինչու որ աս խօսքերովը քեզի հետ ու-

\* Ահ : զոհերուս արեւը խմորեալ հացի վրայ չպիտի թափես

- 28 Իսրայէլին հետ ուխտ ըրի : Եւ անիկայ հոն կեցաւ Տէրոջը հետ քառսուն օր ու քառսուն գիշեր . ոչ հաց կերաւ՝ ոչ ալ ջուր խմեց . Եւ տախտակներուն վրայ ուխտին խօսքերը գրեց՝ այնչէս տասը պատուիրանքները :
- 29 Եւ եղաւ որ երբ Մովսէս Սինա լեռնէն իջաւ՝ վկայութեան երկու տախտակները Մովսէսին ձեռքն էր , լեռնէն իջած ատենը , Մովսէս իր երեսին մօրթը լուսափայլ ըլլալը չէր գիտեր՝
- 30 երբոր Տէրը իր հետը խօսեցաւ : Եւ Եհարօն ու Իսրայէլի բոլոր որդիները տեսան Մովսէսը , ահա՛ անոր երեսին մօրթը լուսափայլ
- 31 էր , ու անոր մօտիկնալու վախցան : Եւ Մովսէս կանչեց անոնք , ու Եհարօն և Ժողովքին բոլոր իշխանները դարձան անոր , ու Մովսէս
- 32 խօսեցաւ անոնց հետ : Եւ անկից ետքը Իսրայէլի բոլոր որդիքը մօտիկցան , ու պատուիրեց անոնց ամէն ինչ որ Տէրը խօսեր էր իրեն հետ Սինա լեռը : Եւ Մովսէս մինչև անոնց հետ խօսիլը լմնցունելը՝ իր երեսը քօղ դրաւ :
- 34 Իայց Մովսէս Տէրոջը առջևը՝ անոր հետ խօսելու մտած ատենը՝ մինչև դուրս ելլալը քօղ կը վերցունէր . Եւ դուրս կելլար ու իրեն պատուիրուածը Իսրայէլի որդւոցը կը խօսէր : Եւ Իսրայէլի որդիները կը տեսնային Մովսէսին երեսը , որ երեսին մօրթը լուսափայլ էր . ու Մովսէս իր երեսը քօղով կը ծածկէր՝ մինչև Ենոր հետ խօսելու մտնալը :

## ԳԼ . ԼԵ

<sup>1</sup> Շարաթը պահելու պատուէրը : 4 Խորանին շինութեանը համար տրուելու բնձաները : 20 Ճողովուրդին բնձայ բերելու յօժարասրտութիւնը : 30 Ենեկէյը ու Աղիարը Խորանին շինութեանը համար ճարտարապետ կրնորուն :

Եւ Մովսէս ժողովեց Խորայէլի որդւոցը բոլոր <sup>1</sup>  
 ժողովքը՝ ու ըսաւ անոնց . Տէրոջը ձեզի  
 պատուիրած խօսքերը ասոնք են , որն որ դուք  
 ընելու էք : Այց օր գործ պիտի գործուի՝ , <sup>2</sup>  
 բայց եօթներորդ օրը սուրբ օր պիտի ըլլայ  
 ձեզի՝ այնչէս հանգստութեան շարաթ Տէրո-  
 ջը . ան օրը գործ գործողը պիտի մեռցուի . Շա- <sup>3</sup>  
 բաթ օրը ձեր բնակարաններուն մէջ կրակ  
 չպիտի վառէք :

Եւ Մովսէս խօսեցաւ Խորայէլի որդւոցը բո- <sup>4</sup>  
 լոր ժողովքին ըսելով , Տէրոջը պատուիրած  
 բանը աս է , Չեր մէջէն բնձայ առէք Տէ- <sup>5</sup>  
 րոջը . ո՛վ որ սրտով կը յօժարի՝ թող անի-  
 կոյ Տէրոջը բնձան բերէ , ոսկի ու արծաթ  
 և պղինձ , Աւ կասպուտակ և ծիրանեգոյն՝ ու <sup>6</sup>  
 կրկնակի կարմիր՝ և բարակ քթան՝ ու սյծի  
 մազ՝ Եւ կարմիր ներկած խոյի մորթեր՝ ու <sup>7</sup>  
 թէհաչի մորթեր՝ և Սատիմայ փայտեր , Աւ <sup>8</sup>  
 ճրագի համար եղ՝ և օժման եղի համար ու  
 անուշահոտ խունկի համար համեմներ , Եւ <sup>9</sup>  
 եղնգնաքարեր ու եփուտին համար և Լանջսպաձ  
 նակին համար գամուելու քարեր Է՛ւ Է՛ր՛ն :  
 Եւ ձեր մէջը ամէն սրտով իմաստուն եղողները <sup>10</sup>



- 11 թող գան, ու Տէրոջը բոլոր պատուիրած բաները շինեն. Խորանը, անոր վրանը ու անոր ծածկոցը, անոր կոճակները ու անոր տախտակները, անոր ձողերը, անոր սիւները և անոր խարիսխները, Տապանակը ու անոր ձողերը,
- 12 քաւութիւնը ու ծածկոցին վարագուրը, Անդանը ու անոր ձողերը, ու անոր բոլոր անօթները, և առաջաւորութեան հացը, Աւ լոյսին աշտանակը ու անոր գործիքները և անոր ճրագարանները, ու լոյսին եղը, Աւ խուռնկին սեղանը ու անոր ձողերը, ու օձման եղը և սնուչահոտ խուռնկը, ու խորանին դրանը վարագուրը:
- 13 Ողջակէզին սեղանը՝ ու անոր պղինձէ ցանցակէրոյ կասկարան, անոր ձողերը՝ ու անոր բոլոր գործիքները, աւազանը ու անոր սաքը, Սրահին վարագուրը՝ անոր սիւները ու խարիսխները, և սրահին դրանը վարագուրը, Խորանին ցիցերը՝ ու սրահին ցիցերը ու անոնց չուանները, Պաշտօնին զգեստները՝ սրբարանին մէջ պաշտելու համար, ու անոնց՝ Ահարօն քահանային սուրբ զգեստները՝ ու անոր որդւոցը զգեստները, որ քահանայութիւն ընեն:
- 20 Աւ Խորայէլի որդւոցը բոլոր ժողովքը Մովսէսին առջևէն գացին: Աւ ամէն յօժարասիրտ եղողը ու ամէն բոլոր հոգիով կամեցողը եկան, ու ժողովքի խորանին գործին համար՝ և անոր բոլոր պաշտօնին համար՝ ու սուրբ զգեստներուն համար՝ Տէրոջը ընծան բերին: Աւ եկան մարգեր ալ ու կնիկներ ալ՝ որչափ որ սրտով կա-

մեցող կային , ու ճարմանդներ և օղեր ու մատ-  
 նիններ և կամարաձև գօտիներ՝ ամէն տեսակ ոսկի  
 ամաններ բերին . ամէն ընծայ բերողը՝ ոսկի  
 ընծայ Բէրտ-Տէրօջը : Աւ ան ամէնը՝ որուն<sup>23</sup>  
 քօյը կը գտնուէր կապուտակ՝ ու ծիրանեգոյն՝ և  
 կրկնակի կարմիր՝ ու բարակ քլթան՝ և այծի մազ՝  
 ու կարմիր ներկած խոյի մորթեր՝ և թէհաշի  
 մորթեր , բերին : Ամէն արծաթ ու պղինձ<sup>24</sup>  
 ընծայ տուողը՝ Տէրօջը ընծան բերաւ , և ո-  
 բուն քօյը որ պաշտօնին ամէն գործին պիտանի  
 Սատիմայ փայտեր կը գտնուէր՝ բերաւ : Աւ<sup>25</sup>  
 ամէն սրտով իմաստուն եղող կնիկները իրենց  
 ձեռքերովը մանեցին , ու իրենց մանած կապու-  
 տակը՝ ծիրանեգոյնը՝ կրկնակի կարմիրը ու բա-  
 րակ քլթանը բերին : Աւ բոլոր սրտով փափա-<sup>26</sup>  
 քող և յաջողակութիւն ունեցող կնիկները այ-  
 ծի մազ մանեցին : Աւ իշխանները՝ եղնդնաքա-<sup>27</sup>  
 րեր ու եփուտին և լանջապանակին համար  
 գամուելու քարեր , Աւ ճրագի համար ու օծ-<sup>28</sup>  
 ման եղի համար և անուշահոտ խունկի համար  
 համմներ ու եղ բերին : Իսրայէլի որդիները<sup>29</sup>  
 յօժարակամ ընծայ բերին Տէրօջը՝ ամէն մարդ  
 ու կնիկ , որ յօժարութիւն ունէին բերելու ա-  
 մէն կերպ գործի համար՝ որն որ Տէրը Մովսէսին  
 ձեռքովը շինուելու պատուիրեց :

Աւ Մովսէս ըսաւ Իսրայէլի որդւոցը . Ահա<sup>30</sup>  
 Տէրը Յուդային ցեղէն Ովրին որդիին Ուրիին  
 որդին Իսակելիէն անունովը կանչեց . Ու Աւ-<sup>31</sup>  
 տուծոյ հոգիովը՝ իմաստութիւնով՝ հանճարով

և գիտութիւնով՝ ու ամէն կերպ ճարտարու-  
 32 թիւններով լեցուց զանիկայ • Որ վարպետի գոր-  
 ծեր նարեկով՝ օսկիի ու արծաթի և պղինձի վը-  
 33 րայ բանի • Եւ գամելու համար քարեր բանի ,  
 ու ամէն կերպ վարպետի գործ ընելու համար  
 34 փայտեր քանդակէ : Եւ անոր սրտին մէջ սոր-  
 վեցունելու խորունկ զրաւ , անորն ալ՝ ու  
 'Իանին ցեղէն Եփսամային որդին Եղիաբինն  
 35 ալ : Արտի իմաստութիւնով լեցուց անոնք , որ  
 քանդակագործի ու վարպետի գործը , և կապու-  
 տակի ու ծիրանեգոյնի՝ կրկնակի կարմիրի և բա-  
 րակ քթանի վրայ ամէն կերպ նկարի գործը , նաև  
 ամէն տեսակ ոստայնանկի գործ գործողներուն և  
 նարքներ նարողներուն գործն ալ գործեն :

ՔԼ • ԼՁ

1 Նճաները վարպետներուն կըլաննեն : 5 Մովսէս կըպա-  
 տուիրէ որ ժողովուրդը ընծայ բերելէն գաղարի : 8 Բերով-  
 բէններով նկարուած վարագուրները : 14 Եւ յի մաղէ վա-  
 րագուրները : 19 Մորթէ ծածկոցները : 20 Տախտակները  
 երկնց խարխոսներովք : 31 նիգերը : 35 Արբարանին վարա-  
 գուրը : 37 'Իրան վարագուրը :

1 Անտոններ Բեսելիէլ ու Եղիաբ և ամէն սրբ-  
 ատով իմաստուն եղողը՝ որոնց որ Տէրը իմաս-  
 տութիւն ու հանճար տուաւ սրբարանին պաշ-  
 տօնին ամէն կերպ գործքերը ընել գիտնալու  
 համար , Տէրոջը բոլոր պատուիրածին պէս գոր-  
 2 ծեցին : Եւ Մովսէս կանչեց Բեսելիէլը ու Ե-

ղիարը և ամէն սրտով իմաստուն եղողը՝ որուն սրտին մէջ Տէրը իմաստութիւն գրաւ, այսինքն ան ամէնը՝ որուն սիրտը կը ի հափաքէր բանելու համար գործի մօտիկնալու : Եւ անոնք առին 3  
Սոլսէսէն սրբարանին շինուելուն համար անոր գործին գործածուելու ընծան՝ որ Իսրայէլի որդիքը բերին . Ու անոնք տակաւին ամէն առտու կամաւոր ընծաներ կը բերէին :

Եւ սրբարանին ամէն գործը բանող բոլոր իմաստուն մարդիկը՝ ամէն մէկը իր ըրած գործէն եկան . Եւ խօսեցան Սոլսէսին՝ ըսելով , 4  
Ժողովուրդը աւելի կը բերէ՝ քան որչափ պէտք էր Տէրօջը պատուիրած շինուելու բաներուն գործին համար : Եւ Սոլսէս պատուիրեց քա- 6  
րող կարգալ բանակին մէջ՝ ըսելով , Եւ ոչ մարդ՝ ոչ ալ կնիկ գործ մը գործեն սրբարանին ընծայի համար . Եւ յսպէս ժողովուրդը ընծայ բերելէն դադարեցան : Եւ ան նիւթերը 7  
բոլոր գործը շինելու բաւական էին , ու աւելի ալ :

Եւ խորանին գործը բանողներէն բոլոր սրտով իմաստուն եղողները՝ մանուած բարակ քթանէն՝ ու կապուտակէն՝ և ծիրանեգոյնէն՝ ու չրկնակի կաթիրէն տասը վարագուր շինեցին . զանոնք վարպետի գործ քերով բէներով շինեցին : Մէկ 9  
վարագուրին երկայնութիւնը քսանուութը կանգուն՝ ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն էր . ամէն վարագուրնեւորուն չափը մէկ էր : Եւ հինգ վարագուրը մէկ զմէկու կցեց , 10

ու յիսկ չինգ վարագուրն ալ մէկզմէկու կցեց :

11 Եւ կցուածքին ծայրի մէկ վարագուրին եզերքին վրայ կապուտակեայ օղակներ շինեց . մէկալ կցուածքին ծայրի վարագուրին եզերքն ալ՝ ա-

12 նանկ ըրաւ : Մէկ վարագուրին վրան յիսուն օղակ շինեց , և մէկալ կցուածքին վրան եղած վարագուրին ծայրն ալ յիսուն օղակ շինեց .

13 օղակները դիմացէ դիմաց էին : Եւ յիսուն հատ կարթածև ոսկի ճարմանդներ շինեց . ու ճարմանդներով վարագուրները մէկզմէկու հետ կոճկեց , անանկ որ խորանը մէկ եղաւ :

14 Եւ խորանին վրայի վրանին համար այծի մաղէ վարագուրներ շինեց . զանոնք տասնըմէկ

15 վարագուր շինեց : Մէկ վարագուրին երկայնու- թիւնը երսուն կանգուն՝ ու մէկ վարագուրին լայնութիւնը չորս կանգուն ըլլալով՝ տասնըմէկ

16 վարագուրին չափը մէկ էր : Եւ չինգ վարագուրները զատ՝ ու վեց վարագուրները զատ կցեց :

17 Եւ կցուածքին ծայրի վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ՝ ու մէկալ կցուածքին ծայրէ վարագուրին եզերքին վրայ յիսուն օղակ շինեց :

18 Եւ յիսուն հատ կարթածև պղինձ ճարմանդներ

1 շինեց , որ վրանը կոճկէ , ու մէկ ըլլայ : Եւ վրանին համար կարմիր ներկուած խոյի մորթե- րէն ծածկոց մը՝ ու անոր վրայէն թէհաշի մոր- թերէն ծածկոց մը շինեց :

20 Եւ խորանին համար Սատիմայ փայտէն կանգ-

21 նած տախտակներ շինեց : Մէկ տախտակին երկայնութիւնը տասը կանգուն՝ և մէկ տախ-

տակին լայնութիւնը մէկ ու կէս կանգուն էր :  
 Ամէն մէկ տախտակ մէկզմէկու քով երկերկու 22  
 ազուցիկ ծայր ունէր . խորանին բոլոր տախ-  
 տակներուն սասնկ ըրաւ : Այլ խորանին տախ- 23  
 տակները սասնկ չինեց . դէպի հարաւ՝ անոր  
 հարաւային կողմին համար քսան տախտակ չէ-  
 նէց : Այլ քսան տախտակներուն տակը քառ- 24  
 սուն արծաթ խարիսխ՝ աչնէն մէկ տախտակին  
 տակը իր երկու ծայրը աչնէն չամար եր-  
 կու խարիսխ՝ ու մէկալ տախտակին տակը  
 իր երկու ծայրը աչնէն չամար երկու խա-  
 րիսխ չինեց : Այլ խորանին մէկալ կողմին հա- 25  
 մար՝ դէպի հիւսիս քսան տախտակ չինեց . Ու 26  
 անոնց քառսուն արծաթ խարիսխ . մէկ տախ-  
 տակին տակը երկու խարիսխ՝ ու մէկալ տախտա-  
 կին տակը երկու խարիսխ չէնէց : Այլ խորա- 27  
 նին ետեին համար դէպի արեւմուտք՝ վեց տախ-  
 տակ չինեց : Այլ խորանին ետեի կողմի անկիւնն- 28  
 ներուն համար երկու տախտակ չինեց : Այլ 29  
 անոնք վարէն կրմիանային , ու վերէն ալ մէկ  
 օղակով մէկ տեղ կրմիանային . երկուքին ալ  
 երկու անկիւններուն սասնկ ըրաւ : Այսպէս 30  
 ութը տախտակ էին . ու անոնց արծաթ խա-  
 րիսխները տասնըվեց խարիսխ էին , ամէն մէկ  
 տախտակին տակը երկերկու խարիսխ ըլլալով :  
 Այլ Սատիմայ փայտէն նիգեր չինեց . խորանին 31  
 մէկ քովի տախտակներուն համար հինգ՝ Ու 32  
 խորանին մէկալ քովի տախտակներուն համար  
 հինգ նիգ՝ և խորանին դէպի արեւմուտք եղած

- ետեի կողմի տախտակներուն համար հինգ նիգ ,  
 33 Եւ տախտակներուն մէջ տեղի նիգը մէկ ծայրէն  
 34 մէկալ ծայրը անցնելու շինեց : Եւ տախտակ-  
 ները ոսկիով պատեց . ու անոնց օղակները ոս-  
 կիէ շինեց նիգերուն տեղը ըլլալու համար . նի-  
 գերն ալ ոսկիով պատեց :
- 35 Եւ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի  
 կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ շինեց  
 վարագուրը . վարպետի գործ քերովըէով շինեց  
 36 անիկայ : Եւ Սատիմայ փայտէն չորս սիւն շի-  
 նեց անոր . ու ոսկիով պատեց զանոնք . անոնց  
 ճանկերը ոսկի էին . և անոնց չորս արծաթ  
 37 խարխախ ձուլեց : Եւ խորանին դրանը համար՝  
 կապուտակէ ու ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ  
 ու բարակ մանուած քթանէ ասեղով բանուած  
 38 դրան վարագուր մը շինեց . Եւ անոր հինգ  
 սիւները ու անոնց ճանկերը շէնէց . և անոնց  
 խոյակները ու անոնց կապերը ոսկիով պատեց .  
 և անոնց հինգ խարխախները պղինձէ էին :

## Գ Լ . Լ Լ

1 Տապանակը : 6 Բաւութիւնը և քերովըները : 10 Սե-  
 զանը իրեն անօթներովը : 17 Աշտանակը իրեն ճրագարան-  
 ներովը ու գործիքներովը : 25 խուռնկի Սեղանը : 29 Օձ-  
 ման եղը ու անուշահոտ խուռնկը :

- 1 Եւ Բնսելիէլ Սատիմայ փայտէն տապանակը  
 շինեց . անոր երկայնութիւնը երկուք ու

կէս կանգուն՝ ու անոր լայնութիւնը մէկ ու կէս  
 կանգուն՝ և անոր բարձրութիւնը մէկ ու կէս  
 կանգուն էր : Աւ ներսէն ու դուրսէն ոսկիով 2  
 պատեց անիկայ . և անոր բոլորտիքը ոսկի  
 շրջանակ մը շինեց : Աւ անոր չորս անկիւննե- 3  
 րուն համար չորս ոսկի օղակներ ձուլեց , յի՛ ա-  
 նոր մէկ կողմէն երկու օղակ՝ ու մէկալ կողմէն  
 երկու օղակ : Աւ Սատիմայ փայտէն ձողեր շի- 4  
 նեց , ու զանոնք ոսկիով պատեց : Աւ ձողերը 5  
 տապանակին քովերը եղած օղակներուն անցուց ,  
 որ տապանակը վերցուի անանցմով :

Աւ զուտ ոսկիէ քաւութիւնը շինեց . անոր 6  
 երկայնութիւնը երկուք ու կէս կանգուն՝ ու ա-  
 նոր լայնութիւնը մէկ ու կէս կանգուն : Աւ 7  
 երկու ոսկիէ քերովրէներ շինեց . զանոնք կաւ-  
 ծոյ շինեց քաւութիւնին երկու ծայրէն : Մէկ 8  
 քերովրէն մէկ քովին ծայրէն՝ ու մէկալ քերով-  
 րէն մէկալ քովին ծայրէն ըլլալով , քերովրէ-  
 ները քաւութիւնին երկու ծայրերէն շինեց : Աւ 9  
 քերովրէները իրենց թևերը վերէն տարածելով՝  
 իրենց թևերովը քաւութիւնը կը ծածկէին , ու  
 անոնց երեսները իրարու լռնայէին , քերովրէնե-  
 րուն երեսները քաւութիւնին վրայ էին :

Աւ Սեղանը Սատիմայ փայտէն շինեց . անոր 10  
 երկայնութիւնը երկու կանգուն , ու լայնու-  
 թիւնը մէկ կանգուն , և բարձրութիւնը մէկ  
 ու կէս կանգուն էր : Աւ զուտ ոսկիով պա- 11  
 տեց ան , ու անոր բոլորտիքը ոսկի շրջանակ մը  
 շինեց : Աւ անոր բոլորտիքն ալ չորս մատնաչափ 12



- սպառուած մը՝ ու սպառուածին բողբոտիքը ոսկի  
 13 շրջանակ մը շինեց : Ալ չորս ոսկի օղակ ձուլեց  
 անոր համար , ու օղակները անոր չորս ոտքին  
 14 քովը չորս անկիւնները դրաւ : Օղակները սպա-  
 ռուածին քովը ըլլալով՝ սեղանը վերցունելու  
 15 համար ձողերուն տեղուանքն էին : Ալ սեղա-  
 նը վերցունելու համար ձողերը Սատիմայ փայ-  
 16 տէն շինեց , ու զանոնք ոսկիով պատեց : Ալ  
 սեղանին վրայ եղած անօթները , անոր սկու-  
 տեղները ու խնկամանները և նուէր մատուցա-  
 նելու գաւաթները ու բաժակները զուտ ոսկիէ  
 շինեց :
- 17 Ալ զուտ ոսկիէ աշտանակը շինեց . կռածոյ  
 շինեց աշտանակը , անոր բունը ու ճիւղերը՝  
 անոր սկահակները՝ գնտակները ու անոր ծա-  
 18 ղիկները իրմէն էին : Ալ անոր քովերէն վեց  
 ճիւղեր կելլային . աշտանակին մէկ քովէն ի-  
 րեք ճիւղ՝ ու աշտանակին մէկալ քովէն իրեք  
 19 ճիւղ . Սէկ ճիւղին վրայ նշաձև իրեք սկա-  
 հակ՝ գնտակով ու ծաղիկով , և մէկալ ճիւ-  
 ղին վրայ նշաձև իրեք սկահակ՝ գնտակով ու ծա-  
 ղիկով . աշտանակէն ելած վեց ճիւղերը ասանկ  
 20 էին : Ալ աշտանակին վրայ գնտակներով ու  
 21 ծաղիկներով նշաձև չորս սկահակ կային : Ալ  
 անկից ելած վեց ճիւղերուն նայելով՝ երկու ճիւ-  
 ղին տակը իրմէն գնտակ մը՝ ու երկու ճիւղին  
 տակը իրմէն գնտակ մը՝ և երկու ճիւղին տակը  
 22 իրմէն գնտակ մը կային : Ընտնց գնտակները

ու ճիւղերը իրմէն էին • ամէնքը կռածոյ զուտ  
 ոսկիէ էին : Եւ անոր եօթը ճրագարանները և 23  
 ունեւիները ու անոր բաղմակալները զուտ ոսկիէ  
 շինեց : Եւ ու անոր բոլոր գործիքները մէկ 24  
 տաղանգ զուտ ոսկիէ շինեց :

Եւ խուճկի սեղանը Սատիմայ փայտէն շինեց • 25  
 անոր երկայնութիւնը կանգուն մը՝ ու անոր լայ-  
 նութիւնը կանգուն մը՝ քառակուսի ըլլալով, և  
 անոր բարձրութիւնը երկու կանգուն էր, անոր  
 եղջիւրները իրմէն էին : Եւ անոր վրան ու 26  
 շուրջանակի բովերը և անոր եղջիւրները զուտ  
 ոսկիով պատեց, և բոլորտիքը ոսկի շրջանակ  
 մը շինեց անոր : Եւ անոր համար՝ անոր 27  
 շրջանակին տակէն՝ անոր երկու բովերը երկու  
 կողմէն երկու ոսկի օղակներ շինեց՝ որ անոնք  
 ձողերուն տեղերը ըլլալով՝ անոնցմով վերցուի :  
 Եւ ձողերը Սատիմայ փայտէն շինեց, ու զա- 28  
 նոնք ոսկիով պատեց : Եւ սուրբ օծման եղը 29  
 ու մաքուր անուշահոտ խուճկը շինեց իւղագործի  
 արհեստով :

## ԳԼ . ԼԸ

1 Ողջակէզին սեղանը : 8 Պղինձէ աւազանը : 9 Սրահը : 21  
 Ժողովուրդին ընծայած բաներուն դումարը :

Եւ ողջակէզի սեղանը Սատիմայ փայտէն շինեց • 1  
 անոր երկայնութիւնը հինգ կանգուն՝ ու ա-  
 նոր լայնութիւնը հինգ կանգուն, քառակուսի

- էր՝ և անոր բարձրութիւնը իրեք կանգուն :
- 2 Եւ անոր եղջիւրները չորս անկիւններուն վրայ շինեց . անոր եղջիւրները իրմէն էին . ու պղինձով պատեց ան :
- 3 Եւ սեղանին բոլոր գործիքները՝ այնչէս թաղարները և թիակները ու կոնքերը և մասհանները ու կրակի ամանները շինեց . անոր բոլոր գործիքները պղինձէ շինեց :
- 4 Եւ սեղանին համար՝ անոր շրջանակին տակէն զրեթէ մէջ տեղը՝ ցանցակերպ կասկարայ մը շինեց պղինձէ :
- 5 Եւ պղինձէ կասկարային չորս անկիւնները չորս օղակներ ձուլեց ձողերուն տեղը ըլլալու համար :
- 6 Եւ ձողերը Սատիմայ փայտէն շինեց , ու զանոնք պղինձով պատեց :
- 7 Եւ ձողերը սեղանին քովերը եղած օղակներուն անցուց , որ անիկայ անոնցմով վերցուի . անիկայ
- 8 տախտակներով շինեց . մէջը դատարկ : Եւ պղինձէ աւազանը ու անոր պղինձէ ոտքը՝ ժողովքի խորանին դուռը խումբերով ժողովուող կնիկներուն հայելներէն շինեց :
- 9 Եւ սրահը շինեց . հարաւային կողմին համար սրահին վարագուրները մանուած բարակ քթանէն ըլլալով՝ հարիւր կանգուն էին . Ընոնց սիւնները քսան՝ ու անոնց պղինձէ խարխոխները քսան էին . սիւններուն ճանկերը ու անոնց կապերը
- 11 արծաթ էին : Եւ հիւսիսային կողմին համար վարագուրները հարիւր կանգուն՝ անոնց քսան սիւնները ու անոնց քսան խարխոխները պղինձ էին , սիւններուն ճանկերը ու անոնց կապերը
- 12 արծաթ էին : Եւ արեւմտեան կողմէն վարա-

գուրները յիսուն կանգուն էին . անոնց սիւները  
 տասը՝ ու անոնց խարիսխները տասը էին . սիւ-  
 ներուն ճանկերը ու անոնց կապերը արծաթ  
 էին : Աւարեելեան կողմին համար Չարագուր-<sup>13</sup>  
 նէրը յիսուն կանգուն էին : Դրանք մէկ 14  
 կողմին վարագուրները տասնըհինգ կանգուն՝ ա-  
 նոնց սիւները իրեք՝ ու անոնց խարիսխները ի-  
 րեք էին , Աւ մէկալ կողմին համար ալ՝ <sup>15</sup> *այնն*  
 սրահին դրանք մէկ կողմէն ու մէկալ կողմէն վա-  
 րագուրները տասնըհինգ կանգուն՝ անոնց սիւ-  
 ները իրեք՝ ու անոնց խարիսխները իրեք էին :  
 Արահին շուրջանակի բոլոր վարագուրները մա-<sup>16</sup>  
 նուած բարակ քթանէ էին : Աւ սիւներուն <sup>17</sup>  
 խարիսխները պղինձէ՝ սիւներուն ճանկերը ու  
 անոնց կապերը արծաթէ՝ և անոնց խոյակները  
 արծաթապատ՝ ու սրահին բոլոր սիւներն ալ ար-  
 ծաթ կապով էին : Աւ սրահին դրանք վարա-<sup>18</sup>  
 գուրը ասեղով բանուած էր՝ կապուտակէ ու  
 ծիրանեգոյնէ և կրկնակի կարմիրէ ու մանուած  
 բարակ քթանէ . երկայնութիւնը քսան կան-  
 գուն՝ և լայնութեանը մէջի բարձրութիւնը սրա-  
 հին վարագուրին համեմատ՝ հինգ կանգուն էր :  
 Աւ անոնց սիւները չորս՝ ու անոնց պղինձէ խա-<sup>19</sup>  
 ռիսխները չորս էին , անոնց ճանկերը արծա-  
 թէ՝ և անոնց խոյակներուն ծածկոցը ու կապե-  
 րը արծաթէ էին : Աւ խորանին ու շուրջա-<sup>20</sup>  
 նակի սրահին բոլոր ցիցերը պղինձէ էին :  
 Ասիկայ է խորանին՝ *այնն* վկայութեան <sup>21</sup>  
 խորանին հաշիւը , որն որ Մովսէսի պատուիրա-

- ծին պէս՝ Ղևտացւոց պաշտօնին համար Եհսարօն քահանային որդին Իթամարին ձեռքովը  
 22 հաշուեցաւ : Աւ Յուդային ցեղէն Ովրին որդիին Ուրիին որդին Բեսելէէլը ըրաւ ան ամէնը՝  
 23 որն որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Աւ վարպետ քանդակագործը՝ և կապուտակով ու ծիրանեղոյնով և կրկնակի կարմիրով ու բարակ քթանով նկարագործողը՝ Գաննին ցեղէն Աքիսա-  
 24 մային որդին Աղիաբը անոր հետն էր : Աս շինուածքին համար գործածուած բոլոր ոսկին՝ այսինքն՝ սրբութիւնին բոլոր շինուածքին նուիրուած ոսկին՝ սրբարանին սիկեղին նայելով , բըսանուինը տաղանդ ու եօթը հարիւր երսուն  
 25 սիկղ էր : Աւ Ժողովուրդէն համբուողներուն արծաթը՝ սրբարանին սիկեղին նայելով՝ հարիւր տաղանդ ու հազար եօթը հարիւր եօթանասունը-  
 26 հինգ սիկղ էր : Վսան տարեկանէն վեր համբուելու անցնողներէն ամէն մէկը պէզա մը՝ ոչնչին սրբութեան սիկեղին նայելով՝ կէս սիկղ  
 27 ըիւր յիսուն հարիւր ըլլալով : Աւ սրբութիւնին խարխախները ու վարագուրներուն խարխախները ձուլելու համար՝ հարիւր տաղանդ արծաթ գնաց . մէկ խարխախը մէկ տաղանդ ըլլալով՝ հարիւր տաղանդէն հարիւր խարխախ էլաւ : Աւ հազար եօթը հարիւր եօթանասունը հինգ «իլեղէն» սիւներուն ճանկերը շինեց . ու անոնց  
 29 խոյակները պատեց , և զանոնք կապեց : Աւ նուիրուած պղինձը եօթանասուն տաղանդ ու

երկու հազար չորս հարիւր սիկղ էր : Եւ 30  
անոնցմէ ժողովքի խորանին դրանք խարխսնն-  
բը՝ ու պղինձէ սեղանը՝ և անոր պղինձէ կասկա-  
րան՝ ու սեղանին բոլոր գործիքները՝ Եւ սրա- 31  
հին բոլորտիքը էղած խարխսնները՝ ու սրահին  
դրանք խարխսները՝ և խորանին բոլոր ցիցերը ու  
սրահին շուրջանակի բոլոր ցիցերը շինեց :

## Գ Լ . Լ թ .

1 Պաշտօնին հանդերձները ու սուրբ զգեստները : 2 Եփու-  
տը : 8 Լանջապանակը : 22 Եփուտին պատմութեանը :  
27 Բարակ քթանէ շապիկները : խոյրը : ապարօշները : 61 :  
30 Սուրբ պսակին թիթեղը : 32 Մովսէս շինուած բա-  
ները տեսնալով՝ կըհաւնի ու գործողները կորհնէ :

Եւ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և կրկնակի 1  
կարմիրէ պաշտօնին զգեստները շինեցին :  
սրբարանին մէջ Տէրը պաշտելու համար . և Ե-  
հարօնին համար սուրբ զգեստներ շինեցին՝ Տէ-  
րոջը Մովսէսին պատուիրածին պէս : Եւ եփուտը 2  
շինեց ոսկիէ՝ կապուտակէ՝ ու ծիրանեգոյնէ՝ և  
կրկնակի կարմիրէ՝ ու մանուած բարակ քթանէ :  
Եւ ոսկին բարակ թիթեղունքներու ձեծեցին , 3  
և թելեր կտրեցին , որ կապուտակով՝ ու ծի-  
րանեգոյնով՝ և կրկնակի կարմիրով՝ ու բարակ  
քթանով վարպետի գործ բանին : Կոճկուող 4  
վահաններ շինեցին անոր՝ այսինքն էրդ-  
համար , ու երկու ծայրէն կըկոճկուէր : Եւ 5  
եփուտին վրայ եղած ժապաւէնը նոյն բանէն էր :

անոր գործքին նայելով ոսկիէ՛ կապուտակէ՛ ու  
 ծիրանեգոյնէ՛ և կրկնակի կարմիրէ՛ ու մանուած  
 բարակ քթանէ էր՝ Տէրոջը Մովսէսին հրամա-  
 6 յածին պէս : Այլ ոսկի խորշերուն մէջ եղնգնա-  
 քարերը գամեցին , ու անոնց վրայ Խորայէլի  
 որդւոցը անունները կնիք փորագրելու պէս փո-  
 7 րագրեցին : Այլ զանոնք եփուտին ուսերուն  
 վրայ դրաւ , ու յիշատակի քարեր ըլլան Խորայէլի  
 որդւոցը , Տէրոջը Մովսէսին պատուիրածին  
 8 պէս : Այլ լանջապանակը ճարտարութեամբ  
 եփուտին գործին պէս ոսկիէ՛ կապուտակէ՛ և  
 ծիրանեգոյնէ՛ ու կրկնակի կարմիրէ՛ և մանուած  
 9 բարակ քթանէ շինեց : Քառանկիւն ու եր-  
 կուքի ծալլուող շինեցին լանջապանակը . մէկ  
 թիզ երկայնութեամբ ու մէկ թիզ լայնու-  
 10 թեամբ՝ երկուքի ծալլուող էր . Այլ անոր վրան  
 չորս կարգ քարեր գամեցին . առ կարգը՝ սար-  
 գիոն , տպազիոն ու զմրութա , առաջին կարգն  
 11 է : Այլ երկրորդ կարգը՝ կարկեհան , շափիւղայ  
 12 ու անդատանգ էր . Այլ երրորդ կարգն էր՝ գո-  
 13 ճազմ , ակատ ու մեղեսիկ . Այլ չորրորդ կարգն  
 էր՝ յակինթ , եղնգնաքար ու յասպիս . անոնք  
 14 ոսկի խորշերու մէջ գամուած էին : Այլ քարե-  
 րը՝ Խորայէլի որդւոցը անուններուն նայելով՝  
 անոնց անուններուն պէս տասներկուք էին . ա-  
 մէն մէկուն անունը տասներկու ցեղերուն հա-  
 մեմատ՝ կնիք փորագրողի գործով փորագրուած  
 15 էր : Այլ լանջապանակին վրայ զուտ ոսկիէ

Հիւսած եզերքի շղթաները շինեցին : Եւ երկու 16  
 ոսկիէ ճարմանդ ու երկու ոսկի օղակ շինեցին .  
 և երկու օղակները լանջապանակին երկու ծայ-  
 րերը դրին : Եւ լանջապանակին երկու ծայ- 17  
 րերը եղած երկու օղակներուն անցուցին ան եր-  
 կու ոսկիէ Հիւսած շղթաները : Եւ երկու 18  
 շղթաներուն ճարմանդները երկու ճար-  
 մանդներուն անցուցին , ու ասոնք եփուտին  
 ուսերուն վրայ՝ անոր առջևի կողմը դրին : Եւ 19  
 «-բէշ երկու ոսկի օղակներ ալ շինեցին , և զա-  
 նոնք լանջապանակին ներսի կողմէն՝ եփուտին  
 կցուած եզերքին երկու ծայրերը դրին : Եւ 20  
 «-բէշ երկու ոսկի օղակներ շինեցին , ու զա-  
 նոնք եփուտին երկու ուսերուն վարէն՝ անոր  
 առջևի կողմի կցուածքին մօտ՝ եփուտին ժապա-  
 ւէնին վրայէն անցուցին : Եւ լանջապանակը իր 21  
 օղակներէն՝ եփուտին օղակներուն կապուտակէ  
 հետեւ չուանով կապեցին , որ եփուտին ժապա-  
 ւէնին վրայ ըլլայ , ու լանջապանակը եփուտէն  
 չզատուի , Տէքոջը Մովսէսին պատուիրածին  
 պէս : Եւ եփուտին պատմուճանը ոտայնանկի 22  
 գործով բոլորովին կապուտակէ շինեց : Եւ 23  
 պատմուճանին մէջ տեղը զբաշի ճեղքուածքին  
 պէս ճեղքուածք մը կար . «- ճեղքուածքին բո-  
 լորակքը հետեւեալ եզերք ունէր՝ որ չպատուի :  
 Եւ պատմուճանին քղանցներուն եզերքին վրայ՝ 24  
 կապուտակէ՝ ու ծիրանեզոյն՝ և կրկնակի  
 կարմիրէ՝ հետեւեալ նուաբ շինեցին : Եւ զուտ 25  
 ոսկիէ զանգակներ շինեցին , ու զանգակները



- նուռերուն մէջ տեղը՝ պատմութեանին քղանց-  
 ներուն եզերքը շուրջանակի նուռերուն մէջը
- 26 գրին : Այստեղ զանազան քղանցներուն եզերքին  
 վրայ՝ շուրջանակի զանգակ մը ու նուռ մը՝ զան-  
 գակ մը ու նուռ մը կ'որ, (պաշտօնին համար)  
 Տէրօջը Մովսէսին պատուիրածին պէս :
- 27 Աւ Ըհարօնին ու անոր որդւոցը համար՝ բա-  
 րակ քթանէ ոստայնանկի գործ շապիկներ շինե-
- 28 ցին : Աւ խոյրը բարակ քթանէ՝ ու հանդէսի  
 ապարօշները բարակ քթանէ՝ ու կտաւեղէն  
 անդրալարտիքները մանուած բարակ քթանէ :
- 29 Աւ գօտին մանուած բարակ քթանէ՝ կապուտա-  
 կէ՝ ծիրանեգոյնէ՝ և կրկնակի կարմիրէ՝ նկարա-  
 գործ շինեցին : Տէրօջը Մովսէսին պատուիրածին
- 30 պէս : Աւ սուրբ պատկին թիթեղը զուտ ոսկիէ  
 շինեցին, ու անոր վրան կնիք փորագրածնուն
- 31 պէս ՍԲԸՈՒԹԻՒՆ ՏԵՆՈՒՆ գրեցին : Աւ  
 անոր կապոյտ ժապուէն մը անցուցին, որ վե-  
 րէն խոյրին վրայ դրուի : Տէրօջը Մովսէսին  
 պատուիրածին պէս :
- 32 Աւտի խորանին՝ այսինչն ժողովքի վրանին բո-  
 լոր գործը լմնցաւ, և Խորայելի որդիները՝ Տէ-  
 րօջը Մովսէսին բոլոր պատուիրածին պէս ըրին .
- 33 անանկ ըրին : Աւ խորանը Մովսէսին բերին .  
 վրանը ու անոր բոլոր գործիքները, անոր ճար-  
 մանգները՝ անոր տախտակները՝ նիզերը և ա-
- 34 նոր սիւնները ու խարիսխները : Աւ կարմիր  
 ներկուած խոյի մորթերէն ծածկոցը՝ ու թե-  
 հաչի մորթերէն էլ ծածկոցը՝ և ծածկոցին

վարագուրը , Վ կայութեան տապանակը ու ա- 35  
 նոր ձողերը և քառութիւնը , Սեղանը ու անոր 36  
 բոլոր անօթները և առաջաւորութեան հացը ,  
 Չուտ ու ի՛նչ աշտանակը իր ճրագարաններովը 37  
 ու ի՛նչ կարգաւ դրուած ճրագարաններովը ու անոր  
 բոլոր գործիքներովը , և լոյսին եղը , Եւ ոսկի 38  
 սեղանը ու օծման եղը՝ և անուշահոտ խունկը՝ ու  
 խորանին դրանք վարագուրը , Պղինձէ սեղանը 39  
 ու անոր պղինձէ կասկարան՝ անոր ձողերը և  
 անոր բոլոր գործիքները՝ աւազանը ու անոր ոտ-  
 քը , Սրահին վարագուրները՝ անոր սիւնները ու 40  
 խարխալները՝ և սրահին դրանք վարագուրը՝ ա-  
 նոր չուանները ու ցիցերը , և խորանին՝ ու ի՛նչ  
 ժողովքի վրանին պաշտօնին համար Էղծ բոլոր  
 կարասիքը , Սուրբ տեղին մէջ պաշտելու համար՝ 41  
 պաշտօնին զգեստները , ու Եհարօն քահանային  
 սուրբ զգեստները , ու անոր որդւոցը զգեստնե-  
 րը , որ քահանայութիւն ընեն : Են ամէ- 42  
 նուն պէս՝ որ Տէրը Սոլսէսին պատուիրեց ,  
 անանկ ըրին Խորայլի որդիները ամէն գործը :  
 Եւ Սոլսէս բոլոր շինուածքին նայեցաւ , և ա- 43  
 հա Տէրոջը պատուիրածին պէս ըրին ան . ա-  
 նանկ ըրին : Եւ Սոլսէս օրձնեց զանոնք :

## Գ Լ . Խ

† Ետուած կը պատուիրէ Մովսէսին որ խորանը կանգնեցունէ :  
 9 և օծէ : 13 ու Եհարօնը և անոր տղաքները քահանայ  
 օրհնէ : 16 Մովսէս աս պատուիրանքները կը կատարէ : 34  
 խորանը ծածկող ամպը :

- 1 **Ս**էրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով ,  
 2 **Ե**ռաջին ամսուն առաջի օրը պիտի կանգնես  
 3 խորանը՝ *מִן־בְּנֵי־יִשְׂרָאֵל* ժողովքի վրանը : **Ս**ւ անոր  
 4 մէջը պիտի դնես վկայութեան տապանակը , ու  
 5 ծածկես տապանակը վարագուրովը : **Ս**ւ սեղա-  
 6 նը ներս պիտի բերես . ու անոր վրայ շարուե-  
 7 լու հողէրը շարես . և աշտանակը պիտի բերես՝  
 8 ու անոր ճրագարանները վառես : **Ս**ւ վկայու-  
 9 թեան տապանակին առջևը պիտի դնես խունկին  
 10 ոսկի սեղանը . ու խորանին դրանը վարագուրը  
 11 դնես : **Ս**ւ խորանին՝ *מִן־בְּנֵי־יִשְׂרָאֵל* ժողովքի վրա-  
 12 նին դրանը առջևը ողջակէզին սեղանը պիտի  
 13 դնես : **Ս**ւ ժողովքի վրանին ու սեղանին մէջ  
 14 տեղը պիտի դնես աւազանը , ու անոր մէջը  
 15 ջուր դնես : **Ս**ւ շուրջանակի սրահը պիտի կանգ-  
 16 նես , ու սրահին դրանը վարագուրը դնես :  
 17 **Ս**ւ օծման եղը պիտի առնես՝ ու խորանը և ա-  
 18 նոր մէջի եղած ամէն բաները օծես . և անիկայ  
 19 ու անոր ամէն անօթները պիտի սրբես , որ  
 20 սուրբ ըլլայ : **Ս**ւ ողջակէզի սեղանը՝ ու անոր  
 21 բոլոր գործիքները պիտի օծես , ու սեղանը սրբես .  
 22 և սեղանը \*ամենասուրբ ըլլայ : **Ս**ւ աւազանը

\*ՎԷՐ . սրբութիւն սրբութեանց

ու անոր ոտքը պիտի օժես , ու սրբես ան : Եւ 12

Եւ Տարօնը ու անոր որդիները ժողովքի խորանին զբանը պիտի մօտիկցունես , ու զանոնք ջրով լուսա : Եւ Եւ Տարօնին պիտի հազցու- 13  
նես սուրբ զգեստները . ու օժես անիկայ , և սրբես անիկայ , որ քահանայութիւն ընէ ինձի :

Եւ անոր որդիներն ալ պիտի մօտիկցունես , 14  
ու անոնց շապիկներ հազցունես : Եւ անոնց 15  
հայրը օժածիդ ' նման' պիտի օժես անոնք , որ քահանայութիւն ընեն ինձի . և անոնց օժումը իրենց ցեղերուն մէջ յաւիտենական քահանայութեան համար պիտի ըլլայ :

Եւ Մովսէս՝ Տէրօջը իրեն բոլոր պատուիրա- 16  
ծին պէս ըրաւ . անանկ ըրաւ : Եւ եղաւ որ 17  
երկրորդ տարին՝ առաջին ամսուն առջի օրը խորանը կանգնուեցաւ : Եւ Մովսէս կանգնեց 18  
խորանը , ու անոր խարիսխները դրաւ , և անոր տախտակները կանգնեցուց , ու անոր նիգերը անցուց ու սիւները կանգնեց : Եւ խո- 19  
րանին վրայ տարածեց վրանը , ու վերէն վրանին ծածկոցը անոր վրան դրաւ՝ ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Եւ վկայու- 20  
թիւնը առաւ՝ ու տապանակին մէջ դրաւ . և ձողերը տապանակին վրայ անցուց , և վերէն տապանակին վրայ քաւութիւնը դրաւ : Եւ 21  
տապանակը խորանին մէջը բերաւ , ու ծածկոցին վարագուրը դրաւ , և վկայութեան տապանակը ծածկեց՝ ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Եւ ժողովքի վրանին մէջ՝ խո- 22

- րանին հիւսիսային կողմը՝ վարագուրին դուրսի  
 23 դին սեղանը դրաւ : Եւ անոր վրան շարուե-  
 լու հացերը շարեց Տէրօջը առջևը , ինչպէս  
 24 որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Եւ ժողով-  
 քի վրանին մէջ՝ սեղանին գիմացը խորանին հա-  
 25 րաւային կողմը դրաւ աշտանակը : Եւ Տէ-  
 րօջը առջևը ճրագարանները վառեց , ինչպէս  
 26 որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Եւ ժողով-  
 քի վրանին մէջ՝ վարագուրին առջևը դրաւ  
 27 ոսկի սեղանը : Եւ անոր վրան անուշահոտ  
 խունկ ծխեց , ինչպէս որ Տէրը Մովսէսին պա-  
 28 տուիրեց : Եւ խորանին դրանը վարագուրը  
 29 դրաւ : Եւ խորանին՝ այսինքն ժողովքի վրա-  
 նին դրանը քօյը ողջակէզին սեղանը դրաւ . ու  
 անոր վրայ ողջակէզը ու հացի ընծան մա-  
 տուց , ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուի-  
 30 րեց : Եւ ժողովքի վրանին ու սեղանին մէջ  
 տեղը դրաւ աւազանը , և անոր մէջը՝ լուացուելու  
 31 համար ջուր դրաւ : Եւ Մովսէս ու Ահարօն  
 և իր որդիները իրենց ձեռքերը ու ոտքերը կը  
 32 լուային . Ժողովքին վրանը մտած ատեննին , և  
 սեղանին մօտիկնալու ատեննին կըլուացուէին ,  
 33 ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեց : Եւ  
 խորանին ու սեղանին բոլորտիքը՝ սրահը կանգ-  
 նեց , և սրահին դրանը վարագուրը դրաւ :  
 Այսպէս Մովսէս Բաբելոն գործը լմնացուց :  
 34 Եւ ամպ մը ծածկեց ժողովքի վրանը , և Տէ-  
 35 րօջը փառքը լեցուց խորանը : Եւ Մովսէս  
 չէր կրնար մանալ ժողովքի վրանը . ինչու որ

ամպը անոր վրան կը կենար , ու Տէրոջը փառ-  
քը լեցուցեր էր խորանը : Այլ Խորայէլի որ-<sup>36</sup>  
դինները իրենց բոլոր ճամբորդութեանը մէջ՝  
երբոր ամպը խորանին վրայէն ելար , անորէնը  
կը չուէին : Այլ թէ որ ամպը չվերնար , մինչեւ<sup>37</sup>  
վերնալու օրը չէին չուեր : Քանցի ցորեկը Տէ-<sup>38</sup>  
րոջը ամպը խորանին վրայ էր , և գիշերը անոր  
վրան կրակ կար , Խորայէլի բոլոր ժողովուր-  
դին առջևը՝ իրենց ամէն ճամբորդու-  
թեանը մէջ :

# Գ Ի Բ Ի Բ Գ Լ Ե Ի Տ Բ Ծ Ի Ո Յ

## Գ Լ Ո Ի Խ Ե

<sup>1</sup> Մոջաններէն , 10 հօտերէն , 14 կամ թուշուններէն ողջակէզ մատուցանելու կանոնները :

- 1 **Ս** Ե Կ Ե ր ր Կ ան Է ց Ե Ծ ր Կ Ե ր ր , ու Ժողովքի խորանէն խօսեցաւ անոր՝ ըսելով , Խօսէ՛ Ի ս-
- 2 ր այլէլի որդւոցը , ու ըսէ՛ անոնց . թէ որ ձեզմէ մէկը անասուններէն ընծայ մատուցանելու ըլլայ Տէրօջը , ձեր ընծան արջառներէն կամ հօտերէն պիտի մատուցանէք :
- 3 Թէ որ անոր ընծան արջառներէն ողջակէզ է , արու անարատ պիտի ըլլայ . ու Ժողովքի խորանին դրանը քովը պիտի մատուցանէ ան՝
- 4 Տէրօջը առջևը ընդունելի ըլլալու համար : Եւ իր ձեռքը ողջակէզին գլխուն վրայ պիտի դնէ , ու ան իրեն քաւութիւն ըլլալու համար ըն-
- 5 դունելի պիտի ըլլայ : Եւ զուարակը պիտի մորթէ Տէրօջը առջևը . ու Մհարօնին որգիքը՝ քահանաները արիւնը պիտի մօտիկցունեն , և Ժողովքի խորանին դրանը քովը եղած սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկեն արիւնը :
- 6 Եւ ողջակէզին մորթը պիտի հանէ , ու կտոր

կտոր պիտի ընէ ողջակէզը : Եւ Ահարօն քա- 7  
 ճանային որդիները սեղանին վրայ կրակ պիտի  
 դնեն , ու կրակին վրայ փայտեր շարեն : Եւ 8  
 Ահարօնին որդիքը քաճանաները՝ սեղանը եղած  
 կրակին վրայի փայտերուն վրայ պիտի շարեն  
 կտորները՝ գլուխը ու ճարպը : Բայց անոր 9  
 փորոտիքը ու ոտքերը ջրով պիտի լուայ , և  
 քաճանան պիտի այրէ ամէնը սեղանին վրայ՝ Տե-  
 րօջը ողջակէզ «- անուշահոտ պատարագ ըլլա-  
 լու համար :

Եւ թէ որ ողջակէզի համար անոր ընծան 10  
 հօտերէն՝ այսինքն ոչխարներէն կամ այծերէն է ,  
 արու անարատ պիտի մատուցանէ ան : Եւ պի- 11  
 տի մօրթէ ան՝ Տերօջը առջևը սեղանին հիւսի-  
 սային կողմը . ու Ահարօնին որդիքը քաճանա-  
 ները սեղանին վրայ շուրջանակի պիտի սրսկեն  
 անոր արիւնը : Եւ կտոր կտոր պիտի ընէ ան՝ գլխո- 12  
 վը ու ճարպովը . և քաճանան սեղանին վրայի  
 կրակին մէջ եղած փայտերուն վրան պիտի շա-  
 րէ անոնք : Եւ փորոտիքը ու ոտքերը ջրով 13  
 պիտի լուայ . ու քաճանան ամէնը պիտի  
 բերէ՝ ու սեղանին վրայ այրէ . աս՝ ողջակէզ  
 ու անուշահոտ պատարագ մըն է Տերօջը :

Եւ թէ որ ողջակէզի համար Տերօջը մատու- 14  
 ցանելու ընծան թռչուններէն է , անատենը ա-  
 նիկայ իր ընծան տատրակներէն կամ աղանիի  
 ձաղերէն պիտի մատուցանէ : Եւ քաճանան սե- 15  
 ղանը պիտի բերէ ան՝ ու անոր գլուխը փրօշնէ ,  
 և սեղանին վրայ պիտի այրէ . ու անոր արիւնը սե-



- 16 զանին Տէ՛լ քովը քամուի : Եւ անոր կտնառքը ու կտնառքին մէջինը պիտի զատէ , և սեղանին արևելեան կողմը կղած մոխրանցը նետէ ան :
- 17 Եւ թեկերէն պիտի պատռէ ան՝ առանց զատելու . ու քահանան պիտի սյրէ զանիկայ սեղանը կղած կրակին վրայի փայտերուն վրայ . աս՝ ողջակէզ ու անուշահոտ պատարագ մըն է Տէրոջը :

## ԳԼ . Բ

1 Հացի ընծան բարակ ալիւրէ՝ եղով ու խունկով պիտի մատուցուէր : 4 Թոնիբրի մէջ , 5 սապակի մէջ , 7 սանի մէջ եփուած շոթեր նուիրելու կերպը : 13 Ամէն հացի ընծան առանց աղի պիտի ըլլայ : 14 Երախայրի պտուղներուն մատուցուիլը :

- 1 Եւ եբբ մէկը հացի ընծայ մատուցանելու ըլլայ Տէրոջը , անոր ընծան բարակ ալիւրէ պիտի ըլլայ . ու անոր վրան եղ պիտի թափէ ,
- 2 և խունկ դնէ վրան : Եւ Ահարօնին որդւոցը քահանաներուն պիտի բերէ ան . ու քահանան անկից իր ձեռքը լեցուն բարակ ալիւրէն ու եղէն առնէ բոլոր խունկին հետ , և յիշատակի համար սեղանին վրայ սյրէ՝ Տէրոջը անուշահոտ պատարագ ըլլալու համար : Եւ հացի ընծայէն մնացածը՝ Ահարօնին ու անոր որդւոցը ղէրի ըլլայ . աս՝ ամենասուբբ պատարագ մըն է Տէրոջը : Եւ թէ որ թոնիբրի մէջ եփած հացի ընծայ մատուցանելու ըլլաս , բարակ ա-

լիւրէ եղով շաղուած անխմոր շօթեր՝ կամ ե-  
 ղով օծուած անխմոր լաւաշներ պիտի ըլլայ :  
 Եւ թէ որ քու ընծադ տապակի վրայ եփուած 5  
 ընծայ է , բարակ ալիւրէ եղով շաղուած անխմոր  
 պիտի ըլլայ : Կտոր կտոր պիտի կտրտես ան , 6  
 ու վրան եղ թափես . աս՝ հացի ընծայ է : Եւ 7  
 թէ որ քու ընծադ սանի Բշլ եփուած ընծայ է ,  
 բարակ ալիւրէ եղով պիտի շինուի : Եւ ա- 8  
 սնցմէ շինուած ընծան Տէրօջը պիտի բերես ,  
 ու քահանային ներկայացունես , և ինքը սեղա-  
 նին մօտիկցունէ ան : Եւ քահանան հացի ըն- 9  
 ծայէն անոր յիշատակը պիտի առնէ , ու սեղա-  
 նին վրայ այրէ՝ Տէրօջը անուշահոտ պատարագ  
 ըլլալու : Եւ հացի ընծայէն մնացածը Եհա- 10  
 րօնին ու անոր որդւօցը պիտի ըլլայ . աս ամե-  
 նասուրբ պատարագ մըն է Տէրօջը : Հացի ըն- 11  
 ծան՝ որ դուք Տէրօջը պիտի մատուցանէք ,  
 խմորեալ չպիտի՝ շինուի . ինչու որ բնաւ պա-  
 տարագի մը համար խմոր ու միզը չպիտի՝ այ-  
 բէք Տէրօջը : Եսոնք իբրև երախայրի ուսու- 12  
 ղէ ընծայ մատուցանէք Տէրօջը . բայց սեղանին  
 վրայ չպիտի՝ այրուին անուշ հոտի համար : Եւ 13  
 քու ամէն հացի ընծայիդ աղ պիտի գնես , ու  
 քու հացի ընծայիդ քու Եստուծոյդ ուխտին ա-  
 ղը պահաս չընես . քու ամէն ընծայովդ աղ ու  
 մատուցանես : Եւ թէ որ ատջի պտուղներուն 14  
 ընծան մատուցանելու ըլլաս Տէրօջը , ատջի  
 պտուղներուն ընծային համար՝ կրակով բոհրած  
 թարմ հասկերէն ծեծուած ցորեն մատուցանես .

15 Եւ անոր վրան եղ պիտի թափես , ու խունկ  
 16 պիտի դնես վրան . աս' հացի ընծայ է : Եւ  
 քահանան անոր ծեծուած ցորենէն ու անոր ե-  
 ղէն՝ անոր բոլոր խունկովը անոր յիշատակը  
 պիտի այրէ՝ պատարագ ըլլալու Տէրոջը :

Գ Լ . Գ

1 Արջառներէն , 6 կամ հօտերէն , 7 թէ՛ գառն , 12 և թէ՛ այծ  
 պիտի մատուցուէր խաղաղութեան զոհին համար :

1 Եւ թէ որ անոր ընծան խաղաղութեան զոհ  
 է , երբոր արջառներէն կը մատուցանէ ,  
 թէ՛ արու ըլլայ՝ և թէ՛ էգ , Տէրոջը առջևը ան-  
 2 արատ պիտի մատուցանէ ան : Եւ իր ձեռքը  
 իր ընծայած անասունին զլխուն վրայ պիտի դնէ ,  
 ու ժողովքի խորանին գուռը մորթէ ան . և  
 3 Եհարօնին որդիքը քահանաները սեղանին վրայ  
 զոհէն պատարագ պիտի մատուցանէ Տէրոջը .  
 այնինքն՝ փորոտիքը ծածկող ճարպը ու փորոտի-  
 4 քին վերը եղած բոլոր ճարպը , Եւ երկու երի-  
 կամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի  
 ճարպը և լեարդին թաղանթը երիկամունքնե-  
 5 բով պիտի փրցունէ . Եւ Եհարօնին որդիքը՝  
 սեղանը եղած կրակին վրայի փայտերուն վրայ  
 ողջակէզով պիտի այրեն ատոնք , անուշահոտ  
 պատարագ ըլլալու Տէրոջը :

Եւ թէ որ խաղաղութեան զոհի համար Տէ- 6  
 րոջը մատուցանելու ընծան հօտերէն է, թէ  
 արու ըլլայ և թէ էգ՝ անարատ պիտի մատու-  
 ցանէ ան : Թէ որ անհկայ իր ընծային համար 7  
 գառն մատուցանէ, Տէրոջը առջևը պիտի բերէ  
 ան, Եւ ձեռքը իր ընծային գլխուն վրայ 8  
 դնէ, ու ժողովքի խորանին առջևը պիտի  
 մորթէ ան. և Ահարօնին որդիքը սեղանին  
 վրայ շուրջանակի պիտի սրսկեն անոր արիւնը :  
 Եւ խաղաղութեան զոհէն պատարագ պիտի մա- 9  
 տուցանէ Տէրոջը. «յօնն» ճարպը ու բոլոր  
 դմակը տակէն փրցունելով, և փորոտիքը ծած-  
 կող ճարպը՝ ու փորոտիքին վերը եղած բոլոր  
 ճարպը, Եւ երկու երիկամունքը ու կուշտին 10  
 վրայ եղած անոնց վրայի ճարպը՝ և լեարդին  
 թաղանթը երիկամունքներով պիտի փրցունէ :  
 Եւ քահանան սեղանին վրայ պիտի սյրէ ասոնք՝ 11  
 Տէրոջը պատարագ ըլլալը :

Եւ թէ որ անոր ընծան այժ է, Տէրոջը 12  
 առջևը պիտի բերէ ան. Եւ իր ձեռքը ա- 13  
 նոր գլխուն վրայ պիտի դնէ, ու ժողովքի խո-  
 րանին առջևը մորթէ ան. և Ահարօնին որ-  
 զիքը քահանաները սեղանին վրայ շուրջանակի  
 սրսկեն անոր արիւնը : Եւ անկից իր պատա- 14  
 րագը պիտի մատուցանէ Տէրոջը, «յօնն» փորո-  
 տիքը ծածկող ճարպը ու փորոտիքին վերը ե-  
 ղած բոլոր ճարպը, Եւ երկու երիկամունքը ու 15  
 կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը՝ և  
 լեարդին թաղանթը երիկամունքներովը պիտի

- 16 փրցունէ : Եւ քահանան սեղանին վրայ պիտի  
այրէ անոնք , անուշահոտ պատարագ լլուր .  
17 ամէն ճարպը Տէրոջն է : Չեր ցեղերուն հա-  
մար ձեր բոլոր բնակարաններուն մէջ յաւիտե-  
նական կանոն ըլլայ , որ ոչ ճարպ ուտէք ոչ ալ  
արիւն :

Գ Լ . Գ

1 Քահանային , 13 Ժողովքին , 22 Իշխանի մը , 27 և հասարակ  
մարդու մը անգիտութեամբ ըրած մեղքին պատարագը :

- 1 Եւ Տէրը խօսեցաւ Մոիսէսին՝ ըսելով . Խօ-  
2 սէ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ . Թիէ որ մէ-  
կը սխալմամբ չընելու բաներուն մէկը ընելով՝  
Տէրոջը պատուիրանքներուն մէկուն դէմ մեղան-  
3 չէ , Թիէ որ օծուած քահանան ժողովուրդը  
յանցաւոր ընելու մեղք մը գործելու ըլլայ , իր  
գործած մեղքին համար անարատ զուարակ մը  
4 մեղքի պատարագ մատուցանէ Տէրոջը : Եւ  
ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը առջևը պիտի  
բերէ զուարակը , ու իր ձեռքը զուարակին գը-  
խուն վրայ դնէ , և Տէրոջը առջևը մորթէ ա-  
5 նիկայ : Եւ օծուած քահանան զուարակին ա-  
րիւնէն պիտի առնէ՝ ու ժողովքի խորանը բերէ  
6 ան : Եւ քահանան իր մատը արիւնը պիտի  
թաթխէ , ու Տէրոջը առջևը՝ սրբարանի վարա-  
գուրին առջևը կօթը անգամ սրսկէ արիւնէն :  
7 Եւ քահանան արիւնէն չէլ իջ պիտի դնէ Տէ-

բոջը առջևը անուշահոտ խունկի սեղանին եղջիւրներուն վրայ, որ ժողովքի խորանին մէջն է. ու զուարակին հասցած բոլոր արիւնը՝ ժողովքի խորանին դրանը քովը եղած ողջակէզի սեղանին յատակը թափէ: Աւ մեղքի պատարագ եղած զուարակին բոլոր ճարպը՝ այսինքն փորոտիքը ծածկող ճարպը՝ ու փորոտիքին վերը եղած բոլոր ճարպը անկից պիտի վերցունէ. Աւ երկու երիկամունքը ու կուշտին վրայ եղած անոնց վրայի ճարպը և լեարդին վրայի թաղանթը երիկամունքներովը պիտի փրցունէ, Խաղաղութեան զոհին արջառէն փրցուցածին պէս. և քահանան ողջակէզի սեղանին վրայ պիտի սյրէ անոնք: Աւ զուարակին մորթը ու անոր բուրբ միսը՝ գլխովը ու ոտքերովը և անոր փորոտիքը ու աղբը, Այսինքն բոլոր զուարակը բանակին դուրսի դին մաքուր տեղ մը՝ մոխիր թափուած տեղը պիտի հանէ, և փայտերուն վրայ կրակով այրէ ան. մոխիր թափուած տեղը այրուի:

Աւ թէ որ Խորայէլին բոլոր ժողովքը Գանդիտութեամբ սխալին, ու Տէրոջը արգիլած բաներէն մէկը ընելով՝ յանցաւոր ըլլան, Արբոր խմացուի ան ըրած մեղքերնին, ժողովքը մեղքի պատարագին համար զուարակ մը պիտի մատուցանէ. ու ժողովքի խորանին առջևը բերէ անիկայ: Աւ ժողովքին ծերերը իրենց ձեռ-

\* Եբբ. սխալին՝ ու ժողովքին աչքէն գազտուկ պահուի բանը

- քերը զուարակին գլխուն վրայ պիտի դնեն Տէրոջը  
 առջևը . ու զուարակը Տէրոջը առջևը պիտի  
 16 մերթուի : Աւ օծուած քահանան զուարակին  
 17 արիւնէն ժողովքի խորանը պիտի բերէ : Աւ  
 քահանան իր մատը արիւնը պիտի թաթխէ ,  
 ու Տէրոջը առջևը՝ վարագուրին առջին եօթը  
 18 անգամ սրակէ : Աւ արիւնէն իջ իջ ժողովքի խո-  
 րանին մէջը Տէրոջը առջևը եղած սեղանին եղ-  
 ջիւրներուն վրայ պիտի դնէ . ու հետոյ՝ բոլոր  
 արիւնը՝ ժողովքի խորանին դրանը քոյք եղած  
 19 ողջակէզի սեղանին յատակը թափէ : Աւ անոր  
 բոլոր ճարպը պիտի տանէ անկից՝ ու սեղանին  
 20 վրայ այրէ : Աւ մեղքի պատարագը եղած զուա-  
 րակին ինչպէս որ բրաւ՝ ասոր ալ անանկ ընէ .  
 ու քահանան անոնց համար քառութիւն ընէ ,  
 21 որ անոնց թողութիւն ըլլայ : Աւ բանակէն  
 դուրս պիտի հանէ զուարակը , ու ինչպէս որ առ-  
 ջի զուարակը այրեց , աս ալ անանկ պիտի այրէ .  
 ժողովքին համար մեղքի պատարագ մըն է աս :  
 22 Արք իշխան մը մեղք գործելու ըլլայ , ու իր  
 Տէր Աստուծոյն արդիլած բաներէն մէկը սխալ-  
 23 մամբ ընելով՝ յանցաւոր ըլլայ , թէ որ իր  
 ըրած մեղքը իրեն ծանուցուի , իրեն համար այ-  
 ծերէն արու անարատ նոխազ մը զոհ պիտի բե-  
 24 րէ : Աւ իր ձեռքը նոխազին գլխուն վրայ պիտի  
 դնէ , ու զանիկոյ Տէրոջը առջևը ողջակէզին  
 մերթուելու տեղը մերթէ . մեղքի պատարագ  
 25 մըն է աս : Աւ քահանան մեղքի պատարագին  
 արիւնէն իր մատովը պիտի առնէ՝ ու ողջակէզի

սեղանին եղջիւրներուն վրայ պիտի դնէ , և անոր  
 հետեւ արիւնը ողջակէզի սեղանին յատակը թա-  
 փէ : Աւ անոր բոլոր ճարպը՝ խաղաղութեան 26  
 զոհին ճարպին պէս՝ սեղանին վրայ պիտի այրէ .  
 ու քահանան անոր մեղքին համար քուութիւն  
 ընէ , և թողութիւն ըլլայ անոր :

Աւ թէ որ երկրին ժողովուրդէն մէկը սխալ- 27  
 մամբ մեղանչէ՝ ու Տէրոջը արգիլած բաներէն  
 մէկը ընելով՝ յանցաւոր ըլլայ , թէ որ իր ը- 28  
 բած մեղքը իրեն ծանուցուի , իր ըբած մեղքին  
 համար իր զոհը այծերէն անարատ էգ այծ մը  
 պիտի բերէ : Աւ իր ձեռքը մեղքի պատարա- 29  
 գին գլխուն վրայ պիտի դնէ , ու մեղքի պատա-  
 րագ եղած անոր ողջակէզներուն մորթուե-  
 լու տեղը մորթէ : Աւ քահանան իր մատովը 30  
 անոր արիւնէն պիտի առնէ՝ ու ողջակէզի սեղա-  
 նին եղջիւրներուն վրայ դնէ , և հետեւ բոլոր  
 արիւնը սեղանին յատակը թափէ : Աւ անոր 31  
 բոլոր ճարպը՝ խաղաղութեան զոհին ճարպը փր-  
 ցուելուն պէս պիտի փրցունէ . ու քահանան ան  
 պիտի այրէ սեղանին վրայ անոյշ հոտի համար  
 Տէրոջը առջևը . և քահանան անոր համար քա-  
 ւութիւն ընէ , ու անոր թողութիւն պիտի ըլ-  
 լայ : Աւ թէ որ մեղքի պատարագի համար 32  
 գան բերելու ըլլայ , էգ անարատ պիտի բե-  
 րէ ան : Աւ իր ձեռքը մեղքի պատարագին գլ- 33  
 խուն վրայ պիտի դնէ , ու ողջակէզներուն մոր-  
 թելու տեղը մեղքի պատարագի համար մորթէ  
 ան : Աւ քահանան իր մատովը մեղքի պատա- 34



րագին արիւնէն պիտի առնէ՝ ու ողջակէզի սեղանին եղջիւրներուն վրան գնէ . և հետոյս քո-  
 35 լոր արիւնը սեղանին յատակը թափէ : Այստեղ  
 զաղութեան զոհէն գառին ճարպը փրցուելուն  
 պէս՝ սառ բոլոր ճարպը պիտի փրցունէ . ու քա-  
 ճանան սեղանին վրայ պիտի սյրէ ան՝ իբրև պա-  
 տարագ Տէրոջը . և քաճանան անոր ըրած մեղ-  
 քին համար քաւութիւն ընէ , ու թողութիւն  
 ըլլայ անոր :

## Գ Լ . Ե

1 Գիտցած բանին վկայութիւն շատ ող մարդուն , 2 անմա-  
 քուր բաներու դպրոցին , 3 սխալմամբ անիրաւ տեղը եր-  
 գում ընողին մատուցանելու յանցանքի պատարագը 6 կամ  
 հօտերէն , 7 կամ թռչուններէն , 11 կամ բարակ ալիւրէ պի-  
 տի ըլլայ : 14 Սուրբ բաներու մէջ յանցաւոր գանուողին  
 պատարագը : 17 Ընդհանրապէս յանցանքի պատարագը :

- 1 Այս թէ որ անձ մը մեղանչէ , զի՞ երգումի ձայնը  
 լսելով՝ վկայ ըլլայ , կամ բռնը տեսած ըլլայ  
 կամ գիտցած , թէ որ չիմացունէ՝ յանցանքը
- 2 ինքը պիտի կրէ : Այս անձ մը պիղծ բանի  
 մը՝ կամ պիղծ գազանի մը դիին՝ կամ պիղծ  
 անասունի մը դիին՝ կամ պիղծ սողուններուն դիին  
 դպչելու ըլլայ , թէպէտև չգիտնալով , անի-  
 կայ պիղծ ու յանցաւոր ոլորէ՝ « Երբ » : Այս  
 մարդու պղծութեան՝ սր և իցէ պիղծ ընող  
 պղծութեան դպչելու ըլլայ չգիտնալով՝ ինքը  
 ան գիտցած ստենը՝ յանցաւոր պիտի ըլլայ :

Կամ անձ մը՝ չարիք կամ բարիք ընելու համար 4  
 եւ բերնովը զուրցելով՝ երդում ընելու ըլլայ ,  
 ինչպէս որ մարդիկ երդումով կը զրուցեն , թէ  
 որ չգիտնալով ըլլայ , ինքը ան գիտցած ատենը  
 յանցաւոր պիտի ըլլայ : Աւ թէ որ աս բաներէն 5  
 մէկուն մէջ յանցաւոր ըլլայ , անոր համար իր  
 մեղք գործելը խոստովանի . Աւ իր ըրած մեղքին 6  
 համար իր յանցանքին պատարագը՝ հօտերէն էգ  
 մը , ց՛ր էգ գառնուկ մը՝ կամ այծերէն էգ ու մը  
 մեղքի պատարագի համար պիտի բերէ Տէրոջը .  
 ու քահանան քաւութիւն ընէ անոր՝ իր մեղքին  
 համար : Աւ թէ որ ոչխար կամ այծ բերելու 7  
 կարող չէ , իր ըրած յանցանքին համար երկու  
 տատրակ կամ երկու աղանձի ձագեր պիտի բե-  
 րէ Տէրոջը . մէկը՝ մեղքի պատարագ , և մէկը  
 ողջակէզ ըլլալու համար : Աւ քահանային 8  
 պիտի բերէ զանոնք , ու անիկայ նախ՝ մէկը որ  
 մեղքի պատարագ է՝ պիտի մատուցանէ . և անոր  
 դուխը իր վիզէն չղատելով՝ ոլըրէ : Աւ մեղքի 9  
 պատարագին արիւնէն սեղանին մէկ քովը պիտի  
 սրսկէ , ու մնացած արիւնը սեղանին յատակը  
 պիտի քամուի . աս՝ մեղքի պատարագ է : Աւ մէկա- 10  
 լը՝ ըստ օրինի ողջակէզ պիտի ընէ . ու քահանան  
 անոր քաւութիւն ընէ իր ըրած մեղքին համար ,  
 և անոր թողութիւն ըլլայ : Աւ թէ որ երկու 11  
 տատրակ կամ երկու աղանձի ձագեր բերելու  
 կարող չըլլայ , անատենը մեղք գործողը իր զո-  
 հին համար բարակ սլիւրէ արդուի մը տանե-  
 րորդ բաժինին չափովը՝ մեղքի պատարագ պիտի

- բերէ . ոչ անոր վրայ եղ զնէ՝ ոչ ալ վրան  
խունկ զնէ . ինչու որ մեղքի պատարագ է ան :
- 12 Եւ քահանային պիտի բերէ ան , ու քահանան  
անկից իր ձեռքը լեցուն անոր յիշատակին համար  
առնէ , ու սեղանին վրան պրէ Տէրօջը պատա-  
րագներուն պէս . մեղքի պատարագ է ան :
- 13 Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ անոր՝ աս  
բաներուն մէկուն մէջ ըրած մեղքին համար , ու  
անոր թողութիւն ըլլայ . և հարցօքը հացի  
ընծայի պէս քահանային պիտի ըլլայ :
- 14 Եւ Տէրը խօսեցաւ Վովսէսին՝ ըսելով , թէ  
15 որ անձ մը անօրէնութիւն մը ընէ՝ ու սխալմամբ  
Տէրօջը սուրբ բաներուն մէջ մեղք գործէ , իր  
յանցանքին զոհին համար սրբարանին սիկեղին  
նայելով՝ քու արժեցուցածիդ չափ սիկեղի արծա-  
16 թով՝ անարատ խոյ մը պիտի բերէ : Եւ սուրբ  
բաներուն մէջ իր ըրած վնասը պիտի հատու-  
ցանէ , ու անոր վրան հինգերորդ մաս մին ալ  
աւելցունէ , և քահանային տայ ան . ու քա-  
հանան յանցանքի պատարագին խոյովը քաւու-  
թիւն ընէ անոր , և թողութիւն ըլլայ անոր :
- 17 Եւ թէ որ անձ մը մեղք գործէ՝ ու Տէրօջը  
պատուիրանքներուն մէկը չպահէ՝ արգիլուած  
բան մը ընելով , թէև անգիտութեամբ ըլ-  
լայ , յանցաւոր է ու իր անօրէնութիւնը պիտի  
18 կրէ : Եւ արժեցուցածիդ պէս՝ յանցանքի պա-  
տարագին համար հօտերէն անարատ խոյ մը  
պիտի բերէ քահանային . ու քահանան անոր  
համար քաւութիւն պիտի ընէ՝ անոր անգիտու-

Թեամբ սխալելուն համար, և թողու թիւն ը-  
լայ անոր: Ես՝ յանցանքի պատարագ է. անիկայ 19  
անշուշտ յանցաւոր եղած է Տէրոջը առջևը:

## ԳԼ . Գ

<sup>1</sup> Գիտու թեամբ դործուած մեղքին համար յանցանքի պատարագը: 8 Ողջակէզին, 14 ու հացի ընծային կանոնը: 19 Վասն հանայի օրհնութեան համար ըլլալու պատարագը: 24 Սեզքի պատարագին կանոնը:

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ընելով, թէ 1  
որ անձ մը մեղանչէ ու Տէրոջը դէմ անօ- 2  
րէնութիւն ընէ, և իր դրացիին աւանդը՝ կամ  
անոր իր ձեռքը յանձնած բանը՝ կամ անոր  
յափշտակած բանը ուրանալու ըլլայ, կամ իր  
դրացիին խարդախութիւն ընելու ըլլայ, կամ 3  
կորսուած բանը գտնայ, և ուրանալով ան՝ սուտ  
տեղը երդում ընէ, բոլոր աս բաներուն մէկուն  
մէջ՝ (որ մարդ կրնայ ընել,) մեղանչելու ը- 4  
լայ, Ենատենը մեղք դործելուն ու յանցաւոր  
ըլլալուն համար՝ բռնութեամբ յափշտակած  
բանը՝ կամ խարդախութեամբ առած բանը՝ կամ  
իրեն յանձնուած աւանդը՝ կամ գտած կորուստը  
ես պիտի տայ. կամ ամէն բան՝ որուն համար 5  
սուտ տեղը երդում ըրած է, անիկայ լման հա-  
տուցանէ, ու անոր վրան հինգին մէկ ալ աւել-  
ցունէ. և ան Բանը որին որ կը վերաբերէր՝ իր  
յանցանքի պատարագին օրը անոր պիտի տայ:  
Եւ իր յանցանքին պատարագը Տէրոջը պիտի 6  
Բերէ, այնինքն՝ հօտերէն անարատ խոյ մը,

- քու արժեցուցածիդ չափ, քահանային պիտի բե-  
 7 բէ յանցանքի պատարագին համար : Եւ քա-  
 հանան անոր համար քաւութիւն պիտի ընէ  
 Տէրօջը առջևը . և ինչ յանցանք որ ըրաւ,  
 թողութիւն պիտի ըլլայ անոր :
- 8 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով,  
 9 Պատուիրէ՛ Ըհարօնին ու անոր որդւոցը՝ և ը-  
 սէ . Ողջակէզին օրէնքը աս է . ողջակէզը բոլոր  
 գիշերը մինչև առտու սեղանին վրայ եղած  
 կրակին մէջ պիտի ըլլայ, ու սեղանին կրակը  
 10 հէշտ անոր մէջ վառած պիտի մնայ : Եւ քա-  
 հանան իր քթանէ պատմուճանը պիտի հագնի,  
 ու իր քթանէ վարտիքը մարմինին վրայէն հագ-  
 նի, և ողջակէզին կրակով այրուած մոխիրը սե-  
 ղանին վրայէն պիտի վերցունէ՝ ու սեղանին  
 11 քովը գնէ : Եւ իր զգեստները պիտի հանէ՝ և  
 ուրիշ զգեստներ հագնի . ու մոխիրը բանակէն  
 12 դուրս մաքուր տեղ մը պիտի հանէ : Եւ սե-  
 ղանին վրայի կրակը անոր մէջ հէշտ վառած պի-  
 տի ըլլայ, — չպիտի մարի . և քահանան ամէն  
 առտու անոր վրայ փայտեր սյրէ, ու անոր  
 վրան ողջակէզը շարէ, և անոր վրան խաղաղու-  
 13 թեան զոհերուն ճարպը պիտի սյրէ : Արակը՝  
 սեղանին վրայ միշտ վառած պիտի ըլլայ, ու  
 չպիտի մարի :
- 14 Եւ հացի ընծային օրէնքը աս է . Ըհարօ-  
 նին որդիքը պիտի մատուցանեն ան՝ Տէրօջը  
 15 առջևը՝ սեղանին առջին : Եւ իր ձեռքը լե-  
 ցուն անկից՝ այնին հացի ընծային բարակ

ալիւրէն ու անոր եղէն՝ և հացի ընծային վրայ  
 եղած բոլոր խունկը պիտի վերցունէ, և անոր  
 յիշատակը սեղանին վրայ անոյշ հոտի համար  
 այրէ Տէրոջը : Եւ անկից մնացածը Եհ-16  
 բօնը ու անոր որդիները պիտի ուտեն . անխմոր  
 հացեր շէն-է-լը՝ սուրբ տեղը պիտի ուտուի  
 ան . Ժողովքի խորանին սրահին մէջ ուտեն  
 ան : Խմորով չպիտի եփուի . իմ պատարագ-17  
 ներէս անոնց տուի ան՝ իրենց բաժին ըլլալու .  
 սա՛ մեղքի ու յանցանքի պատարագներու պէս ա-  
 մենասուրբ է : Եհարօնի որդւոցը բոլոր արու-18  
 ները պիտի ուտեն ան . Տէրոջը պատարագնե-  
 րէն՝ ձեր ցեղերուն մէջ յաւիտենական կանոն  
 ըլլայ ան . ամէն անոնց դպչողը սուրբ ըլլայ :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, Ե-19  
 հարօնին ու անոր որդւոցը օծուելու օրը՝ Տէ-20  
 բոջը մատուցանելու զոհերնին աս է . արդուին  
 տաններորդ մասը բարակ ալիւր միշտ հացի ըն-  
 ծայի համար պիտի մտնուի, կէսը առտուանց՝  
 ու կէսը իրիկունը : Տապակի մէջ եփելու համար՝ 21  
 եղով պիտի շինուի . տապիւս պիտի բերես ան,  
 և հացի ընծային եփած կտորուանքները անոյշ  
 հոտի համար Տէրոջը պիտի մատուցանես : Եւ 22  
 իր որդիներէն իր տեղը օծուելու քահանան պի-  
 տի մատուցանէ ան . Տէրոջը յաւիտենական  
 կանոն ըլլալուն համար՝ բոլորովին պիտի այրի :  
 Եւ քահանային ամէն հացի ընծան բոլորովին 23  
 պիտի այրուի . չպիտի ուտուի :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, 24

- 25 Խօսէ Ահարօնին և անոր որդւոցը՝ ու ըսէ .  
 Մեղքի պատարագին օրէնքը աս է . Ողջակէ-  
 զին մորթուած տեղը պիտի մորթուի մեղքի պա-  
 տարագը Տէրօջը առջևը . աս՝ ամենասուրբ է :
- 26 Սեղքի պատարագը մատուցանող քահանան պի-  
 տի ուտէ ան . սուրբ տեղը՝ ժողովքի խորա-
- 27 նին օրահը պիտի ուտուի : Ո՛վ որ անոր  
 միտին դպչի՝ սուրբ պիտի ըլլայ . և անոր արիւ-  
 նէն հանգերծի մը վըայ ցաթ կեցու ըլլայ , սուրբ  
 տեղը պիտի լուսս ան՝ որուն վըան ցաթ կեր
- 28 էր : Եւ հողէ ամանը՝ որուն մէջ եռացու-  
 ցուած է առ Դուր , պիտի կտորուի . ու թէ որ  
 պղինձ ամանի մէջ եռացուցուած ըլլայ , պիտի
- 29 չփուի ու ջուրով լուացուի : Քահանաներուն  
 բոլոր արունները պիտի ուտեն ան . աս՝ ամենա-
- 30 սուրբ է : Եւ ամէն մեղքի պատարագը՝ որուն  
 արիւնէն ժողովքի խորանը կը բերուի սուրբ տե-  
 ղին մէջ քաւութիւն ընելու համար՝ չպիտի  
 ուտուի , կրակին մէջ պիտի այրուի :

Գ Լ . Է

1 Կանօն յանգանքի պատարագին , 11 և խաղաղութեան զո-  
 հին , 12 թէ՛ ընօրհակալութեան համար ըլլայ , 16 թէ ուխ-  
 տի , և թէ կամուար ընծայի համար : 22 Նարպը , 26 ու  
 արիւնը ուտուելու արգիլուած են : 28 խաղաղութեան զոհերէն  
 քահանայից իրաւունքը :

- 1 Այլ յանցանքի պատարագին օրէնքը աս է .  
 2 աս՝ ամենասուրբ է : Ողջակէզը մորթած

տեղերնին յանցանքի պատարագը պիտի մորթեն ,  
 և անոր արիւնը սեղանին վրայ շուրջանակի  
 պիտի սրսկէ : Եւ անկից բոլոր ճարպը՝ 3  
 դմակը ու փորտիքը ծածկող ճարպը պիտի  
 մատուցանէ : Եւ երկու երիկամունքը ու կուշ- 4  
 տին վրայ եղած անոնց վրայի ճարպը՝ և լեար-  
 դին վրայի թաղանթը՝ երիկամունքներով պի- 5  
 տի փրցունէ : Եւ քաջանան սեղանին վրայ  
 պիտի այրէ ասոնք Տէրոջը պատարագ ըլլալու .  
 աս՝ յանցանքի պատարագ է : Վաջանանե- 6  
 բուն ամէն արուն պիտի ուտէ ան . սուրբ  
 տեղը պիտի ուտուի , բանդէ ամենասուրբ է :  
 Մեղքի պատարագը ինչպէս որ լըլայ , յան- 7  
 ցանքի պատարագն ալ անանկ ըլլայ . երկուքին  
 օրէնքը մէկ է . անով քաւութիւն ընող քաջա- 8  
 նային պիտի ըլլայ ան : Եւ ան քաջանան  
 որ մէկու մը ողջակէզը կրմատուցանէ , իր մա-  
 տուցած ողջակէզին մորթը ինքը պիտի առնէ :  
 Եւ բոլոր թոնիրի մէջ եփուած՝ ու բոլոր սանի 9  
 մէջ և տապակի վրայ շինուած հացի ընծան ,  
 ան մատուցանող քաջանային պիտի ըլլայ :  
 Եւ ամէն եղով շաղուած՝ կամ առանց եղի հացի 10  
 ընծան՝ Մհարօնին բոլոր որդւոցը պիտի ըլլայ .  
 ամէն մէկուն բաժինը հաւասար պիտի ըլլայ :

Եւ Տէրոջը մատուցանելու խաղաղութեան զո- 11  
 հին օրէնքը աս է . թէ որ շնորհակալութեան 12  
 համար մատուցանէ ան , անատենը շնորհակա-  
 լութեան զոհին հետ եղով շաղուած անխմոր շո-  
 թեր՝ և եղով օծուած անխմոր լաւաշներ՝ ու բա-



- բակ ալիւրէ եղով շաղուած՝ տապկած շօթեր պի-  
 13տի մատուցանէ : Անորհակալութեան համար  
 եղած խաղաղութեան զոհին շօթերէն զառ՝  
 14խմորեալ հացէ ընծայ մը պիտի մատուցանէ : Աւ-  
 ասկից մէկ հատ՝ ամէն ընծաներէն , բարձրա-  
 ցունելու ընծայ պիտի մատուցանէ Տէրոջը . և աս՝  
 խաղաղութեան զոհին արիւնը սրսկող քահանա-  
 15յին պիտի ըլլայ : Աւ շնորհակալութեան հա-  
 մար՝ խաղաղութեան զոհին միսը մատուցած օ-  
 րը պիտի ուտուի . անկից մինչև առտու չպիտի՝  
 16մնայ : Աւ թէ որ իր զոհը ուխտի համար է  
 կամ կամուոր զոհ է , զոհը մատուցած օրը պի-  
 տի ուտուի , ու մնացածը հետեւեալ օրը պիտի  
 17ուտուի : Աւ զոհին միսէն երրորդ օրուան  
 18մնացածը կրակով պիտի այրուի : Աւ թէ որ  
 երրորդ օրը իր խաղաղութեան զոհին միսէն ու-  
 տուելու ըլլայ , ընդունելի չպիտի՝ ըլլայ , ոչ  
 ալ անիկայ մատուցանողին զոհ պիտի սեպուի .  
 պղծութիւն պիտի ըլլայ , ու անկից ուտող ան-  
 19ձը՝ մեղքը պիտի կրէ : Աւ ամէն տեսակ պիղծ բա-  
 նի դպչած միսը չպիտի՝ ուտուի , կրակով պի-  
 տի այրուի . սակայն ամէն մաքուր եղողը պիտի  
 20ուտէ խաղաղութեան զոհին միսէն : Այց ան ան-  
 ձը՝ որ իր անմաքուրութիւնը իր վրան ունենալով ,  
 Տէրոջը խաղաղութեան զոհէն միտ ուտէ , ան  
 21անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : Աւ ա-  
 մէն տեսակ պիղծ բանի մը՝ թէ՛ մարդու պղծու-  
 թեան թէ՛ պիղծ անասունի և թէ՛ ամէն կերպ  
 գարշելի պիղծ բանի մը դպչող անձը՝ Տէրոջը

խաղաղութեան զոհին միսէն ուտելու ըլլայ, ան  
անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, Խօ-<sup>22</sup>  
սէ՛ Իսրայէլի որդւոցը և ըսէ . Ինչաւ արջառի<sup>23</sup>  
կամ ոչխարի կամ այծի ճարպ չպիտի ուտէք :

Եւ մեռած անասունին ճարպը ու փառատուածին<sup>24</sup>  
ճարպը ամէն գործի մէջ պիտի գործածուի, բայց  
անկից բնաւ չպիտի ուտէք : Վանդի ո՛վ որ<sup>25</sup>

Տէրոջը պատարագ մատուցանելու անասունին  
ճարպէն ուտելու ըլլայ, ան ուտող անձը իր  
ժողովուրդէն պիտի կորսուի : Եւ ձեր մէկ<sup>26</sup>  
բնակարանին մէջը բնաւ արիւն՝ թէ թռչունի ըլ-  
լայ և թէ՛ անասունի՝ չպիտի ուտէք : Եւ մէն անձ<sup>27</sup>  
որ ո՛ր և իցէ արիւնէն ուտէ, ան անձը իր ժո-  
ղովուրդէն պիտի կորսուի :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, Խօ-<sup>28</sup>  
սէ՛ Իսրայէլի որդւոցը — ըսէ . Իր խաղաղու-<sup>29</sup>  
թեան զոհը Տէրոջը մատուցանողը՝ խաղաղու-  
թեան զոհէն ընծայ մը պիտի բերէ Տէրոջը :  
Տէրոջը պատարագը իր ձեռքովը պիտի բերէ .<sup>30</sup>  
կուրծքով ճարպը պիտի բերէ, որ կուրծ-  
քը երերցունելու ընծայի համար երերցուի Տէրո-  
ջը առջևը : Եւ ճարպը քահանան պիտի այրէ<sup>31</sup>  
սեղանին վրայ . բայց կուրծքը Եհարօնին ու ա-  
նոր որդւոցը պիտի ըլլայ : Եւ ձեր խաղաղու-<sup>32</sup>  
թեան զոհէն աջ զիտը քահանային պիտի տաք  
բարձրացունելու ընծայի համար : Եհարօնին որդ-<sup>33</sup>  
ւոցմէն՝ խաղաղութեան զոհին արիւնը ու ճար-  
պը ո՛վ որ մատուցանէ, աջ զիտը անոր բա-

- 34 Ժինը պիտի ըլլայ : Վանզի անոնց խաղաղութեան զոհերէն երեքցունելու կուրծքը և բարձրացունելու զիստը Խորայէլի որդւոցմէն առի , և անոնք յաւիտենական կանոնով Խորայէլի որդւոցմէն Եհարօն քահանային ու անոր որդւոցը
- 35 տուի : Եհարօնին և անոր որդւոցը օժման իրաւունքը Տէրօջը պատարագներէն աս պիտի ըլլայ , զանոնք Տէրօջը քահանայութիւն ընելու
- 36 մօտեցուցած օրը , Որ զանոնք օժած օրը Խորայէլի որդւոցմէն իրենց ցեղերուն մէջ յաւիտենական կանոնով անոնց տալու հրամայեց Տէրը :
- 37 Ողջակէզին՝ հացի ընծային և մեղքի պատարագին և յանցանքի պատարագին ու օրհնութիւններուն և խաղաղութեան զոհին օրէնքը աս է ,
- 38 Որ Տէրը պատուիրեց Մովսէսին Սինա լեռը , ան օրը՝ որ Խորայէլի որդւոցը պատուիրեց իրենց ընծաները Տէրօջը մատուցանելու Սինա անապատին մէջը :

## ԳԼ . Ը

1 Մովսէս քահանայ կօրհնէ Եհարօնը ու անոր տղաքները :  
 14 Ենոնց մեղքի պատարագը : 18 Ենոնց ողջակէզը : 22 Օրհնութեան խոյը : 31 Ենոնց օրհնուելու տեղը ու ժամանակը :

- 1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ե՛ս  
 2 Եհարօնը ու անոր որդիները իր հետը՝ և զգետները ու օժման եղը՝ և մեղքի պատարագին զուարակը ու երկու խոյերը՝ և անխմօր հացին սա-

կառք . Եւ ժողովէ բոլոր ժողովքը մէկ տեղ 3  
 ժողովքի խորանին դուռը : Եւ Մովսէս Տէ- 4  
 բոջը իրեն պատուիրածին պէս ըրաւ . ու ժո-  
 ղովքը մէկ տեղ ժողովուեցաւ ժողովքի խորանին  
 դուռը : Եւ Մովսէս ըսաւ ժողովքին . աս է 5  
 բանը որ Տէբը պատուիրեց ընելու : Եւ Մով- 6  
 սէս մօտիկցուց Ըհարօնը ու անոր որդիները , և  
 անոնք ջրով լուաց : Եւ անոր հագցուց շապի- 7  
 կը ու անոր մէջքը գօտին կապեց , և պատմու-  
 ճանը հագցուց անոր՝ ու եփուտը անոր վրան  
 դրաւ , և եփուտին ժապաւէնովը փաթթեց , ու  
 անով գօտեորեց անիկայ : Եւ լանջապանակը 8  
 անոր վրան դրաւ , ու լանջապանակին մէջ Ու-  
 բիմը ու Թոււմիմը դրաւ : Եւ խոյրը անոր գլու- 9  
 խը դրաւ , ու խոյրին վրայ՝ անոր առջևը կողմէն  
 ոսկի թիթեղը՝ այսինքն սուրբ սրակը դրաւ ,  
 Տէբոջը Մովսէսին պատուիրածին պէս : Եւ 10  
 Մովսէս օժման եղը առաւ , ու խորանը և բո-  
 լոր անոր մէջի եղածները օծեց , ու սրբեց ա-  
 նոնք : Եւ անկից սեղանին վրայ սրսկեց եօթը 11  
 անգամ . և սեղանը ու անոր բոլոր գործիքները՝  
 և աւազանը ու անոր ոտքը օծեց , զանոնք սրբե-  
 լու համար : Եւ օժման եղէն Ըհարօնին գլխուն 12  
 վրայ թափելով՝ անիկայ սրբելու համար օծեց :  
 Եւ Մովսէս մօտիկցուց Ըհարօնին որդիները՝ ու 13  
 անոնց շապիկներ հագցուց , և մէջքերնին գօտի  
 կապեց , ու անոնց Գլուխը ապարօշներ փաթ-  
 թեց , Տէբոջը Մովսէսին պատուիրածին պէս :  
 Եւ մեղքի պատարագին զուարակը մօտեցուց . 14

- և Մհարօն ու անոր որդիները իրենց ձեռքերը մեղքի պատարագ զուարակին գլխուն
- 15 վրայ դրին : Եւ մորթեց անիկայ . և Մովսէս արիւնը առաւ , ու իր մատովը սեղանին եղջիւրներուն վրան դնելով շուրջանակի , մաքրեց սեղանը . ու արիւնը սեղանին յատակը թափեց , և անոր վրան քաւութիւն ընելու համար սրբ-
- 16 բեց ան : Եւ փորոտիքին վրան եղած բոլոր ճարպը՝ և լեարդին թաղանթը՝ և երկու երիկամունքը՝ ու անոնց ճարպը առաւ , ու Մովսէս
- 17 սեղանին վրայ այրեց անոնք : Բայց զուարակը՝ այսինքն անոր մորթը և միսը ու անոր աղը բանակին դուրսի դին կրակով այրեց , Տէրօջը
- 18 Մովսէսին պատուիրածին պէս : Եւ ողջակէզի խոյր մօտիկցուց . և Մհարօնը ու անոր որդիները
- 19 իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դրին : Եւ մորթեց անիկայ . և Մովսէս շուրջանակի սեղանին վրայ սրակեց արիւնը : Եւ խոյը կտոր կտոր ըրաւ . ու Մովսէս այրեց գլուխը և կտորները
- 21 ու ճարպը : Եւ փորոտիքը ու ոտքերը ջրով լուաց . և Մովսէս բոլոր խոյը սեղանին վրայ այրեց . աս՝ ողջակէզի և անուշահոտ պատարագ Տէրօջը , ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուի-
- 22 բեց : Եւ մօտիկցուց մեկաւ խոյը , այսինքն օրհնութեան խոյը . և Մհարօն ու անոր որդիները իրենց ձեռքերը խոյին գլխուն վրայ դրին .
- 23 Եւ մորթեց անիկայ . ու Մովսէս անոր արիւնէն առաւ՝ և Մհարօնին աջ ահանջին բլթակին վրայ՝ ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ և անոր

աջ ոտքին մեծ մատին վրայ դրաւ : Եւ Ահա-24  
 րօնին որդիները մօտիկցուց , ու Մովսէս ան  
 արիւնէն անոնց աջ սկանջներուն բլթակին  
 վրայ՝ և անոնց աջ ձեռքերուն մեծ մատին  
 վրայ՝ ու անոնց աջ ոտքին մեծ մատին վրայ  
 դրաւ . և Մովսէս սեղանին վրայ շուրջանակի  
 սրսկեց նաոյ՛ս արիւնը : Եւ ճարպը՝ դմա-25  
 կը՝ և փորտախբին վրան եղած բոլոր ճարպը՝  
 ու լեարդին թաղանթը՝ և երկու երիկամունքը՝  
 ու անոնց ճարպը՝ և աջ զիտը առաւ . Եւ-26  
 Տէրօջը առջևը եղած անխմոր հացի սակառէն  
 անխմոր շօթ մը՝ եղով հացի շօթ մը ու լուաշ  
 մը առաւ , և ճարպերուն վրայ ու աջ զիտին  
 վրայ դրաւ : Եւ ամէնը Ահարօնին ու անոր-27  
 որդւոցը ձեռքը դնելով՝ զանոնք Տէրօջը առ-  
 ջևը երեքցունելու ընծայ նուիրեց : Եւ Մով-28  
 սէս անոնց ձեռքէն առաւ զանոնք , ու սեղանը  
 ողջակէզին վրայ այրեց . ասոնք օրհնութեան հա-  
 մար անուշահոտ սրտաբաղէին Տէրօջը : Եւ-29  
 Մովսէս երբու՛ծը առաւ՝ ու Տէրօջը առջևը ե-  
 րեքցունելու ընծայ մատուց . աս՛ օրհնութեան  
 խոյէն Մովսէսին բաժինը եղաւ , Տէրօջը Մով-  
 սէսին սրտուիրածին պէս : Եւ Մովսէս օժ-30  
 ման եղէն ու սեղանին վրան եղած արիւնէն  
 առնելով՝ Ահարօնին վրայ ու անոր հանդերձ-  
 ներուն վրայ՝ և անոր հետ անոր որդւոցը վրայ  
 ու անոր որդւոցը հանդերձներուն վրայ սրսկեց .  
 և Ահարօնը ու անոր հանդերձները՝ ու անոր  
 հետ անոր որդիները և անոր որդւոցը հանդերձ-

- 31 Կները սուրբ ըրաւ : Եւ Մովսէս ըսաւ Ահարօնին  
ու անոր որդւոցը . Միսը ժողովքի խորանին  
դրանը քովը եռացուցէք , և հոն՝ օրհնութեան  
սակառին մէջի հացերովը կերէք . Ինծի պա-  
տուիրուածին պէս՝ Ահարօնը ու անոր որդիները  
32 ըր պիտի ուտեն զանոնք : Եւ միսէն ու հա-  
33 ցէն աւելցածը կրակով այրեցէք : Եւ եօթը օր  
ժողովքի խորանին դռնէն դուրս մի՛ ելաք ,  
մինչև ձեր օրհնութեան օրերուն վերջին օրը .  
ինչու որ ձեր օրհնութիւնը եօթը օրը կըլլայ :  
34 Եւ օրուան եղածին պէս՝ ձեզի համար քաւու-  
թիւն ընելու՝ Տէրը հրաման ըրաւ ասանկ ընել :  
35 Աստի ցորեկը ու գիշերը եօթը օր ժողովքի  
խորանին դրանը քովը պիտի նստիք , ու Տէ-  
րոջը պահպանութիւնը պիտի ընէք որ չմեռնիք .  
քանզի ասանկ պատուիրուած է ինծի Տէրօջէն :  
36 Եւ Ահարօն ու անոր որդիները Տէրոջը Մով-  
սէսին ձեռքովը պատուիրած ամէն բաները  
ըրին :

## Գ Լ . Թ

1 Ահարօնին մատուցած առջի պատարագները , իրեն համար  
ու ժողովուրդին համար : 8 Մեղքի պատարագը , 12 ու իրեն  
համար մատուցած ողջակէզը : 15 Ժողովուրդին համար ե-  
ղած պատարագները : 23 Մովսէս ու Ահարօն ժողովուրդը  
կօրհնեն : 24 Տէրոջմէ կրակ կուգայ սեղանին վրայ :

- 1 Եւ եղաւ որ ութերորդ օրը Մովսէս կան-  
չեց Ահարօնը ու անոր որդիները և Խարայէ-  
2 լի ծերերը . Եւ ըսաւ Ահարօնին . Ա՛ն քե-

զի մեղքի պատարագի համար զուարակ մը՝ ու  
 ողջակէզի համար խոյ մը . անարատ ըլլան .  
 և Տէրոջը առջևը բեր : Եւ Իսրայէլի որդւոցը <sup>3</sup>  
 պիտի խօսիս՝ ըսելով , Սեղքի պատարագին  
 համար այժերէն նոխազ մը՝ և ողջակէզի հա-  
 մար զուարակ մը ու գառնուկ մը առէք . մէկ <sup>4</sup>  
 տարեկան՝ անարատ ըլլան : Կան խաղաղու-  
 թեան զոհին համար Տէրոջը առջևը զոհելու  
 զուարակ մը ու խոյ մը՝ և եղով շաղուած հացի  
 ընծայ ուրիշ . ինչու որ այսօր Տէրը ձե-  
 զի պիտի երևայ : Եւ Սոփսէսին պատուիրածը <sup>5</sup>  
 Ժողովքի խորանին առջևը բերին . ու բոլոր  
 Ժողովքը մօտիկցան ու Տէրոջը առջևը կայնեցան :  
 Եւ Սոփսէս ըսաւ . Տէրոջը պատուիրած բանը <sup>6</sup>  
 ըրէք , ու Տէրոջը փառքը ձեզի պիտի երևայ :  
 Եւ Սոփսէս ըսաւ Եհարօնին . Սեղանին մօ- <sup>7</sup>  
 տիկցիր , ու քու մեղքի պատարագդ և ողջակէզդ  
 ըրէ , և քեզի համար ու Ժողովուրդին համար  
 քաւութիւն ըրէ . և Ժողովուրդին զոհը ըրէք  
 քաւութիւն ընելով անոնց համար , Տէրոջը  
 պատուիրածին պէս :

Աստի Եհարօնը սեղանին մօտիկցաւ , և ի- <sup>8</sup>  
 րեն համար եղած մեղքի պատարագին զուարա-  
 կը մորթեց : Եւ Եհարօնին որդիները արիւ- <sup>9</sup>  
 նը մօտեցուցին անոր . ու անիկայ իր մատը  
 արիւնը թաթխեց՝ և սեղանին եղջիւրներուն  
 վրան դրաւ , ու հապաձ արիւնը սեղանին յա-  
 տակը թափեց . Իսկ մեղքի պատարագէն՝ ճար- <sup>10</sup>  
 պը և երիկամունքները ու լեարդին թաղանթը



- սեղանին վրայ այրեց , Տէրօջը Մովսէսին պա-
- 11 տուիրածին պէս : Աւ միտը ու մորթը բանա-
- 12 կին դուրսի դին կրակով այրեց : Աւ ողջակէզը  
մորթեց . ու Ահարօնին որդիները արիւնը ա-
- նոր բերին , և սեղանին վրայ շուրջանակի սրակեց
- 13 ան : Աւ ողջակէզը կտորներովը ու զլիսովը ա-
- 14 նոր բերին , և սեղանին վրայ այրեց : Աւ փորո-
- տիքը ու ոտքերը լուաց՝ ու սեղանին վրայի ող-
- ջակէզին վրան այրեց :
- 15 Աւ ժողովուրդին զոհ՝ մօտիկցուց , ու ժողովուր-
- դին համար մեղքի պատարագ ըլլաւ՝ նոխազը  
առաւ , և մորթեց ան՝ ու մեղքի պատարագ ը-
- 16 բաւ առջինին պէս : Աւ ողջակէզը մօտիկցուց ,
- 17 ու ըստ օրինի ըբաւ : Աւ հացի ընծան մօտիկ-
- ցուց , ու անկից ձեռքը լեցուց՝ և սեղանին
- 18 վրայ այրեց , առտուան ողջակէզէն զատ : Աւ ժո-
- ղովուրդին խաղաղութեան զոհ ըլլաւ՝ զուարա-
- կը ու խոյը մորթեց . և Ահարօնին որդիները  
արիւնը իրեն մատուցին , ու սեղանին վրայ շուր-
- 19 ջանակի սրակեց ան : Աւ զուարակէն՝ ճարպերը ,  
ու խոյէն՝ դմակը , և ճածկող ճարպը  
և երիկամունքները ու լեարդին թաղանթը ա-
- 20 րիւն : Աւ ճարպերը կուրծքերուն վրայ դրին ,
- 21 ու ճարպերը սեղանին վրայ այրեց : Աւ Ահա-  
րօն՝ կուրծքերը ու աջ զիսար Տէրօջը երեքու-
- նելու ընծայ նուիրեց , Մովսէսին պատուիրա-
- ծին պէս :
- 22 Աւ Ահարօն իր ձեռքերը ժողովուրդին վրայ  
վերցուց , ու օրնեց անոնք . և մեղքի պատա-

բագը ու ողջակէզը և խաղաղութեան զոհերը ընելէն ետքը՝ իջաւ : Եւ Սոլսէս ու Լճարօն ժողովքի խորանը մտան , և անկէց ելլելով ժողովուրդը օրհնեցին . և Տէրօջը փառքը բոլոր ժողովուրդին երեցաւ : Եւ Տէրօջը առջևէն կրակ շէկաւ՝ ու սեղանին վրայ եղած ողջակէզը և ճարպերը այրեց . և բոլոր ժողովուրդը տեսնելով՝ աղաղակեցին՝ ու երեսնուն վրայ ինկան :

## ԳԼ . Ժ

1 Նադաբ ու Եբիուզ օտար կրակ մատուցանելուն համար՝ կրակով այրեցան : 6 Լճարօն ու իր մնացած աղաքները արգիլուեցան սուգ ընելու անոնց համար : 8 Վահանայից զինի խմելը կարգիլուի՝ խորանը մտնալու ժամանակին : 12 Սուրբ բաները ուտելու կանոնը : 16 Լճարօն աս կանոնը զանց ընելէն ետքը՝ զինքը կարգարացունէ :

Եւ Լճարօնին որդիները Նադաբ ու Եբիուզ 1  
ամէն մէկը իր բուրվառը առաւ , ու անոնց  
մէջը կրակ դրին . և վրան խունի դրին՝ ու Տէ-  
րօջը առջևը օտար կրակ մատուցին՝ որ ինչը  
չէր պատուիրեր անոնց : Եւ Տէրօջը առ- 2  
ջևէն կրակ ելաւ , ու սպառեց անոնք , և Տէ-  
րօջը առջևը մեռան : Ընտաններ Սոլսէս ըսաւ 3  
Լճարօնին . Ըս է որ Տէրը խօսեցաւ՝ ըսելով ,  
Ինձի մօտիկցողներուն մէջ սուրբ պիտի սե-  
պուիմ , ու բոլոր ժողովուրդին առջևը պիտի  
փառաւորուիմ . և Լճարօն լուռ կեցաւ : Եւ 4  
Սոլսէս կանչեց Լճարօնին Ողիէլ հօրեղբորը

- որդինները Միսայէլ ու Եղիսափան , և ըսաւ անոնց . Սօտիկցէք , ձեր եղբայրները սրբարանին
- 5 առջևէն բանակին դուրսի դին վերցուցէք : Եւ անոնք մօտիկցան , ու Մովսէսին ըսածին պէս՝ զանոնք իրենց շապիկներովը բանակէն դուրս
- 6 վերցուցին : Եւ Մովսէս՝ Ըհարօնին ու անոր որդւոցը Եղիսազարին և Իթամարին ըսաւ . Գլուխնիդ մի՛ բանաք , ու հանդերձնիդ մի՛ պատուէք , որ չմեռնիք , և որ բոլոր ժողովուրդին վրայ բարկութիւն չգայ . բայց ձեր եղբայրները Իսրայէլի բոլոր տունը՝ Տէրօջը ըրած այ-
- 7 բուծին վրան թող լան : Եւ դուք ժողովքի խորանին դռնէն դուրս մի՛ ելաք , որ չմեռնիք . ինչու որ Տէրօջը օժման եղբ վրանիդ է . և անոնք Մովսէսին ըսածին պէս ըրին :
- 8 Եւ Տէրը խօսեցաւ Ըհարօնին՝ ըսելով , Երբոր ժողովքի խորանը մտնաք՝ թէ՛ դուն և թէ՛ քու որդիներդ քեզի հետ՝ զինի կամ օղի չխմէք , որ չմեռնիք . ու՝ ձեր ցեղերուն մէջ յաւիտենա-
- 9 կան կանոն ըլլայ . Որ սուրբին ու անսուրբին մէջ տեղը , և մաքուրին ու անմաքուրին մէջ
- 10 տեղը տարբերութիւն ընէք . Եւ որ Իսրայէլի որդւոցը սորվեցունէք բոլոր կանոնները , որոնք որ Տէրը Մովսէսին ձեռքովը զուրթած է :
- 11 Եւ Մովսէս խօսեցաւ Ըհարօնին ու անոր մնացած որդիները Եղիսազարին և Իթամարին . Տէրօջը պատարագներէն աւելցած հացի ընծան առէք , ու սեղանին քովը բաղարջ կերէք . ինչ-
- 12 չու որ ան ամենասուրբ է : Սուրբ տեղը կերէք

ան . ինչու որ՝ Տէրօջը պատարագներէն քու  
 իրաւունքդ ու քու որդւոցդ իրաւունքն է .  
 քանզի ինձի ասանկ պատուիրուած է : Եւ երբեք-<sup>14</sup>  
 ցունելու կուրծքը ու բարձրացունելու զխառը՝ դուն  
 ու քու որդիներդ և քու աղջիկներդ քու հետդ  
 մաքուր տեղ մը պիտի ուտէք . ինչու որ Խո-  
 բայէլի որդւոցը խաղաղութեան զոհներէն քու  
 իրաւունքիդ ու քու որդւոցդ իրաւունքին համար  
 տրուած են : Բարձրացունելու զխառը ու երերցու-<sup>15</sup>  
 նելու կուրծքը ճարպին պատարագներովը Տէրօջը  
 առջևը երերցունելու համար պիտի բերեն . և  
 Տէրօջը պատուիրածին պէս քուկդ ու բնդի հետ  
 քու որդւոցդ պիտի ըլլայ յախտննական կա-  
 ննով :

Եւ Մովսէս մեղքի պատարագին նոխազը զգու-<sup>16</sup>  
 շութեամբ փնտրուեց , և ահա սյրուած էր . և  
 բարկացաւ Եղիազարին ու Իթամարին՝ այնինչ  
 Եհարօնին մնացած որդիներուն՝ ըսելով , Ին-<sup>17</sup>  
 չու մեղքի պատարագը սուրբ տեղը չկերպք .  
 քանզի սոս ամենասուրբ է , ու Տէրը տուաւ ձե-  
 զի ժողովքին անօրէնութիւնը վերցունելու՝ --  
 Տէրօջը առջևը անոնց համար քաւութիւն ը-  
 նելու : Եհարօն անոր արիւնը սուրբ տեղը չբե-<sup>18</sup>  
 րուեցաւ . դուք իմ պատուիրածիս պէս անպատ-  
 ճառ սուրբ տեղը ուտելու էիք ան : Եւ Եհար-<sup>19</sup>  
 օն ըսաւ Մովսէսին . Եհարօն սյսօր իրենց մեղքի  
 պատարագը ու ողջակէզը Տէրօջը առջևը մատու-  
 ցին , ու գլխուս ասանկ բաներ եկաւ . և թէ որ  
 այսօր մեղքի պատարագը ուտելու ըլլայի , Տէ-

20 Բողբ առջևը հաճոյ պիտի ըլլա՞ր արդեօք : Եւ  
երբ Մովսէս առ լսեց , հաւնեցաւ :

## ԳԼ. ԺԸ

1 Մարութի ու անմարութի անասուններուն , 9 Չափերուն , 13  
ու թռչուններուն համար : 29 Ենմարութի սողունները :

- 1 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Եհարօնին՝  
2 ըսելով անոնց , խօսեցէ՛ք Իսրայէլի որդե-  
ւոցը ու ըսէ՛ք . Երկրի վրայ եղած բոլոր անասուն-  
ներէն ձեր ուտելու անասունները ասոնք են .  
3 Եմէն բաժնուած կճղակ ունեցող ու որոճացող  
4 անասունը պիտի ուտէք : Բայց որոճացողէն կամ  
կճղակաբաշխ եղածէն՝ ասոնք չպիտի՛ ուտէք .  
ուղար , ինչու որ անիկայ թէև կը որոճայ , բայց  
կճղակաբաշխ չէ , անիկայ ձեզի անմարութի է :  
5 Եւ ճագարը , ինչու որ անիկայ կը որոճայ , բայց  
կճղակաբաշխ չէ , անիկայ ձեզի անմարութի է :  
6 Եւ նապաստակը , որ թէև կը որոճայ , բայց կճղա-  
7 կաբաշխ չէ , անիկայ ձեզի անմարութի է : Եւ  
խոզը , որ թէև անիկայ բաժնուած կճղակ ու-  
նի , բայց չը որոճար , անիկայ ձեզի անմարութի  
8 է : Եսոնց միտէն չպիտի՛ ուտէք , ու դիւրնուն  
9 չդպչէ՛ք . ձեզի անմարութի են : Ծուրերուն մե-  
ջը բոլոր եղածներէն ասոնք պիտի ուտէք . Ծու-  
րերու մէջ՝ այնչէս ծովերու մէջ եւ գետերու  
մէջ ամէն թէև ու թեփ ունեցողը պիտի ուտէք :  
10 Եւ ծովերու մէջ ու գետերու մէջ եղած բոլոր

անթե ու անթեփ եղածները՝ ջուրերուն բոլոր  
 զեռուններէն՝ և ջուրերուն մէջ եղած շունչ  
 ունեցող բոլոր կենդանիներէն՝ պիղծ ըլլան  
 ձեզի : Ընոնք ձեզի պիղծ պիտի ըլլան . անոնց <sup>11</sup>  
 միտէն չպիտի՛ ուտէք , և անոնց գիերէն պի-  
 տի զուտիք : Չջուրերուն մէջի եղած բոլոր <sup>12</sup>  
 անթե ու անթեփ եղածները ձեզի պիղծ  
 ըլլան : Եւ թռչուններուն մէջ պիղծ բո- <sup>13</sup>  
 նելուքնիդ ասոնք են , որ պիտի չուտուին ,  
 պիղծ են . արծիւր և պասկուճը ու գետ-  
 արծիւր , Եւ ցինը ու անգղը իր ցեղին պէս , <sup>14</sup>  
 Եւ ամէն ագռաւը իր տեսակին պէս , Եւ ջայ- <sup>15</sup>  
 լամբ ու բուն և կիուն ու բազէն իրենց ցեղին <sup>16</sup>  
 պէս , Եւ հաւպատիրը ու հողամաղը և քաջա- <sup>17</sup>  
 հաւը , Եւ կարասը և հաւալուսը ու սև անգղը , <sup>18</sup>  
 Եւ արագիլը ու քարարդը իր ցեղին պէս , և յո- <sup>19</sup>  
 պոպը ու չիղջը :

Բոլոր չորս ոտքի վրայ քալող թռչող զեռու- <sup>20</sup>  
 նը ձեզի պիղծ ըլլայ : Սակայն ասոնք պիտի <sup>21</sup>  
 ուտէք . Բոլոր չորս ոտքի վրայ քալող թռչող  
 զեռուններէն՝ երկրի վրայ ցաթկելու համար ոտ-  
 քերնուն վրայ ազդր ունեցողները : Ընոնցմէ ա- <sup>22</sup>  
 սոնք պիտի ուտէք . մարախը՝ իր ցեղին պէս , ու  
 ճղրիգը՝ իր ցեղին պէս , և խարագուլը՝ իր ցե-  
 ղին պէս , ու ջորեակը՝ իր ցեղին պէս : Բայց <sup>23</sup>  
 հասցած բոլոր չորս ոտքով թռչող զեռունը ձե-  
 զի պիղծ ըլլայ : Եւ ասոնցմով դուք անմաքուր <sup>24</sup>  
 պիտի ըլլաք . ամէն անոնց գիերուն դպչողը մին-  
 չև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ : Եւ ամէն <sup>25</sup>

- անոնց գիերը վերջունողը՝ իր հանգերձները պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր
- 26 պիտի ըլլայ: Բողոր անասունները՝ որոնք կճղակ ունին՝ բայց բաժնուած չէ, և չեն որոճար, անմաքուր են ձեզի. ո՞վ որ անոնց գիերն գաչծ՝ անմաքուր պիտի ըլլայ:
- 27 Եւ բողոր չորս ոտքի վրայ քալող անասուններէն՝ թաթերնուն վրայ քալողներուն ամէնը անմաքուր ըլլայ ձեզի. ամէն անոնց գիերուն գաչողը՝ մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ:
- 28 Եւ անոնց գիերը վերջունողը՝ իր լաթերը պիտի լուայ, ու մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ.
- 29 անոնք անմաքուր են ձեզի: Եւ երկրի վրայ սողացողներուն մէջը՝ ասոնք անմաքուր ըլլան ձեզի. արիսը ու մուկը և կրիան՝ իր
- 30 տեսակին պէս. Եւ մկնաքիսը ու զետնառիւծը
- 31 և կովագիան ու մողէսը և խլուրդը: Բողոր սողացողներուն մէջը ձեզի անմաքուր եղածները ասոնք են. ամէն անոնց մեռածին գաչողը՝ մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ:
- 32 Եւ անոնց մեռածը որ բանին վրայ իյնայ, թէ փայտէ աման ըլլայ՝ կամ հանգերձ կամ մորթ կամ քուրձ՝ ի՛նչ տեսակ գործածական աման որ ըլլայ, անմաքուր պիտի ըլլայ. ջուրը պիտի ձգուի ան, ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ, և ետքը մաքուր սեպուի: Եւ ասոնց մէկը՝ որ հողէ ամանին մէջը իյնալու ըլլայ, ամէն անոր մէջի եղածը անմաքուր պիտի ըլլայ,
- 33 և ետքը մաքուր սեպուի: Եւ ամէն անոր մէջի եղածը անմաքուր պիտի ըլլայ, ու ամանը պիտի կտորէք: Ամէն ուտուե-
- 34 լայ, ու ամանը պիտի կտորէք: Ամէն ուտուե-

լու կերակուրը՝ որուն վրայ քըւր կայ, «-  
 «նայ Տէլը Տըլը էյնայ» , անմաքուր պիտի ըլլայ .  
 նոյնպէս ամէն ամանի մէջ եղած բոլոր խմուելու  
 խմելիքը անմաքուր պիտի ըլլայ : Աւ ամէն բան՝ 35  
 որուն վրայ ասոնց դին կիյնայ , անմաքուր պի-  
 տի ըլլայ . թէ թոնիր ըլլայ և թէ վառարան՝  
 պիտի աւրուի . ասոնք անմաքուր են , ու անմա-  
 քուր պիտի սեպուին ձեզի : Իայց աղբիւրը կամ 36  
 հորը՝ «-» որ ժողովուած ջուր լայ» , մաքուր  
 պիտի ըլլայ . սակայն անոնց դիերուն դպչողը  
 անմաքուր ըլլայ : Աւ թէ որ անոնց դին ցա- 37  
 նուելու սերմի մը վրայ կիյնայ , մաքուր պիտի ըլ-  
 ւայ ան : Իայց թէ որ սերմին վրայ ջուր դրուած 38  
 ըլլայ՝ ու անոր վրան անոնց դին կիյնայ , ան  
 ձեզի անմաքուր պիտի ըլլայ : Աւ թէ որ ձեր ու- 39  
 տելու կենդանիներէն մէկը մեռնի , անոր դին  
 դպչողը՝ մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ : Աւ 40  
 անոր դիէն ուտողը իր հանդերձները պիտի լուայ ,  
 ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ . և անոր դին  
 վերցունողը իր հանդերձները պիտի լուայ , ու  
 մինչև իրիկուն անմաքուր ըլլայ : Աւ երկրի վրայ 41  
 սողացող ամէն սողունը պիտի է . չպիտի  
 ուտուի ան : Արկրի վրայ բոլոր սողացող սո- 42  
 ղուններէն ամէն իր փորին վրայ քալողը՝ կամ  
 ամէն չորս ոտքի վրայ պտրտողը՝ և կամ ամէն  
 բազմատանի եղածները չպիտի ուտէք . ինչու որ  
 պիտի են : Սողացող սողուններով անձերնիդ 43

\*Ամ՝ «-» նի ջուր դայ

†Ամ՝ «-» ջուրակուտակը



մի՛ պղծէք . ո՛չ ալ անտնցմով աղտոտելով ան-  
ձերնիդ անմաքուր ընէք :

44 Ինչու որ Աս եմ՝ ձեր Տէր Աստուածը .  
ուստի սրբեցէ՛ք անձերնիդ՝ ու սուրբ եղի՛ք . ին-  
չու որ ես սուրբ եմ . և երկրի վրայ ամէն սո-  
ղացող սողունով անձերնիդ մի՛ աղտոտէք :

45 Քանզի ես եմ՝ Ահովսն՝ ձեզ Ազգիպտոսի երկ-  
րէն հանողը որ ձեր Աստուածը ըլլամ . ուս-

46 տի սուրբ եղի՛ք , ինչու որ ես սուրբ եմ : Չոր-  
քոտանիներուն և թռչուններուն ու ջուրերուն  
մէջ շարժող բոլոր շնչաւոր կենդանիներուն՝ և  
երկրի վրայ սողացող ամէն կենդանիներուն օ-

47 բէնքը աս է : Որ մաքուրին ու անմաքուրին  
մէջ տեղը՝ և ուտուելու անասունին ու շուտուե-  
լու անասունին մէջ տեղը որոշէք :

## Գ Լ . Ժ Բ

† Կնկան մը որդեծնութենէն ետքը մաքրուելուն կերպը :  
6 Իր մաքրուելուն համար մատուցուելու ընծաները :

1 Ա՛յլ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով , Իօ-  
2 սէ՛ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ . թո՛ւ որ  
կնիկ մը սերմ առնէ ու արու զաւակ ծնանելու  
ըլլայ , եօթը օր անմաքուր պիտի ըլլայ . իր դաշ-

3 մաքուր պիտի ըլլայ : Աւ ու թերորդ օրը Կողմ-  
անթլիստութեան մարմինը պիտի թլիստուի :

4 Աւ անիկայ իր մաքրուելուն արիւնովը երսունուի-

բերք օր պիտի նստի . և մինչև իր մաքրուելու  
 օրերուն լմննալը՝ բնաւ սուրբ բանի մը չպիտի  
 գալի , ո՛չ ալ սրբութիւնը մանայ : Բայց թէ 5  
 որ անհկայ աղջիկ ծնանելու ըլլայ , երկու շա-  
 բաթ անմաքուր պիտի ըլլայ , գաշտանի շամա-  
 նակն պէս , և վսթսունըվեց օր իր մաքրուե-  
 լուն արիւնովը պիտի նստի : Աւ երբ տղայ կամ 6  
 աղջիկ զաւկի համար իր մաքրուելու օրերը լմն-  
 նայ , ժողովօրի խորանին դուռը ողջակէզի հա-  
 մար մէկ տարեկան գառն՝ ու մեղքի պատարագի  
 համար աղանձիի մը ձագ՝ կամ տատրակ մը պի-  
 տի բերէ քահանային , Ար պիտի մատուցանէ 7  
 ան՝ Տէրոջը առջևը՝ ու քաւութիւն ընէ անոր  
 համար , և անհկայ իր արիւնին վազելէն պիտի  
 մաքրուի : Երու կամ էգ զաւակ ծնանողին  
 օրէնքը աս է : Աւ թէ որ գառն բերելու կա- 8  
 բող չէ , երկու տատրակ կամ աղանձիի երկու  
 ձագ առնէ , մէկը ողջակէզի՝ ու մէկայլ մեղքի  
 պատարագի համար , և քահանան քաւութիւն  
 ընէ անոր համար՝ ու անհկայ մաքրուի :

## Գ Լ . Ժ Գ

1—59 Խորտութեան արտը իմանալու համար՝ քահանան-  
 րուն ծանուցուած կանոնները ու նշանները :

Աւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու ահարօնին՝ 1  
 ըսելով , Մարդու մը մարմինին մորթին մէջ 2  
 ուռեցք կամ քոս կամ պաղպաղ ըլլալով՝ իր

- մարմինին մորթին մէջ բորոտութեան ախտին պէս  
 նշան էր երեւալու ըլլայ, անատենը անիկայ Ը-  
 3 չարօն քաճանային կամ անոր քաճանայ որդի-  
 ներուն մէկուն պիտի բերուի: Այլ քաճանան  
 պիտի նայի մարմինին մորթին մէջը եղած ախտին  
 նշաննէ՞րը. ու թէ որ ախտին մէջի մազերը ճեր-  
 մակի դառնալով՝ ախտը երեւոյթով մարմինին  
 մորթէն խորունկ ըլլայ, բորոտութեան ախտ  
 է ան. և քաճանան պիտի նայի անոր՝ ու պի-  
 4 տի իմացունէ անոր անմաքուր ըլլալը: Հապա  
 թէ որ անոր մարմինին մորթին մէջ պաղպաջը  
 ճերմակ է՝ ու երեւոյթով մորթէն խորունկ չէ,  
 և մազն ալ ճերմակի դարձած չէ, անատենը  
 քաճանան եօթը որ գոցուած պիտի պահէ ախտա-  
 5 կիրը: Այլ քաճանան եօթներորդ օրը պիտի նա-  
 յի անոր. ու թէ որ ախտը դեռ կրկենայ,  
 ու մորթին մէջ տարածուած չէ, անատենը քա-  
 ճանան եօթը որ ալ գոցուած պիտի պահէ ա-  
 6 նիկայ: Այլ քաճանան եօթներորդ օրը նորէն  
 պիտի նայի անոր, ու թէ որ ախտը շացած ըլ-  
 լայ, ու մորթին մէջը տարածուած չըլլայ, քա-  
 ճանան պիտի իմացունէ անոր մաքուր ըլլալը.  
 ասիկայ հոյն քոս մին է. և անիկայ իր լաթե-  
 7 ըր պիտի լուայ, ու մաքուր ըլլայ: Այց թէ  
 որ իր մաքուրեւուն համար քաճանայէն նայուե-  
 լէն ետքը՝ քոսը մորթին մէջը տարածուի, քա-  
 8 ճանան նորէն նայի՝ անոր: Այլ քաճանան նայած  
 ատենը՝ թէ որ քոսը մորթին մէջը տարածուած  
 է, անատենը քաճանան անոր անմաքուր ըլլա-

լը պիտի խմացունէ . ան՝ բորոտութիւն է : Երբոր 9  
մարդու մը վրայ բորոտութեան ախտը ըլ-  
լայ , անիկայ քաճանային պիտի տարուի : Եւ 10  
քաճանան պիտի նայի . և թէ որ մորթին մէջ  
ճերմակ ուռեցք կայ՝ ու ճերմակի դարձեր է  
մազը՝ և ուռեցքին մէջը առողջ միտի նշան կայ  
Ես՝ անոր մարմինին մորթին մէջը չինցած բորո- 11  
տութիւն է . և քաճանան անոր անմաքուր ըլ-  
լայը պիտի խմացունէ , գոցուած չպահէ՛ անիկայ .  
ինչու որ անմաքուր է :

Եւ թէ որ բորոտութիւնը մորթին մէջը տա- 12  
րածուեր է , ու բորոտութիւնէն ախտաւոր ե-  
ղողին բոլոր մորթը գլխէն մինչև ոտքը , այն-  
չն՝ քաճանային աչքերուն բոլոր տեսած տեղը  
պատեր է , Եւ քաճանան տեսնայ որ բորո- 13  
տութիւնը անոր բոլոր մարմինը պատած է , անա-  
տենը ախտակրին մաքուր ըլլալը խմացունէ .  
այնպէ՛ բոլորովին ճերմակի դարձաւ , անիկայ  
մաքուր է : Եւսոյց երբոր անոր վրայ ողջ միտ 14  
տեսնուի , անիկայ անմաքուր պիտի ըլլայ : Եւ 15  
քաճանան պիտի տեսնայ ողջ միտը , և անոր  
անմաքուր ըլլալը խմացունէ . ողջ միտը անմա-  
քուր է . բորոտութիւն է : Եսկ թէ որ ողջ 16  
միտը փոխուի նորէն՝ ու ճերմակի դառնալու ըլ-  
լայ , թող զայ քաճանային . Եւ քաճանան 17  
պիտի տեսնայ անիկայ . ու թէ որ ախտը ճեր-  
մակի դարձեր է , անատենը քաճանան ախտա-  
կրին մաքուր ըլլալը խմացունէ . անիկայ մա-  
քուր է :

- 18 Եւ թէ որ մարմինին մորթին մէջը պալար  
 19 ըլլայ՝ ու տողջանայ , Եւ պալարին տեղը ճերմակ  
 ուռեցք՝ կամ քիչ մը կարմրած ճերմակ  
 պաղպաղ ըլլայ , քաշանային պիտի ցուցուի ան :
- 20 Եւ երբ քաշանան տեսնայ , որ մորթէն ցած  
 կերկնայ՝ և մազը ճերմակի դարձած է , քաշա-  
 նան անոր անմաքուր ըլլալը խմացունէ . ան՝
- 21 պալարէ ելած բորոտութեան տխտ է : Եւ  
 թէ որ քաշանան տեսնայ որ ճերմակ մազ չկայ  
 անոր մէջ , ու մորթէն ցած չէ՝ բայց քիչ մը  
 շացած է , անատենը քաշանան եօթը օր դո-  
 22 ցուած պիտի պահէ անիկայ : Եւ թէ որ մոր-  
 թին մէջը տարածուած է , անատենը քաշանան  
 անոր անմաքուր ըլլալը խմացունէ . տխտ է ան :
- 23 Բայց թէ որ պաղպաղը իր տեղը կրկնայ ու չէ  
 տարածուեր , պալարին նշանն է . և քաշանան  
 անոր մաքուր ըլլալը պիտի խմացունէ :
- 24 Իսկ թէ որ մարմինին մորթին մէջ բորբո-  
 քումն ըլլայ՝ ու բորբոքած տեղին ողջ միտը  
 քիչ մը կարմրած ճերմակ՝ կամ բոլորովին ճեր-  
 25 մակ պաղպաղ ըլլայ , քաշանան անոր նայած  
 ատենը , թէ որ պաղպաղին մէջ մազը ճերմակի  
 դարձած է ու մորթէն խորունկ կերկնայ , ան՝  
 բորբոքման մէջէն ելած բորոտութիւն է , և  
 քաշանան անոր անմաքուր ըլլալը խմացունէ .
- 26 ան՝ բորոտութեան տխտն է : Բայց թէ որ  
 քաշանային նայած ատենը՝ պաղպաղին մէջը մազը  
 ճերմակ չէ՝ ու մորթէն խորունկ չէ՝ հասար քիչ  
 մը շացած է , անատենը քաշանան եօթը օր

գոցուած պիտի պահէ անիկայ : Ալ եօթնե-27  
 բորդ օրը քահանան պիտի նայի անր . թէ որ  
 մորթին մէջը տարածուած է , քահանան անոր  
 անմաքուր ըլլալը իմացունէ : ան՝ բորտու-  
 թեան ախտ է : Ալ թէ որ պաղպաջը իր տե-28  
 ղը կրկենայ՝ ու մորթին մէջը տարածուած չէ ,  
 հասպա քիչ մը շացած է , ան՝ բորբոքման ու-  
 ռեցքն է , և քահանան անոր մաքուր ըլլալը  
 իմացունէ . ինչու որ բորբոքման նշանն է :

Ալ թէ որ մարդու մը կամ կնկան մը գլու-29  
 խը կամ մօրուքը ախտ մը ըլլայ , Քահանան30  
 պիտի տեսնայ ախտը . և թէ որ մորթէն խո-  
 բունկ երևնայ՝ ու անոր մէջը բարակ դեղին մազ  
 կայ , անատենը քահանան անո , անմաքուր ըլ-  
 լալը պիտի իմացունէ . ան՝ գոնջութիւն է ,  
 գլուխի կամ մօրուքի բորտութիւն է : Ալ31

թէ որ քահանան գոնջութեան ախտը տեսնայ  
 որ մորթէն խորունկ չերևնար՝ ու անոր մէջ  
 աւ մազ չկայ , անատենը քահանան գոնջութեամբ  
 ախտացածը եօթը օր գոցուած պիտի պահէ :

Ալ եօթներորդ օրը քահանան ախտակրին պի-32  
 տի նայի , ու թէ որ գոնջութիւնը տարածուած  
 չէ՝ և անոր մէջ դեղին մազ չկայ , ու գոնջու-

թիւնը մորթէն խորունկ չերևնար , Անիկայ պի-33  
 տի անիլուի , բայց գոնջութիւնը չպիտի անիլէ .  
 և քահանան գոցուած պիտի պահէ գոնջութիւն  
 ունեցողը եօթը օր ալ :

Ալ եօթներորդ օրը քա-34  
 հանան ախտակրին պիտի նայի , և թէ որ գոն-  
 ջութիւնը մորթին մէջ տարածուած չէ՝ ու մօր-

- Թէն խորունկ չէ , անատենը քահանան անոր  
 մաքուր ըլլալը իմացունէ . և անիկայ իր լաթե-
- 35 րը պիտի լուայ , ու մաքուր ըլլայ : Բայց թէ  
 որ իր մաքրուելէն ետքը գոնջութիւնը մորթին
- 36 մէջ տարածուի , Անատենը քահանան պիտի  
 նայի անոր . և թէ որ գոնջութիւնը մորթին  
 մէջ տարածուած է , անատենը քահանան՝ ալ  
 ղեղին մազ չպիտի՝ փնտրուէ . անիկայ անմաքուր
- 37 է : Բայց թէ որ անանան տեսնայ որ գոնջու-  
 թիւնը կրկենայ , և անոր մէջ սև մազ բուսեր է ,  
 գոնջութիւնը բժշկուած է . անիկայ մաքուր  
 է , ու քահանան անոր մաքուր ըլլալը իմացու-  
 նէ :
- 38 Աւ թէ որ մարդ մը կամ կնիկ մը՝ իր մար-  
 մինն մորթին մէջ պաղպաղներ՝ աշխարհ ձեր-
- 39 մակ պաղպաղներ ունենայ , Անատենը քահա-  
 նան պիտի նայի , և թէ որ անոնց մարմին-  
 ներուն մորթին մէջի պաղպաղները շրջած ձեր-  
 մակ ըլլան , ան՝ մորթին մէջ եղած պիտակ է .  
 անիկայ մաքուր է :
- 40 Աւ թէ որ մարդու մը գլխուն մազը թա-  
 փելու ըլլայ , անիկայ կնտակ է՝ Բայց մաքուր է :
- 41 Աւ թէ որ իր երեսին կողմէն իր գլխուն մազերը  
 ինկած ըլլայ , անիկայ ճեղ է՝ Բայց մաքուր է :
- 42 Հապա թէ որ կնտութեան կամ ճեղութեան  
 մէջ քիչ մը կարմրած ճերմակ վերք մը ըլ-  
 ւայ , ան՝ անոր կնտութեան կամ ճեղութեան
- 43 մէջէն ելած բորոտութիւն է : Անատենը քա-  
 հանան պիտի նայի անոր . և թէ որ անոր կըն-

տուժեան կամ ճեղուժեան մէջ՝ վէրքին ու-  
 ունցքը քիչ մը կարմրած ճերմակ ըլլայ՝ մարմի-  
 նին մորթին մէջ եղած բորոտուժեան երևոյ-  
 թին պէս, Ըն մարդը բորոտ է, անմաքուր է . 44  
 քաջանան անպատճառ անոր անմաքուր ըլլալը  
 պիտի իմացունէ . անոր ախտը իր գլուխն է :

Աւախտ ունեցող բորոտին հանդերձը պատ- 45  
 ոած պիտի ըլլայ, և անոր գլուխը մերկ, ու  
 անոր շրթունքները ծածկուած պիտի ըլլայ, և  
 ձայն պիտի տայ թէ՛ Ընմաքուր է՛ անմաքուր :  
 Ախտը իր վրան եղած բոլոր օրերը անմաքուր 46  
 պիտի սեպուի . անիկայ անմաքուր է, մինակ  
 պիտի նստի . անոր բնակուժիւնը բանակէն  
 դուրս պիտի ըլլայ :

Աւան հանդերձը՝ որուն մէջը բորոտուժեան 47  
 ախտ կայ, թէ բուրդէ հանդերձ ըլլայ՝ և թէ  
 քթանէ հանդերձ, Քթանեղէնի կամ բրդեղէնի 48  
 առէջի կամ թեղանի մէջ՝ կամ մորթի մէջ և կամ  
 մորթէ բանուած ամէն բանի մէջ, Ըննէն՝ թէ 49  
 որ հանդերձի կամ մորթի մէջ՝ կամ առէջի կամ  
 թեղանի մէջ՝ կամ մորթէ շինուած ամէն կերպ  
 բանի մէջ քիչ մը կանանչ կամ կարմրած  
 նշան ըլլայ, բորոտուժեան ախտ է, ու քա-  
 ճանային պիտի ցուցուի : Աւ քաջանան պիտի 50  
 նայի ախտին՝ ու եօթը օր զոցուած պիտի պա-  
 ճէ պլլչկած բանը : Աւ եօթներորդ օրը 51  
 պլլչկած բանին պիտի նայի . թէ որ ախտին  
 նշանը տարածուած է հանդերձի մը մէջ՝ կամ  
 առէջի կամ թեղանի մէջ՝ կամ մորթի մէջ



- և կամ գործածուելու համար մորթէ շինուած  
ամէն բանի մէջ , աս ախտը բորբոքած բորոտու-
- 52 տութիւն է , անմաքուր է : Սուտի անիկայ  
պիտի այրէ հանդերձը՝ կամ առէջը կամ թե-  
զանը , բուրդէ ըլլայ՝ քթանէ ըլլայ , կամ ա-  
մէն կերպ մորթէ շինուած բանը՝ որուն մէջ ան  
ախտը կայ . ինչու որ բորբոքած բորոտութիւն
- 53 է ան , կրակի մէջ պիտի այրուի : Ալ թէ որ քա-  
հանան տեսնայ որ ախտին նշանը հանդերձին մէջ՝  
կամ առէջին կամ թեզանին մէջ՝ կամ ամէն  
կերպ մորթէ շինուած բանին մէջ տարածուած
- 54 է , Անատենը քահանան պիտի հրամայէ որ  
ան պլըշուած բանը լուան . ու քահանան նո-
- 55 բէն եօթը օր գոցուած պիտի պահէ ան : Ալ  
պլըշուած բանը լուացուելէն ետքը՝ թէ որ քա-  
հանան տեսնայ որ ախտի նշանին դոյնը չէ փո-  
խուեր , ու տարածուած ալ չըլլայ , ան՝ անմաքուր  
է . կրակի մէջ պիտի այրես ան . անոր մէջը կամ
- 56 դուրսը փտութիւն կայ : Ալ թէ որ քահա-  
նան տեսնայ որ անիկայ լուացուելէն ետքը՝ ախ-  
տը քիչ մը շացած է , ան ատենը ան պլըշուած  
է . հանդերձէն կամ մորթէն՝ կամ առէջէն
- 57 և կամ թեզանէն պիտի պատուէ : Ալ թէ որ  
հանդերձի մէջ՝ կամ առէջի կամ թեզանի  
մէջ՝ կամ ամէն կերպ մորթէ շինուած բանի մէջ  
նորէն պատահելու ըլլայ , ան՝ տարածուած բորո-  
տութիւն է . ախտին նշանը վրան ունեցող բանը
- 58 կրակի մէջ պիտի այրես : Ալ ան հանդերձը՝ կամ  
առէջը կամ թեզանը՝ կամ ամէն մորթէ շինուած

բանը՝ որ լուացուելէն ետքը անկից ախար  
 քացած է, նորէն պիտի լուացուի, ու մաքուր  
 ըլլայ: Բուրդէ կամ քթանէ հանդերձի մէջ՝ 59  
 կամ առէջի կամ թեղանի մէջ՝ կամ մորթէ  
 շինուած ամէն կերպ բանի մէջ՝ բորոտութեան  
 ախտին օրէնքը աս է, անիկայ մաքուր կամ  
 անմաքուր ցուցնելու համար:

## Գ Լ . Ժ Դ

1 Բորոտը մաքրուելուն կերպը: 33 Տունի մէջի բորոտութեան  
 նշանները: 48 Եսանկ տունը մաքրելուն կերպը:

Եւ Տէրը խօսեցաւ Սոլսէսին՝ ըսելով, Բու  
 րոտին օրէնքը աս է իր մաքրուելու օրը.  
 Ենիկայ քահանային պիտի տարուի. Եւ քա-  
 հանան բանակէն դուրս պիտի ելլայ, ու պիտի  
 նայի. ու թէ որ բորոտին բորոտութեան ախ-  
 տը բժշկուած է, Ենատենը քահանան պիտի  
 հրամայէ, որ մաքրուելու հարդոն համար երկու  
 ողջ ու մաքուր թռչունն և եղևին փայտ ու  
 կրկնակի կարմիր և զոպայ առնուի: Եւ քա-  
 հանան պիտի հրամայէ որ թռչունին մէկը հո-  
 դէ ամանի մը մէջ՝ կենդանի ջուրի վրայ մոր-  
 թուի: Աղջ թռչունն ալ՝ ու եղևին փայտը  
 և կրկնակի կարմիրը ու զոպան պիտի առնէ՝ և  
 ասոնք ողջ թռչունով կենդանի ջուրին վրայ մոր-  
 թուած թռչունին արիւնին մէջ պիտի թաթխէ:  
 Եւ բորոտութենէն մաքրուելու հարդոն վրայ 7

- եօթը անգամ սրակէ , ու մաքրէ անիկայ . և  
 8 ողջ թռչունը դէպի դաշտը թող տայ : Եւ  
 մաքրուելու իւր իր լաթերը պիտի լուայ , ու  
 իր բոլոր մազերը ածիլէ , և ջրով պիտի լուա-  
 ցուի , ու մաքրուի . և անկից ետքը բանակը  
 պիտի մտնայ՝ ու եօթը օր իր վրանին դուրսի  
 9 դին պիտի կենայ : Եւ եօթներորդ օրը իր  
 բոլոր մազերը ածիլէ՝ իր գլուխը ու մօրուքը  
 և յօնքերը՝ այսինքն իր բոլոր մազերը ածիլէ . և  
 իր լաթերը պիտի լուայ , ու իր մարմինը ջրով  
 10 լուայ , ու մաքուր ըլլայ : Եւ ութերորդ օրը եր-  
 կու անարատ , բու գառն՝ ու մէկ տարեկան անա-  
 րատ էգ գառն՝ և հացի ընծայի համար եղով  
 շաղուած իրեք տասանորդ բացակ ալիւր՝ ու մէկ  
 11 ճաշակ եղ պիտի առնէ : Եւ մաքրող քահա-  
 նան՝ մաքրուելու մարդը ասոնցմով Տէրոջը առ-  
 ջևը ժողովքի հորանին դուռը պիտի կայնեցու-  
 12 նէ : Եւ քահանան արու գառին մէկը պիտի առնէ  
 ու մօտեցունէ յանցանքի պատարագին համար .  
 ու եղին ճաշակը ալիւր , և զանոնք Տէրոջը  
 13 առջևը երեքցունելու ընծայ պիտի ընէ : Եւ  
 դառը պիտի մօրթէ մեղքի պատարագին ու ող-  
 ջակէղին մօրթուած տեղը՝ սուրբ տեղը ալիւր  
 և բլէ . ինչու որ յանցանքի պատարագը՝ մեղ-  
 քի պատարագին պէս քահանայինն է . առ՝ ամե-  
 14 նասուրբ է : Եւ քահանան յանցանքի պատարա-  
 գին արիւնէն պիտի առնէ , ու քահանան մաք-  
 րուելու մարդուն աջ ականջին բլթակին վրայ՝ և

անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ ու անոր աջ  
 ոտքին մեծ մատին վրայ պիտի դնէ ան : Եւ 15  
 քահանան եղին ճաշակէն իշ իւ եւ պիտի առ-  
 նէ , ու իր ձախ ձեռքին մէջը թափէ : Եւ 16  
 քահանան աջ մատը իր ձախ ձեռքին մէջը ե-  
 դած եղին պիտի թաթխէ , ու իր մատովը Տէ-  
 բոջը առջևը եօթը անգամ սրսկէ ան եղէն :  
 Եւ քահանան իր ձեռքին մէջը մնացած եղէն 17  
 մաքրուելու մարդուն աջ աղանջին բլթակին  
 վրայ՝ ու անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ և  
 անոր աջ ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի  
 պատարագի արիւնին վրան պիտի դնէ : Եւ 18  
 քահանան իր ձեռքին մէջ մնացած եղը մաք-  
 րուելու մարդուն գլխուն վրայ պիտի դնէ , ու  
 քաւութիւն պիտի ընէ անոր համար՝ Տէրոջը  
 առջևը : Եւ քահանան մեղքի պատարագը պիտի 19  
 մատուցանէ , և իր անմաքրութենէն մաքրուե-  
 լու մարդուն համար քաւութիւն ընէ . ու ան-  
 կից կաքը ողջակէզը մորթէ : Եւ քահանան 20  
 ողջակէզը ու հացի ընծան սեղանին վրայ պիտի  
 մատուցանէ , ու անոր համար քաւութիւն ընէ ,  
 և անիկայ պիտի մաքրուի :

Եւ թէ որ անիկայ աղքատ ըլլայ՝ ու այսչա- 21  
 փին իր կաքողութիւնը չհասնի , անատենը ան-  
 որ քաւութիւն ընելու համար երեքցունելու  
 յանցանքի պատարագի համար գառնուկ մը և  
 հացի ընծայի համար եղով շաղուած տասա-  
 նորգ մը բարակ ալիւր ու ճաշակ մը եղ պիտի  
 առնէ . Եւ երկու ատարակ կամ աղաւնիի եր- 22

կու ձագ՝ որն որ գտնայ . և մէկը մեղքի պա-

23 տարագ՝ ու մէկալը ողջակէզ ըլլայ : Եւ ու-

թերորդ օրը իր մաքրուելուն համար զանոնք

քահանային պիտի բերէ ժողովքի խորանին դու-

24 ուր Տէրոջը առջևը : Եւ քահանան պիտի առ-

նէ յանցանքի պատարագին գառնուկը ու եղին

ճաշակը , և զանոնք Տէրոջը առջևը երեբցու-

25 նելու ընծայ մատուցանէ : Եւ յանցանքի

պատարագին գառնուկը պիտի մօրթէ , ու քա-

հանան յանցանքի պատարագին արիւնէն պիտի

առնէ՝ ու մաքրուելու մարդուն աջ ականջին

բլթակին վրայ՝ և անոր աջ ձեռքին մեծ մատին

վրայ՝ ու անոր աջ ոտքին մեծ մատին վրայ դնէ

26 ան : Եւ քահանան եղէն իր ձախ ձեռքին մէջը

27 պիտի թափէ : Եւ քահանան իր աջ մատովը

իր ձախ ձեռքին մէջ եղած եղէն Տէրոջը առ-

28 ջընը եօթը անգամ պիտի սրսկէ : Եւ քա-

հանան իր ձեռքին մէջ եղած եղէն մաքրուե-

լու մարդուն աջ ականջին բլթակին վրայ՝ ու

անոր աջ ձեռքին մեծ մատին վրայ՝ և անոր աջ

ոտքին մեծ մատին վրայ՝ յանցանքի պատարա-

գին արիւնը եղած տեղին վրայ պիտի դնէ :

29 Եւ քահանան իր ձեռքին մէջը եղած եղին մնա-

ցածը մաքրուելու մարդուն գլխուն վրայ պիտի

դնէ՝ Տէրոջը առջևը անոր քառութիւն ընելու

30 համար : Եւ տատրակներէն կամ տղաւնիի ձագե-

31 րէն մէկը՝ որը որ ըլլայ , Այսինքն որը որ գտնայ ,

մէկը մեղքի պատարագին համար՝ և մէկալը ողջա-

կէզի համար՝ հացի ընծային հետ մէկ տեղ պի-

տի մատուցանէ . և քաճանան մաքրուելու մար-  
դուն համար քառութիւն ընէ Տէրոջը առջևը :  
Խորոտութեան ախտ ունեցողին՝ ու իր մաքրուե- 32  
լուն համար ոչ ոք եղած պարտադրութիւնը հոգա-  
լու կարողութիւն չունեցողին օրէնքը աս է :

Եւ Տէրը խօսեցաւ Սուսէսին ու Ահարօնին 33  
ըսելով , Երբոր մտնալու ըլլաք Վանանու եր- 34  
կիրը՝ որ ձեզի ստացուածք ըլլալու պիտի տամ ,  
և ձեր ստացուածքը եղած երկրին մէկ տանը մէջ  
բորոտութեան հարուածը տալու ըլլամ , Ան 35  
ատենը ան տունին տէրը պիտի գայ , ու իմա-  
ցունէ քաճանային՝ ըսելով , Ինծի կերևնայ որ  
տանս մէջը ախտ կայ : Եւ քաճանան պիտի 36  
հրամայէ , որ ինքը տեսնալու երթալէն առաջ՝  
տունը պարպեն , որ տանը մէջ եղած բաներէն  
մէկը անմաքուր չըլլայ . ու անկից ետքը քաճա-  
նան տունը տեսնալու երթայ : Եւ ախտին նշան- 37  
ներուն պիտի նայի , ու թէ որ պլըշկած տունին  
պատերուն վրայ քիչ մը կանանչ կամ կարմիր  
խոռոչներ կայ , ու անոնք պատին երեսէն խո-  
րունկ կերևնան , Անատենը քաճանան տունէն 38  
պիտի ելլայ տանը դուռը . և եօթը օր տունը  
պիտի գոցէ : Եւ եօթներորդ օրը քաճանան 39  
նորէն պիտի գայ ու նայի . և թէ որ ախտը  
տունին պատերուն վրայ տարածուած ըլլայ ,  
Անատենը քաճանան պիտի հրամայէ որ պլըշկած 40  
քարերը հանեն , և քաղաքէն դուրս անմաքուր  
տեղ մը նետեն զանոնք : Եւ տունը ներսէն 41  
չուրջանակի քերել պիտի տայ , ու անոնց քե-

- 42 րոճ հողը քաղաքին դուրսի գին անմաքուր  
 տեղ մը պիտի թափեն : Աւ ուրիշ քարեր պիտի  
 առնեն՝ ու ան քարերուն տեղը պիտի դնեն .  
 և ուրիշ հող պիտի առնեն ու տունը ծեփեն :  
 43 Աւ թէ որ քարերը հանելէն ետքը՝ ու տունը  
 քերել տալէն և ծեփել տալէն ետքը՝ ախտը  
 44 նորէն գայ ու տանը մէջ երեան ելլայ , Անա-  
 տները քահանան պիտի գայ ու նայի . և թէ որ  
 ախտը տունին մէջ տարածուած ըլլայ , տունին  
 մէջ գէշ բորոտութիւն կայ . անմաքուր է  
 45 ան : Աւ տունը՝ այսինքն անոր քարերը ու փայ-  
 տերը՝ ու տունին բոլոր ծեփուած հողը փլցունէ ,  
 և քաղաքին դուրսի գին անմաքուր տեղ մը  
 46 հանէ : Աւ ո՛վ որ ան տունը մտնայ անոր  
 բոլոր գոցուած օրերը , մինչև իրիկուն անմաքուր  
 47 պիտի ըլլայ : Աւ ան տունը պառկողը՝ իր հան-  
 դերձը պիտի լուայ . ու ան տունը կէտի-  
 48 ուտողը՝ իր հանդերձը պիտի լուայ : Աւ թէ  
 որ քահանան գայ ու նայի որ տունը ծեփուե-  
 լէն ետքը՝ ախտը տունին մէջ տարածուած չէ ,  
 անատները քահանան ան տունին մաքուր ըլլալը  
 49 իմացունէ . ինչու որ ախտը բժշկուած է : Աւ  
 տունը մաքրուելու համար՝ երկու թռչուն ու  
 եղևին փայտ և կրկնակի կարմիր ու զոպայ պի-  
 50 տի առնէ : Աւ պիտի մորթէ թռչունին մէկը .  
 51 հողէ ամանի մը մէջ՝ կենդանի ջուրի վրայ : Աւ  
 եղևին փայտը ու զոպան՝ և կրկնակի կարմիրը  
 ու ողջ թռչունը պիտի առնէ , ու զանոնք մոր-  
 թուած թռչունին արիւնին և ան կենդանի ջուրին

մէջ պիտի խօթէ , ու եօթը անգամ տունին վրայ սրսկէ : Եւ թռչունին արիւնովը ու ան 52 կենդանի ջուրով և ան ողջ թռչունով ու եղևին փայտով և զոպայով ու կրկնակի կարմիրով պիտի մաքրէ տունը : Եւ ողջ թռչունը քաղա- 53 քին դուրսի դին դէպի դաշտը թող պիտի տայ , ու տունին համար քաւութիւն ընէ , և պիտի մաքրուի ան :

Խոլոր բորոտութեան ախտին ու գոնջութեան , 54 Եւ հանգերձի կամ տունի բորոտութեան , Եւ 55 ուսեցքի ու քոսի և պաղպաջի օրէնքը սա է : 56  
 °Սէկ բանի մը որ ատեն անմաքուր ըլլալը՝ ու 57 որ ատեն անոր մաքրուիլը՝ սորվեցունելու համար՝ բորոտութեան օրէնքը սա է :

## Ի Լ . Ժ Ե

1 Պարզոց անմաքութիւնը՝ իրենց ծորումին ժամանակը :  
 13 Ընկից մաքրուիլը : 19 Կնիկնեցուն անմաքութիւնը՝  
 իրենց ծորումին ժամանակը : 28 Ընտց մաքրուիլը :

Եւ Տէրը խօսեցաւ Սուսէսին ու Ըհարօնին՝ 1  
 ըսելով , Խօսեցէք Խարայէլի որդւոցը՝ ու 2  
 ըսէք անոնց . Երբոր մարդու մը մարմինէն ծո-  
 րումն ըլլայ , անոր ծորումը անմաքուր է : Եւ իր 3  
 ծորումիս մէջ՝ իր անմաքութիւնը սա պիտի ըլլայ .  
 թէ որ իր մարմինէն իր ծորումը վազէ , կամ իր  
 մարմինը իր ծորմանէն գոցուի , ան իր անմաք-  
 րութիւնն է : Ըմէն անկողին՝ որուն վրայ 4  
 ծորումն ունեցողը կըպառկի , անմաքուր է . և

\*Ս-ի մէկ բան մը երբոր անմաքուր է ու երբոր մաքուր է՝  
 (Ինչ ընելիքը)



- ամէն բան՝ որուն վրայ անիկայ նստի , անմա-  
 5 քուր պիտի ըլլայ : Եւ անոր անկողինին դրպ-  
 չող մարդը՝ իր հանդերձը պիտի լուայ , ու ինքը  
 ջրով լուացուի , և մինչև իրիկուն անմաքուր  
 6 ըլլայ : Եւ ծորումն ունեցողին նստած բանին  
 վրայ նստողը՝ իր հանդերձը պիտի լուայ , ու ին-  
 քը ջրով լուացուի , և մինչև իրիկուն անմաքուր  
 7 ըլլայ : Եւ ծորումն ունեցողին մարմինին դրպ-  
 չողը՝ իր հանդերձը պիտի լուայ , ու ինքը ջու-  
 րով լուացուի , և մինչև իրիկուն անմաքուր  
 8 ըլլայ : Եւ ծորումն ունեցողը մաքուր մարդու  
 մը վրայ թուքնելու ըլլայ , անիկայ իր հանդերձը  
 պիտի լուայ , ու ինքը ջուրով լուացուի , և մինչև  
 9 իրիկուն անմաքուր ըլլայ : Եւ ամէն թամբ՝  
 որուն վրայ ծորումն ունեցողը կը հեծնայ , անմա-  
 10 քուր պիտի ըլլայ : Եւ ամէն անոր տակը և  
 զած բանին դպչողը՝ մինչև իրիկուն անմաքուր  
 պիտի ըլլայ . ու զանոնք վերցունողը՝ իր հանդերձը  
 պիտի լուայ , և ինքը ջուրով լուացուի՝ ու մին-  
 11 չև իրիկուն անմաքուր ըլլայ : Եւ ծորումն  
 ունեցողը՝ իր ձեռքը ջուրը չխօթած՝ որին որ  
 դպչելու ըլլայ , անիկայ իր հանդերձը պիտի  
 լուայ , ու ինքը ջուրով լուացուի , և մինչև ի-  
 12 իկուն անմաքուր ըլլայ : Եւ ծորումն ունե-  
 ցողին դպած հողէ ամանը պիտի կոտրուի , ու  
 ամէն փայտէ աման ջուրը պիտի խօթուի :  
 13 Եւ երբ ծորումն ունեցողը իր ծորումէն մաքրուի ,  
 իր մաքրուելուն համար եօթը օր պիտի համրէ  
 իրեն . և իր հանդերձը լուայ , ու իր մարմինը

կենդանի ջուրի մէջ լուայ , և մաքուր պիտի ըլ-  
լայ : Աւ ռւթերորդ օրը՝ երկու տատրակ կամ 14  
աղաւնիի երկու ձագ պիտի առնէ իրեն , ու  
Տէրօջը առջևը ժողովքի խորանին դուռը դայ ,  
և անոնք քահանային տայ : Աւ քահանան 15  
անոնց մէկը մեղքի պատարագ՝ ու մէկալը ողջա-  
կէզ պիտի ընէ , և քահանան Տէրօջը առջևը  
քաւութիւն ընէ անոր՝ իր ծորումին համար :  
Աւ թէ որ մարդու մը զուգաւորութեան սերմը 16  
իրմէն ելլալու ըլլայ , իր բոլոր մարմինը ջուրով  
պիտի լուայ , ու մինչև իրիկուն անմաքուր ըլ-  
լայ : Աւ ամէն հանդերձ ու ամէն մօթ՝ որուն 17  
վրայ զուգաւորութեան սերմ կայ , ջուրով պի-  
տի լուացուի , ու մինչև իրիկուն անմաքուր ըլ-  
լայ : Աւ երբոր մարդ մը կնկանը հետ զու- 18  
գաւորելու համար պառկի , անոնք երկուսնին ու  
ջուրով պիտի լուացուին , ու մինչև իրիկուն  
անմաքուր ըլլան : Աւ թէ որ կնիկ մը ծորումն 19  
ունենայ՝ « անոր ծորումը արիւն է , եօթը օր  
զատուած պիտի կենայ . և ամէն անոր դպչողը  
մինչև իրիկուն անմաքուր ըլլայ : Աւ անոր 20  
զատուած ատենը ինչ բանի վրայ որ պառկի ,  
ան բանը անմաքուր պիտի ըլլայ , և ինչ բա-  
նի վրայ որ նստի , ան բանը անմաքուր պիտի  
ըլլայ : Աւ ամէն անոր անկողինին դպչողը՝ իր 21  
լոթերը պիտի լուայ , ու ջուրով լուացուի ,  
և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ : Աւ ով 22  
որ դպչի բանի մը՝ որուն վրայ անիկայ նստաւ ,  
իւր լոթերը պիտի լուայ , ու ինքը ջուրով լուա-

- 23 ցուի , և մինչև իրիկուն անմաքուր ըլլայ : Անոր անկողինին դպչողը՝ կամ անոր մէկ բանին որուն վրան անիկայ կընստի , մինչև իրիկուն
- 24 անմաքուր պիտի ըլլայ : Այլ թէ որ մարդ մը անոր հետ պառկի , անանկ որ անոր պղծութիւնը իրեն դաչի , ան Խաչը եօթը օր անմաքուր պիտի ըլլայ . և ամէն անկողինը՝ որուն վրայ
- 25 անիկայ պառկի՝ անմաքուր ըլլայ : Այլ կնիկ մը թէ որ իր դաշտանին ատենը չեկած , իր արիւնին ծորումը շատ օրեր վազէ , կամ իր դաշտանէն աւելի վազելու ըլլայ , իր անմաքութեանը ծորումին բոլոր օրերը՝ իր դաշտանին օրերուն
- 26 պէս պիտի ըլլայ . անիկայ անմաքուր է : Անոր ծորումին բոլոր օրերը՝ ամէն անկողին որուն վրայ անիկայ կը պառկի , իր դաշտանին անկողինին պէս պիտի ըլլայ իրեն . և ինչ բանի վրայ որ կընստի , իր դաշտանին անմաքութեանը պէս
- 27 անմաքուր ըլլայ : Այլ ամէն անոնց դպչողը անմաքուր պիտի ըլլայ . ու իր լաթերը լուայ և ինքը ջուրով պիտի լուացուի , ու մինչև իրիկուն
- 28 անմաքուր ըլլայ : Այլ թէ որ իր ծորումէն մաքրուի , անատենը եօթը օր պիտի համրէ իրեն ,
- 29 ու անկից ետքը մաքուր ըլլայ : Այլ ութերորդ օրը՝ երկու տասրակ կամ աղանիի երկու ձաղ պիտի առնէ իրեն , ու ժողովքի խորանին դուռը
- 30 քահանային պիտի բերէ անոնք : Այլ քահանան մէկը մեղքի պատարագ՝ ու մէկայը ողջակէզ պիտի ընէ , և քահանան Տէրօջը առջևը քառութիւն

պիտի ընէ անոր իր անմաքրութեանը ծորումին համար :

Եւսպէս Խորայէլի որդիները իրենց անմաք- 31  
րութենէն պիտի զզուշացունէք , որ իրենց մէջը  
եղած իմ խորանս պղծելով՝ իրենց անմաք-  
րութեանը պատճառով չմեռնին : Ծորումն 32  
ունեցողին՝ և իրմէ զուգաւորութեան սերմը եւ-  
լալով՝ անմաքուր եղողին , Ու իր դաշտանէն 33  
հիւանդ կնիկին՝ և ծորումն ունեցող մարդուն  
կամ կնիկին՝ ու անմաքուր կնկան հետ պառկող  
մարդուն օրէնքը աս է :

Գ Լ . Ժ Զ

1 Քահանայապետը ինչպէս պիտի մտնէր սրբութիւն սրբու-  
թեանցին մէջ : 11 Իրեն համար մատուցանելու մեղքի պա-  
տարազը : 15 Ժողովուրդին համար մատուցանելու մեղքի  
պատարազը : 20 Եզատուելու նոխազը : 29 Տարեկան քաւու-  
թեան օրը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին , Եհարօնին եր- 1  
կու որդւոցը մեռնելէն ետքը , որոնք Տէրոջը  
օրհար իրոյ մատուցին ու մեռան . Եւ Տէրը 2  
ըսաւ Մովսէսին . Խօսէ քու Եհարօն եղբորդ  
որ ամէն ատեն սուրբ տեղը՝ վարագուրին ներ-  
սի դին՝ տապանակին վրայ եղած քաւութիւնին  
առջևը չմտնայ , որ չմեռնի . ինչու որ ամպի  
մէջ պիտի երևնամ քաւութիւնին վրայ : Ե- 3  
հարօնը աս Բանէլով պիտի մտնայ սրբարանը .  
մեղքի պատարազի համար զուարակով մը , և  
ողջակեզի համար խոյով մը : Ատաւէ սուրբ շա- 4  
պիկը պիտի հագնի , և իր մարմնին վրայէն

- կտաւէ վարտիքը ունենայ , ու կտաւէ գօտին  
 իր մէջքը կապէ , և կտաւէ խոյրը իր գլուխը  
 դնէ . ասոնք սուրբ զգեստներ են . ուստի իր  
 մարմինը ջուրով պիտի լուայ , ու զանոնք հաղ-  
 5 նի : Եւ Իսրայէլի որդւոցը ժողովքէն մեղքի  
 պատարագի համար այժեբէն երկու նոխազ՝ ու  
 6 ողջակէզի համար մէկ խոյ մը պիտի առնէ : Եւ Ե-  
 հարօն իրեն մեղքի պատարագին զուարակը պի-  
 տի մատուցանէ , և իրեն համար ու իր տանը  
 7 համար քաւուծիւն պիտի ընէ : Եւ երկու  
 նոխազը պիտի առնէ՝ ու Տէրօջը առջևը ժողով-  
 8 քի խորանին դուռը մօտեցունէ : Եւ Եհարօն  
 ան երկու նոխազներուն վրայ վիճակներ պիտի  
 ձգէ . մէկ վիճակը Տէրօջը համար՝ ու մէկալ վի-  
 9 ճակը աղատ ընելու նոխազին համար : Եւ Եհար-  
 օն պիտի մօտիկցունէ ան նոխազը՝ որուն վրայ  
 Տէրօջը վիճակը ելաւ , ու մեղքի պատարագ ընէ  
 10 զանիկայ : Եւ ան նոխազը՝ որուն վրայ աղատ  
 ըլլալու վիճակը ելաւ , Տէրօջը առջևը ողջ պի-  
 տի կայնեցունէ՝ անով քաւուծիւն ընելու , ու  
 գէպի անապատը խրկելու , որ հօն ազատուի ա-  
 նիկայ :
- 11 Եւ Եհարօն իր մեղքի պատարագին զուարակը  
 պիտի մատուցանէ , և իրեն համար ու իր տանը  
 համար քաւուծիւն պիտի ընէ , և իր մեղքի  
 12 պատարագին զուարակը մօրթէ : Եւ Տէրօջը  
 առջևը նղաճ սեղանէն կրակի կայծերով լեցուն  
 բուրլառը պիտի առնէ , ու ձեւուած անուշահոտ  
 խունկէն իր ձեռքերը լեցունէ , ու վարագուրին

ներսի դին բերէ : Աւ խունկը Տէրոջը առջևը 13  
 կրակին վրայ պիտի դնէ , ու խունկին մուխը  
 վկայութիւնին վրայի քաւութիւնը ծածկէ , որ  
 չմեռնի : Աւ զուարակին արիւնէն պիտի առնէ՝ 14  
 ու իր մատովը քաւութիւնին վրայ արևելեան  
 կողմը սրսկէ . և իր մատովը արիւնէն քաւու-  
 թիւնին առջևը եօթը անգամ սրսկէ : Աւ 15  
 ժողովուրդին համար մեղքի սրտարագ ըլլալու  
 նոխազը պիտի մորթէ՝ ու ասոր արիւնը վարա-  
 գուրին ներսի դին պիտի բերէ . և զուարակին  
 արիւնովը ըրածին պէս ընէ անոր արիւնովը ,  
 այսինքն՝ քաւութիւնին վրայ ու քաւութիւնին  
 առջևը սրսկէ ան : Աւ սրբարանին համար քա- 16  
 ւութիւն պիտի ընէ՝ Խորայէլի որդւոցը անմաք-  
 բութենէն ու անոնց բոլոր մեղքերուն յանցանք-  
 ներէն «բէ-է-լ-լ-լ զանիկայ . ասանկ պիտի ընէ ժո-  
 ղովքի խորանին համար ալ , որ անոնց հետը «-  
 անոնց անմաքբութիւններուն մէջն է : Աւ սրբա- 17  
 րանը քաւութիւն ընելու մտած ատենը , իրեն  
 համար ու իր տանը համար և Խորայէլի բոլոր  
 ժողովքին համար մինչև անոր քաւութիւն ը-  
 նելը ու գուրս ելլալը՝ ժողովքի խորանին մէջ  
 մարդ մը չպիտի ըլլայ : Ու ետքը Տէրոջը առ- 18  
 ջևը եղած սեղանը պիտի երթայ , ու սեղանին  
 համար քաւութիւն ընէ . և զուարակին արիւ-  
 նէն ու նոխազին արիւնէն առնէ , և սեղանին  
 եղջիւրներուն վրայ շուրջանակի դնէ : Աւ ա- 19  
 րիւնէն իր մատովը եօթը անգամ անոր վրայ  
 պիտի սրսկէ . ու Խորայէլի որդւոցը անմաքբու-

- 20 Թենէն մաքրէ ու սուրբ ընէ ան : Աւ սրբա-  
րանին ու ժողովքի խորանին՝ և սեղանին հա-  
մար քառութիւն ընելը լմնցունելէն ետքը , ողջ
- 21 նոխազը մօտիկցունէ : Աւ Ահարօն իր երկու  
ձեռքերը ողջ նոխազին գլխուն վրայ պիտի դնէ ,  
ու Իսրայէլի որդւոցը բոլոր անօրէնութիւնը և  
անոնց բոլոր յանցանքը և բոլոր մեղքերը պիտի  
խոստովանի անոր վրայ . և զանոնք նոխազին  
գլխուն վրայ դնելով՝ յարմար մարդու մը ձեռ-
- 22 քով անապատը խրկէ : Աւ նոխազը անոնց ան-  
օրէնութիւնները իր վրան առած՝ անբնակ եր-  
կիր մը պիտի տանի . և իւրաքանչիւր անապատին մէջ  
թող տայ նոխազը :
- 23 Աւ Ահարօն ժողովքի խորանը պիտի մտնայ ,  
ու սրբարանը մտնելու ժամանակին հազած կտա-  
ւէ հանդերձները հանէ , և զանոնք հոն ձգէ :
- 24 Աւ սուրբ տեղը իր մարմինը ջուրով պիտի լուայ ,  
ու իր հանդերձները հազնի . և ելայ իր ող-  
ջակեզը ու ժողովուրդին ողջակեզը մատուցանէ :  
ու իրեն համար և ժողովուրդին համար քառու-
- 25 թիւն ընէ : Աւ մեղքի պատարազին ճարպը  
սեղանին վրայ պիտի սյրէ :
- 26 Աւ նոխազը ազատ ընելու տանողը՝ իր հան-  
դերձները պիտի լուայ , ու իր մարմինը ջու-  
րով լուայ , և ետքը բանակը մտնայ :
- 27 Աւ ան մեղքի պատարազին զուարակը ու  
մեղքի պատարազին նոխազը՝ որոնց արիւնը քա-  
ռութիւն ընելու համար սուրբ տեղը բերուե-  
ցաւ , զանոնք բանակէն դուրս պիտի հանեն :

և անոնց մորթերը ու անոնց միտերը և անոնց  
 աղբը կրակով այրեն : Այլ զանոնք այրողը [կր 28  
 հանդերձները պիտի լուայ , ու մարմինը ջու-  
 րով լուայ , ու կտքը բանակը մտնայ : Այլ առ 29  
 ձեզի յաւիտենական օրէնք ըլլայ , որ կօթնե-  
 րորդ ամուսն մէջ՝ ամուսն տասներորդ օրը ձեր  
 հօգիները պիտի խոնարհեցունէք ու բնաւ գործ  
 մը չգործէք , թէ բնիկ եղողը՝ և թէ ձեր մէ-  
 ջը զանուող օտարականը : Վանզի ան օրը առ 30  
 էանան ձեզի քառութիւն պիտի ընէ ձեզ մաք-  
 րելու համար , որ ձեր բոլոր մեղքերէն մաքրուիք .  
 Տէրոջը առջևը : Ան ձեզի հանգստութեան 31  
 շաբաթ պիտի ըլլայ , և յաւիտենական օրէն-  
 քով մը խոնարհեցունէք ձեր անձերը : Այլ իր 32  
 հօրը տեղը քահանայութիւն ընելու համար օ-  
 ճուած ու օրհնուած քահանան քառութիւնը պի-  
 տի ընէ , և հազնի կտակէ հանդերձները՝ այ-  
 նին սուրբ հանդերձները : Այլ օրբարանին հա- 33  
 մար քառութիւն պիտի ընէ , և ժողովքի խո-  
 բանին համար ու սեղանին համար քառութիւն  
 ընէ . և քահանաներուն ու ժողովքին բոլոր  
 ժողովուրդին համար քառութիւն ընէ : Այլ առ 34  
 ձեզի յաւիտենական կանոն ըլլայ՝ Խորայէլի  
 որդւոցը համար իրենց բոլոր մեղքերուն քա-  
 ւութիւն ընելու տարին անդամ մը : Այլ առ  
 նոյն՝ Տէրոջը Մովսէսին պատուիրածին պէս ը-  
 րաւ :



## ԳԼ. ԺԷ

1 Մեն մորթուած անասուններուն արիւնը Տէրոջը պիտի մատուցուէր խորանին դրանըքովը : 7 Կեկերուն զո՛հ բնելը կարգիլուի : 10 Մեն արիւնոտ բանը , 15 ու մնածը և դաղանէ փառատուածը ուտելը կարգիլուի :

- 1 **Մ**է Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ-
- 2 սէ՛ Ըհարօնին ու անոր որդւոցը և բոլոր Խորայէլի որդւոցը՝ ու ըսէ՛ անոնց . Ըս է որ
- 3 Տէրը պատուիրեց՝ ըսելով , Խորայէլի տունէն սի՛ որ արջառ մը կամ ոչխար մը և կամ այծ մը բանակին մէջ մորթէ , կամ բանակէն դուրս
- 4 մորթէ , Եւ ժողովքի խորանին առջևը Տէրոջը զո՛հ մատուցանելու համար՝ Տէրոջը խորանին դուռը չբերէ , արիւնոտ պիտի սեպուի ան մար-
- 5 դը . անիկայ արիւն թափած է . ու ան մար-
- 6 դը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի . Որպէս զի Խորայէլի որդիքը ան զոհերը որ հիմա դաշտի մէջ կրմորթեն , Տէրոջը բերեն . այսինքն՝ ժողովքի խորանին դուռը քահանային բերեն , և խաղաղութեան զոհերու համար զանոնք
- 7 Տէրոջը մատուցանեն : Եւ քահանան պիտի սրսկէ արիւնը ժողովքի խորանին դուռը՝ Տէրոջը սե-
- 8 զանին վրայ , ու ճարպը անոյշ հոտի համար այրէ Տէրոջը առջևը : Եւ իրենց զոհերը ալ չպիտի մորթեն դեկերուն՝ որոնց ետեւէն Էբլուլ պոռնրկութիւն ըրին : Ըս անոնց յախտենական կանոն պիտի ըլլայ իրենց ցեղերուն մէջ : Եւ պիտի

ըսես անոնց . Խորայէլի տունէն կամ ձեր մէջը բնակող օտարականներէն մէկ մարդ մը ողջակէզ կամ՝ զո՛հ մատուցանելու ըլլայ , Եւ ան՝ 9  
Տէրօջը մատուցանելու համար ժողովքի խորանին դուռը չբերէ , ան մարդը՝ իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի :

Եւ Խորայէլի տունէն կամ ձեր մէջը բնա-10  
կող օտարականներէն մէկ մարդ մը ի՛նչ և իցէ արիւն ուտելու ըլլայ , իմ երեսս ան արիւն ուտող անձին վրայ պիտի տնկեմ , ու զանիկայ իր ժողովուրդին մէջէն կորսընցունեմ : Ինչու 11  
որ մարմինին կենդանու թիւնը արիւնին մէջն է . և ես ձեզի տուի ան , որ սեզանին վրայ ձեր հոգիներուն համար քառութիւն ընէք . քանզի հոգիին համար քառութիւն ընողը արիւնն է :  
Ընոր համար՝ Խորայէլի որդւոցը ըսի . Չեղ-12  
մէ մէկը արիւն չպիտի՝ ուտէ . ձեր մէջը բնակող օտարականն ալ արիւն չուտէ : Եւ Խո-13  
ր յէլի որդիներէն՝ կամ ձեր մէջը բնակող օտարականէն մէկը՝ ուտուելու վայրենի անասունի կամ թռչունի որս սրսալու ըլլայ , անոր արիւնը պիտի թափէ , ու հողով ճածկէ ան :  
Ինչու որ ամէն մարմինին կենդանու թիւնը՝ իր 14  
արիւնն է , անիկայ է բուն կենդանութիւնը . ուտաի Խորայէլի որդւոցը ըսի . Ի՛նչ և իցէ մարմնի արիւնը չպիտի՝ ուտէք . քանզի ամէն մարմնին կենդանութիւնը՝ իրեն արիւնն է . ո՛վ որ ուտէ ան՝ պիտի կորսուի : Եւ երկրին 15  
բնակիչներէն կամ օտարականներէն՝ դի կամ

փառատուած ուտող ամէն մարդ՝ իր լաթերը պիտի լուայ, ու ինքը ջուրով լուացուի, և 16 մինչև իրիկուն անմաքուր ըլլայ ու էսքա մաքուր ըլլայ. Յայց թէ որ չլուայ զանոն, և իր մարմինը չլուայ, անատենը իր անօրէնութիւնը պիտի կրէ:

ԳԼ ԺԸ

1 Ապօրինաւոր ամուսնութիւններուն համար: 19 ապօրինաւոր ցանկութիւններուն համար:

1 Այլ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով, Խօսե՛ 2 սէ՛ Իսրայէլի որդւոցը ու ըսէ անոնց. Ասեմ՛ 3 եմ՛ Ահուայ ձեր Ատուածը: Ըն՛ ձեր բնակած Ազխատոսի երկրին ըրածին պէս չպիտի՛ ընէք. և Քանանու երկրին ըրածին պէս՝ ուր որ ձեզ պիտի տանիմ, չպիտի՛ ընէք, ու անոնց կանոններուն պէս չպիտի՛ քալէք: Իմ դատաստաններս պիտի ընէք և իմ կանոններս պահէք, որ անոնցմով քալէք. ես եմ՛ ձեր Տէր Ատուածը: Ուստի իմ կանոններս ու իմ դատաստաններս պիտի պահէք, որ զանոնք կատարող մարդը անոնցմով պիտի ապրի. ես եմ՛ Տէրը:

6 Ինչու մէկը իր մարմնաւոր ազգականին չպիտի՛ մօտենայ՝ անոր մերկութիւնը բանալու համար. 7 ես եմ՛ Տէրը: Քու հօրդ մերկութիւնը կամ քու մօրդ մերկութիւնը չպիտի՛ բանաս. անիկայ քու մայրդ է, անոր մերկութիւնը չպիտի՛

բանաս : Վու հօրդ կնկանը մերկութիւնը 8  
 չպիտի՛ բանաս . ան՝ քու հօրդ մերկութիւնն է :  
 Վու հօրդ աղջկանը կամ քու մօրդ աղջկանը 9  
 քու քրոջը մերկութիւնը՝ թէ՛ տանը մէջ ծնած  
 ըլլայ՝ թէ՛ դուրսը ծնած , անոնց մերկութիւնը  
 չպիտի՛ բանաս : Վու որդիիդ աղջիկին կամ քու 10  
 աղջկանդ աղջիկին մերկութիւնը՝ անոնց մերկու-  
 թիւնը չպիտի՛ բանաս . ինչու որ անոնց մեր-  
 կութիւնը քուկդ է : Վու հօրդ կնկանը աղ- 11  
 ջիկին մերկութիւնը՝ քու հօրմէդ ծնած քու քոյրդ  
 ըլլալովը՝ անոր մերկութիւնը չպիտի՛ բանաս :  
 Վու հօրդ քրոջը մերկութիւնը չպիտի՛ բանաս . 12  
 անիկայ քու հօրդ ազգականն է : Վու մօրդ 13  
 քրոջը մերկութիւնը չպիտի՛ բանաս . ինչու որ  
 անիկայ քու մօրդ ազգականն է : Վու հօրդ 14  
 եղբօրը մերկութիւնը չպիտի՛ բանաս , անոր  
 կնկանը չմօտենան . անիկայ քու հօրաքոյրդ իշ-  
 ւանաւորն է : Վու հարսիդ մերկութիւնը չպիտի՛ 15  
 բանաս . անիկայ քու որդիիդ կնիկն է . անոր  
 մերկութիւնը չբանաս : Վու եղբօրդ կնկանը 16  
 մերկութիւնը չպիտի՛ բանաս . ան քու եղբօրդ  
 մերկութիւնն է : Անկան մը ու անոր աղջկանը 17  
 մերկութիւնը չպիտի՛ բանաս . և անոր որդիին  
 աղջիկը կամ անոր աղջիկին աղջիկը չպիտի՛ առ-  
 նես՝ անոնց մերկութիւնը բանալու համար . ա-  
 նոնք քու ազգականներդ են . անօրէնութիւն է  
 ան : Աւ կնիկ մը իր քրոջը հետ չպիտի՛ առնես 18  
 անիկայ իր ողջութեանը ատենը վշտացունելու  
 համար՝ մէկալին մերկութիւնը բանալով :

- 19 Եւ իր անմաքրութեանը ատենը զատուած կրն-  
կան մը չպիտի՝ մօտենաս՝ անոր մերկութիւնը
- 20 բանալու : Եւ զուգաւորութեան համար՝ քու  
դրացիիդ կնկանը հետ չպիտի՝ պառկիս , անոր
- 21 հետ պղծուելով : Քու սերունդէդ Սողոքի հա-  
մար կրակէն անցնելու չպիտի՝ թողուս . և քու  
Աստուծոյդ անունը չպղծես . ես եմ Տէրը :
- 22 Եւ արուի հետ՝ կնկան հետ պառկելու պէս չպի-  
տի՝ պառկիս . զզուելի է ան : Եւ բնաւ ան-
- 23 ասունի մը հետ չպիտի՝ զուգաւորիս , անոր  
հետ պղծուելով . ու բնաւ կնիկ մը անասունի  
մը առջևը չպիտի՝ դայնի՝ անոր հետ զուգաւո-  
րելու . պղծութիւն է ան :
- 24 Ասոնց մէկովն ալ բնաւ չպղծուիք . ինչու որ  
բոլոր ասոնցմով պղծուեցան ազգերը՝ որ ձեր
- 25 առջևէն պիտի վարնտեմ : Եւ ան երկիրը պղղ-  
ծուելովը՝ անոր անօրէնութիւնը անոր վրայ պի-  
տի հատուցանեմ , ու ան երկիրը իր բնակիչնե-
- 26 ըր պիտի փսխէ : Ուստի դուք իմ կանոններս  
ու դատաստաններս պիտի պահէք , ու աս պղղ-  
ծութիւններէն մէկն ալ չպիտի՝ ընէք՝ ոչ երկ-  
րին բնակը , ոչ ալ ձեր մէջը գանուող օտա-
- 27 բականը : Քանզի ձեզմէ առաջ ան երկրին մար-  
դիկը բոլոր աս պղծութիւնները ըրին , ու ան
- 28 երկիրը պղծուեցաւ : Ուրիշ զգուշացէ՛ , որ ըլլ-  
այ թէ ան երկիրը ձեզ ալ դուրս փսխէ ան  
պղծած ատեննիդ , ինչպէս որ ձեզմէ առաջ եղած
- 29 ազգերը փսխեց : Քանզի ո՛վ որ ամէն աս պղղ-  
ծութիւններէն մէկը ընելու ըլլայ , ան ընող

անձինքը իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսուին : Աւտի իմ հրամաններս պիտի պահէք , 30 որ ձեզմէ առաջ գործուած պիղծ սովորութիւններէն մէկը չընէք , ու անոնցմով չպղծուի՛ք : Ես եմ Տէրը ձեր Մատուածը :

## Գ Լ . Ժ Թ

1 — 27 . Օգնագան կանոններու կրկնութիւն :

Աւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Իօ- 1  
սէ Իսրայէլի որդւոցը բոլոր ժողովքին՝ ու 2  
ըսէ անոնց . 'Ի՞նչ սուրբ եղի՛ք . ինչու որ ես ձեր Ահոյ Մատուածը սուրբ եմ : Չեր ամէն 3  
մէկը իր մօրմէն ու իր հօրմէն պիտի վախնայ , և իմ շաբաթս պիտի պահէք . ես եմ Տէրը ձեր Մատուածը : Կուռքերուն ետեւէն մի՛ խտորիք , 4  
և ձուլածոյ աստուածներ մի՛ շինէք ձեզի . ես եմ Տէրը ձեր Մատուածը :

Աւ Թէ որ խաղաղութեան զոհ մատուցանէք 5  
Տէրոջը , անան՛կ մատուցէք որ ընդունելի ըլլայ : Օգնը մատուցած օրերնիդ և հետեւալ օրն ալ 6  
պիտի ուտուի . ու երրորդ օրուան մնացածը կրակով պիտի այրուի : Աւ Թէ որ անկից եր- 7  
րորդ օրը ուտուելու ըլլայ , ան պիղծ է՝ չպիտի ընդունուի : Աւ ան ուտողը անոր մեղքը պիտի 8  
կրէ , ինչու որ Տէրոջը սուրբ բանը պղծեց . ու ան անձը իր ժողովուրդէն պիտի կորսուի : Աւ ձեր երկրին հունձը շնծելու ասե՛ննիդ՝ 9

- արտին եղերքը ըման չպիտի նձեռն , ու քու  
 10 հունձէդ ինկած հասկերը չպիտի ժողվես : Եւ  
 քու այդիդ ճռաքաղ չպիտի ընես , այսինքն այ-  
 գիիդ մէջ մնացած ողկոյզները չպիտի հաւքես .  
 զանոնք աղքատին ու օտարականին համար պիտի  
 թողուս . ես եմ՝ Տէրը ձեր Եստուածը :
- 11 Գողութիւն մի՛ ընէք , սուտ մի՛ զուրկէք ,  
 12 և մէկզմէկ մի՛ խաբէք : Եւ իմ անունովս սուտ  
 տնդը երդում մի՛ ընէք . ու ձեր Եստուծոյ ա-  
 13 նունը մի՛ պղծէք . ես եմ՝ Տէրը : Քու դրա-  
 ցիիդ զօրանք մի՛ ընէր , և յափշտակութիւն մի՛  
 ընէր . քեզի վարձքով բանողին օրակն վարձքը  
 մէկ գիշեր մինչև առտու քու քովդ թող չմնայ :
- 14 Խուլին մի՛ հայհոյեք , ու կոյրին առջևը գայ-  
 թակղութիւն մի՛ դնէր , հապա քու Եստուծմէդ  
 15 վախցիր . ես եմ՝ Տէրը : Վատաստանի մէջ անի-  
 բաւութիւն մի՛ ընէք . աղքատին աչառութիւն  
 մի՛ ընէր , և մեծին մի՛ շողոքորդէր . քու դրացիդ  
 16 արդարութիւնով դատէ : Քու ժողովուրդիդ մէ-  
 ջը չարախօսութիւն ընելու չպտրտիս . քու  
 դրացիիդ արիւնը նոսրու պատճառ չըլաս . ես  
 17 եմ՝ Տէրը : Եղբայրդ քու սրտիդ մէջը չպիտի  
 ատես . քու դրացիդ յանդիմանելով պիտի  
 յանդիմանես , ու չթողուս որ անիկայ մեղքի մէջ  
 18 մնայ : Վրէժ չպիտի առնես , և քու ժողովուր-  
 դիդ որդւոցը ոխ չպիտի պահես , հապա քու  
 դրացիդ քու անձիդ պէս պիտի սիրես . ես եմ՝  
 Տէրը :
- 19 Իմ օրէնքներս պիտի պահէք . քու անա-

սունիդ մէկ տեսակը ուրիշ տեսակին հետ զուգա-  
 ւորել չպիտի տաս . քու արտիդ մէջ զանազան  
 սերմ չպիտի ցանես . և երկու նիւթէ գործուած  
 հանդերձ չպիտի հագնիս : Եւ թէ որ մէկը<sup>20</sup>  
 կնկան մը հետ պառկելով՝ զուգաւորութիւնը  
 նէ , ու անիկայ մէկու մը ծախու առած աղախինը  
 ըլլալով՝ բնաւ փրկուած չըլլայ , ոչ ալ անոր  
 ազատութիւն տրուած , անոնք պիտի պատ-  
 ժուին . անոնք չպիտի մնանին . ինչու որ ան  
 կնիկը ազատ չէր : Եւ հարցը իր յանցանքին<sup>21</sup>  
 պատարագը Տէրոջը պիտի բերէ ժողովքի խո-  
 բանին դուռը , խոյ մը յանցանքի պատարագին  
 համար : Եւ քահանան քաւութիւն պիտի ընէ<sup>22</sup>  
 անոր՝ իր ըրած մեղքին համար , յանցանքի պա-  
 տարագին խոյովը Տէրոջը առջևը . և անոր ը-  
 րած մեղքը պիտի ներուի իրեն :

Եւ երբոր ան երկիրը մտնաք , ու ամէն կերպ<sup>23</sup>  
 ծառերը անկելու ըլլաք պտուղը ուտելու համար ,  
 անատենը անոր պտուղը չթլիատուածի պէս ան-  
 մաքուր պիտի սեպէք . ան ձեզի իրեք տարի  
 չթլիատուածի պէս սեպուելով՝ չպիտի ուտուի :  
 Եւ չորրորդ տարին՝ անոր բոլոր պտուղը Տէրը<sup>24</sup>  
 փառաւորելու համար սուրբ պիտի ըլլայ : Եւ<sup>25</sup>  
 հինգերորդ տարին՝ անոր պտուղը պիտի ուտէք ,  
 որ իր արդիւնքը ձեզի համար աւելցունէ . ես  
 եմ Տէրը ձեր Ետուածը : Երիւնով Դս չպի-  
 տի ուտէք . չպիտի հմայէք , և գուշակութիւն  
 չպիտի ընէք : Չեր գլխերուն եզերքի մագերը<sup>27</sup>  
 չպիտի կարէք , ու քու մօրուքիդ եզերքը չպի-



- 28 տի՛ աւրես : Եւ մէկու մը «-գէն» համար ձեր  
մարմինին վրայ կտրածներ չպիտի՛ ընէք , ու ձեր
- 29 վրան գիրի նշան չընէք . ես եմ՝ Տէրը : Աղ-  
ջիկդ պոռնիկ ընելով՝ մի՛ պղծեր , որ ան երկիրը  
պոռնրկութեան մէջ չիյնայ , ու չարութիւնով
- 30 չեցուի՛ : Իմ շարաթներս պիտի պահէք , ու  
31 իմ սրբութիւնէս վախնաք . ես եմ՝ Տէրը : Վջ-  
հուկներուն մի՛ հեռեիք , և հմայողներուն քան  
մի՛ հարցունէք , որ անոնցմով չպղծուիք . ես  
եմ՝ Տէրը ձեր Աստուածը :
- 32 Մազը ճերմկածին առջևը ոտք ելի՛ր , և ծերը  
պատուէ՛ , ու քու Աստուծմէդ վախցի՛ր . ես եմ՝
- 33 Տէրը : Եւ թէ՛ որ օտարական մը ձեր երկրին  
մէջ ձեզի հետ բնակելու ըլլայ , չնեղէ՛ք անիկայ :
- 34 Չեր հետը բնակող օտարականը՝ ձեր երկրին  
բնակին պէս ըլլայ ձեզի , և քու անձիդ պէս  
պիտի սիրես անիկայ . ինչու որ դուք ալ Ա-  
գիպտոսի երկրին մէջ օտարական էիք . ես եմ՝  
Տէրը ձեր Աստուածը :
- 35 Իատաստանի մէջ անիրաւութիւն չպիտի՛ ը-  
նէք . կանգունի մէջ՝ կշառքի մէջ ու չափի մէջ
- 36 ալ : Չեր կշառքները լման՝ ձեր տրամները  
լման՝ ձեր արդուն լման ու հիմներ լման պի-  
տի ըլլայ . Չեզ Ագիպտոսի երկրէն հանող
- 37 Տէրը ձեր Աստուածը ես եմ : Ուտի բոլոր իմ  
կանոններս ու բոլոր իմ դատաստաններս պիտի  
պահէք , և պիտի ընէք անոնք . ես եմ՝ Տէրը :

## ԳԼ . Ի

1 Մողորին զաւակ նուիրելը կարգելուի : 4 Ընոր զաւակ մատուցուիլը տեսնելով՝ զանց ընողնեցուն պատիժը : 6 Ահուկներուն հետևողներուն համար : 7 Սուրբ ըլլալու պատուէրը : 9 Ճնողքը հայհոյողին , 10 շնութիւն ընողնեցուն , 11 , 14 , 17 , 19 ազգապղծին , 13 արուազէտին , 15 և անասունի հետ պղծութիւն ընողին պատիժը : 22 Կատուծոյ հնազանդելու համար : 27 Ահուկները շապրեցունելու պատուէրը :

Նա Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Իս-<sup>1</sup>  
 րայէլի որդւոցը պիտի ըսես . Իսրայէլի որդ-<sup>2</sup>  
 ւոցմէն և Իսրայէլի մէջ բնակող օտարական-  
 ներէն ո՛վ որ իր սերունդէն Մողորին տայ ,  
 անշուշտ պիտի մեռցուի . ան երկրին ժողովուր-  
 զը քարերով պիտի քարկոծեն անիկայ : Եւ ես<sup>3</sup>  
 իմ երեսս ան մարդուն վրայ պիտի տնկեմ , ու  
 անիկայ իր ժողովուրդին մէջէն կորսընցունեմ .  
 ինչու որ անիկայ իր սերունդէն Մողորին տուած  
 է , իմ սրբութիւնս պղծելու ու իմ սուրբ անունս  
 անարգելու համար : Եւ թէ որ ան մարդը իր<sup>4</sup>  
 սերունդէն Մողորին տուած ատենը՝ ան երկրին  
 ժողովուրդը չտեսնալու դալով՝ անիկայ չմեռցու-  
 նեն , Ընատենը ես իմ երեսս պիտի տնկեմ ան<sup>5</sup>  
 մարդուն վրայ ու անոր ընտանիքին վրայ , և ան-  
 նիկայ՝ և Մողորին հետ պոռնիկութիւն ընելու  
 համար ան մարդուն ետեւէն բոլոր գացողները  
 իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսընցունեմ :  
 Եւ վհուկներուն ու հմայողներուն ետեւէն<sup>6</sup> եր-  
 թալու դարձող մարդուն վրայ ալ երեսս պիտի

- տնկեմ, ու անիկայ իր ժողովուրդին մէջէն կոր-
- 7 սընցունեմ : Ուստի ինքզինքնիդ սրբեցէք ու  
սուրբ եղի՛ք . ինչու որ ես եմ Տէրը ձեր Աս-
- 8 տուածը : Աւ իմ կանոններս պահեցէ՛ք , ու  
ըբէ՛ք զանոնք . ես եմ Տէրը որ ձեզ կըսրբեմ :
- 9 Ո՛վ որ իր հօրը կամ իր մօրը հայհոյէ , անշուշտ  
պիտի մեռնի . անիկայ իր հօրը կամ իր մօրը հայ-
- 10 հոյած է , անոր արիւնը իր վրան լլլայ : Աւ ո՛վ  
որ ուրիշ մարդու մը կ'եկանը հետ շնութիւն  
ընէ , իր դրացիին կնկանը հետ շնութիւն ը-  
նողը անշուշտ մեռցուի . շնացողն ալ շնացեալն
- 11 ալ պիտի մեռայ : Աւ ան որ ից հօրը կրն-  
կանը հետ պառկի , իր հօրը մերկութիւնը բա-  
ցած է . անշուշտ երկուքն ալ պիտի մեռցուին .
- 12 անոնց արիւնը իրենց վրան լլլայ : Աւ թէ որ  
մարդ մը իր հօրսին հետ պառկի , անշուշտ եր-  
կուքն ալ պիտի մեռցուին . պղծութիւն ըրին .
- 13 անոնց արիւնը իրենց վրան լլլայ : Աւ թէ որ  
մարդ մը կնկան հետ պառկածին պէս արուի հետ  
ալ պառկի , երկուքնին ալ պղծութիւն ըրին .  
անշուշտ պիտի մեռցուին . անոնց արիւնը իրենց
- 14 վրան լլլայ : Աւ թէ որ մարդ մը կնիկ մը ու  
անոր մայրը առնէ , անօրէնութիւն է . ան ալ  
անոնք ալ կրակով պիտի այրուին . ու ձեզ մէ-
- 15 ջը անօրէնութիւն չըլլայ . Աւ թէ որ մարդ մը  
անասունի հետ պառկի , անշուշտ պիտի մեռ-
- 16 ցուի , ու անասունը պիտի սպաննէք : Աւ թէ  
որ կնիկ մը անասունի հետ պղծուելու համար  
անոր մօտենայ , կնիկն ալ անասունն ալ պիտի

սպաննես . անոնք անշուշտ պիտի մեռցուին . անոնց արիւնը իրենց վրան շլայ : Ալ թէ որ<sup>17</sup> մարդ մը իր քոյրը առնէ՝ իր հօրը աղջիկը կամ իր մօրը աղջիկը , ու անոր մերկութիւնը տեսնայ , ու աղջիկն ալ անոր մերկութիւնը տեսնալու ըլլայ , չարութիւն է . անոնք իրենց ժողովուրդին աչքին առջևը պիտի կորսուին . անիկայ իր քրոջը մերկութիւնը բացաւ . իր մեղքը պիտի կրէ : Ալ թէ որ մարդ մը տեռատե-<sup>18</sup>տութեան մէջ եղած կնկան մը հետ պառկի՝ ու անոր մերկութիւնը բանայ , ինքը անոր աղբիւրը բացաւ , ան կնիկն ալ իր արիւնին աղբիւրը բացաւ . երկուքնին ալ իրենց ժողովուրդին մէջէն պիտի կորսուին : Ալ քու մօրդ քրոջը կամ քու<sup>19</sup> հօրդ քրոջը մերկութիւնը չպիտի՝ բանաս . ինչու որ մէկը իր ազգականին մերկութիւնը բանալու ըլլայ , երկուքնին ալ իրենց անօրէնութիւնը պիտի կրեն : Ալ թէ որ մարդ մը իր<sup>20</sup> հօրեղբօրը կնկանը հետ պառկի , իր հօրեղբօրը մերկութիւնը բացաւ . անոնք իրենց մեղքը պիտի կրեն . անզաւակ պիտի մեռնին : Ալ թէ<sup>21</sup> որ մարդ մը իր եղբօրը կնիկը առնէ , ողջութիւն է ան . անիկայ իր եղբօրը մերկութիւնը կը բանայ . անզաւակ պիտի ըլլան :

Ուստի բոլոր իմ կանոններս և բոլոր իմ դա-<sup>22</sup>տաստաններս պիտի պահէք , ու ընէք անոնք , որ ան երկիրը՝ ուր որ ձեզ պիտի տանիմ՝ հոն բռնակելու , դուրս չիսխէ ձեզ : Ալ չպիտի քալէք<sup>23</sup> ան ազգերուն օրէնքներովը՝ որ ձեր առջևէն

- դուրս պիտի ձգեմ . քանզի աս ամէն բաները  
 24 ըրին անոնք , ու ես զզուեցայ անոնցմէ : Եւ  
 ըսի ձեզի . Ընոնց երկիրը դուք պիտի ժառան-  
 գէք , ու ես անիկայ ձեզի տամ ստացուածք  
 ըլլալու , երկիր մը՝ որ կաթ ու մեղր կըբղետ .  
 ես եմ Տէրը ձեր Եստուածը՝ որ աճէն ազգերէն  
 25 զատեցի ձեզ : Ուստի մարութր ու անմարութր  
 անասուններուն մէջ տեղը՝ և անմարութր ու մա-  
 քութր թռչուններուն մէջ տեղը տարբերութիւն  
 պիտի ընէք . և ձեր անձերը չպղծէք անա-  
 սուններով կամ թռչուններով կամ գետնի վրայի  
 բոլոր սողուններով՝ որոնք ես արգիլեցի ձեզի իր-  
 26 րև անմարութր : Եւ դուք սուրբ պիտի ըլլաք  
 ինծի . ինչու որ ես Տէրս սուրբ եմ , ու ձեզ  
 առէլ ազգերէն զատեցի՝ որ իմս ըլլաք :  
 27 Ահուկ կամ հմայող եղողը՝ թէ մարդ ըլլայ  
 թէ կնիկ՝ անշուշտ պիտի մեռցուի . քարերով  
 քարկոծեն զանոնք . անոնց արիւնը իրենց վրան  
 էլլայ :

## Գ Լ . Ի Ե

1 Վահանաները իրենց ո՞ր ազգականին համար կրնային սուգ  
 բռնել : 6 Ընոնք սուրբ պիտի ըլլային , 8 ու սուրբ պիտի  
 սեպուէին : 7 Հասարակ քահանաներուն , 13 ու Վահա-  
 նայապետին ամուսնանալուն վրայով : 17 Երատ ունեցող  
 քահանային արգիլուած էր զո՞հ մատուցանելը :

1 Եւ Տէրը ըսաւ Սոլսէսին . Խօսէ՛ Եհարօնին  
 քահանայ որդիներուն՝ ու ըսէ անոնց . Վաճառ-  
 նայ հը՝ մէկուն իտէստանը համար անմարութր չպի

տի՛ ըլլայ իր Ժողովուրդին մէջը : Բայց միայն իր 2  
 մօտ ազգականին համար , այսինքն՝ իր մօրը ու  
 իր հօրը և իր որդիին ու իր աղջիկին և իր եղ-  
 բօրը համար , Եւ իր կոյս քրոջը համար որ 3  
 մօտ է իրեն՝ ու էրկան արուած չէ , կրնայ ան-  
 մաքուր ըլլալ : Ընկիայ իր Ժողովուրդին մէջը 4  
 գլխաւոր մարդ ըլլալով՝ անմաքուր չպիտի՛ ըլլայ  
 ինքզինքը պղծելով : Ընոնք գլուխնին ածի- 5  
 լելով՝ կնտակ չպիտի ընեն , և իրենց մօրու-  
 քին եղբքը չպիտի՛ ածիլեն , ու իրենց մարմի-  
 նին վրայ կտրածներ չպիտի ընեն : Սուրբ պի- 6  
 տի ըլլան իրենց Ետուծոյն . և իրենց Ետու-  
 ծոյն անունը չպղծուին . ինչու որ Տէրոջը պա-  
 տարագները — իրենց Ետուծոյն հացը անոնք  
 կրմատուցանեն . ուստի սուրբ պիտի ըլլան :  
 Պոռնիկ կամ պղծեալ կնիկ չպիտի առնեն , և 7  
 իր էրիկէն ձգուած կնիկը չառնեն . ինչու որ  
 ասանան սուրբ է իր Ետուծոյն : Ուստի պիտի 8  
 սրբես անիկայ . ինչու որ բու Ետուծոյդ հացը  
 անիկայ կրմատուցանէ . անիկայ սուրբ պիտի  
 ըլլայ քեզի . քանզի ես Տէրս՝ որ ձեզ կըսրբեմ ,  
 սուրբ եմ : Եւ քահանայի մը աղջիկը պո- 9  
 նրկութիւն ընելով պղծուելու ըլլայ , իր հայրը  
 կըպղծէ . անիկայ կրակով պիտի այրուի : Եւ իր 10  
 եղբայրներէն մեծ եղող քահանան՝ որուն գլխուն  
 վրայ օձման եղը թափուած է , ու զգեստները  
 հագնելու օրնուած , իր գլուխը չպիտի բանայ ,  
 և իր լաթերը չպիտի պատուէ , Եւ մեռած մար- 11  
 մինի մը քով չպիտի՛ երթայ . ո՛չ ալ իր հօրը

- կամ իր մօրը համար անմաքուր պիտի ըլլայ .
- 12 Եւ սրբարանէն դուրս չպիտի՝ ելլայ , ու իր  
 Եստուծոյն սրբարանը չպղծէ՝ . ինչու որ իր  
 Եստուծոյն օժման եղին պսակը իր վրան է . ես
- 13 եմ՝ Տէրը : Եւ անիկայ կոյս կնիկ պիտի առ-  
 14 նէ . Որբէվարի՝ կամ արձակուած՝ կամ պղղ-  
 ծուած՝ իմ բող չպիտի՝ առնէ . հասա կնիկ ըլլա-  
 15 լու համար իր ժողովուրդէն կոյս մը առնէ : Որ  
 իր սերմը չպղծէ իր ժողովուրդին մէջը . ինչու որ  
 ես եմ՝ Տէրը՝ որ կըսրբեմ անիկայ :
- 16 Եւ Տէրը խօսեցաւ Սոլսէսին՝ ըսելով , Խօ-  
 17 սէ՛ Եհարօնին ու ըսէ . Վա՛ր սերունդէդ իրենց  
 ցեղերուն մէջ ո՛վ որ իր վրան արատ ունի ,  
 թող չմօտենայ իր Եստուծոյն հացը մատուցա-  
 18 նելու : Ինչու որ բնաւ արատ ունեցող մարդ  
 մը չպիտի՝ մօտենայ . կոյր մարդը՝ կաղը կամ  
 կարճունչը կամ <sup>17</sup> ինչ անդամներուն մէջ աւելորդ  
 19 բան մը ունեցողը՝ , կամ ոտքը կտորած կամ  
 20 ձեռքը կտորած մարդը , կամ սապատողը՝ կամ  
 թղուկը՝ կամ իր աչքին մէջը բիծ ունեցողը՝ կամ  
 21 քոտորը՝ կամ որբինոտը՝ կամ փոշտանկը , Ե-  
 հարօն քահանային սերունդէն արատ մը ունե-  
 ցող մարդը՝ Տէրոջը պատարագները մատուցա-  
 նելու չպիտի՝ մօտենայ . <sup>18</sup> անդէ՛ արատաւոր ըլլա-  
 ըով՝ իր Եստուծոյն հացը մատուցանելու չպիտի՝  
 22 մօտենայ : Ենիկայ իր Եստուծոյն հացը պի-  
 տի ուտէ , թէ՛ ամենասուրբ բաներէն և թէ՛  
 23 սուրբ բաներէն . Սիայն վարագուրին մէջը չպի-  
 տի՝ մօտենայ , և սեղանին չմօտենայ . ինչու որ ա-

բատ ունի, ու իմ սրբութիւնս չպղծէ. քան-  
զի անոնք սրբող Տէրը ես եմ: Եւ Մովսէս<sup>24</sup>  
ըսաւ. « Բաները Ահարօնին՝ ու անոր սրբւոցը  
և բոլոր Խարայէլի որդիներուն:

## ՊԼ. ԻԲ

1 Քահանայք իրենց անմաքրութեան ժամանակին՝ սուրբ բա-  
ներուն մօտենալու չէին, 6 իրենց մաքրուելուն համար:  
10 Քահանային ընտանիքէն ո՛վ իրաւունք ունէր սուրբ  
բաներէն ուտելու: 17 Օրհ մատուցանելու անասունը ան-  
արատ ըլլալու էր: 26 Ութը օրուանէն պզտիկ անասունը  
Տէրօջը պիտի չմատուցուէր: 29 Շնորհակալութեան զօ՛ր  
ուտելու պատուէրները:

1  
2 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, Խօ-  
սէ՛ Ահարօնին ու անոր սրբւոցը՝ որ Խարայէ-  
լի սրբւոցը և արտօնած սուրբ բաներէն զգոյշ կե-  
նան, և իմ սուրբ անունս չպղծեն ան Բաներով՝  
որ ինձի կըստբեն. ես եմ Տէրը: Ըսէ՛ ար- 3  
նոնց. Ո՛վ որ ձեր սերունդէն ձեր ցեղերուն  
մէջ՝ իր անմաքրութիւնը իր վրան ունենալով՝ մօ-  
տենայ ան սուրբ բաներուն, որ Խարայէլի որդիքը  
կըստբեն Տէրօջը, ան հողին իմ առջևէս պիտի  
կորսուի. ես եմ Տէրը: Ո՛վ որ Ահարօնին 4  
ցեղէն բորոտ ըլլայ, կամ ծորումն ունենայ, սուրբ  
բաներէն չպիտի ուտէ՝ մինչև իր մաքրուիլը.  
և ո՛վ որ մեռելէ պղծուած բանի մը դպչի, կամ  
մարդ մը՝ որուն սերմը իրմէն ելած է, կամ 5  
ո՛վ որ դպչի սողունի մը՝ որով կրնայ պղծուիլ,  
կամ մարդու մը՝ որմէն կրնայ պղծուիլ, ի՞նչ



- 6 կերպ պղծութիւն որ անիկայ ունենայ , Ասոնց  
 դպչող մարդը մինչև իրիկուն անմաքուր պիտի  
 ըլլայ . և սուրբ բաներէն չպիտի՝ ուտէ , այլ
- 7 իր մարմինը ջրով պիտի լուայ : Աւ երբ ա-  
 րեգակը մարը մտնայ՝ մաքուր պիտի ըլլայ , ու  
 ետքը սուրբ բաներէն ուտէ . ինչու որ ան իր
- 8 հացն է : Անիկայ մեռածը կամ գազանաբե-  
 կը չպիտի՝ ուտէ , որ անով չպղծուի . ես եմ
- 9 Տէրը : Աւ իմ կարգադրութիւնս պիտի պա-  
 հեն՝ որ անոր համար մեղք չկրեն , ու ան պղչ-  
 ծելնուն համար չմեռնին . զանոնք սրբող Տէրը  
 ես եմ :
- 10 Աւ սուրբ բանէն բնաւ օտարական մը չպիտի՝  
 ուտէ . քահանային հիւրը կամ վարձկանը սուրբ
- 11 բանէն չպիտի՝ ուտէ : Բայց քահանային իր  
 ստակովը ծախու առած անձը՝ ու իր աունը ճնա-  
 ծը անկից պիտի ուտէ . անոնք անոր կերակու-
- 12 րէն պիտի ուտեն : Թէ որ քահանային աղջի-  
 կը օտարականի մը հետ կարգուի , անիկայ նուի-
- 13 բուած սուրբ բաներէն չպիտի՝ ուտէ : Բայց թէ  
 որ քահանային աղջիկը որբէվարի կամ արձա-  
 կուած ըլլայ՝ ու զաւակ չունենայ , իր հօրը տու-
- նը դարձած ատենը՝ իր աղջըկութեան ժամանա-  
 կին պէս՝ իր հօրը հացէն պիտի ուտէ . սակայն  
 անկից բնաւ օտարական մը չպիտի՝ ուտէ :
- 14 Աւ թէ որ մարդ մը անգիտութեամբ սուրբ  
 բանէ մը ուտէ , անոր վրայ հինգերորդ մաս մը  
 պիտի աւելցունէ , ու սուրբ բանովը մէկ տեղ քա-
- 15 հանային պիտի տայ : Աւ Խորայէլի որդւոցը

Տէրոջը մատուցած սուրբ բաները չպիտի՝ պղծ-  
 ծեն . \* Ու իրենց սուրբ բաները ուտելով՝ յան- 16  
 ցանաց անօրէնութիւնը իրենց վրայ չըբերեն՝ .  
 ինչու որ զանոնք սրբող Տէրը ես եմ :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ- 17  
 սէ՛ Եհարօնին ու անոր որդւոցը և բոլոր Խա- 18  
 ըայէլի որդւոցը՝ ու ըսէ՛ անոնց . Խորայէլի տու-  
 նէն կամ Խորայէլին մէջ Բնակող օտարական-  
 ներէն՝ ողջակէզի համար Տէրոջը անոնց մատու-  
 ցածը՝ իրենց բոլոր ուխտերուն և բոլոր կա-  
 մաւոր ընծաներուն համար , իր զօ՛՛՛ր մատուցա-  
 նող ամէն մարդը , Երջառներէն՝ ոչխարներէն՝ 19  
 կամ այծերէն՝ անարատ արու ոչիտի՝ Խորայէլի ,  
 որ ձեզի համար ընդունելի ըլլայ : Եմէն արատ 20  
 ունեցողը չպիտի՝ մատուցանէք . ինչու որ ձե-  
 զի համար ընդունելի չըլլար : Եւ ուխտ կա- 21  
 տարելու համար՝ կամ կամաւոր ընծայի համար՝  
 ո՛վ որ արջառներէն կամ ոչխարներէն Տէրոջը  
 խաղաղութեան զոհ մատուցանելու ըլլայ , ան-  
 արատ պիտի ըլլայ ան , որ ընդունուի . բնաւ 22  
 արատ չպիտի՝ ըլլայ անոր վրայ : Այլ՝ կամ 22  
 Տէ՛լ Խորայէլ կտորած՝ կամ կտորած՝ կամ խաղաւարտ  
 ունեցող՝ կամ քոստ՝ կամ որբիւնոտ եղածնե-  
 րէն Տէրոջը չպիտի՝ մատուցանէք . ո՛չ ալ ա-  
 սոնցմէ Տէրոջը պատարագի համար սեղանին վրայ  
 պիտի դնէք : Բայց անորմէն Տէ՛լ աւելորդու- 23  
 թիւն կամ պակասութիւն ունեցող զուարակը

\* Ու՛՛՛ Ու . (քահանայերը) անոնց վրայ յանցանաց անօրէնու-  
 թիւնը չըբերեն՝ երբ որ անոնք իրենց սուրբ բաները ուտեն .

- կամ ոչխարը՝ կամաւոր ընծայի համար մատուցանես . սակայն ուխտի համար չպիտի՝ ընդունուի ան :
- 24 Իբ երկուսն էլ կուտածը՝ կամ ճրգմուածը՝ կամ փրցուածը՝ կամ կտրուածը՝ չպիտի մատուցանէք Տէրոջը , և ձեր երկրին մէջ չպիտի՝ ընէք ու Բաները : Եւ օտարականի մը ձեռքէն ունէլուլուլ ամէն ասոնցմէ ձեր Եստուծոյն պատարագ չպիտի՝ մատուցանէք . ինչու որ անոնց մէջ խեղութիւն ու արատ կայ . անոնք
- 26 ձեզի համար ընդունելի չպիտի ըլլան : Եւ
- 27 Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Երբոր զուարակ կամ ոչխար կամ այծ ծնանի , Լօթը օր օրը քովը պիտի մնայ . և ութերորդ օրը՝ ու անկից ետքը Տէրոջը ընդունելի պիտի ըլլայ
- 28 պատարագի համար : Եւ կովը կամ ոչխարը
- 29 ու անոնց ձագը մէկ օրը չպիտի՝ մորթէք : Եւ երբոր գոհութեան զոհ մատուցանէք Տէրոջը՝ անոնի պիտի մատուցանէք , որ ձեզի համար ընդունելի ըլլայ . Այն օրը պիտի ուտուի անիկայ . անկից մինչև առտու չպիտի՝ թողուք . Ես եմ Տէրը :
- 31 Ուստի իմ պատուիրանքներս պիտի պահէք ,
- 32 և պիտի ընէք անոնք . Ես եմ Տէրը : Եւ իմ սուրբ անունս չպիտի՝ պղծէք , որ ես սրբութիւն Իսրայէլի որդւոց մէջը . Ես եմ Տէրը
- 33 որ ձեզ կըսքբեմ . Իբ ձեր Եստուածը ըլլալու համար՝ ձեզ Ազխատուի երկրէն հանեցի . Ես եմ Տէրը :

Գ Լ . Ի Գ

1 Տէրոջը տօները , 3 Շարաթը , 4 և Օգտիկը : 9 Երա-  
խայրիններուն , 15 ու Պննտէկոստէին տօնը պահելու հա-  
մար : 22 Հունձքէն մնացած հասկերը ու այդիէն ծիւերը  
չժողվելու պատուէրը : 23 Փող հնչեցունելու տօնը : 26 Բա-  
ւութեան օրը : 33 Տաղաւարահարաց տօնը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօս- 1  
սէ՛ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ՛ անոնց . Տէ- 2  
րոջը տօները որ դուք սուրբ ժողով պիտի կո-  
չէք՝ ասոնք են խմ տօներս . Վեց օր գործ 3  
գործուի , բայց եօթներորդ օրը հանգստութեան  
շարաթը ըլլալով՝ սուրբ ժողով է . բնաւ  
գործ չպիտի՛ գործէք . Տէրոջը շարաթը ուրիշ  
ըլլայ ձեր բոլոր բնակութեանցը մէջ : Տէ- 4  
րոջը տօները որ իրենց ատենին համեմատ՝ սուրբ  
ժողովներ պիտի քարոզէք , ասոնք են : Եռօրին 5  
ամսուն չորեքտասաներորդ օրը՝ իրիկուան դէմ  
Տէրոջը զատիկն է : Եւ նոյն ամսուն հնգետա- 6  
սաներորդ օրը բաղարջակերաց տօն է Տէրոջը .  
եօթը օր անխմոր հաց պիտի ուտէք : Եռա- 7  
ջին օրը սուրբ ժողով պիտի ունենաք . բնաւ  
ճառայութեան գործ չպիտի՛ գործէք : Եւ 8  
եօթը օր պատարադ պիտի մատուցանէք Տէ-  
րոջը . եօթներորդ օրը սուրբ ժողով է . բնաւ  
ճառայութեան գործ չպիտի՛ գործէք :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօս- 9  
սէ՛ Իսրայէլի որդւոցը՝ և ըսէ՛ անոնց . Երբոր 10  
մտ սք ան երկիրը որ ձեզի կուտամ , ու անոր

- հունձքը նձէք , ձեր հունձքին երախայրի որան  
 11 քահանային պիտի բերէք : Են ալ Տէրոջը  
 առջևը երեքցունելով՝ պիտի մատուցանէ որան ,  
 որ ձեզի համար ընդունելի ըլլայ . քահանան  
 շաբաթին հետեւեալ օրը պիտի մատուցանէ  
 12 ան : Եւ որան մատուցած օրերնիդ՝ ողջակէզի  
 համար մէկ տարեկան անարատ գառ մը պիտի  
 13 մատուցանէք Տէրոջը : Եւ անոր հացի ընծան  
 եղով շաղուած երկու տասանորդ բարակ ա-  
 լիւր պիտի ըլլայ . ա՛ն անուշահոտ պատարագի  
 համար է Տէրոջը . և անոր թափելու նուէրը  
 հիմնին չորրորդ մասը գինի պիտի ըլլայ :  
 14 Եւ մինչև նոյն օրը՝ որ ձեր Լատուծոյն զոհ պի-  
 տի մատուցանէք , հաց՝ կամ բոհրած ցորեն՝ կամ  
 հասկեր չպիտի՝ ուտէք . ձեր ցեղերուն մէջ ձեր  
 բոլոր բնակարաններուն մէջը աս ձեզի յաւիտե-  
 15 նական կանոն պիտի ըլլայ : Եւ շաբաթին հե-  
 տեւեալ օրէն՝ որ դուք նուիրման որան բերիք ,  
 16 ըման եօթը շաբաթ պիտի համրէք ձեզի . Մին-  
 չև եօթներորդ շաբաթին հետեւեալ օրը յի-  
 սուն օր պիտի համրէք . և նոր հացի ընծայ  
 17 մատուցանէք Տէրոջը : Չեր բնակարաններէն  
 երեքցունելու ընծայի համար՝ երկու հաց պիտի  
 բերէք , որ անոնք երկու տասանորդ բարակ ա-  
 լիւրէ ըլլալով՝ խմորեալ եփած պիտի ըլլան . աս  
 18 երախայրի է Տէրոջը : Եւ հացերուն հետ՝ մէկ  
 տարեկան եօթը հատ անարատ գառն՝ և մէկ  
 պզտիկ զուարակ մը՝ ու երկու խոյ պիտի մատու-  
 ցանէք Տէրոջը . անոնք հացի ընծաներուն ու

Թափելու նուէրներուն հետ ողջակէզ՝ այն  
անուշահոտ պատարագ պիտի ըլլան Տէրոջը : Եւ 19  
մեղքի պատարագի համար այժերէն մէկ նոխազ՝ և  
խաղաղութեան զոհի համար մէկ տարեկան երկու  
գառն պիտի մատուցանէք : Եւ քահանան երա- 20  
խայրի հացին հետ երեքցունելու ընծային համար՝  
երկու գառներու հետ պիտի նուիրէ Տէրոջը առ-  
ջէք . անոնք սուրբ պիտի ըլլան Տէրոջը , և քա-  
հանային ըլլան : Եւ նոյն խկ օրը պիտի քարոզէք 21  
որ ան ձեզի սուրբ ժողով ըլլայ . բնաւ ծառա-  
յութեան գործ չպիտի՝ գործէք . աս՝ ձեզի յա-  
ւիտենական կանոն ըլլայ ձեր բոլոր բնակարան-  
ներուն մէջը ձեր ցեղերուն մէջ :

Եւ երբոր ձեր երկրին հունձքը նձէք , նձած 22  
ատենդ արտին եզերքը լման չպիտի՝ նձես , ու  
հունձքիդ մնացած հասկերը չժողվես . զանոնք աղ-  
քափն ու օտարականին պիտի թողուս . և սեմ  
Տէրը ձեր Կստուածը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ- 23  
սէ՛ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ . Եթ՛ներորդ ամ- 24  
սուն մէջ՝ ամսուն առաջին օրը ձեզի հանգստու-  
թեան օր՝ փողին ձայնին յիշատակը՝ սուրբ ժո-  
ղով պիտի ըլլայ : Բնաւ ծառայութեան գործ 25  
չպիտի՝ գործէք , հասցա պատարագ մատուցանէք  
Տէրոջը : Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսե- 26  
լով , Կաև աս եթ՛ներորդ ամսուն տասներորդ 27  
օրը քառօրթեան օրը ըլլալով՝ սուրբ ժողով  
ըլլայ ձեզի . և պիտի խոնարհեցունէք ձեր հոգի-  
ները , ու պատարագ մատուցանէք Տէրոջը : Եւ 28

- նոյն օրը բնաւ գործ չպիտի գործէք . ինչու որ  
 Տէրոջը ձեր Աստուծոյն առջևը ձեզի համար քա-  
 29 լութիւն ընելու՝ օր քաւութեան է : Քանզի  
 նոյն օրը չխոնարհողը՝ իր ժողովուրդին մէջէն  
 30 պիտի կորսուի : Այլ նոյն օրը ո՛վ որ գործ մը  
 գործելու ըլլայ , իր ժողովուրդին մէջէն պիտի  
 31 կորսընցունեմ ան անձը : Բնաւ գործ մը չպի-  
 տի գործէք . — Ի՞նչ ձեր ցեղերուն մէջ բոլոր  
 ձեր բնակարաններուն մէջ յաւիտենական կանոն  
 32 ըլլայ : Այս ձեզի հանգստութեան շաբաթ պի-  
 տի ըլլայ , և ձեր հոգիները պիտի խոնարհե-  
 ցունէք , ամսուն իններորդ օրուան իրիկունը ձեր  
 շաբաթը պիտի բռնէք՝ մէկ իրիկունէն մինչև մե-  
 կալ իրիկունը :
- 33 Այլ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ի՞նչ  
 34 սէ՛ Իսրայէլի որդւոցը՝ ու ըսէ . Այս եօթներորդ  
 ամսուն ձեզետասաներորդ օրը՝ եօթը օր տօն  
 35 տաղաւարահարաց է Տէրոջը : Առաջին օրը սուրբ  
 ժողով պիտի ըլլայ . բնաւ ծառայութեան գործ  
 36 չպիտի գործէք : Եօթը օր պատարագ պիտի  
 մատուցանէք Տէրոջը , և ութերորդ օրը սուրբ  
 ժողով պիտի ըլլայ ձեզի , և պատարագ մատու-  
 ցանէք Տէրոջը . տօնախմբութեան օր է ան .
- 37 բնաւ ծառայութեան գործ չպիտի գործէք : Տէ-  
 րոջը պատարագ՝ ողջակէզ՝ ու հօցի ընծայ՝ զո՛հ  
 և թափելու նուէր՝ ամէն օրուան պէտք եղածը  
 մատուցանելու համար սուրբ ժողով կոչելու
- 38 Տէրոջը տօները ասոնք են . Տէրոջը շաբաթնե-  
 րէն զատ՝ և ձեր ընծաներէն զատ ու բոլոր ձեր

ուխտերէն զատ՝ և ձեր բոլոր Տէրոջը տալու կա-  
մաւոր ընծաներէն զատ : Եւ և եօթներորդ ամ- 39  
տուն շնգետասաներորդ օրը՝ երկրի արդիւնքը  
Ժողոված ատեննիդ՝ եօթը օր տօն պիտի պահէք  
Տէրոջը • առաջին օրը շաբաթ և ութերորդ օ-  
րը շաբաթ յիշի «էպէ» : Եւ առաջին օրը ձե- 40  
զի աղէկ ծառի պտուղ , արմաւենիի ոստեր՝ ու  
տերեւախիտ ծառերու ոստեր՝ և ձորէն ուռիներու  
«սիւն» պիտի առնէք , ու Տէրոջը ձեր Ըստուծոյն  
առջև եօթը օր ուրախանաք : Եւ աս տօնը 41  
տարին եօթը օր պիտի պահէք Տէրոջը • ձեր ցե-  
ղերուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ ան •  
եօթներորդ ամսուն մէջ պիտի ընէք ան : Եւ 42  
թը օր տաղաւարներու մէջ պիտի բնակիք • Խ-  
որայէլի բոլոր բնակիները տաղաւարներու մէջ  
բնակին : Որ ձեր սերունդները գիտնան՝ թէ 43  
Խորայէլի որդիքը Եգիպտոսի երկրէն հանած ա-  
տենն՝ տաղաւարներու մէջ բնակեցուցի զանոնք •  
ես եմ Տէրը ձեր Ըստուածը : Եւ Մովսէս Խ- 44  
որայէլի որդւոցը պատմեց Տէրոջը տօները :

## ԳԼ • ԻԳ

1 Նորագարաններուն համար եղջ : 5 Եւ աջաւորութեան հա-  
ցը : 10 Խորայէլացի կնկանը ազան որ Տէրոջը անունը հայտն-  
յեց : 13 Հայտնութեան , 17 ու մարդասպանութեան պա-  
տիժը : 18 Սնաններու համար : 23 Եւ հայտնիին քար-  
կածուիլը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Պա- 1  
տուիբէ Խորայէլի որդւոցը՝ որ ծեծուած մա- 2



- քուր ձէթ բերեն քեզի լոյսի համար , որ միշտ
- 3 ճրագ վառի : Դողովքի խորանին մէջ՝ վկա-  
յութեան վարագուրին դուրսի դին Մհարօն միշտ  
պիտի պատրաստէ ան՝ իրիկուընէ մինչև առտու  
Տէրօջը առջևը շաբաթը . աս ձեր ցեղե-
- 4 բուն մէջ յաւիտենական կանոն ըլլայ : Ճրագ-  
արանները մաքուր աշտանակին վրայ Տէրօջը
- 5 առջևը միշտ պիտի պատրաստէ : Եւ բարակ  
սլիւր պիտի առնես՝ ու անկից տասներկու շօթ  
եփեսա . ամէն մէկ շօթը երկու տասանորդէն պի-
- 6 տի ըլլայ : Եւ զանոնք Տէրօջը առջևը մաքուր  
սեղանին վրայ՝ երկու կարգով պիտի դնես . ա-
- 7 մէն մէկ կարգը վեց վեց հատ ըլլայ : Եւ ամէն  
կարգին վրայ զուտ խունկ պիտի դնես , որ հացին
- 8 վրայ պատարագի յիշատակ ըլլայ Տէրօջը : Իսրա-  
յէլի որդւոցը կողմէն յաւիտենական կանոնով ա-
- 9 պիտի դնէ ան : Եւ ան՝ Մհարօնին ու անոր  
որդւոցը պիտի ըլլայ , ու սուրբ տեղը ուտեն  
ան . ինչու որ ան՝ Տէրօջը պատարագներէն յա-
- 10 վառ Եւ Իսրայէլի որդւոցը մէջ Իսրայէլացի կնկան  
մը որդին ելաւ , որուն հայրը Եգիպտացի էր . ու  
ան Իսրայէլացի կնկանը որդին՝ Իսրայէլացի մար-
- 11 դու մը հետ բանակին մէջ կռուեցաւ : Եւ ան  
Իսրայէլացի կնկանը որդին հայհոյեց Տէրօջը ա-
- 12 նունը ու անիծեց . և Մովսէսին բերին անի-  
կայ . ու անոր մօրը անունը Սաղամիթ էր Գա-  
12 նի ցեղէն՝ Գարբէին աղջիկը : Եւ բանտար-

կեցին անիկայ, մինչև որ Տէրօջը հրամանը յայտնուի իրենց : Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ Ը-13 սելով, Ըն հայհոյող մարդը բանակէն դուրս 14 հանէ, և բոլոր լսողները ձեռքերնին անոր գլխուն վրայ դնեն, ու բոլոր ժողովուրդը քարկոծեն զանիկայ : Եւ պիտի խօսիս Խորայէլի որդի-15 ւոցը՝ ըսելով, Ո՛վ որ իր Ըստուածը կանիծէ, մեղքը պիտի քաշէ : Եւ Տէրօջը անունը հայ-16 հոյողը անշուշտ պիտի մեռցուի . ու բոլոր ժողովուրդը պիտի քարկոծեն զանիկայ, թէ՛ օտարական ըլլայ՝ և թէ՛ երկրին բնակիչ՝ Տէրօջը անունը հայհոյողը պիտի մեռցուի : Եւ ան որ 17 մարդ կրօսաննէ, անշուշտ պիտի մեռցուի : Եւ 18 անիկայ որ անասուն կը մեռցունէ, անասունի տեղ անասուն պիտի հատուցանէ . Եւ թէ՛ որ մարդ մը 19 իր դրացիին խեղութեանը պատճառ ըլլայ, իր ըրածին պէս պիտի ընեն իրեն . Ինկման տեղ՝ բե-20 կումն, աչքի տեղ՝ աչք, ակոսյի տեղ՝ ակոսյ, իր ըրած խեղութեանը պէս պիտի ըլլայ իրեն : Եւ 21 անասուն մեռցունողը՝ պիտի հատուցանէ ան . բայց մարդ մեռցունողը պիտի մեռցուի : Թէ՛ օ-22 տարականին համար և թէ՛ երկրին բնակին համար՝ ձեր օրէնքը մէկ պիտի ըլլայ . ինչու որ ես եմ Տէրը ձեր Ըստուածը : Եւ Մովսէս խօսե-23 ցաւ Խորայէլի որդւոցը, որ ան անիծող մարդը բանակէն դուրս հանեն, և քարով քարկոծեն զանիկայ . ու Խորայէլի որդիքը Տէրօջը Մովսէսին պատուիրածին պէս ըրին :

Գ Լ . Ի Ե

1 Եթեքներորդ տարւոյն շաբաթը : 8 Հիսուներորդ տարին  
 2 Հորելեան պիտի կոչուէր : 14 Օրկանքի համար : 18 Հնա-  
 3 ղանդութեան համար : 23 Երկրին , 29 և տուներուն փրկանքը :  
 4 35 Տեսնկներուն վրայ գութ ունենալու պատուէրը : 39 Ճա-  
 5 ոաներու համար կանոններ : 47 Ճառաններուն փրկուելուն վը-  
 6 րայով :

1 **Ս**էրը խօսեցաւ Մովսէսին Սինա լեռը՝ Ը-  
 2 սելով , խօսէ՛ Իսրայէլի որդւոցը ու ըսէ ա-  
 3 նոնց . Երբոր ան երկիրը մտնաք՝ որ ես ձեզի  
 4 պիտի տամ՝ ան երկիրը հանգստութիւն մը պա-  
 5 ճէ Տէրօջը : Ա՛յց տարի քու արտդ պիտի ցա-  
 6 նես , և քու այգիդ վեց տարի յօտես , ու անոր  
 7 արդիւնքը ժողվես : Իայց եթեքներորդ տարին  
 8 երկրի համար հանգստութեան շաբաթ , այսինքն՝  
 9 Տէրօջը համար շաբաթ ըլլայ . քու արտդ չպիտի  
 10 ցանես , և քու այգիդ չյօտնես . Քու արտիդ  
 11 ինքիրմէ բուսածը չպիտի՛ հնձես , և քու չյօ-  
 12 տած այգիիդ խաղողները չժողվնես . Հանգստու-  
 13 թեան տարի ըլլայ ան երկրին : Եւ երկրին  
 14 շաբաթը ձեզի կերակուր պիտի ըլլայ , քեզի և  
 15 քու ծառայիդ և քու աղախինիդ ու քու վարձկա-  
 16 նիդ՝ և քեզի հետ բնակող օտարականիդ . Եւ  
 17 անասուններուդ ու քու երկրիդ մէջ եղած կեն-  
 18 դանիներուն կերակուր ըլլայ անոր արդիւնքը :  
 19 Եւ դուն քեզի տարիներու եթէք շաբաթ պիտի  
 20 համբես՝ այսինքն եթէք անգամ եթէք տարի .  
 21 ու տարիներուն եթէք շաբաթներուն ժամանակը  
 22 քառասունուինը տարի պիտի ըլլան քեզի : Եւ  
 23 եթէքներորդ ամսուն տասներորդ օրը ազգարա-

բուժեան փողը պիտի նշնցունես , քաւութեան  
 օրը ձեր բոլոր երկրին մէջ պիտի նշնցունէք  
 փողը : Աւ յիսուներորդ տարին պիտի սրբէք ,<sup>10</sup>  
 ու երկրի վրայ՝ անոր բոլոր բնակիչներուն հա-  
 մար ազատութեան քարոզ կարդալ տաք . աս՝  
 ձեզի Յօրեւեան աստուծոյ , և ձեզմէ ամէն մէ-  
 կը իր ստացուածքին պիտի դառնայ , ու ձեզմէ  
 ամէն մէկը իր ազատահաստի դառնայ : Աս յի-<sup>11</sup>  
 սուներորդ տարին Յօրեւեան տարի ըլլայ ձեզի .  
 չպիտի ցանէք , և ինքիքմէ բուսածը չպիտի  
 նձէք , և ձեր չյօտած արգիւնքն չպիտի ժողվէք .  
 ինչու որ Յօրեւեան աստուծոյ է , ան ձեզի սուրբ<sup>12</sup>  
 պիտի ըլլայ . արտին արգիւնքը պիտի ուտէք :  
 Աս Յօրեւեան տարինն՝ ամէն մէկերնիդ իր ստա-<sup>13</sup>  
 ցուածքին պիտի դառնայ : Աւ թէ որ քու<sup>14</sup>  
 դրացիիդ բան մը ծախելու ըլլաս , կամ քու դը-  
 րացիիդ ձեռքէն ծախու առնելու ըլլաս , ձեզմէ  
 մէկը իր ընկերին անիրաւութիւն պիտի չընէ .  
 Յօրեւեան աստուծոյ կտրը եղած տարիներուն<sup>15</sup>  
 հաշիւովը ծախու պիտի առնես քու դրացիիդ ,  
 անիկայ ալ արգիւնքին տարիներուն հաշիւովը  
 պիտի ծախէ քեզի : Տարիներուն շատութեանը<sup>16</sup>  
 նայելով՝ պիտի աւելցունես անոր գինը , և տա-  
 րիներուն քիչութեանը նայելով՝ պիտի պակսե-  
 ցունես անոր գինը . ինչու որ անիկայ արգիւնքի  
 հաշիւովը կրճախէ քեզի : Աւ ձեզմէ մէկը իր<sup>17</sup>  
 ընկերին անիրաւութիւն պիտի չընէ , ու քու  
 Աստուծոյ պիտի վախնաս . ինչու որ ես եմ  
 Տէրը ձեր Աստուծոյ :

- 18 Այլ իմ կանոններս պիտի ընէք , ու իմ  
 դատաստաններս պահէք՝ և ընէք անոնք . ու
- 19 ան երկրին մէջ ապահով պիտի բնակիք : Այլ  
 երկիրը իր արդիւնքը պիտի տայ , ու մինչև  
 կշտանալնիդ պիտի ուտէք . և անոր մէջ ապա-
- 20 հով պիտի բնակիք : Այլ ըսելու ըլլաք թէ՛  
 Աթոներորդ տարին ի՞նչ պիտի ուտենք . ահա՛  
 պիտի չցանենք ու մեր արդիւնքները պիտի
- 21 չժողվենք . Աւրեմն վեցերորդ տարին ձեզի  
 համար պիտի խրկեմ իմ օրհնութիւնս , և ի-
- 22 ընէք տարուան արդիւնք պիտի տայ : Այլ ու-  
 թերորդ տարին պիտի ցանէք՝ ու հին արդիւն-  
 քէն պիտի ուտէք մինչև իններորդ տարին .  
 մինչև անոր արդիւնքին հասնիլը՝ հինէն պի-  
 տի ուտէք :
- 23 Այլ երկիրը չպիտի ծախուի մշանջննապէս .  
 ինչու որ երկիրը խն է , ու դուք իմ քովս պան-
- 24 դուխաներ ու հիւրեր էք : Այլ ձեր կալուած-  
 քին բոլոր երկրին մէջ փրկանք պիտի տաք երկ-
- 25 ըին համար : Թէ որ քու եղբայրդ աղքատ-  
 նայ՝ և իր ստացուածքին հօն ձու ծախէ , ու  
 թէ որ անոր ազգականը գայ ան փրկելու , ան-  
 ստենը անիկայ իր եղբօրը ծախածը պիտի
- 26 փրկէ : Այլ թէ որ մարդը փրկող մը չունի ,  
 27 ու ինքիրմէն կարողանայ ան փրկելու , Անատները  
 իր ծախելէն հաշիւ ընէ տարիները , և աւել-
- 28 իր ստացուածքին դառնայ : Բայց թէ որ անոր ետ  
 տալու կարող չէ՛ , անատները ծախած բանը ծա-

խու առնողին ձեռքը պիտի մնայ մինչև Յորբելան տարին , և Յորբելան ասորին պիտի ելլայ , ու իր ստացուածքին դառնայ :

Եւ թէ որ մէկը պարսպաւոր քաղաքի մէջ 29 բնակելու տուն մը ծախէ , ան ծախելէն մինչև լման տարի մը կրնայ փրկել ան . անոր փրկանքը մէկ տարիին մէջ պիտի ըլլայ : Եւ թէ որ 30 տարիին ողջոյն լմննալուն ան չփրկուի , անատենը պարսպաւոր քաղաքին մէջ եղած տունը միշտ ծախու առնողին պիտի մնայ իր ցեղերուն մէջ . Յորբելան ասորին ան ասոր չպիտի դառնայ : Բայց բոլորտիքը պարսպաւոր շէ- 31 ղած գիւղաքաղաքներուն տուները՝ ան երկրին արտը պիտի սեպուին . անոնք կրնան փրկուիլ , ու Յորբելան ասորին պիտի դառնան : Իսկ 32 Ղևտացոց քաղաքներուն մէջ իրենց կալուածքի քաղաքներուն տուները , Ղևտացիները միշտ կրնան փրկել : Եւ թէ որ մէկը՝ Ղևտացիներ- 33 ըն \* ծախու առնելու՝ ըլլայ , անատենը իր կալուածքը եղած քաղաքին մէջի ծախուած տունը՝ Յորբելան ասորին պիտի դառնայ . ինչու որ Խարայէլի որդւոց մէջը Ղևտացոց քաղաքներուն տուները իրենց կալուածքն է : Բայց իրենց 34 արուարձաններուն տրտերը չպիտի ծախուին . ինչու որ ան անոնց յաւիտենական կալուածքն է :

Եւ թէ որ քու եղբայրդ աղքատնայ , ու ան- 35 նոր ձեռքը տկարանայ , անատենը պիտի օգնես անոր՝ օտարականի ու պանդուխտի ուր , որ քու

\* Եբր . փրկելու

† Եբր . ծախուած տունը և իր կալուածքին քաղաքը

- 36 քովդ ապրի : Ենորմէ վաչիս ու տոկոսիք չպիտի  
առնես , հապա քու Եստուծովդ վախնաս , որ եղ-
- 37 բայրդ քու քովդ ապրի : Քու ստակդ վաչ-  
խով չպիտի տաս անոր , և քու կերակուրդ
- 38 տոկոսիքով չտաս : Ես եմ Տէրը ձեր Եստուա-  
ծը , որ ձեզ Եգիպտոսի երկրէն հանեցի՝ Քա-  
նանու երկիրը ձեզի տալու համար և ձեզի Ես-
- 39 տուած ըլլալու համար : Եւ թէ որ եղբայրդ  
քու քովդ աղքատնայ՝ ու ինքզինքը քեզի ծախէ ,  
անիկայ ծառայի մը պէս չպիտի գործածես :
- 40 Ենիկայ քու քովդ վարձկանի կամ պանդուխտի  
պէս պիտի ըլլայ , ու ծառայէ քեզի մինչև Յորե-
- 41 լեան տարին . Եւ անորմէն քու քովէդ պիտի  
ելլէ անիկայ՝ ինքն ալ ու իր որդիքն ալ իր հե-  
տը , և իր ազգատոհմին դառնայ , ու իր հայրե-
- 42 բուն կալուածքին դառնայ : Քանզի անոնք  
իմ ծառաներս են՝ որ Եգիպտոսի երկրէն հանե-  
43 յի . անոնք գերիի պէս չպիտի ծախուին : Խըս-  
տու թեամբ չպիտի իշխես անոր վրայ , հապա
- 44 քու Եստուծովդ վախնաս : Քու ունենալու  
ծառայ ու աղախինդ՝ ձեր բոլորտիքը եղած ազ-  
գերէն ըլլան . ծառայ ու աղախին անոնցմէ
- 45 կրնաք ծախու առնել : Սակ ձեզի հետ բնա-  
կող օտարահայտներուն զաւկրներէն , կամ ա-  
նոնցմէ և կամ ձեր քովը եղող անոնց ընտա-  
նիքներէն որ ձեր երկիրը ծնած են՝ կրնաք ծախու
- 46 առնել , որ ձեր ստացուածքը ըլլան : Եւ  
ձեզմէ ետքը ձեր զաւկրներուն ժառանգութեան  
ստացուածք ըլլալու համար թողուք զանոնք ,

որ միշտ ձեր ծառաները ըլլան . բայց ձեր եզ-  
 բայրներուն Խորայելի որդւոցը համար՝ մէզմէկու  
 վրայ խստութեամբ չպիտի՛ իշխէք : Աւ թէ 47  
 որ քու քովը եղած օտարականը կամ՝ պանդուխ-  
 տը հարուստնայ , ու անոր քովը բնակող քու  
 եղբայրդ աղքատնայ , և քու քովը եղած օտա-  
 րականին չա՛ պանդուխտին , կամ ա՛ն օտա-  
 րականին ընտանեացը ճա՛ն աղգականին ինքզին-  
 քը ծախելու ըլլայ , Ինքզինքը ծախելէն ետքը՝ 48  
 անիկայ կրնայ փրկուիլ . իր եղբայրներէն մէկը  
 կրնայ փրկիլ զանիկայ . Անոր հօրեղբայրը կամ 49  
 հօրեղբօրորդին փրկէ զանիկայ , կամ իր ցե-  
 ղին մէջ մարմնաւոր աղգականին մէկը փրկէ  
 զանիկայ . կամ թէ որ կարող է , ինքզինքը  
 թող փրկէ : Աւ անիկայ՝ ծախու առնողին 50  
 հետ ինքզինքը անոր ծախած տարիէն մինչև  
 Յորելեան տարին հաշիւ պիտի ընէ , և իր փրկ-  
 կուելուն ստակը տարիներուն հաշիւովը ըլլայ .  
 անոր շահանակը վարձկանի ժամանակին պէս  
 հաշուուի : Ի՞նչ որ առկաին շատ տարի կայ , 51  
 անոնց նայելով՝ իր ծախուած գինէն իր փրկանքը  
 պիտի տայ : Աւ թէ որ Յորելեան տարիին 52  
 քիչ տարի մնացիր է , անոր հաշիւը ա՛ննայ՝  
 ու իր տարիներուն համեմատ իր փրկանքը տայ :  
 Ինքը անոր քովը տարեկան վարձկանի պէս պի- 53  
 տի սեպուի . ու ա՛ն ալ խստութեամբ չիշխէ՛ ա-  
 որ վրայ քու առջիդ : Աւ թէ որ աս կերպե- 54  
 րովս չփրկուի , Յորելեան տարիին՝ ինքն ալ ու  
 իր զաւկըներն ալ իր հետը պիտի ելլեն : Ին- 55



չու որ Իսրայէլի որդիքը իմ ծառաներս են .  
 Ազիպտոսի երկրէն իմ հանած ծառաներս են ա-  
 նոնք . ես եմ Տէրը ձեր Աստուածը :

ԳԼ . Ի,Օ

1 Ասապաշտութեան համար : 2 Բարեպաշտութեան համար :  
 3 Աստուծոյ պատուիրանքները պահողներուն համար՝ օրհնու-  
 թիւն , 14 և զանոնք չպահողներուն համար՝ անէծք : 40 Աս-  
 տուած կրօնաստանայ ապաշխարողներուն իր ողորմութիւնք  
 ցուցընել իր ուխտը յիշելով :

- 1 **Պ**առք՝ ձեզի չաստուածներ ու փորուած կուռ-  
 քեր չպիտի՛ շինէք , և ձեզի արձաններ չպի-  
 տի՛ կանգնէք , և ձեր երկրին մէջ կոթող չպի-  
 տի՛ դնէք՝ անոր երկրպագութիւն ընելու հա-  
 մար . ինչու որ ես եմ Տէրը ձեր Աստուածը :
- 2 Իմ շաբաթներս պիտի պահէք , ու իմ սրբու-
- 3 թիւնս յարգէք . ես եմ Տէրը : Իձե որ իմ կա-  
 նոններուս մէջը քայլէք , և իմ պատուիրանքներս
- 4 պահէք՝ ու ընէք անոնք , Այս ալ ձեզի անձրեք  
 ատենին պիտի տամ , և երկիրը իր արդիւնքը պի-  
 տի տայ , ու դաշտին ծառերը իրենց պտուղը պիտի
- 5 տան : Աւ ձեր կալը մինչև այգեկութը պիտի հաս-  
 նի , ու այգեկութը մինչև ցանելու ժամանակը  
 հասնի . և ձեր հացը կուշտ պիտի ուտէք , ու ձեր
- 6 երկրին մէջ ապահովութեամբ բնակիք : Աւ  
 խաղաղութիւն պիտի տամ երկրին , ու կան-  
 քի պիտի պառկիք , և վախցունող մը պիտի  
 չըլլայ . ու երկրէն չար դաղանները պիտի հատ-  
 ցունեմ , և ձեր երկրէն սուր չպիտի անցնի :

Եւ ձեր թշնամիները պիտի հալածէք , ու ա- 7  
 նոնք սուրէն պիտի իյնան ձեր առջևը : Եւ 8  
 ձեզմէ հինգ հոգին՝ հարիւրաւորը պիտի հալա-  
 ծէ , և ձեզմէ հարիւր հոգին՝ բիւրաւորը պիտի  
 հալածէ , ու ձեր թշնամիները սուրէն պիտի  
 իյնան ձեր առջևը : Եւ ձեզի պիտի նայիմ , 9  
 ու ձեզ աճեցունեմ և շատցունեմ , ու ձեզի  
 հետ իմ ուխտս հաստատեմ : Եւ հին պա- 10  
 շարը պիտի ուտէք , ու նորին տեղ ընելու հա-  
 մար՝ հինը հանէք : Եւ իմ խորանս ձեր մէ- 11  
 ջը պիտի կանգնեցունեմ , ու իմ հոգիս ձեզմէ  
 չպիտի զզուի : Եւ ձեր մէջը պիտի քայլեմ , ու 12  
 ձեր Եստուածը ըլլամ , և դուք իմ ժողովուրդս  
 պիտի ըլլաք : Ես եմ Տէրը ձեր Եստուածը , 13  
 որ Եգիպտոսի երկրէն հանեցի ձեզ , ծառայու-  
 թեան վիճակէն , ու ձեր լուծին կապերը խոր-  
 տակեցի , և ձեզ բարձրագլուխ քաղցուցի :

Բայց թէ որ իս մտիկ չընէք՝ ու բոլոր ա- 14  
 պատուիրանքներս չպահէք , Եւ իմ կանոններս 15  
 անարգէք , ու ձեր հոգին իմ դատաստաններէս  
 զզուելու ըլլայ , անանկ որ՝ իմ բոլոր պատուի-  
 րանքներս չընէք , և իմ ուխտս աւրէք , Ես 16  
 ալ ձեզի առ պիտի ընեմ , այսինքն՝ Չեր վրայ  
 աչք փճացունող և սիրտ մարեցունող վախը՝  
 ծիւրական սխտը՝ ու հրատաղնապ տենդը պի-  
 տի խրկեմ , և ձեր սերմը դատարկ տեղը պիտի  
 սերմանէք . ինչու որ ձեր թշնամիները պիտի  
 ուտեն ան : Եւ իմ երեսս ձեր վրայ պիտի 17  
 տնկեմ , ու ձեր թշնամիներուն առջևը պի-

- տի սպաննուիք . ձեզ ատողները պիտի իշխեն ձեր վրայ , ու ձեզ հալածող մը չեղած ատենը՝ պի-
- 18 տի փախչիք : Այլ թէ որ ասոնցմով ալ ինձի մտիկ չընէք , անատենը ձեր մեղքերուն համար
- 19 ձեզ եօթնպատիկ ալ պիտի պատժեմ : Այլ ձեր զօրութեանը հպարտութիւնը պիտի խորտակեմ , ու ձեր երկիրքը երկաթի պէս՝ և ձեր
- 20 երկիրը պղինձի պէս պիտի ընեմ : Այլ ձեր ոյժը ոչինչ տեղը պիտի հատնի , ու ձեր երկիրը իր արդիւնքը պիտի չտայ , և երկրին ծառերը
- 21 իրենց պտուղը չտան : Այլ թէ որ դուք ինձի հետ հակառակ երթաք՝ ու ինձի մտիկ չընէք , անատենը ձեր մեղքերուն համեմատ եօթնպատիք հարուածք պիտի աւելցունեմ ձեր վրայ :
- 22 Այլ ձեր վրայ վայրենի դազանները պիտի խորհեմ , որ ձեզ անգաւակ ընեն , ու ձեր արջառները ջարդեն , և ձեզ պիտի քիչցունեն . ու ձեր ճամբաները անաստ պիտի դառնան :
- 23 Այլ թէ որ ասոնցմով ալ չխրատուիք ինձմէ ,
- 24 ու ինձի հետ հակառակ երթաք , Անատենը ես ալ ձեզի հետ հակառակ պիտի երթամ , և ես ալ ձեր մեղքերուն համար եօթնպատիկ պիտի պատ-
- 25 ժեմ ձեզ : Այլ ձեր վրայ ուխտիս վրէժը առնող սուրը պիտի խրկեմ . ու ձեր քաղաքներուն մէջ հաւքուած ատեննիդ՝ ժանտախտ պիտի խրկեմ ձեր մէջը , և թշնամիին ձեռքը
- 26 պիտի մատնուիք : Չեր հացին ցուպը կոտրած ատենս , տասը կնիկ մէկ թոնիրի մէջ պիտի եփեն ձեր հացը , և ձեր հացը կշառքով

պիտի տրուի ձեզի . ու պիտի ուտէք , և չկը-  
 տանաք : Եւ թէ որ ասոնցմով ալ ինձի մտիկ 27  
 չընէք , հապա հակառակ երթաք ինձի հետ ,  
 Ընատենը ձեզի հետ հակառակ պիտի երթամ 28  
 բարկութեամբ . և ես ալ ձեր մեղքերուն հա-  
 մար եօթնպատիկ պիտի պատժեմ ձեզ . Եւ 29  
 ձեր տղաքներուն միտը պիտի ուտէք , ու ձեր  
 ազջիկներուն միտը ուտէք : Եւ ձեր բարձր 30  
 տեղերը պիտի աւրեմ , ու ձեր կուռքերը կտոր-  
 տեմ , և ձեր դիերը ձեր կուռքերուն դիերուն  
 վրայ պիտի դնեմ , ու իմ հոգիս պիտի զղուի  
 ձեզմէ : Եւ ձեր քաղաքները աւերակ՝ ու ձեր 31  
 սուրբ տեղերը ամայի պիտի ընեմ , և ձեր  
 անոյշ հօտը պիտի չհօտուրամ : Եւ ան եր- 32  
 կիրը ամայի պիտի ընեմ , որ հօն բնակող ձեր  
 թշնամիները զարմանան անոր վրայ : Եւ ձեզ 33  
 ազգերուն մէջ պիտի ցրուեմ , ու ձեր ետեւն  
 սուր պիտի քաշեմ , և ձեր երկիրը ամայի պի-  
 տի ըլլայ՝ ու ձեր քաղաքները աւերակ : Եւ 34  
 ատենը երկիրը ամայի մնացած բոլոր օրերը երբ-  
 որ դուք ձեր թշնամիներուն երկիրը ըլլաք ,  
 անիկայ իր շաբաթները պիտի վայելէ . երկիրը  
 անատենը հանգիստ ըլլալով՝ իր շաբաթները  
 պիտի վայելէ . Բոլոր աւերակ մնացած օրերը 35  
 հանգիստ ըլլայ . քանզի երբոր անոր վրայ կը  
 բնակէիք , ձեր շաբաթներուն հանգստութիւնը  
 չունեցաւ երկրը : Եւ ձեզմէ ոչ մնացածնե- 36  
 բուն սրտին դողումն պիտի բերեմ իրենց թը-  
 նամիներուն երկրին մէջ , ու շարժած տերեւի

- ձայնը պիտի հալածէ զանոնք , և սուրի բերնէ  
 փախչելու պէս՝ պիտի փախչին անոնք , ու հա-  
 37 լածող մը չեղած ատենը պիտի իյնան : Աւ  
 հալածող մը չեղած ատենը՝ սուրի բերնէ փախ-  
 չելու պէս մէկզմէկու վըայ պիտի իյնան . և պի-  
 տի չկրնաք ձեր թշնամիներուն առջևը կայնե-  
 38 լու : Աւ ազգերուն մէջ տեղը պիտի կորսուիք ,  
 ու ձեր թշնամիներուն երկիրը ձեզ պիտի ու-  
 39 տէ : Աւ ձեզմէ մնացածները իրենց անօրէնու-  
 թիւնովը պիտի հալին Իւշն ձեր թշնամիներուն  
 երկրին մէջ . նաև իրենց հայրերուն անօրէնու-  
 թիւնովը մէկ տեղ պիտի հալին Իւշն :  
 40 Աւ թէ որ խոստովանին իրենց անօրէնու-  
 թիւնը ու հայրերնուն անօրէնութիւնը՝ ինծի  
 դէմ գործած իրենց յանցանքներովը . և թէ  
 41 իրենց ինծի հետ հակառակ երթալնին , Աւ ի-  
 մին ալ անոնց հետ հակառակ երթալս՝ ու զա-  
 նոնք իրենց թշնամիներուն երկիրը բերելս .  
 թէ որ անատենը անոնց անթլփատ սիրտերը  
 խոնարհին և իրենց անօրէնութեան պատիժը  
 42 ընդունին , Անատենը պիտի յիշեմ Յակոբին  
 հետ ըրած ուխտս , նաև Խաահակին հետ ըրած  
 ուխտս , և Աբրահամին հետ ըրած ուխտս ալ  
 պիտի յիշեմ , ու ան երկիրն ալ պիտի յիշեմ :  
 43 Աւ իբաւ՝ ան երկիրը պիտի ձգուի անոնցմէ ,  
 ու իր շարաթները պիտի վայելէ քանի՛ որ ա-  
 նոնցմէ ամայի մնայ . և անոնք իրենց անօրէնու-  
 թեանը պատիժին հաւանութիւն պիտի տան .  
 քանզի ի՛մ դատաստաններս անարգեցին , ու ա-

նոնց հոգիները իմ կանոններէս զգուեցան :  
 Բայց տակաւին երբոր իրենց թշնամիներուն եր- 44  
 կիրը ըլլան՝ անոնք պիտի չմերժեմ , և անոնք  
 բողբոջվին կորսընցունելու ու անոնց հետ ըրած  
 ուխտս ջնջելու չափ պիտի չզգուիմ անոնցմէ .  
 ինչու որ ես եմ Տէրը անոնց Աստուածը :  
 Բայց անոնց նախնեաց ուխտը միտքս պիտի բե- 45  
 բեմ , որոնք Ազխալտոսի երկրէն հանեցի՝ ազ-  
 գերուն առջևը անոնց Աստուածը ըլլալու հա-  
 մար . ես եմ Տէրը : Ասոնք են ան կանոնները 46  
 և գատաստանները ու օրէնքները՝ որ Տէրը  
 տուաւ իր ու Իսրայէլի որդւոցը մէջ Սինա լեռը .  
 Մովսէսին ձեռքովը :

## ԳԼ . ԻԷ

1 Մարդու մը անձնական ուխտին համար : 3 Ընձերուն փրկա-  
 նաց գինը : 9 Ընծայուած անասուններուն համար : 14 Ը-  
 ծայուած տունին համար : 16 Ընծայուած արտին ու անոր  
 փրկանացը համար : 28 Աուիրուած բանը չէր կրնար փը-  
 կուիլ : 32 Տասանորդը չէր կրնար փոխուիլ :

Աւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ- 1  
 սէ՛ Իսրայէլի որդւոցը ու ըսէ՛ անոնց . Արբ 2  
 որ մէկը ուխտ ընելու ըլլայ , անձինքներուն  
 գինը՝ քու արժեցուցածիդ պէս՝ Տէրոջը պէտէ՛ ը-  
 լայ : Աւ քու կտրելու գինդ ասանկ պիտի ըլլայ . 3  
 Քսան տարեկանէն մինչև վաթսուն տարեկան  
 եղած արուին կտրելու գինդ սրբութեան սիկ-  
 զին պէս՝ յիսուն սիկղ արծաթ պիտի ըլլայ : Աւ 4

- Թէ որ էգ է , քու կտրելու գինդ երսուն սիկղ
- 5 պիտի ըլլայ : Աւ թէ որ Հինգ տարեկանէն մինչև քսան տարեկան է , անատները արուին Համար քու կտրելու գինդ քսան սիկղ՝ ու էգին Համար
- 6 տասը սիկղ պիտի ըլլայ : Աւ թէ որ մէկ ամսականէն մինչև Հինգ տարեկան ըլլայ , անատները արուին Համար կտրելու գինդ Հինգ սիկղ արծաթ՝ ու էգին Համար կտրելու գինդ իրեք սիկղ
- 7 արծաթ պիտի ըլլայ : Աւ թէ որ վաթսուն տարեկանէն վեր ըլլայ , արուին Համար քու կտրելու գինդ տասնըՀինգ սիկղ՝ ու էգին Համար
- 8 տասը սիկղ պիտի ըլլայ : Աւ թէ որ քու կրտսերելու գինիդ անոր կարողութիւնը չհասնի , անիւոյ քահանային առջևը պիտի ելլայ ու անոր գինը քահանան կտրէ . քահանան ուխտ ընողին գինը անոր կարողութեանը նայելով՝ պիտի կտրէ :
- 9 Աւ թէ որ իր ուխտը՝ Տէրոջը զոհ մատուցուելու անասուններէն է , ասոնցմէ ի՛նչ որ Տէրոջը տայ՝ սուրբ պիտի ըլլայ : Ինքը չպիտի փոխէ ան , և աղէկը գէշին հետ՝ կամ գէշը աղէկին հետ չփոխէ . և թէ որ անասունը անասունի հետ փոխելու ըլլայ , անատները ան ընծա՞ծը ու անոր փոխանակը սուրբ պիտի ըլլայ :
- 10 Աւ թէ որ իր ուխտը՝ Տէրոջը չմատուցուելու անմաքուր անասուններէն ըլլայ , անատները քահանային առջևը պիտի հանէ ան անասունը .
- 11 Աւ քահանան անոր աղէկութեանը կամ գէշութեանը նայելով՝ գին կտրէ . քահանան ի՛նչ գին
- 12 որ կտրէ , անանկ թող ըլլայ : Կսկ թէ որ ան

փրկելու ըլլայ, անատենը քուկին կտրած գինիդ վրայ՝ հինգին մէկ պիտի աւելցունէ:

Եւ երբոր մարդ մը իր տունը Տէրոջը սուրբ 14 ըլլալու համար ընծայէ, անատենը քահանան անոր աղէկութեանը կամ գէշութեանը նայելով՝ գին պիտի կտրէ, քահանան անոր ինչ գին կտրէ, անանկ պիտի կենայ: Եւ թէ որ ըն- 15 ծայողը իր տունը փրկելու ըլլայ, քու կտրած գինիդ վրայ՝ հինգին մէկ պիտի աւելցունէ, ու սուրբ անորը պիտի ըլլայ: Եւ թէ որ մարդ 16 մը իր կալուածքին արտէն ընծայելու ըլլայ Տէրոջը, անատենը քու կտրած գինդ անոր սերմին համեմատ պիտի ըլլայ, մէկ քու գարիի սերմի համար՝ յիսուն սիկղ արծաթ ըլլայ: Թէ որ 17 իր արտը Յորելեան տարիէն ընծայէ, քու կտրած գինիդ պէս պիտի կենայ: Եւ թէ որ իր 18 արտը Յորելեան սուրբէն ետքը ընծայէ, քահանան անոր հետ ստակը մինչև Յորելեան տարին մնացած տարիներուն նայելով՝ հաշիւ պիտի ընէ, ու քու կտրած գինէդ վար պիտի իջեցունէ, Իսկ թէ որ արտը ընծայողը փրկելու 19 ըլլայ ան, անատենը քու կտրած գինիդ ստակին վրայ հինգին մէկ աւելցունէ, ու ան սուրբ պիտի հաստատուի անոր: Եւ թէ որ արտը չփրկէ, 20 կամ արտը մէկ ուրիշի մը ծախած ըլլայ, ալ նորէն չպիտի փրկուի ան: Եւ արտը՝ երբոր Յոր- 21 ելեան սուրբէն մէջ դառնայ, նուիրուած արտի պէս սուրբ պիտի ըլլայ Տէրոջը, անոր կալուածքը քահանայինը պիտի ըլլայ: Եւ թէ որ 22



- մէկը իր կալուածքին արտէն չըլլալով՝ իր ծախու  
 23 առած արարը ընծայէ Տէրոջը , Ընասոննը քա-  
 չանան անոր հետ քու կտրած գինիդ հաշիւը ը-  
 նէ մինչև Յօբելեան տարին , և ան օրը քու  
 կտրած գինդ սուրբ բանի պէս պիտի տայ Տէ-  
 24 րոջը : Յօբելեան տարին՝ արարը ծախողին՝ այ-  
 չնսն որուն որ կրօնեաբերի գեանի կալուածքը ,  
 25 անոր պիտի դառնայ : Աւ բոլոր քու կտրած  
 գիներդ սրբութեան սիկղին պէս պիտի ըլլայ .  
 26 սիկղը քսան կերատ է : Միայն թէ անասուն-  
 ներուն առջիննկը՝ առջի ծնածը ըլլալուն համար  
 Տէրոջը ըլլալովը , մէկը չպիտի ընծայէ ան .  
 թէ արջառ ըլլայ և թէ ոչխար՝ Տէրոջն է  
 27 ան : Աւ թէ որ անմարդը անասուններէն  
 է , քու կտրած գինիդ պէս պիտի փրկէ ան . ու  
 հինգէն մէկ աւելցունէ անոր վրան . և թէ որ  
 չփրկուի , քու կտրած գինովդ թող ծախուի :  
 28 Բայց մարդու մը բոլոր իր ունեցած մար-  
 դերէն և անասուններէն ու իր կալուածքին ար-  
 տէն Տէրոջը նուիրածը պիտի չծախուի՝ ու  
 չփրկուի . ամէն նուէր ամենասուրբ է Տէրոջը :  
 29 Մարդոցմէ նուիրուած նուէր մը բնաւ պիտի  
 չփրկուի , ևսայն անշուշտ պիտի մնայուի :  
 30 Աւ երկրին բոլոր տասանորդը՝ Եւ՛ երկրին  
 հունտերէն և Եւ՛ ծառերուն պտուղէն՝ Տէրոջն  
 31 է . ան՝ սուրբ է Տէրոջը : Աւ թէ որ մարդ մը  
 իր տասանորդներէն փրկիլ ուզէ , անոր վրան  
 32 հինգէն մէկ պիտի աւելցունէ : Աւ արջառնե-  
 րուն ու ոչխարներուն ամէն տասանորդը՝ գաւա-

զանին տակէն ամէն անցնողին տասանորդը սուրբ •  
 պիտի ըլլայ Տէրօջը : Աղէկին ու գէշին մէջ <sup>33</sup>  
 տեղը տարբերութիւն պիտի չընէ, ու չփոխէ ան •  
 և թէ որ փոխելու ըլլայ, անատենը ան ալ ա-  
 նոր փոխանակն ալ սուրբ պիտի ըլլայ, չպիտի  
 փրկուի : Տէրօջը՝ Իսրայէլի որդւոցը Համար Սի- <sup>34</sup>  
 նա լեռը Մովսէսին պատուիրած պա-  
 տուիրանքները ասոնք են :

# Գ Ի Բ Բ Թ Ո Ւ Ո Յ



## Գ Ղ Ո Ւ Խ Ե

1 Կստուած Մովսէսին կըզատուիրէ որ ժողովուրդը համրէ :  
5 Յեղերուն իշխանները : 17 Եւ մէն ցեղերուն հաշիւները :  
47 Վէտացիները մէկալ ցեղերուն հետ համրուեցան՝ Տէ-  
րոջը պաշտօնին համար որոշուելով :

- 1 Եւ Տէրը Մովսէսին խօսեցաւ Սինայի անապատը ժողովքի խորանին մէջը՝ անոնց Եզիպտոսի երկրէն ելլալնուն երկրորդ տարիին երկրորդ ամսուն առաջին օրը՝ ըսելով , Եւ եք Խորայէլի որդւոցը բոլոր ժողովքին գումարը , իրենց ազգատոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նայելով՝ ամէն մէկ արուն իրենց անուններուն
- 3 Թուովը հասցէելով : Խորայէլի մէջ պատերազմուելու ամէն կարող ըլլողը քսան տարեկանէն վեր պիտի համրէք դուն ու Եհարօնը՝ անոնց գունդերուն նայելով : Եւ ձեր հետը ամէն ցեղէն մէյ մէկ մարդ պիտի ըլլայ . անոնց ամէն մէկը իր հօրը տունին իշխան ըլլայ :
- 5 Եւ ձեզի հետ կենալու մարդոցը անունները ասոնք են . Սուբնէն՝ Սեղիուրիին որդին Եզիպտոսը , Եմուօնէն՝ Սուրիսադային որդին
- 6 Սաղամիէլը , Յուդայէն՝ Եմինադաբին որդին

«Աաստիւնը, Իսաքարէն՝ Սովզարին որդին՝ Աա 8  
 Թանայէլը, Օգարուզոնէն՝ Վեղոնին որդին Ե- 9  
 ղիաբը, Յովսէփին որդւոցմէ Եփրեմէն՝ Ե- 10  
 մուդին որդին Եղիսաման, Սանասէէն՝ Փա-  
 քասուրին որդին Գամաղիէլը, Բենիամինէն՝ 11  
 Գեդէօնին որդին Եբիզանը, Գանէն՝ Եմիսա- 12  
 դային որդին Եբիեղերը, Եսերէն՝ Եքբանին 13  
 որդին Փագիէլը, Գագէն՝ Սազուելին որդին 14  
 Եղիասափը, Եեփթաղիմէն՝ Ենանին որդին 15  
 Եբիբէն : Եսոնք էին ժողովրբին երեւելիները՝ 16  
 իրենց հայրերուն ցեղերուն իշխանները՝ Խորա-  
 յէլի հազարապետները :

Եւ Սովսէս ու Եհարօն առ իրենց անունն 17  
 բոլոր յիշուած մարդիկը առին . Եւ երկրորդ 18  
 ամսուն առաջին օրը բոլոր ժողովուրդը ժողկե-  
 ցին, որոնք իրենց տոհմերուն ու իրենց հայրե-  
 րուն տուներուն նայելով՝ քսան տարեկանէն  
 վեր ամէն մէկ համրուողները իրենց անուննե-  
 րուն թուովը արձանագրեցան : Տէրը Սով- 19  
 սէսին ինչպէս որ պատուիրեց՝ անիկայ Սինայի  
 անապատին մէջ անանկ համրեց զանոնք : Եւ 20  
 Խորայէլի առջիննկ զաւակը Ռուբենի որդիքը  
 իրենց սերունդովը՝ իրենց տոհմերուն ու իրենց  
 հայրերուն տուներուն նայելով՝ պատերազմերու  
 կարող քսան տարեկանէն վեր ամէն մէկ արուն՝  
 իրենց անուններուն թուովը, Ռուբենին ցեղէն 21  
 համրուածները քառասունըվեց հազար հինգ հա-  
 ղիւր հոգի էին :

Հմաօնի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց 22

- տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
 յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
 վեր ամէն մէկ արուն իրենց անուններուն թուո-  
 23 վը , Շմաւօնին ցեղէն համրուածները յի-  
 սունուինը հազար իրեք հարիւր հօգի էին :
- 24 Քաղի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
 յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
 վեր եղողները իրենց անուններուն թուովը ,  
 25 Քաղին ցեղէն համրուածները քառասունհինգ  
 հազար վեց հարիւր յիսուն հօգի էին :
- 26 Յուդայի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
 յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
 վեր եղողները իրենց անուններուն թուովը ,  
 27 Յուդային ցեղէն համրուածները եօթանասունը-  
 չորս հազար վեց հարիւր հօգի էին :
- 28 Իսաքարի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
 յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
 վեր եղողները իրենց անուններուն թուովը ,  
 29 Իսաքարին ցեղէն համրուածները յիսունըչորս  
 հազար չորս հարիւր հօգի էին :
- 30 Օւրուղոնի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն  
 նայելով՝ պատերազմելու կարող քսան տարեկա-  
 նէն վեր եղողները իրենց անուններուն թուովը ,  
 31 Օւրուղոնին ցեղէն համրուածները՝ յիսունու-  
 եօթը հազար չորս հարիւր հօգի էին :

Յովսէփի որդւոցմէն Ափրեմի որդիքը ի- 32  
րենց սերունդովը՝ իրենց տոհմերուն ու իրենց  
հայրերուն տուներուն նայելով՝ պատերազմելու  
կարող քսան տարեկանէն վեր եղողները իրենց  
անուններուն թուովը, Ափրեմին ցեղէն համ- 33  
րուածները քառսուն հազար հինգ հարիւր հօգի  
էին :

Մանասէի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց 34  
տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
վեր եղողները իրենց անուններուն թուովը,  
Մանասէին ցեղէն համրուածները երսունուերկու 35  
հազար երկու հարիւր հօգի էին :

Բենիամինի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց 36  
տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
վեր եղողները իրենց անուններուն թուովը,  
Բենիամինին ցեղէն համրուածները երսունը- 37  
հինգ հազար չորս հարիւր հօգի էին :

Պանի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց տոհ- 38  
մերուն ու իրենց հայրերուն տուներուն նայելով՝  
պատերազմելու կարող քսան տարեկանէն վեր  
եղողները իրենց անուններուն թուովը, Պանին 39  
ցեղէն համրուածները վաթսունուերկու հազար  
եօթը հարիւր հօգի էին :

Եսերի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց 40  
տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
յելով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
վեր եղողները իրենց անուններուն թուովը,

- 41 Եսերին ցեղէն համրուածները քառսունըմէկ  
հազար հինգ հարիւր հոգի էին :
- 42 Անիթաղիմի որդիքը իրենց սերունդովը՝ իրենց  
տոհմերուն ու իրենց հայրերուն տուններուն նայե-  
լով՝ պատերազմելու կարող քսան տարեկանէն  
վեր եղողները իրենց անուններուն թուովը ,
- 43 Անիթաղիմին ցեղէն համրուածները՝ յիսունու-  
իրեք հազար չորս հարիւր հոգի էին :
- 44 Եսոնք են ան համրուած հողիները , որ Սովսէ-  
սը՝ Եհարօնը ու Խարայէլի իշխանները համրեցին .  
... էլ իսանէրը տասներկու էին ամէն մէկը իր
- 45 հայրերուն տանը կողմէն : Եյսպէս Խարայէլի  
որդիներուն ամէնը իրենց հայրերուն տուններուն  
նայելով՝ Խարայէլի մէջ պատերազմելու կարող  
քսան տարեկանէն վեր եղողները համրուեցան .
- 46 Եւ բոլոր համրուածները վեց հարիւր իրեք հա-  
զար հինգ հարիւր յիսուն հոգի էին :
- 47 Բայց Ղլտացիները իրենց հայրերուն ցե-  
48 ղովը չհամրուեցան ասոնց հետ : Քանզի Տէրը  
49 խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով , Միայն Ղլտաց-  
ւոց ցեղը չպիտի՛ համրես , և Խարայէլի որդւոցը  
50 հետ անոնց գումարը չպիտի՛ առնես : Բայց  
գուն Ղլտացիները վկայութեան խորանին ու  
անոր բոլոր կարասիներուն և անոր վերաբերեալ  
բոլոր բաներուն վերակացու պիտի գնես . անոնք  
վերցունեն խորանը ու անոր բոլոր կարասիները ,  
և անոր սպասաւորութիւնը անոնք ընեն . ու  
51 անոնք պիտի բնակին խորանին բոլորտիքը : Եւ  
խորանին չուելու ատենը՝ Ղլտացիները վար

պիտի առնեն ան , ու խորանին իջևան ընելու ա-  
տենը՝ Վ և տացիները պիտի կանգնեցունեն ան ,  
և անոց մօտիկցող օտարականը պիտի մեռցուի :

Եւ Խորայէլի որդիքը իրենց գունդերովը ա-<sup>52</sup>  
մէն մէկը իր բանակին քովը՝ ու ամէն մէկը իր  
գրօշակին քովը իջևան պիտի ընեն : Իսկ <sup>53</sup>  
Վ և տացիները վկայութեան խորանին բոլորաի-  
քը պիտի բնակին , որ Խորայէլի որդւոցը ժո-  
ղովին վրայ բարկութիւն չգայ , ու Վ և տացի-  
ները վկայութեան խորանին պահպանութիւնը  
պիտի ընեն : Եւ Խորայէլի որդիքը Տէրոջը <sup>54</sup>  
Մովսէսին ամէն պատուիրածին պէս ըրին , ա-  
նանկ ըրին :

## Գ Լ . Ի

1 — 34 Եւ ամէն մէկ ցեղերուն իջևան ընելու կարգը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Եհարօնին՝ <sup>1</sup>  
ըսելով , Խորայէլի որդւոցը ամէն մէկը իր <sup>2</sup>  
գրօշակին քովը իրենց հայրերուն տանը նշանովը  
իջևան պիտի ընեն , ժողովքի խորանին զիմա-  
ցը շուրջանակի իջևան ընեն :

Եւ առջևի կողմը՝ դէպի արևելք իջևան ը- <sup>3</sup>  
նողները՝ Յուդայի բանակին \* զօրքերը ըլլան  
իրենց գունդերուն կարգովը , և Եմինադաբին  
որդին՝ Սասսոնը Յուդայի որդւոցը իշխան ու- <sup>4</sup>  
րի ըլլայ : Եւ անոր համբուած զօրքը եօթա-  
նասունը չորս հազար վեց հարիւր հօգի էին :

\* Եբր . զբօշակը ըստ



- 5 Եւ անոր քովը իջևան ընողները Խաքարին ցեղը  
 7 յէր իսաքարին որդւոցը իշխան յէր իսաքարին ցեղը :  
 6 Եւ անոր համբուած զօրքը յիսունը չորս հազար  
 7 չորս հարիւր հոգի էին : Եւ Եւ Օւրուղոնին  
 8 ցեղը . և Քեղոնին որդին Եղիարը Օւրուղոնին  
 8 որդւոցը իշխան յէր իսաքարին ցեղը : Եւ անոր համ-  
 9 բուած զօրքը յիսունուեօթը հազար չորս հար-  
 9 իւր հոգի էին : Յուդայի բանակին մէջ համ-  
 9 բուածներուն ամէնը իրենց գունդերուն նայելով՝  
 9 հարիւր ութսունը վեց հազար չորս հարիւր հոգի  
 9 էին . ասոնք առջևէն պիտի չուեն :
- 10 Հարաւային կողմը՝ Ռուբենի բանակին գրօ-  
 10 շակը յէր իսաքարին ցեղը իրենց գունդերուն կարգովը .  
 10 և Ռուբենի որդւոցը իշխան՝ Սեդեքիւրին որ-  
 11 դին Եղիարը յէր իսաքարին ցեղը : Եւ անոր համբուած  
 11 զօրքը քառսունը վեց հազար հինգ հարիւր  
 12 հոգի էին : Եւ անոր քովը իջևան ընողները  
 12 Շմաւօնին ցեղը պիտի ըլլայ . ու Շմաւօնին  
 13 որդւոցը իշխան՝ Սուրիսադային որդին Սաղա-  
 13 միէլը յէր իսաքարին ցեղը : Եւ անոր համբուած զօրքը  
 13 յիսունուինը հազար իրեք հարիւր հոգի էին :
- 14 Ու Եւ Գադին ցեղը . և Գադին որդւոցը  
 14 իշխան՝ Ռագուելին որդին Եղիարը յէր իսաքարին ցեղը :  
 15 Եւ անոր համբուած զօրքը քառսունը  
 15 հինգ հազար վեց հարիւր յիսուն հոգի էին :
- 16 Ռուբենի բանակին մէջ համբուածներուն ա-  
 16 մէնը իրենց գունդերուն նայելով՝ հարիւր յի-  
 16 սունը մէկ հազար չորս հարիւր յիսուն հոգի

էին . և երկրորդ ասոնք պիտի չուեն :

Առքը Վ և տացւոց բանակին հետ՝ բանակն 17  
բուն մէջ տեղը ժողովքի խորանը պիտի չուէ .  
ամէն մարդ իր տեղը իրենց դրօշակներուն քովը  
իջևան ըրածնուն պէս պիտի չուեն :

Արևմտեան կողմը՝ Ափրեմի բանակին դրօ- 18  
շակը լիքի ըլլայ իրենց գունդերուն կարգովը .  
և Ափրեմի որդւոցը իշխան՝ Ամիուդին որդին  
Աղիսաման լիքի ըլլայ : Աւ անոր համրուած 19  
զօրքը քառասուն հազար հինգ հարիւր հօգի էին :  
Աւ անոր քովը Սանասէին ցեղը . ու Սանասէին 20  
որդւոցը իշխան՝ Փագասուրին որդին Քամա-  
ղեէլը լիքի ըլլայ : Աւ անոր համրուած զօրքը 21  
երասունուերկու հազար երկու հարիւր հօգի էին :  
Ու էր Ռենիամինին ցեղը . և Ռենիամինին 22  
որդւոցը իշխան՝ Քէդէօնին որդին Աբիզանը պի-  
տի ըլլայ : Աւ անոր համրուած զօրքը երասու- 23  
նը հինգ հազար չորս հարիւր հօգի էին : Ափրե- 24  
մի բանակին մէջ համրուածներուն ամէնը իրենց  
գունդերուն նայելով՝ հարիւր ութը հազար  
հարիւր հօգի էին . և երրորդ ասոնք պիտի  
չուեն :

Հիւսիսային կողմը՝ Գանի բանակին դրօշակը 25  
լիքի ըլլայ իրենց գունդերուն կարգովը . և  
Գանի որդւոցը իշխան՝ Ամիսագային որդին Ա-  
քիեզերը լիքի ըլլայ : Աւ անոր համրուած զօր- 26  
քը վաթսուներկու հազար եօթը հարիւր հօգի  
էին : Աւ անոր քովը իջևան ընողները Ասերին 27  
ցեղը լիքի ըլլայ . Ու Ասերին որդւոցը իշխան՝

- 28 Եբրանին որդին Փաղիէլը ուրիշ էլ : Եւ  
անոր համրուած զօրքը քառսունըմէկ հազար
- 29 Հինգ հարիւր հոգի էին . Եսքը Նեփթա-  
ղիմին ցեղը . ու Նեփթաղիմին որդւոցը իշխան՝
- 30 Ենանին որդին Եքիրէն ուրիշ էլ : Եւ անոր  
համրուած զօրքը յիսունուիրեք հազար չորս
- 31 հարիւր հոգի էին : Գանի բանակին մէջ համ-  
րուածներուն ամէնը հարիւր յիսունուեօթը հա-  
զար վեց հարիւր հոգի էին . ասոնք իրենց դրօ-  
շակներովը աճնուն ետեէն պիտի չուեն :
- 32 Իսրայէլի որդւոցմէ իրենց հայրերուն տունե-  
րովը համրուածները ասոնք են . բանակներուն  
մէջ համրուածներուն ամէնը իրենց գունդերուն  
կարգովը՝ վեց հարիւր իրեք հազար ու հինգ
- 33 հարիւր յիսուն հոգի էին : Բայց Ղևտացիները  
չհամրուեցան Իսրայէլի որդւոցը հետ , ինչպէս
- 14 որ Տէրը Սովսէսին պատուիրեց : Եւ Իսրա-  
յէլի որդիքը Տէրոջը Սովսէսին բոլոր պատուի-  
րածին պէս ըրին . այսպէս իրենց դրօշակներո-  
վը իջևան ըրին , ու այսպէս անոնք ամէն մե-  
կերնին իրենց առհմերուն կարգովը՝ իրենց  
հայրերուն տուներովը չուեցին :

## Գ Լ . Գ

1 Ե՛հարօնի որդիքը : 5 Խորանին պաշտօնին համար Ղևտա-  
ցիները քահանաներուն կրտսուին , 11 անդրանիկներուն  
տեղը սեպուելով : 14 Ղևտացիները կը համրուին իրենց  
տոհմերովը : 21 Ղերսօնացւոց , 27 Սահաթացւոց , 33  
Մերարացւոց տոհմերը , թիւը և անոնց յանձնուած պահ-  
պանութիւնը : 38 Մովսէսին ու Ե՛հարօնին իջեան ը-  
նելու տեղը ու իրենց ընելու պահպանութիւնը : 40 Ղևտա-  
ցիները Խարայէլացւոց առջիններուն փրկանքը կը ըլլան ,  
44 ու Ղևտացւոց թիւէն աւելի եղածները ստակով կը  
փրկուին :

Եւ Ե՛հարօնին ու Մովսէսին ազգաբանութիւնը 1  
աս է , Տէրոջը Մովսէսին հետ Սինա լեռա-  
նը վրայ խօսած օրը : Եւ Ե՛հարօնին որդւոցը 2  
անունները ասոնք են . առջինեկը՝ Սադար՝ և  
Երիուզ , Եղիազար ու Իթամար : Եսոնք էին 3  
Ե՛հարօնին քահանայ որդւոցը անունները՝ որ օ-  
ծուած օրնուած էին քահանայութիւն ընելու :  
Եւ Սադար ու Երիուզ Սինայի անապատը Տէ- 4  
րոջը առջևը օտար կրակ մատուցած ատենին՝  
մեռան Տէրոջը առջևը , ու անոնք որդի չունէին .  
և Եղիազար ու Իթամար իրենց Ե՛հարօն հօրը  
առջևը քահանայ եղան .

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ղևի- 5  
ին ցեղը մօտիկցո՛ւր , ու Ե՛հարօն քահանային 6  
առջևը կայնեցո՛ւր անոնք՝ որ պաշտեն անիկայ :  
Եւ անոր պահպանութիւնը ու ժողովքի խորա- 7  
նին առջևը բոլոր ժողովին պահպանութիւնը  
պահեն խորանին պաշտօնը ընելով : Եւ ժողով- 8  
քի խորանին բոլոր կարասիները ու Խարայէլի

- որդւոցը պահպանութիւնը պիտի պահեն խորա-
- 9 նին պաշտօնը ընելով : Եւ Ահարօնին ու անոր  
որդւոցը պիտի տաս Ղ և տացիները . ասոնք Խս-  
րայէլի որդւոցմէն բոլորովին անոր տրուած են :
- 10 Եւ Ահարօնը ու անոր որդիները քահանայու-  
թիւն ընելու պիտի կարգես . և մօտեցող օտա-  
րականը պիտի մնացուի :
- 11 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Եւ
- 12 ես ահա՛ Խսրայէլի որդւոցը մէջէն Ղ և տացիները  
առի , Խսրայէլի որդւոց մէջը ամեն մօրը արգան-  
դը բացող առջիննեկին տեղը . ուստի Ղ և տացի-
- 13 ները իմս պիտի ըլլան : Քանզի ամէն առջիննե-  
կը իմս է . երբոր Եզիպտոսի երկրին մէջ բոլոր  
առջիննեկը զարկի , Խսրայէլի մէջ բոլոր առջին-  
նեկը մարդէն մինչև անասուն սրբեցի ինձի , որ  
իմս ըլլան անոնք . ես եմ՝ Տէրը :
- 14 Եւ Սինայի անապատին մէջ Տէրը խօսեցաւ
- 15 Մովսէսին՝ ըսելով , Համբէ՛ Ղ և իին որդիքը ի-  
րենց հայրերուն տուներուն և իրենց ազգատոհմ-  
ներուն նայելով . մէկ ամսականէն վեր եղող ա-
- 16 մէն արուն պիտի համբես : Եւ Մովսէս Տէրոջը  
խօսքին պէս համբեց անոնք՝ ինչպէս որ իրեն պա-
- 17 տուիրուեցաւ : Եւ Ղ և իին որդիքը իրենց անուն-
- 18 Սերարի : Եւ Գերսօնի որդւոցը անունները ի-  
րենց տոհմերովը ասոնք են . Ղ որենի ու Սե-
- 19 մէի : Եւ Կահաթին որդիքը իրենց տոհմերովը  
Ամրամ և Խասաա՛ Քերբոն ու Ողիէլ էին :
- 20 Եւ Սերարիին որդիքը իրենց տոհմերովը՝ Մոո-

դի ու Սուսի էր . Ղ և տացւոց տոհմերը իրենց  
 հայրերուն տուններուն նայելով՝ ասոնք են :

Քերսոնէն՝ Ղ որենացւոց տոհմը և Սեմէացւոց 21  
 տոհմը եղաւ . Քերսոնացւոց տոհմերը ասոնք  
 են : Ընոնցմէ համրուածները՝ մէկ ամսականէն 22  
 վեր եղող բոլոր արուններուն թուոյն պէս համ-  
 րուածները՝ եօթը հազար հինգ հարիւր և քիչ էին :  
 Քերսոնացւոց տոհմերը խորանին ետեւը դէպի 23  
 արևմուտք իջեան պիտի ընեն : Եւ Քերսո- 24  
 նացւոց հօրը տունին իշխանը՝ Աւելի որդին Ե-  
 ղիասափը պիտի ըլլայ : Եւ ժողովքի խորա- 25  
 նին մէջ Քերսոնին որդւոցը պահպանութեանը  
 յանձնուած Բանէրը ասոնք էն . խորանը ու վրանը՝  
 անոր ծածկոցը և ժողովքի խորանին դրան վա-  
 րագուրը , խորանին և սեղանին բոլորտիքը և 26  
 զած սրահին վարագուրները , և սրահին դրանը  
 վարագուրը՝ և անոր պաշտօնին համար եղած  
 չուանները :

Եւ Ահաթէն՝ Ըմրամացւոց տոհմը ու Խառ- 27  
 հառացւոց տոհմը՝ և Քերրոնացւոց տոհմը՝ ու  
 Ոզիէլացւոց տոհմը եղաւ . Ահաթացւոց տոհ-  
 մերը ասոնք են . Սէկ ամսականէն վեր եղող 28  
 բոլոր արունները իրենց թուոյն նայելով՝ ութը  
 հազար վեց հարիւր և քիչ էին , որ սրբարանին  
 պահպանութիւնը կրնէին : Ահաթին որդւոցը 29  
 տոհմերը խորանին հարաւային կողմը իջեան պի-  
 տի ընեն : Եւ Ահաթացւոց տոհմերուն հօրը 30  
 տունին իշխանը՝ Ոզիէլի որդին Եղիսափան էր :  
 Եւ անոնց պահպանութեանը յանձնուած Բանէ- 31

- ըլ ասանք էն . տապանակը ու աստուծոյն լեւան  
 հոցին սեղանը և աշտանակը ու սեղանները և  
 սրբարանին գործիքները՝ որոնցմով պաշտօն կը-  
 նեն , և վարագուրը ու անոր վերաբերեալ ամէն
- 32 բաները : Եւ Ղ և տացւոց իշխաններուն իշխա-  
 նը՝ Ահարօն քահանային որդին Աղիազարը պի-  
 տի ըլլայ , որ սրբարանին պահպանութիւնը  
 ընողներուն վրայ վերակացու ըլլայ :
- 33 Սերարիէն՝ Սողազւոց տոհմը և Սուսազւոց  
 տոհմը եղաւ . ասոնք են Սերարիին տոհմերը :
- 34 Եւ անոնցմէ համբուածները մէկ ամսականէն վեր  
 եղող բոլոր արունները իբէնց թուոյն նայելով՝
- 35 վեց հազար երկու հարիւր հօգի էին : Եւ Սե-  
 րարացւոց տոհմերուն հօրը աունին իշխանը՝ Ա-  
 բիքելին որդին Սուրիէլն էր . ասոնք խորանին
- 36 հիւսիսային կողմը իջեան պիտի ընեն : Եւ Սե-  
 րարիին որդւոցը պահպանութեանը յանձնուած  
 բաները ասոնք էն . խորանին տախտակները ու  
 անոր նիգերը և սիւները ու խորիսիւնները և ա-  
 նոր բոլոր գործիքները ու անոր վերաբերեալ ա-
- 37 մէն բաները , Եւ սրահին շուրջանակի սիւները ,  
 անոնց խաբիսիւնները և ցիցերը ու անոնց չուան-  
 ները :
- 38 Եւ խորանին առջևի կողմը՝ այսինքն ժողովքի  
 խորանին առջևը գէպի արեւելք իջեան ընելու  
 մարդիկը Սովսէսը ու Ահարօնը և անոր որդի-  
 ները պիտի ըլլան , որ սրբարանին պահպանու-  
 թիւնը Խորայէլի որդւոցը պահպանութեանը հա-  
 մար պահպանեն . ու մօտիկցող օտարականը պի-

տի մեռցուի : Եւ Ղ Լտացւոց բոլոր համբուած 39  
ները՝ որոնք իրենց տոհմերովը Տէրօջը խօսքին  
համեմատ՝ Մովսէս ու Եհարօն համբեցին , մէկ  
ամսականէն վեր եղող բոլոր արունները քսանուեր-  
կու հազար էին :

Եւ Տէրը ըստ Մովսէսին . Իսրայէլի որդ- 40  
ւոցը մէկ ամսականէն վեր բոլոր առջինեկ արու-  
ները համբէ . ու անոնց անուններուն թիւը առ :  
Եւ Իսրայէլի որդւոցը բոլոր առջինեկներուն փո- 41  
խարէն՝ Ղ Լտացիները պիտի առնես ինձի համար .  
ես եմ Տէրը . ու Ղ Լտացիներուն անասուննե-  
րը՝ Իսրայէլի որդւոցը անասուններուն բոլոր առ-  
ջինեկներուն տեղը : Եւ Մովսէս համբեց Իս- 42  
րայէլի որդւոցը բոլոր առջինեկները՝ ինչպէս որ  
Տէրը իրեն պատուիրեց : Եւ բոլոր առջինեկ ա- 43  
րունները անուններնուն թուոյն նայելով՝ մէկ ամ  
սականէն վեր անոնք որ համբուեցան , քսանուեր-  
կու հազար երկու հարիւր եօթանասունուիրեք  
հօգի էին : Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ը- 44  
սելով , Իսրայէլի որդւոցը մէջ ամէն առջինեկ 45  
ներուն տեղը Ղ Լտացիները՝ և անոնց անասուն-  
ներուն տեղը Ղ Լտացւոց անասունները առ ,  
որ Ղ Լտացիները իմն ըլլան . ես եմ Տէրը : Եւ 46  
Ղ Լտացիներուն թիւէն աւելցած՝ Իսրայէլի որդ-  
ւոցը երկու հարիւր եօթանասունուիրեք առջի-  
նեկներուն փրկանք ըլլալու համար , Մարդ դը- 47  
լուխ հինգ սիկղ պիտի առնես . որբարանին  
սիկղին նայելով պիտի առնես . մէկ սիկղը քսան  
կերպո է : Եւ անոնց մէջ աւելցածներուն 48



փրկանքին ստակը Ահարոնին ու անոր որդւոցը  
 49 տաս : Եւ Սոլսէս Ղլտացիներով փրկուած-  
 ներուն աւելցածներէն փրկանքին ստակը առաւ :  
 50 Խորայէլի որդւոցը առջիննկներէն սրբարանին  
 սիկղին նայելով՝ հազար իրեք հարիւր վաթսու-  
 51 նը հինգ սիկղ արծաթ առաւ : Եւ Սոլսէս՝  
 Տէրոջը խօսքին պէս փրկուածներուն ստակը Ա-  
 հարոնին ու անոր որդւոցը տուաւ , ինչպէս որ  
 Տէրը Սոլսէսին պատուիրեց :

Գ Լ . Գ

1 Ղլտացիներուն պաշտօն կատարելու համար որոշուած հա-  
 սակը : 4 Վահանաները խորանը քակելէն ետև՝ Ահաթացւոց  
 յանձնուելու բաները : 16 Եղիազարին վերահացութեամբ  
 պաշտօնը : 17 Վահանայից ընկու զուշութիւնները : 21  
 Վերսօնացւոց , 29 ու Սերարացւոց տանելու բաները : 34  
 Ահաթացւոց , 38 Վերսօնացւոց , 42 ու Սերարացւոց թիւը :

1 Եւ Տէրը խօսեցաւ Սոլսէսին ու Ահարոնին՝  
 2 ըսելով , Ղլի որդւոցը մէջէն Ահաթին  
 որդւոցը գումարը ա՛ն՝ իրենց տոհմերուն ու ի-  
 3 րենց հայրերուն տուներուն նայելով : Երսուն  
 տարեկանէն վեր մինչև յիսուն տարեկանը ժո-  
 4 ղովքի խորանին ծառայելու համար գունդին մէջ  
 5 ամէն մանողը չա՛րէս : Ժողովքի խորանին մէջ  
 Ահաթին որդւոցը պաշտօնը՝ ամենատուրը բա-  
 5 ները պէտէ ըլլան : Եւ երբոր բանակը չուկու-  
 ըլլայ՝ Ահարօնը ու անոր որդիքը պիտի գան ,  
 ու ծածկոցին վարագուրը իջեցունեն , և անով

վկայութեան տապանակը ծածկեն : Աւ թէհա- 6  
 շի մորթերէ ծածկոցը անոր վրայ պիտի դնեն ,  
 ու անոր վրայ բոլորովին կապուտակ լաթ տարա-  
 ծեն . և անոր ձողերը պիտի անցունեն : Աւ ա- 7  
 ռաջաւորութեան սեղանին վրայ կապուտակ լաթ  
 մը պիտի տարածեն , ու անոր վրայ սկուտեղնե-  
 րը և խնկամանները ու գաւաթները և նուէր  
 մատուցանելու բաժակները պիտի դնեն , ու հա-  
 նապազօրեայ հացերը անոր վրայ պիտի ըլլան :  
 Աւ անոնց վրայ կրկնակի կարմիրով լաթ մը պի- 8  
 տի տարածեն , ու թէհաշի մորթերէ ծածկոցով  
 ծածկեն ան . և անոր ձողերը պիտի անցունեն :  
 Աւ կապուտակ լաթ մը պիտի առնեն՝ ու ծածկեն 9  
 լոյսի աշտանակը և անոր ճրագարանները ու անոր  
 ունելիները և բազմակալները ու անոր բոլոր եղի  
 ամանները՝ որոնցմով կը ծառայեն անոր : Աւ ան 10  
 իր ամէն գործիքներովը թէհաշի մորթերէ մէկ  
 ծածկոցի մը մէջ պիտի դնեն , ու լծակի մը վրայ  
 պիտի դնեն ան : Աւ ոսկի սեղանին վրայ կա- 11  
 պուտակ լաթ մը պիտի տարածեն , ու թէհա-  
 շի մորթերէ ծածկոցով մը ծածկեն ան . և անոր  
 ձողերը պիտի անցունեն : Աւ սրբարանին պաշ- 12  
 տօնին գործածուած բոլոր գործիքները պիտի առ-  
 նեն՝ ու կապուտակ լաթի մը մէջ փաթ թեն , և  
 թէհաշի մորթերէ ծածկոցով պիտի ծածկեն ,  
 ու լծակի մը վրայ դնեն : Աւ սեղանէն մոխիրնե- 13  
 րը հանելով՝ անոր վրայ ծիրանագոյն լաթ տա-  
 րածեն , Աւ անոր վրան պաշտօնին համար գործ- 14  
 ածուած անոր բոլոր գործիքները՝ այնչէս կրա-

- կի ամանները՝ մահահանները՝ ու թիակները՝ և կոնքերը (սեղանին բոլոր գործիքները) ան լաւին վրայ պիտի դնեն , ու անոր վրայ թէ՛հաշի մորթերէ ծածկոց մը տարածեն . և անոր ձողերը
- 15 անցունեն : Եւ Ըհարօն ու անոր որդիքը բանակին չուած ատենը՝ սրբութիւնը ու սրբութիւնին բոլոր կարասիները ծածկելը լմնցունեն . անկից ետքը Կահաթին որդիքը ան վերցունելու գան . բայց սուրբ բաներու չպիտի՛ դպչին՝ որ չմեռնին . Կահաթին որդւոցը բեռերը ասոնք են ժողովքի խորանին մէջը :
- 16 Եւ Ըհարօն քահանային որդին Աղլազարը լոյսի եղին՝ ու անուշահոտ խունկին՝ և հանապազօրեայ հացի ընծային՝ ու օճման եղին վրայ վերակացու պիտի ըլլայ . և բոլոր խորանին ու անոր մէջի ամէն բաներուն , սրբութիւնին ու անոր կարասիներուն վրայ վերակացու ըլլայ :
- 17 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ըհարօնին՝
- 18 ըսելով , Կլտացւոց մէջէն Կահաթացւոց տոհմերը մի՛ կորսընցունէք . Բայց անոնց ասանկ
- 19 ըրէք՝ որ ամենասուրբ բաներուն մօտեցած ատեննին ողջ մնան ու չմեռնին . Ըհարօնը ու իր որդիքը պիտի գան՝ ու անոնց ամէն մէկուն
- 20 իր պաշտօնը ու իր բեռը որոշեն : Ու երբոր սուրբ բաները կը ծածկեն՝ անոնք տեսնալու համար ներս չմտնան՝ որ չմեռնին :
- 21 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Գեր-
- 22 սօնի որդւոցն ալ գումարը ա՛ռ՝ իրենց հայրերուն տուներուն ու իրենց տոհմերուն նայելով :

Արսուն տարեկանէն վեր մինչև յիսուն տարե-<sup>23</sup>  
 կանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայելու համար՝  
 գունդին մէջ ամէն մանողները պիտի համրես .  
 Վերսօնացւոց տոհմերուն ծառայելու ու բեռ վեր-<sup>24</sup>  
 ցունելու պաշտօնը աս է : Անոնք պիտի վերցու-<sup>25</sup>  
 նեն խորանին վարագուրները՝ ու ժողովքի խո-  
 րանը՝ անոր ծածկոցը՝ ու անոր վրայի թէհաշի  
 ծածկոցը՝ և ժողովքի խորանին դրանը վարա-  
 գուրը . Աւ խորանին ու սեղանին բոլորակը<sup>26</sup>  
 եղած սրահին վարագուրները՝ ու սրահը մտնա-  
 լու դրանը վարագուրը ու անոնց չուանները՝ և  
 անոնց պաշտօնին բոլոր գործիքները ուրիշ վեր-  
 ցունէն . ու ասոնց հարկաւոր եղած բոլոր սպա-  
 սաւորութիւնները պիտի ընեն : Վերսօնացւոց<sup>27</sup>  
 որդւոցը բոլոր պաշտօնը՝ իրենց ամէն բեռերուն  
 ու իրենց ամէն պաշտօններուն համար՝ Ահարօ-  
 նին ու անոր որդւոցը հրամանովը պիտի ըլլայ .  
 և անոնց բոլոր բեռերը անոնց պահպանութեանը  
 յանձնէք : Վերսօնի որդւոցը տոհմերուն պաշ-<sup>28</sup>  
 տօնը աս պիտի ըլլայ ժողովքի խորանին մէջը .  
 և անոնց պահպանութիւնը Ահարօն քահանային  
 Իթամար որդիին ձեռքին տակը պիտի ըլլայ :  
 Մերարիի որդին ալ պիտի համրես , իրենց<sup>29</sup>  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նայե-  
 լով : Արսուն տարեկանէն վեր մինչև յիսուն<sup>30</sup>  
 տարեկանը՝ ժողովքի խորանին ծառայութիւնը  
 ընելու համար գունդին մէջ ամէն մանողները  
 համրես : Աւ ժողովքի խորանին մէջ անոնց<sup>31</sup>  
 ամէն պաշտօններուն նայելով՝ անոնց բեռերուն

- պահպանութիւնը ասէ . Խորանին տախտակները  
 և անոր նիգերը՝ ու անոր սիւները և խա-  
 32 բրխաները , Աւ սրահին բոլորտիքը էղծ սիւնե-  
 րը ու անոնց խարխուհները՝ և ցիցերը ու անոնց  
 չուանները՝ անոնց ամէն գործիքներովը և անոնց  
 ամէն պաշտօնովը . անոնց բեռերուն պահպա-  
 նութեանը գործիքները անուաներովը պիտի յանձ-  
 33 նէք անոնց : Աս է Սերարիի որդւոցը տոհ-  
 մերուն պաշտօնը՝ անոնց բոլոր պաշտօններուն  
 նայելով՝ ժողովքի խորանին մէջ Ահարօն քա-  
 չանային որդին Իթամարին ձեռքին տակը :  
 34 Աւ Սովսէս ու Ահարօն և ժողովքին իշխան-  
 ները համբեցին Աահաթացւոց որդիները անոնց  
 տոհմերուն ու անոնց հայրերուն տուներուն նա-  
 35 յելով . Արսուն տարեկանէն վեր մինչև յիսուն  
 տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայու-  
 թիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանող-  
 36 ները , Ու անոնց համրուածները իրենց տոհմերովը  
 երկու հազար եօթը հարիւր յիսուն հօգի էին :  
 37 Ասոնք են ժողովքի խորանին բոլոր ծառայու-  
 թիւնը ընող Աահաթացւոց տոհմերուն համ-  
 րուածները , որ Սովսէս ու Ահարօն համբեցին ,  
 ինչպէս որ Տէրը Սովսէսին ձեռքովը պատուի-  
 րեր էր :  
 38 Աւ Գերսօնի որդւոցը համրուածները իրենց  
 տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նա-  
 39 յելով՝ Արսուն տարեկանէն վեր մինչև յիսուն  
 տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն  
 ընելու համար՝ գունդին մէջ ամէն մանողը հա-

Եւ անոնց համբուածները իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նայելով՝ երկու հազար վեց հարիւր երսուն հօգի էին : Եսոնք են ժողովքի խորանին մէջ բոլոր ծառայութիւն ընող Գերսոնի որդւոցը տոհմերէն համբուածները , որ Սոլսէս ու Եհարօն համբեցին Տէրօջը պատուիրածին պէս :

Եւ Սերաբիի որդւոցը տոհմերուն համբուածները իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նայելով , Երսուն տարեկանէն վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ ծառայութիւն ընելու համար գունդին մէջ ամէն մանօղը համբուածները , Եւ անոնց համբուածները իրենց տոհմերովը իրեք հազար երկու հարիւր հօգի էին : Եսոնք են Սերաբիի որդւոցը տոհմերուն համբուածները , որ Սոլսէս ու Եհարօն համբեցին , ինչպէս որ Տէրը պատուիրեր էր Սոլսէսին ձեռքովը :

Վատացիներուն ամէն համբուածները՝ որ Սոլսէս ու Եհարօն և Իսրայէլի իշխանները համբեցին իրենց տոհմերուն ու իրենց հայրերուն տուներուն նայելով , Երսուն տարեկանէն վեր մինչև յիսուն տարեկանը՝ ժողովքի խորանին մէջ պաշտօնը ու բնու կրելու ծառայութիւնը ամէն ընողները , Ե. յսինքն անոնց ամէն համբուածները ու թըր հազար հինգ հարիւր ու թսուն հօգի էին : Տէրօջը պատուիրածին պէս համբուեցան անոնք Սոլսէսին ձեռքովը , ամէն մէկը իր պաշտօնին ու իր իրեն բնոին նայելով . այսպէս

Համբուեցան անոնք , ինչպէս որ Տէրը պատուի-  
րեց Մովսէսին :

Գ Լ . Ե

1 Մամարուր մարդիկները բանակէն դուրս տեղ մը կը դրուին :  
5 Վնասի մը փոխարէն հատուցումը : 11 Լշրկան մը իր կնի-  
կին վրայով ունեցած կասկածին համար ընելու փորձը :

1 **Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով ,** Հրա-  
2 ման ըրէ Իսրայէլի որդւոցը՝ որ բանակէն  
դուրս ձգեն ամէն բորոտը և ամէն ծորումն ու-  
3 նեցողը ու մեռելէ մը ամէն պղծուածը : Արուն  
ալ էզն ալ դուրս ձգեցէք . բանակէն դուրս  
պիտի ձգէք անոնք , որ չպղծեն իրենց բանակ-  
4 ները՝ որոնց մէջ տեղը ես կը բնակիմ : Եւ  
Իսրայէլի որդիքը ասանկ ըրին , ու բանակէն  
դուրս ձգեցին անոնք . ինչպէս որ Տէրը Մով-  
սէսին խօսեցաւ , անանկ ըրին Իսրայէլի որդիքը :  
5 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով ,  
6 Խօսէ Իսրայէլի որդւոցը . Արբոր մարդ մը  
կամ կնիկ մը՝ մարդու գործած մեղքերէն մէկը  
գործելով՝ Տէրոջը դէմ մեղանչէ ու ատ անձը  
7 յանցաւոր ըլլայ , Անատենը իր ըրած մեղքը պի-  
տի խոստովանի , և անիկայ իր ըրած վնասը  
լման պիտի հատուցանէ ու անոր վրայ հինգին  
մէկ աւելցունէ , ու վնաս քաշողին պիտի տայ ան :  
8 Եւ թէ որ ան մարդուն մէկ ազգական ալ ըլ-  
լայ , որուն ա Վնասը հատուցուի , անորէնը՝ է-

զանձնսն ինասը Տէրոջը հատուցուելով՝ քահանային  
 պիտի ըլլայ, բայց՝ ի քաւութեան խոյէն, որով ան  
 մարդուն համար քաւութիւն պիտի ըլլայ : Եւ 9  
 Իսրայէլի որդւոցը բոլոր սուրբ բաներուն ա-  
 մէն ընծան որ կը բերեն քահանային՝ իրեն  
 պիտի ըլլայ : Եւ ամէն մէկուն սուրբ բաները 10  
 անոր պիտի ըլլան, ամէն մարդ ի՛նչ որ տայ քա-  
 հանային, անոր ըլլայ :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով, Խօս 11  
 սէ Իսրայէլի որդւոցը ու ըսէ անոնց . թէ որ 12  
 մարդու մը կնիկը խոտորի ու անոր անհաւատար-  
 մութիւն ընէ, Եւ մէկը անոր հետ պատկեցով՝ 13  
 զուգաւորի, ու անոր էրիկը չտեսնալով՝ գաղ-  
 տուկ մնայ, և անոր պղծուած ատենը՝ տեսնող մը  
 չըլլայ, ու կնիկը չըռնուի, Եւ մարդուն վրան 14  
 նախանձաւորութեան ոգի գալով՝ իր կնիկին  
 պղծուելուն համար նախանձի, կամ կնիկը պղծ-  
 ծուած չըլլալով՝ մարդուն վրայ նախանձաւո-  
 րութեան ոգի գայ ու նախանձի, Եւ ատենը ան 15  
 մարդը իր կնիկը քահանային պիտի բերէ . և  
 անոր ընծային համար՝ դարբի պիւրէն արդուին  
 տասներորդ բաժինը պիտի բերէ . եղ պիտի  
 չթափէ անոր վրան՝ ոչ սլ խունի գնէ վրան .  
 ինչու որ նախանձաւորութեան ընծայ մըն է ան .  
 յիշատակի ընծայ, որ մեղքը կը յիշատակէ : Եւ 16  
 քահանան կնիկը պիտի մօտիկցունէ, ու Տէ-  
 րոջը առջևը կայնեցունէ : Եւ քահանան հողէ 17  
 ամանով սուրբ ջուր պիտի առնէ . ու քահանան  
 խորանին յատակը եղած հողէն պիտի առնէ և



- 18 ջուրին մէջը դնէ : Աւ քաճանան Տէրոջը առջևը պիտի կայնեցունէ կնիկը , ու կնիկին գըլուխը բանայ , և յիշատակի ընծան , այնչէն նախանձաւորութեան ընծան անոր ձեռքը պիտի տայ . ու անէճքին լեղի ջուրը քաճանան իր ձեռքը պիտի ունենայ : Աւ քաճանան անոր երգում ընել պիտի տայ ու ըսէ կնկանը . թէ որ մարդ մը քեզի հետ չպառկեցաւ , և թէ որ քու էրկանդ անհաւատարմութիւն ընելով չպղծուեցար , անէճքին աս լեղի ջուրը փռաս մը
- 20 ջրնէ՛ քեզի : Իայց թէ որ քու էրկանդ անհաւատարմութիւն ընելով՝ պղծուեցար , և քու էրկէդ զատ ուրիշ մարդ մը քեզի հետ պառկեցաւ , (Անտանը քաճանան կնիկին անէճքի երգում ընել պիտի տայ , և քաճանան կնիկին պիտի ըսէ .) Տէրը քեզ քու ժողովուրդիդ մէջ տեղը՝ անէճքի ու երգումի համար պիտի տայ , երբոր Տէրը քու զիտդ փտեցունէ ու քու
- 22 փորդ ուռեցունէ : Եւ աս անէճքին ջուրը քու աղէքներուդ մէջը պիտի երթան , որ քու փորդ ուռեցունեն , ու քու զիտդ փտեցունեն . և
- 23 կնիկը պիտի ըսէ . Ամէն՝ ամէն : Աւ քաճանան աս անէճքները գիրքի մը մէջ պիտի գրէ , ու լեղի ջուրով պիտի աւրէ : Աւ անէճքին լեղի ջուրը ան կնիկին պիտի խմցունէ , ու անէճքին լեղի ջուրը անոր ներսի գին պիտի երթայ լեղի
- 25 լուր՝ համար : Աւ քաճանան կնիկին ձեռքէն նախանձաւորութեան ընծան պիտի տանէ , ու Տէրոջը առջևը երեբցունէ ընծան և սեղանին

մօտեցունէ ան : Եւ քահանան ընծայէն՝ իր ձեռ-<sup>26</sup>  
քը լեցուն պիտի առնէ յիշատակի համար , ու  
սեղանին վրայ պիտի այրէ ան . և անկից ետքը  
ան ջուրը կնիկին պիտի խմցունէ : Եւ ջուրը<sup>27</sup>  
անոր խմցունելէն ետքը՝ թէ որ անիկայ պղծ-  
ծուած է , ու իր էրկանը անհաւատարմութիւն  
ըրած է , անէծքին ջուրը լեզի ըլլալով՝ պիտի  
մտնայ անոր ներսի դին և անոր փորը պիտի ու-  
ռենայ , ու անոր զիտը \* փտի , և կնիկը իր  
ժողովուրդին մէջը անիծեալ պիտի ըլլայ : Եւ<sup>28</sup>  
թէ որ կնիկը պղծուած չըլլալով՝ մաքուր է ,  
փնաս պիտի չկրէ , ու զուակ պիտի բերէ : \* Աս-<sup>29</sup>  
խանձաւորութեան օրէնքը աս է , երբ որ կնիկ  
մը իր էքիկին անհաւատարմութիւն ընելով՝ պղծ-  
ծուի , Ամբ երբ որ մարդու մը վրայ նախանձա-<sup>30</sup>  
ւորութեան տղի զայ ու իր կնկանը վրայ նախան-  
ձի , Տէրոջը առջևը պիտի կայնեցունէ կնիկը՝ և  
քահանան կատարէ բոլոր աս օրէնքը անոր վրայ .  
Եւ ան մարդը ազատ պիտի ըլլայ յանցանքէն ,<sup>31</sup>  
և կնիկը իր անէցած յանցանքը պիտի կրէ :

## Գ Լ . Գ

1 Ստորաւորներուն կանոնը : 22 ժողովուրդը օրհնելու կերպը :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ-<sup>1</sup>  
սէ Իսրայէլի որդւոցը ու ըսէ անոնց . Թէ  
որ մարդ մը կամ կնիկ մը ինքզինքը Տէրոջը  
\* Եբր . Խնայ :

- նուիրելու համար ուխտաւորի մեծ ուխտ ուխ-  
 3 տելու ըլլայ, Գինիէն և օղիէն պիտի զգուշանայ .  
 գինիի քացախ կամ օղիի քացախ չպիտի՛ խմէ, և  
 խաղողի քաղցու չխմէ՛ ու խաղող կամ չամիչ  
 4 չպիտի՛ ուտէ : Ինքզինքը նուիրելուն բոլոր օրերը՝  
 որթէն եղած բան մը չպիտի՛ ուտէ՛ կուտերէն  
 5 մինչև կեղևը : Ինքզինքը նուիրելու ուխտին բո-  
 լոր օրերը՝ իր գլխուն ամելի չդպցունէ՛ . մինչև  
 ինքզինքը Տէրոջը նուիրելու օրերուն լմննալը՝  
 ինքը սուրբ պիտի ըլլայ . և իր գլխու մազերուն  
 6 վարսքը թող տայ որ ամի : Ինքզինքը Տէրոջը  
 նուիրած բոլոր օրերը՝ մեռած մարմինի մը չպիտի՛  
 7 մօտենայ : Իր հօրը համար կամ մօրը համար՝  
 իր եղբօրը կամ իր քրոջը համար՝ ինքզինքը չպի-  
 տի՛ պղծէ՛ երբոր անոնք մեռնին . ինչու որ իր  
 8 Լստուծոյ <sup>ժ</sup> ուխտը իր գլխուն վրան է : Ինքզինքը  
 նուիրելուն բոլոր օրերը ինքը սուրբ է Տէրոջը :  
 9 Ալ թէ որ իր քովը յանկարծ մարդ մը մեռնի ու  
 իր նուիրած գլուխը պղծուի, իրեն մաքրուելու  
 օրը իր գլուխը պիտի ամիլէ . եօթներորդ օրը  
 10 ամիլէ ան : Ալ ութերորդ օրը ժողովքի խո-  
 բանին դուռը երկու տատրակ կամ աղաւնիի եր-  
 11 կու ձագ պիտի բերէ քահանային : Ալ քահա-  
 նան մէկը մեղքի պատարագ՝ ու մէկալը ողջակէզ  
 պիտի մատուցանէ, և մեռելին պատճառովը եղած  
 մեղքին համար քաւութիւն պիտի ընէ անոր . ու  
 12 նոյն օրը պիտի սրբէ անոր գլուխը : Ալ իր ուխ-  
 տին օրերը Տէրոջը պիտի նուիրէ, ու յանցանքի

\* Աճ : նուիրուիլը

պատարագի համար մէկ տարեկան դառն պիտի  
 բերէ . և առջի օրերը չպիտի համբուին , ինչու  
 որ իր ուխտը պղծուեցաւ : Աւ ուխտաւորին օւ 13  
 բէնքը սա է . Արբոր ինքզինքը նուիրելուն օրե-  
 ըը լիննայ , անիկայ ժողովքի խորանին դուռը  
 պիտի բերուի . Աւ իր զոհը Տէրօջը պիտի մա- 14  
 տուցանէ՝ մէկ տարեկան անարատ արու դառն ող-  
 ջակէզի համար , ու մէկ տարեկան անարատ էգ  
 դառն մեղքի պատարագի համար , և մէկ անարատ  
 խոյ խաղաղութեան զոհի համար : Աւ սակառ 15  
 մը բարակ ալիւրէ եղով շաղաւած անխմոր շո-  
 թեր , ու եղով օծուած անխմոր լաւաշներ , և  
 անոնց հացի ընծան ու թափելու նուէրը ուրիշ  
 մարդոցու : Աւ քահանան անոր մեղքի պատա- 16  
 րագը ու անոր ողջակէզը Տէրօջը առջևը մօտիկ-  
 ցունելով՝ պիտի մատուցանէ : Աւ խոյը՝ խաղա- 17  
 զութեան զոհ պիտի մատուցանէ Տէրօջը՝ անխմոր  
 հացին սակառովը . քահանան ալ անոր հացի ըն-  
 ծան ու թափելու նուէրը պիտի մատուցանէ :  
 Աւ ուխտաւորը իր նուիրած գլուխը պիտի ամիլէ 18  
 ժողովքի խորանին դուռը . ու իր նուիրած գլե-  
 խուն մտը պիտի առնէ և խաղաղութեան զո-  
 հին տակը եղած կրակին մէջը դնէ : Աւ քահա- 19  
 նան խոյէն՝ եփած թեր , ու սակառէն՝ մէկ ան-  
 խմոր շօթ և մէկ անխմոր լաւաշ պիտի առնէ ,  
 ու ուխտաւորին ձեռքին վրայ դնէ՝ մտղերը ա-  
 ծիլուելէն ետքը : Աւ քահանան երկրցունելու 20  
 ընծայ պիտի նուիրէ զանոնք Տէրօջը առջևը .  
 ասոնք երկրցունելու երբուձով ու բարձրացու-

- նելու զհատով՝ քահանային համար սուրբ են . և  
 21 անկից ետքը ուխտաւորը զինի թող խմէ : Ուխ-  
 տաւորին -- անոր նուիրուելուն համար Տէրօջը  
 խոստացած իր ընծային օրէնքը աս է , իր ձեռ-  
 քը հասածէն ՚ի զատ . անիկայ իր ըրած խոստ-  
 մանքը իր նուիրուելուն օրէնքովը պիտի կատա-  
 րէ :
- 22 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Խօ-  
 23 սէ Եհարօնին ու անոր որդւոցը՝ և ըսէ . Եյս-  
 պէս պիտի օրհնէք Խարայէլի որդիքը՝ ըսելով ա-  
 24 նոնց , Տէրը օրհնէ քեզ , և պահէ քեզ . Տէրը  
 25 պայծառացունէ իր երեսը քու վրայ , ու ողորմի՝  
 26 քեզի . Տէրը իր երեսը քու վրայ վերցունէ ,  
 27 և խաղաղութիւն տայ քեզի : Եւ իմ անունս  
 Խարայէլի որդւոցը վրայ պիտի դնեն , ու ես պի-  
 տի օրհնեմ զանոնք :

Գ Լ . Ե

1 Խօսանին նուիրման հանդէսին համար՝ իշխաններուն ընծա-  
 ները : 10 Սեղանին նուիրման հանդէսին համար ընծաները :  
 89 Ետուած քաւութիւնին վրայէն Մովսէսին հետ կրօստի :

- 1 Եւ եղաւ որ՝ ան օրը որ Մովսէս լմբնցուց խո-  
 րանը կանգնեցունելը՝ և օձեց ան ու սրբեց ,  
 և անոր բոլոր անօթները՝ և սեղանը ու անոր  
 բոլոր գործէքի երը , և օձեց անոնք ու սրբեց .
- 2 Ենտաննը Խարայէլի իշխանները՝ իրենց հայրե-  
 րուն տանը գլուխները ըլլալով՝ թողնուցին  
 համրուելուն վրայ վերակացու եղող ցեղերուն

իշխանները ընծաներ բերին : Աւ բերին իրենց 3  
 ընծաները Տէրոջ առջևը , վեց ծածկուած  
 սայլեր և տասներկու եզներ . ամէն երկու իշ-  
 խանները մէկ սայլ , և ամէն մէկը մէյմէկ եզ . և  
 մօտիկցուցին զանոնք խորանին առջևը : Աւ 4  
 Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ընոնցմէ 5  
 առ ու Ղ և տացուց տուր ասոնք՝ ամէն մէկուն իր  
 պաշտօնին նայելով՝ որ ժողովքի խորանին պաշ-  
 տօնին մէջ գործածելու համար ըլլան : Աւ 6  
 Մովսէս առաւ սայլերը ու եզները , և Ղ և տացի-  
 ներուն տուաւ զանոնք : Արկու սայլը ու չորս 7  
 եզը Գերսօնի որդւոցը տուաւ՝ անոնց պաշտօնին  
 նայելով : Աւ չորս սայլը ու ութը եզը Մե- 8  
 րարիի որդւոցը տուաւ՝ Ըհարօն քահանային  
 Խթամար որդիին վերակացու թեամբը եղած ա-  
 նոնց պաշտօնին նայելով : Բայց կահաթի որդ- 9  
 ւոցը չտուաւ . ինչու որ սրբարանին պաշտօնը  
 անոնց վրան էր , և իրենց ուսերովը պիտի վեր-  
 ցունէին : Աւ սեղանին օծուած օրը՝ անոր նուիր- 10  
 ման հանդէսին համար իշխանները ընծաներ  
 բերին . և իշխանները իրենց ընծաները սեղանին  
 առջևը մատուցին : Աւ Տէրը ըսաւ Մովսէ- 11  
 սին . Սեղանին նուիրման հանդէսին համար՝ ա-  
 մէն մէկ իշխան մէյմէկ օր իրենց ընծաները պի-  
 տի մատուցանեն :

Աւ առաջին օրը իր ընծան մատուցանողը՝ 12  
 Յուդայի ցեղին էշեանը Ըմինադարին որդին  
 Վաստոփն էր : Աւ եր անոր ընծան . սրբ- 13  
 բարանին սիկղին նայելով՝ հարիւր երսուն սիկ-

- ղէ մէկ արծաթ սկուտեղ , եօթանասուն սիկղէ  
 մէկ արծաթ կնք , երկուքն ալ լեցուն էին  
 հացի ընծայի համար եղով շաղուած բարակ ա-  
 14 լիւրով , Տասը սիկղ սկիիէ մէկ խնկաման խուն-  
 15 կով լեցուն , Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ — մէկ  
 16 տարեկան մէկ գառն ողջակէզի համար , Այծե-  
 րէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար ,  
 17 Ալ խաղաղութեան զոհի համար երկու արջառ՝  
 հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ — հինգ հատ մէկ տա-  
 րեկան գառինք էին . Ամինադաբին տղան՝ Աա-  
 սոմիին ընծան աս էր :
- 18 Երկրորդ օրը մատուցանողը՝ Իսաբարի իշ-  
 19 խանը Սուգարին որդին՝ Աաթանայէն էր : Ա-  
 նոր մատուցած ընծան աւ էր . սրբարանին  
 սիկղին նայելով՝ հարիւր երսուն սիկղէ մէկ ար-  
 ծաթ սկուտեղ , եօթանասուն սիկղէ մէկ ար-  
 ծաթ կնք , երկուքն ալ լեցուն էին հացի ըն-  
 ծայի համար եղով շաղուած բարակ ալիւրով ,  
 20 Տասը սիկղ սկիիէ մէկ խնկաման խունկով լե-  
 21 ցուն , Մէկ զուարակ՝ մէկ խոյ՝ — մէկ տարեկան  
 22 մէկ գառն ողջակէզի համար , Այծերէն մէկ նո-  
 23 խազ մեղքի պատարագի համար , Ալ խաղա-  
 ղութեան զոհի համար երկու արջառ՝ հինգ խոյ՝  
 հինգ նոխազ՝ — հինգ հատ մէկ տարեկան գա-  
 ռինք էին . Սուգարին տղան՝ Աաթանայելին ըն-  
 ծան աս էր :
- 24 Երրորդ օրը մատուցանողը՝ Օւաբուղոնի որդ-  
 25 ւոց իշխանը Քեղոնին որդին Եղիաբն էր : Ա-  
 նոր ընծան աւ էր . սրբարանին սիկղին նայելով՝

Հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ ,  
 եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք , երկուքն  
 ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շա-  
 ղուած բարակ ալեւրով , Տասը «կէլ ոսկիէ մէկ<sup>26</sup>  
 խնկաման խունկով լեցուն , Մէկ զուարակ՝ մէկ<sup>27</sup>  
 խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի հա-  
 մար , Եւ յծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի<sup>28</sup>  
 համար , Եւ խաղաղութեան զոհի համար եր-<sup>29</sup>  
 կու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ  
 մէկ տարեկան գառինք էին . Քեղանին տղան  
 Եղիարին ընծան աս էր :

Չորրորդ օրը Թորոս-ցանոցը՝ Ուրբենի որդւոց<sup>30</sup>  
 իշխանը Սեղիուրին որդին Եղիաուրն էր : Եւ<sup>31</sup>  
 նոր ընծան աս էր . սրբարանին սիկղին նայե-  
 լով՝ Հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկու-  
 տեղ , եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք ,  
 երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար  
 եղով շաղուած բարակ ալեւրով , Տասը «կէլ<sup>32</sup>  
 ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն , Մէկ<sup>33</sup>  
 զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն  
 ողջակէզի համար , Եւ յծերէն մէկ նոխազ մեղքի<sup>34</sup>  
 պատարագի համար , Եւ խաղաղութեան զոհի<sup>35</sup>  
 համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ  
 և հինգ հատ մէկ տարեկան գառինք էին . Սե-  
 ղիուրին տղան Եղիաուրին ընծան աս էր :

Հինգերորդ օրը Թորոս-ցանոցը՝ Շմաւոնի որդ-<sup>36</sup>  
 ւոց իշխանը Սուրխադային որդին Սաղամիէն  
 էր : Եւ նոր ընծան աս էր . սրբարանին սիկղին<sup>37</sup>  
 նայելով՝ Հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ



- սկուտեղ , եօթանասուն սիկղէ մէկ արծաթ  
 կոնք , երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի  
 38 համար եղով շաղուած բարակ ալիւրով , Տասը  
 39 «կէլ ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն , Մէկ  
 զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն  
 40 ողջակէզի համար , Եյծերէն մէկ նոխազ մեղքի  
 41 պատարագի համար , Եւ խաղաղութեան զոհի  
 համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝  
 և հինգ հատ մէկ տարեկան գառինք էին • Սու-  
 բիտադային տղան Սաղամիելին ընծան աս էր :  
 42 Վեցերորդ օրը ևս խոյսողք՝ Գաղի որդւոց  
 43 իշխանը Սաղուելին որդին Աղիասափին էր : Ե-  
 նոր ընծան աս էր • սրբարանին սիկղին նայելով՝  
 հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ , եօ-  
 թանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք , երկուքն  
 ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շա-  
 44 ղուած բարակ ալիւրով , Տասը «կէլ ոսկիէ մէկ  
 45 խնկաման խունկով լեցուն , Մէկ զուարակ՝ մէկ  
 խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի հա-  
 46 մար , Եյծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի  
 47 համար , Եւ խաղաղութեան զոհի համար եր-  
 կու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ  
 հատ մէկ տարեկան գառինք էին • Սա-  
 զուելին տղան Աղիասափին ընծան աս էր :  
 48 Եօթներորդ օրը ևս խոյսողք՝ Ափրեմի որդւոց  
 49 իշխանը Ամիուզին որդին Աղիասաման էր : Ենոր  
 ընծան աս էր • սրբարանին սիկղին նայելով՝ հա-  
 րիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ , եօ-  
 թանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք , երկուքն ալ

լեցուն էին հացի ընծայի համար եղով շաղուած  
բարակ ալիւրով, Տասը սկիւռակէ մէկ խնկա- 50  
ման խունկով լեցուն, Սէկ զուարակ՝ մէկ խոյ՝ 51  
և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի համար,  
Եւ յծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի համար, 52  
Եւ խաղաղութեան զոհի համար երկու արջառ՝ 53  
հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ մէկ տարե-  
կան գառինք էին. Եւ միուդին տղան Եղիսամա-  
յին ընծան աս էր :

Աւթերորդ օրը Խառն-ցանաղը՝ Սանասէի որդ- 54  
ւոց իշխանը Փաղասուրին որդին Քամաղիէին էր :  
Ընոր ընծան աս էր. սրբարանին սիկզին նա- 55  
յիւով՝ հարիւր երսուն սիկզէ մէկ արծաթ սկու-  
տեղ, եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք,  
երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար ե-  
ղով շաղուած բարակ ալիւրով, Տասը սկիւռակէ 56  
մէկ խնկաման խունկով լեցուն, Սէկ զուարակ՝ 57  
մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի  
համար, Եւ յծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի 58  
համար, Եւ խաղաղութեան զոհի համար երկու 59  
արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ և հինգ հատ  
մէկ տարեկան գառինք էին. Փաղասուրին տղան  
Քամաղիէին ընծան աս էր :

Իններորդ օրը Խառն-ցանաղը՝ Իննիամինի որդ- 60  
ւոց իշխանը Քեղէօնին որդին Երիզանն էր :  
Ընոր ընծան աս էր. սրբարանին սիկզին նայի- 61  
ւով՝ հարիւր երսուն սիկզէ մէկ արծաթ սկուտեղ,  
եօթանասուն սիկզէ մէկ արծաթ կոնք, երկուքն  
ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շա-

- 62 զուած բարակ ալիւրով, Տասը «կէր սկիւէ մէկ
- 63 խնկաման խունկով լեցուն, Մէկ զուարակ մէկ  
խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի հա-
- 64 մար, Այծերէն մէկ նոխազ մեղքի պատարագի
- 65 համար, Աւ խաղաղութեան զոհի համար երկու  
արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և հինգ հատ  
մէկ տարեկան գառինք էին. Գեղէօնին տղան  
Աբիդանին ընծան աս էր.
- 66 Տասներորդ օրը հարսանիքէ՝ Գանի որդւոց
- 67 իշխանը Ամիսագային որդին Աբիեզերն էր: Ա-  
նոր ընծան աս էր. սրբարանին սիկղին նայելով՝  
հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկուտեղ, եօ-  
թանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք, երկուքն  
ալ լեցուն էին հացի ընծայի համար եղով շա-
- 68 զուած բարակ ալիւրով, Տասը «կէր սկիւէ մէկ
- 69 խնկաման խունկով լեցուն, Մէկ զուարակ՝  
մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն ողջակէզի
- 70 համար, Այծերէն մէկ նոխազ մեղքի պատա-
- 71 րագի համար, Աւ խաղաղութեան զոհի հա-  
մար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝ և  
հինգ հատ մէկ տարեկան գառինք էին. Ամիսա-  
գային տղան Աբիեզերին ընծան աս էր:
- 72 Սնտասաներորդ օրը հարսանիքէ՝ Ասերի որդ-  
ւոց իշխանը Աբրանին որդին Փագիէլն էր:
- 73 Անոր ընծան աս էր՝ սրբարանին սիկղին նայե-  
լով՝ հարիւր երսուն սիկղէ մէկ արծաթ սկու-  
տեղ, եօթանասուն սիկղէ մէկ արծաթ կոնք,  
երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի համար
- 74 եղով շաղուած բարակ ալիւրով, Տասը «կէր

ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն , Սէկ 75  
 զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն  
 ողջակէզի համար , Ե. յծերէն մէկ նոխազ մեղքի 76  
 պատարազի համար , Եւ խաղաղութեան զոհի 77  
 համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝  
 և հինգ հատ մէկ տարեկան գառինք էին . Եթ-  
 քանին տղան Քազիելին ընծան աս էր :

Երկուսասաներորդ օրը Կարո-ցանազը Նեփ-78  
 թաշիկի որդւոց իշխանը Կնանին որդին Եթի-  
 րէն էր : Կնոր ընծան աս էր . սրբարանին սիկ-79  
 ղին նայելով՝ հարիւր երսուն սիկղէ մէկ ար-  
 ծաթ սկուտեղ , եօթանասուն սիկղէ մէկ արծաթ  
 կոնք , երկուքն ալ լեցուն էին հացի ընծայի հա-  
 մար եղով շաղուած բարակ ալիւրով , Տասը 80  
 «իւր ոսկիէ մէկ խնկաման խունկով լեցուն , Սէկ 81  
 զուարակ՝ մէկ խոյ՝ և մէկ տարեկան մէկ գառն  
 ողջակէզի համար , Ե. յծերէն մէկ նոխազ մեղքի 82  
 պատարազի համար , Եւ խաղաղութեան զոհի 83  
 համար երկու արջառ՝ հինգ խոյ՝ հինգ նոխազ՝  
 և հինգ հատ մէկ տարեկան գառինք էին . Ե-  
 նանին տղան Եթիբէին ընծան աս էր :

Սեղանին օծուած օրը՝ անոր նուիրման հան-84  
 դէսին համար Կարայելի իշխաններէն նախոր-  
 շնածանէր ասոնք էին . Տասներկու արծաթ սկու-  
 տեղ՝ տասներկու արծաթ կոնք՝ և տասներկու  
 ոսկի խնկաման , Ե. մէկ մէկ արծաթ սկուտեղը 85  
 հարիւր երսուն «իւրէ՛» և ամէն մէկ կոնքը եօթա-  
 նասուն «իւրէ՛» էր . և ամաններուն բոլոր ար-  
 ծաթը երկու հազար չորս հարիւր «իւր էր :

- 86 սրբարանին սիկզին նայլով . Տասներկու ոսկի  
 խնկաման խունկով լեցուն , ամէն մէկ խնկա-  
 մանը սրբարանին սիկզին նայելով՝ տասնական  
 «Է՛ր Է՛ր Է՛ր՝ խնկամաններուն բոլոր ոսկին հար-  
 87 իւր քսան «Է՛ր Է՛ր . Ողջակէզին համար բոլոր  
 արջառները տասներկու զուարակ , խոյերը  
 տասներկու , մէկ տարեկան գառինքը տասներկու  
 հատ էին , իրենց հացի ընծայովը . և մեզքի  
 պատարագին համար այծերէն նոխազները տաս-  
 88 ներկու . Եւ խաղաղութեան զոհին համար բո-  
 լոր արջառները քսանըչորս զուարակ էին , խոյե-  
 րը վաթսուն , նոխազները վաթսուն , և մէկ  
 տարեկան գառինքը վաթսուն էին : Ես էր սե-  
 զանին նուիրման հանդէսը՝ անոր օծուելէն ետ-  
 89 քը : Եւ երբոր Սոլմէս ժողովքի խորանը մը-  
 տաւ Ենոր հետ խօսելու , անտեսնը իրեն խօսու-  
 զին ձայնը՝ վկայութեան տապանակին վրայ երկու  
 քերովրէներուն մէջ տեղը եղած քառութիւնէն  
 կըլսէր , ու ինքը Ենոր հետ կըխօսէր :

Գ Լ . Ը

1 Նրազարանները վա . ելու կերպը : 5 Վեցացոց նուիրուի-  
 ւե՛ : 23 Ենտեք մինչև քանի՛ տարեկան ընտանին խորանին ծա-  
 ոայութիւն կրնային ընել :

- 1 Եւ Տէրը խօսեցաւ Սոլմէսին՝ ըսելով , Խօ-  
 2 սէ՛ Եհարօնին՝ ու ըսէ՛ անոր . Երբոր ճրա-  
 գարանները վառես , եօթը ճրագարանները աշ-

տանակին առջևի կողմէն լոյս պիտի տան : Եւ 3  
 Ըհարօն անանկ ըրաւ . անոր ճրագարանները  
 աշտանակին առջևի կողմը վառեց , ինչպէս որ  
 Տէրը Սովսէսին պատուիրեց : Եւ աշտանակին 4  
 շէնքը \*կռածոյ ոսկիէ ըլլալով՝ ասանկ էր . ա-  
 նոր բունէն մինչև անոր ծաղիկները կռածոյ էր .  
 Տէրօջը Սովսէսին ցըցուցածին պէս՝ անանկ շի-  
 նեց աշտանակը :

Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով , Դև 5  
 տացիները ան Խորայէլի որդւոցը մէջէն , ու 6  
 սրբէ անոնք : Եւ անոնք սրբելու համար ա- 7  
 սանկ պիտի ընես . †ՍաքրուԹեան ջուր սրակես  
 անոնց վրայ , ու անոնք բոլոր իրենց մարմինները  
 Թող ածիլեն , և իրենց հանգերծները լուան ու  
 մաքրուին : Ետքը Թող աոնեն զուարակ մը 8  
 ու անոր հացի ընծան եղով շաղուած բարակ ա-  
 լիւր ըլլալով . դուն ալ զուարակ մը պիտի առ-  
 նես մեղքի պատարագի համար : Եւ Դևտա- 9  
 ցիները Ժողովքի խորանին առջևը պիտի մօ-  
 տիկցունես . ու Խորայէլի որդւոցը բոլոր Ժողով-  
 քը Ժողվես : Եւ Դևտացիները Տէրօջը առ- 10  
 ջևը մօտիկցուր , ու Խորայէլի որդիքը իրենց  
 ձեռքերը Դևտացիներուն վրան դնեն : Եւ Ը- 11  
 հարօն Խորայէլի որդւոցը կողմէն՝ Դևտացիները  
 Տէրօջը առջևը պիտի մատուցանէ . ու անոնք  
 Տէրօջը պաշտօնը կատարելու համար ըլլան :  
 Եւ Դևտացիները իրենց ձեռքերը զուարակնե- 12

\*Դև՝ ձախարակեայ

†Ըհ : մեղացի մեղքի պատարագի

- բուն զլիսուն վրայ պիտի գնեն . ու Ղևտացիներուն քառութիւն ընելու համար մէկ զուարթութիւն մեղքի պատարագ՝ ու մէկայլ որջակէզ պիտի մա-
- 13 տուցանես Տէրօջը : Աւ Ղևտացիները Ահարօնին ու անոր որդւոցը առջևը պիտի կայնեցունես , ու զանոնք ընծայ մատուցանես Տէ-
- 14 րօջը : Այսպէս պիտի զատես Ղևտացիները Խորայէլի որդւոցը մէջէն , ու Ղևտացիները
- 15 իմն պիտի ըլլան : Աւ անկից ետքը Ղևտացիները ժողովքի խորանին գործը ընելու պիտի մտնան : Այսպէս պիտի սրբես անոնք , և ըն-
- 16 ծայ մատուցանես անոնք . Քանզի անոնք բոլորովին ինծի տրուած են Խորայէլի որդւոցը մէջէն . Խորայէլի որդւոցը մէջ՝ մօրը արգանդը բացող բոլոր առջիննկին տեղը ինծի առի անոնք :
- 17 Ինչու որ Խորայէլի որդւոցը բոլոր առջիննկը՝ թէ մարդու և թէ անասունի , իմն էն . Ազիպատսի երկրին մէջ բոլոր առջիննկը զարկած օ-
- 18 րէս՝ զանոնք սրբեցի ինծի համար : Աւ Խորայէլի որդւոցը բոլոր առջիննկներուն տեղը Ղևտացիները առի :
- 19 Աւ Խորայէլի որդւոցը մէջէն Ղևտացիները բոլորովին Ահարօնին ու անոր որդւոցը տուի՝ որ ժողովքի խորանին մէջը Խորայէլի որդւոցը պաշտօնը ընեն , և Խորայէլի որդւոցը համար քառութիւն ընեն , որ Խորայէլի որդւոցը վրայ հարուած չգայ՝ երբոր Խորայէլի որդիքը սրբութիւնին մօտնան : Աւ Մովսէս ու Ահարօն և Խորայէլի որդւոցը բոլոր ժողովքը՝ Տէրօջը Մովսէսին բոլոր պատուիրածին

պէս ըրին Ղ Լտացիներուն . Իսրայէլի որդիքը  
անանկ ըրին անոնց . Եւ Ղ Լտացիները մաք- 21  
րուեցան , ու իրենց հանդերձները լուացին , և  
Ահարօն ընծայ մատուց զանոնք Տէրօջը առջևը .  
ու Ահարօն անոնց համար քառութիւն ըրաւ ա-  
նոնք մաքրելու : Եւ անկից ետքը Ղ Լտացիներ- 22  
ըր ժողովքի խորանին մէջ մտան , իրենց պաշ-  
տօնը ընելու համար՝ Ահարօնին ու անոր որդ-  
ւոցը առջևը իսրայէլ . Տէրը Մովսէսին պա-  
տուիրաճին պէս , անանկ ըրին անոնց :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Ղ եւ 23  
տացիներուն իսրայէլ առ ըլլայ . Քսանըհինգ 24  
տարեկանէն վեր եղողները՝ ժողովքի խորանին  
պաշտօնը ընելու դունդին մէջ պիտի մտնան :  
Եւ յիսուն տարեկան ըլլալէն ետքը՝ պաշտօնին 25  
դունդէն պիտի դադարին , ու ալ ծառայելու  
չեն : Բայց ժողովքի խորանին մէջ պահպա- 26  
նութիւնը պահելու պիտի օգնեն իրենց եղ-  
բայրներուն , և ծառայութիւն պիտի չընեն .  
ասանկ պիտի ընես Ղ Լտացիներուն՝ իրենց  
պահպանութիւններուն մէջ :



## ԳԼ . Թ

1 Երկրորդ տարին զատիկը ընել կըպատուիրէ Մտուած :  
 6 Ընմաբուր եղողները ու ճամբորդները երկրորդ ամիսին  
 պիտի ընեն զատիկը : 15 Խորայէլացիք ամպին առաջնորդու-  
 թեամբը կըչուէին՝ կամ իջևան կընէին :

- 1 **Ա**՛հ Տէրը խօսեցաւ Մովսէսին Սինայի անա-  
 պատին մէջ՝ անոնց Ազիպտոսի երկրէն ելա-  
 լուն երկրորդ տարին առջի ամսուն՝ ըսելով ,  
 2 Խորայէլի որդիքը իր ժամանակին թող ընեն  
 3 զատիկը : Ըս ամսուն չորեքտասաներորդ օրը ի-  
 րիկուան դէմ պիտի ընէք ան՝ իր ժամանակին .  
 անոր բոլոր կանոններուն ու անոր բոլոր սովո-  
 4 բութիւններուն համեմատ պիտի ընէք ան : Ալ  
 Մովսէս խօսեցաւ Խորայէլի որդւոցը՝ որ զատի-  
 5 կը ընեն : Ալ առաջին ամսուն չորեքտասանե-  
 րորդ օրը անոնք զատիկը ըրին իրիկուան դէմ  
 Սինայի անապատին մէջ . Տէրոջը Մովսէսին պա-  
 տուիրածին պէս՝ Խորայէլի որդիքը անանկ ըրին :  
 6 Ալ կային ոմանք՝ որ մարդու մեռելէ պըղ-  
 ծուած ըլլալով , ան օրը չկրցան զատիկը ընել .  
 և ան օրը Մովսէսին ու Ըհարօնին առջևը ե-  
 7 կան . Ալ ան մարդիկը ըսին անոր . Մենք  
 մարդու մեռած մարմինէ պղծուած ենք . ին-  
 չո՛ւ համար Խորայէլի որդւոցը մէջ Տէրոջը պա-  
 տարագը իր ժամանակին մատուցանելէն ետ  
 8 մնանք : Ալ Մովսէս ըսաւ անոնց . Անցէք ,  
 նայիմ Տէրը ինչ կըպատուիրէ ձեր վրայով :

Աւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ըսելով, Իս-<sup>9</sup>  
 սէ Իսրայէլի որդւոցը ու ըսէ . Թէ որ ձեզմէ<sup>10</sup>  
 կամ ձեր սերունդէն մէկը մեռած մարմինէ մը  
 պղծուի , կամ հեռաւոր ճամբորդութեան մէջ  
 ըլլայ , անիկայ ալ զատիկը պիտի ընէ Տէրո-  
 ջը : Արկորդ ամսուն չորեքտասաներորդ օրը<sup>11</sup>  
 իրիկուան դէմ պիտի ընեն ան . անխմոր հացով  
 ու ըղի խոտերով պիտի ուտեն ան : Մինչև<sup>12</sup>  
 առտու անկից բան մը չպիտի թողուն , և ան-  
 կից ոսկոր մը չկտորեն . զատիկին բոլոր կա-  
 նոններուն համեմատ պիտի ընեն ան : Իայց<sup>13</sup>  
 թէ որ մարուր եղող՝ ու ճամբորդութեան մէջ  
 չեղող մարդը զատիկը ընելը զանց ընելու ըլլայ ,  
 ան անձը իր ժողովուրդին մէջէն պիտի կորսուի .  
 ինչու որ Տէրօջը պատարագը իր սահմանուած  
 ժամանակին չմատուց . ան մարդը իր մեղքը պի-  
 տի կրէ : Աւ թէ որ օտարական մը ձեր մէջը<sup>14</sup>  
 բնակի , ու զատիկը ընելու ըլլայ Տէրօջը , զա-  
 տիկին կանոնին և անոր սովորութեանը համե-  
 մատ պիտի ընէ ան . օտարականին ալ՝ երկրին  
 բնակին ալ մէկ կանոն պիտի ունենաք :

Աւ ան օրը՝ որ խորանը կանգնեցաւ , վկա-<sup>15</sup>  
 յութեան վրանին վրայովը ամպը պատեց խորա-  
 նը . ու իրիկուրէն մինչև առտու խորանին վրայ  
 կրակի երևոյթով կրկենար : Միշտ ասանկ էր .<sup>16</sup>  
 ցուրէիւ ամպը կը ծածկէր ան , և գիշերը կրակին  
 երևոյթը : Աւ երբոր ամպը խորանէն կը վեր-<sup>17</sup>  
 նար , անկից ետքը Իսրայէլի որդիքը կը շուէին .  
 ու ան տեղը՝ ուր որ ամպը կրկենար , հոն Իս-

- 18 բայելի որդիքը իջևան կրնէին : Տէրոջը հրամանովը Խորայելի որդիքը կըչուէին , և Տէրոջը հրամանովը իջևան կրնէին . ամալը խորանին վրայ որչափ ատեն որ կըկենար , անոնք իրենց վրան-
- 19 ներուն մէջ կըմնային : Աւ երբ ամալը շատ օրեր խորանին վրայ կըմնար , Խորայելի որդիքը Տէրոջը հրամանը կըպահէին , ու չէին չուեր :
- 20 Այնպէս ալ երբոր ամալը խորանին վրայ քիչ օր կըկենար . Տէրոջը հրամանին համեմատ իջևան կրնէին , ու Տէրոջը հրամանին համեմատ
- 21 կըչուէին : Ամալը իրիկուընէ մինչև առտու մնալուն ալ «...» էր , առտուանց ամալին վեր ելած ատենը կըչուէին . Թէ ցորեկ ըլլար և Թէ
- 22 գիշեր՝ ամալին ելած ատենը կըչուէին : Կամ երկու օր՝ կամ մէկ ամիս՝ և կամ մէկ տարի՝ որ ամալը խորանին վրայ կենալով կըմնար , Խորայելի որդիքը իջևան կրնէին , ու չէին չուեր .
- 23 բայց երբոր վերնար՝ կըչուէին : Տէրոջը հրամանին համեմատ իջևան կրնէին , և Տէրոջը հրամանին համեմատ կըչուէին . Վոյստսին ձեռքովը որոշած Տէրոջը հրամանին պէս՝ Տէրոջը պահպանութիւնը կըպահէին :

## ԳԼ . Ժ

1 Երծաթէ փողերուն կործածութիւնը : 11 Խորայէլացիները  
 Մինայէն դէպի փառան կըչուեն : 14 Ընոնց չուելուն կար-  
 դը : 29 Սոփսէս իր հորաբ աները կը յորդորէ որ իրենց հետ  
 կ'ըթայ : 33 Խորանին չուելու ու կենալու ատենը՝ Սոփսէսին  
 տուած օրհնութիւնը :

Նախ Տէրը խօսեցաւ Սոփսէսին՝ ըսելով, Եր- 1  
 ծաթէ երկու փող շինէ՛ քեզի . կռածոյ պի- 2  
 տի շինես անոնք , որ ժողովուրդը կանչելու հա-  
 մար ու բանակներուն չուելուն համար գործա-  
 ծես : Եւ երբոր զանոնք նշեցունեն , բոլոր ժո- 3  
 ղովուրդը քովդ պիտի ժողովին ժողովքի խո-  
 բանին դուռը : Եւ թէ որ քոզն մէկը նշե- 4  
 ցունեն , իշխանները՝ Խորայէլին հազարապետ-  
 ները պիտի ժողովին քովդ : Եւ երբոր ազգ- 5  
 արարութեան փողը նշեցունէք , արեւելքը իջեան  
 ընող բանակները պիտի չուեն : Եւ երբոր երկ- 6  
 րորդ ազգարարութեան փողը նշեցունէք , հա-  
 բաւային կողմը իջեան ընող բանակները պիտի  
 չուեն . անոնց չուելուն համար ազգարարութեան  
 փողը պիտի նշեցունեն : Եւ երբ ժողովուրդը ժող- 7  
 վելու ըլլաք՝ պիտի նշեցունէք , բայց ազգարա-  
 րութիւն պիտի չընէք : Եւ փողերը նշեցունող- 8  
 ները՝ Նհարօնին քահանայ որդիքը պիտի ըլլան .  
 Եւ ձեր ցեղերուն մէջը \*աս յաւիտենական կա-  
 նոն ըլլայ ձեզի : Եւ թէ որ պատերազմելու կը- 9  
 թաք՝ ձեր կրկրին մէջ ձեզի նեղութիւն տուող

\*ԵՔԵ . ատոնք

- Թշնամիին դէմ, ազգարարութեան փողերը պիտի նշեցունէք. ու պիտի յիշուիք Տէրոջը ձեր Աստուծոյն առջևը, և ձեր Թշնամիներէն ազա-
- 10 տուիք: Եւ ձեր ուրախութեան օրերուն՝ ու ձեր տօներուն՝ և ձեր ամսագլուխներուն՝ փողերը պիտի նշեցունէք ձեր ողջակէզներուն վրայ, ու ձեր խաղաղութեան զոհերուն վրայ, որ ձեզի յիշատակի համար ըլլան ձեր Աստուծոյն առջևը. ես եմ Տէրը ձեր Աստուածը:
- 11 Եւ եղաւ որ երկրորդ տարիին երկրորդ ամսուն քսաներորդ օրը՝ վկայութեան խորանին
- 12 վրայէն ամպը վեր ելաւ: Եւ Խորայէլի որդիքը իրենց գնացքին նայելով՝ չուեցին Սինայի անապատէն. ու ամպը փառանի անապատին մէջ
- 13 կեցաւ: Եւ առաջ՝ չուեցին Տէրոջը հրամանին
- 14 պէս՝ Մովսէսին ձեռքովը: Եւ առաջ՝ Յուդայի որդւոցը բանակին դրօշակը չուեց իրենց գունդերուն կարգովը. ու անոր գունդին վրայ Ամինադարին որդին՝ Աասափն էր:
- 15 Եւ Խաբարի որդւոցը ցեղին գունդին վրայ Սովգարին որդին
- 16՝ Ասթանայէլն էր: Եւ Օարուղոնի որդւոցը ցեղին գունդին վրայ Վեղոնին որդին՝ Աղիաբն էր:
- 17 Եւ խորանը վար իջեցուցին. ու խորանը վերցունող Քերսոնի որդիքը և Մերարիի որդիքը
- 18 չուեցին: Եւ Սուբենի բանակին դրօշակը չուեց իրենց գունդերուն կարգովը. ու անոր գունդին վրայ Սեդիուրին որդին՝ Աղիսուբն էր: Եւ Շմաւօնի որդւոցը ցեղին գունդին վրայ Սուրի-
- 20 սագային որդին Սաղամիէլն էր: Եւ Քազի

որդւոցը ցեղին գունդին վրայ Ասագուելին որդին  
 Եղիասասին էր : Եւ սրբարանը վերցունող կա- 21  
 չաթացիները չուեցին . ու խորանը կրկանդ-  
 նուէր մինչև անոնց գալը : Եւ Եփրեմի որդւոցը 22  
 բանակին դրօշակը չուեց իրենց գունդերուն  
 կարգովը . ու անոր գունդին վրայ Եմուդին  
 որդին Եղիասաման էր : Եւ Սանսաէի որդւոցը 23  
 ցեղին գունդին վրայ Փաղասուրին որդին Քամա-  
 ղիէլն էր : Եւ Խենիամինի որդւոցը ցեղին գուն- 24  
 դին վրայ Գեղէօնին որդին Լբիդանն էր : Եւ 25  
 Գանի որդւոցը բանակին դրօշակը՝ իրենց գուն-  
 դերուն կարգովը բոլոր բանակներուն ետեւն  
 չուեց . ու անոր գունդին վրայ Եմուսազային  
 որդին Լբիեղերն էր : Եւ Եսերի որդւոցը ցե- 26  
 ղին գունդին վրայ Եքրանին որդին փազիէլն  
 էր : Եւ Ենիթաղիմի որդւոցը ցեղին գունդին 27  
 վրայ Ենանին որդին Լբիբէն էր : Իսրայէլի 28  
 որդւոցը ճամբորդութիւնները ասոնք էին իրենց  
 գունդերուն կարգովը՝ երբ որ կը շուէին :

Եւ Սոփէս իր աներոջը՝ Կալիւն Մադիանա- 29  
 ցի Ասագուելին որդին Յորարին ըսաւ . Մենք  
 կը շուենք ան տեղը՝ որուն չամար Տէրը ըսաւ  
 որ ձեզի պիտի տամ . մեզի չեա եկուր , ու բա-  
 րիք պիտի ընենք քեզի . ինչու որ Տէրը Իսրա-  
 յէլին բարիք խոստացաւ : Եւ անիկայ ըսաւ ա- 30  
 նոր . Չեմ երթար , այլ իմ երկիրս ու իմ  
 ազգականներուս կերթամ : Եւ ինքը ըսաւ . 31  
 Ընոր՛չք ըրէ՛ մեզ մի թողուր . քանզի անա-  
 պատին մէջ մեր իջևան ընելու տեղերը գիտես :

- 32 ու մեզի \* առաջնորդ կրլաս : Աւ թէ որ մեզի հետ երթալու ըլլաս , ինչ բարութիւն որ ընէ մեզի Տէրը , մենք ալ քեզի նոյն բարութիւնը կրնենք :
- 33 Աւ անոնք Տէրոջը լեռնէն իրեք օրուան ճամբայ չուեցին . ու Տէրոջը ուխտին տապանակը իրեք օրուան ճամբայով անոնց առջևէն կերթար՝ անոնց հանգստանալու տեղ գտնալու համար : Աւ երբ բանակէն կը չուէին , Տէրոջը ամպը ցորեկը անոնց վրան էր :
- 35 Աւ տապանակը չուելուն ատենը Սոփէս կըսէր . Այլի՛ր՝ ո՛վ Տէր , ու քու թշնամիներդ թո՛ղ ցրուին . ու քեզ ատողները առջևէդ փախչին :
- 36 Աւ անոր կենալուն ատենը՝ ինքը կըսէր . Ո՛վ Տէր՝ Իսրայէլին հազարաւորներուն ու բիւրաւորներուն դարձի՛ր :

## Գ Լ . Ժ Ը

1 Սոփէսին ազաւանքովը Տաբերայի հրկիզութիւնը կը դադարի : 4 Ժողովուրդը միտ ուտելու կը ցանկայ , ու մանանայէն կը դադարի : 10 Սոփէս իր վրան եղած բեռէն կը ցանկատի : 16 Աստուած անոր ծանրութիւնը եօթանասուն ձերբուն կը բաժնէ : 31 Տէրը անոնց ցանկութեանը վրայ բարկանալով՝ Աիրօթ Հաթթափայի մէջ լորամարդիներ կուտայ անոնց :

- 1 Աւ ժողովուրդը չարաչար արտունջ կրնէր Տէրոջը † առջևը . ու Տէրը լսեց և իր բարկութիւնը բորբոքեցաւ , ու անոնց մէջ Տէրոջը կրակը վառեցաւ , և բանակին ծայրերը եռեռ

\* ԱԷԲ . ալք

† ԱԷԲ . սկանջին

Զէ՛սը կորսընցուց : Եւ ժողովուրդը աղաղակեց 2  
 Մովսէսին . ու Մովսէս աղօթեց Տէրոջը , և  
 կրակը դադրեցաւ : Եւ ան տեղին անունը <sup>՞</sup>Տա- 3  
 բերայ դրաւ , Տէրոջը կրակը անոնց մէջ այրելուն  
 համար : Եւ անոնց մէջի խառնիճաղանճ բազ- 4  
 մութիւնը շատ ցանկացան . ու Խորայէլի որ-  
 դիքն ալ †գարձան՝ լացին , և ըսին . Մի՛ վ մե-  
 զի ուտելու միս պիտի տայ : Եզիպտոսի մէջ 5  
 մեր ձրի կերած ձուկերը՝ վարունգները ու սե-  
 խերը և պրասները ու սոխերը և խատորները  
 միտքերնիս կուգան : Եւ հիմա մեր անձը չոր- 6  
 ցաւ . մանանայէն զատ ուրիշ բան մը չկայ  
 աչքերնուս առջևը : Եւ մանանան գինձի սեր- 7  
 մի պէս՝ ու անոր գոյնը սուտակի գոյնի պէս էր :  
 Ժողովուրդը կըպտըտէր ու կըժողվէր ա՛ն , և 8  
 աղացքի մէջ կաղային , կամ անկանի մէջ կը  
 ծեծէին . և պտուկներու մէջ կեփէին , ու ան-  
 կից շօթեր կըշինէին . և անոր համը եղոտ դա-  
 թաներու համին պէս էր : Եւ գիշերը երբ բա- 9  
 նակին վրայ ցօղ կիջնար՝ մանանան ալ անոր  
 վըս կիջնար :

Ենատենը Մովսէս լսեց որ ժողովուրդը իրենց 10  
 ցեղերովը ամէն մէկը իր վրանին դուռը կուլան .  
 և Տէրոջը բարկութիւնը խիստ բորբոքեցաւ , ու  
 Մովսէսին ալ գէշ երեցաւ ա իւր : Եւ Մով- 11  
 սէս ըսաւ Տէրոջը . Ինչո՞ւ քու ծառայ շարձա-  
 րեցիք , ու ինչո՞ւ քու առջից շնորհք չգտայ ,

\* Թ՝ հրկիզութիւն

† Ամ՝ նստան



- որ բոլոր աս ժողովուրդին բեռը իմ վրաս կը
- 12 դնես : Միթէ ե՞ս եմ յղացեր բոլոր աս ժողովուրդը , կամ ե՞ս եմ ծներ անոնք , որ ինձի էրեսս . 'Բայեակ մը կաթնկեր տղան գիրկը առնելուն պէս՝ անոնք գիրկդ ան տար մինչև ան երկիրը՝ որն որ անոնց հայրերուն տալու երգում
- 13 ըրիր : Աս ո՞ւրկից միս պիտի ունենամ , որ բոլոր աս ժողովուրդին տամ . քանզի իմ բոլորտիքս կուլան ու կըսեն . Միս տուր մեզի որ ու-
- 14 տենք : Բոլոր աս ժողովուրդը ես մինակ չեմ կրնար կրել . ինչու որ աս ինձի շատ ծանր է :
- 15 Աւ թէ որ ինձի ասանկ պիտի ընես , կաղաչեմ մեոց՝ որ իս՝ թէ որ շնորհք գտայ քու առջևդ ,
- 16 որ իմ չարիքս չտեսնամ : Աւ Տէրը ըսաւ Վովսէսին . Ինձի Խորայէլին ձերբբէն եթանասուն հոգի ժողովէ , որոնք որ դուն գիտես թէ ժողովուրդին ձերբբը և գլխաւորներն են . և անոնք ժողովքի խորանը բեր , ու հոն քեզի հետ կայ-
- 17 նին : Աւ ես հոն պիտի իջնամ ու խօսիմ քեզի հետ . և քու վրադ եղած հոգիէն պիտի առնեմ ու անոնց վրան պիտի դնեմ , որ ժողովուրդին բեռը վերցունեն քեզի հետ , ու դուն մինակ
- 18 չվերցունես : Աւ ըսէ ժողովուրդին . Մաքրուեցէք վաղուան համար , ու միս պիտի ուտէք . ինչու որ Տէրոջը ականջներուն լացիք ըսելով , Մեզի ո՞վ միս պիտի կերցունէ , քանզի Ազխատոսի մէջ աղէկ կապրէինք . ուստի Տէրը ձեզի
- 19 միս պիտի տայ , ու դուք պիտի ուտէք : 'Բուք չէ՛ թէ մինակ մէկ օր պիտի ուտէք , և ո՛չ

երկու օր՝ ոչ հինգ օր՝ ոչ տասը օր՝ ոչ ալ  
քսան օր . Վճան մէկ ամիս մինչև քթերնուդ 20  
գուրս գալը ուրիշ ուրիշ , անանկ որ զգուիք .  
որովհետև ձեր մէջ տեղը եղած Տէրը արհամար-  
հեցիք , և անոր առջևը լացիք՝ ըսելով , Ազիպ-  
տոսէն մենք ինչո՞ւ ելանք :

Եւ Մովսէս ըսաւ . Ես ժողովուրդը՝ որոնց 21  
մէջ կը գտնուիմ , վեց հարիւր հազար հետեակ  
հոգի են , ու դուն ըսիր . Ես անոնց միս պիտի  
տամ որ լճան մէկ ամիս ուտեն : Ընոնց բաւա- 22  
կան ըլլալու համար՝ միթէ Էրուր ոչխարները ու  
արջառները մորթուի՞ն . կամ անոնց բաւական  
ըլլալու համար՝ ծովին բոլոր ձուկերը մէկ տեղ  
հաւքուի՞ն : Եւ Տէրը ըսաւ Մովսէսին . Միթէ 23  
տկար է Տէրոջը ձեռքը . հիմա կը տեսնաս թէ  
քեզի ըսածիս պէս պիտի ըլլայ՝ թէ չէ : Եւ 24  
Մովսէս ելաւ , ու Տէրոջը խօսքը ժողովուրդին  
զուրկեց , և ժողովուրդին ձերերէն եօթանասուն  
հոգի ժողովեց , ու անոնք խորանին բոլորտիքը  
կայնեցուց : Եւ Տէրը ամպի մը մէջ իջաւ՝ ու 25  
անոր հետ խօսեց ու , և անոր վրայ եղած հոգիէն  
առաւ՝ ու ան եօթանասուն ձերերուն վրայ  
գրաւ . և եղաւ որ ան հոգին անոնց վրայ հանգ-  
չելուն՝ մարգարէութիւն ըրին , թայց անկից  
եւքը չըրին : Եւ երկու հոգի բանակին մէջ 26  
մնացին , մէկուն անունը Արդադ էր ու մէկային  
անունը Մովդադ . և հոգին հանգչեցաւ անոնց  
վրայ . ու անոնք ան գրուողներէն էին , բայց

\* Կ-՝ և ըստարեցան

- խորանք եկած չէին . և բանակին մէջ մարգա-  
 27 րէութիւն կրնէին : Աւ պատանի մը վազեց ու  
 պատմեց Մովսէսին և ըսաւ . Այլադը ու Մով-  
 28 Աւ Կաւէին որդին Յեսուէն՝ \* Մովսէսին ընտ-  
 րեալ ծառան՝ պատասխան տուաւ ու ըսաւ .  
 29 Տէր իմ Մովսէս՝ արդիլէ անոնք : Աւ Մովսէս  
 ըսաւ անոր . Ինձի՞ համար կրնաս անձիս . երա-  
 նի՞ թէ Տէրոջը բոլոր ժողովուրդը մարգարէներ  
 ըլլային , և Տէրը իր Հոգին անոնց վրայ դնէր :  
 30 Աւ Մովսէս բանակը քաշուեցաւ , ինքը ու Իս-  
 31 րայէլի ծերերը : Աւ Տէրոջմէն հով մը ելաւ ,  
 ու ծովին կողմէն լորամարգիններ բերաւ , ու բա-  
 նակին վրայ մէկ օրուան ճամբայ մէկ կողմէն՝ և  
 մէկ օրուան մէկալ կողմէն՝ բանակին բոլորտիքը  
 տարածեց , երկրի երեսին վրայէն երկու կան-  
 32 գունի չափ բարձր : Աւ ժողովուրդը բոլոր  
 ան օրը՝ ու բոլոր գիշերը՝ և հետևեալ բոլոր օրը՝  
 ելլելով՝ լորամարգինները ժողվեցին . քիչ ժող-  
 վոզը տասը քոս ժողվեց . և իրենց համար բա-  
 33 նակին բոլորտիքը չընտելու- փռեցին զանոնք : Աւ  
 երբ միտը իրենց ակռաներուն վրան էր , տակաւին  
 չճամուռած՝ Տէրոջը բարկութիւնը ժողովուրդին  
 վրայ բորբոքեցաւ . ու Տէրը խիստ մեծ հա-  
 34 րուածով զարկաւ ժողովուրդը : Աւ ան տեղին  
 անունը † Աիրբօթ հաթ թափալ դրաւ . ինչու որ

\* Ա՛յ՛ որ իր մանկութենէն Մովսէսին կը ծառայէր , իմ Մով-  
 սէսին ծառան որ անոր պատանիներէն էր  
 † Ի՞նչ ցանկութեան գերեզմաններ

Հոն Թաղեցին ցանկացող ժողովուրդը : Ե-35  
 Կիրթթ չաթթալայէն Յասերթ չուեց ժողո-  
 վուրդը , ու Յասերթ \*մնացին :

## Գ 1 • Ժ Բ

1 Եստուած կըցանդիմանէ Մարիամին ու Եհարօնին յանդգնու-  
 թիւնը : 10 Մովսէսին աղաչանքովը Մարիամին բորտու-  
 թիւնը կըբժշկուի : 14 Եստուած կըհրամայէ որ Մարիամը  
 բանակէն դուրս՝ դոց պահուի :

Եւ Մարիամ ու Եհարօն Մովսէսին դէմ խօ- 1  
 սեցան անոր առած Եթէովպացի կնկանը  
 Համար , քանզի անիկայ Եթէովպացի կնիկ առեր  
 էր , Ու ըսին . Միթէ Տէրը մինակ Մովսէսին 2  
 ձեռքովը խօսեցաւ . չէ՞ որ մեր ձեռքովն ալ  
 խօսեցաւ . և Տէրը լսեց : Եւ Մովսէս շատ 3  
 Հեղ մարդ մըն էր՝ երկրի վրայ եղած բոլոր մար-  
 դերէն աւելի : Եւ իսկոյն Տէրը ըսաւ Մով- 4  
 սէսին և Եհարօնին ու Մարիամին . Գուք ի-  
 րեքդ ալ ժողովքի խորանը ելէք . և իրեքնն  
 ալ ելան : Եւ Տէրը ամպին սիւնովը իջաւ՝ 5  
 ու խորանին դուռը կայնեցաւ . և Եհարօնը ու  
 Մարիամը կանչեց , ու անոնք երկուքնին ալ ե-  
 լան : Եւ ըսաւ անոնց . Հիմա իմ խօսքս մտի՛կ 6  
 ըրէք . Թէ որ ձեզմէ մէկը մարգարէ ըլլայ ,  
 ես Տէրս ինքզինքս տեսիլքի մէջ կըճանչցունեմ  
 անոր , իմ երազի մէջ կըխօսիմ անոր Հետ :  
 Իմ ծառաս Մովսէսը անանկ չէ՛ , որ բոլոր իմ 7  
 \*Եբ . էին

- 8 տանս մէջ հաւատարիմ է : Ենոր հետ բերան առ բերան յայտնապէս կը խօսիմ , և ո՛չ առակով . ու անիկայ Տէրոջը կերպարանքը կը տեսնայ . ուստի իմ ծառաս Սովսէսին դէմ
- 9 խօսելու ինչո՞ւ չվախցաք : Եւ Տէրոջը բարկութիւնը անոնց վրայ բորբոքեցաւ . ու Ինքը
- 10 գնաց : Եւ ամպը վերացաւ խորանէն , ու ահա՛ Մարիամ ձիւնի պէս բորոտ եղաւ . և Եհարօն Մարիամին նայեցաւ , և ահա անիկայ բորոտ էր :
- 11 Եւ Եհարօն ըսաւ Սովսէսին . Ո՛հ , տէ՛ր իմ կողուչեմ , վրանիս մեղք մի՛ գներ . քանզի յիմարու թիւն ըրինք , ու մեղք գործեցինք .
- 12 Թո՛ղ չնմանի ան մեռած արդ-ն որ իր մօրը արգանդէն ելած ատենը իր միսին կէսը փտած
- 13 է : Եւ Սովսէս աղաղակեց Տէրոջը՝ ըսելով , Արհնդրեմ քեզմէ , ո՛վ Եստուած , բժշկէ ա-
- 14 նիկայ : Եւ Տէրը ըսաւ Սովսէսին . Թո՛ւ որ անոր հայրը անոր երեսը թփնելու ըլլար , եօթը օր պիտի չամրջնա՞ր . Թո՛ղ անիկայ եօթը օր բանակէն դուրս գոցուած պահուի , ու ան-
- 15 կից ետքը ընդունուի : Եւ Մարիամ բանակէն դուրս եօթը օր գոցուած մնաց . ու ժողովուրդը չչուեց մինչև Մարիամին ընդունուիլը :

## Գ Լ . Ժ Գ

5 Երկիրը լրտեսելու խրկուած մարդոց անունները : 18 Կ-  
նոնց տրուած պատուէրները , 22 անոնց գործքերը , 26 ու  
անոնց բերած լուրը :

Եւ ետքը ժողովուրդը Յասերօթէն չուեցին՝ 1  
ու Փառանի անապատը իջևան ըրին : Եւ 2  
Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Մարդիկ 3  
խրկէ որ լրտեսեն Քանանու երկիրը , որն որ  
Խորայէլի որդւոցը պիտի տամ . անոնց իջևան  
եղողներէն մէյմէկ մարդ՝ իր հայրերուն ցեղին  
կողմէն պիտի խրկէք : Եւ Մովսէս Տէրոջը 4  
խօսքին համեմատ խրկեց անոնք Փառանի անա-  
պատէն . բոլոր ան մարդիկը Խորայէլի որդւոցը  
գլխաւորներն էին , Որոնց անունները ասոնք են . 5  
Ուրբնի ցեղէն՝ Օւքուրին որդին Սամուան ,  
Շմաւօնի ցեղէն՝ Քորիին որդին Սափատը , 6  
Յուդայի ցեղէն՝ Յեփոնէին որդին Քաղէբը , 7  
Խաքարի ցեղէն՝ Յովսէփին որդին Իգաղը , 8  
Եփրեմի ցեղէն՝ Նաւէին որդին Օսէսը , 9  
Իննիամինի ցեղէն՝ Ուափուին որդին Փաղտին , 10  
Օւբուլոնի ցեղէն՝ Սուդիին որդին Գեդդիէլը , 11  
Յովսէփի ցեղէն՝ Կաթիին որդին Մանսէի ցեղէն՝ 12  
Սուսին որդին Գադգին ,  
Դանի ցեղէն՝ Գամաղիին որդին Ըմիէլը , 13  
Ըսերի ցեղէն՝ Միքայէլին որդին Սաթուրը , 14  
Նեփթաղիմի ցեղէն՝ Վափսիին որդին Նահապին , 15  
Գադի ցեղէն՝ Մաքքիին որդին Գուէլը : 16

- 17 Լսոնք են ան մարդոցը անուանները՝ որ Մովսէս  
 խրկեց երկիրը լրտեսելու . և Մովսէս Նաւէին  
 18 որդին \* Օսէսին անունը † Յետև դրաւ : Եւ  
 Մովսէս խրկեց անոնք Քանանու երկիրը լրտե-  
 սելու , ու ըսաւ անոնց . Ես հարաւային կողմէն  
 19 գէպի վեր երթալով՝ ընքը ել'ք . Եւ ան երկրին  
 ինչպէս ըլլալը՝ ու հոն բնակող ժողովուրդին  
 զօրաւոր կամ տկար , քիչուր կամ շատուր ըլ-  
 20 լալը տեսէք . Եւ ան երկիրը՝ ուր որ անոնք կը  
 բնակին՝ ի՞նչպէս է , աղէ՞կ է՝ թէ գէշ . և  
 ինչպէս են ան քաղաքները՝ ուր որ անոնք կը  
 բնակին . վրանէ՞ բաղկացած են՝ թէ պարսպա-  
 21 ւոր են . Եւ երկիրը ի՞նչպէս է , պարսրա է՝  
 թէ անբեր . մէջը ծառեր կա՞ն՝ թէ չէ : Եւ  
 ժի՛ր եղէք , ու ան երկրին պտուղէն առէք : Եւ  
 22 ան օրերը խաղաղին նոր ելած օրերն էր : Եւ  
 ելան ու ան երկիրը լրտեսեցին Սինի անապա-  
 23 տէն մինչև գէպի Եմաթ երթալու խորը : Եւ  
 հարաւային կողմէն ելան , ու գէպի Քեբբոն  
 եկան . ու հոն իւ Բնակին որդիքը Ե-  
 քիմանը՝ Սէսին և թաղամբին . ու Քեբբոն Ե-  
 գիպտոսի Տայանիս քաղաքէն եօթը տարի առաջ  
 24 շինուած էր : Եւ մինչև Եքբողի ձորը եկան .  
 ու անկից ուրիշ ուռ մը կտրեցին խաղողի ողկու-  
 զով , և երկու հոգի մէկ ձողով վերցուցին ա-  
 նիկայ . և նուաբէն ու թուզերէն ալ որոյնն :  
 25 Խորայելի որդւոցը անկից կտրած ողկուղէն հա-

\* Թ՝ Գեղեւ

† Թ՝ Տէր Գեղեւ

մար՝ ան տեղին անունը <sup>6</sup>Նաբոզի ձոր դրուեցաւ :  
 Եւ բաւսուն օրէն ետքը ան երկիրը լրտեսելէն <sup>26</sup>  
 դարձան : Եւ գալով հասան Մովսէսին ու Ե- <sup>27</sup>  
 հարօնին և Խարայէլի որդւոցը բոլոր ժողովքին՝  
 Փառանի անապատը Աադէսը . և անոնց ու բո-  
 լոր ժողովքին լուր բերին . և երկրին պտուղը  
 ցրցուցին անոնց : Եւ պատմցին անոր ու Ե- <sup>28</sup>  
 սին . Մեզ խրհած երկիրդ գացինք . իրաւցու-  
 նէ կաթ ու մեղր կըբղխէ ան , և անոր պտուղը  
 սա է : Բայց ան երկրին մէջ բնակող ժող- <sup>29</sup>  
 վուրդը զօրաւոր է , և քաղաքները պարսպաւոր  
 ու խիտ մեծ են . և հոն Ենակին որդիքը տե-  
 սանք : Ըմաղէկացիները ան երկրին հարաւա- <sup>30</sup>  
 յին կողմը կըբնակին . ու Վետացիները և Յե-  
 բուսացիները ու Ըմօրհացիները լիւսները կը  
 բնակին , և Վանանացիները ծովին քովը ու  
 Հորդանանի եզերքը կըբնակին : Եւ Վաղէբ <sup>31</sup>  
 ժողովուրդը Մովսէսին առջև լռեցուց՝ ու Ե-  
 սաւ . Ե՛ղէ՛ ելանք , ու ժառանգե՛նք ան . քան-  
 զի մենք անշուշտ կարող ենք անիկայ յաղթե-  
 լու : Բայց անոր հետ ելող մարդիկը ըսին . <sup>32</sup>  
 Մենք ան ժողովուրդին վրայ ելելու կարող  
 չենք . ինչու որ անոնք մեզմէ զօրաւոր են : Եւ <sup>33</sup>  
 իրենց լրտեսած երկրին համար գէշ լուր բերին  
 Խարայէլի որդւոցը ըսելով , Ե՛ն երկիրը՝ որուն  
 մէջ տեղէն անցանք լրտեսելու , իր բնակիչնե-  
 րը ուտող երկիր մըն է . և անոր մէջի բոլոր  
 ժողովուրդը՝ որ մենք տեսանք , յաղթահասակ  
 չի՞ որչոյզ



34 մարդիկ են : Եւ հոն տեսանք հսկաները . ( Ենակին որդիքն ալ հսկաներ են ) . անանկ որ մենք մեր աչքին մարտիս պէս երեցանք , և անանկ ալ անոնց աչքին երեցանք :

Գ Լ . Ժ Գ

1 ժողովուրդը աս լուրին վրայ տրտունջ կրնէ : 6 Յետոն ու Քաղէբը գանոնք լոհցունելու կը շանան : 11 Ետուած կըսպառնայ ժողովուրդը հերքելու . 13 քայց Մովսէսին աղաչանքը ընդունելով՝ կրներէ : 26 Տրտունջ ընող ժողովուրդը խոստացուած երկիրը մտնալէն կը դրկուի : 36 Գէշ լուր բերող լրտեսները հարուածքով կը մեռնին : 40 Ետուածոյ հրամանէն դուրս՝ երկիրն վրայ յարձակող ժողովուրդը կը յաղթուի :

- 1 Եւ բոլոր ժողովքը ձայնը վերցունելով՝ աղաղակեց . և ժողովուրդը լացաւ ան դիրքերը : Եւ Իսրայէլի բոլոր որդիքը արանջեցին Մովսէսին ու Եհարօնին դէմ . ու բոլոր ժողովքը ըսաւ անոնց . Երանի՛ թէ Եգիպտոսի երկրին մէջ մեռած ըլլայինք . երանի՛ թէ աս
- 2 անապատիս մէջը մեռած ըլլայինք : Եւ Տէրը մեզ աս երկիրը ինչո՞ւ բերաւ , որ սրով իյնանք և մեր կնիկները ու մեր որդիքը յափշտակուին .
- 4 աղէկ չըլլար մեզի որ Եգիպտոս դառնանք : Եւ մեկզմեկու ըսին . Մեզի մէկ զօրագուխ մը ընտրենք , ու Եգիպտոս դառնանք : Եւ Մովսէս ու Եհարօն իրենց երեսին վրայ ինկան Իսրայէլի որդեցը բոլոր հաւքուած ժողովքին առջևը :
- Եւ երկիրը լրտեսողներէն՝ Մաւէին որ-

դին Յեսուն ու Յեփոնէին որդին Քաղէբը  
 իրենց հանդ' ընդ պատուեցին • Եւ Իսրայէլի 7  
 բոլոր ժողովքին խօսեցան՝ ըսելով, Ըն երկիրը՝  
 որուն մէջ տեղէն անցանք լրտեսելու, խիստ բա-  
 րի երկիր մըն է: Թէ որ Տէրը մեզի հաճի, մեզ 8  
 ան երկիրը պիտի տանի, և ան մեզի պիտի տայ •  
 երկիր մը որ կաթ ու մեղր կը բերէ: Միայն 9  
 թէ Տէրոջը գէմ ապստամբ մի՛ ըլլաք • և ան  
 երկրին ժողովուրդէն մի՛ վախնաք, քանզի ա-  
 նոնք մեր կերակուրն են • անոնց \* պաշտպանու-  
 թիւնը գացած է իրենց վրայէն, ու Տէրը մե-  
 զի հետ է • անոնցմէ մի՛ վախնաք: Եւ բոլոր 10  
 ժողովքը ըսին թէ՛ Քարով քարկոծենք ա-  
 սոնք • բայց Տէրոջը փոքր ժողովքի խորանին  
 մէջ բոլոր Իսրայէլի որդւոցը եր' թ' է: Եւ Տէրը 11  
 ըսաւ Մովսէսին • Ըս ժողովուրդը մինչև ե՞րբ  
 զիս պիտի բարկացունէ, և իրենց մէջը ըրած  
 հրաշքներովս ալ մինչև ե՞րբ պիտի չհաւատան  
 ինձի: Աս անոնք ժանտախտով պիտի զարնեմ, 12  
 ու կորսընցունեմ անոնք • և քեզ անոնցմէ մեծ  
 ու զօրաւոր ազգ մը պիտի ընեմ: Եւ Մովսէս 13  
 ըսաւ Տէրոջը • Ընատենը Ազիպտացիները պի-  
 տի լսեն • քանզի դուն քու կարողութիւնովդ  
 աս ժողովուրդը անոնց մէջէն հանեցիր • Եւ 14  
 անոնք պիտի պատմեն աս երկրին բնակիչներուն •  
 քանզի անոնք լսած են որ դուն՝ ո՛վ Տէր, աս ժո-  
 ղովուրդին մէջ տեղն է\*, որ դուն՝ ո՛վ Տէր,  
 գէմ առ գէմ կը տեսնուիս, և որ քու ամպք

- անոնց վրայ կրկայնի , և որ ցորեկը ամպի սիւ-  
նով՝ ու գիշերը կրակի սիւնով կըքայես անոնց  
15 առջևը : Հիմա թէ որ աս ժողովուրդը մէկ  
մարդու մը պէս մեռցունելու ըլլաս , քու ա-  
16 նունդ լսող ազգերը պիտի խօսին՝ ըսելով , Տէ-  
րը աս ժողովուրդը՝ իրենց երգումով խոստա-  
ցած երկիրը տանելու կարող չըլլալուն համար ,  
17 անապատին մէջ մեռցուց անոնք : Ալ հիմա  
թող իմ Տէրոջս կարողութիւնը մեծ ըլլայ ,  
18 ինչպէս որ խօսեցար՝ ըսելով , Տէրը երկայնա-  
միտ է և առատ ողորմութիւնով , անօրէնու-  
թիւնը ու յանցանքը ներող . բայց յանցաւորը  
ամենեւին անպարտ չթողուր , հայրերուն անօ-  
րէնութիւնը որդիներուն վրայ՝ մինչև իրեք ու  
19 չորս ցեղը հատուցանելով . կազաչեմ քու մեծ  
ողորմութեանդ համեմատ ներէ աս ժողովուր-  
դին մեղքը , ինչպէս որ ներեցիր աս ժողովուր-  
20 դին Ազիպտոսէն մինչև հոս : Ալ Տէրը ըսաւ .  
21 Քու խօսքիդ պէս ներեցի . Քայց կենդանի եմ  
ես . որ բոլոր երկիրը Տէրոջը փառքովը պիտի  
22 լեցուի , Որ բոլոր ան մարդիկը որ Ազիպտո-  
սին մէջ ու անապատին մէջ իմ փառքս ու իմ  
ըրած հրաշքներս տեսան , և մինչև հիմա իս  
տասը անգամ փորձեցին , ու իմ խօսքս մտիկ  
23 չըրին , Պիտի չտեսնան ան երկիրը՝ որն որ ի-  
րենց հայրերուն տալու երգում ըրի . իս անար-  
24 գողներուն մէկն ալ պիտի չտեսնայ ան : Քայց  
իմ ծառաս Քաղէքը ուրիշ միտք ունեցաւ՝ ու  
ինձի բոլոր սրտով նազանդեցաւ , ես ալ ա-

նիկայ իր գրացած երկիրը պիտի տանիմ . և ա-  
նոր սերունդը պիտի ժառանգէ սն : Եւ Ե-25  
մտղէկացիները ու Քանանացիները ձորերու մէջ  
կրնստին . վաղը դարձէ՛ք , և զէպի սնապատ  
կարմիր ծովին ճամբան չուեց՛ք :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Եհարօնին՝ 26  
ըսելով , Մինչև ե՞րբ սա չար ժողովուրդին ին-27  
ծի զէմ՝ տրտնջելուն հասնէ՞ր՝ . ես լսեցի Խո-  
րայէլի որդւոցը տրտնջը՝ որ ինծի զէմ կը  
տրտնջնն : Ըսէ՛ անոնց . Ես կենդանի եմ՝ կը-28  
սէ Տէրը . որ ինչպէս դուք իմ սկանջներուս  
խօսեցաք , անանկ ալ պիտի ընեմ՝ ձեզի . Չեր 29  
զիերը սա սնապատիս մէջ պիտի իյնան . և  
ձեր բոլոր հաշիւին պէս՝ ձեզմէ՛ ամէն համբուս-  
ները քսան տարիկանէն վեր եղողները դուք ա-  
մէնքդ որ ինծի զէմ տրտնջեցիք , Ենչուչա պի-30  
տի չմոնսք սն երկիրը՝ որուն մէջ ձեզ բնա-  
կեցունելու երդում ըրի , բաց ՚ի Յեփօնէին որ-  
դին Քաղէբէն՝ ու Վուէին որդին Յետուէն :  
Բայց ձեր տղարները՝ որոնց համար որ դուք 31  
ըսէ՛ք Թէ պիտի յսիչոսկուին , անոնք պիտի  
տանիմ , և ձեր չհասնած երկիրը անոնք պիտի  
տեսնան : Բայց ձեր զիերը սա սնապատին 32  
մէջ պիտի իյնան : Եւ ձեր որդիքը սնապատին 33  
մէջ քառսուն տարի պիտի ՚մոլորին , ու ձեր  
պսունը կութիւնը կրնն , մինչև որ ձեր զիերը  
սնապատին մէջ սպառին : Ինչպէս որ երկիրը 34

\*Եբբ . գիտնան

†Եբբ . տրտնջն

- քառասուն օրուան մէջ լրտեսեցիք , անսանկ ալ  
ան օրերուն թուոյն պէս՝ ամէն մէկ օրին տեղը  
մէյմէկ տարի սեպելով՝ քառասուն տարի պիտի  
կրէք ձեր անօրէնութիւնը , ու իմ <sup>35</sup> յէշ մեր-
- 35 ժելն՝ ճանչնաք : Ես Տէրս ըսի . Ինծի գէմ  
ժողովուած բոլոր աս չար ժողովքին անշուշտ  
պիտի ընեմ աս բանը . անոնք աս անապատին
- 36 մէջ պիտի մաշին , ու հոն մեռնին : Եւ ան  
մարդիկը՝ որ Սոփսէս խրկեց ան երկիրը լրտե-  
սելու , որոնք դարձան ու երկրին վւայով գէշ  
լուր բերելով՝ բոլոր ժողովքը անոր գէմ տրտըն-
- 37 ջելու գրգռեցին , Եւ մարդիկը որ ան երկրին  
վոայով գէշ լուր բերին՝ ժանտախտով մեռան
- 38 Տէրօջը առջևը : Բայց Ես աւելին որդին Յե-  
սուն և Յեփոնէին որդին Վաղէբը՝ որ երկիրը  
լրտեսելու գացող մարդիկներէն էին , ողջ մնա-
- 39 ցին : Եւ Սոփսէս բոլոր աս խօսքերը Խարայէլի  
որդւոյը զուրցեց , ու ժողովուրդը խիստ տըրտ-
- 40 մեցաւ : Եւ առտուանց կանուխ ելլալով՝ լեռա-  
նը գլուխը գացին՝ ըսելով , Եհս՝ մենք ոչ ոք  
էնք , և Տէրօջը ըսած տեղը պիտի ելլանք . ինչու
- 41 որ մեզ գործեցինք : Եւ Սոփսէս ըսաւ . Ինչու  
հիմա Տէրօջը հրամանէն դուրս կելաք . աս բա-
- 42 նը չյաջողելու է : Մի՛ ելէք , ( քանզի Տէրը  
ձեր մէջը չէ , ) չըլլայ որ ձեր թշնամիներուն
- 43 առջևը ջարդուիք : Ինչու որ Եմաղէկացիները  
ու Վանանացիները հոն առջննիդ են , և սրով  
պիտի իյնաք . գուք Տէրօջմէն ետ դառնալ-

նուդ համար՝ Տէրը ձեզի հետ պիտի չըլայ :  
 Բայց անոնք յամառութիւն ընելով՝ լեռանը դը- 44  
 լուխը ելան . սակայն Տէրոջը ուխտին տապանա-  
 կը ու Սովսէսը բանակին մէջէն չգատուեցան :  
 Ընատենը ան լեռանը վրայ բնակող Ըմադէկա- 45  
 ցիները ու Քանանացիները իջան , և զարկին  
 անոնք ու հալածեցին մինչև Հօրմա :

Գ Լ . Ժ Ե

1 Հացի ընծային ու թափելու նուէրին կանոնը : 13 , 29 Օ-  
 տարակ ան ալ նոյն օրէնքով պիտի ընծայէր : 17 Ընդի իւր-  
 մորէն բարձրացունելու ընծայ մատուցանելու կանոնը :  
 22 Ընդիտութեամբ գործուած մեղքին պատարագը : 30 Հը-  
 պարտութեան պատիժը : 32 Շարքաթը պղծող մարդը բար-  
 կոծուեցաւ : 37 Ծոպերուն օրէնքը :

Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով , Խօսէ՛ 1  
 Խորայէլի որդւոցը , ու ըսէ անոնց . Արբոր 2  
 մոնաք ձեր բնակութեան երկիրը՝ որն որ ձեզի  
 պիտի տամ , Աւ Տէրոջը անուշ հոտ նուիրելու 3  
 համար՝ արջառներէն կամ հօտերէն պատարագ  
 պիտի մատուցանէք՝ ողջակէզ՝ կամ ուխտ կա-  
 տարելու զո՞՞ թէ՛ կամաւոր ընծայի համար , և 4  
 թէ՛ ձեր հանդիսաւոր տօներուն մէջ , Ընատե-  
 նը իր զո՞՞ Տէրոջը մատուցանողը՝ հացի ընծայի  
 համար հիմննի մը չորրորդ մասը եղով շաղուած  
 մէկ տասանորդ բարակ ալիւր պիտի մատուցանէ :  
 Աւ ողջակէզին կամ զո՞՞ին հետ՝ մէկ գառի հա- 5  
 մար հիմննի մը չորրորդ մասը գինի թափելու  
 նուէր պիտի ընես : Ամ խոյի մը համար՝ հի- 6

- մենի մը երբորդ մասը եղով շաղուած երկու տա-  
սանորդ բարակ ալիւր հացի ընծայ պիտի ընես :
- 7 Եւ թափելու նուէրի համար հիմենի մը երբորդ  
մասը գինի՝ անուշ հոտի համար Տէրոջը պիտի
- 8 մատուցանես : Եւ երբ ողջակէզի համար՝ կամ  
ուխտ կատարելու զոհի համար՝ կամ խաղաղու՛ն  
զոհի համար զուարակ մը մատուցան ես Տէրոջը
- 9 Ընատենը զուարակին հետ իրեք տասանորդ,  
բարակ ալիւր կէս հիմէն եղով շաղուած պիտի
- 10 նուիրես . Եւ թափելու նուէրի համար կէս հի-  
մէն գինի պիտի մատուցանես . Եւ՝ Տէրոջը պա-
- 11 տարագ ու անուշ հոտ է : \* Եւմէն զուարակի  
կամ խոյի համար՝ կամ գառի կամ ուլի հա-
- 12 մար՝ տասնկ պիտի ըլլայ : Չեր պատրաստելու  
թուոյն նայելով՝ անոնց թուոյն պէս ամէն մե-
- 13 կուն անանկ պիտի ընէք : Արկրին ամէն բնա-  
կը սս բաները անանկ պիտի ընէ , Տէրոջը ա-
- 14 նուշահոտ պատարագ մատուցանելու համար : Եւ  
թէ որ ձեր քովը հիւր եղող օտարականը՝ կամ  
ձեր ցեղերուն մէջ ձեր մէջը Բնաւորը՝ Տէրոջը  
անուշահոտ պատարագ ընելու ըլլայ , ձեր ըրա-
- 15 ծին պէս անիկայ ալ անանկ պիտի ընէ : Ա՛յլ  
ժողովք՝ ձեզի համար և Յիւր ասէ հիւր եղող օ-  
տարականին համար մէկ օրէնք մը պիտի ըլլայ .  
ձեր ցեղերուն մէջ յաւիտենական օրէնքի պէս՝  
Տէրոջը առջևը ինչպէս էք դուք , անանկ պի-
- 16 տի ըլլայ օտարականն ալ : Չեզի համար և ձեր

ՆԵՐ . մէկ

մէջը հիւր եղող օտարականին համար մէկ օրէնք ու մէկ սովորութիւն պիտի ըլլայ :

Եւ Տէրը խօսեցաւ Վովսէսին՝ ըսելով, Խօ-<sup>17</sup>  
սէ Խարայէլի որդւոցը՝ ու ըսէ՛ անոնց . Արքայ-<sup>18</sup>  
ան երկիրը մանաք՝ ուր որ ձեզ պիտի տանիմ ,  
Եւ ըլլայ որ՝ երբ ան երկրին հացէն ուտէք ,<sup>19</sup>  
բարձրացունելու ընծայ պիտի մատուցանէք Տէ-  
րոջը : Չեր առջի խմորէն շօթ մը բարձրա-<sup>20</sup>  
ցունելու ընծայ պիտի մատուցանէք . Կալի բարձ-  
րացունելու ընծան ինչպէս որ կընէք , աս ալ  
անանկ պիտի բարձրացունէք : Չեր առջի խմո-<sup>21</sup>  
րէն բարձրացունելու ընծայ պիտի մատուցանէք  
Տէրոջը՝ ձեր ցեղերուն մէջ :

Իսկ թէ որ սխալիք ու չընէք բոլոր աս պա-<sup>22</sup>  
տուիրանքները՝ որ Տէրը ըսաւ Վովսէսին , ‘Ս-<sup>23</sup>  
ան ամէնը որ Տէրը ձեզի պատուիրեց Վովսէսին  
ձեռքովը ան օրէն ՚ի վեր՝ որ Տէրը պատուիրեց  
ձեր ցեղերուն մէջ յա-ի-ու-ն . Եւ ըլլայ որ՝ եթէ<sup>24</sup>  
ժողովքը սխալմամբ յանցանք մը ընէ , անատ նը  
բոլոր ժողովքը՝ Տէրոջը անուշ հոտով ողջա-  
կէզի համար , ըստ օրինի՝ հացի ընծայով ու թա-  
փելու նուէրով մէկ պզտիկ զուարակ մը՝ և մեղքի  
պատարագի համար մէկ այծի նոխազ մը պիտի  
մատուցանէ : Եւ քահանան քառութիւն պի-<sup>25</sup>  
տի ընէ Խարայէլի որդւոցը բոլոր ժողովքին հա-  
մար , ու թողութիւն պիտի ըլլայ անոնց , ին-  
չու որ սխալմունք էր . և անոնք իրենց սխալ-  
լուն համար՝ իրենց ընծան Տէրոջը պատարագ  
պիտի բերեն , ու նաև իրենց մեղքի պատարագը



- 26 Տէրոջը առջևը : Աւ Խորայէլի որդւոցը բոլոր  
 ժողովքին ու անոնց մէջը հիւր եղող օտարական-  
 ներուն թողութիւն պիտի ըլլայ . քանզի բոլոր
- 27 ժողովուրդը սխալման մէջ էր : Աւ թէ որ անձ  
 մը սխալմամբ մեղք գործէ , անատենը մեղքի  
 պատարագի համար մէկ տարեկան էգ այծ մը պի-
- 28 տի բերէ : Աւ քահանան քաւութիւն պիտի ը-  
 նէ սխալմամբ մեղք գործող անձին համար . երբ-  
 որ Տէրոջը առջևը մեղք գործէ , անոր համար  
 քաւութիւն պիտի ընէ , ու անոր թողութիւն
- 29 ըլլայ . Սխալմամբ մեղք գործողին համար՝ թէ  
 Խորայէլի որդւոց մէջի բնակին համար ըլլայ՝ և  
 թէ անոնց մէջը հիւր եղող օտարականին հա-  
 մար՝ մէկ օրէնք պիտի ունենաք :
- 30 Բայց ան անձը որ հպարտութեամբ կընէ՝  
 թէ երկրին բնակը ըլլայ և թէ օտարական՝  
 անիկայ հայհոյած է Տէրոջը . ան անձը իր ժո-
- 31 ղովուրդին մէջէն պիտի կորսուի : Տէրոջը խօսքը  
 արհամարհելուն ու անոր պատուիրանքը չբռնե-  
 լուն համար՝ ան անձը անշուշտ պիտի կորսուի .  
 անոր անօրէնութիւնը իր վրան պիտի ըլլայ :
- 32 Աւ երբ Խորայէլի որդիքը անապատն էին ,  
 մարդ մը գտան՝ որ շաբաթ օրը փայտ կըժող-
- 33 վէր : Աւ անոնք որ փայտ ժողվելու վրայ գտան  
 անիկայ , Սոլսէսին ու Ահարօնին և բոլոր ժո-
- 34 ղովքին առջևը բերին : Աւ բանտարկեցին անի-  
 կայ . ինչու որ անոր ինչ ընելիքնին որոշուած
- 35 չէր : Աւ Տէրը ըսաւ Սոլսէսին . Ան մարդը  
 անպատճառ պիտի մնոցուի . բոլոր ժողովքը բա-

նակէն դուրս քարերով պիտի քարկոծեն զանի-  
կայ : Եւ բոլոր ժողովքը Տէրոջը Վովսէսին<sup>36</sup>  
պատուիրածին պէս , բանակէն դուրս հանեցին  
անիկայ՝ և քարկոծեցին , ու մեռաւ :

Եւ Տէրը խօսեցաւ Վովսէսին՝ ըսելով , Խօ-<sup>37</sup>  
սէ՛ Իսրայէլի որդւոցը և ըսէ՛ անոնց՝ որ իրենց<sup>38</sup>  
ճոպեր շինեն իրենց պատմութեանին ծայրերը , ու  
ծայրերուն ճոպերուն վրայ կապոյտ ժապաւէն  
մը դնեն . Եւ ան ձեզի ճոպ պիտի ըլլայ , որ<sup>39</sup>  
դուք տեսնաք ան՝ ու Տէրոջը պատուիրանքնե-  
րը միտքերնիդ բերէք , և ընէք անոնք . ու  
ձեր սրտերուն և ձեր աչքերուն ցանկութեան  
լին չհետեիք՝ որոնց ետեւէն դուք կը մտնէիք .  
Եւ անկ որ՝ միտքերնիդ բերէք ու ընէք իմ բո-<sup>40</sup>  
լոր պատուիրանքներս , ու սուրբ ըլլաք ձեր .  
Եստուծոյն առջևը : Չեք Տէր Եստուածը ես<sup>41</sup>  
եմ , որ ձեր Եստուածը ըլլալու համար՝ ձեզ Ե-  
գիպտոսի երկրէն հանեցի . ես եմ Եհովայ՝  
ձեր Եստուածը :

\*Նք : պոնըկութիւն կընէք

ԳԼ. ԺԳ

1 Կորնթիսն , Գաթանիսն և Եփեսոսին ապստամբութիւնը : 23  
Սովսէս կրղատէ ժողովուրդը ապստամբներուն վրաններէն :  
31 Երկիրը կաւոյ Կորնթ' որուն ընկերները կրակով սպա-  
ռեցան : 36 Բուրվառները սուրբ բանի գործածուելու հա-  
մար կրպահուին : 41 Տանընտրս հազար եօթը հարիւր հոգի  
Սովսէսին ու Եփեսոսին դէմ տրտունջ ընկնուն համար  
ժանտախտով մեռան : 46 Եփեսոսը խունկ ծխելով ժանտ-  
ախտը կրդադրեցունէ :

- 1 Եւ Ղևիին որդիին Կահաթին որդիին Իս-  
հառին որդին Կորնթ' և Ուլբենի որդւոց-  
մէն Եղիաբին որդիքը Գաթանը ու Եփեսոսը՝
- 2 և Փաղէթին որդին Օնանը <sup>եղան</sup> , Եւ Իս-  
րայէլի որդւոցմէ երկու հարիւր յիսուն հոգի  
ժողովքի խորհրդական գլխաւորներ՝ ու անուանի  
մարդիկներ հեռուէն ժողովուրդը , Սովսէսին առ-
- 3 ջըր եկան , Եւ Սովսէսին ու Եփեսոսին վրայ  
հաւքուեցան , ու ըսին անոնց . Եւ հերիք է  
ըրածնիդ . ինչու որ բոլոր ժողովքը սուրբ են ,  
և Տէրը անոնց մէջն է . և ինչո՞ւ Տէրոջը ժո-  
ղովուրդին վրայ դուք ձեզ կրբարձրացունէք :
- 4 Եւ երբ Սովսէս առ լսեց՝ իր երեսին վրայ ին-  
չաւ . Ու խօսեցաւ Կորնթիսն և անոր բոլոր ժո-  
ղովքին՝ ըսելով , Վաղը Տէրը պիտի ցուցնէ  
թէ ո՞րն է իրը , և ո՞րն է սուրբը , ու զանոնց  
իրեն պիտի մօտեցունէ . և որն որ ինքը ընտ-  
րած է , իրեն պիտի մօտեցունէ : Եւ ըրէք .
- 6 Եւ ըէք ձեզի բուրվառներ դուն ո՞վ Կորնթ'  
Եւ ըէք . առին

և բոլոր քու ժողովքդ . Եւ վաղը անոնց մէջը 7  
 կրակ դրէք , ու Տէրոջը առջևը անոնց վրայ  
 խունկ դրէք . և սուրբը անիկայ ըլլայ՝  
 որն որ Տէրը կընտրէ . ալ հերիք է ըրածնիդ  
 ո՛վ Ղևիի որդիքը : Եւ Մովսէս ըսաւ Աորխին . 8  
 Ասեցէ՛ք ո՛վ Ղևիի որդիքը . Ազտի՞կ բան կերև- 9  
 նայ ձեզի որ Խորայէլին Եստուածը ձեզ իրեն մօ-  
 տեցունելու համար՝ Խորայէլի ժողովքէն զատեց  
 ձեզ , որ Տէրոջը խորանին պաշտօնը ընէք , և  
 ժողովքին առջևը կայնիք՝ անոնց սպասաւորու-  
 թիւնը ընելու . Եւ քեզ ու քեզի հետ Ղևիի 10  
 որդիքը քու բոլոր եղբայրներդ է՛րէն մօտեցուց ,  
 ու դուք քահանայութիւն ալ կըրփնտրուէք : Ու 11  
 ընմն դուն՝ ու քու բոլոր ժողովքդ Տէրոջը գէմ  
 ժողովուեցաք . և Եհարօնը ո՛վ է՝ որ անոր գէմ  
 դուք տրտունջ կընէք : Եւ Մովսէս՝ Աղիարին 12  
 որդիքը՝ Գաթանը ու Եբիթօնը կանչելու համար  
 հարդ խրկեց , և անոնք ըսին . Գալու չենք .  
 Մեզ անսպասին մէջ մեռցունելու համար՝ 13  
 կաթ ու մեղը բղխող երկրէն մեզ հանելու քի՛չ  
 է , որ նաև մեր վրան իշխան ըլլալ կուզես :  
 Եւ մեզ կաթ ու մեղը բղխող երկիրը շտա- 14  
 բիր , ո՛չ ալ մեզի արտի ու այգիի ժառանգու-  
 թիւն տուիր . աս մարդոցը աչքերը պիտի հա-  
 նես . մենք գալու չենք : Եւ Մովսէս խիստ բար- 15  
 կացաւ , ու ըսաւ Տէրոջը . Մի՛ նայիր անոնց  
 ընծաներուն . անոնցմէ է՛շ մին ալ չառի , և  
 անոնց մէկուն անիրաւութիւն չըրի : Եւ Մով- 16  
 սէս ըսաւ Աորխին . Վաղը դուն ու բոլոր քու

Ժողովքդ Տէրոջը առջևը ներկայանաք , դուն՝  
 17 և անոնք՝ ու Եհարօնը . Եւ առէք ամէն մէ-  
 կերնիդ ձեր բուրվառները՝ ու անոնց մէջը խունկ  
 դրէք . և ամէն մէկը իր բուրվառը առնելով՝ այս-  
 ինչն երկու հարիւն յիսուն բուրվառները՝ և  
 դուն ալ ու Եհարօնը ամէն մէկերնիդ ձեր բուր-  
 18 վառները Տէրոջը մօտեցուցէք : Եւ ամէն մէկը  
 իր բուրվառը առնելով՝ անոնց մէջը կրակ դրին ,  
 և ժողովքի խորանին դուռը կայնեցան Սոլսէսին  
 19 ու Եհարօնին հետ : Եւ Կորխը անոնց դէմ  
 ժողովքի խորանին դուռը ժողովեց բոլոր ժողով-  
 քը . ու Տէրոջը փառքը բոլոր ժողովքին երև-  
 ցաւ :

20 Եւ Տէրը խօսեցաւ Սոլսէսին՝ ու Եհարօնին՝  
 21 ըսելով , Ետ ժողովքին մէջէն զատուեցէք , որ  
 22 շուտով կորսընցունեմ ատոնք : Բայց անոնք  
 երեսուն վրայ ինկան՝ ու ըսին . Ո՛վ Եստուած՝  
 բոլոր մարդոց հողիներուն Եստուածը , մէկ  
 մարդուն մեղանշելովը՝ բոլոր ժողովքի՞ն վրայ  
 գալու է քու բարկութիւնդ :

23 Եւ Տէրը խօսեցաւ Սոլսէսին՝ ըսելով , Խօ-  
 24 սէ՛ ժողովքին՝ ու ըսէ՛ . Կորխին՝ Գաթանին  
 ու Երիրօնին բնակութեանը բոլորտիքէն հեռա-  
 25 ցէք : Եւ Սոլսէս ելաւ՝ ու Գաթանին և Ե-  
 րիրօնին գնաց , և Խարայէլի ձերերը անոր ե-  
 26 տեէն գացին : Եւ խօսեցաւ ժողովքին՝ ըսելով ,  
 Ետ չար մարդոցը վրաններուն քովէն ետ քա-  
 շուեցէք , ու անոնց մէկ բանին մի՛ դպչիք , որ

\* Եբ . մարմին

անոնց բոլոր մեղքերովը շղորսուիք : Այսպէս ա- 27  
նոնք Աորխին՝ Գաթանին ու Աբիրօնին բնա-  
կութեան բոլորտիքէն հեռացան . և Գաթա-  
նը ու Աբիրօնը և անոնց կնիկները՝ ու անոնց  
որդիքը և ընտանիքը իրենց վշաններուն զուռը  
ելան կայնեցան : Աւ Սոփէս ըսաւ . Ասով պի- 28  
տի գիտնաք թէ Տէրն է իս խրկողը բոլոր աս  
գործերը ընելու , և չէ՛ թէ ես ինձմէ Բան Եւ  
Ըրէ . Այնինքն՝ թէ որ ասոնք ամէն մարդու մեռ- 29  
նելուն պէս մեռնին , և թէ որ ամէն մարդու  
պատահածը ասոնց ալ պատահի , Տէրը իս խըր-  
կած չէ՛ : Բայց թէ որ Տէրը <sup>2</sup>հրաշք մը ընէ՝ 30  
և երկիրը իր բերանը բանայ՝ ու անոնք և բոլոր  
անոնց ունեցածը կլլէ , ու անոնք ողջ ողջ դժոխ-  
քը իջնան , անասներ պիտի գիտնաք որ աս  
մարդիկը Տէրը անարգեցին : Աւ եղաւ որ բո- 31  
լոր աս խօսքերը խօսիլը լմնցուցածին պէս , ա-  
նոնց տակը գետինը պատռեցաւ . Աւ երկիրը 32  
իր բերանը բացաւ՝ ու անոնք և անոնց տուները  
ու Աորխին ունեցած բոլոր մարդիկը և բոլոր  
անոնց ինչքը կլլեց : Աւ անոնք ու բոլոր անոնց 33  
ունեցածը ողջ ողջ դժոխքը իջան . և երկիրը  
ծածկեց անոնք , ու ժողովքին մէջէն կորսուե-  
ցան : Աւ անոնց բոլորտիքը եզած բոլոր Իս- 34  
րայիլը անոնց ձայնէն փախան , քանզի ըսին .  
Չըլլայ որ երկիրը մեզ ալ կլլէ : Աւ Տէրողմէն 35  
կրակ ելաւ , ու խունկ մատուցանող երկու  
հարիւր յիւուն հողին կորսընցուց :

\* Եւր . ստեղծագործութիւն

- 36 Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ըսելով, Խօ-
- 37 սէ՛ Եհարօն քահանային տղուն Եղիազարին՝ որ  
բուրվառները ան այրումէն դուրս առնէ . ( և  
դուն անոնց մէջը եղած կրակը անդին ցրուէ . )
- 38 քանզի անոնք սուրբ եղան : Եւ իրենց հոգի-  
ներուն դէմ՝ մեղք գործողներուն բուրվառնե-  
րէն թիթեղներ շինեն՝ սեղանը պատելու հա-  
մար . ինչու որ անոնք Տէրոջը առջևը մա-  
տուցուելով՝ սուրբ եղած են . և Խորայէլի որդ-
- 39 ւոցը նշան պիտի ըլլան : Եւ Եղիազար քահա-  
նան ան այրուած մարդոցը մատուցած պղինձէ  
բուրվառները առաւ , ու անոնք սեղանը պա-
- 40 տելու համար թիթեղներ շինեցին . ( Խորայէլի  
որդւոցը յիշատակ ըլլաւ , որ Եհարօնի սե-  
րունդէն չեղող ուրիշ մէկը՝ Տէրոջը առջևը  
խունկ մատուցանելու չմօտենայ , և Աորխին պէս  
ու անոր ժողովքին պէս չըլլայ . ) ինչպէս որ Տէ-  
րը ըսաւ անոր՝ Սովսէսին ձեռքովը :
- 41 Եւ հետեւեալ օրը Խորայէլի որդւոցը բոլոր  
ժողովքը Սովսէսին դէմ ու Եհարօնին դէմ  
տրտունջ ըրին՝ ըսելով , Տէրոջը ժողովուրդը
- 42 մեոցունողը դուք էք : Եւ եղաւ որ երբ ժողով-  
քը Սովսէսին ու Եհարօնին դէմ ժողովուած  
էին , դէպի ժողովքի խորանը նայեցան , և ահա՛  
ամպը ծածկեց ան , ու Տէրոջը փառքը երևցաւ :
- 43 Եւ Սովսէս ու Եհարօն ժողովքի խորանին առ-
- 44 ջևը եկան : Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ը-
- 45 սելով , Եւ ժողովքին մէջէն ելէ՛ք , որ շուտով  
կորսընցունեմ անոնք . և ասոնք երեսնուն վրայ

ինկան : Եւ Սովետս ըսաւ Ահարօնին . Բար- 46  
 վառ մը ան , ու մէջը սեղանէն կրակ դի՛ր , և  
 վրան խունկ դի՛ր , ու շուտով ժողովքը գնա՛  
 ու անոնց համար քաւութիւն ըրէ՛ , ինչու որ  
 Տէրօջմէն բարկութիւն ելաւ . Ժանտախտը  
 սկսաւ : Եւ Սովետսին ըսածին պէս՝ Ահարօնը 47  
 իւր անուան յը առաւ ու ժողովքին մէջը վազեց ,  
 և ահա՛ ժանտախտը սկսած էր . և վրան խունկ  
 դրաւ՝ ու ժողովուրդին համար քաւութիւն ը-  
 րաւ : Եւ մեռելներուն ու ողջերուն մէջ տեղը 48  
 կայնեցաւ , և ժանտախտը դադրեցաւ : Եւ 49  
 ժանտախտէն մեռածները տասներչորս հազար  
 եօթը հարիւր հոգի էին , Աորիսի բանին հա-  
 մար մեռածներէն զատ : Եւ Ահարօնը դար- 50  
 ձաւ Սովետսին՝ ժողովքի խորանին դուռը , ու  
 ժանտախտը դադրեցաւ :

## ԳԼՈՒԽ Ե

1 Հասնելիս ցեղերուն գաւազաններուն մէջը՝ Ահարօնին գա-  
 ւազանը կրծապկի , 10 ու ժողովուրդին ապստամբներուն  
 դէմ՝ վկայութեան համար կը պահուի :

Եւ Տէրը խօսեցաւ Սովետսին՝ ըսելով , Խօ- 1  
 սէ՛ Խարայէլի որդւոցը , ու անոնցմէ իրենց 2  
 տուներուն նայելով՝ մէյ մէկ գաւազան՝ այսինչն  
 իրենց հայրերուն տուներուն բոլոր իշխաններէն  
 տասներկու գաւազան ան . ամէն մարդուն ա-  
 նունը իր գաւազանին վրայ գրէ՛ : Եւ Ահա- 3  
 րօնին անունը՝ Ղեթին գաւազանին վրայ պիտի



- գրես . ինչու որ անոնց հայրերուն տանը իշխա-  
 4 նին համար մէկ գաւազան պիտի ըլլայ : Եւ զա-  
 նոնք ժողովքի խորանը՝ վկայութիւնին առջևը  
 5 դնես , ուր որ ձեզի պիտի հանդիպիմ : Եւ ըլ-  
 ւալու է որ՝ իմ ընտրած մարդուս գաւազանը  
 պիտի ծաղկի . ու պիտի դադրեցունեմ ինձմէ Խս-  
 րայէլի որդւոցը տրտունջը՝ որ կը տրտընջեն ձեր  
 6 վրայով : Եւ Մովսէս խօսեցաւ Խորայէլի որդւո-  
 ցը . ու անոնց բոլոր իշխանները իրենց հայ-  
 րերուն տուներուն նայելով՝ տասներկու գաւա-  
 զան տուին անոր՝ ամէն մէկ իշխանին համար  
 մէյ մէկ գաւազան . և Եհարօնին գաւազանը ա-  
 7 նոնց գաւազաններուն մէջն էր : Եւ Մովսէս  
 գաւազանները Տէրօջը առջևը դրաւ՝ վկայութեան  
 8 խորանին մէջ : Եւ եղաւ որ հեռեկալ օրը Մով-  
 սէս վկայութեան խորանը մտաւ . և ահա՛ Ղևիի  
 տանը կողմէն ուրեւոր Եհարօնին գաւազանը  
 ծաղկեցաւ՝ ու ծլեցաւ , և ծաղկի բացաւ ու  
 9 նուշեր հասցուց : Եւ Մովսէս բոլոր գաւազան-  
 ները Տէրօջը առջևէն գուրս հանեց Խորայէլի  
 բոլոր որդւոցը առջևը . ու անոնք տեսան , և  
 10 ամէն մէկը իր գաւազանը առաւ : Եւ Տէրը  
 ըսաւ Մովսէսին . Եհարօնին գաւազանը վկա-  
 յութիւնին առջևը կ'ա դարձուր , որ ապտումը-  
 ներուն նշան ըլլալու համար պահուի . ու անոնց  
 11 տրտունջը առջևէս վերցունես , որ չմեռնին : Եւ  
 Մովսէս Տէրօջը իրեն պատուիրածին պէս ըրաւ .  
 12 անանկ ըրաւ : Եւ Խորայէլի որդիքը խօսեցան  
 Մովսէսին՝ ըսելով , Եհարօն կը մեռնին , կը կոր-

սուխնք , մենք ամէնքս կը կորսուինք : Տէրոջը խո- 13  
րանին մօտիկցողը կը մնանի . \* ամէնքս ալ պիտի  
մնանի՞նք՝ :

## ԳԼ . ԺԸ

1 Քաջանաներուն ու Վատացիներուն յանձնուած պաշպանու-  
թիւնը : 9 Քաջանաներուն բաժինը : 21 Վատացւոց բաժինը :  
25 Վատացւոց բաժինէն բարձրացունելու ընծան քաջանա-  
ներուն պիտի ըլլայ :

Ալ Տէրը ըսաւ Ահարօնին . Ղուն ու քեզի 1  
Հետ քու որդիներդ և քու հօրդ տունը սրբ-  
բարանին մեղքը պիտի կրէք . և դուն ու քու  
որդիքդ քեզի հետ ձեր քաջանայութեան մեղքը  
պիտի կրէք : Ալ քու հօրդ ցեղէն , այսինքն՝ Ղե- 2  
ւիին ցեղէն քու եղբայրներդ մօտեցունես , որ քե-  
զի հետ միանան ու քեզ պաշտեն . և դուն ու  
քեզի հետ քու որդիներդ վկայութեան խորանին  
առջևը պիտի ըլլաք : Ալ քու պաշպանութիւնդ 3  
ու խորանին բոլոր պաշպանութիւնը պիտի պա-  
հեն . միայն թէ սրբարանին անօթներուն ու  
սեղանին չմօտիկնան , որ ոչ անոնք մնանին՝ ոչ  
ալ դուք : Ալ անոնք ձեզի հետ պիտի միանան , 4  
ու ժողովքի խորանին պաշպանութիւնը պիտի  
պահեն խորանին ամէն պաշտօնին նայելով . և  
օտարական մը չմօտենայ ձեզի : Ալ սրբարանին 5  
պաշպանութիւնը ու սեղանին պաշպանութիւնը  
պիտի պահէք , որ ալ Ասրայէլի որդւոցը վրայ

\* Կ՝Ո՛ւ ասո՛ւ ամէնքս ալ կը մնանինք

- 6 բարկութիւն չըլլայ : Աւ ահա ես Խորայէլի  
որդւոցը մէջէն ձեր Ղևտացի եղբայրները առի-  
անոնք ձեզի Տէրոջը համար պարգև տրուած
- 7 են , որ ժողովքի խորանին պաշտօնը ընեն : Աւ  
զուն ու քեզի հետ քու որդիքդ սեղանին բոլոր  
բաներուն համար և վարագորին մէջը եղած բա-  
ներուն համար ձեր քահանայութիւնը պիտի  
պահէք՝ ու պաշտէք . ձեր քահանայութիւնը յի-  
շէ պարգևի պաշտօն տուի , և մօտիկցող օտա-  
րականը պիտի մեռցուի :
- 8 Աւ Տէրը խօսեցաւ Ահարօնին . Աւ ես ահա  
Խորայէլի որդւոցը բոլոր սուրբ բաներէն բարձ-  
րացունելու ընծաներուս պահպանութիւնը քե-  
զի տուի . և անոնք օժման իրաւունքի համար  
քեզի և քու որդւոցդ տուի յաւիտենական կա-
- 9 նոնով : Ամենատուրբ բաներէն ասոնք պիտի ըլլան  
քուկինդ \* որ շին այրուիր . անոնց ամէն զոհե-  
րէն՝ անոնց ամէն հացի ընծաներէն՝ անոնց ամէն  
մեղքի պատարագներէն՝ և անոնց ամէն յանցան-  
քի պատարագներէն՝ որ պիտի հատուցանեն ին-  
ծի , ամենատուրբ են քեզի ու քու որդւոցդ հա-
- 10 մար : Ամենատուրբ տեղին մէջ պիտի ուտես  
ան . ամէն արու պիտի ուտէ ան . անիկայ
- 11 սուրբ պիտի ըլլայ քեզի : Աս ալ քուկդ է , ա-  
նոնց պարգևներուն բարձրացունելու ընծան՝ և  
Խորայէլի որդւոցը երեքցունելու ընծաները , քե-  
զի՝ և քեզի հետ քու որդւոցդ՝ ու քու աղջիկ  
ներուդ տուի անոնք՝ յաւիտենական կանոնով

\*Նէր . կրակէն

քու տանդ մէջը ամէն մաքուր եղողը անկից պի-  
 տի ուտէ : Ըմենէն աղէկ եղին՝ և ամենէն աւ 12  
 ղէկ գինիին ու ցորենին բոլոր երախայրիները՝  
 որ Տէրոջը պիտի մատուցանեն , քեզի տուի :  
 Ընոնց երկրին մէջ եղած բոլոր երախայրիները՝ 13  
 որ Տէրոջը բերելու են , քուկդ պիտի ըլլան . քու  
 տանդ մէջը ամէն մաքուր եղողը անկից պիտի ու-  
 տէ : Խորայէլի մէջ ամէն նուիրուած բանը քուկդ 14  
 պիտի ըլլայ : Ըմէն մարմինի ամէն արգան . 15  
 դը բացողը որ Տէրոջը կրնձային , թէ մարդ  
 ըլլայ և թէ անասուն՝ քուկդ պիտի ըլլայ . մի-  
 այն թէ մարդուն առջինները անշուշտ պիտի փրկ-  
 կես . և անմաքուր անասունին առջիններն ալ  
 պիտի փրկես : Ալ փրկուելու որոշուող մէկ 16  
 ամսուան ըլլալուն՝ քու կտրած գինովդ սրբարա-  
 նին սիկղին նայելով՝ հինգ սիկղ արծաթով պի-  
 տի փրկես . «Նիշ քսան կերատ է : Բայց կովին 17  
 առջինները՝ և ոչխարին առջինները՝ կամ այծին  
 առջինները փրկելու չես , անոնք սուրբ են , ա-  
 նոնց արիւնը սեղանին վրայ պիտի սրսկես , ու ա-  
 նոնց ճարպը պիտի այրես անուշահոտ պատարագ  
 ըլլալու Տէրոջը : Աւ անոնց միւր քուկդ պիտի 18  
 ըլլայ , երեքցունելու երբուձը ու աջ զետը  
 քուկդ ըլլալուն պէս : Սուրբ բաներէն ամէն 19  
 բարձրացունելու ընծաները որ Խորայէլի որդիքը  
 Տէրոջը կըմատուցանեն , քեզի և քու հետդ քու  
 որդիներուդ ու աղջիկներուդ տուի՝ յաւիտենա-  
 կան կանոնով . անիկայ՝ Տէրոջը առջևը քեզի և  
 քու հետդ քու սերունդիդ՝ աղի ու խտ մըն է յա-

- 20 Լիտեան : Ալ Տէրը ըսաւ Ահարօնին . Անոնց  
կրկրին մէջ դուն ժառանգութիւն չպիտի ու-  
նենաս , ու անոնց մէջ տեղը բաժին չունենաս .  
Խորայէլի որդւոցը մէջ տեղը քու բաժինդ ու  
ժառանգութիւնդ ես եմ :
- 21 Ալ ահա՛ Ղլկի որդւոցը Խորայէլի բոլոր տա-  
սանորդը ժառանգութեան համար տուի՛ իրենց  
պաշտօնին փոխարէն՝ ժողովքի խորանին պաշ-  
տօնը ընելնուն համար :
- 22 Ալ Խորայէլի որդիքը՝  
ալ ժողովքի խորանին չպիտի՛ մօտենան , որ  
23 մեղք չկրին ու չմեռնին : Ալ ժողովքի խորա-  
նին պաշտօնը Ղլտացիները պիտի ընեն , ու  
իրենց անօրէնութիւնը իրենք պիտի կրեն . ձեր  
ցեղերուն մէջ յաւիտենական կանոնով Խորայէլի  
որդւոցը մէջ տեղը ժառանգութիւն չունենան :
- 24 Վանզի Խորայէլի որդւոցը տասանորդը՝ որոնք որ  
բարձրացունելու ընծայի պէս Տէրոջը կրմատու-  
ցանեն , Ղլտացիներուն ժառանգութիւն չլու-  
տուի . աս պատճառով անոնց համար ըսի որ  
Խորայէլի որդւոցը մէջ տեղը ժառանգութիւն  
չունենան :
- 25 Ալ Տէրը խօսեցաւ Սուլէսին ըսելով , Այսպէս  
26 խօսէ՛ Ղլտացւոց ու ըսէ՛ անոնց . Աբբոր Խորայէլի  
որդւոցմէն տասանորդը առնէք՝ որն որ անոնց  
կողմանէ ձեզի ժառանգութեան համար տուի ,  
անտունը անկից՝ տասանորդին տասներորդ մասը  
27 բարձրացունելու ընծայ պիտի մատուցանէք : Ալ  
աս ձեր բարձրացունելու ընծան՝ կալի ցորենի  
պէս և նձանի բերքի պէս պիտի սեպուի ձեզի :

Այսպէս՝ Իսրայէլի որդւոցմէ ձեր առած բոլոր <sup>28</sup>  
 տասանորդներէն դուք ալ բարձրացունելու ընծայ  
 պիտի մատուցանէք Տէրոջը . և անոնցմէ՝ Տէրոջը  
 բարձրացունելու ընծան Ահարօն քահանային  
 պիտի տաք : Բոլոր ձեզի եղած ընծաներէն՝ Տէ- <sup>29</sup>  
 րոջը ամէն բարձրացունելու ընծան՝ բոլորովին  
 անոր ամենալաւէն՝ անոր սուրբ մասէն պիտի  
 մատուցանէք : Ուստի պիտի ըսես անոնց . Արք <sup>30</sup>  
 որ անոր ամենալաւէն մատուցանէք , անասե-  
 նք իրէնց հասցածը կալի արդիւնքի պէս ու հըն-  
 ձանի արդիւնքի պէս սեպուի Ղևտացիներուն :  
 Աւ ամէն տեղ պիտի ուտէք ան , դուք ու ձեր <sup>31</sup>  
 ընտանիքները . վասն զի ժողովքի խորանին  
 մէջ ձեր ընկեր- պաշտօնին համար՝ ձեր վարձքն  
 է ան : Աւ անկից ամենալաւը մատուցանելէն <sup>32</sup>  
 ետքը՝ անոր համար մեղք պիտի չկրէք . ու Իս-  
 րայէլի որդւոցը սուրբ բաները չպղծէք , որ  
 չմեռնիք :

## Գ Լ . Ժ Թ

1 Աարօիք երկնջի մոխիրէն շինուած մարբուսեան ջուրը : 11  
 Ընմարուք մարդուն մարբուելուն համար՝ ան ջուրին գործ-  
 ածուսթիւնը :

Աւ Տէրը խօսեցաւ Մոյսէսին ու Ահարօնին՝ <sup>1</sup>  
 ըսելով , Աս է օրէնքին կանոնը՝ որ Տէրը <sup>2</sup>  
 պատուիրեց՝ ըսելով . Իսօսէ՛ Իսրայէլի որդւոցը՝  
 որ բերեն քեզի կարմիր երկնջ մը անարատ ու

- 3 անբիժ՝ որուն վրայ լուծ դրուած չըլլայ : Աւ  
 Լղիազար քահանային պիտի տաք անիկայ , որ  
 բանակէն դուրս հանէ , ու իր առջևը մտրթեն
- 4 անիկայ : Աւ Լղիազար քահանան իր մատովը  
 անոր արիւնէն պիտի առնէ՝ ու ժողովքի խորա-  
 նին առջևի կողմը անոր արիւնէն եօթը անգամ
- 5 պիտի սրսկէ : Աւ իր աչքին առջևը պիտի այ-  
 րեն երինջը . անոր մտրթը ու միսը և անոր ա-
- 6 թիւնը աղբովը մէկտեղ պիտի այրեն : Աւ քա-  
 հանան պիտի առնէ եղևին փայտ՝ զոպայ ու  
 կրկնակի կարմիր , և երինջին այրուած կրակին
- 7 մէջը պիտի նետէ : Աւ քահանան իր հանգերձ-  
 ները և իր մարմինը ջրով պիտի լուայ , ու ետ-  
 քը բանակը մտնայ . և քահանան մինչև իրի-
- 8 կուն անմաքուր պիտի ըլլայ : Աւ զանիկայ այ-  
 րողը իր հանգերձները ջրով պիտի լուայ , ու  
 իր մարմինը ջրով պիտի լուայ , և մինչև իրի-
- 9 կուն անմաքուր ըլլայ : Աւ մաքուր մարդ մը  
 երինջին մօտիքը պիտի ժողովէ՝ ու բանակին  
 դուրսի դին մաքուր տեղ մը դնէ . և Խորայէլի  
 որդւոցը ժողովքին համար պիտի պահուի , մե-
- 10 շոյ համար մաքրութեան ջուր ըլլալու : Աւ  
 երինջին մօտիքը ժողովողը իր հանգերձները պի-  
 տի լուայ , ու մինչև իրիկուն անմաքուր ըլլայ .  
 և աս՝ Խորայէլի որդւոցը ու անոնց մէջը բնա-  
 կող օտարականին համար՝ յաւիտենական կանոն  
 պիտի ըլլայ :
- 11 Ո՛վ որ մեռած մարդու մը մարմինին դպչի՝  
 12 եօթը օր անմաքուր պիտի ըլլայ : Անիկայ

\* անով զինքը մաքրել պիտի տայ երբորդ օրը և  
 եօթներորդ օրը , և այսպէս մաքուր ըլլայ .  
 բայց թէ որ չմաքրուի երբորդ օրը ու եօթ-  
 ներորդ օրը՝ մաքուր պիտի չըլլայ : Ա՛վ որ մե- 13  
 ռած մարդու մը մարմինին դպչի՝ ու ինքզինքը  
 չմաքրէ , Տէրօջը խորանը կը պղծէ . և ան հո-  
 գին Խօրայէլէն պիտի կորսուի . անոր վրան մաք-  
 րութեան ջուրը չսրսկուելուն համար՝ անիկայ  
 անմաքուր է . իր անմաքրութիւնը տակաւին  
 իր վրան է : Ա՛րանի մէջ մեռնողին համար օ- 14  
 րէնքը աս է . ան վրանին մէջ ամէն մտնողը՝  
 և ան վրանին մէջ ամէն եղողը եօթը օր ան-  
 մաքուր պիտի ըլլայ : Եւ ամէն բայ ամանը որ 15  
 իր վրան կապուած խուփ չունի , անմաքուր է :  
 Եւ դաշտի վրայ սրով սպանուածի մը կամ էր 16  
 խառնու մեռածի մը՝ կամ մարդու ոսկորի մը՝ և  
 կամ գերեզմանի մը դպչողը , եօթը օր անմա-  
 քուր պիտի ըլլայ : Եւ անմաքուր եղողին հա- 17  
 մար՝ ան մեղաց մաքրութեան համար պրուած  
 էրէնջին մոխիրէն առնելով՝ ամանի մը մէջ վրան  
 կենդանի ջուր դնեն . Եւ մաքուր մարդ մը 18  
 զոպայ պիտի առնէ՝ ու ան ջուրը խօթէ , և վը-  
 րանին վրայ՝ ու բոլոր ամաններուն վրայ՝ և հոն  
 եղած մարդոց վրայ , ու ոսկորի մը կամ սպա-  
 նուածի մը կամ մեռածի մը և կամ գերեզմա-  
 նի մը դպչողին վրայ՝ պիտի սրսկէ : Եւ մաքուր 19  
 մարդը պիտի սրսկէ անմաքուրին վրայ երբորդ  
 օրը ու եօթներորդ օրը . Եւ եօթներորդ օրը

\* ք՝ մաքրութեան ջուրով



- պիտի մաքրէ զանիկայ , որ իր հանդերձները պիտի լուայ , ու ջրով լուացուի , և իրիկունը մա-  
 20 քուր ըլլայ : Բայց ան մարդը՝ որ կը պղծուի ու չմաքրուիր , ան անձը ժողովքին մէջէն պիտի կորսուի . ինչու որ Տէրոջը սրբութիւնը պղծեց . անոր վրայ մաքրութեան ջուրը չըսրս-  
 21 կուեցաւ , անիկայ անմաքուր է : Եւ յաւիտեանս կանոն մը ըլլայ անոնց , որ մաքրութեան ջուրը սրսկողը իր լաթերը պիտի լուայ , ու մաքրութեան ջուրին դպչողը մինչև իրիկունն անմա-  
 22 քուր պիտի ըլլայ : Եւ անմաքուր անձը ի՛նչ բանի որ դպչի , ան ալ անմաքուր պիտի ըլլայ . ու անոր դպչող մարդը մինչև իրիկունն անմաքուր պիտի ըլլայ :

## Գ Լ . Ի

1 Իսրայէլի որդիքը Սին կուգան՝ ուր որ Սարիամը կը սնունի :  
 2 Ծուրի համար տրսունջ կընեն : 7 Սովսէս ժայռին զարնելով Մերիպայի մէջ ջուր կըրգտեցունէ : 14 Սովսէս Սադէսի մէջը ըլլալով՝ կը ինդրէ Եզովֆի սահմանէն անցնիլ , բայց աս խնդիրքը չընդունուիր : 22 Մհարօն Հովր լեռանը վրայ՝ քահանայութիւնը իրեն Եզիապար որդիին կը յանձնէ , ու ինքը հոն կը սնունի :

- 1 Եւ Իսրայէլի որդիքը՝ բոլոր ժողովուրդը Սինի անապատը եկան առջի ամսուն , ու ժողովուրդը Աադէսին մէջ իջևան ըրաւ . և Սարիամ հոն վախճանեցաւ՝ ու հոն թաղուեցաւ :  
 2 Եւ ժողովքին խնդրեց ջուր չկար . ու Սովսէսին և Մհարօնին վրայ հաւքուեցան : Եւ ժո-

զովուրդը Մովսէսին հետ վիճելով՝ խօսեցան ու  
 ըսին . Ի՞նչ կրըսար որ մենք ալ մեռնէինք՝ երբ  
 որ մեր եղբայրները մեռան Տէրօջը առջևը .  
 Եւ ինչո՞ւ Տէրօջը ժողովուրդը աս անապատը 4  
 բերիք , որ մենք ու մեր անասունները հոս մեռ-  
 նինք : Եւ ինչո՞ւ մեզ Ազիպտոսէն հանեցիր՝ 5  
 մեզ աս գէշ տեղը բերելու համար . Ըստ ո՞չ սերմ  
 ցանելու տեղ է , ո՞չ ալ թղենիներու ու այգի-  
 ներու և նանենիներու . խմելու ջուր անգամ  
 չկայ : Եւ Մովսէս ու Ահարօն ժողովուրդին 6  
 առջևէն իւրաքանչիւր ժողովքի խորանին դուռը դա-  
 ցին , ու իրենց երեսին վրայ ինկան . և Տէրօջը  
 փառքը անոնց երեցաւ :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով , Գա- 7  
 ւազանը ան , ու ժողովքը ժողովէ՝ դուն ու եղ- 8  
 բայրդ Ահարօնը , և անոնց աչքին առջևը խօ-  
 սեցէ՛ք ապառաժին , ու իբ ջուրը պիտի տայ .  
 և դուն ապառաժէն ջուր պիտի հանես անոնց ,  
 ու ժողովքին և անոնց անասուններուն խմցու-  
 նես : Եւ Մովսէս առաւ գաւազանը Տէրօջը 9  
 առջևէն՝ ինչպէս որ իրեն պատուիրեց : Եւ Մով- 10  
 սէս ու Ահարօն՝ ժողովքը ապառաժին առջևը  
 ժողովեցին . և ըսաւ անոնց . Ասեցէ՛ք հիմա՝ ո՞վ  
 ապատաժքներ , ձեզի աս ապառաժէ՞ս ջուր հա-  
 նենք : Եւ Մովսէս իբ ձեռքը վերցուց , ու գա- 11  
 լազանը երկու անգամ ապառաժին զարկաւ .  
 և առատօրէն ջուր ելաւ , և ժողովքը ու ա-  
 նոնց անասունները խմեցին :

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին ու Ահարօնին . 12



խմենք , անոր դինը կըհասուցանեմ . առանց  
 ուրիշ բան մը ընելու իմ ոտքերովս կանցնիմ :  
 Եւ անիկայ ըսաւ . Ընցնելու չես . և Եղովմ 20  
 շատ բազմութիւնով ու հզօր ձեռքով անոնց դէ-  
 մը ելաւ : Եւ յապէս՝ Եղովմ իր սահմանէն Իս- 21  
 րայէլին ճամբայ տալ չուզեց . ուստի Խորայէլը  
 գարձաւ անկից :

Եւ Խորայէլի որդւոցը բոլոր ժողովքը չուե- 22  
 ցին կադէսէն , ու Հովր լեռը եկան : Եւ 23  
 Տէրը խօսեցաւ Սոփսէսին ու Եհարօնին Հովր  
 լեռը՝ Եղովմի երկրին սահմանին մէջ՝ ըսե-  
 լով , Եհարօնը իր ժողովուրդին պիտի խառ- 24  
 նուի . քանզի Սերիպայի ջուրին քովը իմ հրա-  
 մանէս ապստամբ ըլլալնուդ համար՝ չպիտի մըտ-  
 նայ ան երկիրը՝ որն որ Խորայէլի որդւոցը տուի :  
 Եհարօնը ու անոր որդին Եղիազարը առ , ու 25  
 Հովր լեռը հանէ զանոնք . Եւ Եհարօնը իր 26  
 զգեստներէն մերկացուր , ու իր Եղիազար որդիին  
 հագցուր զանոնք . ինչու որ Եհարօն իր ժող-  
 յարէն պիտի խառնուի՝ ու հոն մեանի : Եւ 27  
 Սոփսէս Տէրոջը պատուիրածին պէս ըրաւ . ու  
 բոլոր ժողովքին աչքին առջևը Հովր լեռը ե-  
 լան : Եւ Սոփսէս մերկացուց Եհարօնը իր 28  
 զգեստներէն , ու անոր Եղիազար որդիին հագ-  
 ցուց զանոնք . Եւ Եհարօնը հոն լեռանը գլու-  
 խը մեռաւ . ու Սոփսէս և Եղիազար լեռէն իջան :  
 Եւ երբ բոլոր ժողովքը տեսան որ Եհարօնը մե- 29  
 ռաւ , Խորայէլի բոլոր տունը Եհարօնին համար  
 երսուն որ լացին :

## Գ Լ . Խ Ե

1 Խորայէլը քիչ մը վնաս քաշելով՝ Վանանացիները կը ջարդէ  
 Հօրմայի մէջ: 4 Ժողովուրդը տրտունջ ընելուն համար՝ կի-  
 զոյ օձերով վիրաւորուեցաւ, 7 ու ետքը զոյ ջարդով՝ պղին-  
 ձէ շինուած օձին միջոցովը ազատեցաւ աս հարուածքէն: 10  
 Խորայէլացիներուն այլ և այլ ճամբորդութիւնները: 21  
 Սեզոն պատերազմով ասոնց վրան կուգայ . 33 նոյնպէս  
 Սիզոն ալ:

- 1 **Ե**ւ հարաւային կողմը բնակող Երազի <sup>Ք</sup>Վա-  
 նանացի թագաւորը լսելով որ Խորայէլը <sup>†</sup>Ե-  
 թարիմի ճամբայէն կուգայ, Խորայէլին հետ  
 պատերազմեցաւ, և անոնցմէ գերիներ առաւ: 2
- 2 **Ե**ւ Խորայէլ ուխտ ըրաւ Տէրոյ՛ք՝ ու ըսաւ. Թե-  
 որ աս ժողովուրդը բոլորովին իմ ձեռքս մատնես,  
 3 անօնց քաղաքները կը կորսընցունեմ: **Ե**ւ Տէրը  
 Խորայէլին ձայնը լսեց, ու Վանանացիները ու-  
 նոր յետք զմատնեց. և Խորայէլը կորսընցուց  
 զանոնք ու անոնց քաղաքները. և ան տեղին ա-  
 նունը <sup>‡‡</sup>Հօրմա գրաւ: **Ե**ւ Եզովմի երկրին  
 4 բոլորտիքէն անցնելով՝ Հովր լեռէն Աարմիր  
 ծովին ճամբան չուեցին, ու ճամբուն մէջը ժողո-  
 5 վուրդին սիրտը նեղացաւ: **Ե**ւ ժողովուրդը Ես-  
 տուծոյ դէմ ու Սոլսէսին դէմ խօսեցան՝ Եւ-  
 լով. Ինչո՞ւ մեզ Եզիպտոսէն հանեցիք որ ա-  
 նապատին մէջ մեռնինք. քանզի հաց չկայ,  
 ջուր չկայ. և աս չնչին հացէն մեր սիրտը զզուեր

\*Վ-՝ Վանանիս

†Յ՝ Երտաններուն

\*\*Յ՝ նզովք

է : Աւ Տէրը ժողովուրդին վրայ կիզող օ- 6  
 ձերը խրկեց , ու խածին ժողովուրդը . անանկ  
 որ՝ Իսրայէլէն շատ ժողովուրդ մեռաւ : Աւ ժո- 7  
 ղովուրդը Մովսէսին եկան , ու ըսին . Տէրօջը  
 դէմ ու քեզի դէմ խօսելնուս համար մեղանչե-  
 ցինք . աղօթք ըրէ Տէրօջը՝ որ մեր վրայէն օ-  
 ձերը վերցունէ . և Մովսէս ժողովուրդին հա- 8  
 մար աղաչեց : Աւ Տէրը ըսաւ Մովսէսին . Վե-  
 զի կիզող օձ մը շինէ , ու ան ձողի մը վրայ դիր .  
 և ըլլայ թէ ո՛վ որ խածնուի , անոր նայի՝ ու  
 սպրի : Աւ Մովսէս պղինձէ օձ մը շինեց , ու 9  
 անիկայ ձողի մը վրայ դրաւ . և եղաւ որ՝ օձ  
 մը երբոր մարդ մը կըխածնէր , անիկայ պղինձ  
 օձին նայածին պէս՝ կատողջանար :

Աւ Իսրայէլի որդիքը չուեցին՝ ու Ոբովթ 10  
 իջևան ըրին : Աւ Ոբովթէն չուեցին ու Եյէ- 11  
 արարիմին մէջ դէպի արևելեան կողմը՝ Մովարին  
 դիմացի անսպատին մէջ իջևան ըրին : Ընկից 12  
 ալ չուեցին՝ և Օւրիդ ձորին մէջ իջևան ըրին :  
 Ընկից չուեցին՝ ու իջևան ըրին Եանոնին մէ- 13  
 կալ կողմը ան անսպատին մէջ՝ որ Եմօրհացոց  
 սահմանէն կելէ . ինչու որ Եանոն՝ Մովարին  
 սահմանն է , Մովարին ու Եմօրհացիներուն մէջ  
 տեղը : Ընոր համար Տէրօջը պատերազմներուն 14  
 դիրքին մէջ կըսուի :

Սուֆային մէջ Վա հէպը

Ու Եանոնին գետերը :

Աւ Երին կեցած տեղը վազող՝

Ու Սովաբին սահմանը կայացող  
Գետերուն յորձանքը :

- 16 Եւ անկից ջրհորը էին . առ ան ջրհորն  
է՛ որուն համար Տէրը ըսաւ Սովսէսին . Դո-  
ղովուրդը ժողովէ , ու ես անոնց ջուր պիտի տամ :
- 17 Ենատներ Իսրայէլը առ երգը երգեց .
- 18 Ո՛վ հոր՝ բղխէ . երգեցէք անոր .  
Հորը՝ իշխանները փորեցին ,  
Դողովուրդին ազնուականները՝ Օրէնադիրովը ,  
Իրենց զաւազաններովը փորեցին ան :
- 19 Եւ անապատէն դէպի Սաթթանա՝ ու  
Սաթթանայէն դէպի Նաալէլ՝ ու Նաալիէլէն
- 20 դէպի Բամօթ , Եւ Բամօթէն Սովաբին զաշ-  
տին մէջ \* Եսիմօնին դիմացը նայող Փասդա-  
յին զազաթը եղած հովիտը շտեղծ :
- 21 Եւ Իսրայէլ զեսպաններ խրկեց Ըմօրհացուց  
22 թագաւորը Սեհոնին՝ ըսելով , Քու երկիրէդ  
անցնինք . արտի կամ այդի մէջ չենք մտնար ,  
հորի ջուրէ չենք խմեր . մինչև քու սահմա-  
նէդ անցնելնիս՝ արքունական ճամբայէն կեր-
- 23 թանք : Եւ Սեհոն իր սահմանէն ճամբայ  
չտուաւ Իսրայէլին . Բայց Սեհոն իր բոլոր ժո-  
ղովուրդը ժողովեց , և դէպի անապատ Իսրայէ-  
լին դէմը ելաւ՝ ու Յասսա եկաւ . և Իսրայէլին
- 24 հետ պատերազմեցաւ : Եւ Իսրայէլ սուրի բեր-  
նէ անցուց զանիկայ՝ ու տիրեց անոր երկրին Եռ-  
նոնէն մինչև Յարոկը՝ մինչև Ըմմոնի որդւոցը

\* Ու՛մ անապատին

Էրեւոյն . ինչու որ Եմմոնի որդւոցը սաՀմանը  
 դժուարին էր : Եւ Իսրայէլ բոլոր սա քաղաք . 25  
 ներք առաւ . ու Իսրայէլ Եմօրհացւոց բոլոր  
 քաղաքներուն մէջ բնակեցաւ , Եսերոնին մէջ ,  
 ու անոր բոլոր գեղերուն մէջ : Քանզի Եսերո- 26  
 նը Եմօրհացւոց Սեհոն Թադաւորին քաղաքն  
 էր , ինչու որ անիկայ Մովաբին առջի Թադա-  
 ւորին հետ պատերազմելով , անոր ձեռքէն բո-  
 լոր անոր երկիրը մինչև Ըննն առած էր : Ե- 27  
 նոր համար աւսկ խօսողները կըսեն .

Եսերոն եկէք .

Թ՛ղ Սեհոնին քաղաքը շինուի ու պատրաս-  
 տուի .

Վասն զի Եսերոնէն կրակ ելաւ՝

28

Ո- Սեհոնին քաղաքէն բոց .

Մովաբին Ըրը այրեց ,

Ո- Ընննին բարձր տեղերուն տէրերը ,

Վ՛յ քեզ՝ Մովաբ ,

29

Ո՛վ Քամուլի ժողովարդը կորսուեցար .

Իբ ազատուած որդէքը ու ազջիկները  
 Եմօրհացւոց Սեհոն Թադաւորին գերութեան  
 տուաւ .

Չանոնք նետերս՛ զարկինք .

30

Ե երոնը կորսուեցաւ մինչև Գերոնը .

Եւ կորսնցուցինք Չանոնք

Մինչև Մեդարային քովը եղած Կօփան :

Եյպէս Իսրայէլ Եմօրհացւոց երկիրը բնա- 31



- 32 կեցաւ : Եւ Վովսէս հարտ խրկեց Յաղերը լըրտեսելու , ու անոր զեղերը առին՝ և հոն եղած Ըմօրհացիները վաւրնեցին :
- 33 Եւ զարձան ու Բասանի ճամբան ելան , և Բասանի Ովզ թագաւորը՝ ինքը ու իր բոլոր ժողովուրդը անոնց զէմ Եդրայիներն մէջ պատեցին :
- 34 Բազմի ելան : Եւ Տէրը ըսաւ Վովսէսին .  
Մի վախնար անկից . քանզի քեզի մատնեցի անիկայ ու անոր բոլոր ժողովուրդը և անոր երկիրը . և դուն Կսերոնին մէջ բնակող Ըմօրհացուոց Սեհոն թագաւորին ըրածիդ պէս պիտի ընես անոր :
- 35 Եւ Սապէս զարկին անիկայ և անոր որդիքը ու անոր բոլոր ժողովուրդը . անանկ որ՝ մէկն ալ չմնաց . և անոր երկիրը ժառանգեցին :

## ԳԼ . ԻԲ

1 Բաղասամը՝ Բաղակին առջի անգամի հրաւերքը կըմերժէ , 15 ու երկրորդ անգամին կընդունի : 22 Հրեշտակը պիտի սպաննէր զանիկայ , թէ որ անոր էջը ետ չբաշուէր : 36 Բաղակ կընդունի զՎաղասամը :

- 1 Եւ Իսրայէլի որդիքը չուեցին՝ ու Վովսէսին զաշտերուն մէջ Յորդանանու մէկալ կողմը Երկրովի Գեհացը իջեան ըրին :
- 2 Եւ Սեպփօրին որդին Բաղակը տեսաւ ան
- 3 ամէնը որ Իսրայէլը Ըմօրհացուոց ըրաւ : Եւ Վովսէս խիստ վախցաւ ժողովուրդէն , ինչու որ շատուոր էին , ու Վովսէս Իսրայէլի որդեացը երե-

սէն տաղնապի մէջ էր : Եւ Մովսէսը՝ Մա- 4  
 դիամու ձերերուն ըսաւ . Հիմա աս ժողովուր-  
 դը պիտի լռեն մեր բողոքտիքը եղած ամէնը ,  
 ինչպէս որ արջառը դաշտին խտոր կը լռէ : Եւ  
 Սեպտորին որդին Բաղակը Մովսէսին թագա- 5  
 ւորն էր անատենը : Եւ Բէովրին որդին Բա-  
 ղամին գեապաններ խրկեց Փաթուր <sup>աւարը</sup>  
 ( \* որ անոր ժողովուրդին որդւոցը երկրին գետին  
 եզերքն էր , ) զանիկայ կանչելու ու ըսելու . Ըհա՛  
 Եղիպտոսէն ժողովուրդ մը ելաւ . ահա՛ երկրի ե- 6  
 րեօը ծածկեց , և իմ՝ դիմացս կընտարի : Ուստի  
 Հիմա կաղաչեմ եկո՛ւր , ինձի համար անիծէ՛ աս  
 ժողովուրդը . քանզի անոնք ինձմէ՛ զօրաւոր են ,  
 գուցէ կարող ըլլամ անոնք զարնելու , ու երկ-  
 րէս վճռնտեմ անոնք . վասն զի գիտեմ որ քու  
 օրհնածդ՝ օրհնած է , և քու անիծածդ՝ անի-  
 ծած :

Եւ Մովսէսին ձերերը ու Մադիամին ձերե- 7  
 րը իրենց ձեռքերնուն մէջ հմայութեան վարձ-  
 քերով գացին . և Բաղամին եկան ու Բաղա- 8  
 կին խօսքերը ըսին անոր : Եւ անիկայ ըսաւ ա-  
 նոնց . Ըս դիշեր հոս մնացէք . և Տէրը ինչ-  
 պէս որ ինձի խօսելու ըլլայ՝ անա՛նկ պատասխան  
 պիտի տամ ձեզի . ու Մովսէսին իշխանները Բա- 9  
 ղամին քովը մնացին : Եւ Ըստուած Բաղաս-  
 մին եկաւ՝ ու ըսաւ . Ո՞վ են ատ քու քովդ է-  
 ղած մարդիկը : Եւ Բաղամ ըսաւ Ըստուծոյ . 10

\* Ս-Մ՝ և Փաթուր ( քաղաքը ) գեապաններ խրկեց Բէովրին որդին Բաղամին՝ որուն հայրենիքը Բեռնի եզերքն էր .

- Մովսարին թագաւորը Սեպտիօրեան Բաղակը ա-
- 11 րան խրկեց ինձի՝ լուսին, Եւսա Ազիպատոսէն  
 Ժողովուրդ մը ելաւ, ու երկրի երեսը ծածկեց .  
 Հիմա եկուք, անիձէ՛ անոնք ինձի համար, որ  
 գուցէ կարող ըլլամ զանոնք յաղթելու ու վաբն-
- 12 տելու: Եւ Եստուած ըսաւ Բաղասամին . Ե-  
 տոնց հետ չերթաս . Ժողովուրդը չանիձէս .
- 13 վասն զի անոնք օրհնեալ են: Եւ Բաղասամ առ-  
 տուանց կանուխ ելաւ, ու ըսաւ Բաղակին իշ-  
 խաններուն . Իւր ձեր երկիրը գացէք . ին-
- 14 չու որ Տէրը իս չթողուր ձեզի հետ գալու: Եւ  
 Մովսարին իշխանները եկան՝ ու Բաղակին ե-  
 կան և ըսին . Բաղասամը մեզի հետ գալ չուզեց:
- 15 Եւ Բաղակ գարձեալ ան ասորիներէն աւելի  
 շատ և աւելի պատուաւոր իշխաններ խրկեց:
- 16 Եւ անոնք Բաղասամին եկան ու ըսին անոր .  
 Սեպտիօրին որդին Բաղակը ասանկ կրսէ . կա-
- 17 ղաչեմ՝ ինձի գալէն մի՛ հրաժարիր . Քանզի քե-  
 զի շատ պատիւ պիտի ընեմ, և ինձի ինչ որ ը-  
 սելու ըլլաս՝ պիտի ընեմ . ուստի կաղաչեմ՝ ե-  
 կուք՝ անիձէ՛ աս ժողովուրդը ինձի համար:
- 18 Եւ Բաղասամ պատասխան տուաւ ու ըսաւ Բա-  
 ղակին ճառաններուն . Թէ որ Բաղակ իր տու-  
 նովը ընցուն արծաթ ու ոսկի տայ ինձի, իմ  
 Տէր Եստուծոյս խօսքէն չեմ կրնար անցնիլ,
- 19 պղտիկ կամ մեծ բան մը ընելու: Եւ Հիմա  
 կաղաչեմ՝ աս գիշեր գուր ալ հոս կեցէք, որ  
 գիտնամ թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ին-
- 20 ձի . Եւ Եստուած գիշերը Բաղասամին եկաւ

ու ըսաւ անոր . Թէ որ մարդիկը քեզ կանչե-  
լու գան , ելի՛ր՝ անոնց հետ գնա՛ . բայց ի՛նչ  
որ քեզի խօսիմ , ան պիտի ընես :

Եւ Քաղաամ առտուանց ելաւ ու իր իշուն հա- 21  
մետը դրաւ , և Սուլարի իշխաններուն հետ գնաց :  
Ու երբոր կերթար՝ Ըստուծոյ բարկութիւնը 22  
բորբոքեցաւ , ու Տէրօջը հրեշտակը ճամբուն  
վրայ կայնեցաւ իբրև անոր թշնամի մը . և ա-  
նիկայ իր իշուն վրան հեծած էր , ու իր երկու  
ճառաները իր հետն էին : Եւ էջը տեսաւ Տէ- 23  
րօջը հրեշտակը ճամբուն վրայ կայնած , ու  
սուրը քաշած իր ձեռքը , ու էջը ճամբէն դար-  
ձաւ և արտը մտաւ . ու Քաղաամ էջը ձեծեց  
որ իր ճամբան դարձունէ անիկայ : Եւ Տէ- 24  
րօջը հրեշտակը այգիներուն նեղ ճամբուն մէջ  
կայնեցաւ , ուր ուր մէկ կողմէն պատ ու մէկաւ  
կողմէն պատ էր : Եւ երբ էջը Տէրօջը հրեշ- 25  
տակը տեսաւ՝ պատին քովը խօթուեցաւ , և  
Քաղաամին ոտքը պատին քովը սխմեց . և ա-  
նիկայ նորէն ձեծեց ան : Եւ Տէրօջը հրեշտա- 26  
կը առաջ գնաց՝ ու նեղ տեղ մը կայնեցաւ ,  
ուր աջ կամ ձախ կողմը խոտորելու ճամբայ  
չկար : Եւ երբ էջը Տէրօջը հրեշտակը տեսաւ , 27  
Քաղաամին տակը նստաւ . ու Քաղաամին բար-  
կութիւնը բորբոքեցաւ և գաւազանով ձեծեց  
էջը : Եւ Տէրը իշուն բերանը բացաւ , ու ա- 28  
նիկայ Քաղաամին ըսաւ . Ի՞նչ ըրի քեզի՞ որ  
այսպէս իրեք անգամ իս ձեծեցիր : Եւ Քաղաամ 29  
ըսաւ իշուն . Իս ծաղը ընելուդ համար . Երա-

- նի՜ թէ ձեռքս սուր մը ըլլար՝ որ հիմա քեզ  
 30 մնացունէի : Եւ էջը ըսաւ Բաղասամին . Ես  
 ան քու էջդ չե՞մ, որուն վրայ կը հեծնայիր \* քու  
 մանկու թենէդ՝ մինչև այսօր . քեզի ասանկ ընել  
 իմ սովորութիւնս էր . ու անիկայ ըսաւ . Չէ :  
 31 Ընտաննը Տէրը բացաւ Բաղասամին աչքերը .  
 ու երբ տեսաւ որ Տէրօջը հրեշտակը ճամբուն  
 վրայ կայնած էր և իր ձեռքը մերկ սուր մը ու  
 նէր , իր երեսին վրայ ինկաւ ու երկրպագութիւն  
 32 ըրաւ : Եւ Տէրօջը հրեշտակը ըսաւ անոր . Ինչ  
 չո՞ւ ասանկ իրեք անգամ քու էջդ ծեծեցիր . ա  
 չա՛ ես քեզի թշնամութիւն ընելու ելայ . վասն  
 33 զի քու ճամբագ ուղիդ չէ իմ առջևս : Եւ էջը  
 իս տեսաւ , ու աս իրեք անգամ է որ իմ առ  
 ջնէս մէկ դի քաշուեցաւ . թէ որ անիկայ իմ առ  
 ջնէս մէկ դի չքաշուէր , հիմա ես քեզ անշուշտ  
 մնացուցած էի , ու անիկայ ողջ թողուցեր էի :  
 34 Եւ Բաղասամ ըսաւ Տէրօջը հրեշտակին . Սեղք  
 գործեցի՝ չգիտնալով որ ճամբուն վրան ինծի  
 գէմ կայներ էիր . ուստի թէ որ քեզի անհա  
 35 ճոյ կերենայ ի՛մ էրէ՛սը , ետ դառնամ : Եւ Տէ  
 րօջը հրեշտակը ըսաւ Բաղասամին . Գնա՛ ատ  
 մարդոցը հետ , բայց ան խօսքը որ քեզի պիտի  
 զուրցեմ , ան միայն խօսիս . և Բաղասամ՝ Բա  
 ղակին իշխաններուն հետ գնաց :  
 36 Եւ Բաղակ երբ լսեց որ Բաղասամը կուգայ ,  
 զանիկայ գիմաւորելու ելաւ ի՞ր սահմանը եղած  
 Ըննոն գէտին քովի Սովորացուց մէկ քաղաքը՝

\* Ամբ քուկդ ըսուէս

որ սահմանին ծայրն է : Եւ Քաղակ ըսաւ Քաւ 37  
 ղաամին . Քեզ կանչելու հարց չխրկեցի՞ . ինչո՞ւ  
 չեկար ինձի . արդեօք քեզի պատիւ ընելու կա-  
 բողութիւն չունի՞մ : Եւ Քաղաամ ըսաւ Քաւ 38  
 ղակին . Եհայ ես քեզի եկայ . բայց ես բնաւ  
 զօրութիւն ունի՞մ բան մը ըսելու . Եստուած  
 իմ բերանս ինչ խօսք որ դնէ , ան պիտի խօ-  
 սիմ : Եւ Քաղաամ՝ Քաղակին հետ գնաց . ու 39  
 կարեաթ Հուսովթը եկան : Եւ Քաղակ՝ ար- 40  
 ջառներ ու ոչխարներ մորթեց , ու Քաղաամին  
 և անոր հետ եղող իշխաններուն խրկեց :  
 Եւ երբ առտու եղաւ , Քաղակ սուաւ Քաւ 41  
 ղաամը՝ ու Քահաղու բարձր տեղերը հանեց զա-  
 նիկայ , որ անկից ժողովուրդին ծայրը տեսնայ :

## Գ Լ . Ի Գ

1 , 13 , 28 Քաղակին զոհը : 7 , 18 Քաղաամին խօսքերը :

Եւ Քաղաամ ըսաւ Քաղակին . Հոս ինձի եօթը 1  
 սեղան շինէ՞ , ու հոս ինձի եօթը զուարակ և  
 եօթը խոյ պատրաստէ՞ : Եւ Քաղակ՝ Քաղաամին 2  
 ըսածին պէս ըրաւ . և Քաղակ ու Քաղաամ ա-  
 մէն սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ  
 խոյ մատուցին : Եւ Քաղաամ ըսաւ Քաղակին . 3  
 Ինչ քու ողջակէզիդ քովը կայնէ՞ , ու ես եր-  
 թամ , գուցէ Տէրը իմ գէմն ելլէ . և ի՞նչ որ  
 ինձի ցուցընէ : քեզի պիտի ըսեմ . ու \*բարձր

\*կա՛մ առանձին , կա՛մ բաց

- 4 տեղ մը ելաւ : Եւ Ըստուած Բաղասամին հան-  
դիպեցաւ . ու Բաղասամ ըսաւ անոր . Եթէ սե-  
ղան պատրաստեցի , ու ամէն մէկ սեղանին վրայ  
5 մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուցի : Եւ  
Տէրը Բաղասամին բերանը խօսք դրաւ՝ ու ը-  
սաւ . Գարձի՛ր Բաղակին , և ասանկ խօսէ :  
6 Եւ դարձաւ անոր . և ահա՛ անիկայ իր ողջակէ-  
զին քովը կայներ էր , ինքը ու Սովարին բոլոր  
7 իշխանները : Եւ իր առակը սկսեց ու ըսաւ .

Սովարին թագաւորը Բաղակ զիս Ըրամէն՝

Երևելեան լեռներէն բերաւ ,

Ընդլու՛լ , Եկո՛ւր Յակօբը անիծէ ինձի ,

Եկո՛ւր Իսրայէլը նզովէ :

- 8 Ըստուծոյ չանիծածը ի՞նչպէս անիծեմ ,  
Կամ Տէրօջը չնզովածը ի՞նչպէս նզովեմ .

- 9 Վ՛րան զի լեռներուն գլխէն տեսայ անիկայ ,

Եւ բլուրներէն կընայիմ անոր .

Ըհա՛ աս ժողովուրդը զատ պիտի բնակի ,

Ու ազգերուն հետ պիտի չտեսուի :

- 10 Յակօբին փոշին ո՞վ կընայ համբել ,

Եւ Իսրայէլին քառորդը ո՞վ կընայ հաշուել .

Թո՛ղ իմ անձս արգարներուն մահովը մեռնի ,

Ու իմ վախճանս անոնց ձա՛նճանի՛ն պէս ըլլայ :

- 11 Եւ Բաղակ ըսաւ Բաղասամին . Եւ Ի՞նչ ը-  
րիր ինձի . ես քեզ բ՛լբի իմ թշնամիներս անի-

- 12 ծեկու , և ահա՛ գուն բոլորովին օրձնցիր : Եւ  
անիկայ պատասխան տուաւ՝ ու ըսաւ . Ի՞նչ օր

Տէրը իմ բերսնս գնէ , ան խօսելու հոգ տանելու չեմ :

Եւ Բաղակ նորէն ըսաւ անոր . Կալաչեմ՝ 13  
 ինծի հետ ուրիշ տեղ մը եկ՛ուր , որ անոնք տեսնաս անկից , անոնց միայն մէկ ծայրը տեսնաս , և անոնց ամէնը պիտի չտեսնաս . ու անկից անիծէ՛ անոնք ինծի համար : Եւ տարաւ 14  
 զանկից Կովիմին արտը՝ <sup>5</sup> փասգային գլուխը . ու եօթը սեղան շինեց , և ամէն մէկ սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուց : Եւ 15  
 ըսաւ Բաղակին . Դուն հոս քու ողջակէզիդ քովը կայնէ . ու ես հոն Տէրօջ գէմը կլամ :  
 Եւ Տէրը Բաղասամին գիմացը ելաւ . և անոր 16  
 բերանը խօսք գրաւ՝ ու ըսաւ . Բաղակին դարձի՛ր ու ասանկ ըսէ : Եւ երբոր եկաւ անոր , 17  
 ահա՛ անկից իր ողջակէզին քովը կայներ էր . ու Կովարին իշխաններն ալ անոր հետն էին . և Բաղակ ըսաւ անոր . Տէրը ի՞նչ խօսեցաւ : Եւ 18  
 անկից իր առակը սկսեց՝ ու ըսաւ .

Ելի՛ր ո՛վ Բաղակ , ու ըսէ .

Ո՛վ Սեպփօրին որդին՝ ինծի մտի՛կ ըսէ :

Եստուած մարդ չէ՛ որ սուտ խօսի ,

19

Ո՛չ ալ մարդու որդի՛ որ զոջայ .

Ի՛նքը ըսաւ , ու պիտի չընէ՞ ,

Կամ ի՛նքը խօսեցաւ , ու տեղը պիտի չբերէ՞ :

Եհա՛ հրօյժն առի օրձիկու . և ինքը օրձեց ,

20

Ու ես չեմ կրնար ետ դարձունել :

Յակոբին վրայ յանցանք մը չըննեց ,

21



Ո՛չ ալ Խորայէլին վրայ անդգամութիւն տեսաւ ,

Ենոր Տէր Ըստուածը իր հետն է .

Եւ անոր մէջը թագաւորի ցնծութեան ձայն կայ :

22 Օսնոնք Եզիպտոսէն հանողը՝ Ըստուած է .

Ենկայ մեղքերուի պէս \* ուժ ունի .

23 Քանզի Յակոբին դէմ կախարդութիւն չըլար .

Ու Խորայէլին դէմ դիւթութիւն չքանիր .

Ու Յակոբին ու Խորայէլին վրայով աս տեսնիս համեմատ

Պիտի ըսուի , թէ Ըստուած ինչն<sup>Ը</sup>ր ըրաւ :

24 Եհսա աս ժողովուրդը մատակ առիւծի պէս պիտի ելայ ,

Ու առիւծի պէս պիտի բարձրանայ .

Ու պիտի չպառկի՝ մինչև որ որսը չուտէ ,

Ու մեռածն՝ րուն արիւնչ չիմէ :

25 Ու Բաղակը Բաղասամին ըրաւ . Ո՛չ անէճք

26 տուր անոնց՝ ո՛չ ալ օրջնութիւն : Ու Բաղասամ

պատասխան տուով՝ Բաղակին ըսաւ . Ես քեզի չըսի<sup>Ը</sup> թէ , Ըստուած ինծի ինչ որ ըսէ , ան պիտի ընեմ :

27 Եւ Բաղակը ըսաւ Բաղասամին . Եղի՛ւք քեզ մէկ ուրիշ տեղ մը տանիմ . գուցէ Ըստուած հաճի , որ անկից ինծի համար անթծես անոնք :

28 Ուստի Բաղակ տարաւ Բաղասամը Փոզովրին

29 գազաթը , որ Եսիմօնին վրայ կընայի : Ու Բա-

\* Ուժ փառք

դաամը ըսաւ Բաղակին . Ես տեղս ինձի եօթը սեղան շինէ . ու ինձի հոս եօթը զուարակ ու եօթը խոյ պատրաստէ : Բաղակն ալ Բաղաւ 30 մին ըսածին պէս ըրաւ . ու ամէն մէկ սեղանին վրայ մէյմէկ զուարակ ու մէյմէկ խոյ մատուց :

## ԳԼ . ԻԳ

1 Բաղաամ առանց հմայքներ փնտրուելու , Խորայէլի երծանկութեանը վրայ կըմարդարեանայ : 10 Բաղակը սրբողելով կը խփէ որ երթայ : 15 Բաղաամը կըմարդարեանայ Յակոբին Եսողին վրայ , ու քանի մը ազգերու կործանմանը վրայ :

Երբոր Բաղաամ տեսաւ որ Տէրը Խորայէլը 1  
 օրձնել կուզէ , մէկալ սնդամներուն պէս  
 հմայքներ փնտրուելու չզնաց . այլ իրեն երեսը  
 դէպի անապատը դարձուց : Ու Բաղաամ ի- 2  
 րեն աչքերը վերցունելով՝ տեսաւ որ Խորայ-  
 յէլը իրեն ցեղերովը դաշտին մէջ նստեր է . ու  
 Եստուծոյ Հոգին անոր վրան եկաւ : Ու իրեն 3  
 առակը սկսելով՝ ըսաւ .

Բէովրին տղուն Բաղաամին խօսքը՝

Ու աչքը \* բաց մարդուն խօսքը ,

Եստուծոյ խօսքերը լսող , ու Եմնակարողին ան- 4  
 սիլքը տեսնող ,

Վնանալու պէս գետինը ի յնող ու աչքերը բաց  
 եղողին խօսքը աս է :

Ո՛վ Յակոբ՝ քուկին վրաններդ , 5

Ու ո՛վ Իսրայէլ քուկին խորաններդ ի՞նչ  
գեղեցիկ են :

6 Չորերու պէս տարածեցան .

Գետերու քով եղող պարտէզներու պէս ,  
Տէրոջը տնկած հալուէի ծառերուն

Ու ջուրին եզերքը եղող եղևիններուն պէս է :

7 Ընոր գոյլերէն ջուր պիտի վազէ .

Ու անոր սերմը առաա ջուրերու մէջ ըլլայ .  
Ընոր թագաւորը Եգազէն աւելի պիտի բարձ-  
րանայ ,

Ու թագաւորութիւնը աճի :

8 Օ, անիկայ Եգիպտոսէն հանողը՝ Եստուած է .

Միեղջերուի պէս ուժ ունի .

Իրեն թշնամիներուն ազգերը պիտի ուտէ .<sup>1</sup>

Ընոնց ոսկորները պիտի կոտրտէ , ու զանոնք  
իր նետերովը պիտի զարնէ .

9 Եռիւծի պէս նստաւ պառկեցաւ , ու մատակ ա-  
ռիւծի պէս .

Ու զանիկայ ո՛վ պիտի արթընցունէ .

Քեզ օրջնողները օրջնուին

Ու քեզ անիծողները անիծուին :

10 Ըն ատենը Բաղակ շատ սրգողեցաւ Բաղաս-  
մին , ու ձեռքերը իրարու զարկաւ . և Բա-  
ղակ ըսաւ Բաղասամին . Ես քեզ կանչեցի որ  
իմ թշնամիներուս անէճք տաս , ու ահա՛ աս  
իրեք անգամ է որ անոնց օրջնութիւն տուիր :

11 Ուստի դուն հիմա քու տեղք փախի՛ր . քեզի  
շատ պատիւ ընեմ ըսի , բայց ահա՛ Տէրը քեզ

գրատիւէ զրկեց : Եւ Քաղաամ ըսաւ Քաղակին . 12  
 Ես քու խրկած գետապաններուդ ալ չըսի՞ թէ ,  
 Քաղակը թէ որ ինձի իր տունովը ընցուն ոսկի 13  
 ու արծաթ ալ տայ , Ես Տէրոջը խօսքէն չեմ  
 կրնար անցնիլ , որ ինքիքմէս աղէկ կամ գէշ  
 բան մը ընեմ . Տէրը ի՛նչ որ ըսէ , ան պիտի  
 խօսիմ : Ուստի ես Հիմա իմ Հայրենիքս կեր- 14  
 թամ . եկուր , քեզի Հասկըցունեմ թէ աս  
 Ժողովուրդը քու Ժողովուրդիդ ի՛նչ պիտի ընէ  
 ետքի օրերը : Ըն ատենը իր առակը սկսելով՝ 15  
 ըսաւ .

Ի՛նչպիսի որչին Քաղսամին խօսքը՝

Ու աչքը բաց մարդուն խօսքը ,

Եւսուծոյ խօսքերը լսող՝ և Քարձրելոյն գի- 16  
 տութիւնը գիտցող ,

Ու Եմենակարողին տեսիլքը տեսնող՝

Եւ Դանաւուրուդէս գետինը ինկող ու աչքը բաց  
 եղողին խօսքը աս է :

Չանիկայ պիտի տեսնեմ , բայց Հիմա չէ՛ . 17

Չանիկայ պիտի զննեմ , բայց մօտերս չէ՛ .

Յակորէն մէկ աստղ մը պիտի ծագի ,

Ու Իսրայէլէն իշխանութեան գաւազան մը  
 պիտի ելայ .

Եւ Մովսէսի իշխանները պիտի զարնէ ,

Ու բոլոր Սեթի որդիքը բնաջինջ պիտի ընէ :

Եզովմը պիտի առնուի . 18

Սէիրն ալ իր թշնամիներէն պիտի առնուի .

Բայց Իսրայէլը քաջութիւն պիտի ընէ :

- 19 Եւ Յաղորէն ելլողը պիտի իշխէ ,  
 Ու քաղքին յէջ մնացածը պիտի կորսընցունէ :
- 20 Ետքը Ըմաղեկին նայեցաւ , ու իր առակը  
 սկսելով՝ ըսաւ .  
 Ըմաղէկը ազգերուն գլուխն է .  
 Բայց ետքը բոլորովին պիտի կորսուի :
- 21 Ու Կենեցիին նայեցաւ , և իր առակը  
 սկսելով՝ ըսաւ .  
 Թէպէտեւ քու նստած տեղը անառիկ է ,  
 Ու քու բոյնդ ապառաժի վրայ դրեր ես .
- 22 Բայց Կենեցին պիտի աւրուի ,  
 Սինչև որ Ետուրը քեզ գերի տանի :
- 23 Ետքը իր առակը սկսելով՝ ըսաւ .  
 Ըփսոս . երբոր Ետուած աս բաներս ընէ ,  
 ո՞վ ողջ պիտի մնայ :
- 24 Ու նաև Կիտացւոց եզերքներէն նաւեր պիտի  
 գան ,  
 Եւ Ետուրը պիտի չարչարեն ու Երբրը չար-  
 չարեն .  
 Բայց անոնք ալ բոլորովին պիտի կորսուին :
- 25 Ետքը Բաղաամ՝ ելաւ գնաց , ու իր տեղը  
 դարձաւ . և Բաղակն ալ իր ճամբան գնաց :

## Գ Լ . Ի Ե

1 Իսրայելը Սատիմի մէջ պրօնըկութիւն ու կռապաշտութիւն կընէ : 6 Փենէհէս կըմեոցունէ Օւամբրին ու Վազրին : 10 Ես բանիս համար Եստուած յախոննական քահանայութիւնը անոր կուտայ : 16 Մադիանացիները թշնամի համարուելու էին :

Եւ Իսրայելը Սատիմի մէջ բնակեցաւ . ու 1  
 Ժողովուրդն ալ Մովսէսին աղջիկներուն  
 հետ սկսաւ շնութիւն ընելու : Ու անոնք ժողովուրդը  
 հրաւիրեցին իրենց աստուածներուն  
 զօհներուն . ու ժողովուրդը զուէրէն ուտելով  
 անոնց աստուածներուն երկրպագութիւն ըրին :  
 Եւ Իսրայելը Բելփեգովրին յարեցաւ . ուստի Տէ- 3  
 րոջը բարկութիւնը Իսրայելի վրայ բորբոքեցաւ :  
 Եւ Տէրը Մովսէսին ըսաւ . Բոլոր ժողովուր- 4  
 դին իշխանները սո՛ւ . ու անոնք Տէրոջը առջևը  
 արեին զէմ կախէ՛ , որ Տէրոջը աստիկ բար- 5  
 կութիւնը Իսրայելէն դառնայ : Եւ Մովսէս  
 Իսրայելի գատաւորներուն ըսաւ . Գուք ա-  
 մէնքդ ալ ձեր մարդիկները՝ որ Բելփեգովրին  
 յարեցան , մեռցուցէք : Եւ ահա՛ Իսրայելի որ- 6  
 դիներէն մէկը եկաւ , ու իր եղբայրներուն մէկ  
 Մադիանացի կնիկ մը բերաւ՝ Մովսէսին աչքին  
 առջևը , ու Իսրայելի որդւոցը բոլոր ժողովքին  
 առջևը , երբոր անոնք ժողովքի խորանին առ-  
 ջևը կուլային : Եւ Եհարօն քահանայի որդին 7  
 Եղիազարին տղան Փենէհէսը սա բանը տեսնալով՝  
 ժողովուրդին մէջէն ելաւ ու ձեռքը զեղարդ

- 8 մը առաւ , Եւ Իսրայէլացի մարդուն ետեւէն սենեակը մտաւ , ու երկուքն ալ այնչափ Իսրայէլացի մարդը և կնիկը փորէն խոյեց . ու ժանտաջխտին հարուածը Իսրայէլի որդւոցմէ
- 9 դադրեցաւ : Ու ժանտախտէն մեռածները քսանը չորս հազար հազար էին :
- 10 Եւ Տէրը Մովսէսին հետ խօսեցաւ ու ըսաւ .
- 11 Եւ հարօն քահանայի որդիին՝ Եղիազարին որդիին Փենէհէսը՝ իմ բարկութիւնս Իսրայէլի որդիներէն դարձուց . որովհետեւ անիկայ անոնց մէջը՝ ինծի համար նախանձ ունեցաւ . այսպէս՝ ես իմ նախանձովս Իսրայէլի որդիքը բնաջինջ չըրի :
- 12 Եւ որ համար ըսէ որ , Եւ հա՛ ես անոր կուտամ
- 13 իմ խաղաղութեան ուխտս . Եւ անոր՝ ու անորմէ ետքը իր սերունդին յաւիտենական քահանայութեան ուխտ մը ըլլայ . որովհետեւ իր Եստուծոյն նախանձը ունեցաւ , ու Իսրայէլի
- 14 որդւոցը համար քաւութիւն ըրաւ : Եւ Սաղիանացի կնիկան հետ զարնուող Իսրայէլացի մարդուն անունը՝ Սաղօմին տղան Օսամբրի էր ,
- 15 Եւ մաւօնեանց մէկ տոհմին իշխանն էր : Ու զարնուող Սաղիանացի կնիկանը անունը Վազքի էր . որ Սաղիամու մէջ՝ ազգատոհմի գլուխ եղող՝ Սուր իշխանին աղջիկն էր :
- 16 Եւ Տէրը Մովսէսին հետ խօսեցաւ ու ըսաւ .
- 17 Սաղիանացիներուն թշնամութիւն ըրէք , ու
- 18 անոնք զարկէք . Վանդի անոնք իրենց ըրած նենգութեամբը ձեզի թշնամութիւն ըրին Փոզովի գործին մէջ ու իրենց քրոջը գործին մէջ՝

այսինքն Մաղիանացի իշխանին աղջկանը Վազ-  
բինն, որ ժանտախտի հարուածին օրը զար-  
նուեցաւ Փողոյքին համար:

Գ Լ . Ի . Օ

1 Մովսէսի գաշտերուն մէջ Խորայէլացոց գումարը կաննն :  
52 Անոնց մէջ՝ ժառանգութիւն ըլլալու համար՝ երկիրը  
բաժնելու օրէնքը : 57 Վաստացոց տոհմերը և անոնց համ-  
բանքը : 63 Ամնայի անապատին մէջ համբուածներէն մի-  
այն Վաղէքը ու Յեսուն ողջ ինացին :

**Ո**ւ ժանտախտէն ետքը՝ Տէրը Մովսէսին և 1  
Լ. հարօն քահանայի որդին Եղիազարին հետ  
խօսելով՝ ըսաւ . Ինչոր Խորայէլի որդւոցը ժո- 2  
ղովքին գումարը առէք, անոնց հայրերուն տու-  
ներուն նայելով՝ քսան տարեկանէն վեր եղողնե-  
րը՝ այսինքն Խորայէլին մէջ պատերազմելու ամէն  
կարող մարդիկները համբելով : Ուստի Մովսէս 3  
ու Եղիազար՝ Մովսէսի գաշտերուն մէջ՝ Երեքօ-  
վի շէնոյր Յորդանանու մօտ՝ անոնց հետ խօ-  
սելով՝ ըսին . Վասն տարեկանէն վեր եղողները 4  
համբելով , ինչպէս որ Տէրը Մովսէսին ու Ե-  
գիպտոսի երկրէն ելած Խորայէլի որդւոցը հրա-  
մայեց :

Ուրէն՝ Խորայէլին անդրանիկը . -- Ուր- 5  
բենի որդիքը՝ Ենովքէն՝ Ենովքեանց տոհմը ,  
Փաղզուսէն՝ Փաղզուսեանց տոհմը , Եսրովմէն՝ 6  
Եսրովմեանց տոհմը , Վարմիէն՝ Վարմիեանց  
տոհմը , Եւսուրէն՝ Եւսուրէն : Ուրբենեանց տոհմերը 7



- ասոնք են . ու անոնց համբուածնեքը . քառասուն-  
 ու իրեք հազար եօթը . հարիւր երեսուն էին :  
 8 Եւ փաղղուսին որդին՝ Եղիար էր : Ու Եղիարին  
 9 որդիքը՝ Նամուէլ , Գաթան ու Երիբօն էր .  
 ասոնք ժողովքին խորհրդականներն էին , ու ա-  
 սոնք էին՝ որ Տէրօջը զէմ կեցող Աորխին ժո-  
 ղովքին մէջը՝ Սուսէսին ու Եհարօնին զէմ կե-  
 10 ցան : Եւ երկիրը իր բերանը բանալով՝ կլնց  
 անոնք ու Աորխն ալ , ան ժողովքին մեռած ա-  
 տենը երբոր կրակը ան երկու հարիւր յիսուն  
 մարդիկները կերաւ . ու անոնք ամէնուն օրի-  
 11 նակ եղան : Բայց Աորխին որդիքը չմեռան :  
 12 Ըմաւօնի որդիքը՝ իրենց տոհմերովը . \* Յա-  
 մուէլէն՝ Յամուէլեանց՝ տոհմը , Յամինէն՝ Յա-  
 մինեանց տոհմը , Յաբինէն՝ Յաբինեանց տոհ-  
 13 մը : Օարայէն՝ Օարայեանց տոհմը , Սաու-  
 14 ղէն՝ Սաուղեանց տոհմը յառաջ էին : Ըմա-  
 ւօնեանց տոհմերը ասոնք են . քսանուերկու հա-  
 զար երկու հարիւր հօգի :  
 15 Գադի որդիքը՝ իրենց տոհմերովը . Սափոնէն  
 Սափոնեանց տոհմը , Ընգիէն՝ Ընգիեանց տոհ-  
 16 մը , Սունիէն՝ Սունիեանց տոհմը , Ըգէնիէն՝  
 Ըգէնիեանց տոհմը , Լըրիէն՝ Լըրիեանց տոհմը ,  
 17 Ըրուաղիէն՝ Ըրուաղիեանց տոհմը , Ըրիեիէն՝ Ը-  
 18 ըրիեիեանց տոհմը յառաջ էին . Գադի որդեացը  
 տոհմերը ասոնք են . ու անոնց համբուածնեքը՝  
 քառասուն հազար հինգ հարիւր հօգի էին :

- 19 Յուդայի որդիքը՝ Լըր ու Օնան էին . բայց

\* Ամէ՛ Նամուէլէն՝ Նամուէլեանց

Էրը ու Օնանը Քանանացւոց երկրին մէջ մե-  
ռան : Եւ Յուդայի որդիքը իրենց տոհմերովը<sup>20</sup>  
ասանք էին . Սելոմէն՝ Սելոմեանց տոհմը ,  
Փարեսէն՝ Փարեսեանց տոհմը , Օւրայէն՝  
Օւրայեանց տոհմը յառաջ եկան : Ու փա-<sup>21</sup>  
րեսին որդիքը ասանք էին . Եսրովմէն՝ Եսրով-  
մեանց տոհմը , Համուլէն՝ Համուլեանց տոհմը  
եղան : Յուդայի տոհմերը ասանք են . անոնց<sup>22</sup>  
համարուածները՝ վաթսուներկու հազար հինգ  
հարիւր հոգի էին :

Իսաքարի որդիքը՝ իրենց տոհմերովը . Թուլ-<sup>23</sup>  
ղայէն՝ Թուլղայեանց տոհմը , Փուայէն՝ Փուա-  
յեանց տոհմը , Յասուբէն՝ Յասուբեանց տոհ-<sup>24</sup>  
մը , Սամրամէն՝ Սամրամեանց տոհմը եղան :  
Իսաքարի տոհմերը ասանք են . անոնց համ-<sup>25</sup>  
րուածները՝ վաթսուներէորս հազար իրեք հա-  
րիւր հոգի էին :

Օւրուղոնի որդիքը՝ իրենց տոհմերովը .<sup>26</sup>  
Սարեղէն՝ Սարեղեանց տոհմը , Եղզոնէն՝ Եղ-  
զոնեանց տոհմը , Եղէլէն՝ Եղէլեանց տոհմը ե-  
ղան : Օւրուղոնի տոհմերը ասանք են . անոնց<sup>27</sup>  
համարուածները՝ վաթսուներկու հազար հինգ հարիւր  
հոգի էին :

Յովսէփի որդիքը՝ իրենց տոհմերովը՝ Սանա-<sup>28</sup>  
սէն ու Եփրեմն էր : Սանասէի որդւոցմէ . Սա-<sup>29</sup>  
թիրէն՝ Սաթիրեանց տոհմը եղան . ու Սաթի-  
րը՝ Քաղաադր ծնաւ , ու Քաղաադէն՝ Քաղա-  
ադեանց տոհմը եղան : Քաղաադին որդիքը ա-<sup>30</sup>  
սանք են . Եփեղեբէն՝ Եփեղեբեանց տոհմը ,

- 31 Վեղէզէն՝ Վեղէզեանց տոհմը , Ու Եսրիելէն՝ Եսրիելեանց տոհմը , ու Սիւքեմէն՝ Սիւքեմեանց տոհմը , Ու Սեմիդայէն՝ Սեմիդայեանց տոհմը , ու Ոփերէն՝ Ոփերեանց տոհմը
- 32 Էլու- : Ու Ոփերին տղան Սալպասադը բնաւ տղաքներ չունեցաւ , միայն աղջիկներ ունեցաւ . ու Սալպասադի աղջիկներուն անունները՝ Սաալա , Նուա , Եգլա , Սեղբա ու
- 34 Թերսա էին : Մանասէի տոհմերը ասոնք են . ու անոնց համրուածները յիսունուերկու հազար եօթը հարիւր հոգի էին :
- 35 Եփրեմի որդիքը՝ իրենց տոհմերովը ասոնք են . Սուտաղայէն՝ Սուտաղայեանց տոհմը , Բեքէրէն՝ Բեքէրեանց տոհմը , Տաքանէն՝ Տաքանեանց տոհմը Էլու- : Ու Սուտաղային որդիքը ասոնք են . Լըրանէն՝ Լըրանեանց՝ տոհմը
- 37 Էլու- : Եփրեմի որդւոցը տոհմերը ասոնք են . անոնց համրուածները երսունուերկու հազար հինգ հարիւր հոգի էին : Յովսէփի որդիքը՝ իրենց տոհմերովը ասոնք են :
- 38 Բենիամինի որդիքը՝ իրենց տոհմերովը . Բաղայէն՝ Բաղայեանց տոհմը , Եզբէլէն՝ Եզբէլեանց տոհմը , Եփրամէն՝ Եփրամեանց տոհմը , Սափանէն՝ Սափանեանց տոհմը , Ոփիմէն՝ Ոփիմեանց տոհմը Էլու- : Ու Բաղային որդիները՝ Երեդ ու Վասաման էին . Երեդէն՝ Երեդեանց տոհմը , Վասամանէն՝ Վասամանեանց
- 41 տոհմը Էլու- : Բենիամինի որդիքը՝ իրենց տոհ-

\*Սուտաղայէն՝ Լըրանեանց

մերովը ասոնք են . ու անոնց համբուածները՝  
քառսուներջինգ հազար վեց հարիւր հոգի էին :

Վանի որդիքը՝ իրենց տոհմերովը ասոնք են . 42

Սուհամէն՝ Սուհամեանց տոհմը էլ . Վանի  
տոհմերը՝ իրենց տոհմերովը ասոնք են : Սու- 43

համեանց բոլոր տոհմերուն համբուածները՝  
վաթսուներչորս հազար չորս հարիւր հոգի էին :

Էսերի որդիքը՝ իրենց տոհմերովը . Յեմնա- 44

յէն՝ Յեմնայեանց տոհմը , Յեսուիէն՝ Յեսուի-  
եանց տոհմը , Բարիայէն՝ Բարիայեանց տոհմը :

Բարիայի որդւոցմէ . Վերերէն՝ Վերերեանց 45  
տոհմը , Սեղքիէլէն՝ Սեղքիէլեանց տոհմը է-

լու : Ու Էսերին աղջկանը անունը՝ Սարա էր : 46

Էսերի որդւոցը տոհմերը ասոնք են . անոնց 47  
համբուածները՝ յիսունուիրեք հազար չորս հա-

րիւր հոգի էին :

Սեփթաղիմի որդիքը՝ իրենց տոհմերովը . 48

Յասիէլէն՝ Յասիէլեանց տոհմը , Պօնիէն՝ Պօ-  
նիեանց տոհմը , Յասերէն՝ Յասերեանց տոհմը , 49

Սիլլեմէն՝ Սիլլեմեանց տոհմը էլ . Սեփթա- 50

ղիմի տոհմերը՝ իրենց տոհմերովը ասոնք են . ու  
անոնց համբուածները՝ քառսուներջինգ հազար

չորս հարիւր հոգի էին :

Էս է Իսրայէլի որդւոցը գումարը . վեց հար- 51  
իւր ու մէկ հազար հօթը հարիւր երեսուն :

Եւ Տէրը Սովսէօին հետ խօսեցաւ , ու ը- 52

սաւ . Ըն երկիրը ժառանգութեան համար՝ ա- 53

սոնց բաժնուի իրենց անուններուն թուոյն նա-  
յելով : Ըստուր եղողին՝ ժառանգութիւնը շատ 54

- տաս , ու քիչէոր եզողին՝ ժառանգութիւնը քիչ  
 տաս . ամէն մէկուն իր համբանքին նայելով
- 55 ժառանգութիւն տրուի : Բայց երկիրը վիճակով  
 կով բաժնուի , ու իրենց նահապետաց ցեղերուն
- 56 անուններուն նայելով ժառանգեն : Հատուորի  
 ու քիչէորի մէջ՝ ժառանգութիւնը վիճակով  
 բաժնուի :
- 57 Ու Ղ և տացիներուն համբուածները իրենց  
 տոհմերովը ասոնք են . Գերսոնէն՝ Գերսոնեանց  
 տոհմը , Կահաթէն՝ Կահաթեանց տոհմը , Սե-
- 58 րարիէն՝ Սերարիեանց տոհմը էլ : Գեւ-  
 տացւոց տոհմերը ասոնք են . Գորենեանց տոհ-  
 մը , Քերրոնեանց տոհմը , Սողիեանց տոհմը ,
- Սուսիեանց տոհմը , ու Կորխեանց տոհմը : Եւ
- 59 Կահաթ՝ Ըմրամը ծնաւ : Ու Ըմրամին կնկա-  
 նը անունը Ղ և իին աղջիկը Յոքարեդն էր ,  
 որուն հարսը զանիկայ ծնաւ Ղ և իին՝ Եգիպտոսի  
 մէջ . ու անիկայ Ըմրամին ծնաւ Ըհարօնը ու
- 60 Սոլսէսը և անոնց Սարիամ քոյրը : Եւ Ը-  
 հարօնին՝ Կադաբը և Ըբիուդը , Եղիազարը ու
- 61 Իթամարը ծնան : Բայց Կադաբը ու Ըբիու-  
 դը՝ Տէրօջը առջևը օտար կրակ մտուցած ա-
- 62 տեննին մեռան : Ըբդ՝ ասոնցմէ համբուածները  
 քսանուիրեք հազար հօգի էին . ամէնքն ալ մէկ  
 ամսականէն վեր եզող արուններն էին . քանզի  
 անոնք Իսրայէլի որդւոցը հետ չհամբուեցան ,  
 Իսրայէլի որդւոց մէջը՝ անոնց ժառանգութիւն  
 չտրուելուն համար :
- 63 Սովարի դաշտերուն մէջը՝ Երիքովի Դէմոյը

Յորդանանու մօտ՝ Խորայէլի որդիքը հաշիւը  
անցունող Մովսէսին ու Եղիազար քահանային  
համբաճները ասոնք են : Եւ ասոնց մէջը բնա՛ւ 64  
մէկ մարդ մը չկար ան Խորայէլի որդւոցը համ-  
բուածներէն՝ որոնք որ Մովսէսը ու Եհարօն  
քահանան Սինայի անապատին մէջը համբեցին :  
Քանզի Տէրը անոնց համար ըսեր էր որ ան- 65  
պատճառ անապատին մէջը պիտի մեռնին . և  
Յերօնէին որդին Քաղէբէն ու Վաւէին որ-  
դին Յեսուէն ՚ի զատ՝ ուրիշ մարդ մը չմնաց  
անոնցմէ :

## Գ Լ . Ի Է

1 Սալպաադին աղջիկները ժառանգութեան իրաւունքի հա-  
մար կըբողոքեն : 6 Ճառանգութեան օրէնքը : 12 Մովսէս  
իմանալով թէ ինքը պիտի մեռնի, կազաչէ Տերօջը որ իրեն  
յաջորդ մը ընտրէ : 18 Յեսուէն կընտրուի Մովսէսի յաջոր-  
դը ըսալու :

Ու Յովսէփի որդին Սանասէին տոհմերէն՝ 1  
Սանասէին որդիին Մաքիթին որդիին Քա-  
ղաադին որդիին Ոփերին որդիին Սալպաադին  
աղջիկները մօտեցան . ու աղջիկներուն անուն-  
ները ասոնք են . Մաալա , Վուա , Եզզա ,  
Մեղքա ու Թերօա : Եսոնք Մովսէսին և Ե- 2  
ղիազար քահանային՝ ու իշխաններուն և բո-  
լոր ժողովուրդին առջևը՝ ժողովքի խորանին  
դուռը կայնելով՝ ըսին . Սեր հայքը անապա- 3  
տին մէջը մեռաւ . ու անիկայ Տէրօջը զէմ

- Հաւքուած Աորխի ժողովուրդին մէջը չէր • Բայց  
 անիկայ իրեն մեղացը մէջ մնաւ , ու տղաք-  
 4 ներ չուներ : Ինչո՞ւ համար մեր հօրը անու-  
 նը իր տոհմին մէջէն պիտի վերնայ՝ տղայ չու-  
 նենալուն համար • մեզի ժառանգութիւն տուէք  
 5 մեր հօրը եղբարցը մէջ : Ու Մովսէս անոնց  
 6 դատաստանը Տէրոջը առջևը դրաւ : Եւ Տէրը  
 7 Մովսէսին հետ խօսեցաւ , ու ըսաւ • Սալպաս-  
 դին աղջիկները շխտակ խօսեցան , անպատճառ ա-  
 նոնց ժառանգութեան կալուածք տաս իրենց հօ-  
 8 թիւնը իրենց վրայ դարձունես : Եւ Իսրայէլի  
 որդւոցը հետ խօսիս՝ ու ըսես • Թէ որ մէկ  
 մարդ մը մնանի , ու տղայ չունենայ , անոր ժա-  
 ռանգութիւնը անոր աղջկանը վրայ դարձունէք :  
 9 Եւ թէ որ անիկայ աղջիկ ալ չունենայ , անա-  
 տենը անոր ժառանգութիւնը՝ իր եղբայրներուն  
 10 տաք : Եւ թէ որ եղբայրներ ալ չունենայ ,  
 անատենը անոր ժառանգութիւնը իր հօրեղ-  
 11 բայրներուն տաք : Ու թէ որ հօրեղբայրներ ալ  
 չունենայ , անոր ժառանգութիւնը՝ անոր տոհ-  
 մին մէջը իր ամենէն մօտ ազգականին տաք • ու  
 ան ըլլայ անոր ժառանգը • Եւ ասիկայ՝ Իս-  
 րայէլի որդւոցը՝ դատաստանի կանոնը ըլլայ ,  
 ինչպէս որ Տէրը Մովսէսին պատուիրեց :  
 12 Ետքը Տէրը Մովսէսին ըսաւ • Ըս Ըրա-  
 րիմի լեռը ելիր , ու տես ան երկիրը , որն որ  
 13 Իսրայէլի որդւոցը պիտի տամ : Եւ ան տես-  
 նալէդ կտքը , դուն ալ քու ժողովուրդիդ պիտի

խառնուիս, ինչպէս որ Ահարոն եղբայրդ խառնուեցաւ : Արովհետեւ դուք իմ հրամանիս գէտ 14  
կեցաք Ահիս անապատին մէջը՝ ժողովուրդին հա-  
կառակութիւն ըրած ատենը, ու անոնց առջևը  
ան ջուրին քովը զիս շփառաւորեցիք : (Ասի-  
կայ՝ Ահիս անապատին մէջը՝ Աագէտին Մերիպա-  
շի ջուրն է :)

Եւ Մովսէս՝ Տէրոջը հետ խօսելով՝ ըսաւ . 15  
Տէրը՝ ամէն մարդոց հոգիներուն Աստուածը, 16  
աս ժողովուրդիս վրայ մարդ մը կեցունէ : Ար 17  
անիկայ՝ անոնց առջևէն ելլէ ու մտնէ, ու անոնք  
հանէ ու սոցունէ, որպէս զի Տէրոջը ժողո-  
վուրդը՝ անհովիւ ոչխարներուն պէս չըլլայ :

Եւ Տէրը Մովսէսին ըսաւ . Ե՛ս քեզի՝ Աա- 18  
ւէին տղան Յեսուն՝ որուն վրայ Հողի կայ, 19  
ու անոր վրայ ձեռքդ դիր : Եւ անիկայ Աղիա- 19  
զար քահանային ու բոլոր ժողովուրդին առջևը  
կայնեցուր, և անոնց աչքին առջևը աներ պա-  
տուիրէ : Ու քու փառքեդ անոր վրայ դիր 20  
որպէս զի Ասրայէլի որդւոց բոլոր ժողովքը՝ 20  
Էսր Նազանգութիւն ընեն : Եւ անիկայ Աղիա- 21  
զար քահանային առջևը պիտի կայնի, ու Տէ- 21  
րոջը առջևը Աւրիմին իրաւունքովը անոր հար-  
ցունէ՝, անոր խօսքովը պիտի ելլեն, ու անոր  
խօսքովը մտնեն, ինքք՝ և իրեն հետ Ասրայէլի  
որդիքը ու բոլոր ժողովքը : Եւ Մովսէս անանկ 22  
ըրաւ, ինչպէս որ Տէրը անոր հրամայեց էր .  
ասաւ Յեսուն, ու անիկայ Աղիազար Քահա-

\*Աս (Աղիազարը) Տէրոջը առջևը Աւրիմին իրաւունքովը  
անոր համար հարցունէ .



նային ու բոլոր ժողովուրդին առջևը կայնեցուց :  
 23 Եւ իրեն ձեռքերը անոր վրայ դնելով՝ անոր  
 պատուէր տուաւ , ինչպէ՛ս որ Տէրը Մովսէ-  
 սին ձեռքովը ըսեր էր :

Գ Լ . Ի Ը

1 Եւնձաները որոշուած ժամանակին պիտի մատուցուէին :  
 3 Մշտնջենաւոր ողջակէզը : 9 Շարաթ օրերուն , 11 Մճ-  
 սագլուխներուն , 16 Գատկին , 26 և երախայրիներուն  
 ժամանակին մատուցուելու զսհերը :

1 Եւ Տէրը Մովսէսին հետ խօսելով՝ ըսաւ .  
 2 Իսրայէլի որդւոցը պատուիրես ու անոնց ը-  
 սես . Իմ անուշահոտ պատարագներուս ընծա-  
 յուած հացը՝ որոշուած ատենին ինձի մատուցու-  
 3 նելու զգուշութիւն ընէք : Ու անոնց ըսես .  
 Եսոնք են ան պատարագները՝ որ Տէրօջը պիտի  
 մատուցանէք . Օրը երկու հատ մէկ տարեկան  
 անարատ գառներ մշտնջենաւոր ողջակէզ ըլլան :  
 4 Մէկ գառը՝ առտուանց մատուցանես , ու մէ-  
 5 կող գառը՝ իրիկուան դէմ մատուցանես : Եւ  
 մէկ արդուին տասներորդ մասը բարակ ալեւրով՝  
 հացի ընծայ ընես , որն որ շաղուած պիտի ըլ-  
 6 լայ՝ հիմննի մը քառորդ ծեծուած կզով : Եսի-  
 կայ՝ Սինա լեռան վրայ \* սահմանուած մշտնջե-  
 նաւոր ողջակէզ է , Տէրօջը համար անուշահոտ  
 7 պատարագ ըլլալու : Ու անոր թափելու նուէ-  
 րը ամէն մէկ գառին համար՝ հիմննի մը չորրորդ

\* Ե՛ր . եղած .

մասը ըլլայ • ու սուրբ տեղը՝ օղին թափելու  
 նուէր ընես Տէրօջը : Աւ մէկալ գառը՝ իրի- 8  
 կուան դէմ մատուցանես • ու առտուան հացի  
 ընծային ու անոր թափելու նուէրին պէս ը-  
 նես , Տէրօջը անուշահոտ պատարագ ըլլալը :

Բայց շաբաթ օրը՝ մէկ տարեկան երկու ան- 9  
 արատ գառն՝ ու եզով շաղուած երկու տասա-  
 նորդ բարակ պլիւր հացի ընծայի համար , ու  
 անոր թափելու նուէրը յիշել : Եւ 10  
 «իւր» մշանջենաւոր ողջակէզէն ու անոր թա-  
 փելու նուէրէն ՚ի զատ , ամէն շաբաթ օրուան  
 ողջակէզը յիշել : ըլլայ :

Աւ ձեր ամիսներուն սկիզբը՝ Տէրօջը ողջակէզ 11  
 մատուցանէք , երկու զուարակ՝ մէկ խոյ՝ ու եօ-  
 թը հատ մէկ տարեկան անարատ գառներ : Աւ 12  
 «ձեռն» մէկ զուարակին համար՝ եզով շաղուած իրեք  
 տասանորդ բարակ պլիւր հացի ընծայ , և մէկ  
 խոյին համար՝ եզով շաղուած երկու տասանորդ  
 բարակ պլիւր հացի ընծայ , Ու «ձեռն» մէկ գա- 13  
 ուին համար՝ եզով շաղուած մէյմէկ տասանորդ  
 բարակ պլիւր հացի ընծայ հարս-ցանէք , Տէրօ-  
 ջը ողջակէզ «անուշահոտ պատարագ ըլլալը» :  
 Աւ անոնց թափելու նուէրը՝ «ձեռն» մէկ զուար- 14  
 կին համար կէս հիմէն , ու մէկ խոյին համար՝  
 հիմենին երրորդ մասը , և «ձեռն» մէկ գառին հա-  
 մար՝ հիմենին չորրորդ մասը գինի պիտի ըլլայ •  
 սակիոյ՝ տարիին ամիսներուն համար՝ ամէն ամիս  
 հարս-ցանէլը ողջակէզն է : Աւ «մշանջենաւոր 15

\* Աւ մշանջենաւոր ողջակէզէն ՚ի զատ մեզի պատարագի  
 համար՝ այժեքէն նոխազ մը իր թափելու նուէրովք մեկտեղ  
 մատուցուի Տէրօջը :

ողջակեղէնն ու անոր թափելու նուէրէն 'ի զատ ,  
մեղքի պատարագի համար՝ այժերէն նոխազ մը  
մատուցուի Տէրոջը՝ :

- 16 Եւ առաջին ամսուն չորեքտասաներորդ օրը՝  
17 զատիկ է Տէրոջը : Աւ ան ամսուն շնորհատասան-  
երորդ օրը տօն է . եօթը օր բաղարջ ուտուի :  
18 Առաջին օրը՝ սուրբ ժողով պիտի ըլլայ , բնաւ  
19 ծառայական գործ մը չընէք : Եւ դուք Տէրո-  
ջը պատարագ ու ողջակեղ մատուցանէք , երկու  
զուարակ՝ մէկ խոյ՝ ու եօթը հատ մէկ տա-  
րեկան գառներ , ու անոնք անարատ ըլլան ձե-  
20 ղի : Եւ անոնց հացի ընծան՝ եղով շաղուած բա-  
րակ պիւր ըլլայ . ան մէկ զուարակին համար՝  
իրեք տասանորդ , ու մէկ խոյին համար՝ երկու  
21 տասանորդ մատուցանէք : Եօթը գառներէն՝  
ան մէկ զառին համար՝ մէյմէկ տասանորդ մա-  
22 տուցանէք : Եւ ձեզի քառութիւն ընելու հա-  
մար՝ այժերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագ  
23 հարստացանէք : Ասոնք՝ մշտնջենաւոր ողջակեղ ե-  
ղով առտուան ողջակեղներէն 'ի զատ պիտի մա-  
24 տուցանէք : Ան եօթը օրերուն ամէն մէկ օրը՝  
ասոնց պէս Տէրոջը անուշահոտ պատարագ ը-  
նէք . \*ասիկայ՝ մշտնջենաւոր ողջակեղէն՝ ու  
անոր թափելու նուէրէն 'ի զատ պիտի մատու-  
25 ցուի՝ : Եւ եօթներորդ օրը՝ սուրբ ժողով պի-  
տի ըլլայ ձեզի , ու բնաւ ծառայական գործ  
մը պիտի չընէք :

\* Ան մշտնջենաւոր ողջակեղէն 'ի զատ՝ ասիկայ ու ասոր  
թափելու նուէրը պիտի մատուցուի :

Եւ երախայրիներուն օրը՝ երբոր ձեր շա- 26  
 բաթներուն ասանն մէջ Տէրոջը նոր հացի ըն-  
 ծայ կրմատուցանէք, սուրբ ժողով ըլլայ ձեզի.  
 բնաւ ծառայական գործ մը չընէք. Աւ Տէրո- 27  
 ջը անուշահոտ ողջակեզի համար՝ երկու զուա-  
 րակ, մէկ խոյ ու մէկ տարեկան եօթը հատ  
 գառներ մատուցանէք: Եւ անոնց հացի ընծան՝ 28  
 ասան մէկ զուարակին համար իրեք տասանորդ,  
 ու մէկ խոյին համար երկու տասանորդ, Եւ- 29  
 թը գառներէն՝ ասան մէկ գառին համար մէկ-  
 մէկ տասանորդ՝ եզով շաղուած բարակ սիւր  
 հարս-ցանէք. Եւ ձեզի քառութիւն ընելու 30  
 համար՝ այծերէն մէկ նոխաղ հարս-ցանէք:  
 Աշանջենաւոր ողջակեզէն ու անոր հացի ընծայէն 31  
 ՚ի զատ, ասանն ու իրենց թափելու նուէրովը  
 մատուցանէք. Եւ անարատ ըլլան ձեզի:

## Գ Լ. Ի Թ

1 Գող հնչեցունելու տօնին, 7 քառութեան օրին, 13 Տա-  
 զուարահարաց տօնին ու թը օրերուն գոհերը:

Եւ եօթներորդ ամսուն մէջ՝ ամսուն առաջին 1  
 օրը՝ սուրբ ժողով ըլլայ ձեզի, ու բնաւ  
 ծառայական գործ մը չընէք. Գող հնչեցունե-  
 լու օր ըլլայ ձեզի: Եւ Տէրոջը անուշահոտ 2  
 ողջակեզի համար՝ մէկ զուարակ, մէկ խոյ, ու  
 եօթը հատ մէկ տարեկան անսրատ գառներ մա-  
 տուցանէք: Եւ անոնց հացի ընծան՝ մէկ զուա- 3

- բակին համար՝ իրեք տասանորդ , ու մէկ խո-
- 4 յին համար՝ երկու տասանորդ , Աւ Եօթը գառ-  
ներէն՝ մէն մէկ գառին համար՝ մէյմէկ տասա-
- 5 նորդ՝ եղով շաղուած բարակ ալիւր ըլլայ : Աւ  
ձեզի քառութիւն ընելու համար՝ այծերէն մէկ
- 6 նոխազ մեղքի պատարագ *հարս-ցանէ* : Աւն՝  
Տէրօջը անուշահոտ պատարագ *հարս-ցանէ* ,  
ամամնւտի ողջակէզը ու անոր հացի ընծան , և  
մշանջենաւոր ողջակէզը ու անոր հացի ընծան ,  
և ասոնց թափելու նուէրները իրենց կանոնովը  
*հարս-ցանէ* ՚ի գատ :
- 7 Աւ աս Եօթներորդ ամսուն տասներորդ օրը՝  
սուրբ Ժողով ըլլայ ձեզի . ու ձեր անձը պիտի  
խոնարհեցունէք , ու ամենեկին գործ մը չընէք :
- 8 Աւ Տէրօջը անուշահոտ ողջակէզի համար՝ մէկ  
զուարակ , մէկ խոյ , ու մէկ տարեկան Եօթը  
գառն մատուցանէք . — անոնք ձեզի անարատ
- 9 ըլլան : Աւ անոնց հացի ընծան՝ մէկ զուա-  
բակին համար իրեք տասանորդ , ու մէկ խոյին
- 10 համար երկու տասանորդ , Աօթը գառներէն՝  
մէն մէկ գառին համար՝ մէյմէկ տասանորդ՝ և-
- 11 զով շաղուած բարակ ալիւր ըլլայ : Աւ այծե-  
րէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագ *հարս-ցանէ* .  
բաց ՚ի քառութեան օրը *հարս-ցանէ* մեղքի պա-  
տարագէն , ու մշանջենաւոր ողջակէզէն և ա-
- 12 նոր հացի ընծայէն , ու անոնց թափելու նուէր-  
ներէն :
- 12 Աւ Եօթներորդ ամսուն նոխասաներորդ օ-  
րը՝ սուրբ Ժողով ըլլայ ձեզի . ամենեկին ծառ

ապական գործ մը չընէք . ու Տէրոջը եօթը օր  
 տօն պահէք : Աւ Տէրոջը ողջակէզ -- անու- 13  
 շահոտ պատարագի համար՝ տասնիրեք զուարակ ,  
 երկու խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս գառն  
 մատուցանէք . անոնք անարատ պիտի ըլնան :  
 Աւ անոնց հացի ընծան՝ տասնիրեք զուարակնե- 14  
 րէն՝ ան մէկ զուարակին համար իրեք տասա-  
 նորդ , ու երկու խոյերէն՝ ան մէկ խոյին հա-  
 մար երկու տասանորդ , Աւ տասնըչորս գառ- 15  
 ներէն՝ ան մէկ գառին համար մէյմէկ տա-  
 սանորդ՝ եզով շաղուած բարակ ալիւր ըլնայ : Ու 16  
 այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագ հարս-  
 նէ , բաց ՚ի մշտնջենաւոր ողջակէզէն՝ ու անոր  
 հացի ընծայէն՝ և թափելու նուէրէն :

Աւ երկրորդ օրը՝ տասներկու զուարակ , եր- 17  
 կու խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս անա-  
 բատ գառն հարսնէ : Աւ անոնց հացի ըն- 18  
 ծան՝ ու թափելու նուէրները՝ զուարակնե-  
 րուն՝ խոյերուն ու գառներուն համար , իրենց  
 թիւին նայելով՝ ըստ օրինի յերի ըլնան : Ու 19  
 այծերէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագ հարս-  
 նէ , բաց ՚ի մշտնջենաւոր ողջակէզէն՝ և ա-  
 նոր հացի ընծայէն՝ ու թափելու նուէրներէն :

Աւ երրորդ օրը՝ տասնըմէկ զուարակ , երկու 20  
 խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս անարատ  
 գառն հարսնէ : Աւ անոնց հացի ընծան՝ 21  
 ու թափելու նուէրները՝ զուարակներուն , խոյե-  
 րուն ու գառներուն համար , իրենց թիւին  
 նայելով՝ ըստ օրինի յերի ըլնան : Ու մէկ 22

- նոխազ՝ մեղքի պատարագ *հարս-դանձ* , բաց ՚ի մշտնջինաւոր ողջակէզէն , և անոր հացի ընծայէն ու թափելու նուէրէն :
- 23 Եւ չորրորդ օրը՝ տասը զուարակ , երկու խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս անարատ զառն
- 24 *հարս-դանձ* : Ընոնց հացի ընծան՝ ու թափելու նուէրները՝ զուարակներուն , խոյերուն ու զառներուն համար , իրենց թիւին նայելով՝ ըստ
- 25 օրինի *դէրիւն* ըլլան : Ու այժեբէն մէկ նոխազ՝ մեղքի պատարագ *հարս-դանձ* , բաց ՚ի մշտնջինաւոր ողջակէզէն , և անոր հացի ընծայէն , ու թափելու նուէրէն :
- 26 Եւ հինգերորդ օրը՝ ինը զուարակ , երկու խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս անարատ
- 27 զառն *հարս-դանձ* : Եւ անոնց հացի ընծան՝ ու թափելու նուէրները՝ զուարակներուն , խոյերուն ու զառներուն համար , իրենց թիւին
- 28 նայելով՝ ըստ օրինի *դէրիւն* ըլլան : Ու մէկ նոխազ՝ մեղքի պատարագ *հարս-դանձ* , բաց ՚ի մշտնջինաւոր ողջակէզէն , և անոր հացի ընծայէն , ու թափելու ուէրէն :
- 29 Եւ վեցերորդ օրը՝ ութը զուարակ , երկու խոյ , ու մէկ տարեկան տասնըչորս անարատ
- 30 զառն *հարս-դանձ* : Եւ անոնց հացի ընծան՝ ու թափելու նուէրները՝ զուարակներուն , խոյերուն ու զառներուն համար , իրենց թիւին
- 31 նայելով՝ ըստ օրինի *դէրիւն* ըլլան : Ու մէկ նոխազ՝ մեղքի պատարագ *հարս-դանձ* , բաց ՚ի մշտնջինաւոր ողջակէզէն , և անոր հացի ընծայէն , ու թափելու նուէրէն :

Եւ եօթներորդ օրը՝ եօթը զուարակ , երկու 32  
 խոյ , ու մէկ տարեկան տանըչորս անարատ  
 գառն իսրայէլէ : Եւ անոնց հացի ընծան՝ 33  
 ու թափելու նուէրները՝ զուարակներուն , խո-  
 յերուն ու գառներուն համար , իրենց թիւին  
 նայելով՝ ըստ օրինի ուրիշ ըլլան : Ու մէկ նո- 34  
 խազ՝ մեղքի պատարագ իսրայէլէ , բաց ՚ի  
 մշանջնետարողջակէզէն , և անոր հացի ընծա-  
 յէն , ու թափելու նուէրէն :

Ու թերորդ օրը՝ ձեզի տօնախմբութիւն ըլ- 35  
 լայ , ու բնաւ ծառայական գործ մը չընէք : Եւ 36  
 Տէրոջը՝ ողջակէզ « անուշահոտ պատարագի  
 համար՝ մէկ զուարակ , մէկ խոյ , ու մէկ տա-  
 րեկան եօթը անարատ գառն մատուցանէք : Եւ 37  
 անոնց հացի ընծան՝ ու թափելու նուէրները՝  
 զուարակին , խոյին ու գառներուն համար , ի-  
 րենց թիւին նայելով՝ ըստ օրինի ուրիշ ըլլան :  
 Ու մէկ նոխազ՝ մեղքի պատարագ իսրայէլէ , 38  
 բաց ՚ի մշանջնետարողջակէզէն , և անոր հա-  
 ցի ընծայէն , ու թափելու նուէրէն :

Չեր տօներուն օրերը՝ ասոնք մատուցանէք 39  
 Տէրոջը . ձեր ուխտերէն , ձեր կամաւոր ըն-  
 ծաներէն , ողջակէզներէն , հացի ընծաներէն ,  
 թափելու նուէրներէն ու խաղաղութեան զօ-  
 հերէն ՚ի զատ :

Եւ Մովսէս՝ Իսրայէլի որդւոցը պատմեց ան 40  
 ամենը՝ որ Տէրը Մովսէսին պատուիրեր էր :



Գ Լ . Լ

1 Աւխտերը կատարելու պարտաւորութիւնը : 3 Աշտը կան մը ,  
 6 կնիկան մը , 9 որբէվարի կամ արձակուածի մը ուխտե-  
 րուն վրայով :

1 Աւ Սուլէս Իսրայէլի որդւոցը ցեղերու իշ-  
 2 խաններուն հետ խօսեցաւ՝ ու ըսաւ . Տէ-  
 րոջը պատուիրած հրամանը աս է . (Թէ որ մէկ  
 մարդ մը Տէրոջը ուխտ ընէ , կամ երդում ը-  
 նելով իր անձը կապելու ըլլայ , իր խօսքը պա-  
 րապ չհանէ . բոլոր իր բերնէն ելածին պէս  
 ընէ :

3 Աւ թէ որ մէկ կնիկ մը՝ Տէրոջը ուխտ ընէ ,  
 ու իր մանկութեան ատենը՝ իր հօրը տանը մէջ  
 4 ղինքը կապելու ըլլայ , Աւ անոր հայրը՝ անոր  
 ուխտը ու անձին վրայ կապած կապը լսէ՝ և  
 բան մը չըսէ , ան ատենը անոր բոլոր ուխտերը  
 կը հաստատուին , ու անձին վրայ կապած բոլոր  
 5 կապերն ալ կը հաստատուին : Բայց թէ որ ա-  
 նոր հայրը՝ իր լսած օրը զանիկայ արգիլէ , ան  
 ատենը բոլոր անոր ուխտերը , ու անձին վրայ  
 կապած կապերը անվաւեր կը ընեն . և Տէրը ա-  
 նոր թողութիւն պիտի տայ . քանզի անոր  
 հայրը անիկայ արգիլեց :

6 Աւ թէ որ կարգուելէն ետքը՝ ուխտ ընէ ,  
 կամ իրեն շրթունքներէն իր անձը կապող խօսք  
 7 մը ելլայ , Աւ անոր էրիկը լսէ , և լսած օրը՝  
 անոր բան մը չըսէ , անատենը անոր ուխտերը

կըհաստատուին , ու իր անձին վրայ կապած  
 կապն ալ հաստատ կըմն : Բայց թէ որ անոր 8  
 էրիկը՝ իր լսած օրը անիկայ արդիլէ , անատե-  
 նը բոլոր անոր ուխտը , ու իր անձին վրայ կա-  
 պած կապերը , ու շրթունքներէն ելած խօսքե-  
 րը անվաւեր կըլլան . և Տէրը անոր թողութիւն  
 պիտի տայ :

Բայց որբէվարի ու արձրկուած կնկան ուխ- 9  
 տը՝ ու իր անձին վրայ կապած ինչ և իցէ կա-  
 պը՝ իրեն վրայ հաստատ կըմնայ : Ալ թէ որ 10  
 անիկայ՝ իր էրիանը տունին մէջը ուխտ ըրած  
 էր , կամ երդումով իր անձին վրայ կապ կա-  
 պեր էր , Ու իր էրիկը՝ լսելով , բան մը ը- 11  
 սած չէր և զանիկայ արդիլած չէր , անա-  
 տենը անոր բոլոր ուխտերը կըհաստատուին , ու  
 իր անձին վրայ կապած կապերը հաստատ կըմնան :  
 Բայց թէ որ անոր էրիկը՝ իր լսած օրը զանոնք 12  
 խափանեց , անորէն ուխտ ընելու ու իր անձը  
 կապելու համար՝ անոր բերնէն ելած բոլոր խօս-  
 քերը անվաւեր կըլլան . անպէ՛ս անոր էրիկը խա-  
 փանեց . և Տէրը անոր թողութիւն պիտի տայ :  
 Կնիւն ինչ ամէն ուխտը՝ ու անձը խոնարհեցու- 13  
 նելու համար ըրած կապող երդումը՝ անոր է-  
 րիկը կրնայ հաստատել , ու անոր էրիկը կրնայ  
 խափանել : Ալ թէ որ անոր էրիկը օրէ օր 14  
 անոր բան մը չըսէ , ան ատենը անոր ամէն  
 ուխտերը՝ ու վրան եղած կապերը կըհաստա-  
 տէ . իր լսած օրը անոր բան մը չըսելուն հա-  
 մար՝ զանոնք հաստատած կըլլայ : Բայց թէ որ 15

լսած օրէն ետքը՝ մէկ կերպով մը խափանէ անոնք , ան ատենը ինքը պիտի քաշէ անոր մեղքը :  
 16 Էրկան մը ու իր կնկանը մէջ , և հօր մը ու մանկութեան ատենը իր հօրը տունը բնակող աղջկանը մէջ պահուելու կանոնները ասոնք են , որոնք Տէրը Սովսէսին պատուիրեց :

Գ Լ . Լ Ը

1 Մադիանացիք պատերազմի մէջ կը յաղթուին , ու Ռադամն ալ կը մեռցուի : 13 Սովսէս զօրաց իշխաններուն կը բողոքի Մադիանացոց կնիկները ողջ պահելուն համար : 19 Օխնու որներուն , գերիներուն և աւարին մարտելուն կերպը : 25 Եւարը բաժնելուն կերպը : 48 Տէրօջը նուիրուած կամաւոր բնծաները :

1 Եւ Տէրը խօսեցաւ Սովսէսին՝ ու ըսաւ . Մա-  
 2 դիանացիներէն՝ Իսրայէլի որդւոց վրէժը առնես . ու ետքը քու ժողովուրդիդ խառնուիս :  
 3 Եւ Սովսէս ժողովուրդին խօսեցաւ՝ ու ըսաւ . Պատերազմի համար մարդիկներ պատրաստեցէք ձեզմէ , որ Մադիամու վրայ երթան , ու Մա-  
 4 դիամէն Տէրօջը վրէժը առնեն : Իսրայէլի բոլոր ցեղերուն ամէն մէկէն հազարական մարդ պա-  
 5 տերազմի խրկէք : Եւ Իսրայէլի ամէն մէկ ցեղին հազարաւորներէն՝ հազարական հարի տրուեցաւ . այսինքն՝ տասներկու հազար հոգի՝ պատե-  
 6 րազմի համար պատրաստուած : Եւ Սովսէս պատերազմի խրկեց անոնք . ամէն մէկ ցեղէն հազարական հարի . ու անոնց հետը Եղիազար քա-

Հանային տղան Ֆենեհէսը պատերազմի էր: 5,  
 որուն ձեռքն էին սուրբ անօթները, ու ազգ-  
 արարութեան փողերը: Եւ Մազիանացւոց զէմ 7  
 պատերազմեցան, ինչպէս որ Տէրը Մովսէսին  
 հրամայեց էր, ու անոնց բոլոր էրիկ մարգիկներ-  
 րը մեռցուցին: Եւ անոնց սպանուածներուն հետ 8  
 Մազիամու թագաւորներն ալ՝ Եւին, Բոկոմը,  
 Սուրը, Ուրը և Ուօբէն՝ Մազիամու հինգ թա-  
 գաւորները սպաննեցին, ու Բէոյրի որդին Բա-  
 ղամը սրով մեռցուցին: Եւ Խարայէլի որդի- 9  
 քը՝ Մազիանացւոց կնիկները ու տղաքները գե-  
 թի առին, ու անոնց բոլոր անասունները, և  
 ոչխարները, ու ստացուածքը իժալեցին: Եւ ա- 10  
 նոնց բնակած բոլոր քաղաքները ու բոլոր բեր-  
 գերը կրակով այրեցին: Եւ բոլոր աւարը ու 11  
 բոլոր կողոպուտը առին՝ մարդէ մինչև անա-  
 սուն: Եւ գերիները ու կողոպուտը և աւա- 12  
 րը Մովսէսին՝ Եղիազար քահանային՝ ու Խա-  
 րայէլի որդւոցը ժողովքին բանակը բերին, որ  
 Երիքովի Դ՛՛՛յոցը՝ Յարգանսնու մօտ Մովսէի  
 դաշտերուն մէջն էր:

Եւ Մովսէսը ու Եղիազար քահանան՝ և ժո- 13  
 ղովարդին բոլոր իշխանները բանակէն ելան զա-  
 նոնք զիմաւորելու: Եւ Մովսէս՝ պատերազմէն 14  
 գարձող զօրաց իշխաններուն, հազարապետնե-  
 րուն ու հարիւրապետներուն սրդողեցաւ: Եւ 15  
 Մովսէս անոնց ըսաւ. Երգեօք բոլոր կնիկները  
 ո՞ղջ թողուցիք: Եհա՛ Բաղասամին \*խրատովը 16

- ատոնք պատճառ եղան , որ Իսրայէլի որդիքը  
 Տէրոջը գէժ մեղանչեցին փողովքի գործին մէջ .  
 և Տէրոջը ժողովքին մէջ ան ժանտոխտին
- 17 Հարուածը եղաւ : Ուստի Հիմա տղաքներէն՝ ա-  
 մէն արուն մնացուցէք . ու բոլոր կնիկները՝ որ  
 էրիկ մարդ գիտցած են արուի Հետ պառկելով՝
- 18 մնացուցէք : Եւ կնիկներէն՝ բոլոր ան մանկա-  
 Հասակ աղջիկները՝ որ էրիկ մարդ գիտցած չեն  
 արուի Հետ չպառկելով՝ անոնք ձեզի ողջ թո-
- 19 ղուցէք : Եւ դուք եօթը օր բանակին դուրսը  
 մնացէք . սիլ որ սպանութիւն ըրեր է , ու մե-  
 ռածի դաշեր է , երբորդ օրը՝ ու եօթներորդ  
 օրը թող սրբուի՝ թէ դուք և թէ ձեր գերի-
- 20 ները : Եւ ամէն զգեստը՝ ու ամէն մաշկեղէն  
 ամանը՝ և այժի մաղէ շինած բանը՝ ու ամէն  
 փայտեղէն ամանը սրբէք :
- 21 Եւ Եղիազար քահանան՝ պատերազմի գացող  
 զօրքերուն ըսաւ . Եւհա՛ ստիկոյ է ան օրէնքին
- 22 կանոնը , որ Տէրը Մովսէսին Հրամայեց : Միայն  
 ոսկին , արծաթը , պղինձը , երկաթը , անագը
- 23 ու կապարը , Եւմէն կրակը մանելու բանը՝ կը-  
 րակէ անցունէք , ու սրբուի . բայց մաքրու-  
 թեան ջրով սրբուի . Սակայն կրակը չմանելու
- 24 բանը՝ ջուրէ անցունէք : Ու եօթներորդ օրը՝  
 ձեր զգեստները լուար՝ և սրբուիք , ու ետքը  
 բանակին մէջը մանաք :
- 25 Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ու ըսաւ .
- 26 Իուն՝ Եղիազար քահանային ու ժողովքին իշ-  
 խաններուն Հետ , ձեր առած կողոպուտին դու-

մարը ան , մարդէ մինչև անասուն : Եւ ան 27  
 կողոպուտը՝ պատերազմի գացող պատերազմող-  
 ներուն ու բոլոր ժողովքին հաւասար:պէս բաժ-  
 նես : Եւ պատերազմի գացող պատերազմող- 28  
 ներէն Տէրօջը հասը առնես . հինգ հարիւրէն  
 մէկը՝ թէ մարդիկներէն , թէ արջառններէն ,  
 թէ էշներէն և թէ ոչխարներէն : Լ. հասը 29  
 անոնց կէս բաժինէն պիտի առնես , ու Եղիազար  
 քահանային տաս՝ իբրև Տէրօջը ընծայ : Եւ 30  
 Խորայէլի որդւոցը կէս բաժինէն՝ յիսունէն մէկը  
 առնես , թէ մարդերէն , թէ արջառններէն ,  
 թէ էշներէն , թէ ոչխարներէն , և թէ ամէն  
 անասուններէն . ու անոնք Տէրօջը խորանին  
 պահպանութիւնը ընող Ղ Լտացիներուն տաս :  
 Եւ Սովսէսը ու Եղիազար քահանան՝ Տէրօջը 31  
 Սովսէսին հրամայածին պէս ըրին : Եւ կողո- 32  
 պուտը՝ այսինչն պատերազմող զօրքին առած  
 աւարին \* գումարը աս էր . վեց հարիւր եօ-  
 թանասունը հինգ հազար ոչխար , Լօթանա- 33  
 սունուերկու հազար արջառ : Ու վաթսունը մէկ 34  
 հազար էշ : Եւ մարդիկներէն՝ էրիկ մարդու 35  
 անկողինը չգիտցող կնիկներուն ամէնը՝ երսուն-  
 ուերկու հազար հոգի էին :

Եւ պատերազմի գացողներուն աւարին կէսը՝ 36  
 իրեք հարիւր երսունուեօթը հազար հինգ հա-  
 րիւր ոչխար էր : Ու ոչխարներէն՝ Տէրօջը հասը՝ 37  
 վեց հարիւր եօթանասունը հինգ եղու : Եւ 38  
 արջառները երսունը վեց հազար Եւ անոնց-

\* Վաս՝ մնացորդը , հաս բազմութիւնը

- մէ Տէրոջը հասը՝ եօթանասունուերկու արջու  
 39 արջ : Ու էշերը՝ երսուն հազար հինգ հա-  
 րիւր ւլլուլլ՝ անոնցմէ Տէրոջը հասը՝ վաթսունը-  
 40 մէկ էշ էր : Աւ մարդիկները՝ տանըվեց  
 հազար հոգի ւլլուլլ, անոնցմէ Տէրոջը հասը՝  
 երսունուերկու հոգի էր :
- 41 Աւ Մովսէս Տէրոջը նուիրուած հասը Աղիա-  
 զար քահանային տուաւ , ինչպէս որ Տէրը  
 Մովսէսին հրամայեր էր :
- 42 Աւ Խորայէլի որդւոցը կէս բաժինէն ալ՝ որն  
 որ Մովսէս պատերազմողներէն զատեր էր ,
- 43 Տէրոջը հասը տուաւ : Աւ ժողովքին կէս բա-  
 ժինը՝ իրեք հարիւր երսունուեօթը հազար հինգ  
 44 հարիւր ոչխար , Արսունըվեց հազար արջառ ,
- 45 Երսուն հազար հինգ հարիւր էշ , (46) Ու տասնը-  
 47 վեց հազար հոգի էր : Աւ Մովսէս՝ Խորայէլի  
 որդւոց կէս բաժինէն՝ թէ մարդէն , թէ անա-  
 տանէն , յիսունին մէկ բաժինը առնելով , անի-  
 կայ Տէրոջը խորանին պահպանութիւնը ընող  
 Ղևտայիներուն տուաւ , ինչպէս որ Տէրը Մով-  
 սէսին հրամայեր էր :
- 48 Աւ զօրքին գունդերուն վերակոցսաները՝  
 այսինքն հազարապետները ու հարիւրապետ-  
 49 ները Մովսէսին մօտեցան . Ու Մովսէսին ը-  
 սին . Օրատաներնիդ՝ մեր ձեռքին տակը պա-  
 տերազմողներուն գումարը առինք , ու մեզմէ  
 50 մարդ մը պակաս չէ : Ուստի ամէն մէկերնիս  
 ինչ որ գտանք՝ Տէրոջը ընծայ բերինք՝ ոսկիէ  
 ամաններ , շղթաներ , ասպրանջաններ , մասնի-

ներ , օղեր ու կամարածե գօտիներ : որ Տէրօջը առջևը մեր հոգիներուն քառութիւն ընենք : Եւ Մովսէսը ու Եղիազար քահանան 51  
անոնցմէ ոսկին առին , ամէնն ալ բանուած բաներ էին : Եւ հազարապետներէն ու հարիւրապետներէն Տէրօջը մատուցուած ընծային բոլոր ոսկին՝ տասնըվեց հազար եօթը հարիւր յիսուն սիկլ էր : Պատերազմողներուն ամէն մէկը՝ իրեն 53  
համար կողոպուտ առեր էր : Եւ Մովսէսը 54  
ու Եղիազար քահանան՝ հազարապետներէն ու հարիւրապետներէն ոսկին առին , և ժողովքի խորանը տարին , որ Տէրօջը առջևը Խորայէլի որդւոցը յիշատակը ըլլայ :

## Գ Լ . Լ Բ

1 Ռուբենի և Վազի որդիքը՝ Յորդանանու անդ իի կողմը իրենց ժառանգութիւնը ըլլալ կուղեն : 6 Մովսէս զանոնք կը յանդիմանէ , 16 բայց կը հաճի ան պայմանով՝ որ իրենց եղբայրներուն օգնեն պատերազմի մէջ : 33 Մովսէս ան երկերը կուտայ անոնց , 39 որոնք պատերազմելով՝ անոր կը տիրեն :

Եւ Ռուբենի որդիքը ու Վազի որդիքը խիստ 1  
չատ անասուններ ունէին . ուստի Յազերի երկիրը ու Վազաադի երկիրը տեսնելով որ ահա ան տեղը անասուն պահելու յարմար տեղ մըն է , 2  
Ռուբենի որդիքը ու Վազի որդիքը գացին , 2  
ու Մովսէսին , Եղիազար քահանային , և ժողովքի իշխաններուն հետ խօսելով՝ ըսին . Ըտարովթը , 3  
Իերոնը , Յազերը , Կամրան , Եսերոնը , Ե- 4



- ղէտղէն , Սերաման , Կարաւը ու Բէանը , ոյ-  
 ինն՝ Տէրօջը Խորայէլի ժողովքին առջևը զար-  
 կած երկիրը , անասուն ու՛նէլու՛ յարմար երկիր  
 մըն է , ու քու ծառաներդ անասուններ ունին :
- 5 Եւ ըսին . Թէ որ մենք քու առջևդ շնորհք գը-  
 տանք , աս երկիրը քու ծառաներուդ կալուած-  
 քի համար տրուի . մեզ Յորդանանէն մի՛ ան-  
 ցուներ :
- 6 Եւ Մովսէս Վաղի որդւոցը՝ ու Ռուբենի  
 որդւոցը ըսաւ . Չեր եղբայրները պատերազմի  
 7 երթան , ու դուք աս տեղս նստի՛ք : Եւ ին-  
 չո՛ւ համար Խորայէլի որդւոցը սիրտը կըթուլցու-  
 նէք , որ չանցնին ան երկիրը՝ որն որ Տէրը  
 8 անոնց տուած է : Չեր հայրերն ալ ասանկ ը-  
 րին , երբոր անոնք Կադէսբառնեայէն խրկեցի  
 9 երկիրը լատեսելու համար : Քանզի անոնք մինչև  
 Եսթողի ձորը ելան , ու երկիրը լատեսեցին , և  
 Խորայէլի որդւոցը սիրտը թուլցուցին որ չը-  
 մանան ան երկիրը , որն որ Տէրը անոնց  
 10 տուեր էր : Եւ նոյն օրը Տէրօջը բարկութիւնը  
 բորբոքեցաւ , ու երգում՝ ընելով՝ ըսաւ . Ե-  
 11 զիպտոսէն ելած մարդիկները՝ քսան տարուը-  
 նէ վեր եղողները՝ բնաւ պիտի չտեսնան ան եր-  
 կիրը , որուն համար Եբրահամին , Իսահակին  
 ու Յակոբին երգում ըրի տալու . քանզի բոլոր  
 12 սրտով ինձի չնազանդեցան , բաց ՚ի Կենէզեան  
 Յեփոնէի որդին Քաղեբէն , ու Կաւէի որդին  
 Յեսուէն . որոնք որ Տէրօջը կատարեալապէս  
 13 նազանդ եղան : Եւ Տէրօջը բարկութիւնը

Իսրայէլի վրայ բորբոքեցաւ , ու անոնք քառասուն տարի անապատին մէջը պտըտցուց . մինչև որ Տէրոջը առջևը չարութիւն ընող ան ազգը բուրովին բնաջինջ եղաւ : Եւ ահա դուք ձեր 14  
 Հայրերուն տեղը անցաք , մեղաւոր մարդոց զաւակներուն պէս , որ Տէրոջը սատիկ բարկութիւնը Իսրայէլին վրայ նորէն աւելցունէք : Այսն զի՝ թէ որ դուք անորմէ խտորիք , ան 15  
 ալ նորէն աս ժողովուրդը անապատին մէջ պիտի ձգէ . ու բոլոր աս ժողովուրդին կորստեանը պատճառ պիտի ըլլաք :

Եւ անոնք մտնեցան անոր ու ըսին . Մենք աս 16  
 տեղս մեր անասուններուն համար փարփաններ , ու մեր ընտանիքներուն համար քաղաքներ շինենք : Բայց մենք զէնքերնիս առնենք , ու շուտով Իս- 17  
 րայէլի որդւոցը առջևէն կրթանք , մինչև որ անոնք իրենց տեղերը տանինք . և մեր ընտանիքը պարսպաւոր քաղաքներու մէջ բնակին , երկրիս բնակիչներուն պատճառաւր : Աւ մին- 18  
 չև որ Իսրայէլի որդւոց ամէն մէկը իր ժառանգութիւնը շտառանգէ , մենք մեր տուները չդառնանք : Իսկ մենք Յորդանանու ան դիի 19  
 կողմը անոնց հետ ժառանգութիւն պիտի չառնենք . ինչու որ մեր ժառանգութիւնը՝ Յորդանանու աս դիի կողմը դէպի արևելք ինկած է :

Եւ Մովսէս ըսաւ անոնց . Թե որ աս բանը 20  
 ընէք , ու Տէրոջը առջևը պատերազմի համար վրանիդ զէնք առնէք , Եւ Տէրոջը առջևը՝ դուք 21  
 ամէնքդ ալ զէնքերով Յորդանանէն անցնիք ,

- մինչև որ Անիկայ իրեն թշնամիները իր առջևէն  
 22 վարնառէ, Եւ ան երկիրը Տէրոջը առջևը նուա-  
 ճի, անկից ետքը երբօր ետ դառնաք, Տէրոջը  
 առջևը՝ ու Խորայէլին առջևը անմեղ պիտի ըլ-  
 23 լաք. և աս երկիրը՝ Տէրոջը առջևը ձեզի կա-  
 24 լուածք ըլլայ: Բայց թէ որ այսպէս չընէք,  
 ահա Տէրոջը դէմ մեղք գործեցիք. ու գիտ-  
 24 ցէք որ՝ ձեր մեղքը ձեզ պիտի գանայ: Չեր  
 ընտանիքներուն համար քաղաքներ, ու ձեր հօ-  
 տերուն համար փարախներ շինեցէք, ու ձեր  
 բերնէն ելածը ըրէք:
- 25 Եւ Վազի որդիքը՝ ու Ուրբնի որդիքը խօ-  
 սեցան Մովսէսին՝ ըսելով. Ծառաներդ՝ մեր  
 26 տիրոջը պատուիրածին պէս պիտի ընենք: Մեր  
 զաւկըները, մեր կնիկները, մեր հօտերը ու բո-  
 լոր մեր անասունները՝ հոս Վաղասաղի քաղաքնե-  
 27 րուն մէջը մնան: Բայց ծառաներդ՝ մեր տի-  
 րոջը ըսածին պէս, ամէնքս ալ գունդ գունդ  
 պատրաստուինք ու Տէրոջը առջևէն երթանք  
 պատերազմի համար:
- 28 Ան ատենը Մովսէս՝ Եղիազար քահանային  
 ու Վառէի տղուն Յեսուին, և Խորայէլի որդւոցը  
 ցեղերուն նահապետութեանց իշխաններուն աս  
 29 պատուէրը տուաւ, Եւ Մովսէս ըսաւ անոնց.  
 Թէ որ Վազի որդիքը՝ ու Ուրբնի որդիքը  
 Տէրոջը առջևը՝ ամէնքն ալ պատերազմի համար  
 պատրաստուած՝ ձեզի հետ Յորդանանէն անց-  
 նին, ու ան երկիրը ձեր առջևը նուաճի, ան  
 ատենը Վաղասաղին երկիրը անոնց կալուածք

տաք • Բայց թէ որ պատրաստուած ձեզի հետ<sup>30</sup>  
 չանցնին , անոնց կալուածքը ձեզի հետ Վանա-  
 նացոց երկրին մէջը ըլլայ : Իսկ Վազի որդի-<sup>31</sup>  
 քը և Ռուբենի որդիքը պատասխան տուին ու  
 ըսին • Տէրը՝ քու ծառաներուդ ինչպէս որ պա-  
 տուիրեց , անանկ պիտի ընենք : Մենք պատ-<sup>32</sup>  
 րաստուած՝ Տէրոջը առջևէն Վանանացոց եր-  
 կիրը պիտի անցնինք • բայց մեր ժառանգու-  
 թեան կ'սլուածքը Յորդանանու սազիի կողմը<sup>33</sup>  
 ըլլայ : Ուստի Մովսէս անոնց , այսինչն Վազի  
 որդիներուն , ու Ռուբենի որդիներուն , և  
 Յովսէփեան Մանասէին կէս ցէլին տուաւ Ըմօր-  
 հացոց Սեհոն թագաւորին թագաւորութիւնը ,  
 ու Բասանի Ովզ թագաւորին թագաւորու-  
 թիւնը , երկիրը՝ իրեն քաղաքներովը՝ ու քա-  
 ղաքներուն բոլորաիքը եղած սահմաններովը :

Եւ Վազի որդիքը՝ պարտաւոր քաղաքներ<sup>34</sup>  
 շինեցին , այսինչն Վերոնը , Ըտարովիքը ու Ը-  
 րոէքը , Եւ Ըտրօթը , Սովիսրը , Յազերը ,<sup>35</sup>  
 ու Յօգբէհան , Եւ Բեթնամրան ու Բեթա-<sup>36</sup>  
 բանը , և փարախներ ալ շինեցին :

Ռուբենի որդիքն ալ Եսերոնը , Եղէտղէն<sup>37</sup>  
 ու Կարիաթեմը շինեցին : Ու Եսարաւը և Բէ-<sup>38</sup>  
 էլմօնը , որ ասոնց անունները փոխեցին • ու  
 Սերաման • ու իրենց շինած քաղաքներուն<sup>39</sup> զրէնց  
 անունները՝ զրին :

Եւ Մանասէեան Մաքէրին որդիքը Վաղաագ<sup>39</sup>  
 գացին , ու առին անիկայ , և անոր մէջը Բնու-

\* Ս-ժ' (ուրիշ) անուններ

- 40 Խորհրդացիները վաճառեցին : Եւ Սոլոմոն՝  
 Գաղաազը տուաւ Սանասէեան Սաքիբին , որ  
 41 հոն բնակեցաւ : Ու Սանասէեան Յայիրը գնաց  
 անոնց գիւղաքաղաքները առաւ . ու անոնք  
 42 \* Հաւոթ Յայիր՝ անուանեց : Եւ Նորահը գը-  
 նաց , կանաթը ու անոր գեղերը առաւ . ու զա-  
 նոնք իրեն անունովը՝ Նորահ կոչեց :

Գ Լ . Լ Գ

1 Խորայէլացւոց իջեան ըրած քառասունուերկու տեղերուն ա-  
 նունները : 50 Աստուած կըպատուիրէ բնաջինջ ընել բոլը  
 Խանանացիները :

- 1 Սոլոմոնն ու Ըհարոնին ձեռքովը՝ Եգիպտոսի  
 երկրէն իրենց զօրքերովը ելող Խորայէլի  
 2 որդւոց իջեանները ասոնք են : Եւ Սոլոմոն՝  
 Տէրօջը հրամանովը անոնց իջեաններուն համ-  
 մատ՝ անոնց գնացքները գրեց . ու անոնց գնացք-  
 ներուն համմատ՝ անոնց իջեանները ասոնք են :  
 3 Ըռաջին ամսուն մէջը՝ այսինչն առաջին ամսուն  
 շնգետասաներորդ օրը՝ Ուամեսսէէն չուեցին .  
 զատկին հետեեալ օրը Խորայէլի որդիքը՝ բարձ-  
 րացեալ ձեռքով ելան բոլոր Եգիպտացւոց աշ-  
 4 քին առջևը : Ու Եգիպտացիները իրենց հե-  
 ները կըթաղէին , քանզի Տէրը անոնց բոլոր  
 անդրանիկները ջարդեց . և Տէրը անոնց աս-  
 տուածներուն վրայ դատաստան ըրաւ :  
 5 Եւ Խորայէլի որդիքը՝ Ուամեսսէէն չուելով՝  
 Սոկթովթ իջեան ըրին :  
 \* Գ Յայիրի գիւղաքաղաքները

Ու Սոկրովթէն չուելով՝ անապատին ծայրը 6  
 եղած Ոթումը իջեան ըրին :

Եւ Ոթումէն չուելով՝ դէպի Փխիրոթ դար- 7  
 ձան , որ Բէեզսեփոնին գիմացն է , ու Սագ-  
 դողին առջևը իջեան ըրին :

Եւ Փխիրոթին առջևէն չուելով , ու ծո- 8  
 վին մէջէն անցնելով՝ անապատը եկան . և Ո-  
 թումի անապատին մէջը՝ իրեք օրուան ճամբայ  
 քալելով՝ Սեռայ իջեան ըրին :

Եւ Սեռայէն չուելով՝ Եղիմը եկան . ու 9  
 Եղիմի մէջ տասներկու ջուրի աղբիւր՝ ու եօ-  
 թանասուն արմաւենի կային . ու հոն իջեան  
 ըրին :

Եւ Եղիմէն չուելով՝ Կարմիր ծովին քովը ի- 10  
 ջեան ըրին :

Եւ կարմիր ծովէն չուելով՝ Սինի անապատը 11  
 իջեան ըրին :

Եւ Սինի անապատէն չուելով՝ Դափկա ի- 12  
 ջեան ըրին :

Եւ Դափկայէն չուելով՝ Եղուսը իջեան ը- 13  
 ըրին :

Ու Եղուսէն չուելով՝ Ռափիդիմը իջեան ը- 14  
 ըրին . ու ան տեղը՝ Ժողովուրդին համար խմելու  
 ջուր չկար :

Եւ Ռափիդիմէն չուելով՝ Սինայի անապատը 15  
 իջեան ըրին :

Ու Սինայի անապատէն չուելով՝ Արբոթ 16  
 չաթթավան իջեան ըրին :

Եւ Արբոթ չաթթավայէն չուելով՝ Ըսե- 17  
 րօթը իջեան ըրին :

- 18 Ու Ասերօթէն չուելով՝ Ռաթաման իջևան  
ըրին :
- 19 Եւ Ռաթամայէն չուելով՝ Ռեմօնփարէսը ի-  
ջևան ըրին :
- 20 Ու Ռեմօնփարեսէն չուելով՝ Լեբնան իջևան  
ըրին :
- 21 Եւ Լեբնայէն չուելով՝ Ռէսսան իջևան ըրին :
- 22 Ու Ռէսսային չուելով՝ Աէէլաթան իջևան  
ըրին :
- 23 Եւ Աէէլաթայէն չուելով՝ Սօփար լեռը ի-  
ջևան ըրին :
- 24 Ու Սօփար լեռնէն չուելով՝ Վարադաթը ի-  
ջևան ըրին :
- 25 Եւ Վարադաթէն չուելով՝ Մակեղօթը ի-  
ջևան ըրին :
- 26 Ու Մակեղօթէն չուելով՝ Տասթը իջևան  
ըրին :
- 27 Եւ Տասթէն չուելով՝ Թարան իջևան ըրին :
- 28 Ու Թարայէն չուելով՝ Մատեկան իջևան ը-  
րին :
- 29 Եւ Մատեկայէն չուելով՝ Համօնան իջևան  
ըրին :
- 30 Ու Համօնայէն չուելով՝ Մասուրութը ի-  
ջևան ըրին :
- 31 Եւ Մասուրութէն չուելով՝ Բանէյականը ի-  
ջևան ըրին :
- 32 Ու Բանէյականէն չուելով՝ Քաղզաղ լեռը  
իջևան ըրին :

Եւ Պաղգաղ լեռնէն չուելով՝ Ետէբաթան 33  
իջևան ըրին :

Ու Ետէբաթայէն չուելով՝ Երբօնը իջևան 34  
ըրին :

Ու Երբօնէն չուելով՝ Պասիոնդաբերը ի- 35  
ջևան ըրին :

Եւ Պասիոնդաբերէն չուելով՝ Սինի անասա- 36  
տը՝ այսինքն Կաղէսը իջևան ըրին :

Եւ Կաղեսէն չուելով՝ Հովր լեռը իջևան 37  
ըրին , որ Եզովմի երկրին ծայրն է : Ու Ե- 38  
հարօն քաջանան Տէրօջը հրամանովը՝ Հովր  
լեռը ելաւ , և հոն մեռաւ , Իսրայէլի որդւոցը  
Եգիպտոսի երկրէն ելլելուն քառասներորդ տա-  
րիին հինգերորդ ամսուն առաջին օրը : Եւ Եհա- 39  
րօն Հովր լեռանը վրայ մեռած ատենը՝ հարիւր  
քսանուիրեք տարեկան էր : Եւ Քանանու երկ- 40  
րին հարաւային կողմը բնակող Երազի Քանա-  
նացի թագաւորը՝ Իսրայէլի որդւոցը դալը լսեց :

Եւ Հովր լեռնէն չուելով՝ Սելմօնան իջևան 41  
ըրին :

Ու Սելմօնայէն չուելով՝ Փենովը իջևան 42  
ըրին :

Ու Փենովէն չուելով՝ Որովթը իջևան ըրին : 43

Եւ Որովթէն չուելով՝ Խէաբարիմը իջևան 44  
ըրին , Սովարի սահմանին մէջ :

Եւ Խէաբարիմէն չուելով՝ Պերօնդազը ի- 45  
ջևան ըրին :

Ու Պերօնդազէն չուելով՝ Պելմօնդէրլաթէ- 46  
մը իջևան ըրին :



- 47 Ու Գեղմոնդէբլաթեմէն չուելով՝ Նաբաւին  
 առջևը՝ Եբարիմի լեռները իջևան ըրին :
- 48 Աւ Եբարիմի լեռներէն չուելով՝ Արիքովի  
 Կէնայը՝ Յորդանանու մօտ՝ Սովարի դաշտե-  
 49 բուն մէջը իջևան ըրին : Ուստի անոնք Յոր-  
 դանանու մօտ՝ Բեթեսիմօթէն մինչև Երէլսա-  
 տիմը Սովարի դաշտերուն մէջը իջևան ըրին :
- 50 Աւ Տէրը Սովարի դաշտերուն մէջ՝ Արիքովի  
 Կէնայը Յորդանանու մօտ՝ Սովսէսին խօսեցաւ՝  
 51 ու ըսաւ . Իսրայէլի որդւոցը խօսէ , ու անոնց  
 ըսէ . Արբոր Յորդանանէն Քանանացւոց եր-  
 52 կիրը անցնիք , Ան երկրին բոլոր բնակիչները ձեր  
 առջևէն վճարնաէք , ու անոնց բոլոր պատկերա-  
 ւոր իւրօրէնքն՝ և բոլոր թափծու կուռքերը  
 կործանէք , ու անոնց բոլոր բարձր տեղերը  
 53 փլցունէք : Աւ ան երկիրը ձեր իշխանութեանը  
 տակը անցունելով՝ անոր մէջը բնակիք . քանզի  
 54 ան երկիրը ձեզի տուի որ ժառանգէք : Աւ ան  
 երկիրը վիճակով ժառանգէք ձեր ասոճմբուն հա-  
 մեմատ . շատուր կողոյն ժառանգութիւնը շատ  
 պիտի տաք , ու քիչուր կողոյն ժառանգութիւնը  
 քիչ պիտի տաք . վիճակը որուն որ կլայ , ա-  
 նոր ըլլայ իւրեւոր . ձեր նախնեացը ցեղերուն  
 55 նայելով ժառանգէք : Բայց թէ որ ան երկ-  
 րին բնակիչները ձեր առջևէն չվճարնաէք , ան  
 առենը անոնցմէ ողջ թողուցածնիդ՝ ձեր աչքե-  
 բուն փուշեր , ու ձեր կողերուն տատակներ պի-  
 տի ըլլան . ու ձեր բնակած երկրին մէջ՝ ձեզի  
 56 թշնամութիւն պիտի ընեն : Աւ ըլլալու է որ

ինչ որ անոնց ընկու մտածեր էի , նոյնը պիտի ընեմ ձեզի :

## Գ Լ . Լ Գ

1 Երկրին սազմանները : 16 Երկիրը բաժնելու համար որոշուած մարդոց անունները :

Եւ Տէրը Մովսէսին խօսեցաւ՝ ու ըսաւ . 1  
Իսրայէլի որդւոցը պատուիրես , ու անոնց 2  
ըսես . Երբոր դուք Քանանու երկիրը մտնաք ,  
որ ձեզի ժառանգութիւն պիտի ըլլայ ան , ոյս  
էնչն՝ Քանանու երկիրը իրեն սազմաններովը : Եւ 3  
ատենը ձեր հարաւային սազմանը՝ Սինի անապատէն մինչև Եդովմ ըլլայ , և ձեր հարաւային սազմանը արևելքէն՝ աղի ծովուն ծայրէն սկսի .  
Ու ձեր հարաւային սազմանը Եկրաբիմի սա 4  
րը պտրտելով՝ մինչև Սին հասնի , ու անկից  
ելլելով՝ Կադէսբարոնեային հարաւային կողմը  
երթայ , ու Եսարագարէն ելլելով՝ Եսեմոնը  
անցնի . Եւ Եսեմոնէն մինչև Եգիպտացոց ձորը 5  
պտրտելով՝ ծովուն մէջը լմրննայ սազմանը :

Իսկ ձեր արևմտեան սազմանը՝ մեծ ծովը ըլ 6  
լայ . ձեզի արևմտեան սազման ան ըլլայ :

Եւ ձեր հիւսիսային կողմի սազմանը աս ըլլայ . 7  
մեծ ծովէն մինչև Հովր լեռը նշանակէք . Հովր 8  
լեռնէն մինչև Լմաթը նշանակէք , ու ան սազմանին ծայրը Սեդադի մէջ լմրննայ : Եւ ան սազմանը մինչև Օկփրօնը ելլայ , ու անոր ծայրը Եսարենանի մէջ լմրննայ . ձեր հիւսիսային սազմանը ան ըլլայ :

- 10 Եւ ձեր արևելեան սահմանին համար , Ե-
- 11 սարենանէն մինչև Սեպիամ նշանակէք . Ու աս  
սահմանը՝ Եյինին արևելեան կողմէն՝ Սեպիամէն  
Ռերդաթա իջնայ . ու աս սահմանը՝ արևելից  
կողմէն իջնալով՝ մինչև Քեներէթ ծովին ե-
- 12 ղերքը հասնի : Եւ աս սահմանը Յորդանան  
իջնայ , ու ծայրը աղի ծովին մէջը վերջանայ : Եւ  
երկիրը՝ իր շրջակայ սահմաններովը ձեզի բլայ :
- 13 Եւ Սովսէս Իսրայէլի որդւոցը պատուի-  
րեց , ու ըսաւ . Եսիկայ ան երկիրն է՝ որն  
որ դուք վիճակով պիտի ժառանգէք , ինչպէս  
որ Տէրը հրամայեց ինն ու կէս ցեղի տալու անի-
- 14 կայ : Քանզի Ռուբենի որդւոցը ցեղը՝ իրենց հայ-  
րերուն տուներուն նայելով , ու Գադի որդւոցը  
ցեղը՝ իրենց հայրերուն տուներուն նայելով , և  
Սանասէին կէս ցեղը իրենց ժառանգութիւնը
- 15 առին : Եւ երկուք ու կէս ցեղը իրենց ժառան-  
գութիւնը առին Երիքովի գլխոյն՝ Յորդանանու  
աս գիծի կողմը՝ դէպի արևելք :
- 16 Եւ Տէրը Սովսէսին խօսեցաւ՝ ու ըսաւ .
- 17 Եսոնք են ան մարդիկներուն անունները՝ որոնք  
երկիրը ժառանգութեան համար ձեզի պիտի  
բաժնեն . Եզիազար քահանան՝ ու Կաւէին որ-
- 18 դին Յեսուն . Եւ ամէն ցեղէն ալ մէյմէկ իշխան
- 19 առնէք , ան երկիրը բաժնելու : Եւ ան մար-  
դիկներուն անունները ասոնք են . Յուդայի
- 20 ցեղէն՝ Յեփոնէին որդին Վաղէբը , Ըմաւօնի  
որդւոցը ցեղէն՝ Եմիուդին որդին Սամուէլը ,
- 21 Լենիամինի ցեղէն՝ Վասղօնին որդին Եղադը :

Կանի որդւոցը ցեղէն իշխան՝ Եգղիին որդին<sup>22</sup>  
 Բուկքին , Յովսէփին որդիներէն՝ Սանասէի<sup>23</sup>  
 որդւոցը ցեղէն իշխան՝ Եփօտին որդին Ընիէլը ,  
 Ու Եփրեմի որդւոցը ցեղէն իշխան՝ Սաբաթային<sup>24</sup>  
 որդին Կամուէլը , Եւ Օչարուղոնի որդւոցը ցեղէն<sup>25</sup>  
 իշխան՝ Վառնակի որդին Եղիսափանը , Եւ Ի-<sup>26</sup>  
 սաքարի որդւոցը ցեղէն իշխան՝ Ոզիային որդին  
 Փաղտիէլը , Եսերի որդւոցը ցեղէն իշխան՝ Սե-<sup>27</sup>  
 լոմին որդին Եփօլարը , Ու Եսեփիթաղիմի որդ-<sup>28</sup>  
 ւոցը ցեղէն իշխան՝ Եմիուդին որդին Փաղա-  
 յէլը : Եսոնք են ա՛ն Խաղդէնէլը՝ որոնց Տէրը<sup>29</sup>  
 Հրամայեց , որ Քանանու երկիրը Խորայէլի որդ-  
 ւոցը բաժնեն :

## Գ Լ • Լ Ե

1 Դ Էտացւոց տրուելու քառասունուութը քաղաքները ի-  
 բնեց արուարձաններովը : 6 Եսոնցմէ վեցը ազատանի քա-  
 ղաքներ պիտի ըլլային : 9 Մարդասպանութեան համար օ-  
 թէնքներ : 31 Մարդասպանը փրկանքով մը պիտի շղա-  
 տուէր :

Եւ Տէրը Սովարի դաշտերուն մէջ՝ Երիքո- 1  
 վի շէնոցը Յորդանանու մօտ՝ Սովսէփին  
 խօսեցաւ՝ ու ըսաւ . Խորայէլի որդւոցը պա- 2  
 տուիրէ՛ որ իրենց ժառանգութեան կալուածնե-  
 րէն՝ Դ Էտացւոց քաղաքներ տան՝ որ հոն բնա-  
 կին . ու քաղաքներուն բոլորտիքը կղած ա-  
 բուարձաններն ալ Դ Էտացւոց տան : Եւ քա- 3  
 ղաքները բնակութեան համար ըլլան անոնց , ու

- արուարձանները՝ անոնց արջառներուն , \* Հօտե-  
 4 բուն ու բոլոր անասուններուն համար ըլլան : Այլ  
 կտացւոց տալու քաղաքներնուդ արուարձան-  
 ները՝ քաղաքին պարիսպէն դուրս շուրջանակի  
 հազարական կանգուն ընդարձակութիւնս :  
 5 Աւտի քաղաքին դուրսը՝ արեւելեան կողմէն երկու  
 հազար կանգուն , հարաւային կողմէն՝ երկու  
 հազար կանգուն , արեւմտեան կողմէն՝ երկու հա-  
 զար կանգուն , ու հիւսիսային կողմէն՝ երկու հա-  
 զար կանգուն չափէք . և քաղաքը մէջ տեղը պիտի  
 ըլլայ . անոնց քաղաքներուն արուարձանները ա-  
 6 սանկ ըլլան : Եւ այլ կտաւոց տալու քաղաքներ-  
 նուդ մէջը՝ վեց հատը ապաստանի քաղաք ըլ-  
 7 ւայ , որ սպաննողը հոն փախչի . ու ասոնցմէ զատ՝  
 անոնց քառասունուերկու քաղաք տաք : \* Այլ կտաց-  
 ւոց տալու քաղաքներնուդ ամէնը՝ քառասունու-  
 ութը քաղաք ըլլայ . անոնք իրենց արուարձան-  
 8 ներովը \* \* : Եւ ան քաղաքները՝ որ Խորայէլի  
 որդւոցը կալուածքէն պիտի տաք , շատուոր եղո-  
 ղէն շատ , ու քիչուոր եղողէն քիչ առնէք .  
 ամէն մէկը իր առած ժառանգութեանը չափովը՝  
 իր քաղաքներէն \* Այլ կտացւոց պիտի տայ :  
 9 Եւ Տէրը Մովսէսին խօսեցաւ՝ ու ըսաւ .  
 10 Խորայէլի որդւոցը խօսիս ու անոնց ըսես . Երբոր  
 Յորդանանէն Վանանացւոց երկիրը անցնիք ,  
 11 Չեզի քաղաքներ որոշէք , որոնք ապաստանի քա-  
 ղաքներ ըլլան ձեզի , որ սխալմամբ մարդ զարնողը  
 12 ու սպաննողը հոն փախչի : Եւ ան քաղաքները

\* Եֆր . ստացուածքին

ձեզի ապաստանարան ըլլան՝ արեան վրէժխնդիր  
 եղողէն . ու սպաննողը՝ դատաստանի համար ժո-  
 ղովքին առջևը չերեցած՝ չմեռնի : Աւ ձեր տարու 13  
 քաղաքներէն վեց հատը՝ ձեզի ապաստանի քաղաք  
 ըլլայ : Վաղաքներուն իրեքը՝ Յորդանանու ա 14  
 դիի կողմը տաք . ու քաղաքներուն իրեքը՝ Վա-  
 նանացուոց երկրին մէջը տաք . և անոնք ապաս-  
 տանի քաղաքներ ըլլան : Աս վեց քաղաքները 15  
 Խորայէլի որդիներուն՝ ու օտարականին՝ և ձեր  
 մէջք բնակող պանդուխտին՝ ապաստանարան ըլ-  
 լան . որպէս զի սխալմամբ մարդ մեռցունողը  
 հոն փախչի : Աւ թէ որ մարդ մը երկաթէ 16  
 գործիքով մէկը զարնէ մեռցունէ , անիկայ սպան-  
 նող է . սպաննողը անպատճառ մեռցուի : Աամ 17  
 թէ որ մահառիթ բռնաքարով մը մէկու մը զար-  
 նէ , որ մեռնի , անիկայ սպաննող է . սպաննողը  
 անպատճառ մեռցուի : Աամ ձեռքով գործածուե- 18  
 լու փայտեղէն մահառիթ գործիքով մը զարնէ ,  
 որ մեռնի , անիկայ սպաննող է . սպաննողը ան-  
 պատճառ մեռցուի : Արեան վրէժխնդիրը սպան- 19  
 նողը մեռցունէ . երբոր անոր հանդիպի՝ թող  
 մեռցունէ անիկայ : Աամ թէ որ թշնամութեամբ 20  
 հրէ մէկը , ու խարդախութեամբ վրան բան մը  
 նետելով՝ անիկայ մեռցունելու ըլլայ , Աամ թէ 21  
 թշնամութեան պատճառաւ՝ ձեռքովը զարնէ ա-  
 նոր՝ որ մեռնի , զարնողը անպատճառ մեռցուի .  
 անիկայ սպաննող է . արեան վրէժխնդիրը երբոր  
 սպաննողին հանդիպի , զանիկայ մեռցունէ : Բայց 22  
 թէ որ յանկարծ ու առանց թշնամութեան հը-

- րէ , կամ թէ առանց խարդախութեան անոր  
 23 վրայ մէկ գործիք մը նետէ , կամ թէ՛ առանց  
 անիկայ տեսնալու , անոր վրան ո՛րև իցէ մահա-  
 ռիթ քար մը ձգէ , որ մեռնի , անիկայ անոր  
 թշնամին չըլլալով՝ անոր գէշութիւնը չուզելուն  
 24 համար , Ճողովքն ալ՝ սպաննողին ու արեան  
 վրէժխնդիրին մէջ տեղը՝ աս օրէնքներովս դա-  
 25 տաստան կտրեն : Այլ ժողովքը պիտի ազատէ  
 սպաննողը արեան վրէժխնդիրին ձեռքէն , ու զա-  
 նիկայ նորէն իր ապաւինած ապաստանի քաղա-  
 քը դարձունէ . ու անիկայ հոն պիտի բնակի ,  
 մինչև որ սուրբ եղով օծուած քահանայապետը  
 26 մեռնի : Բայց թէ որ սպաննողը՝ իր ապաւի-  
 նած ապաստանի քաղաքին սահմանէն դուրս  
 27 ելլայ , Ու արեան վրէժխնդիրը՝ ապաստանի  
 քաղաքին սահմանէն դուրս գտնալով զանիկայ ,  
 արեան վրէժխնդիրը սպաննողը մեռցունելու ըլ-  
 28 լայ , մահապարտ չսեպուի : Վանզի անիկայ իր  
 ապաստանի քաղաքը նստելու էր , մինչև որ քա-  
 հանայապետը մեռնէր . բայց քահանայապետը  
 մեռնելէն ետքը՝ սպաննողը իր կալուածքին երկիրը  
 29 դառնայ : Ահա՛ ասոնք ձեզի դատաստանի կա-  
 նոններ ըլլան , ձեր ազգերուն մէջ ու բոլոր ձեր  
 բնակութեանցը մէջ :
- 30 Ո՛վ որ մարդ կըմեռցունէ , սպաննողը վկա-  
 ներուն բերնովը մեռցուի . բայց մէկ մարդ մը  
 մեռցունելու համար , Բայն մէկ վկային վկա-  
 31 յութիւնը Բաւական չըլլայ : Այլ մահապարտ  
 սպաննողին կենացը համար՝ փրկանք չառնէք ,

քանզի անիկայ անպատճառ մեռնելու է : Ու աւ 32  
 պատանի քաղաքը փախչողին համար՝ փրկանք  
 չառնէք , որպէս զի անիկայ իր քաղաքը դառնայ  
 նստի՝ քահանայապետին մահէն առաջ : Ուստի 33  
 ձեր բնակած երկիրը չպղծէք . քանզի արիւնը  
 կը պղծէ երկիրը . ու անոր մէջը թափուած ա-  
 րիւնին համար՝ երկիրին ուրիշ բանով մը քա-  
 ւու թիւն չըլլար , բայց եթէ անիկայ թափողին  
 արիւնովը : Ուրեմն ձեր բնակած երկիրը չպղծ- 34  
 ծէք , որուն մէջ տեղը ես պիտի բնակիմ՝ .  
 քանզի Ես Տէրս կը բնակիմ Իսրայէլի որդւոց  
 մէջը :

## Ի Լ . Լ , Թ

1 Եւ Ժառանգութիւն ունեցող աղջիկը՝ 5 իր ցեղէն եղբւ մե-  
 կու մը հետ պիտի կարգուէր , 7 որ չըլլայ թէ ժառանգու-  
 թիւնը ան ցեղէն վերնայ : 10 Սալպատիւն աղջիկները՝ ի-  
 բրենց հօրեղբորորդւոցը հետ կամուսնանան :

Եւ Յովսէփի որդւոցը տոհմերէն՝ Մանասէի 1  
 որդիին Մաքիբի որդիին Պաղասադին որդւոցը  
 տոհմին իշխանները մօտեցան , ու Մովսէփին  
 առջևը՝ և Իսրայէլի որդւոցը նահապետութեանց  
 իշխաններուն առջևը խօսեցան , Ու ըսին . Տէ- 2  
 րը մեր տիրոջը հրամայեց , որ երկիրը՝ Իսրայէլի  
 որդւոցը վիճակով ժառանգութիւն տայ . ու  
 Տէրը մեր տիրոջը հրամայեց , որ մեր եղբօրը  
 Սալպատիւն ժառանգութիւնը՝ անոր աղջիկնե- 3  
 րուն տայ : Եւրդ՝ թէ որ անոնք Իսրայէլի ու-



- 1 րիչ ցեղի մը որդւոցը կնիկ ըլլան , անոնց ժա-  
 2 ոանգութիւնը մեր հայրերուն ժառանգութենէն  
 պիտի վերնայ . ու որ ցեղին մէջ որ մտնան՝ անոր  
 ժառանգութեանը պիտի խառնուի , ու մեր  
 ժառանգութեանը կիճակէն պիտի վերնայ :
- 4 Եւ Իսրայէլի որդւոցը Յորելեան տարիին ,  
 անոնց ժառանգութիւնը՝ իրենց մտած ցեղին  
 ժառանգութեանը պիտի խառնուի . ու աս կեր-  
 պով անոնց ժառանգութիւնը՝ մեր հայրերուն  
 ցեղին ժառանգութենէն պիտի վերնայ :
- 5 Եւ Մովսէս՝ Տէրոջը հրամանաւը Իսրայէլի  
 որդւոցը պատուիրեց՝ ու ըսաւ . Յովսէփին որդ-  
 6 ւոցը ցեղը շիտակ կըլսօսի : Սալպաազին աղջիկ-  
 ներուն համար՝ Տէրոջը հրամայած ու ըսած խօս-  
 քը աս է . Լնոնք՝ որու հետ որ ուզեն՝ թող  
 կարգուին . միայն թէ իրենց հօրը ցեղէն Էղ-  
 7 ղէն հետ կարգուին : Որպէս զի Իսրայէլի որդ-  
 ւոցը ժառանգութիւնը մէկ ցեղէ՝ ուրիշ ցեղ  
 չանցնի . քանզի Իսրայէլի որդւոցը ամէնքն ալ՝  
 իրենց հայրերուն ցեղին ժառանգութեանը պի-  
 8 տի յարին : Եւ ամէն աղջիկ՝ որ Իսրայէլի որդ-  
 ւոցը ցեղերուն մէջը՝ մէկ կալուածքի մը ժա-  
 ռանգ կըլլայ , իր հօրը ցեղէն եղող մէկու մը  
 հետ կարգուի , որ Իսրայէլի որդւոցը ամէնքն  
 ալ իրենց հայրերուն ժառանգութիւնը ժառան-  
 9 գեն : Եւ ժառանգութիւնը՝ մէկ ցեղէ՝ ուրիշ  
 ցեղ չանցնի . ըսյց Իսրայէլի որդւոցը ցեղե-  
 րուն ամէն մէկը իր ժառանգութեանը յարի :

Եւ Տէրը Մովսէսին ինչպէս որ հրամայեց, 10  
 Սալպաադին աղջիկները անսնկ ըրին: Քանզի 11  
 Սալպաադին աղջիկները՝ Մաալան, Թերսան,  
 Եգղան, Սեղբան ու Նուան, իրենց հօրեղբօր-  
 որդւոցը հետ կարգուեցան: Եւ Յովսէփ 12  
 եան Մանասէին որդւոցը տոհմերէն եղողներու  
 կնիկ եղան. ու անոնց ժառանգութիւնը՝ իրենց  
 հօրը ազգատոհմին մէջը մնաց:

Ըսոնք են ան պատուիրանքները ու դատաս- 13  
 տանները, որոնք որ Տէրը Մովսէի գաշտերուն  
 մէջ՝ Երիքովի շէնայը Յորդանանու մօտ՝ Մով-  
 սէսին ձեռքովը Խորայէլի որդւոցը  
 պատուիրեց:



Գ Ի Բ Բ  
Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ե Օ Ր Ի Ն Ե Ն Յ

Գ Լ Ո Ւ Խ Ե

1 Վառասաներորդ տարիին վերջը՝ Մովսէս Իսրայէլացւոց խօսելով՝ համառօտութեամբ կը պատմէ 6 Ետուճոյ խոստմունքը, 13 իշխաններ կարգելը, 19 Երկիրը լըտեսելու համար մարդ խրկելը, 3½ անոնց անհաւատութեանը պատճառով Ետուճոյ բարկութիւնը, 41 և անոնց անհնազանդութիւնը:

- 1 **Լ**ստներ են ան խօսքերը՝ որ Մովսէս բռնորդ Իսրայէլին զրուցեց Յորդանանու աս դիհ կողմը՝ անապատին մէջ՝ որ Սուֆին դիմացի դաշտը՝ փառանի, Տիփոդի, Գորբանի, Եսերօթի
- 2 ու Տիզահասպի մէջ Գեղե: (Վորերբէն մինչև կադէսբառնեայ՝ տասնըմէկ օր է՝ Սէիր լեռան
- 3 ճամբովը: ) Երդ՝ քառասներորդ տարիին մէջ՝ մետասաներորդ ամսուն առջի օրը՝ Մովսէս Իսրայէլի որդւոցը զրուցեց, ինչ որ Տէրը անոր պատուիրեր էր անոնց համար, Եսերոնի մէջ բնակող Եմօրհացւոց Սեհոն թագաւորը, և Ետուրովթի ու Եդրայինի մէջ բնակող Բասանի Ուզ
- 4 թագաւորը զարնելէն ետքը • Յորդանանու աս դիհ կողմը Մովսէս երկրին մէջը՝ Մովսէս սկսաւ աս օրէնքը յայտնել, ու ըսաւ •

Մեր՝ Տէր Եստուածը՝ Վարկերի վրայ մեզի 6  
 խօսեցաւ՝ ու ըսաւ . Ես լեռք կենայնտիդ հերիք  
 է : Գարձէ՛ք չուեցէ՛ք , ու գացէ՛ք Եմօրհասցոց 7  
 լեռք , և անոր ամէն շրջակոյց անդերը , դաշտերը ,  
 լեռները , ու հովիտները , և հարաւային կողմը , ու  
 ծովեզերքը , Վանանասցոց երկիրը , ու Լիբանա-  
 նը , մինչև մեծ գետը՝ որ Ափրատ գետն է :  
 Կայէ ան երկիրը ձեր առջևը դրի . գացէ՛ք 8  
 ու ժառանգեցէ՛ք ան երկիրը , որ Տէրը ձեր  
 հայրերուն՝ Եբրահամին՝ Իսահակին ու Յա-  
 կոբին երգում՝ ըրաւ տալու անոնց՝ ու անոնցմէ  
 ետքը անոնց զաւկըներուն :

Եւ ան ստները ես ձեզի հետ խօսեցայ՝ ու 9  
 ըսի . Աս մին սկ չեմ կրնար ձեզ տանիլ : Չեր 10  
 Տէր Եստուածը ձեզ շատցուց , և ահա՛ դուք  
 այսօր երկիրի աստղերուն չափ շատ էք : Չեր 11  
 հայրերուն Տէր Եստուածը՝ ձեր եղածէն հազա-  
 րապատիկ աւելցունէ ձեզ , ու ձեզի ըսածին պէս  
 ձեզ օրհնէ : Աս մինակ ի՛նչպէս կրնամ ձեր 12  
 նեղութիւնը՝ ձեր բեռը ու հախառակութիւն-  
 ները կրել : Գուք ձեր ցեղերէն իմաստուն ու 13  
 հանձարեղ և անուանի մարդիկներ տուէք , ու ես  
 անոնք ձեր վրայ իշխաններ կեցունեմ : Իսկ դուք 14  
 ինձի սրտասխան տուիք , ու ըսիք թէ՛ Ես  
 ըսած խօսքդ աղէկ է : Աւստի ես ձեր ցեղերուն 15  
 երևելիները՝ իմաստուն ու անուանի մարդիկնե-  
 րը առի , և անոնք ձեր վրայ տառջնորդ՝ հա-  
 զարապեա՛ զարի բապեա՛ յիսնապեա՛ տաս-  
 նապեա՛ ու ձեր ցեղերուն վերակացու դրի :

- 16 Եւ ան ատենը ձեր դատաւորներուն ալ պատուիրելով ըսի . Չեր եղբայրներուն դատերը մտիկ ըրէք , ու ամէն մարդուն դատը՝ թէ իր եղբորը հետ է եղեր և թէ օտարականի հետ ,
- 17 արդարու թեամբ դատեցէք : Գատաստանի մէջ աչառութիւն չընէք . պղտիկին՝ մեծի պէս մտիկ ընէք , բնաւ մարդու մը երեսէ չքաշուիք . քանզի դատաստանը Ետուճոյ է . ու ձեզի դժուար երեցած դատը՝ ինծի՛ խրկեցէք , որ ա-
- 18 նիկայ մտիկ ընեմ : Եւ ան ատենը նաև ձեր ամէն ընելու բաները ձեզի պատուիրեցի :
- 19 Ետքը Քորեբէն չուեցինք . ու ինչպէս որ մեր Տէր Ետուածը մեզի պատուիրեր էր , Եմօրհացուոց լեռանը ճամբովը՝ ան ձեր տեսած մեծ ու ահագին անապատէն անցանք , ու մինչև
- 20 Կադէսուրառնեայ եկանք : Եւ ձեզի ըսի . Գուք Եմօրհացուոց լեռը եկաք , որն որ մեր Տէր Ետուածը մեզի կուտայ : Կայէ՛ , քու Տէր Ետուածդ ան երկիրը քու առջևդ դրաւ . ու ինչպէս որ քու հայրերուդ Տէր Ետուածը քեզի ըսաւ , եւ անիկայ ժառանգէ՛ , մի՛ վախնար ու մի՛ զարհուրիր :
- 22 Եւ դուք ամէնքդ իմ քովս եկաք ու ինծի ըսիք . Սեզմէ առաջ մարդիկներ խրկենք , որ ան երկիրը լրտեսեն մեզի համար . ու մեզի դան պատմեն , թէ հոն ի՛նչ ճամբով պիտի ելանք ,
- 23 ու ի՛նչ քաղաքներու մէջ պիտի մտնանք : Ես խօսքը ինծի հաճոյ թուեցաւ . ձեզմէ տասներկու մարդ առի , ամէն ցեղէն մէյմէկ մարդ :

Եւ անոնք գացին լեռը ելան , ու մինչև Եփր. 24  
 զի ձորը հասան , ու անիկայ լրտեսեցին : Եւ 25  
 ան երկրին պտուղէն ձեռքերնին առնելով՝ մեզի  
 բերին . ու մեզի զուցեցին , թէ աղէկ է ան  
 երկիրը՝ որ Տէրը մեզի կուտայ : Բայց դուք 26  
 չուզեցիք ելալ , ու ձեր Տէր Եստուծոյ հրա-  
 մանին դէմ դրիք . Եւ ձեր վրաններուն մէջը 27  
 տարունջելով՝ ըսիք . Տէրը մեզ ատելուն համար՝  
 Ազիպտացուց երկրէն մեզ դուրս հանեց , որ  
 մեզ Եմօրհացուց ձեռքը մատնէ , ու մեզ կոր-  
 սընցունէ : Ուր պիտի ելանք . մեր եղբայրնե- 28  
 րը մեր սիրտերը դողացուցին , որովհետեւ ըսին .  
 Ըն ազգը մեզմէ մեծ ու բարձրահասակ է . քա-  
 ղաքները մեծ , ու մինչև երկինքը պարսպաւոր  
 են . ու հոն նաև Անակին որդիները տեսանք :  
 Եւ ձեզի ըսի . Մի՛ զարհուրիք , ու անոնցմէ մի՛ 29  
 վախնաք : Չեր Տէր Եստուածը՝ որ ձեր առ- 30  
 ջևէն կերթայ , անիկայ ձեզի համար պիտի պա-  
 տերազմի , ինչպէս որ Ազիպտոսի մէջ ձեր աչ-  
 քին առջևը ձեզի ըրաւ : Ու անապատին մէջն 31  
 ալ տեսար որ , մէկ հայր մը իր զաւակը ինտոր  
 կրտսնի , քու Տէր Եստուածդ ալ՝ բոլոր քու  
 քալած ճամբաներուդ մէջը՝ մինչև աս տեղս քեզ  
 անանկ տարաւ : Եւ ասով ալ ձեր Տէր Ես- 32  
 տուծոյն չհաւատացիք , Որ անիկայ ճամբուն 33  
 մէջը ձեր առջևէն կերթար՝ ձեզի իջևանելու  
 տեղ փնտռելու համար , զիշերը կրակի մէջ՝ եր-  
 թալու ճամբանիդ ձեզի ցուցընելու համար , ու  
 ցորեկն ալ ամպի մէջ : Եւ Տէրը ձեր խօսքե- 34

- իուն ձայնը լսելով՝ բարկացաւ , ու երդումք ը-  
 35 նելով՝ ըսաւ . Ես մարդիկներէն՝ աս անօրէն  
 ազգէն բնաւ մարդ մը պիտի չտեսնայ ան բարի  
 երկիրը՝ որն որ անոնց հայրերուն տալու երդումք  
 36 ըրի . Բայց միայն Յեփոնէին որդին Քաղէբը  
 պիտի տեսնայ ան . ու անոր կոխած երկիրը՝ ի-  
 բրնն ու իր որդւոցը պիտի տամ . որովհետեւ  
 37 անիկայ Տէրոջը կատարելապէս հետեւեցաւ : Չե-  
 զի համար Տէրը ինծի ալ բարկացաւ՝ ու ըսաւ .  
 38 Իունն ալ հոն պիտի չմանաս : Եւլ քու սպա-  
 սաւորդ Մաւէի որդին Յեսուն՝ անիկայ հոն  
 պիտի մտնայ . զօրացուր անիկայ . վասն զի ան  
 երկիրը՝ անիկայ պիտի ժառանգեցունէ Խորայէ-  
 39 լին : Եւ ան ձեր պզտիկ որդիները՝ որոնց հա-  
 մար կըսէիք թէ աւար պիտի ըլլան , ու ան ձեր  
 որդիները՝ որ այսօր աղէկը ու գէշը չեն ճանչնար ,  
 հոն անոնք պիտի մտնան . անոնց պիտի տամ  
 40 ան երկիրը , ու անոնք պիտի ժառանգեն : Բայց  
 դուք նա դարձէք , ու Կարմիր ծովին ճամբա-  
 41 յէն՝ անսպասը չուեցէք : Ետքը դուք պատաս-  
 խան տուիք , ու ինծի ըսիք . Մենք Տէրոջը  
 առջևը մեզք գործեցինք . մենք պիտի կըլանք  
 պատերազմինք , ինչպէս որ մեր Տէր Եստուածը  
 պատուիրեց . ու ամէն մէկերնիդ պատերազմա-  
 կան գէնքը տունելով՝ պատրաստութիւն տե-  
 42 սաք՝ լեռը ելլալու : Եւ Տէրը ինծի ըսաւ . Ե-  
 նոնց ըսէ՛ Մի՛ ելլաք ու մի՛ պատերազմիք .  
 քանզի ես ձեր մէջը չեմ . չըլլայ որ ձեր թշնա-

\* Կա՛մ հաւքուեցաք , իւ՛մ թէ՛թեամուտութիւն ըրիք

միներուն առջևը ջարդուիք : Ես ալ ձեզի ըսի , 43  
բայց դուք մտիկ չըրիք , ու Տէրոջը խօսքին  
դէմ դրիք . և յամառութիւն ընելով՝ լեռը  
ելաք : Աւ ան լեռանը վրայ բնակող Եմօրհա- 44  
ցիները՝ մեղուներու պէս ձեր դէմը ելլալով՝ ձեզ  
հալածեցին , ու Սէիրի մէջ մինչև Հօրմա ձեզ  
զարկին : Եւ դառնալով Տէրոջը առջևը լա- 45  
ցիք . սակայն Տէրը ձեր ձայներ չսեց , ու ձե-  
զի ականջ չդրաւ : Եւ կադեսի մէջ շատ օրեր 46  
կեցաք , որչափ օրեր որ հոն կեցաք :

## ԳԼ . Բ

1 Մովսէս իր խօսքը շարունակելով՝ կրպատէ թէ Եստուած  
ինչպէս արգիլեց Եդոմացւոց , 9 Մովսէսացւոց , 17 և Եմ-  
մնացւոց հետ պատերազմ՝ ընելը : 24 Եմօրհացւոց Սեհոն  
թագաւորին յազթուելը :

1 Են ատներ ետ դարձանք , ու կարմիր ծովին  
2 ճամբայէն՝ անապատը գացինք , ինչպէս որ  
Տէրը ինձի ըսեր էր . ու շատ օրեր Սէիր լե-  
3 ռը ստորակցանք : Եւ Տէրը ինձի խօսեցաւ՝ ու ը-  
4 սաւ . Եւ հերիք է ատ լեռը պտըտելնիդ , հիւսի-  
5 սային կողմը դարձէք : Եւ ժողովուրդին պա-  
տուիրէ՛ ու ըսէ . Ինչք հիմա Սէիր բնակող ձեր  
կողարցը Եսաւի որդւոցը սահմանէն պիտի անց-  
նիք . անոնք ձեզմէ պիտի վախնան , բայց դուք  
շատ զգուշութիւն ըրէք : Ենոնց հետ մի՛ ձեծ-  
կուիք . քանզի ես ձեզի անոնց երկրէն մէկ ոտ-  
նաքայլ տեղ մը տալու չեմ , որովհետև Սէիր  
լեռը՝ Եսաւին ժառանգութիւն տուեր եմ : Կե- 6



- բակուրը ստակով ծախու առնէք անոնցմէ ու  
 ուտէք . և ջուրն ալ ստակով ծախու առնէք ա-
- 7 նոնցմէ ու խմէք : Վանզի քու Տէր Աստուածդ՝  
 քու ձեռքիդ ամէն գործքերուն մէջ օրհնեց քեզ .  
 անիկոյ գիտէ որ դուն սս մեծ անապատին մէջը  
 կը պտըտիս . Վու Տէր Աստուածդ՝ սս քառա-  
 սուն տարին քեզի հետ էր , ու քեզի բան մը  
 չպակսեցաւ :
- 8 Աստի մենք մեր եղբայրներուն՝ Ասաւի որ-  
 դուցը քովէն որոնք Աէիր կը բնակէին , գաշտի  
 ճամբայէն՝ Ալաթէն ու Վասիոնգարբէն ան-  
 ցանք . ու անկից գառնալով՝ Վովարի անապա-
- 9 տին ճամբայէն անցանք : Աւ Տէրը ինձի ը-  
 սաւ . Վովարացուց թ շնամութիւն մի՛ ըներ , ու  
 անոր հետ մի՛ ձեռկուիր . քանզի անոնց երկրէն  
 քեզի ժառանգութիւն տալու չեմ՝ . որովհետեւ  
 Արը՝ Վովտի որդուցը ժառանգութիւն տուի :
- 10 (Ան անղը առաջուց Ոմմիները կը բնակէին , մէկ  
 մեծ ու շատուոր , ու Անակիմներուն պէս երկայ-
- 11 նահասակ ազդ մը ըլլալով : Անոնք ալ Անա-  
 կիմներուն պէս հսկաներ կը սեպուէին . ու Վո-
- 12 վարացիները անոնց Ոմմին կը կանչէին : Աւ  
 Աէիրը՝ առաջուց Վոսեցիները կը բնակէին .  
 բայց Ասաւի որդիքը՝ զանոնք վաբնակելով ու  
 իրենց առջևէն զանոնք ջարդելով՝ անոնց տե-  
 ղը բնակեցան . ինչպէս որ Խարայէլը ըրաւ ի-  
 րեն ժառանգութեան երկրին , որն որ Տէրը
- 13 անոնց տուաւ : ) Հիմա ելէք Օարեդ ձո-  
 րէն անցէք . ու մենք Օարեդ ձորէն անցանք :

Սեր Կաղէսրառնեայէն եղած օրէն՝ մինչև Օգոստոս 14  
 ձորէն անցնելնիս՝ երսուճուճութիւն տարի եղաւ՝  
 մինչև որ բանակին մէջէն պատերազմող մարդոց  
 ան բոլոր ազգը հատաւ, ինչպէս որ Տէրը ան-  
 նոնց երգում ըրաւ: Աւ զանոնք բանակին մէ- 15  
 ջէն բնաջինջ ընելու համար՝ Տէրոջը ձեռքը ան-  
 նոնց վրայ էր, մինչև որ անոնք հատան: Աւ 16  
 երբոր բոլոր պատերազմող մարդիկները ժողո-  
 վուրդին մէջէն մեռան ու հատան, Տէրը ինծի 17  
 խօսեցաւ՝ ըսելով, Եսօր դուն Սոլաբին սահ- 18  
 մանը եղած երկրէն պիտի անցնիս: Աւ Եմփոնի 19  
 որդւոցը սահմանին պիտի մօտենաս. անոնց թըշ-  
 նամութիւն մի՛ ըներ, և անոնց հետ մի՛ ծեծ-  
 կուիր. քանզի Եմփոնի որդւոցը երկրէն քեզի ժա-  
 ոանգութիւն տալու չեմ. որովհետև սնիկայ  
 Ղոլտի որդւոցը ժառանգութիւն տուի: ( Են 20  
 ալ հսկաներու երկիրը կըսեպուէր. առաջուց ան  
 տեղը հսկաներ կըբնակէին, ու Եմփոնացիք անոնց  
 Օլամուճիմ կըկանչէին, որոնք Անակիմներուն 21  
 պէս երկայնահասակ, շատուր, ու մեծ ազգ  
 ժըն էին. բայց Տէրը զանոնք բնաջինջ ըրաւ  
 անոնց առջևէն, որոնք վաւրնտեցին զանոնք, և  
 անոնց տեղը բնակեցան. Ինչպէս որ Սէիր բը- 22  
 նակող Ասաւի որդւոցը համար ալ ըրաւ, երբոր  
 Վոռեցիները բնաջինջ ըրաւ անոնց առջևէն. և  
 զանոնք վաւրնտեցին, ու անոնց տեղը բնակեցան  
 մինչև աս օրս: Աւ Եւեցիները՝ որ մինչև Վա- 23  
 զա զիւղաբաղաբներու մէջ կըբնակէին, անոնք

- ալ Աստիժորէն ելող Աստիժորիմացիները ջար-
- 24 դեցին , ու անոնց տեղը բնակեցան : ) Ալէք ,  
 չուեցէք , ու Անուն ձորէն անցէք . ահա՛ Աս-  
 սերունի թագաւորը՝ Ամօրհացի Սեհոնը ու ան-  
 նոր երկիրը քու ձեռքդ տուի . սկսէ անիկայ ժա-
- 25 ռանգելու , ու անոր հետ պատերազմ՝ ըրէ : Այսօր  
 քու անոնիդ վախը ու սոսկումը՝ բոլոր երկիրքին  
 տակը եղող ազգերուն վրայ պիտի դնեմ , ա-  
 նանկ որ՝ քու համբաւդ լողները քու երեսէդ դո-  
 ղան ու տագնապին :
- 26 Աւ Աադեմօթի անապատէն՝ Ասերունի Սե-  
 հոն թագաւորին խաղաղութեան խօսքերով դես-
- 27 պաններ խրկեցի ու ըսի . Անցնի՛մ քու երկ-  
 րէդ . մեծ ճամբայէն պիտի երթամ , ու աջ
- 28 կամ ձախ կողմը չեմ խտորիր : Աերակուրը  
 ինծի ստակով ծախէ՛ որ ուտեմ , ու ջուրն ալ  
 ինծի ստակով տուր՝ որ խմեմ . միայն թէ ոտ-
- 29 քերովս անցնիմ . Ինչպէս որ Աէիրը բնակող  
 Ասաւի որդիքը՝ ու Արը բնակող Սովաբացիներ  
 ըրին , մինչև որ ես Յորդանանէն ան  
 երկիրը անցնիմ , որն որ մեր Տէր Աստուածը
- 30 մեզի պիտի տայ : Բայց Ասերունի Սեհոն թա-  
 գաւորը չուզեց որ մենք անկից անցնինք . ինչու  
 որ քու Տէր Աստուածդ անոր հոգին խտացուցեր  
 էր , ու սիրաւ կարծրացուցեր էր , որ զանիկայ  
 քու ձեռքդ տայ , ինչպէս որ այսօր իրո՛ւսնս :
- 31 Աւ Տէրը ինծի ըսաւ . Ահա՛ Սեհոնը ու անոր  
 երկիրը սկսայ քու ձեռքդ տալու . սկսէ անոր  
 վրայ տիրելու , որ անոր երկիրը ժառանգես :

Ուստի Սեհան՝ ինքը իր բոլոր ժողովուրդովը՝ 32  
 Յասայի մէջ մեր դէմը ելաւ, որ մեզի հետ պա-  
 տերազմի: Եւ մեր Տէր Աստուածը զանկիայ 33  
 մեր ձեռքը մի տնեց, ու մենք անկիայ՝ և անոր  
 որդիքը՝ ու անոր բոլոր ժողովուրդը զարկինք:  
 Եւ նոյն ատենը անոր բոլոր քաղաքները առինք՝ 34  
 ու անոր բոլոր քաղաքներուն մէջը եղած էրիկ  
 մարդիկները, կնիկները ու տղաքները կորսն-  
 ցուցինք, մէկ հատ մըն ալ ողջ չթողուցինք:  
 Սեզի համար միայն անասունները՝ ու առած քա- 35  
 ղաքներնուս աւարները առինք: Առնոն ձորին 36  
 եզերքը եղած Արոէրէն ու ձորին մէջը եղած քա-  
 ղաքէն մինչև Վաղասաղը բնաւ մեզի դէմ դը-  
 նող քաղաք մը չեղաւ, մեր Տէր Աստուածը՝  
 ամէնն ալ մեր ձեռքը մաանեց: Միայն թէ Ամ- 37  
 մնի որդւոցը երկրին, ու բոլոր Յարոկ ձորին  
 կողմերուն, և լեռնային քաղաքներուն, ու մեր  
 Տէր Աստուծոյ մեզի բոլոր արգելած տեղերուն  
 չմտնեցար:

## ԳԼ . Գ

1 Մովսէս կը պատմէ Ռատանի Ուղջ թագաւորին յաղթուիլը,  
 11 անոր մահիճին մեծութիւնը, 12 Սեհանին ու Ուղջին եր-  
 կիրները երկուք ու կէս ցեղերու արուիլը, 23 և թէ ինչ-  
 պէս ինքը Աստուծոյ խնդրեր է Ռատանու երկիրը մանե-  
 լու, 26 և թէ Տէրը հրաման տուեր է միայն հեռուէն տես-  
 նելու:

Եւ նկից դարձանք Ռատանի ճամբան ելանք, ու 1  
 Ռատանի Ուղջ թագաւորը բոլոր իր ժողովուր-

- 2 գոյլը՝ Աշխարհի մէջ մեր դէմը ելաւ պատերազմելու համար : Աւ Տէրը ինձի ըսաւ . Անկից մի՛ վախնար . վասն զի անհկայ ու բոլոր անոր ժողովուրդը ու երկիրը քու ձեռքդ կուտամ . ու անոր ալ Աստուծո՛ւ մէջ նւտող Ամօրհացուց Սե-
- 3 հոն թագաւորին ըրածիդ պէս ըրէ : Աւ մեր Տէր Աստուածը՝ Բասանի Ովգ թագաւորն ալ ու անոր բոլոր ժողովուրդը մեր ձեռքը տուաւ .
- 4 մէկ մըն ալ ողջ չմնաց : Աւ նոյն ատենը՝ անոր բոլոր քաղաքները առինք . ու զեղ մըն ալ չմնաց , որ անոնցմէ առած չըլանք . վաթսուն քաղաք՝ այսինքն բոլոր Արգոյլի գաւառը՝ Բա-
- 5 սանի մէջ Ովգին թագաւորու թիւնը : Ասոնց ամէնն ալ՝ բարձր պարիսպներով , դռներով ու դռնափակներով ամրացած քաղաքներ էին .
- 6 էին : Աւ անոնք բնաջինջ ըրինք , ինչպէս որ Աստուծո՛ւ Սեհոն թագաւորը ըրինք , ամէն քա-
- 7 ղաքները կորսնցունելով : Սակայն բոլոր անասունները , ու նաև քաղաքներուն աւարները
- 8 մեզի համար առինք : Աւ ան նոյն ժառանգիկն՝ Յորդանանու ան դի ի կողմը եղած երկիրը՝ Առ-
- 9 նոն ձորէն մինչև Հերմօն լեռը , Ամօրհացուց երկու թագաւորներուն ձեռքէն առինք : Սի-

\* ԱԲԵ . զանհկայ

† ԱԲԵ . անոր

մօրհացիք անոր Սանիր կըսէին : Բոլոր զաշտի 10  
 քաղաքները՝ բոլոր Գաղասաղը՝ ու բոլոր Բա-  
 սանը՝ մինչև Սելքա ու Եդրային՝ Բասանի մէջ  
 եղած Ուզին թագաւորութեան քաղաքները ու-  
 չին : Վրանցի հսկաներուն \*մնացորդէն՝ միայն 11  
 Բասանի Ուզ թագաւորը մնացեր էր, ահա անոր  
 մահիճը որ երկաթէ մահիճ մըն է, Լամնի  
 որդւոցը Սարաթին մէջը կէցած է. երկայնու-  
 թիւնը ինը կանգուն է, ու լայնութիւնը չորս  
 կանգուն է, մարդու կանգունով : Եւ նոյն ժա- 12  
 մանակին մէջը՝ աս մեր առած երկիրը՝ Լանն  
 ձորին վրայ եղող Երտէրէն մինչև Գաղասաղ լե-  
 ոանը կէսը՝ իրեն քաղաքներովը՝ Ուրբենեանց  
 ու Գաղեանց տուի. Ու Գաղասաղին մնացածը՝ 13  
 ու բոլոր Բասանը՝ այսինքն Ուզի թագաւորու-  
 թիւնը՝ ու բոլոր Երզովի գաւառը՝ բոլոր Բա-  
 սանին հետ՝ որ հսկայից երկիր կըսուէր, Սա-  
 նասէի կէս ցեղին տուի : Եւ Սանասէեան Յայիրը 14  
 բոլոր Երզովի գաւառը առաւ՝ մինչև Գեսու-  
 րացոց ու Սաքաթացոց սահմանը, ու անոնք ի-  
 րեն անունովը մինչև այսօր †Բասան Հաւօթ Յա-  
 յիր կոչեց : Լասպէս՝ Գաղասաղը Սաքիրին տուի : 15  
 Եւ Գաղասաղէն մինչև Լանն ձորը՝ ձորին ու 16  
 սահմանին մէջ տեղը՝ ու մինչև Լամնի որդւոցը  
 սահմանը Էղած Յարոկ ձորը՝ Ուրբենեանց  
 ու Գաղեանց տուի, Կսե զաշտը Յորդանանու 17  
 սահմանովը՝ Վեներեթէն մինչև զաշտային ծու-

\* Այս բազմութեանն

† Թ՝ Յայիրի զիւղաքաղաքներուն Բասանը

վը՝ այսինքն մինչև աղի ծովը , արևելեան կողմը  
 եղած Եսեղոյթ Փասգոյին տակը :

- 18 Եւ ան ատենը ձեզի պատուիրեցի , ու ըսի .  
 Չեր Տէր Եստուածը աս երկիրը ձեզի ժառանգու  
 թիւն տուաւ . ուստի դուք ամէնքդ որ  
 կտրիճներ էք , զէնքերնիդ առէք , ու Խորայե  
 լի որդւոցը՝ ձեր եղբայրներուն առջևը անցէք :
- 19 Խայց ձեր կնիկները՝ ձեր որդիները ու ձեր ան  
 ասունները , ( որոհիւրեալ ձեր անասուններուն  
 շատ ըլլալը գիտեմ , ) թող մնան ձեր քաղաքնե  
 րուն մէջը՝ որոնք ես ձեզի տուի , Մինչև որ Տէրը  
 ձեր եղբայրներն ալ ձեզի պէս հանգստացունէ ,  
 ու մինչև որ անոնք ալ ժառանգեն ան երկիրը՝  
 որն որ ձեր Տէր Եստուածը՝ Յորդանանու ան  
 դիի կողմը անոնց պիտի տայ . ու ետքը ձեզմէ ա  
 մէն մէկը դաւնայ իր ժառանգութեանը՝ որն որ  
 ես ձեզի տուի :
- 21 Ըն ատենը Յեսուին պատուիրեցի ու ըսի .  
 Քու աչքերդ տեսան ի՞նչ որ ձեր Տէր Եստուա  
 ծը աս երկու թագաւորներուն ըրաւ . անանկ  
 ալ պիտի ընէ Տէրը ան ամէն թագաւորու  
 թիւններուն , \* որոնց վրայ դուն պիտի երթաս :
- 22 Ընոնցմէ չվախնաք . վասն զի ձեր Տէր Եստուածը  
 23 ինքը կը պատերազմի ձեզի համար : Եւ ան ա  
 24 տենը Տէրոջը աղաչեցի , ու ըսի . Ա՛վ Տէր  
 Եստուած , դուն սկսեցիր քու մեծութիւնդ  
 ու քու զօրաւոր ձեռքդ քու ճառայիդ ցուցը  
 նելու . վասն զի երկիրքին մէջ կամ երկրիս վրայ

\* Եբր . որ դուն հոն կանցնիս

ո՞վ է ան աստուածը , որ քու գործքերուդ ու  
 քու զօրութեանդ պէս Գործք 52 ընելու կարող  
 ըլլայ : Անոր հըք ըրէ որ անցնիմ , ու Յորդա- 25  
 նանին մէկալ կողմի բարի երկիրը , ան բարի  
 լեռը ու Արամանը տեսնամ : Բայց Տէրը ձեր 26  
 պատճառովը ինձի սրդողելով՝ իմ խնդիրքս չըն-  
 դունեց . և Տէրը ինձի ըսաւ . Ալ հերիք է  
 քեզի . մէյմըն ալ ատ բանը ինձի չգրուցես :  
 Վաստային դադալթը ելիք . ու գէպի արևմուտ- 27  
 քը , հիւսիսը , (հարաւը ու արեւելքը աչքերդ  
 վերցնէր , ու քու աչքերովդ դիտէ՝ . քանզի  
 դուն աս Յորդանանէն պիտի շանցնիս : Աւ Յե- 28  
 սուին պատուէր տալով՝ անիկայ զօրացուէր . ու  
 անոր սիրտ տուր . քանզի ան պիտի անցնի աս  
 ժողովուրդին առջևը , և քու գիտելու երկիրդ  
 անիկայ պիտի ժառանգեցունէ անոնց : Աւստի 29  
 մենք հովիտին մէջը՝ Աելթ փեղովրի գիմացը նըս-  
 տանք :

## Գ Լ . Կ

1 Մովսէս Աստուծոյ հնազանդելու կըյորդորէ Խորայէլացիներ-  
 քը . 41 ու Յորդանանու աս գիի կողմը իրեք ազատամեծ  
 բազաք կըզատէ :

Ալ հիմա ո՞վ Խորայէլ՝ իմ քեզի սորվեցու- 1  
 ցած կանոններս ու դատաստաններս մտիկ  
 ըրէ , որ զանոնք ընելով՝ ողջ մնաք , ու մըս-  
 նաք ժառանգէք ան երկիրը՝ որն որ ձեր հայրե-



- 2 բուն Տէր Աստուածը ձեզի կուտայ : Չեզի պատուիրած խօսքիս փրայ բան մը չաւելցունէ՛ք , ու անկից բան մը չպահօտցունէ՛ք , այլ ձեր Տէր Աստուծոյ պատուիրանքները պահէք , որոնք ևս
- 3 ձեզի կը պատուիրեմ : Չեր աչքերը տեսան ի՛նչ որ Տէրը Բելփեգովրին ըրաւ . վասն զի քու Տէր Աստուածդ՝ Բելփեգովրին ևտեէն զացող բոլոր մարդիկները ձեր մէջէն կորսնցուց :
- 4 Բայց դուք՝ որ ձեր Տէր Աստուծոյն յարեցաք ,
- 5 ամէնքդ այսօր ողջ էք : Ահա՛ ձեզի կանոններ ու դատաստաններ սորվեցուցի , ինչպէս որ իմ Տէր Աստուածս ինձի պատուիրեց . որ անոնք ընէք ան երկրին մէջը , ուր որ պիտի մտնաք ժառանգելու համար :
- 6 Աւտի դուք անոնք պահեցէ՛ք ուրէք . վասն զի ամէն ազգերուն առջևը ձեր իմաստութիւնը ու հանճարը աս պիտի ըլլայ , որ անոնք բոլոր աս կանոնները ըկրվ՝ ըսեն , Իբրաւցունէ աս մեծ ազգը՝ իմաստուն ու հանճարեղ ժողովուրդ մըն է :
- 7 Վսնզի ո՞ր ազգը այնքան մեծ է , որ իր աստուածները իրեն ճօտ ըլլան , ինչպէս որ մեր Ահուրայ Աստուածը Բեդէ ճօտ է ամէն բանի մէջ՝ որ անորմէ կը խնդրենք :
- 8 Աւ ո՞ր ազգը այնքան մեծ է՝ որ իմ այսօր ձեր առջևը դրած բոլոր աս օրէնքիս նման՝ արդար կանոններ ու դատաստաններ ունենայ : Երայնքեզ աղէկ նայէ՛ , ու հոգիիդ շատ զգուշութիւն ըրէ . չըլլայ որ՝ աչքերուդ տեսած բաները մտնաս , և չըլլայ որ՝ բոլոր կենացդ օրերուն մէջք քու սրտէդ ելլեն . այլ անէք քու որդւոցդ , ու

որդիններուդ որդւոցը սորվեցունես: Ըն օրը՝ որ 10  
 դուն Քորէքը քու Տէր Ըստուծոյդ առջևը կե-  
 ցեր էիր, Տէրը ինձի ըսաւ. Ժողովուրդը ին-  
 ձի ժողովէ՛, ու իմ խօսքերս լսել պիտի տամ  
 անոնց. որպէս զի՛ որչափ օրեր որ երկրի վրայ  
 պիտի ապրին, ինձմէ վախնալը սորվին, ու իրենց  
 որդիններուն ալ սորվեցունեն: Աշ զուք Տօտե- 11  
 նալով՝ լեռանը տակը կայնեցաք, ու լեռը՝ խա-  
 ւար և ամպ ու մառախուղ հանելով, \* մինչև եր-  
 կինքը՝ կրակով կըրորորօքէր: Աշ Տէրը կրակին 12  
 մէջէն ձեզի խօսեցաւ. զուք անոր խօսքերուն  
 ձայնը լսեցիք. ու նմանութիւն մը չտեսաք, բայց  
 միայն ձայն լսեցիք: Աշ իրեն ուխտը՝ տառ պա- 13  
 տուիրանքները ձեզի իմացուց, ու պատուիրեց  
 որ անոնք ընէք. և զանոնք երկու հատ քարէ  
 տախտակներու վրայ գրեց: Աշ անատենը Տէ- 14  
 րը ինձի պատուիրեց, որ ձեզի կանոններ ու դա-  
 տաւաններ սորվեցունեմ. որ անոնք գործածէք  
 ան երկրին մէջը, ուր որ պիտի մտնուք ժառան-  
 գելու համար:

Աւրեմն ձեր հօգիններուն աղէք զգուշութիւն 15  
 ըրէք. որովհետև ան օրը՝ որ Տէրը Քորէք  
 լեռը կրակին մէջէն ձեզի խօսեցաւ, նմանու-  
 թիւն մը չտեսաք: Չըլլայ որ անօրէնութիւն 16  
 ընելով՝ ձեզի կուռք մը կամ բանի մը պատկե-  
 րը՝ թէ՛ արուի և թէ՛ էգի նմանութիւնը, կամ 17  
 երկրի վրայ եղող անասունի մը նմանութիւնը,  
 կամ օդին մէջը թռչող՝ թևաւոր թռչունի մը

\* Ա. Ե. Ե. մինչև երկինքին սիրտը,

- 18 նմանութիւնը, կամ երկրի վրայ սողացող սո-  
ղուններուն նմանութիւնը, կամ երկրին տակը՝  
ջուրերուն մէջը եղող ձուկերուն նմանութիւնը
- 19 շինէք: Սակ չըլլայ որ՝ աչքերդ երկինքը վեր-  
ցունելով, ու արևը կամ լուսինը կամ աստ-  
ղերը, ու բոլոր երկինքին զարդը տեսնելով՝  
խարուխ, ու անոնց երկրպագութիւն ընես, և  
անոնք պաշտես. որովհետև քու Տէր Աստուածդ՝  
անոնք բոլոր երկինքին տակը եղող ազգերուն
- 20 համար կարգաւորեց: Բայց ձեզ Տէրը առաւ.  
ու ձեզ երկաթի նոցէն՝ Ազիպտոսէն հանեց.  
որ իրեն սեպհական ժողովուրդը ըլլաք. ինչպէս
- 21 որ այսօր էլ ըստ է: Աւ Տէրը ձեր պատճառաւը  
ինձի սրբողելով՝ երդում ըրաւ, որ Յորդանա-  
նէն չանցնիմ, ու չմտնամ ան բարի երկիրը՝ որն  
որ քու Տէր Աստուածդ քեզի կուտայ ժառան-
- 22 գելու համար: Արդ ես աս երկրիս մէջը պի-  
տի մտնիմ, ու Յորդանանէն պիտի չանցնիմ.  
բայց դուք պիտի անցնիք, ու ան բարի երկիրը
- 23 պիտի ժառանգէք: Օգոյշ կեցիք, չըլլայ որ՝  
ձեր Տէր Աստուծոյն ձեզի հետ ըրած ուխտը  
մոռնաք, ու ձեզի կուսք մը կամ որ և իցէ բանի  
մը նմանութիւնը շինէք, որ քու Տէր Աս-
- 24 տուածդ արգիլեց: Վանզի քու Տէր Աս-  
տուածդ մաշող կրակ մըն է. անիկայ նախան-  
ձոտ Աստուած է:
- 25 Արբոր դուք որդիներ՝ ու որդւոց որդիներ  
ծնանելու ըլլաք, և ան երկրին մէջ շատ ատեն  
նստելու ըլլաք, ու անատենը թէ որ անօրէնու-

Թիւն ընէք , և կուտք մը՝ կամ ո՛ր և իցէ բա-  
 նի նմանութիւնը շինէք , ու ձեր Տէր Եստու-  
 ծոյն առջևը չարութիւն չնէք՝ անիկայ բարկա-  
 ցունելու համար , Եստոր երկինքը ու երկիրը ձե- 26  
 զի վկայ կրբոնեմ , որ դուք անպատճառ չուտով  
 պիտի կորսուիք ան երկրէն , որն որ Յորդանանէն  
 անցնելով՝ պիտի ժառանգէք . ան տեղը կեանքեր-  
 նիդ երկար պիտի չըլլայ . այլ բոլորովին բնաջինջ  
 պիտի ըլլաք : Եւ Տէրը ձեզ ամէն ազգերուն 27  
 մէջը պիտի ցրուէ . ու նաև ստկաւաթիւ պիտի  
 մնաք ան ազգերուն մէջը , որոնց մէջը որ Տէրը  
 ձեզ պիտի տանի : Եւ ան տեղը՝ մարդու ձեռ- 28  
 քով շինուած քարէ ու փայտէ աստուածներ  
 պիտի պաշտէք , որոնք ո՛չ կրտեսնեն՝ ո՛չ կրլսնն՝  
 ո՛չ կուտնն՝ ու ո՛չ կրհոտուրտան : Եւ ան տե- 2  
 ղը՝ քու Տէր Եստուածդ պիտի փնտրուես . ու  
 թէ որ անիկայ բոլոր սրտովդ և բոլոր հօգիովդ  
 փնտրուելու ըլլաս , պիտի գտնաս : Երբոր քու 30  
 վրադ նեղութիւն գայ , ու բոլոր աս բաները  
 քեզի պատահին , դուն ետքի օրերը՝ քու Տէր  
 Եստուծոյդ պիտի դառնաս , ու անոր խօսքը  
 մտիկ պիտի ընես : Քու Տէր Եստուածդ՝ ու 31  
 զորմած Եստուած ըլլալուն համար , քեզ չթո-  
 ղուր , ու քեզ չկորսընցուներ . ու նաև քու հայ-  
 րերուդ երգում ըրած ուխտը չմոռնար : Քեզ- 32  
 մէ առաջ եղած առջի օրերուն համար , այսինքն՝  
 Եստուած մարդը երկրի վրայ ստեղծած օրէն  
 'ի վեր՝ երկինքին մէկ ծայրէն մինչև մէկալ ծայ-  
 րը հարցուր , թէ արդեօք ասոր պէս մեծ բան

- մը կըլսօ՞ճ է , ու ասոր պէս բան մը լսուա՞ճ է :
- 33 Ըրգեօք մէկ ազգ մը՝ կրակին մէջէն խօսող Լսուողն ձայնը՝ քու լսածիդ պէս լսեր ու ողջ
- 34 մնացե՞ր է : Այամ թէ Լստուած՝ մէկ ազգը ուրիշ ազգի մը մէջէն իրեն առնելու համար՝ փորձերով , հրաշքներով , զարմանալի բաներով , պատերազմով , զօրաւոր ձեռքով , ու բարձր բազուկով , և մեծ ահարկութիւններով գալ ուզե՞ր է , ինչպէս որ ձեր Տէր Լստուածը՝ Ազիպատոսի մէջ ձեզի համար բոլոր աս բաները ըրաւ
- 35 ձեր աչքին առջևը : Եսիկայ քեզի ցուցուեցաւ , որ գիտնաս թէ Ահովան ինքը Գայն Լստուած
- 36 է . անկէ ուրիշ Լստուած չկայ : Քեզի խրատելու համար՝ իր ձայնը երկինքէն լսել տուաւ քեզի . ու երկրի վրայ իր մեծ կրակը քեզի ցուցուց . ու անոր խօսքերը կրակին մէջէն լսեցիր :
- 37 Եւ քու հայրերդ սիրելուն համար՝ անոնցմէ եաքք անոնց սերունդը ընտրեց , ու քեզ՝ իրեն առջևը
- 38 ջնը մեծ զօրութիւնով Ազիպատոսէն հանեց : Որպէս զի քեզմէ մեծ ու զօրաւոր ազգերը քու առջևէդ վաընտէ , ու քեզ տանի՝ անոնց երկիրը քեզի ժառանգութիւն տալու , ինչպէս որ այսօր
- 39 կը՝տուածի՛ս : Եւ այսօր գիտցի՛ր , ու սրտիդ մէջը գի՛ր , որ վերը երկինքին մէջ՝ ու վարը երկրիս վրայ Ահովան ինքը Գայն Լստուած է , ուրիշ
- 40 ըրիշ մը չկայ : Եւ անոր կանոնները ու պատուիրանքները պահես , որոնք ես այսօր քեզի կըպատուիրեմ , որ քեզն՝ ու քեզմէ ետքը քու որդւոցդ ազէկ ըլլայ . ու նաև օրերդ երկար ըլ-

լան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ  
քեզի կուտայ մշանջենասպէս :

Ըն ատենը Սովսէս Յորդանանու աս դիի կողմ 41  
մը գէպի արեւելք՝ իրեք քաղաք զատեց : Որպէս 42  
զի երէկուրնէ ու մէկալ օրուրնէ ատելութիւն  
չունեցող, ու անգիտութեամբ իր դրացին մեռ-  
ցունող մարդասպանը հոն փախչի . ու աս քա-  
ղաքներուն մէկուն մէջ փախչելով՝ ողջ մնայ :  
Ուրեմնեանց համար՝ զաշտային երկրի վրայ՝ աւ 43  
նապատին մէջ Բոսորը, և Վաղեսանց համար՝  
Վաղաադին մէջ Սամովթը, ու Սանաւեանց  
համար՝ Բասանին մէջ Վովզան զարեց :

Եսիկայ է ան օրէնքը որ Սովսէս Իսրայէլի 44  
որդւոց առջևը դրաւ : Եւ ասոնք են ան վկա- 45  
յութիւնները, կանոնները և դատաստանները,  
որոնք որ Սովսէս Իսրայէլի որդւոցը խօսեցաւ՝  
անոնց Լզիպտոսէն ելած ատենը, Յորդանանու 46  
աս դիի կողմը՝ Բեթփեգովրին դիմացի հովիտին  
մէջը՝ Լսեբոն նստող Էմօրհացւոց Սեհոն թա-  
գաւորին երկրին մէջը՝ որ Սովսէս ու Իսրայէլի  
որդեքը զարկին Լզիպտոսէն ելելնուն կտքը,  
Եւ անոր երկիրը ու Բասանի Ովզ թագաւորին 47  
երկիրը՝ այսինքն Յորդանանու աս դին արեւելեան  
կողմը Բնակող Էմօրհացւոց երկու թագաւոր-  
ներուն Էրեբոնիքը, այսինքն՝ Ըննոնի ձորին և 48  
զերքը եղող Երոէրէն՝ մինչև Սիօն լեռը որ  
Հերմօն կըսուի : Ու Յորդանանու աս դին աւ 49  
րեւելեան կողմը եղած բոլոր դաշտը՝ մինչև Ըսե-  
ղովթ փասգային ներքևը զաշտի ծովին քովը  
Քառանգեցին :

## Գ Լ . Ե

1 Քորթի մէջ եղած ուխտը : 6 Տասը պատուիրանքները :  
 22 ժողովուրդին ազալանքին վրայ՝ Մովսէսը Եստուծոյ  
 բնօրէն կընդունի :

- 1 **Ա**ւ Մովսէս բոլոր Իսրայէլը կանչեց , ու ա-  
 նոնց ըսաւ . **Ա**յ՛է՛ որք իսրայէլ՝ աս կանոն-  
 ները ու դատաստանները որոնք ես այսօր ձեր ա-  
 կանջներուն կրխօսիմ , արվիցէք անոնք և զգու-  
 2 շութեամբ ՚ի գործ դրէք : **Մ**եր **Տ**էր **Ե**ստուա-  
 3 ծը մեզի հետ Քորթի վրայ ուխտ ըրաւ : **Տ**էրը  
 աս ուխտը մեր հայրերուն հետ չըրաւ , հապա  
 մեզի հետ , որ մենք ամէնքս այսօր հոս կենդա-  
 4 նի ենք : **Տ**էրը լիռանը վրայ կրակին մէջէն ձե-  
 5 ղի հետ դէմ առ դէմ խօսեցաւ : ( **Ա**ւ ես ան ա-  
 տներ՝ **Տ**էրօջը ու ձեր մէջը կոյնեցայ , որ **Տ**է-  
 րօջը խօսքերը ձեզի պատմեմ . վասն զի դուք  
 կրակէն վահանալով՝ լիւր չեղաք : ) **Ա**ւ ըսաւ .  
 6 **Ա**ս եմ **Ա**հմայ քու **Ե**ստուածդ , որ քեզ **Ա**-  
 գիպտոսի երկրէն՝ ծառայութեան տունէն հանեցի :  
 7 **Ի**մ առջևս ուրիշ աստուածներ չունենաս :  
 8 **Ի**ուն քեզի կուռք չպիտի շինես , ոչ ալ վե-  
 րը երկինքին մէջ , կամ վարը երկրի վրայ , կամ  
 երկրին տակի ջուրերուն մէջը եղած բաներու-  
 9 բնաւ մէկ նմանութիւնը : **Ե**նոնց երկրպագու-  
 թիւն չպիտի ընես , ու զանոնք չպիտի պաշ-  
 տես . ինչու որ ես քու **Տ**էր **Ե**ստուածդ՝ նա-  
 խանձոտ **Ե**ստուած եմ , որ կըհաստուցանեմ հայ-

րերուն մեղքը որդւոցը վրայ՝ մինչև անոնց երկ-  
րորդ ու չորրորդ ազգը՝ որ կատեն զես : Եւ 10  
կողորմիմ անոնց մինչև հազար ազգը՝ որ կբի-  
րեն զես ու իմ պատուիրանքներս կբասնեն :

Տէրոջը քու Աստուծոյդ անունը պարսպ տե- 11  
ղը Բէր-ան-Տ չպիտի՝ ատենս . ինչու որ Տէրը՝ իր  
անունը պարսպ տեղը Բէր-ան-ատնողը՝ անմեղ  
պիտի չսեպէ :

Հանգստութեան օրը զգուշութիւն բրէ սուրբ 12  
պահելու , ինչպէս որ քու Տէր Աստուածդ քեզի  
պատուիրեց : Այց օր պիտի աշխատիս , ու բո- 13  
լոր գործքդ ընես : Բայց եօթներորդ օրը՝ Տէ- 14  
րոջը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է .  
ան օրը գործ մը չպիտի՝ գործես , ոչ գուն՝ ոչ  
քու որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ , ոչ քու ծառայ  
ու աղախինդ , ոչ քու եզդ , ու քու էջդ , և քու  
ամէն անասունդ , ոչ ալ քու տանդ մէջը եղած  
օտարականդ , որ քու ծառայ ու աղախինդ ալ  
քեզի պէս հանգստանայ : Եւ միտքդ բերես , որ 15  
գուն Ազգիպտոսի երկրին մէջը ծառայ էիր , ու  
քու Տէր Աստուածդ՝ զօրաւոր ձեռքով ու բարձր  
բազուկով քեզ անկից հանեց , անոր համար  
քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց՝ որ հան-  
գրատութեան օրը պահես :

Պատուէ քու հայրդ ու մայրդ , ինչպէս որ 16  
քու Տէր Աստուածդ քեզի պատուիրեց , որ քու  
օրերդ երկան ըլլան . ու քեզի աղէկ ըլլայ ան  
երկրին վրայ , որն որ քու Տէր Աստուածդ քե-  
զի կուտայ :



- 17 Սպանութիւն մի՛ ընեք :
- 18 Ու շնութիւն մի՛ ընեք :
- 19 Ալ գողութիւն մի՛ ընեք :
- 20 Ու քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի՛ ընեք :
- 21 Ալ քու դրացիիդ կնկանը մի՛ ցանկար քու դրացիիդ տանը՝ կամ անոր արտին՝ կամ անոր ծառային՝ կամ անոր աղախինին՝ կամ անոր եղին՝ կամ անոր իշուն , և քու դրացիիդ ամենեւին մէկ բանին մի՛ ցանկար :
- 22 Տէրը աս խօսքերը լեռանը վրայ , կրակին՝ ամպին ու մառախուղին մէջէն՝ բարձր ձայնով բոլոր ձեր ժողովքին զրուցեց . և ուրիշ բան չաւելցուց . ու երկու հատ քարէ տախտակի
- 23 վրայ դրեց զանոնք , ու ինձի տուաւ : Իսկ լեռանը վառած ատենը՝ երբոր խաւարին մէջէն ան ձայնը լսեցիք , իմ քովս եկաք որո՛ւ , այսինքն ձեր ցեղերուն գլխաւորները և ծերերը , ու ը-
- 24 սիք . Ահա մեր Տէր Աստուածը՝ իր փառքը ու մեծութիւնը մեզի ցրցուց . ու անոր ձայնը կրբակին մէջէն լսեցինք . այսօր տեսանք որ Աստուած մարդու հետ խօսեցաւ , ու մարդը ողջ
- 25 մնաց : Ալ հիմա մենք ինչո՞ւ մեռնինք (բանզի աս մեծ կրակը մեզ բնաջինջ պիտի ընէ . ) թէ որ մենք մեր Տէր Աստուծոյն ձայնը մէ-
- 26 յըն ալ լսելու ըլլանք , կըմեռնինք : Այսան զի բոլոր մարմինէն ո՞վ է որ կրակի մէջէն խօսող կենդանի Աստուծոյն ձայնը մեզի պէս լսեց , ու
- 27 ողջ մնաց : Դուն մօտեցնիք , և մեր Տէր Աս-

տուճոյն բոլոր ըսելու խօսքերը լսէ . ու մեր  
Տէր Աստուածը քեզի հետ ի՞նչ որ պիտի խօ-  
սի , դուն մեզի ըսէ . մենք մտիկ կընենք  
ու կըրկատարենք : Արբոր դուք ինձի հետ կը<sup>28</sup>  
խօսէիք , Տէրը ձեր խօսքերուն ձայնը լսեց , ու  
ինձի ըսաւ . Աս ժողովուրդին քեզի ըսած խօս-  
քերուն ձայնը լսեցի . անոնց ամէն ըսածը շիտակ  
է : Արանի՛ թէ անոնց սիրտն ալ անանկ ըլ-<sup>29</sup>  
լար , ու ինձմէ վախնալով՝ իմ ամէն պատուի-  
րանքներս միշտ պահէին , որ իրենց աղէկ ըլ-  
լար՝ ու իրենց որդւոցն ալ յաւիտեան : Գնա՞<sup>30</sup>  
անոնց ըսէ , Գուք ձեր վրանները դարձէք :  
Բայց դուն հոս իմ հետս կեցի՛ր , ու բոլոր ա-<sup>31</sup>  
նոնց սորվեցունելու պատուիրանքներդ , կանոն-  
ներդ ու դատաստաններդ քեզի ըսեմ . որ ա-  
նոնք կատարեն ան երկրին մէջը՝ որն որ ես ա-  
նոնց կուտամ ժառանգութեան համար :

Արդ՝ զգոյշ եղիք ձեր Տէր Աստուծոյն ձե-<sup>32</sup>  
զի պատուիրածին պէս ընելու , ու աջ դին կամ  
ձախ դին չխոտորի՛ք : Չեր Տէր Աստուծոյն<sup>33</sup>  
բոլոր ձեզի պատուիրած ճամբաներուն մէջը քա-  
լէք , որ ապրիք , ու ձեզի աղէկ ըլլայ . և ձեր  
ժառանգելու երկրին մէջ երկայնակեաց ըլլաք :

## Գ Լ . Թ

1 Օրենքին լրումը՝ հասցանդու թիւն ընայը կըսորվեցունե  
 Կախէս , 3 ու կըսորդորե որ հասցանդին :

1 **Լ**ու ասոնք են ան պատուիրանքները , կանոն-  
 ները ու դատաստանները , որ ձեր Տէր  
 Եստուածը ինձի պատուիրեց ձեզի սորվեցունե-  
 լու համար , որ ձեր մտնելու ու ժառանգելու  
 2 երկրին մէջը ընէք անոնք . Որպէս զի քու Տէր  
 Եստուածդ վախնաս , ու քու կենացդ բոլոր  
 3 բերուն մէջը՝ անոր ամէն կանոնները ու պա-  
 տուիրանքները պահես , որոնք որ ես քեզի կը  
 պատուիրեմ , թէ դուն , թէ քու որդիդ և թէ  
 4 քու որդիիդ որդին . որ քու օրերդ երկան  
 ըլլան :

3 **Ե**րդ՝ ո՛վ Խորայէլ մտի՛կ ըրէ . ու զգուշու-  
 թիւն ըրէ զանոնք կատարելու , որ քեզի աղէկ  
 ըլլայ , և կաթ ու մեղը բղխող երկրին վրայ  
 խիստ շատնաս , ինչպէս որ քու հայրերուդ Տէր  
 Եստուածը քեզի խոստացաւ :

4 **Ո՛վ** Խորայէլ մտի՛կ ըրէ . մեր Տէր Ես-  
 5 տուածը . « մի միայն » Տէր է : Ու քու Տէր Ես-  
 տուածդ՝ բոլոր սրտովդ , բոլոր հոգիովդ ու բո-  
 6 լոր զօրութիւնովդ սիրես : Այլ աս խօսքերը՝ որ  
 ես այսօր քեզի պատուիրեցի , սրտիդ մէջը ըլլան .  
 7 Ու անոնք քու որդւոցդ կրկին և կրկին անգամ  
 սորվեցունես , և թէ տանդ մէջը նստած ա-  
 տենդ , թէ ճամբայ գացած ատենդ և թէ

ՆԲԻ . ԹԿ

պատկերու ու ելլալու ատենդ անոնք խօսիս . Լ. և 8  
անոնք նշանի պէս ձեռքիդ վրայ կապես , ու  
ճակատնոցի պէս աչքերուդ առջևը ըլլան . Ու 9  
նաև անոնք քու տուներուդ սեմերուն վրայ՝ և  
դռներոսդ վրայ գրես : Ու երբոր քու Տէր Եւ- 10  
տուածդ քեզ տանի ան երկիրը՝ որն որ քու հայ-  
րերուդ՝ Եբրահամին , Իսահակին ու Յակոբին  
երգումով խոստացաւ , որ քեզի մեծ ու գեղեցիկ  
քաղաքներ տայ , որն որ դուն շինած չես , Եւ 11  
ամէն բարիքներով լցուած տուներ , որն որ դուն  
լեցուցած չես , ու փորուած ջրհորներ , որն որ  
դուն փորած չես , այգիներ ու ձիթենիներ , որ  
դուն անկած չես , ու երբոր ուտես ու կշտանաս ,  
Օգոյշ կեցիր , չըլլայ որ քեզ Ազիպտոսի երկ- 12  
րէն՝ ծառայութեան տունէն հանող Տէր Եւ-  
տուածը մոռնաս : Քու Տէր Եւտուածդ վախ- 13  
նաս , ու անխիայ պաշտես , և անոր անունովը  
երգում՝ ընես : Օտար աստուածներուն՝ չըջա- 14  
կայ ազգերուն աստուածներուն ետևէն շերթաք .  
(Այսն զի ձեր Տէր Եւտուածը որ ձեր մէջն է , 15  
նախանձոտ Եւտուած է . ) չըլլայ որ ձեր Տէր  
Եւտուածոյն բարկութիւնը ձեր վրայ բորբոքի ,  
ու ձեզ երկրի երեսէն բնաջինջ ընէ :

Չեր Տէր Եւտուածը բնաւ չփորձէք , ինչ- 16  
պէս որ Մասսայի մէջ փորձեցիք : Չեր Տէր 17  
Եւտուածոյն պատուիրանքները , ու ձեզի պատուի-  
րած վկայութիւնները ու կանոնները զգուշու-  
թեամբ պահէք : Եւ Տէրոջը առջևը ի՛նչ որ 18  
ուղիղ ու հաճելի է , ան ընես , որ քեզի աղէկ

- ըլլայ, ու մանեա ժառանգես ան բարի երկիրը՝  
որն որ Տէրը քու հայրերուդ երգում ըրաւ + Է-
- 19 զէ Կալուստ : Ալ քու ամէն թշնամիներդ քու  
առջևէդ հալածես, ինչպէս որ Տէրը ըսաւ :
- 20 Արբոր վաղը քու որդիդ քեզի հարցունէ՝ ու  
ըսէ, թէ ի՞նչ պիտի ըլլան ան վկայութիւնները՝  
կանոնները՝ ու դատաստանները, որոնք որ մեր
- 21 Տէր Աստուածը ձեզի պատուիրեց . Ան առեմը  
քու-որդիդ պիտի ըսես . Մենք Ազիպտոսի մէջ  
Փարաւօնին ծառայ եղանք, և Տէրը զօրաւոր
- 22 ձեռքով մեզ Ազիպտոսէն հանեց . Ասաւ Տէրը  
մեր աչքին առջևը՝ Ազիպտոսի վրայ, Փարաւօնին  
վրայ ու բոլոր անոր տանը վրայ՝ մեծ ու սոս-
- 23 կալի նշաններ ու հրաշքներ ըրաւ . Ալ մեզ  
անկից հանեց, որ մեզ տանի, ու մեր հայրե-  
րուն երգումով խոստացած երկիրը տայ մեզի :
- 24 Ուստի Տէրը մեզի պատուիրեց, որ բոլոր աս կա-  
նոնները ընենք, ու մեր Տէր Աստուծմէն վախ-  
նանք, որ մեզի աղէկ ըլլայ միշտ, ու ողջ մը-
- 25 նանք՝ ինչպէս որ Էն+ այսօր : Ալ թէ որ մեր  
Տէր Աստուծոյն առջևը՝ բոլոր աս պատուիրանք-  
ները զգուշութեամբ կատարենք, ինչպէս որ  
ինքը մեզի պատուիրեց, ան մեզի արդարութիւն  
պիտի սեպուի :

## Գ Լ Ե

1 Աւրիչ ազգաց հետ հաղորդակցութիւն ընելը կարգիւրի ,  
 4 կուսպաշտութենէ ազատ ըլլալու համար , 6 ժողովուր-  
 դը սուրբ Պատու համար . 9 քանզի Մատուած ողորմած ու  
 արդար է , 17 և Խորայեւացւոց պիտի օգնէ անոնց ընելու  
 պատերազմներուն մէջ :

Արբոր քու Տէր Աստուածդ տանի քեզ ան 1  
 Երկիրը , ուր որ պիտի մտնաս ժառանգելու  
 համար , ու քու առջևէդ շատ ազգեր հալածէ ,  
 այսինքն՝ Քեռացիները , Գերգեսացիները , Ամոր-  
 հացիները , Քանանացիները , Փերեզացիները ,  
 Խեւացիները ու Յերուսացիները , աս եօթը ազ- 2  
 գերը՝ որոնք քեզմէ մեծ ու զօրաւոր են , Աւ երբ  
 որ քու Տէր Աստուածդ անոնք քու ձեռքդ տայ ,  
 պիտի զարնես և անոնք բոլորովին կորսնցունես .  
 անոնց հետ ուխտ չընես , ու անոնց չողորմիս .  
 Անոնց հետ խնամութիւն չընես . քու աղջիկդ 3  
 անոր տղին չտաս , ու անոր աղջիկը քու տղիդ  
 չառնես . Այսան զի քու տղաքներդ իմ ծա- 4  
 ռայութենէս կը դարձունեն օտար աստուածները  
 պաշտելու . ու Տէրոջը բարկութիւնը ձեր վրայ  
 բորբոքելով՝ ձեզ շուտով պիտի կորսնցունէ :  
 Սակայն անոնց ասանկ ընէք . Անոնց սեղան- 5  
 ները կործանեցէք , անոնց արձանները խորտա-  
 կեցէք , անոնց անտառները կտրեցէք , ու ան-  
 ոնց փորուած կուռքերը կրակով այրեցէք :  
 Քանզի դուն քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողո- 6

- վարդն ես . և քու Տէր Աստուածդ երկրի երեսին վրայ եղող բոլոր ազգերուն մէջէն քեզ ընտրեց՝ որ դուն ըլլաս անոր սեպհական ժո-
- 7 ղովորդը : Տէրը որ ձեզ սիրեց ու ընտրեց ,  
ամէն ազգերէն շատ ըլլալնուդ համար չէ , քան-
- 8 զի դուք ամէն ազգերէն քիչուր էիք . Այլ Տէրը  
ձեզ սիրելուն համար , ու ձեր հայրերուն ըրած  
երդումը պահելուն համար , Տէրը ձեզ զօրաւոր  
ձեռքով ծառայութեան տունէն հանեց , և Ա-
- 9 զիպտացոց Քարաւօն թագաւորին ձեռքէն ազա-  
տեց : Արդ՝ գիտցիր որ քու Տէր Աստուածդ՝  
ինքն է Աստուածը , հաւատարիմ Աստուածը , որ  
զինքը սիրողներուն ու իրեն պատուիրանքները  
պահողներուն մինչև հազար ազգը՝ ուխտ ու
- 10 ողորմութիւն կը պահէ . Աւ զինքը ատողներն  
ալ՝ երեսնուն դէմ կը յանդիմանէ ու անոնք կը  
կորսընցունէ . զինքը ատողին ուստի չուշա-
- 11 ցուներ , անոր երեսը կուտայ : Ուրեմն պահէ  
դուն ան պատուիրանքները , կանոնները ու դա-  
տաստանները՝ որոնք որ ես այսօր քեզի կը  
պատուիրեմ որ ընես :
- 12 Ուստի դուն որ աս դատաստանները լսելով՝  
անոնք պահես ու ընես , Քու Տէր Աստուածդ  
ալ քեզի համար՝ քու հայրերուդ երդումը ըրած
- 31 ուխտը ու ողորմութիւնը պիտի պահէ . Ու նաև  
քեզ պիտի սիրէ , քեզ օրէնէ ու քեզ պիտի շատ-  
ցունէ . և քու որովայնիդ պտուղը , քու երկրիդ  
պտուղը , քու ցորենիդ , քու գինիդ , քու կոյր ,

կովերուդ <sup>՝</sup>ճնունդը ու ոչխարներուդ հօտերը  
 պիտի օրհնէ ան երկրին վրայ՝ որն որ Տէրը քու  
 հայրերուդ երդումը բաւ քեզի տալու : Դուն 14  
 ամէն ազգերէն աւելի օրհնած պիտի ըլլաս . ու  
 ձեր մէջը՝ և ձեր անասուններուն մէջը՝ թէ  
 արուններէն և թէ՛ էգերէն , ամուլ պիտի չգրա-  
 նուի : Այլ Տէրը ամէն հիւանդութիւնները քեզ- 15  
 մէ պիտի վերցունէ . ու ան Ազգիպտացոց գէշ  
 ցաւերը՝ որոնք դուն գիտես , բնաւ քու վը-  
 րադ պիտի չբերէ . այլ անոնք բոլոր քու թըշ-  
 նամիներուդ վրայ պիտի խրկէ : Այլ դուն պի- 16  
 տի սպառես ան բոլոր ազգերը , որոնք որ քու  
 Տէր Աստուածդ քու ձեռքդ պիտի տայ . ու  
 քու աչքերդ անոնց չխնայէ . ու անոնց աստուած-  
 ները չպաշտես , վասն զի ան քեզի որոգայթ  
 պիտի ըլլայ : Թէ որ սրտիդ մէջը ըսես , թէ 17  
 ան ազգերը ինձմէ շատուոր են , ես ի՞նչպէս կըր-  
 նամ անոնք հալածել . Անոնցմէ մի՛ վախնար , 18  
 այլ միշտ յիշէ ի՞նչ որ քու Տէր Աստուածդ ը-  
 րաւ փարաւօնին ու բոլոր Ազգիպտացիներուն ,  
 Ան մեծամեծ փորձանքները՝ որոնց դուն ականա- 19  
 ւես եղար , ան նշանները ու հրաշքները , ան  
 ջորաւոր ձեռքը ու բարձր բազուկը , որոնցմով  
 քու Տէր Աստուածդ քեզ հանեց . Քու Տէր Աս-  
 տուածդ անանկ պիտի ընէ բոլոր ան ազգերուն ,  
 որոնցմէ դուն կը վախնաս : Ու նաև քու Տէր 20  
 Աստուածդ անոնց վրայ իշամեղու պիտի խրկէ ,  
 որ մնացածները՝ ու քու երեսէդ պահուրտող-



- 21 ները մեռնին : Վասն որոյ անոնց երեսէն մի՛ վախնար . քանզի քու Տէր Մատուածդ՝ ան զօրաւոր
- 22 ու ահարկու Մատուածը՝ ձեր մէջն է : Ու նաև թու Տէր Մատուածդ ան ազգերը քու առջևէդ կամսց կամսց բնաջինջ պիտի ընէ . անոնք չես կրնար մէկէն հատցունել . չըլլայ որ դաշտին
- 23 գազանները վրադ շատնան : Այլ քու Տէր Մատուածդ՝ անոնք քու ձեռքդ պիտի մատնէ . ու զանոնք մեծ կործանումով պիտի կործանէ , մինչև
- 24 չև որ ամէնքը բնաջինջ ըլլան : Ու նաև անոնց թագաւորները քու ձեռքդ պիտի տայ , և անոնց անունները երկինքին տակէն ոչնչացունես . ու բնաւ քեզի դէմ կեցող պիտի չըլլայ , մինչև
- 25 չև որ անոնք կորսընցունես : Անոնց աստուածներուն փորուած կուռքերը կրակով այրես . ու անոնց վրայ եղած ոսկիին ու արծաթին աչք տնկելով՝ անոնք քեզի չառնես , որ անոնցմով որոգայթի չըռնուիս : Վասն զի անոնք քու Տէր
- 26 Մատուածոյդ առջևը գարշելի են . Արդ՝ գարշելի բան մը տունդ մի՛ տանիր . որ դուն ալ անոր պէս նզովսձ չըլլաս . անկից բոլորովին զզուիս , ու անիկայ արհամարհես , վասն զի նրզովսձ է ան :

## ԳԼ . Ը

1 — 20 Մովսէս կը յորդորէ Խորայեւացիները Եստուծոյ ճաշանդելու , անոր բարերարութիւնները յիշելով :

1 **Ա** մէն պատուիրանքները՝ որ ես այսօր կը պատուիրեմ՝ ձեզի՝ զգոյշ եղէք որ ընէք . որպէս զի սպրիք , ու շատնաք , և մտնաք ժառանգէք ան երկիրը՝ որն որ Տէրը ձեր հայրերուն երդումով խոստացաւ : Ու մի՛տքդ պահէ 2 բոլոր ան ճամբան , որ քու Տէր Եստուածդ քեզ անապատին մէջը աս քառասուն տարին պտըտցուց , քեզ խոնարհեցունելով փորձելու ու սրտիդ մէջինը իմանալու համար , թէ արդեօք դուն անոր պատուիրանքները պիտի պահես , թէ չէ : Եւ Տէրը քեզ խոնարհեցուց , անօթի ձգեց , և մանանայով կերակրեց , որն որ ոչ դուն կը ճանչնայիր , և ոչ քու հայրերդ , քեզի իմացունելու համար , թէ ոչ միայն հացով կապրի մարդ , հապա մարդը կապրի Եստուծոյ բերնէն ելած ամէն խօսքովը : Ես քառասուն 4 տարիին մէջը՝ քու վրայէդ լաթերդ չհիւցան , ու ոտքերդ չուռեցան :

5 Եւ սրտիդ մէջը զխոնաս թէ մէկ մարդ մը՝ ինչպէս որ իբ որդին կը խրատէ , քու Տէր Եստուածդ ալ քեզ անանկ կը խրատէ : Եւ քու 6 Տէր Եստուծոյդ պատուիրանքները պահես , որ անոր ճամբաներուն մէջը քալես , ու անորմէ վախնաս : Վանզի քու Տէր Եստուածդ 7

- մէկ աղէկ երկիր մը կը տանի քեզ , անձնի երկիր  
մը՝ որ լեռներէ ու դաշտերէ բղխող գետերով՝  
աղբիւրներով ու խորունկ ջուրերով լէցոն է .
- 8 Ընտանի երկիր մը՝ որ ցորենով , գարիով , այգի-  
ներով , թզենիներով և նռնենիներով լէցոն  
է . \*Իւզ տուող ձիթենիներու՝ ու մեղրի եր-
- 9 կիր . Ընտանի երկիր մը՝ որ հոն քու հացդ կուշտ  
պիտի ուտես , ու քեզի բնաւ բան մը պիտի  
չպակսի . երկիր մը՝ որուն քարերը երկաթ է ,  
ու անոր լեռներէն պղինձ պիտի հանես :
- 10 Ուստի երբոր ուտես ու կշտանաս , քու Տէր  
Մատուածդ օրհնես , քեզի ան աղէկ երկիրը տա-
- 11 լուն համար : Քու անձիդ զգուշութիւն ըրէ ,  
չըլայ որ՝ քու Տէր Մատուածդ մոռնաս , ու  
չպահես անոր պատուիրանքները , դատաստան-  
ները ու կանոնները , որոնք ես այսօր քեզի
- 12 կը պատուիրեմ : Ու երբոր ուտես ու կշտանաս ,  
և գեղեցիկ տուներ շինես , ու բնակիս անոնց մէ-
- 13 ջը . Ու երբոր արջառներիդ և հօտերդ շատնան ,  
ու նաև արծաթդ ու ոսկիդ շատնայ , և քու
- 14 ամէն բանդ շատնայ , Չըլայ որ սիրտդ հպար-  
տանայ , և քու Տէր Մատուածդ մոռնաս . ան որ
- 15 Եզիպտացոց երկրէն՝ ծառայութեան տունէն  
քեզ հանեց . Եւ ան մեծ ու ահագին , և կի-
- 16 պառած քարէն ջուր հանեց . Եւ քեզի՝ անա-  
պատին մէջը քու հայրերուդ չճանչցած մանանան

\* Ու՛մ ձիթենիներու , իւղի :

կերցուց , որ քեզ խոնարհեցունէ ու փորձէ ,  
 և վերջապէս քեզի աղէկու թիւն ընէ . Եւ սրբ-<sup>17</sup>  
 տիղ մէջը չըսես , թէ աս ապրանքը իմ կարո-  
 ղու թեամբս ու իմ ձեռքիս ուժովը վաստակե-  
 ցայ . Հապա քու Տէր Աստուածդ միտքդ բե-<sup>18</sup>  
 րես . քանզի ապրանք վաստակելու համար քեզի  
 ոյժ տուողը ան է . որ քու հայրերուդ երգում  
 բրած ուխտը հաստատէ , ինչպէս որ այսօր ՚ը  
 որ՛անաս :

Եւ թէ որ քու Տէր Աստուածդ մտնալով՝<sup>19</sup>  
 ուրիշ աստուածներուն ետեւէն երթաս , անոնք  
 պաշտես ու սնոնց երկրպագութիւն ընես , ես  
 այսօր ձեզի կը վկայեմ , որ դուք բոլորովին պի-  
 տի կորսուիք ան ազգերուն պէս՝ որ Տէրը<sup>20</sup>  
 ձեր առջևէն պիտի կորսընցունէ . անանկ պիտի  
 կորսուիք . ինչու որ ձեր Տէր Աստուծոյն խօս-  
 քը մտիկ չըրէք :

## Գ Լ . Թ

1 — 29 Մոփսէս Խորայէլացւոց քանի մը ապստամբութիւննե-  
 րը յիշեալ՝ կրկերցունէ անոնցմէ ինքզինքնին արդար սեպելու  
 կարծիքը :

Ո՛վ Խորայէլ մտիկ ըրէ . Գուն այսօր Յոր-<sup>1</sup>  
 դանանէն կանցնիս , որ երթաս քեզմէ մեծ  
 ու զօրաւոր ազգեր , ու մինչև երկինքը պարբու-  
 պաւոր մեծ քաղաքներ ժառանգես , Ըն մեծ ու<sup>2</sup>  
 երկայնահասակ ազգը՝ Անակին որդիները որոնք  
 դուն կը ճանչնաս , ու նաև լսեր ես թէ՛ Անակին  
 որդւոցը ո՞վ կրնայ դէմ դնել :

- 3 Երդ՝ դուն այսօր գիտցի՛ր , որ քու Տէր  
 Եստուածդ ինքը քու առջևդ կանցնի իբրև մա-  
 շող կրակ մը , ու անոնք պիտի կորսընցունէ և  
 քու առջևէդ անոնք պիտի ոչնչացունէ . և դուն  
 անոնք հալածես , ու շուտով կորսընցունես ,
- 4 ինչպէս որ Տէրը քեզի ըսաւ : Արբոր քու Տէր  
 Եստուածդ անոնք քու առջևէդ հալածէ , որը-  
 տիդ մէջը չըսես թէ՛ Տէրը իմ արդարութեանս  
 համար զիս աս երկիրը բերաւ՝ որ ժառանգեմ .  
 քանզի Տէրը աս ազգերը իրենց անօրէնութեանը
- 5 համար քու առջևէդ կըվառնտէ : Չէ՛ թէ քու  
 արդարութեանդ ու սրտիդ մօքրութեանը հա-  
 մար կըմտնաս անոնց երկիրը ժառանգելու , այլ  
 քու Տէր Եստուածդ ան ազգերուն անօրէնու-  
 թեանը համար՝ անոնք քու առջևէդ կըվառն-  
 տէ , որ հաստատէ ան խօսքը՝ որուն համար քու  
 հայրերուդ՝ Եբրահամին , Իսահակին ու Յա-
- 6 կոբին երդում ըրաւ : Ուստի գիտցի՛ր որ՝ քու  
 արդարութեանդ համար չէ՛ որ քու Տէր Ես-  
 տուածդ աս բարի երկիրը քեզի ժառանգել կու-  
 տայ . քանզի դուն խօտապարանոց ժողովուրդ  
 մըն ես :
- 7 Մի՛տքդ պահէ ու մի՛ մոռնար , որ դուն  
 քու Տէր Եստուածդ անապատին մէջը բարկա-  
 ցուցիր . Ազիպտացոց երկրէն ելած օրէդ՝ մին-  
 չե հոս եկած օրդ՝ Տէրոջը անձնազանդ եղաք :
- 8 Քորեբի մէջ ալ Տէրը բարկացուցիք . և Տէ-  
 րը ձեզ կորսընցունելու համար՝ ձեզի բարկա-
- 9 ցաւ : Արբոր ես լիւր ելայ , որ քարեղէն տախ-

տակները առնեմ , այսինքն՝ Տէրոջը ձեզի հետ  
 ըրած ուխտին տախտակները • քառասուն օր ու  
 քառասուն գիշեր լեռը կեցայ • ոչ հոց կերայ և ոչ  
 ջուր խմեցի • Ըն առնեմ Տէրը տուաւ ինձի 10  
 Ըստուծոյ մատովը գրուած երկու քարեղէն տախ-  
 տակները , ու անոնց վրայ հրեւոյս Երբ  
 ան խօսքերը , որոնք ժողովքին օրը լեռանը  
 վրայ կրակին մէջէն Տէրը ձեզի զրուցեց : Երբ 11  
 քառասուն օրէն ու քառասուն գիշերէն ետքը՝ Տէ-  
 րը երկու քարեղէն տախտակները՝ այսինքն ուխ-  
 տին տախտակները ինձի տուաւ : Եւ Տէրը ին- 12  
 ձի ըսաւ • Ե՛լ , ու շուտով ասկից վար իջիր •  
 քանզի քու Ազիպտոսէն հանած ժողովուրդդ ա-  
 նօրէնութիւն ընելով՝ իմ պատուիրած ճամբա-  
 յէս շուտով խոտորեցան • իրենց ձուլածոյ կուռք  
 շինեցին : Ու նաև Տէրը ինձի հետ խօսելով՝ 13  
 ըսաւ • Աս աս ժողովուրդին նայեցայ , և ահա՛  
 խստապարանոց ժողովուրդ մըն է ան • Ի՞նչ տուր 14  
 ինձի , որ անոնք կորսնցունեմ , ու անոնց ա-  
 նունը երկինքին տակէն բնաջինջ ընեմ , և քեզ  
 անոնցմէ մեծ ու զօրաւոր ազգ մը պիտի ընեմ :

Ըն առնեմ ես դարձայ , լեռնէն վար իջայ • 15  
 ու լեռը կրակով կայրէր , և ուխտին երկու  
 տախտակները երկու ձեռքերուս վրան էր : Եւ 16  
 քը նայեցայ տեսայ որ՝ ձեր Տէր Ըստուծոյն դէմ  
 մեղք գործելով՝ ձեզի ձուլածոյ որթ շիներ էք ,  
 Տէրոջը ձեզի պատուիրած ճամբայէն շուտով  
 խոտորեր էք • Ըն առնեմ ան երկու տախտակ- 17  
 ները բռնեցի , ու իմ երկու ձեռքերուս վրայէն

- վար նետեցի, և ձեր աչքին առջևը անոնք կո-  
 18 տրտեցի: Ատքը առջինին պէս Աստուծոյ առջևը  
 աղաչեցի. քառսուն օր ու քառսուն գիշեր հաց  
 չկերայ ու ջուր չխմեցի, բոլոր ձեր գործած  
 մեղքին համար. վասն զի Տէրօջը առջևը չա-  
 րութիւն ընելով՝ անիկայ բարկացուցեր էիք:  
 19 Ու ես վախցայ ան սոսկալի բարկութենէն՝ որով  
 Տէրը ձեր վրայ բարկացաւ ձեզ կորսընցունելու  
 20 համար: Տէրը ան անգամին ալ ինձի լսեց: Աւ  
 Տէրը Ահարօնին խիստ բարկացաւ, անանկ որ  
 զանիկայ պիտի կորսընցունէր. ու ան ատենը Ա-  
 21 հարօնին համար ալ աղօթք ըրի: Աւ ձեր ը-  
 բած մեղքը՝ այսինքն որթը առի, ու անիկայ  
 կրակով այրեցի. ետքը անիկայ ձեծելով՝ լաւ  
 մը փշեցի, մինչև որ մանր փշի եղաւ. և ան  
 22 փոշին լեռնէն իջնող առուին մէջը նետեցի: «Ասե  
 Տաբերայի, Մասայի ու Աիբրօթ Հաթթա-  
 23 վայի մէջ Տէրը բարկացուցիք: Ու երբոր Տէ-  
 րը ձեզ Աադէսբառնեայէն խրկեց, և ձեզի ը-  
 սաւ. Ալէք, ու իմ ձեզի տուած երկիրս ժա-  
 ուանգեցէք. անատենը ձեր Տէր Աստուծոյ  
 հրամանին անհնազանդութիւն ըրիք, ու ա-  
 24 նոր չհաւատալով՝ անոր խօսքը մտիկ չըրիք:  
 Չեզ ճանչցած օրէս ՚ի վեր՝ Տէրօջը անհա-  
 25 զանդ էք: Ուստի ես քառսուն օր ու քառսուն  
 գիշեր որ աղաչեցի, Տէրօջը առջևը աղաչեցի.  
 որովհետև Տէրը ըսաւ որ ձեզ կորսընցունէ:  
 26 Աւ ես Տէրօջը աղաչելով՝ ըսի. «Վ՛՛՛՛ Տէր իմ՝  
 Տէր, մի՛ կորսընցուներ քու ժողովուրդդ ու

ժատանգութիւնդ՝ որն որ քու մեծութեամբդ ազատեցիր , ու զօրաւոր ձեռքով Լիպատսկն հանեցիր : Քու ծառաներդ՝ Երրասամը , Իսա 27 հակը ու Յակօբը յիշէ , և աս ժողովուրդին խատութեանը , անօրէնութեանը ու մեղքին մի նայիր : Չըբայ որ՝ ան երկիրը ուսկից որ մեզ 28 հանեցիր , անոր բնակիչները ըսնն թէ Տէրը կարող չըլլալով զանոնք տանելու ան երկիրը՝ որ անոնց խստացիր էր , կամ զանոնք ատելուն համար հանեց , որ անտարատին մէջը մնացնէ զանոնք : Արովհետեւ անոնք քու ժողովուրդդ ու 29 ժատանգութիւնդ են , որոնք դուն քու մեծ զօրութեամբդ ու բարձր բազուկովդ Լիպատսկն հանեցիր :

## Գ Լ . Ժ

1 Մոխես կը յիշէ Եսաուի որդի որդեմութիւնը՝ որով երկու տախտակները նորոգեց , 6 քահանայութեան յաջորդութիւնը որոշեց , 8 Վեաացուց ցեղը զատեց , 10 ու ժողովուրդին համար Մոխեսին բրած աղաչանքը ընդունեց : 12 Հնազանդութեան յորդորանք մը :

1 Են ատենը Տէրը ինձի ըսաւ . Քեզի առջին-  
 2 ներուն պէ , երկու հատ քարէ տախտակներ կոփէ , ու ընդ ինձի՛ կիր , ու նաե քեզի մէկ փայտէ տապանակ մը շինէ . Եւ տախտակներուն վրայ՝ քու առջի կտորած տախտակներուդ վրայի խօսքերը գրեմ՝ , ու սնոնք տապանակին մէջը դնես : Աւստի ես սատիմայ փայտէն տա- 3



- 4 պանակ մը շինեցի, ու առջինին պէս երկու հաս-  
 քարէ տախտակներ կոփեցի, ու ան երկու տախ-  
 5 տակները ձեռքս առնելով՝ լեռը կլայ: Եւ աս  
 տախտակներուն վրայ՝ առջի գրուածքին պէս՝  
 ան տասը խօսքերը գրեց, որոնք Տէրը ձեզի լե-  
 6 ռան վրայ կրակին մէջէն զրուցեց ժողովքին օ-  
 7 թը. և Տէրը անոնք ինձի տուաւ: Ընկից  
 դառնալով՝ լեռնէն վար իջայ. ու տախտակնե-  
 րը՝ շինած տապանակիս մէջը դրի, որ ան տեղը  
 կենան, ինչպէս որ Տէրը ինձի պատուիրեց:  
 8 Եւ Խորայէլի որդիքը՝ \*Բերոթ Բանէյականէն՝  
 Սուէրա չուեցին: Ըն տեղը մեռաւ Ըհարօնը,  
 ու ան տեղը թաղուեցաւ. և անոր տղան Եղիա-  
 9 զարը անոր տեղը քահանայ եղաւ: Ընկից Գադ-  
 գադ, ու Գադգադէն ջուրի առուններու երկիրը՝  
 Ետէբաթա չուեցին:
- 8 Ըն ատենը Տէրը Ղևիին ցեղը զատեց, որ  
 Տէրոջը ուխտին տապանակը կրէ, Տէրոջը առ-  
 9 ջիւր կենայ, անոր ծառայութիւն ընէ, ու ա-  
 նոր անունովը օրհնէ մինչև աս օրս: Ըս պատ-  
 ճառաւ Ղևիին իր եղբարցը հետ բաժին ու ժա-  
 ռանգութիւն չունի, անոր ժառանգութիւնը  
 Տէրն է, ինչպէս որ քու Տէր Ըստուածդ ա-  
 նոր ըսաւ:

- 10 Եւ ես առջի օրերուն համեմատ՝ քառսուն օր  
 ու քառսուն դիշեր լեռանը վրայ կեցայ, ու Տէ-  
 րը աս անգամին ալ ինձի մտիկ ընելով՝ չու-

\*Այս հակամի որդւոցը Բերոթէն, իսկ հակամի որդւոցը  
 ջրհորներէն

զեց քեզ կորսընցունել : Եւ Տէրը ինձի ըսաւ . 11  
 Ելի՛ր՝ ու ժողովուրդին առջևէն չուէ , որ մտնան  
 ու ժառանգեն ան երկիրը՝ որն որ անոնց հայ-  
 րերուն երդում ըրի անոնց տալու համար :

Ուրեմն ո՛վ Իսրայէլ , հիմա քու Տէր Եւ- 12  
 տուածդ քեզմէ ի՞նչ կրպահանջէ . միայն թէ  
 քու Տէր Ետուուծմէդ վախնաս , անոր ամէն ճամ-  
 բաներուն մէջը քալես , և անիկայ սիրես , ու  
 նաև քու Տէր Ետուուածդ՝ բոլոր սրտովդ ու  
 բոլոր հոգովդ պաշտես , Եւ Տէրոջը պատուի- 13  
 բանքները ու կանոնները պահես , որոնք ես այս-  
 օր քեզի կրպատուիրեմ . որ քեզի աղէկ ըլլայ :  
 Եւ հա՛ երկինքը ու երկնից երկինքը , նաև եր- 14  
 կիրը ու բոլոր անոր մէջը եղածը՝ քու Տէր Եւ-  
 տուծոյդ ինչպէ՞ս է : Միայն թէ Տէրը քու 15  
 հայրերուդ հաւնեցաւ , ու անոնք սիրեց . և  
 անոնցմէ ետքը անոնց զաւակները՝ այսինքն ձեզ  
 ընտրեց բոլոր ազգերուն մէջէն , ինչպէ՛ս որ այս-  
 օր ինչպէ՛ս է : Ուստի ձեր սրտերուն անթը- 16  
 վատութիւնը թըրիատեցէք . ու ձեր պարանոց-  
 ները սլ մի՛ խտտացունէք . Քանզի ձեր Տէր 17  
 Ետուածը՝ աստուածներուն Ետուածը ու տէ-  
 րերուն Տէրն է , մեծ՝ զօրաւոր ու ահեղ Եւ-  
 տուած մըն է , որ աչառութիւն չընեք ու կա-  
 շառք չաւնեք . Ենիկայ որբին ու որբէվարիին ի- 18  
 բաւունք կընէ , պանդուխտը կըսիրէ , ու անոր  
 հաց ու հանդերձ կուտայ : Ուրեմն պանդուխտը 19  
 սիրեցէք . քանզի դուք սլ Եզիպտացւոց երկ-  
 րին մէջը պանդուխտ էիք : Քու Տէր Ետուուծ- 20

մէջ վախնաս , ու անիկայ պաշտես , և անոր յա-  
 21 րիս , ու անոր անունովը երգում ընես : Քու  
 պարծանքդ անիկայ է ; և քու Եստուածդ ա-  
 նիկայ է , որ քեզի համար աս մեծ ու սքանչելի  
 բաները ըրաւ , որոնք դուն քու աչքերովդ տե-  
 22 սար : Քու հայրերդ՝ եօթանասուն հոգիով Ա-  
 գիպտոս իջան , ու հիմա քու Տէր Եստուածդ՝  
 քեզ երկինքի աստղերուն պէս շատցուց :

ՔԼ . ԺԵ

1 Մոյսէս հնազանդութեան կըյորդորէ Խորայէլացիները , 2 Ես-  
 տուծոյ մեծ գործքերուն իրենց տեղեակ ըլլալովը , 8 Ես-  
 տուծոյ մեծ օրհնութիւններուն խոստմունքովը , 16 ու ըս-  
 պառնալիքներովը : 18 Արմացունէ նաև թէ պէտք է զգու-  
 շաւոր մտածութիւն ընել Եստուծոյ խօսքերուն մէջ : 26  
 Օրհնութիւնը ու անէծքը անոնց առջևը կըդնէ :

1 **Ո**ւրեմն դուն քու Տէր Եստուածդ սիրես , ու  
 միշտ անոր պատուիրած բաները , կանոննե-  
 րը , դատաստանները ու պատուիրանքները սրա-  
 2 չես : Աւ սյսօր գիտցէք , \* որ ձեր որդւոցը չէ  
 ի՞նչ խօսիս . որովհետև անոնք չեն գիտեր ու չտե-  
 սան ձեր Տէր Եստուծոյն խրատը , անոր մեծու-  
 3 թիւնը , զօրաւոր ձեռքը ու բարձր բազուկը ,  
 Ագիպտոսի մէջ՝ Ագիպտացւոց Փարաօն թագա-  
 4 ու գործքերը . Աւ ի՞նչ որ ըրաւ Ագիպտացւոց զօր-  
 քերուն , ձերուն ու կողքերուն . ու երբօր ա-

\* Աւ՛ որովհետև .

նոնք ձեր վրայ յարձակեցան, ինչպէս Տէրը՝ Կար-  
 միր ծովուն ջուրերը անոնց վրայ <sup>Պ</sup>գարձուց ու  
 անոնք կորսոնցուց մինչև աս օրս. Եւ անապա- 5  
 տին մէջը ձեզի ինչեր ըրաւ, մինչև ձեր հոս գա-  
 լը. Ու ինչ որ Ռուբենեան Աղիարին որդւոցը 6  
 Վաթանին ու Լբիթոնին ըրաւ, ինչպէս երկիրը  
 իր բերանը բացաւ, ու զանոնք իրենց տունովը՝  
 իրենց վրաններովը ու իրենց ամէն ստացուած-  
 քովը՝ բոլոր Խորայէլին մէջէն կլլեց: Սակայն Տէ- 7  
 րոջը մեծամեծ գործքերը տեսնողը՝ ձեր աչքերն  
 են: Ուրեմն պահեցէք ան ամէն պատուիրանքնե- 8  
 րը՝ որ ես այսօր կը պատուիրեմ ձեզի, որ զօրա-  
 նաք և ձեր ժառանգելու երկիրը մտնաք, ու  
 ժառանգէք. Եւ ձեր օրերը երկան ըլլան ան 9  
 երկրին վրայ՝ որն որ Տէրը ձեր հայրերուն եր-  
 դում ըրաւ՝ անոնց և անոնց սերունդին տալու,  
 անանկ երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը բոցիտէ:

Վանզի ան երկիրը՝ ուր որ դուք պիտի մտն- 10  
 նաք անիկայ ժառանգելու համար, Ագիպտոսի  
 երկրին պէս չէ՝ ուրկից որ ելաք. որ հոն երբոր  
 սերմ կը ցանէիր, բանջարի պարտեզի պէս ոտ-  
 քովդ անոր ջուր կուտայիր: Եւ ձեր մտնալու 11  
 ու ժառանգելու երկիրը՝ լեռնային ու դաշտա-  
 յին երկիր մըն է. երկինքի անձրևին ջուրովը  
 կը ջրուի. Եւ անկ երկիր մըն է, որն որ քու Տէր 12  
 Եստուածդ կը զարմանէ. Վու Տէր Եստուծոյդ  
 աչքը՝ տարիին սկիզբէն մինչև վերջը միշտ անոր  
 վրայ է: Ուստի թէ որ ուշադրութեամբ մտիկ 13

\*Եբր. յորդեւ տուաւ.

- ընէք իմ բոլոր պատուիրանքներս , որ այսօր ձեզի կը պատուիրեմ , ու ձեր Տէր Աստուածը սիրէք , և անիկայ բոլոր սրտով ու բոլոր հոգիով
- 14 պաշտէք , Ան տանը ձեր երկրին անձրեւը՝ առջի ու ետքի անձրեւը՝ իրենց ատենին պիտի տամ . և քու ցորենդ , քու գինիդ ու քու եղջ պիտի
- 15 ժողովես : Ու նաև քու արտիդ մէջ խոտ պիտի տամ՝ անասուններուդ համար , որ ուտես ու
- 16 կշտանաս : Չեր անձերուն զգուշութիւն ըրէք , չըլլայ որ ձեր սիրտը խաբուի ու դուք շտակ ճամբայէն խոտորելով՝ օտար աստուածները պաշտէք , ու անոնց երկրպագութիւն ընէք . Աւ
- 17 Տէրը ձեզի դէմ սաստիկ բարկանալով՝ երկինքը գոցէ , որ անձրև չըլլայ , ու երկիրը իր պտուղը չտայ . և Տէրոջը տուած բարի երկրէն շուտով կորսուիք :
- 18 Աս խօսքերս ձեր սրտին ու հոգիին մէջը դրէք , ու անոնք նշանի պէս ձեր ձեռքերուն վրայ կապեցէք , ու ճակատնոցի պէս ձեր աչքին առջևը ըլլան . Աւ ասոնք ձեր տղոցը սրվեցունէք , ու տունը նստած ատենդ , ճամբայ գացած ատենդ , և պառկելու ու ելլելու ատենդ՝
- 20 ասոնք խօսիս . Աւ ասոնք քու տանդ սեմոցը
- 21 վրայ ու դռներուդ վրայ գրես . Որպէս զի ան երկրին վրայ՝ որ Տէրը ձեր հայրերուն երդումը բաւ անոնց տալու , ձեր օրերը ու ձեր որդւոցը օրերը շատնան , իբրև երկինքի օրեր երկրի վրայ :

Քանզի թէ որ աս ձեզի պատուիրած բոլոր 22  
 պատուիրանքներս զգուշութեամբ պահէք ու ը-  
 նէք , և ձեր Տէր Եստուածը սիրէք , ու բոլոր  
 անոր ճամբաներուն մէջը քալէք , և անոր յա-  
 րիք , Տէրն ալ բոլոր ազգերը ձեր առջևէն պի- 23  
 տի վաճնտէ , և դուք՝ ձեզմէ մեծ ու զօրաւոր  
 ազգերու վրայ պիտի տիրէք : Եւ մէն ձեր ոտքին 24  
 կոխած տեղը՝ ձերը պիտի ըլլայ . ձեր սահմանը՝  
 անապատէն ու Լիբանանէն՝ գետէն՝ ասիական  
 Եփրատ գետէն մինչև արևմտեան ծովը պիտի  
 ըլլայ : Ու բնաւ մէկը պիտի չկարենայ ձեզի գէմ 25  
 դնել . Եւ ձեր Տէր Եստուածը՝ ամէն ձեր կո-  
 խած երկրին վրայ՝ ձեզմէ վախ մը ու սոսկում մը  
 պիտի բերէ , ինչպէս որ ձեզի ըսաւ :

Եւ չա՛նկաւ այսօր ձեր առջևը օրհնութիւն ու 26  
 անէճք կրդնեմ . Օրհնութիւնը՝ թէ որ Հնազան- 27  
 դութիւն ընէք ձեր Տէր Եստուծոյ պատուի-  
 րանքներուն , որոնք ևս այսօր ձեզի կը պատուիրեմ .  
 Եւնէճքը՝ թէ որ ձեր Տէր Եստուծոյ պատուի- 28  
 րանքներուն չ'հնազանդէք , ու խտորիք ան ճամ-  
 բայէն որ այսօր ձեզի կը պատուիրեմ , ու ձեր  
 չճանչցած օտար աստուածներուն հտնէն եր-  
 թաք : Ու երբոր քու Տէր Եստուածդ քեզ տա- 29  
 նի ան երկիրը , ուր որ պիտի մտնաս ու ժա-  
 ոանդես , Օրհնութիւնը՝ Քարիզին լեռան վրայ ,  
 ու անէճքը՝ Քերազ լեռան վրայ տաս . Եւ չա՛ն- 30  
 անք Յորդանանու ան դիի կողմը արևմտեան  
 ճամբուն վրայ՝ Վօրէի կաղնիներուն մօտ՝ Քաղ-  
 գաղային դիմացի հովիտին մէջը նստող Քանա-

- 31 Կնացւոց երկրին մէջն են : Որովհետեւ դուք Յորդանանէն պիտի անցնէք , որ մանաք ու ժառանգէք ան երկիրը՝ որն որ ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ . ու անիկայ պիտի ժառանգէք ,
- 32 և անոր մէջը պիտի բնակիք : Ուրեմն նայեցէ՛ք որ զզուշութեամբ կատարէք ան ամէն կանոնները ու դատաստանները՝ որոնք ես այսօր ձեր առջևը կը դնեմ :

## Գ Լ . Ժ Բ

1 Առապաշտութեան շէնքերը պէտք էր կործանել : 5 Աստուծոյ երկրպագութիւնը իր ընտրած տեղը պիտի մատուցուէր : 15 , 23 Երիւն ուտելը կարգիլուի : 17 , 20 , 26 Սուրբ բաները սուրբ տեղի մը մէջ պիտի ուտուէր : 19 Դատացին մտցուելու չէր : 29 Առապաշտութեան արտօնութիւնները բնեւէ պէտք չէր :

- 1 **Մ**էջաւ ասոնք են ան կանոնները ու դատաստանները՝ որոնք դուք պահելու ու ընելու էք ան երկրին վրայ , որն որ ձեր Հայրերուն Տէր Աստուածը ձեզի պիտի տայ ժառանգելու համար , որչափ ժամանակ որ երկրիս վրայ ապրիք :
- 2 Բոլոր ան տեղուանքը՝ ուր օր ձեր յաղթելու ազգերը՝ բարձր լեռներու վրայ , բլուրներու վրայ ու ո՛ր և իցէ տերևս լից ծառերու տակ՝ իրենց աստուածները պաշտեր են , անոնք բոլորովին պիտի կործանէք : Աւ նաև սեղանները փլցունէք , և անոնց արձանները կտրտէք . անոնց անտառները կրակով այրէք , ու անոնց աստուածներուն

կուսքերը կտար կտար ընէք . և անոնց անուններն ալ ան տեղէն ոչնչացունէք :

Իսկ ձեր Տէր Աստուծոյն պսակէս պիտի չընէք : 4  
 Հապա դուք պիտի փնտրուէք ան տեղը՝ որն որ ձեր 5  
 Տէր Աստուածը՝ ձեր ամէն ցեղերուն մէջէն պիտի ընտրէ իր անուանը բնակութեան համար ,  
 ու հոն պիտի երթաք : Աւ դուք ձեր ողջակէզները , 6  
 ձեր զոհերը , ձեր տասանորդները , ձեր բարձրացունելու ընծաները , ձեր ուխտերը ,  
 ձեր կամուօր ընծաները ու ձեր արջառներուն ու ոչխարներուն առջիննկները հոն տանիք . Աւ 7  
 հոն ձեր Տէր Աստուծոյն առջևը ուտէք , և ձեր Տէր Աստուածը՝ ձեր ամէն ձեռք զարկած բաներնիդ օրհնելուն համար՝ թէ դուք և թէ ձեր ընտանիքը ու բախտութիւն ընէք :

Մի՛ ընէք ան բոլոր բաները , որոնք մենք 8  
 այսօր աս տեղս կընենք , այսինքն՝ ամէն մարդ իր ուզածին պէս . Քանզի մինչև հիմա Հասաք 9  
 ան հանգստութեանը ու ժառանգութեանը՝ որ ձեր Տէր Աստուածը ձեզի պիտի տայ : Բայց դուք 10  
 Յորդանանէն պիտի անցնիք ու պիտի բնակիք ան երկրին մէջը՝ որ ձեր Տէր Աստուածը ձեզի ժառանգութիւն պիտի տայ . ու բոլոր ձեր շրջակայ թշնամիներէն ձեզ պիտի հանգստացունէ , ու հոն սպասողութեամբ պիտի բնակիք : Աւ ան տեղը՝ 11  
 որ ձեր Տէր Աստուածը պիտի ընտրէ իր անուանը բնակութեան համար , բոլոր ձեզի պատուիրածներս հոն տանիք՝ ձեր ողջակէզները , ձեր զոհերը , ձեր տասանորդները , ձեր բարձրացունե-



- լու ընծաները ու բոլոր ձեր ուխտերուն ըն-  
 12 տիր ընծաները, որ Տէրոջը պիտի ուխտէք . Աւ-  
 ձեր Տէր Աստուծոյն առջևը ուրախութիւն ը-  
 նէք, թէ դուք՝ թէ ձեր տղաքները ու աղջիկ-  
 ները, ձեր ծառաները ու աղախինները, և թէ  
 ձեր դռները եղող Ալեւացին . վասն զի ան  
 ձեզի հետ բաժին ու ժառանգութիւն չունի :
- 13 Օգոյ՛շ կեցիր, չըլլայ որ ամէն տեսած տեղը  
 14 աղջակէզ մատուցանես . Այլ քու աղջակէզը  
 ան տեղը մատուցանես, որն որ Տէրը քու ցե-  
 ղերուդ մէկուն մէջը պիտի ընարէ, ու բոլոր  
 15 պատուիրած բաներս ան տեղը ընես : Ասկայն  
 քու ամէն քաղաքներուդ մէջը՝ սրտիդ ուզածին  
 պէս մօրթեա՛ ու միտ ստես, որչափ որ քու Տէր  
 Աստուածդ քեզի օրհնութիւն տուեր է . ու ա-  
 նիկոյ մարութիւն ու անմարութիւն հարդը՝ այժեամի ու  
 16 եղջերուի պէս ուտեն : Բայց արիւնք չուտէք .  
 17 անիկոյ ջուրի պէս գետինը թափէք : Հորենիդ,  
 գինիիդ ու եղիդ տասանորդները, արջառներուդ  
 ու հօտերուդ առջինեկները, բոլոր ուխտ ըրած  
 ուխտերդ, կամուսր ու բարձրացունելու ըն-  
 18 ձաներդ քու դռներուդ մէջը բնաւ չուտես : Այլ  
 անտէք քու Տէր Աստուծոյդ առջևը՝ Տէր Աս-  
 տուծոյդ ընտրած տեղը ուտեա՛ թէ դուն, թէ  
 տղադ ու աղջիկդ, թէ ծառայ ու աղախինդ,  
 և թէ քու դռներդ եղող Ալեւացին . և քու  
 Տէր Աստուծոյդ առջևը բոլոր քու ձեռք զար-  
 19 կած բաներուդ վրայ ուրախանաս : Օգոյ՛շ կե-  
 ցիր, չըլլայ որ Ալեւացին զանց ընես, քանի՛  
 որ աղջ կս աս երկրիս վրայ :

Աւերբոյր քու Տէր Աստուածդ քեզի ըսածին 20  
 պէս քու սաՀմանդ մեծցունէ , ու սիրադ միս ու-  
 տել ուզելով՝ Միս ուտեմ ըսես , սրտիդ բոլոր  
 ցանկութեանը պէս միս ուտես : Թէ որ քու 21  
 Տէր Աստուծոյդ՝ իր անուանը բնակութեան Հա-  
 մար ընտրելու տեղը քեզմէ Հեռու է , քեզի պա-  
 տուիրածիս պէս քու արձառներէդ ու ոչխարնե-  
 րէդ մորթես , որոնք Տէրը քեզի պիտի տայ .  
 ու քու բոլոր ցանկութեանդ պէս քու քաղաքնե-  
 րուդ մէջը ուտես : Աւ այժեամբ ու եղջերուն 22  
 ինչպէս որ կուտուի , տնոնք ալ անանկ ուտես .  
 մարուր ու անմարուր մարդը անխտրաբար ու-  
 տեն : Բայց աղէկ զգուշացիր , որ արիւնը Հու- 23  
 տես . վասն զի արիւնը՝ ոգին է . ու ոգին միսին  
 Հետ Հուտես : Անիկայ Հուտես , այլ ջուրի պէս 24  
 գետինը թափես : Անիկայ մի՛ ուտեր , որ քեզի 25  
 աղէկ ըլլայ , ու քեզմէ ետքը քու զուակնե-  
 րուդ , Տէրոջը առջևը ուղիղ սեպուածը ընելուդ  
 Համար : Բայց քու նուիրելու բաներդ՝ և 26  
 ուխտերդ առնես , ու Տէրոջը ընտրած տե-  
 ղը տանիս : Աւ քու ողջակէզներդ՝ միտը ու ա- 27  
 րիւնը՝ քու Տէր Աստուծոյդ սեղանին վրայ մա-  
 տուցանես . բայց զոհերուդ արիւնը՝ քու Տէր  
 Աստուծոյդ սեղանին վրայ թափուի , ու միտը  
 ուտես : Օգոյշ եղիր Հնազանդելու ան բոլոր 28  
 խօսքերուն՝ որոնք քեզի պատուիրեցի , որպէս զի  
 քեզի աղէկ ըլլայ , ու քեզմէ ետքը քու զուակնե-  
 րուդ յաւիտեան , քու Տէր Աստուծոյդ առջևը  
 աղէկ ու Հաճոյ եղածը ընելուդ Համար :

- 29 Արբոր քու Տէր Աստուածդ քու առջևէդ ջարդէ ան ազգերը , որոնց երկիրը դուն ժառանգելու պիտի երթաս , ու երբոր անոնք ժառանգես ու անոնց երկրին մէջը բնակիս , Օգոյշ կեցիր , չըլլայ որ անոնք քու առջևէդ բնաջինջ ըլլալէն ետքը՝ անոնց հետեւիս ու որոգայթի մէջ իյնաս . և չըլլայ որ անոնց աստուածներուն վրայով հարցուփորձ ընես , ըսելով . Աս ազգերը ի՞նչպէս իրենց աստուածները կը պաշտէին , ես ալ այնպէս ընեմ . Գուն քու Տէր Աստուծոյդ անանկ չընես . քանզի անոնք՝ Տէրոջը ատելի եղած բոլոր զարշելի բաները իրենց աստուածներուն կընէին . որովհետև անոնք իրենց աստուածներուն պարտէ՛րն էր՝ համար՝ իրենց
- 32 ազգքները ու աղջիկները կըրակով կայրէին : Աս քեզի ի՛նչ որ կը պատուիրեմ , զգուշացիր ան ընելու . անոր վրայ բան մը չպելցունեն , ու անկից բան մը չպակսեցունեն :

Գ Լ . Ժ Գ

1 Աս ապաշտութեան յորդորոյնը 6 որքան մտ ազգականներէ ալ ըլլային , պիտի քարկոծուէին : 12 Աս ապաշտից քաղաքներուն խնայել պէտք էր :

- 1 Թէ որ ձեր մէջէն մէկ մարդարէ մը կամ երազատես մը ելլայ , ու ձեզի նշան մը կամ
- 2 հրաշք մը տայ , Աւ ձեզի ըսած նշանը կամ հրաշքը կատարուի , ու ձեզի ըսէ թէ՛ Արթանք օտար աստուածները պաշտենք , որոնք դուն չես

Ճանչցած . Են մարդարեւին կամ երազատեօսին <sup>3</sup>  
 խօսքը մտիկ մի՛ ընէք . քանզի ձեր Տէր Եստուած  
 ծը ձեզ կը փորձէ , որ հասկընայ թէ արդ՛օք  
 դուք ձեր Տէր Եստուածը բոլոր սրտով ու բո-  
 լոր հոգիով կը սիրէք : Չեր Տէր Եստուծոյն <sup>4</sup>  
 հետեող ըլլաք , ու անորմէ վախնաք , անոր  
 պատուիրանքները պահէք , ու անոր խօսքին նա-  
 ղանդութիւն ընէք , անիկայ սրտաւէք , ու անոր  
 յարիք : Եւ ան մարդարեւն կամ երազատեօսը պի- <sup>5</sup>  
 տի մեռցուի՛ . վասն զի ձեզ Ազիպտուէն հա-  
 նող՝ ու ձեզ ճառսյութեան տունէն աղատող  
 ձեր Տէր Եստուծոյն դէմ՝ աստուածութիւն խօ-  
 սեցաւ , որ ձեզ խտորեցունէ ձեր քալելու ճամ-  
 քայէն՝ որն որ ձեր Տէր Եստուածը ձեզի պա-  
 տուիրեց . և այսպէս շարութիւնը ձեր մէջէն  
 վերցունէք :

Թե՛ որ մօրդ տղան քու եղբայրդ , կամ <sup>6</sup>  
 զաւակդ , կամ աղջիկդ , կամ ծոցիդ կնիկը ,  
 և կամ քու մտերիմ բարեկամդ՝ որ քու անձիդ  
 պէս կը սիրէս , քեզ մոլորցունելով՝ ծածկա-  
 բար ըսէ . Արթանք ու օտար աստուածները  
 պաշտենք , որոնք ո՛չ դուն ճանչցար ո՛չ ալ  
 քու հայրերդ , Են շրջակայ ազգերուն աստուած- <sup>7</sup>  
 ներէն՝ թէ՛ ձեզի մօտ ըլլան և թէ՛ ձեզմէ հե-  
 ոու՝ երկրիս մէկ ծայրէն մինչև մեկալ ծայրը ,  
 Ենոր հաւանութիւն չտան , ո՛չ ալ անոր մի- <sup>8</sup>  
 տիկ ընես . քու աչքերդ անոր չինայնն , ո՛չ  
 ալ անոր վրայ դու թ ունենալով՝ պահես անի-  
 կայ . Եւ անշուշտ մեռցունես . ու անիկայ <sup>9</sup>

- մեռցունելու համար՝ նախ քու ձեռքդ անոր վը-  
 րայ ըլլայ, ու ետքը բոլոր ժողովուրդին ձեռ-  
 10 քը . Քարով քարկոծես անիկայ, որ մեռնի .  
 քանզի ուզեց քեզ ապստամբեցունել քու Տէր  
 Աստուծմէդ, որ քեզ Ազիպատացոց երկրէն՝ ծա-  
 11 աայութեան տունէն հանեց : Աւ բոլոր Իսրա-  
 յէլը լսելով՝ վախնայ, ու մէյմըն ալ ձեր մէջը  
 ասոր պէս շարութիւն մը չընեն :
- 12 Թէ որ քու Տէր Աստուծոյդ՝ բնակութեան  
 համար քեզի տուած քաղաքներուն մէկուն վը-  
 13 րայով լսես, որ կըսեն՝ Թէ Չեր մէջէն քանի  
 մը չար մարդիկներ ելան, ու իրենց քաղաքին  
 բնակիչները ապստամբեցուցին, ըսելով. Արթանք  
 ձեր չճանչցած օտար աստուածները պաշտենք ,
- 14 Ան ատենը աղէկ մը քննես ու հարցունես, ու  
 երբոր տեսնաս որ ըսուած բանը ճշմարիտ ու  
 ստոյգ է, և ան գարշելի բանը ձեր մէջը եղած
- 15 է, Ան քաղաքին բնակիչները անպատճառ սու-  
 րէ անցունես, Թէ ան և Թէ անոր մէջը ե-  
 ղած բոլոր բաները նզովելով, անասուններն ալ
- 16 սուրէ անցունէս . Աւ անոր բոլոր աւարը ա-  
 նոր հրապարակին մէջը ժողվես, ու ան քաղա-  
 քը և անոր բոլոր աւարը քու Տէր Աստուծոյդ  
 համար կրակով այրես . ու անիկայ յախտեան
- 17 աւերակ ըլլայ՝ մէյ մըն ալ չընուի : Աւ ան նզո-  
 վածէն ձեռքիդ մէջը ըսն մը չփակչի . որպէս զի  
 Տէրը իր սաստիկ բարկութենէն դառնայ, քեզի  
 ողորմութիւն ու գթութիւն ընէ, և քեզ  
 շատցունէ, ինչպէս որ քու հայրերուդ երգում

ըրաւ , թէ որ դուն քու Տէր Աստուծոյդ նա . 18  
 զանդու թիւն ընելով՝ բոլոր անոր պատուիրանք-  
 ները պահես , որոնք ես այսօր քեզի կը պատուի-  
 բեմ՝ ու Տէր Աստուծոյդ առջևը ուղիղ ու հա-  
 ճոյ եղած բանը ընես :

## Գ Լ . Ժ Գ

1 Աստուծոյ զաւակները սուղի համար իրենց անձը տղեղացու-  
 նելու շին : 3 Անասուններէն , 9 ձուկերէն , 11 ու թռչ-  
 շուններէն որը պիտի ուտուէր՝ ու որը չուտուէր : 21 Ինք-  
 իրմէ մեռածը ուտուելու չէր : 22 Աստուածային պաշտո-  
 նին տրուելու տասանորդները : 23 Տէրոջը առջևը վայելե-  
 լու տասանորդները ու երախայրիները : 28 Երբորդ տարի-  
 ին ոգորմութեան ու բարեբարութեան տասանորդը :

Որովհետեւ դուք ձեր Տէր Աստուծոյն որդի- 1  
 ներն էք , ձեր մեռելներուն համար՝ ձեր  
 մարմնոյն վրայ կտրածներ չընէք , ու ձեր աշ- 2  
 քերուն վրայի մտերբը չածիլէք . Քանզի դուն  
 քու Տէր Աստուծոյդ սուրբ ժողովուրդն ես . և  
 Տէրը երկրի վրայ եղած բոլոր ժողովուրդնե-  
 րուն մէջէն քեզ ընտրեց՝ որ իր սեպհական ժո- 3  
 ղովուրդը ըլլաս : Պիղծ բան մը բնաւ չուտես :  
 Ասոնք են ձեր ուտելու անասունները . Ար- 4  
 ջառը , ոչխարը ու այծը , Կղջերուն , այծեամբ , 5  
 գոմէշը , խարբուղը , այծքաղը , յամայրը ու ա-  
 նալու թը : Աւ չորքոտանիներուն մէջը՝ ամէն 6  
 կճղակարաչխ ու որոճացող անասունները ու-  
 տէք . Բայց որոճացողներէն կամ կճղակարաչխ 7  
 եղողներէն՝ ուղտը , նապաստակը ու ճագարը

- չուտէք . քանզի անոնք թէպէտև կըորոճան ,  
 բայց կճղակաբաշխ չեն . անոնք ձեզի անմաքուր  
 8 ըլլան : Եւ խողը՝ որ թէև անիկայ կճղակա-  
 բաշխ է , բայց չըորոճար . անիկայ ձեզի անմա-  
 քուր ըլլայ : Եսոնց միտը չուտէք , ու ասոնց  
 դիերուն չդպչիք :  
 9 Թուրերուն մէջը բոլոր եղածներէն ասոնք ու-  
 տէք . ամէն թև ու թևի ունեցողը ուտէք ,  
 10 խայց ամէն թև ու թևի չունեցողը չուտէք .  
 անիկայ ձեզի անմաքուր ըլլայ :  
 11 Եմէն մաքուր թռչունը ուտէք : Եւ չուտելու  
 12 թռչունները ասոնք են . Երծիւր և պասկու-  
 13 ճը ու գետարծիւր , Եւ ցինը ու անգղը և ու-  
 14 բուրը՝ իր տեսակին պէս , Ու ամէն ազռաւը՝ իր  
 15 տեսակին պէս , Եւ ջայլամը ու բուն և կկուն  
 16 ու բազէն՝ իր տեսակին պէս , Եւ հաւպատի-  
 17 բը ու քաջահաւը և կարապը , Եւ հաւալուօր ,  
 18 ու սև անգղը և հողամաղը , Եւ արագիլը ու  
 քարարդը՝ իր տեսակին պէս , և յոպոպը ու  
 19 չիղջը : Եւ ամէն թռչող սողունները ձեզի ան-  
 20 մաքուր ըլլան . անոնցմէ բնաւ չուտէք : Եմէն  
 մաքուր թռչունները ուտէք :  
 21 Ինքիբմէ մեռածը բնաւ չուտէք . անիկայ ձեր  
 դոնները եղող պանդուխտին տաս , որ ուտէ .  
 կամ օտարահանի մը ծախես . քանզի դուն քու-  
 Տէր Եստուծոյդ սուրբ ժողովուրդն ես :  
 Ուր իր մօրը կաթին մէջը չեփես :  
 22 Տարիէ տարի՝ քու արտիդ մէջը ցանած սեր-  
 մերուդ ամէն արմտիքներէն՝ անպատճառ տա-

տանորդ տաս : Աւ քու ցորենիդ , գինիիդ ու 23  
 եղևդ տասանորդները , ու արջառներուդ և ոչ-  
 խարներուդ առջինեկները քու Տէր Աստուծոյդ  
 առջևը ուտես , ան տեղը՝ որ ինքը իր անունին  
 բնակութեանը համար ընտրելու է . որպէս զի  
 միշտ քու Տէր Աստուծմէդ վախնալ սորվիս :  
 Ու երբ որ քու Տէր Աստուածդ քեզ օրհնէ , թէ 24  
 որ ճամբան քեզմէ հեռու ըլլալով՝ կարող չըլլաս  
 անոնք տանելու ան տեղը՝ որ քու Տէր Աս-  
 տուածդ պիտի ընտրէ , իր անունը հոն գնելու  
 համար , Ան ատենը անոնք ստակ ընես , ու 25  
 ստակը ձեռքդ առնելով՝ քու Տէր Աստուծոյդ  
 ընտրելու տեղը երթաս , Ան ստակը՝ սրտիդ 26  
 բոլոր ուզած բաներուն , արջառներու կամ ոչ-  
 խարներու , գինիի կամ օղիի , ու սրտիդ ամէն  
 ուզած բանին տաս , և հոն քու Տէր Աստու-  
 ծոյդ առջևը ուտես ու ուրախանաս , դուն և քու  
 ընտանիքդ , Ու քու դոներդ եղող Ա և տաւ 27  
 ցին ալ զանց չընես . քանզի անիկայ քեզի հետ  
 բաժին ու ժառանգութիւն չունի :

Ամէն իրեք տարիին վերջը՝ ան նոյն տարիին 28  
 արմտիքներուն բոլոր տասանորդները հանես ,  
 և անիկայ քու քաղաքներուդ մէջը պահես . Ու 29  
 Ա և տացին՝ որ քեզի հետ բաժին ու ժառան-  
 գութիւն չունի , և դոներդ եղող օտարակա-  
 նը , որբը , ու որբէվարին գան՝ և ուտեն կըշ-  
 տանան . որպէս զի քու Տէր Աստուածդ քեզ  
 օրհնէ քու ձեռքիդ ամէն գործքերուն մէջը :



ՊԼ. ԺԵ

1 Եթե թնեցորդ տարին աղատութեան տարի պիտի ըլլար աղ-  
քատին համար . 7 այսու ամենայնիւ փոխ տրուի ու ձրի ալ  
տրուի : 12 Եբրայեցի ծառան եթե թնեցորդ տարին ձրի ա-  
ղատ պիտի ըլլար . 16 Իսկ երբոր իր տիրոջմէն դո՛ւ ըլլալով  
ուզէր քովը կենալ , կրնար մնալ : 19 Զօտերէն ամէն ա-  
րու անդրանիկները Տէրոջը պիտի նուիրուէին :

1 **Ա**մէն եթե թնեցորդ տարին թողութիւն ընես :  
2 **Ա**լ թողութեան կանոնը աս է . Եւ մէն պարտա-  
տէր՝ որ իր դրացիին բան մը փոխ տուած է , անի-  
կայ պիտի թողու , իր դրացիէն կամ եղբօրմէն  
պիտի չպահանջէ ան . վասն զի թողութիւնը Տէ-  
3 րոջը նուիրուած է : Օտարականէն պիտի պա-  
հանջես , բայց քու եղբօրմէդ աննելիքդ պիտի  
4 թողու . <sup>Յ</sup>մինչև որ քու քովդ աղքատ չգտնուի .  
վասն զի քու Տէր Եստուածդ անշուշտ քեզ պի-  
տի օրհնէ ան երկրին մէջ , որն որ քեզի ժառան-  
5 գութիւն պիտի տայ որ անոր տիրես . Միայն  
թէ որ քու Տէր Եստուծոյդ խօսքին ամէն կեր-  
պով նազանդիս , ու բոլոր պատուիրանքները  
որ այսօր քեզի կրպատուիրեմ , զգուշութեամբ  
6 պահես ու կատարես , Քու Տէր Եստուածդ ալ  
քեզի ըսածին պէս՝ քեզ պիտի օրհնէ , և դուն  
շատ ազգերու փոխ պիտի տաս , բայց դուն  
փոխ պիտի չառնես , դուն խիստ շատ ազգերու  
վրայ պիտի տիրես , բայց անոնք բնաւ քու վը-  
7 րագ պիտի չտիրեն : Քու Տէր Եստուծոյդ քե-  
զի տուած երկրին մէջը՝ քու քաղաքներուդ մէ-

<sup>Յ</sup>Ամ անանկ որ՝

կուն մէջը՝ թէ որ եղբայրներուդ մէկը աղքատ  
 ըլլայ , խստասրտութիւն չընեն , ու աղքատ  
 եղբորդ՝ ձեռքդ չգոցեն . Հապա անպատճառ 8  
 ձեռքդ բաց ըլլայ անոր , ու անոր չքաւո-  
 րութեանը բաւական եղածին չափ անոր փոխ  
 տաս : Օգոյշ կեցիր , չըլլայ որ սրտիդ մէջէն 9  
 չար խորհուրդ մը անցունես , ու Եօթներորդ տա-  
 րին՝ թողութեան տարին մօտ է՝ ըսելով , աղքատ  
 եղբորդ վրայ անգութ աչքով նայիս , ու անոր  
 փոխ չտաս . և ան ալ քեզի դէմ Տէրոջը աղա-  
 զակէ , ու դուն մեղքի տէր ըլլաս : Ենպատճառ 10  
 անոր պիտի տաս , ու անոր տալու ատենդ բնաւ  
 սիրող չնեղի . վասն զի քու Տէր Եստուածդ աս  
 պատճառաւ քու ամէն գործքերուդ ու ամէն  
 ձեռք զարկած բաներուդ մէջը քեզ պիտի օրհնէ :  
 Արովհետեւ երկրին մէջէն աղքատ պակաս պիտի 11  
 չըլլայ , անոր համար քեզի կըպատուիրեմ ու  
 կըսեմ . Քու երկրիդ մէջը եղած աղքատ ու տա-  
 ռապեալ եղբորդ՝ ձեռքդ բաց ըլլայ :

Ե- թէ որ քու եղբայրներէդ Եբրայեցի մարդ 12  
 մը կամ կնիկ մը քեզի ծախուի , անիկայ վեց  
 տարի քեզի ծառայութիւն պիտի ընէ . ու եօթ-  
 ներորդ տարիին՝ քու ծառայութենէդ պիտի ա-  
 զատես անիկայ : Եւ ազատելու ատենդ անիկայ 13  
 պարապ պիտի չխրկես . Քու ոչխարներէդ , քու 14  
 կալէդ և քու ննձանէդ անպատճառ պաշար  
 տաս անոր , ու քու Տէր Եստուածդ ինչպէս որ  
 քեզ օրհնեց , անանկ պիտի տաս : Եւ միտքդ պիտի 15  
 բերես , որ դուն ալ Եգիպտոսի երկրին մէջ ծա-

- ուայ էիր , ու քու Տէր Աստուածդ քեզ անկից ազատեց . և սա պատճառով սա բանը քեզի կը
- 16 պատուիրեմ այսօր : Բայց թէ որ քեզ և քու տունդ սիրելուն համար , ու անիկայ քու քովդ հանգիստ ըլլալուն համար , Վովէդ չեմ ելար՝
- 17 ըսէ , Ան ատենը հերիւն մը առնես , ու անոր ականջը դրանդ վայ ծակես , և անիկայ քեզի , յաւիտեան ծառայ ըլլայ . աղախինիդ ալ այս-
- 18 պէս պիտի ընես : Անիկայ ազատելդ դժուար չերևնայ քեզի . վասն զի քեզի վեց տարի ծառայութիւն ըրաւ , որն որ վարձկանի մը վարձքին կրկնապատիկ արժէք ունի . ու քու Տէր Աստուածդ ամէն գործքերուդ մէջը քեզ պիտի օրհնէ :
- 19 Արջառներուդ ու հօտերուդ ամէն արու անգրանիկները քու Տէր Աստուծոյդ պիտի նուիրես . արջառներուդ անգրանիկներովը չգործես , ու անգրանիկ ոչխարներուդ բուրդը պիտի չկտրես :
- 20 Տարիէ տարի Տէր Աստուծոյդ առջևը՝ Տէրոջը ընտրած տեղը պիտի ուտես զանոնք , դուն և
- 21 քու ընտանիքդ : Բայց թէ որ անոնք արատաւոր ըլլան , կաղ կամ կոյր ըլլան , կամ ինչ և իցէ ուրիշ գէշ պակասութիւն մը ունենան ,
- 22 անոնք քու Տէր Աստուծոյդ չզոհես . Անանկը՝ քու քաղաքներուդ մէջը պիտի ուտես . մաքուր ու անմաքուր եղողները անխտրաբար ուրիշ
- 23 այժեամի ու եղջերուի պէս : Կիայն անոր արիւնքնը չուտես . ջուրի պէս գետինը թափես ան :

## Գ Լ . Ժ Թ

1 Օտակին, 9 Շարաթներուն, 13 և Տաղաւարահարաց տո-  
ները: 16 Եմէն արուն իր կարողութեանը համեմատ ընծայ  
պիտի բերէր Տէրոջը՝ առ իրեք տօներուն: 18 Վաստակունե-  
րու և դատաստանի համար: 21 Ընտան անկէլը ու արձան  
կանգնեցունելը կարգիլուի:

Մ պիպ ամսուն զգուշութիւնով նայէ, որ զա- 1  
տիկը ընես քու Տէր Եստուծոյդ. վասն զի  
քու Տէր Եստուածդ Եպիպ ամսուն մէջ գիշե-  
րով հանեց քեզ Ազխատուէն: Օտակի համար՝ 2  
քու Տէր Եստուծոյդ ոչխարներ ու արջառներ  
մորթես, ան տեղը՝ որ Տէրը պիտի ընտրէ իր  
անուանը բնակութեան համար: Ընոր հետ 3  
խմորեալ հաց չուտես. եօթը օր նեղութեան  
անխմոր հաց պիտի ուտես անոր հետ. վասն զի  
Ազխատուի երկրէն տագնապով դուրս ելար. որ  
բոլոր կենացդ օրերուն մէջը՝ Ազխատուի երկրէն  
ելած օրդ միաքդ բերես: Աւ քու բոլոր սահ- 4  
մաններուդ մէջը եօթը օր բնաւ խմոր չերինայ,  
ու առջի օրուան իրիկունը մորթած միսէդ մինչև  
առտու չմնայ: Քու Տէր Եստուծոյդ քեզի 5  
տուած քաղաքներուն մէջը բնաւ կարող չըլլաս  
զատիկը մորթելու. Հապա միայն ան տեղը՝ որ  
քու Տէր Եստուածդ պիտի ընտրէ իր անուանը  
բնակութեան համար, հոն պիտի մորթես զա- 6  
տիկը իրիկուան դէմ՝ արևը մտած ատենը, Ա-  
զխատուէն ելած ժամանակդ: Աւ քու Տէր Ես- 7  
տուծոյդ ընտրած տեղը անիկայ եփես ու ուտես.  
և առտուանց դառնաս՝ տունդ երթաս: Վ եց օր 8

անխմոր հաց ուտես . ու եօթներորդ օրը՝ քու  
Տէր Աստուծոյդ համար տօնախմբութեան օր  
պիտի ըլլայ , և բան չըանի՛ս :

- 9 Գուն բեղի համար եօթը շաբաթ պիտի  
համրես . ու աս եօթը շաբաթը՝ հունձքերուն  
մէջը մանդաղ դրած ատենէդ պիտի սկսիս համ-  
10 ընլու : Ատքը քու Տէր Աստուծոյդ շաբաթ-  
ներուն տօնը ընելով՝ քու Տէր Աստուծոյդ քե-  
ղի տուած օրհնութիւնին համեմատ՝ ձեռքէդ ե-  
11 կած կամաւոր ընծան պիտի տաս . Աւ ան տե-  
ղը՝ որ քու Տէր Աստուծոյդ պիտի ընտրէ իր  
անուանը բնակութեան համար , հոն քու Տէր  
Աստուծոյդ առջևը ուրախութիւն ընես , դուն  
ու քու տղադ և աղջիկդ , քու ծառայ ու ա-  
ղախինդ , ու քու քաղաքներդ եղող Աւտացի-  
ցին , և ձեր մէջը գտնուած օտարականը , որքը  
12 ու որբէվարին : Ու Ազխատոսի մէջ ծառայ ըլ-  
լալդ միտքդ բերելով՝ աս կանոնները զգուշու-  
թեամբ կատարես :
- 13 Վու կալիդ ու նձանիդ քիչքից ժողովէն ետ-  
քը՝ եօթը օր տաղաւարահարաց տօնը պահես :
- 14 Աւ տօնիդ մէջը ուրախութիւն ընես , դուն ու  
քու տղադ և աղջիկդ , քու ծառայ ու աղա-  
խինդ , և քու քաղաքներդ եղող Աւտացի-  
ցին , և քու քաղաքներդ եղող Աւտացի-  
ցին , որքը ու որբէվարին : Վու Տէր  
15 Աստուծոյդ քու բոլոր բերքերդ՝ ու ձեռքիդ  
գործքերը օրհնելուն համար , Տէրոջը ընտրած  
տեղը՝ քու Տէր Աստուծոյդ եօթը օր տօն ընե-  
լով՝ ուրախութիւն ընես :

\* Աւ տուած . Աճ . դոններդ

Տարին իրեք անգամ՝ աշինն բաղարջակե- 16  
րաց տօնին , շաբաթներու տօնին ու տաղաւա-  
րահարաց տօնին՝ քու ամէն արուներդ քու Տէր  
Մատուծոյդ առջևը պիտի երևնան ան տեղը՝ որն  
որ ինքը պիտի ընտրէ . ու Դէլը Տէրոջը առջևը  
Յէրուշալայի պարապ շերեւայ : Ամէն մէկը՝ քու Տէր 17  
Մատուծոյդ քեզի տուած օրհնութեանը համե-  
մատ , ձեռքէն եկածին չափ ուրիշ Բէրէ :

Քու Տէր Մատուծոյդ քեզի տուած ամէն քա- 18  
ղաքներուդ մէջը , քու ցեղերուդ համեմատ՝ դա-  
տաւորներ ու ոստիկաններ կարգես , ու անոնք  
արդար դատաստանով ժողովուրդը դատեն : Ի- 19  
րաւունքը շղարձունես . աշտութիւն չընես  
ու կաշառք չառնես . վասն զի կաշառքը իմաս-  
տուններուն աչքը կրկուրացունէ , ու արդարնե-  
րուն խօսքը սուտ կըհանէ : Երդարութեան՝ 20  
արդարութեան միայն հետեող ըլլաս , որ ողջ  
մնաս , և քու Տէր Մատուծոյդ քեզի տուած եր-  
կիրը ժառանգես :

Քու Տէր Մատուծոյդ համար շինելու սեղա- 21  
նիդ քովը՝ ինչ և իցէ ծառէ անտառ չանկես քե-  
զի . Երձան ալ չկանգնես քեզի , ուսկից որ քու 22  
Տէր Մատուծոյդ կրգզուի :

Գ Լ . Ժ Է

1 Սատուցուելու բաները անարատ պիտի ըլլային : 2 Առապաշտ-  
ները պիտի մեռցուէին : 8 Գժուարին վէճերը՝ քահանաները  
ու դատաւորները պիտի վճռէին , 12 ու ան վճիռին՝ դէմ  
դնողը պիտի մեռցուէր : 14 Թաղաւորի մը ընտրութիւնը ,  
16 ու անոր պարտաւորութիւնները :

- 1 **Պ**ակտութիւն մը կամ արատ մը ունեցող ար-  
ջաւոր կամ ոչխարը՝ քու Տէր Աստուծոյդ  
զոհ չմատուցանես . վասն զի ասիկայ՝ քու Տէր  
Աստուծոյդ առջևը պիտի է :
- 2 Քու Տէր Աստուծոյդ քեզի տուած քաղաք-  
ներուն մէջը՝ թէ որ ձեզմէ անանկ մարդ մը  
կամ կնիկ մը գտնուի , որ քու Տէր Աստուծոյդ  
առջևը անօրէնութիւն ընելով՝ ու անոր ուխ-  
տը չպահելով , Խմ հրամանիս դէմ՝ երթայ  
ուրիշ աստուածներուն , արեգակին կամ լուսի-  
նին և կամ բոլոր երկինքի <sup>օ</sup> զարդերուն ծառա-  
յութիւն ու երկրպագութիւն ընէ . Այլ դուն  
աս բանը լսելէդ ետքը՝ աղէկ մը քննութիւն  
ընելով՝ հասկընաս որ պատճառով բանը ճշմա-  
րիտ է , ու Խորայէլի մէջ անանկ պղծութիւն մը  
եղեր է . Ան ատենը աս անօրէնութիւնը ը-  
նող մարդը կամ կնիկը դռներդ հանես . և  
ան մարդը կամ կնիկը քարերով քարկոծես ,  
ու մեռնի : Այլ ան մահապարտը՝ երկու կամ ի-  
րեք վկայի բերնովը մեռնի . մէկ վկայի բերնո-  
վը չմեռնի : Անիկայ մեռցունելու համար , առաջ՝

\* Եփ. . զօրքին

վհաներուն ձեռքը անոր վրայ պիտի բլայ, ու անկից ետքը բոլոր ժողովուրդին ձեռքը . և աս կերպով չարութիւնը ձեր մէջէն վերցունես :

Երբ որ \* զանազան տեսակ արիւնհեղութիւն- 8 ներու, դատերու կամ վէրքերու վրայով՝ քու քաղաքներուդ մէջը եղած վէճերուն վճռահաստութիւնը † խիստ դժուար երևնայ քեզի՝, ան ատենը ելլաս և քու Տէր Ըստուծոյդ ընտրած տեղը երթաս, Ու Գ և տացի քահանաներուն և 9 ան ժամանակի դատաւորին մօտենալով՝ խորհուրդ հարցունես . ու անոնք օրէնքին վճիռը քեզի պիտի ըսեն . և պիտի ընես ան հրամա- 10 նին համեմատ՝ որ Տէրոջը ընտրած տեղը քեզի կը ըսեն, ու բոլոր անոնց սորվեցուցած խօսքը զգուշութեամբ ՚ի գործ դնես . Եւ անոնց յայտ- 11 նած օրէնքը ու զուրցած դատաստանը ամբողջ պիտի կատարես . ու անոնց սորվեցուցած խօսքէն բնաւ չխոտորիս՝ ոչ աջ դին և ոչ ձախ դին : Բայց թէ որ մէկ մարդ մը հպարտու- 12 թիւն ընելով՝ քու Տէր Ըստուծոյդ ծառայող քահանային կամ դատաւորին խօսքը մտիկ չընէ, ան մարդը պիտի մեռնի, ու անօրէնութիւնը Խորայէլէն վերցունես : Եւ բոլոր ժողովուրդը 13 լսելով՝ վախնայ, ու մէյմըն ալ հպարտութիւն չընէ :

\* Եբօ . արեան և արեան մէջ տեղը, դատի ու դատի մէջ տեղը, կամ վերքի ու վերքի մէջ տեղը

† Եբօ . քեզմէ աւելի դժուար բլայ



- 14 Երբոր քու Տէր Աստուծոյդ քեզի տուած  
 երկիրը մտնաս , ու անոր տիրելով՝ հոն բնա-  
 կես , ու ըսես . Իմ բոլորտիքս եղող ազգերուն
- 15 պէս ետ ալ վրաս թագաւոր մը դնեմ . Անպատ-  
 ճառ քու Տէր Աստուծոյդ ընտրած մարդը վրագ  
 թագաւոր դնես . ու քու եղբայրներէդ մէկը  
 վրագ թագաւոր դնես . ու եղբայրդ չեղող օտա-
- 16 բականը դնելու կարող չըլլաս : Սակայն չըլլայ  
 որ անիկայ իրեն համար ձիեր շատցունէ . ու  
 շատ ձիեր ժողովելու համար , ժողովուրդը Ազիպ-  
 տոս գարձունէ . որովհետեւ Տէրը ձեզի ըսաւ որ՝
- 17 մէյմըն ալ ան ճամբան չդառնայք : Ու նաև ա-  
 նիկայ իրեն կնիկներ չշատցունէ , որ սիրտը  
 չխոտորի , ու իրեն համար խիստ շատ արծաթ
- 18 ու ոսկի չժողվէ : Ալ իր թագաւորութեան ա-  
 թուին վրայ նստածին պէս , աս օրինաց գրքին  
 օրինակը՝ Վետացի քահանաներուն քովը եղած  
 օրինակէն՝ իրեն համար մէկ գիրքի մը մէջ գրէ :
- 19 Ալ ան իր քովը մնայ՝ ու իր կենացը բոլոր օ-  
 րերուն մէջը կարգայ . որպէս զի իր Տէր Աստուծ-  
 մէն վախնալ սորվի . և աս օրէնքին բոլոր խօս-  
 քերը , ու աս պատուիրանքները զգուշութեամբ
- 20 կատարէ : Ալ իր սիրտը՝ իր եղբայրներուն վրայ  
 չհպարտանայ , ու աս պատուիրանքներէն աջ  
 դին կամ ձախ դին չխոտորի . որ իր թագա-  
 ւորութեանը վրայ՝ երկար կեանք մը վայելէ Իս-  
 րայէլի մէջ , թէ ինքը և թէ իր որդիները :

## ԳԼ . ԺԸ

1 Վաճանայից ու Ղևտացոց ժառանգութիւնը Տէրն է : 3  
 Վաճանայից իրաւունքը . 6 Ղևտացոց բաժինը : 9 Եզ-  
 դերուն պղծութիւններէն հետու կենալու . 15 Վրբատոս  
 Սարգարէին մօտիկ ընելու , 20 ու սնապարծ մարգարէն մեռ-  
 ցունելու պատուէրը :

Ղևտացի քաճանաները՝ բոլոր Ղևիին ցեղը՝ 1  
 Վարայէլին հետ բաժին ու ժառանգութիւն  
 չունենան . Տէրոջը պատարագները ու անոր ժա-  
 ռանգութիւնը ուտին : Այսին որոյ անոնք իրենց 2  
 եղբայրներուն մէջը ժառանգութիւն չունենան .  
 անոնց ժառանգութիւնը Տէրը ինքն է , ինչպէս  
 որ անոնց ըսաւ : Ու երբոր ժողովուրդէն մէկը 3  
 զոհ կրմատուցանէ , թէ արջառ բլայ ան և թէ  
 ոչխար , քաճանաներուն իրաւունքը աս է . թէր ,  
 ճնտաները ու քաղիթը քաճանային պիտի տան :  
 Վու ցորենիդ , գինիիդ ու եղիդ երախայրիներ- 4  
 րը , ու նաև ոչխարներուդ առջի բուրդը՝ անոր  
 պիտի տաս . Այսին զի քու Տէր Աստուածդ՝ բո- 5  
 ւոր քու ցեղերուդ մէջէն անիկայ ընտրեց . որ  
 Տէրոջը անունին միշտ ծառայութիւն ընէ , թէ  
 ինքը և թէ իր որդիքը : Ու երբոր Ղևտա- 6  
 ցի մը քու քաղաքներուդ մէկէն , ու բոլոր Իս-  
 րայէլին մէջ իր բնակած տեղէն , իր սրտին  
 փափաքելովը՝ Տէրոջը ընտրած տեղը գայ , Են 7  
 ատենը հոն Տէրոջը առջևը կեցող բոլոր իր Ղև-  
 տացի եղբայրներուն պէս , իր Տէր Աստուծոյն  
 անունին ծառայութիւն ընէ . Ու մէկալներուն 8

- Հետ հաւասար բաժին պիտի ուտէ . <sup>առն</sup> <sup>ճ</sup>  
<sup>կոն</sup> իր հայրենական <sup>ժողովուրդն</sup> զինե-  
 9 րէն՝ զատ : Արբոր քու Տէր Աստուծոյդ տուած  
 երկիրը մտնաս , ան ազգերուն գարշելի գործքե-  
 10 րուն պէս ընել շտրվես : Չեր մէջը չգտնուի  
 անանկ մարդ մը , որ իր տղան կամ աղջկիը  
 կրակէ անցունէ , կամ բաղդ նայի , կամ գու-  
 շակութիւն , կամ հմայութիւն և կամ դիւթու-  
 11 թիւն ընէ . Ասե կախարդ , կամ վհուկ , կամ  
 12 նշանագէտ , կամ մեռելահմայ չգործի . Վասն  
 զի աս բաները ընողը՝ Տէրոջը առջևը գար-  
 շելի է . ու աս գարշելի բաներուն համար՝ Տէր  
 Աստուծոյ քու առջևէդ կը հալածէ զանոնք :  
 13 Քու Տէր Աստուծոյդ առջևը կատարեալ ըլլաս .  
 14 Վասն զի ան ազգերը՝ որոնց դուն պիտի տիրես ,  
 գուշակներուն ու բաղդ նայողներուն մտիկ կընեն .  
 բայց քու Տէր Աստուծոյ քեզի այսպէս ընելու  
 հրաման չտուաւ :  
 15 Քու Տէր Աստուծոյ քու եղբայրներուդ մե-  
 ջէն ինձի պէս մարդարէ մը պիտի հանէ քեզի ,  
 16 անոր մտիկ ըրէք . Ինչպէս որ Քորեբ լեռը ժո-  
 ղովքին օրը՝ քու Տէր Աստուծոյ խնդրեցիր ,  
 ըսելով . Իմ Տէր Աստուծոյս ձայնը մէյմըն ալ  
 չլսեմ , ու աս մեծ կրակը մէյմըն ալ չտեսնամ ,  
 17 որ չմնոնիմ . Ալ Տէրը ինձի ըսաւ , թէ՛ ըսած  
 18 խօսքերնին շիտակ է : Քեզի պէս մարդարէ մը  
 պիտի հանեմ անոնց՝ իրենց եղբայրներուն մե-  
 ջէն , և իմ խօսքերս անոր բերանը պիտի դնեմ .

\*Վա՛մ եկամուտներէն

ու իմ ամէն պատուիրանքներս անոնց պիտի զրուցէ : Այլ թէ որ մարդ մը անոր իմ անունովս 19 զրուցած խօսքը մտիկ չընէ , ան մարդէն ես վրէժ պիտի խնդրեմ : Այլ թէ որ մարդարէ 20 մը Հպարտանայ իմ Հպատուիրած խօսքս իմ անունովս զրուցելու , կամ օտար աստուածներուն անունովը բան մը զրուցելու , ան մարդարէն պիտի մեռնի : Այլ թէ որ դուն քու սրտիդ 21 մէջ ըսես , թէ՛ Աստուծոյ Հիսուսած բանը ինչպէս գիտնանք . թէ՛ որ մէկ մարդարէ մը Տէրո- 22 ջը անունովը բան մը ըսէ , ու ան բանը իրօք Հիատարուի , Աստուծոյ չըսած խօսքը ան է . ան մարդարէն իր Հպարտութենէն զրուցեր է . ու անկից Հվախնաս :

## Գ Լ . Ժ Թ

1 Ապաստանի քաղաքները . 4 ինչ իրաւունքով մարդասպանը անոնց մէկուն մէջ փախչելու էր : 14 Ապուլաճքին սահմանը պէտք էր որ անշարժ մնայ : 15 Դոնէ երկու մարդու վկայութեամբը մեռուի ամէն դատաստան : 16 Սուտ վկայի մը պատիժը :

Արբոր քու Տէր Աստուածդ բնաջինջ ընէ ան 1 ազգերը՝ որոնց երկիրը քու Տէր Աստուածդ քեզի պիտի տայ , և դուն անոնք վըրնտելով՝ անոնց քաղաքներուն ու տուններուն մէջը բնակիս , Քեզի իրեք քաղաք զատես ան երկրին մէջը՝ որն 2 որ քու Տէր Աստուածդ քեզի կուտայ ժառանգելու . Քեզի ճամբայ պատրաստես , և քու Տէր 3

Մտտուծոյդ քեզի ժառանգութեան համար տուած երկրին սահմանը՝ իրեքի բաժնես . որպէս զի ամէն մարդասպան հոն փախչի :

- 4 Հոն փախչելու ու ողջ մնալու մարդասպանին կանոնը աս է . Մն մարդը՝ որ երէկուրնէ ու մէկալ օրուրնէ թշնամութիւն չունենալով՝ ան-
- 5 գիտութեամբ իր դրացին մնացունէ . Չոր օրինակ՝ թէ որ մէկը իր դրացիին հետը անտառը երթայ փայտ կտրելու համար , ու իր ձեռքովը տապարը փայտ կտրելու վերցուցած ատենը՝ երկաթը կռթէն դուրս ցաթկելով՝ դրացիին հանդիպի և զանիկայ մնացունէ . անիկայ աս քաղաքներէն մէկուն մէջը փախչի , որ ապ-
- 6 րի : Չլայ որ արեան վրէժխնդիրը՝ սիրտը այրելուն համար՝ մարդասպանին ետէն իյնայ , և ճամբան հեռու ըլլալով՝ անոր հասնի ու զանիկայ մնացունէ , թէպէտև մեռնելու արժանի չէր , որովհետև երէկուրնէ ու մէկալ օրուրնէ
- 7 անոր գէմ թշնամութիւն չունէր : Մտտ համար ես քեզի կրպատուիրեմ ու կրսեմ , որ քե-
- 8 զի իրեք քաղաք զատես : Ալ թէ որ քու Տէր Մտտուածդ՝ քու հայրերուդ երգում ըրածին պէս՝ քու սահմաններդ ընդարձակէ , ու քու հայրերուդ խոտացած բոլոր երկիրները քեզի
- 9 տայ , թէ որ պահես ու կատարես բոլոր աս պատուիրանքները որ ես այսօր քեզի կրպատուիրեմ , և քու Տէր Մտտուածդ սիրես , ու միշտ անոր ճամբաներուն մէջը քալելու ջանաս , ան ատենը աս իրեք քաղաքին վրայ ուրիշ իրեք քա-

զաք ալ աւելցունենս . Որպէս զի քու երկրիդ մէ- 10  
ջը՝ որն որ քու Տէր Աստուածդ քեզի իբրև ժա-  
ռանգութիւն պիտի տայ , անմեղ արիւն չթա-  
փուի . ու դուն արեան պարտական չըլլաս :  
Բայց երբոր մէկ մարդ մը իր դրացիին ոխ պա- 11  
հելով՝ անոր որոգայթ լարէ , ու անոր դէմ ել-  
լելով՝ անիկայ զարնէ , մեռցունէ ու անկից ետքը  
աս քաղաքներուն մէկուն մէջը փախչելու ըլլայ , 12  
Ան ատենը իր քաղաքին ծերերը հարդ խրկեն ու  
զանիկայ անկից առնեն . և արեան վրէժխնդի-  
րին ձեռքը տան , որ մեռնի : Վու աչքդ անոր 13  
չինայէ . ու Խորայէլին մէջէն անմեղ արիւնը  
վերցունենս , որ քեզի աղէկ ըլլայ :

Վու կալուածքիդ մէջը՝ որն որ քու Տէր Աս- 14  
տուծոյդ քեզի ժառանգութիւն տուած երկրին  
մէջը պիտի ժառանգես , քու դրացիիդ սահմանը՝  
որ քու նախահայրերդ հաստատեցին , չըլլայ որ  
փոխես :

Մէկ մարդու մը որ և իցէ յանցանքին ու 15  
մեղքին համար՝ մէկ վկայ մը՝ բաւական չսեպուի՝ .  
երկու կամ իրեք վկաներու բերնով հաստատուի  
մէն բան :

Թէ որ մէկ մարդու դէմ սուտ վկայ մը ելլէ , 16  
ու անոր վրայովը անօրէնութեան մը համար վը-  
կայէ , Ան ատենը ան երկու մարդիկները՝ որոնց 17  
մէջը աս հակառակութիւնը կայ , Տէրոջը առջևը  
ու ան ժամանակի քահանաներուն ու դատաւոր-  
ներուն առջևը կայնին . Աւ դատաւորները ա- 18

\* Եբ . շ . Ելլէ իմ չինայ .

դէկ մը քննեն , և թէ որ ան վիսն սուտ վկայ ըլ-  
 լալով՝ իր եղբօրը դէմ սուտ վկայութիւն ըրեր  
 19 է , Ըն ատենը՝ ինչպէս որ անիկայ իր եղբօրը  
 ընել ուզեց , նայնը ըրէք անոր . ու չարը ձեր  
 20 մէջէն վերցուցէք . Եւ ուրիշներն ալ լսելով՝  
 վախնան , ու մէյմըն ալ ձեր մէջը անանկ գէշ  
 21 բան մը չընեն : Քու աչքդ չխնայէ . անձի տեղ՝  
 անձ , աչքի տեղ՝ աչք , ակռայի տեղ՝ ակռայ ,  
 ձեռքի տեղ՝ ձեռք , ու ոտքի տեղ՝ ոտք .  
 Կրտսի :

Գ Լ . Ի

1 Քահանայք պարտին քաջալեր՝ Լ ժողովուրդը՝ պատերազմի  
 ժամանակ : 5 Ստիկաններուն քարոզ կարգալուր սվ կր-  
 նար պատերազմէն ետ գառնալ : 10 Խաղաղութեան հրա-  
 շարքը ընդունող կամ մերժող քաղաքներուն հետը ինչպէս  
 պէտք էր վարուիլ : 16 Ո՛ր քաղաքները պէտք էր կորսն-  
 ցունել : 19 Մարդոց ու տեղւոյ պտուղ բերող ծառերը պիտի  
 չկտրէին պաշարման ատենը :

1 Երբոր քու թշնամիներուդ դէմ պատերազ-  
 մելու ելլաս , ու ձիեր և կառքեր ու քեզմէ  
 շատուոր ժողովուրդ տեսնաս , անոնցմէ չվտնայ .  
 վասն զի քեզ Եգիպտոսացոց երկրէն հանող քու  
 2 Տէր Եստուածդ քու հետդ է : Ու երբոր պա-  
 տերազմի մօտենաս , քահանան առաջ գալով՝  
 3 ժողովուրդին պիտի խօսի , Ու անոնց ըսէ . Ո՛վ  
 Խորայէլ՝ մտի՛կ ըրէ . այսօր դուք ձեր թշնամի-  
 ներուն վրայ պատերազմելու կըմօտենաք . սըր-

տերնիդ չթուլնայ , մի վախնաք , մի զարհու-  
րիք , ու անոնց առջևը բնաւ մի՛ դողաք . վասն 4  
զի ձեր Տէր Աստուածը ձեզի հետ կերթայ ,  
ձեզի համար՝ ձեր թշնամիներուն դէմ պատերազ-  
մելու և ձեզ ազատելու :

Ան ատենը ոստիկանները ժողովուրդին հետ 5  
խօսելով՝ պիտի ըսեն . Վ՛յ որ նոր տուն շիներ  
է , ու անոր նաւակատիքը չէ ըրեր , երթայ իր  
տունը դառնայ . չըլլայ որ պատերազմին մէջը  
մեռնի , ու անոր տեղը ուրիշ մէկը նաւակատիք  
ընէ . Աւ որ այդի տնկեր է , ու անոր 6  
պտուղէն գեռ չէ կերած , երթայ իր տունը դառ-  
նայ . չըլլայ որ՝ պատերազմին մէջը մեռնի , ու  
անոր առջի պտուղը ուրիշ մարդ մը ուտէ : Աւ 7  
որ կնիկան մը հետ նշանուած է , ու զանիկայ  
չէ առած , երթայ իր տունը դառնայ . չըլլայ  
որ՝ պատերազմին մէջը մեռնի , ու զանիկայ մէկ  
ուրիշ մարդ մը առնէ : Աւ ոստիկանները իրենց 8  
խօսքը շարունակելով՝ պիտի ըսեն ժողովուրդին .  
Վ՛յ որ վախկոտ ու տկար է , թող երթայ իր  
տունը դառնայ . չըլլայ որ՝ իր եղբայրներուն սիրտն  
ալ իր սրտին պէս դողացունէ : Ու երբոր ոս- 9  
տիկանները՝ ժողովուրդին առջևը իրենց խօսքը  
լմընցունեն , \* ժողովուրդին վրայ զօրապետներ  
կարգին՝ :

Արբոր մէկ քաղաքի մը կրմօտենաս՝ անոր հետ 10  
պատերազմելու համար , անիկայ խաղաղութեան  
հրաւիրէ : Թէ որ քեզի խաղաղութեան պա- 11

\* Այ՛ն զօրապետները ժողովուրդին գլուխը անցնին :



- տասխանն տալու ըլայ, ու դռնէնը բանայ, բո-  
 լոր մէջը գտնուած ժողովուրդը քեզի հարկատու  
 12 ըլան, ու քեզի ծառայութիւնն ընեն. Բայց  
 թէ որ քեզի հետ խաղաղութիւնն ընել չուզէ,  
 ու պատերազմ ընէ, ան ատենը անիկայ պաշա-  
 13 րես. Աւ երբոր քու Տէր Աստուածդ քու ձեռքդ  
 մատնէ զանիկայ, բոլոր անոր արունները թուրէ  
 14 անցունես. Բայց կնիկները, տղաքները ու ան-  
 ատունները և ինչ որ կայ ան քաղաքին մէջը,  
 բոլոր անոր աւարը քեզի համար տունես, և քու  
 Տէր Աստուծոյդ քեզի մատնած քու թշնամիներ  
 15 բուդ աւարը ուտես: Եւ՝ ասանկ պիտի ընես  
 քեզմէ խիստ հեռու եզող ամէն քաղաքներուն, որ  
 16 աս ազգերուն քաղաքներէն չեն: Սակայն քու  
 Տէր Աստուծոյդ քեզի ժառանգութիւն տուած  
 աս ազգերուն քաղաքներուն մէջը՝ բնաւ չունչ  
 17 ունեցող մը ողջ չթողուս. Այսն զի Վետացի-  
 ները, Եփօքհացիները, Վանանացիները, Փե-  
 րեզացիները, Խեւացիները, ու Յերուսացիները  
 բոլորովին պիտի կորսնցունես, ինչպէս որ քու  
 18 Տէր Աստուածդ քեզի պատուիրեց. Արպէս զի  
 ձեզի չսորվեցունեն բոլոր ան գարշիլի բանե-  
 րը՝ որ անոնք իրենց աստուածներուն կընեն.  
 ու դուք Տէրոջը ձեր Աստուծոյն առջևը մեղք  
 չգործէք:
- 19 Երբոր մէկ քաղաքի մը հետ պատերազմելով՝  
 զանիկայ աւանելու համար, երկար ժամանակ պա-  
 շարելու ըլլաս, անոր ծառերուն տաղար չդար-  
 նեն, ու անոնք չաւրեն. ինչու որ անոնցմէ պի-

տի ուտես . ուրեմն անոնք չկտրես . քանզի դաշտին ծառը \* մարդ է որ քու առջև է դ պաշարման մէջ մտնէ : Բայց ան ծառերը՝ որոնք կը ճանչնան 20 նաս թէ ուտուելու պատու չեն բերեր , անոնք զարնես ու աւրես , և քեզի հետ պատերազմող քաղաքին դիմացը՝ անոնցմով պատնէշներ շինես , մինչև որ անիկայ նուաճի :

## Պ Լ . Ի Ը .

1 Ընյայտ մարդասպանութեան մը քառութիւնը : 10 Անութեան առնուած գերիին հետը վարուելուն կերպը : 15 Լշրկանը ատելի եղած կնիկի տղայը Ը ալուն պատճառաւ՝ անգրանիկ մը իր անգրանկութեան ժառանգութենէն պիտի չըզրկուէր : 18 Կամակոր զաւակը քարկոծուելով մեռցուելու էր : 22 Չարագործը բոլոր գիշերը ծառէն կախուած պիտի չմնար :

Ք ու Տէր Ըստուծոյդ քեզի ժառանգութիւն 1  
տուած երկրին մէջը , թէ որ դաշտի մը  
մէջ ինկած ու մեռած մարդ մը գանուի , ու անիկայ զարնողը չզիտցուի . Ըն ատենը քու ձե- 2  
րերդ ու դատաւորներդ ելան , և մեռած մարդոն իրոք արեւմտ արեւելն մինչև շրջակայ քաղաքները չափեն . Իւ մեռածին մօտ եղող քաղաքին ձե- 3  
րերը՝ արջառներուն մէջէն չգործածուած ու լուծի տակ չմտած երինջ մը առնեն . Եւ քա- 4  
ղաքին ձերերը՝ ան երինջը մէկ չցանուած ու չբանուած սպառած ձոր մը իջեցունեն , ու ան ձորին մէջը երինջին վիզը կտրեն : Եւ Պ և ին 5

\* Այս մարդ ու պէս քեզի օգնութեան կը հասնի պաշարման մէջ :

- քահանայ որդիքը մտնենան .<sup>7</sup> վասն զի քու Տէր  
 Աստուածդ անոնք ընտրեց իրեն ծառայութիւնը  
 ընելու , ու Տէրօջը անունովը օրհնելու համար . և  
 ամէն վէճը ու ամէն վէրքը անոնց խօսքովը պիտի  
 6 գատուի : Աւ ան մեռածին մօտ եղող քաղաքին  
 բոլոր ծերերը՝ ձորին մէջը վիզը կտրած երինջին  
 7 վրայ ձեռքերնին լուան , Աւ պատասխան տալով  
 ըսեն . Մեր ձեռքը չթափեց աս արիւնը , ու մեր  
 8 աչքը չտեսաւ . Ո՛վ Տէր , քաւէ՛ քու Խորայէլ  
 ժողովուրդդ , որն որ դուն փրկեցիր , ու անմեղ  
 արիւնը քու Խորայէլ ժողովուրդիդ մի՛ սեպեր .  
 9 և այսպէս անոնցմէ արիւնը կը քաւուի . Իսկ դուն  
 Տէրօջը առջեր ուղիղ սեպուածը ընելով՝ անմեղ  
 արիւնը քեզմէ վերցունես :  
 10 Արբ որ քու թշնամիներուդ գէմ պատերազմի  
 ելլաս , և քու Տէր Աստուածդ անոնք քու ձեռքդ  
 11 տայ , ու անոնցմէ գերի առնես , Աւ գերիներուն  
 մէջէն գեղեցիկ տեսքով կնիկ մը տեսնաս , ու ա-  
 12 նիկայ սիրելով՝ քեզի կնիկ առնելու ըլլաս , Ա-  
 նիկայ քու տունդ տանիս , և անիկայ իր գլու-  
 13 խը ամիլէ , ու իր ըղւնգները կտրէ . Աւ իր  
 վրայէն գերութեան լութերը հանէ , ու քու  
 տունդ նստի , և ամբողջ ամիս մը իր հօրը ու  
 մօրը համար լայ . ու անկից ետքը անոր մօտե-  
 նաս , և դուն անոր էրիկը ըլլաս , ու ան ալ քու  
 14 կնիկդ ըլլայ : Թէ որ անկից գոհ չըլլաս , անի-  
 կայ ազատ պիտի արձակես , ու ստակով չճախես ,  
 ո՛չ ալ գերի ընես , որովհետեւ լկեցիր զանիկայ :  
 15 Թէ որ մէկ մարդ մը երկու կնիկ ունենայ ,

ու մէկը սիրելի և մէկաք ատելի ըլլայ . ու սիրելին ալ և ատելին ալ անոր զաւակներ ճաննին , և թէ որ անդրանիկ զաւակը՝ ատելի կնիկէն ճնած է , իր ստացուածքը որդւոցը բաժնելու օրը՝ կարող չըլլայ սիրելիին զաւակը անդրանկացունելու , ու ատելիէն ճնած անդրանիկը երեսէ ձգելու . Հապա ատելիին զաւակը անդրանիկ ճաննալով՝ բոլոր իր ձեռքը գտնուածէն անոր երկու բաժին տայ . վասն զի իր զօրութեանը սկիզբը անիկայ է . անդրանկութեան իրաւունքը անոր կը վերաբերի :

Թէ որ մէկ մարդ մը՝ անզգամ ու անհազանդ տղայ մը ունենայ , որ իր հօրը ու իր մօրը խօսքը բնաւ մտիկ չընէր , ու երբոր զանիկայ խրատեն , անոնց չհազանդէր . Ըն ատենը՝ անոր հայրը ու մայրը անիկայ բռնելով , քաղաքին ձերերուն , ու անոր բնակած տեղին գուռը հանեն . Եւ քաղաքին ձերերուն ըսն . Ըս մեր տղան անզգամ ու անհազանդ է , մեր խօսքը մտիկ չընէր , որկրամը ու գինեմը է . Ըն ատենը քաղաքին բոլոր մարդիկները՝ քարերով քարկոծեն զանիկայ , որ մեռնի . ու չարութիւնը ձեր մէջէն վերցունես . և բոլոր Կորայէնը լսելով՝ վսիսնան :

Երբոր մէկ մարդ մը մահու արժանի մեղք մը գործէ , և անիկայ ծառէ մը կախելով՝ մնացունելու ըլլաս , Ընոր մարմինը ծառին վայ գիշերը չմնայ . հապա նշն օրը անորստճառ լմաղն անիկայ . վասն զի կախուածը՝ Ըստուծոյ անի-

Ճաճն է . ու չպղծէս ան երկիրը՝ որն որ քու Տէր  
 Աստուածդ քեզի կուտայ Ժառանգելու համար :

Գ Լ . Ի Բ

1 Մարդասիրութիւն ընելու վրայով պատուէր : 5 Մարդը ու  
 կնիկը իր հագուստովը պիտի տարբերէր : 6 Սպորը իր պղզ-  
 տիկ ձագերովը մեկտեղ չստանելու , 8 տունի մը տանիքին  
 քոյրորտիքը չքնանակ մը չենելու , 9 խառնակութենէ հե-  
 ուանալու , 12 հանդերձի վրայ ծոպեր դնելու պատուէրը :  
 13 Իր կնկանը համար զբարատութիւն ընողին , 20 , 22 շե-  
 նացողին , 25 կոյսը պղծողին , 28 ու պոռնկութիւն ընող-  
 ցին պատիժը : 30 Ազգապղծութիւն :

- 1 **Ա**րբոր տեսնաս որ եղբօրդ եղը կամ ոչխարը իր  
 ճամբայէն խտտօրեբ է , անոնք անտես չընես .  
 անպատճառ անոնք քու եղբօրդ պիտի դարձու-
- 2 նես : Բայց թէ որ քու եղբայրդ քեզի մօտ չէ ,  
 կամ անիկայ չես ճանչնար , ան ատենը քու  
 տունդ առնես ան , ու մինչև քու եղբօրդ զանի-  
 կայ փնտռելը՝ քու քովդ թող կենայ . ետքը
- 3 անիկայ անոր դարձունես : Անոր իշուն ալ ա-  
 սանկ ընես , զգեստին ալ ասանկ ընես . նաև  
 եղբօրդ ամէն կորսուած բանը՝ որ դուն կը  
 գտնաս , ասանկ ընես , չըլլայ որ անտես ընես :
- 4 **Ա**րբոր տեսնաս որ եղբօրդ էջը կամ եղը ճամ-  
 բուն վրայ ինկեր է , անոնք անտես չընելով՝  
 անպատճառ անոր հետը վերցունես :
- 5 **Ա**նկան մը վրայ էրիկ մարդու հագուստ չըլ-  
 լայ , ու էրիկ մարդը կնկան հագուստ չհագնի .  
 քանզի ո՛վ որ ասոնք կընէ , քու Տէր Աստուծոյդ  
 առջևը պիղծ է :

Թէ որ ճամբան ծառի մը վրայ կամ զեանի 6  
 վրայ՝ ձագերով կամ հաւկիթներով թռչունի  
 մը բոյն հանդիպի քու առջևդ , ու մայրը ձա-  
 գերուն կամ հաւկիթներուն վրայ նստած ըլլայ ,  
 մայրը իր ձագերովը մէկտեղ չառնն'ս . Ընպատ- 7  
 ճառ մայրը արձակես , ու ձագերը առնես քե-  
 զի . որպէս զի աղէկ ըլլայ քեզի , ու կեանքդ եր-  
 կայն ըլլայ :

Նոր տուն շինած ատենդ՝ տանիքիդ չորս կող- 8  
 մը շրջանակ մը շինես , որ չըլլայ թէ մէկը ան-  
 կից վար իյնայ , ու քու տունդ արեան պար-  
 տական ընես :

Նյգիիդ մէջը այլ և այլ հունտեր չցանն'ս , 9  
 որ ցանած սերմիդ արդիւնքը ու այդիիդ բերքը  
 չպղծուի : Այլ ու եզը մէկտեղ չվարն'ս : 10

Բուրդով ու քթանով գործուած այլայլա- 11  
 խառն հանդերձ չհաղնի'ս :

Հաղած հանդերձիդ չորս ծայրը ծոպեր շինես : 12

Թէ որ մէկ մարդ մը կնիկ առնէ , ու անոր 13  
 մօտենալէն ետքը՝ զանիկայ ատէ , Աւ անոր վը- 14  
 րայ զրպարտութեան խօսքեր գնելով՝ անոր ա-  
 նունը գէշ հանէ , ու ըսէ . Աս աս կնիկը ատի ,  
 բայց երբոր անոր մօտեցայ , անոր վրայ կուտ-  
 թիւն չգտայ . Ըն ատենը աղջկանը հայրը ու 15  
 մայրը՝ աղջկանը կուտութեան նշանը առնեն , և  
 գուռը հանն քաղաքին ձերերուն արջուր . Ու 16  
 աղջկան հայրը ձերերուն պիտի ըսէ . Իմ աղ-  
 ջիկս աս մարդուն կնիկ տուի , ու ատելով զանի-  
 կայ , ահա անոր վրայ զրպարտութեան խօսքեր 17

- կրդնէ՝ ըսելով , թէ՛ Ես քու աղջկանդ վրայ  
կուսուածիւն չգտայ . բայց ահա՛ իմ աղջկանս  
կուսուածեան նշանը . և լաթը քաղաքին ձերև-
- 18 բուն առջևը պիտի փռեն : Ետքը ան քաղաքին  
ձերերը ան մարդը առնեն ու անոր խրատ տան ,
- 19 Եւ Խորայէլացի կոյս աղջկան անունը աւրելուն  
համար՝ անորմէ հարիւր «նիշ» արծաթ տոյժ առ-  
նեն , ու աղջկանը հօրը տան . և անիկայ ա-  
նոր կնիկը ըլլայ . ու բոլոր իր կենացը մէջ կա-
- 20 ռող չըլլայ զանիկայ տրձակելու : Իայց թէ՛ որ  
աս բանը ստոյգ է , ու աղջկանը վրայ կուսու-
- 21 թիւն չէ գտնուեր , Են ատենը աղջիկը իր հօ-  
րը տանը դուռը հանեն , ու քաղաքին մարդիկ-  
ները քարերով քարկոծեն զանիկայ , որ մեռնի .  
որովհետև Խորայէլի մէջ անդգամուածիւն ընելով  
իր հօրը տանը մէջ պոռնըկուածիւն ըրեր է . աս  
կերպով չարուածիւնը ձեր մէջէն վերցուննս :
- 22 Թէ՛ որ մէկը՝ էրիկ ունեցող կնկան մը հետ  
պառկած գտնուի , ան ատենը երկուքն ալ մեռ-  
նին , թէ՛ ան կնկանը հետ պառկող մարդը՝ և թէ  
ան կնիկը . ու Խորայէլէն չարուածիւնը վերցու-  
ննս :
- 23 Թէ՛ որ մէկ կոյս աղջիկ մը մարդու մը նը-  
չանած ըլլայ , ու մէկ մարդ մը քաղաքին մէջը
- 24 գտնալով զանիկայ՝ անոր հետը պառկի , Երկուքն  
ալ ան քաղաքին դուռը հանէք , ու անոնք քա-  
րերով քարկոծէք , որ մեռնին . աղջիկը՝ քանզի  
քաղաքին մէջ գտնուեցաւ ու չկանչվրտեց . և

մարդը՝ քանզի իր դրացիին կնիկը լկեց . ու չարութիւնը ձեր մէջէն վերցունես :

Բայց թէ որ մէկ մարդ մը նշանած աղջիկը <sup>25</sup> դաշտի մը մէջ գտնէ , ու անիկայ բռնադատելով անոր հետ պառկի , ան ատենը անոր հետ պառկող մարդը միայն մեռնի : Աւ աղջիկին բան մը <sup>26</sup> չընես . աղջիկը մահու արժանի յանցանք մը չունի . վասն զի ինչպէս որ մէկը իբ՝ դրացիին վրայ կը յարձակի , ու անիկայ կը մեռցունէ , աս դիպուածն ալ այնպէս է : Քանզի դաշտի մէջ <sup>27</sup> գտաւ զանիկայ . ու թէև նշանած աղջիկը կանչվռտեց , բայց զինքը ազատող մը չկար :

Թէ որ մէկ մարդ մը չնշանուած կոյս աղջիկ <sup>28</sup> մը գտնէ , և զանիկայ բռնադատելով՝ անոր հետ պառկի , ու <sup>29</sup> «բանը խնցուի» . Ան ատենը անոր հետ պառկող մարդը՝ աղջկան հօրը յիտուն «իկղ արծաթ պիտի տայ , ու ան՝ իր կնիկը ըլլայ . և իր բոլոր կենացը մէջ անիկայ արձակելու կարող չըլլայ , որովհետև լկեց զանիկայ :

Չըլլայ որ՝ մէկ մարդ մը իր հօրը կնիկը առ- <sup>30</sup> նէ , ու իր հօրը հանդերձին քղանցքը բանայ :

\* Աճ : . գտնուին



ՊԼ. ԻՊ

1 Ո՛վ կրնար ժողովքին մէջ մտնել՝ ու ո՛վ չէր կրնար : 9 Ռա-  
նակին մէջ անմաքրութիւնը կարգիլուի : 15 Տիրոջմէն փախ-  
չող ծառային համար : 17 Պոռնըկութեան համար : 18 Պիղծ  
ընծաներուն համար : 19 Շահով ստակ տալու համար : 21  
Ուխտերու համար : 24 Յանցանքներու համար :

- 1 **Ա**մորձիքը ճզմուած կամ կտրուած հարդը՝ Տէ-
- 2 **Ր**ոջը ժողովքը չմտնայ : Պոռնըկորդին Տէ-  
րոջը ժողովքը չմտնայ . ու մինչև անոր տաս-  
ներորդ ազգը՝ անոր շահով՝ Տէրոջը ժողովքը  
չմտնայ :
- 3 Ըմմնացին ու Սուլաբացին Տէրոջը ժողովքը  
չմտնայ . ու մինչև անոնց տասներորդ ազգը՝ ան-  
ոնց շահով՝ Գամննեին Տէրոջը ժողովքը չմտ-
- 4 նայ . Քանզի երբոր դուք Ազխպտոսէն ելաք ,  
ջուրով ու հացով ճամբուն մէջ ձեզ չգիմաւո-  
րեցին . ու Սիջագետին փաթուր Գաղաթէն՝ Բե-  
ովրի որդին Բաղաամը վարձքով բերել տուին ,
- 5 որ քեզ անիծէ . Բայց քու Տէր Աստուածդ չու-  
զեց Բաղաամին մտիկ ընել . և քու Տէր Աս-  
տուածդ քեզ սիրելուն համար , անէճքը օրհ-
- 6 նութեան դարձուց : Քու բոլոր կենացդ մէջը  
Գամննեին անոնց խաղաղութիւնը ու աղէկութիւ-  
նը չփնտրուե՛ս :
- 7 Չըլայ որ Աղովմայեցին ստես . քանզի անի-  
կայ քու եղբայրդ է : Ազխպտացին ալ չստես .
- 8 քանզի անոր երկրին մէջը պանդուխտ էիր : Ա-  
սոնց ծնած զաւակներուն երբորդ ազգը՝ Տէրոջը  
ժողովքը թող մտնան :

\*Եբր . յաւիտեան

Երբոր թնամիներուդ դէմ բանակով կեր- 9  
 թաս, ամէն չար բանէն զգուշանաս: Թէ որ ձեր 10  
 մէջը մէկ մարդ մը՝ գիշերային դիպուածի պատ-  
 ճառաւը մաքուր չէ, թող բանակէն դուրս  
 ելայ, ու բանակին մէջը չմտնայ: Եւ իրի- 11  
 կուան դէմ ջրով լուացուի, ու արևը մտածին  
 պէս՝ բանակին մէջը մտնայ: Նաև բանակէն 12  
 դուրս մէկ տեղ մը ունենաս, որ հոն դուրս ել-  
 լաս. Ու զէնքերուդ մէջը ցից մը ունենաս. որ 13  
 երբոր դուրսը նստելու ըլլաս, անով փորես, ու  
 դառնաս՝ քու յաւելուածդ ծածկես: Քանզի քու 14  
 Տէր Աստուածդ՝ քեզ ազատելու համար, ու քու  
 թնամիներդ քու ձեռքդ մատնելու համար՝ քու  
 բանակիդ մէջը կը բալէ. ուստի քու բանակդ  
 մաքուր ըլլայ. որ քու վրագ աղտեղութիւն մը  
 տեսնելով՝ քեզմէ ետ չդառնայ:

Օտուայ մը որ իր տիրոջմէն փախչելով՝ քեզի 15  
 ապաւիններ է, իրեն տիրոջը ձեռքը չմտնէս.  
 Թող քեզի հետ բնակի իր հաւնած տեղը՝ քու 16  
 քաղաքներուդ մէկուն մէջը՝ ուր որ ինքը կուգէ.  
 Եւ զանիկայ չնեղէս:

Իսրայէլի աղջիկներուն մէջը բող չըլլայ, ու 17  
 Իսրայէլի աղոց մէջը՝ իգացեալ չըլլայ: Որ և իցէ 18  
 ուխտի համար, բողի վարձքը կամ շունի գինը՝  
 քու Տէր Աստուծոյդ տունը չտանի՛ս. քանզի  
 քու Տէր Աստուծոյդ առջևը երկուքն ալ պիղծ  
 են:

Ստակը կամ ուտելիքը, և կամ որ և իցէ 19  
 բանը՝ որ շահով կրնայ արուիլ, քու եղբորդ շա-

- 20 Հով չտաս . Օտարականէն շահ առնես , բայց  
 քու եղբօրմէդ շահ չառնես , որ քու Տէր Աստուածդ քեզ օրհնէ՝ քու ամէն ձեռք զարկած  
 գործքերուդ մէջը՝ ան երկրին վրայ , ուր որ պիտի մտնաս անիկայ ժառանգելու համար :
- 21 Արբօր քու Տէր Աստուծոյդ ուխտ մը ընես ,  
 առանց ուշացունելու կատարես . քանզի քու Տէր  
 Աստուածդ անպատճառ անիկայ քեզմէ պիտի
- 22 պահանջէ , ու մեղքի տէր կըլլաս . Բայց թէ  
 որ ուխտ ընել չուզես , ան քեզի մեղք չըլլար :
- 23 Ի՞նչ որ բերնովդ կըխոստանաս , ու քու կամօքդ  
 քու Տէր Աստուծոյդ կուխտես , քու շրթունք-  
 ներէդ ելածը զգուշութեամբ կատարես :
- 24 Արբօր քու դրացիիդ այգին կըմանես , ու  
 զածիդ չափ խաղող ուտես ու կշտանաս , բայց ա-
- 25 մանիդ մէջը չդնես : Արբօր քու դրացիիդ հունձ-  
 քին մէջը կըմանես , ձեռքովդ հասկերը փրցու-  
 նես , բայց դրացիիդ հունձքին մանկաղ չզար-  
 նես :

## ԳԼ . Ի Գ

1 Երևակման թուղթ տալու վրայ : 5 \*Աոր կարգուած մարդ  
մը պատերազմի երթալու շէր : 6 , 10 Կրուներու համար  
պատուէր : 7 Մարդ գոչողին պատիժը : 8 Խորատու թեան  
համար գցուչութիւն ընելու պատուէրը : 14 Բանւորին վարձ-  
քը հատուցուելու համար : 16 Երդարութեան համար : 19  
Ողորմած ըլլալու համար պատուէր :

**Թ**է որ մէկը կնիկ մը առնէ՝ ու անոր էրիկը 1  
ըլլայ , և անոր վրայ անարգութեան բան  
մը գտնելուն համար , անիկայ իր աչքին հաճոյ  
չըլլայ , ան ատենը անիկայ անոր արձակման թուղթ  
մը գրէ ու ձեռքը տայ , և իր տունէն ճամբէ :  
Ու երբոր անիկայ անոր տունէն ելլելով , երթայ 2  
ուրիշ էրկան մը կնիկ ըլլայ , թէ որ ետքի 3  
էրիկն ալ զանիկայ ատելով , արձակման թուղթ  
մը գրէ , ու անոր ձեռքը տալով՝ իր տունէն ճամ-  
բէ , կամ թէ որ անոր հետ կարգուած ետքի  
էրիկը մեռնի , Եոջի էրիկը՝ որ անիկայ ճամ- 4  
բեր էր , կարող չըլլայ զանիկայ դարձեալ իրեն  
կնիկ առնելու , անոր պղծուելէն ետքը . քանզի  
Տէրոջը առջեւ պղծութիւն է աս բանը . և այս-  
պէս դուն մեղքով չեցունն՝ ս ան երկիրը , որն  
որ քու Տէր Եստուածդ քեզի ժառանգութիւն  
կուտայ :

\*Աոր ամուսնացած մարդը պատերազմի շէր- 5  
թայ , ու անոր բնաւ մէկ պաշտօն մը չարուի .  
տարի մը իր տանը մէջ ազատ թող նստի , ու  
իր առած կնիկները հետ ուրախանայ :

- 6 Չըլայ որ մարդ մը աղօրիքին վերի կամ վարի քարը գրաւ առնէ . քանզի եր շննն կեանքը գրաւ առած կըլայ :
- 7 Թէ որ մարդ մը գտնուի , որ իր եղբայրներուն , այսինքն Խորայէլի որդւոցը մէկը գողնալով՝ զանիկայ ծառայեցուցեր է ու ծախսեր է , ան գողը թող մեռնի . ու ձեր մէջէն չարութիւնը վերցունես :
- 8 Բորոտութեան ախտին համար զգուշութիւն ըրէք , Ղ և տացի քահանաներուն բոլոր ձեզի սորվեցուցած բաները ճշդիւ պահելու ու ընելու . և ինչ որ անոնց պատուիրեր եմ , անոնք զգուշութեամբ ՚ի գործ գնէք : Միտքդ բեր ինչ որ քու Տէր Աստուածդ Մարիամին ըրաւ ճամբուն մէջ , Ազխպտոսէն ելած ատեննիդ :
- 10 Արբոր քու դրօցիկդ մէկ բան մը փոխ տաս , գրաւ առնելու համար անոր տունը չմտնաս .
- 11 Ի ուրսը կայնիս , ու փոխ առնող մարդը՝ գրաւը քեզի գուրս բերէ : Աւ թէ որ ան մարդը աղքատ է , անոր գրաւովը չպառկիս . Արևը մտածին պէս , անպատճառ անոր գրաւը ետ տաս , որ անիկայ իր հանդերձովը պառկի , ու քեզ օրհնէ . և քու Տէր Աստուծոյդ առջևը աս բանը քեզի արդարութիւն սեպուի :
- 14 Աղքատ ու կարօտ վարձկանին զրկանք չընես , թէ՛ քու եղբայրներէդ ըլլայ , և թէ՛ քու երկրիդ մէջը՝ քու քաղաքներդ գանուող օտարականներէն ըլլայ : Աոյն օրը արևը չմտած՝ անոր վարձքը հատուցանես . քանզի անիկայ աղքատ է ,
- 15

ու անոր խելքը միտքը անոր վրայ է . չըլլայ որ քեզի համար Աստուծոյ բողոքէ , ու մեզքի տէր ըլլաս :

Տղոց յանցանքին համար՝ հայրերը չմեռցուին , 16  
ու հայրերուն յանցանքին համար՝ տղաքները չմեռցուին . ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի :

Օտարականին Ո- որբին իրաւունքը սուտ 17  
չհաննես . ու որբէվարիին հանդերձը գրաւ չառնես : Եւ միտքդ բեր , որ դուն Ազխատոսի մէջ 18  
ճառայ էիր , ու քու Տէր Աստուածդ քեզ անկից ազատեց . անոր համար ես քեզի կըպատուիրեմ որ աս բանը ընես :

Արբոր քու արտիդ մէջը հունձքդ նիձես , ու 19  
արտին մէջը մէկ որայ մը մոռնալու ըլլաս , անիկայ առնելու համար ետ չդառնաս . անիկայ օտարականին , որբին ու որբէվարիին թող ըլլայ . որպէս զի քու Տէր Աստուածդ քու ձեռքերուդ ամէն գործքին մէջը քեզ օրհնէ : Չի- 20  
թենիդ թօթուած ատենդ՝ վրան մնացածները ոտէ ոտ չփնտրուես . անիկայ օտարականին , որբին ու որբէվարիին թող ըլլայ : Եւ այդե- 21  
կութ ըրած ատենդ՝ ճապաղ շքնես . անիկայ օտարականին , որբին ու որբէվարիին թող ըլլայ : Եւ միտքդ բեր , որ Ազխատոսի երկրին 22  
մէջը ճառայ էիր . անոր համար ես քեզի կըպատուիրեմ , որ աս բանը ընես :

Գ Լ . Ի Ե

1 Ճեծին թիւը քառասունէն աւելի պիտի չըլլար : 4 Այլի մէջ բանոշ եղին դունչը կապուելու չէր : 5 Եղբօրը զաւակ տալու համար պատուէր : 11 Ենպարկեշտ կնկան պատիժը : 13 Պակաս կշիռներու համար . 17 Եմաղեկին յիշատակը բոլորովին պիտի ջնջուէր :

- 1 Արբոր մարդոց մէջը վէճ մը ըլլայ , ու դատաստանի երթան , դատարանէն անոնց դատը մտիկ ընելով՝ իրաւունք ունեցողը արդարացունեն , ու յանցաւորը դատապարտեն : Այլ յանցաւոր եղողը՝ թէ որ ծեծի արժանի է , դատաւորը զանիկայ պառկըցունէ , ու անոր յանցանքին համեմատ իր առջևը ծեծել տայ զանիկայ՝
- 2 թուով , Քառասունէն աւելի զարնել չտայ . չըլլայ որ՝ ասկից աւելի զարնելովը , եղբայրդ քու աչքիդ առջևը անարգուի :
- 3 Այլին մէջը աշխատող եղին դունչը չկապես :
- 4 Արբոր եղբարք մէկտեղ բնակին , ու անոնց մէկը առանց զաւկի մեռնի , մեռնողին կնիկը օտար մարդու հետ չկարգուի . տաղրը անոր մօտենայ , ե զանիկայ իրեն կնիկ առնէ , ու տաղբութեան
- 5 օրէնքը կատարէ . Այլ անոր ծնած առջիննի տղան՝ մեռնող եղբօրը անունովը կանչուի , որ չըլլայ թէ՛ անոր անունը Խարայէլէն ջնջուի : Այլ թէ որ ան մարդը իր հարսը առնել չուզէ , ան
- 6 ատենը հարսը դատարանէն յեւտի ծերերուն՝ ու ըսէ . Իմ տաղբըս Խարայէլի մէջ իր եղբօրը անունը հաստատել , ու տաղբութեան օրէնքը ինձի կա-

տարել չուզեր : Ըն ատենը քաղաքին ծերերը <sup>8</sup>  
 զանիկայ կանչեն ու անոր հետ խօսին . և թէ  
 որ անիկայ հաստատ կենալով՝ ըսէ թէ , Ըսիկայ  
 չեմ ուզեր առնել , Ըն ատենը հարօր անոր մօ- <sup>9</sup>  
 տենալով՝ ծերերուն առջևը անոր ոտքէն կօշիկը  
 հանէ , և անոր երեսը թփնէ , ու ըսէ . Իր եղ-  
 քօրը տունը շինել չուզող մարդուն ասանկ կըլ-  
 լայ : Եւ անոր անունը Խօրայէլի մէջ՝ \*բոպիկ <sup>10</sup>  
 մարդուն տունը ըսուի :

Երբոր Էջիմ՝ մարդիկ իրարու հետ կըծեծ- <sup>11</sup>  
 կուին , և մէկուն կնիկը՝ զարնողին ձեռքէն իր  
 էրիկը ազատելու համար՝ մօտենալով ու ձեռ-  
 քը երկընցունելով՝ անոր ամօր ձիքը բռնէ , Ըն <sup>12</sup>  
 ատենը անոր ձեռքը կտրես . և քու աչքդ բնաւ  
 անոր չխնայէ :

Մախաղ՝ դ մէջը տեսակ տեսակ մեծ ու պղտիկ <sup>13</sup>  
 կշառքի քարեր չըլլայ : Տանդ մէջը տեսակ տե- <sup>14</sup>  
 սակ մեծ ու պղտիկ արդուններ չըլլայ : Վրու կը- <sup>15</sup>  
 շառքիդ քարը լման ու արդար ըլլայ . քու ար-  
 դուդ լման ու արդար ըլլայ , որ քու օրերդ եր-  
 կան ըլլայ ան երկրին վրայ , որն որ քու Տէր  
 Ըտուածդ քեզի կուտայ : Վրանզի ամէն աս բա- <sup>16</sup>  
 ները ընողը , ամէն զրկանք ընողը՝ քու Տէր Ըս-  
 տուծոյդ առջևը պիտի է :

Եգիպտոսէն ելած ատենդ՝ ճամբան Ըմաղե- <sup>17</sup>  
 կին քեզի ըրածը միտքդ պահէ . ճամբուն մէջ <sup>18</sup>  
 ինչպէս քեզ դիմաւորեց , և քու ետեւէդ եկող  
 բոլոր տկարները կտրեց , երբոր դուն աշխատած

\* Աճ : • կօշիկը համուած



19 ու հոգնած էէր . ու Եստուծմէ չվախցաւ : Ուստի երբոր քու Տէր Եստուածդ՝ բոլոր քու շրջակայ թշնամիներէդ քեզ հանգստացունէ ան երկրին մէջը , որն որ քեզի ժառանգութիւն կուտայ որ անոր տիրես , ան ատենը Եմաղեկին յիշատակը երկինքին տակէն բոլորովին վերցունես . չըլայ որ մոռնաս :

Գ Լ . Ի Օ

1 Երախայրիներուն կողովը մատուցանողին խոստովանութիւնը : 12 Երկրորդ տարիին տասանորդները բերողին ընելու աղօթքը : 16 Եստուծոյ և ժողովուրդին մէջ տեղը եղած ուխտը :

- 1 Երբոր մանաս ան երկիրը , որն որ քու Տէր Եստուածդ քեզի ժառանգութիւն կուտայ .
- 2 և ժառանգես , ու հոն բնակիս , Են ատենը քու Տէր Եստուծոյդ քեզի առած երկրէն՝ երկրին ամեն պտուղներուն երախայրիները առնես մէկ կողովի մը մէջ դնես , ու երթաս ան տեղը , որ քու Տէր Եստուածդ պիտի ընտրէ , իր անունը
- 3 հոն դնելու համար . Եւ ան օրերը եղող քահանային երթաս ըսես . Ես այսօր քու Տէր Եստուծոյդ առջև կըխոստովանիմ՝ որ ես մտայ ան երկիրը , որուն համար Տէրը մեր հայրերուն եր-
- 4 դում ըրեր էր մեզի տալու . Ետքը քահանան կողովը քու ձեռքէդ առնելով՝ անիկայ քու Տէր
- 5 Եստուծոյդ սեղանին առջևը դնէ . Եւ դուն պատասխան տալով՝ քու Տէր Եստուծոյդ առ-

ջևը ըսես . Իմ հայրս տուն տեղ չունեցող  
 Ետրի մը ըլլալով, Եգիպտոս իջաւ ու հոն քիչ-  
 ւոր հոգիով պանդխտութիւն ընելով՝ մէկ մեծ,  
 զօրաւոր ու շատուոր ազգ մը եղաւ . Ու Եգիպ- 6  
 տացիք մեզ չարչարեցին, մեզ նեղեցին և մեր  
 վրայ ծանր ծառայութիւններ դրին . Ու մենք 7  
 մեր հայրերուն Տէր Եստուծոյն աղաղակեցինք .  
 և Տէրը մեր ձայնը լսելով՝ մեր նեղութիւնը,  
 աշխատութիւնը ու մեզի եղած զրկանքը տեսաւ .  
 Եւ Տէրը զօրաւոր ձեռքով ու բարձր բազու- 8  
 կով, մեծ ահարկութիւններով, նշաններով ու  
 հրաշքներով մեզ Եգիպտոսէն հանեց : Եւ մեզ 9  
 աս տեղս բերաւ . ու մեզի աս երկիրը՝ կաթ ու  
 մեղր բղխող երկիրը տուաւ : Եւ արդ ո՛վ Տէր՝ 10  
 ինձի տուած երկրիդ պտուղներուն երախայրինն-  
 րը +եղէ բերի . ու անոնք քու Տէր Եստուծոյդ  
 առջևը դնելով՝ Տէր Եստուծոյդ առջևը երկր-  
 պագութիւն ընես . Եւ քու Տէր Եստուծոյդ 11  
 քեզի ու քու տանդ տուած բարիքներովը ուրա-  
 խութիւն ընես . դուն ալ, Ղևտացին ալ և  
 քու քովդ եղող օտարականն ալ :

Երբորդ տարին՝ տասանորդի տարի ըլլալով, 12  
 երբոր դուն քու արդիւնքներուդ բոլոր տասա-  
 նորդները զատես լմնեցունես, անոնք Ղևտա-  
 ցին, օտարականին, որքին ու որբէվարիին տաս,  
 որ անոնք ալ քու բաղաքներուդ մէջը ուտին  
 կշտանան . Ըն տունը քու Տէր Եստուծոյդ 13  
 առջևը ըսես . Սուրբ եղած բանը բոլորովին տու-  
 նէս հանցի, և քու բոլոր հրամայած պատուի-

բանքներդ պահելով՝ անիկայ Ղևտացիին , օտարականին , որբին ու որբէվարիին տուի , քու պատուիրանքներդ զանց չըրի , ու զանոնք չմոռայ :

14 Սուգիս օրերուն մէջը՝ անկից չկերայ , ու անմաքուր բանի մը չդործածեցի , և անկից մեռելի չտուի . իմ Տէր Աստուծոյս խօսքը մտիկ ըրի . ինձի ինչ որ պատուիրեցիր , ան ըրի .

15 Այլ երկինքէն քու սուրբ բնակարանէդ , և օրհնէ քու Իսրայէլ ժողովուրդդ , ու ան երկիրը որ մեր հայրերուն երդում ըրածիդ պէս մեզի տուիր , երկիր մը՝ որ կաթ ու մեղը կըբերէ :

16 Այսօր քու Տէր Աստուածդ քեզի կըպատուրէ , որ աս կանոնները , ու դատաստանները , ի դործ դնես . ուստի բոլոր սրտովդ ու բոլոր

17 հոգիովդ պահես ու կատարես զանոնք : Ինչ այսօր Տէրօջը խօսք կուտաս , որ անիկայ քու Աստուածդ ըլլայ , ու դուն անոր ճամբաներուն մէջը քալես , և անոր կանոնները , պատուիրանքները ու դատաստանները պահես , ու խօսքը մտիկ ընես . Տէրն ալ քեզի այսօր խօսք կուտայ , որ դուն իրեն սեպհական ժողովուրդը ըլլաս , ինչպէս որ քեզի խոստացաւ , որ անոր բոլոր պատուիրանքները պահես . Աւ բոլոր իր ստեղծած ժողովուրդներէն աւելի քեզ բարձրացունէ , գովութիւնով՝ համբաւով ու փառքով , որ սուրբ ժողովուրդ մը ըլլաս քու Տէր Աստուծոյդ՝ իր խոստմունքին պէս :

## Գ Լ . Ի Է

1 Մովսէս կը հրամայէ որ բոլոր պատուիրանքները քարերու վըրայ գրեն , 5 և չտառուած քարէ սեղան մը շինեն : 11 Մովսէս կը զատէ Գարբիզին ու Վերաղ լեռներուն վրայ կայնելու ցեղերը : 14 Վերաղ լեռան վրայ խօսելու անէճքները :

**Ե**ւ Մովսէս Խորայէլի ձերերուն հետ՝ ժողո- 1  
 վուրդին պատուիրելով , ըսաւ . Պահեցէք  
 բոլոր ան պատուիրանքները՝ որոնք ես այսօր  
 ձեզի կը պատուիրեմ : Ու Յորդանանէն՝ քու 2  
 Տէր Աստուծոյդ քեզի տուած երկիրը անցած օրդ՝  
 քեզի մեծ քարեր կանգնեցունենս , ու անոնք կի-  
 րով ձեփենս . Եւ աս օրէնքիս բոլոր խօսքերը 3  
 անոնց վրայ գրես , երբոր անցնիս ու մտնաս ան  
 երկիրը՝ որն որ քու Տէր Աստուածդ քեզի կու-  
 տայ , երկիր մը՝ որ կաթ ու մեղր կը բոցլտէ , ինչ-  
 պէս որ քու հայրերուդ Տէր Աստուածը քեզի  
 ըսաւ : Ուստի երբոր Յորդանանէն անցնիս , 4  
 աս օրուան քեզի պատուիրածիս պէս , աս քարերը  
 Վերաղ լեռան վրայ կանգնեցունես , ու անոնք  
 կիրով ձեփես . Եւ հոն քու Տէր Աստուծոյդ 5  
 մէկ սեղան մը շինես , քարաշէն սեղան մը . անոր  
 վրայ երկաթ չդպցունենս . Սակայն քու Տէր Ա- 6  
 տուծոյդ սեղանը ամբողջ քարերէ շինես , ու ան-  
 որ վրայ քու Տէր Աստուծոյդ ողջակէզներ մա-  
 տուցանենս . Եւ խաղաղութեան զօհեր մատուցա- 7  
 նելով՝ հոն ուտես , ու քու Տէր Աստուծոյդ  
 առջևը ուրախութիւն ընես . Եւ աս օրէնքիս 8  
 բոլոր խօսքերը քարերուն վրայ խիստ պարզ կեր-  
 պով մը գրենս :

- 9 Եւ Մովսէս ու Ղևտացի քահանաները բոլոր Խորայէլին խօսելով՝ ըսին . Ո՛վ Խորայէլ, լ՛ուս կեցիր ու մտնի ըրէ . Եյսօր քու Տէր Եստու-
- 10 ծոյդ ժողովուրդը եղար . Ուստի քու Տէր Եստու-  
տուծոյդ խօսքը մտիկ ընելով՝ անոր պատուի-  
րանքները ու կանոնները պահես , որոնք ես այս-  
օր քեզի կը պատուիրեմ :
- 11 Եւ նոյն օրը Մովսէս ժողովուրդին պատուի-  
12 ընելով՝ ըսաւ . Երբոր Յորդանանէն անցնիք ,  
ժողովուրդը օրհնելու համար Գարիզին լեռան  
վրայ ասոնք թող կայնին . Ըմաւօն , Ղևի ,
- 13 Յուդա , Իսաքար , Յովսէփ ու Իննիամին . Եւ  
անէծքի համար Գերազ լեռան վրայ ասոնք թող  
կայնին . Ռուբէն , Գադ , Եսեր , Օւրուղոն ,  
Իան ու Կեփթաղիմ :
- 14 Ու Ղևտացիները Խորայէլի բոլոր մարդոցը  
հետ խօսելով՝ բարձր ձայնով պիտի ըսեն .
- 15 Ենիծեալ ըլլայ ան մարդը՝ որ արուեստաւո-  
րի ձեռագործ՝ ու Տէրոջը առջևը պիտի սեպուող  
փորուած կամ ձուլածոյ կուռք կը շինէ , ու գաղ-  
տուկ տեղ մը կը դնէ . և բոլոր ժողովուրդը պա-  
տասխան տալով՝ Եմէն պիտի ըսէ :
- 16 Ենիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը ու մօրը դէմ  
հայհոյութիւն կընէ . և բոլոր ժողովուրդը Ե-  
մէն պիտի ըսէ :
- 17 Ենիծեալ ըլլայ ան՝ որ իր դրացիին սահմա-  
նը կը փոխէ . և բոլոր ժողովուրդը Եմէն պիտի  
ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ կոյրը իր ճամբայէն 18  
կըլստորեցունէ . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պի-  
տի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ պանդուխտին , որբին 19  
ու որբէվարիին իրաւունքը սուտ կըհանէ . և բո-  
լոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը կնկանը հետ 20  
կըպառկի . քանզի իր հօրը բղանցքը կըբանայ .  
և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ ո՛ր և իցէ անասունի 21  
հետ կըպառկի . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պի-  
տի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ իր հօրը աղջիկը կամ 22  
իր մօրը աղջիկը եղող՝ իր քրոջը հետ կըպառ-  
կի . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ իր կեսուրբին հետ կը 23  
պառկի . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ իր դրացին ծածուկ կը 24  
մեռցունէ . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ անմեղ մարդը մեռ- 25  
ցունելու համար կաշառք կտանէ . և բոլոր ժո-  
ղովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

Անիծեալ ըլլայ ան՝ որ աս օրէնքիս ամէն խօս- 26  
քերուն մէջը չկենար՝ զանոնք կատարելու հա-  
մար . և բոլոր ժողովուրդը Ամէ՛ն պիտի ըսէ :

## Գ Լ . Ի Ը

1 Հնազանդութեան օրհնութիւնները : 15 Ընհնազանդութեան անէծքները :

- 1 **Ս** Եւ թէ որ քու Տէր Աստուծոյդ խօսքը ուշադրութեամբ մտիկ ընելով՝ զգուշութեամբ 'ի գործ գնես բոլոր անոր պատուիրանքները՝ որոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ, քու Տէր Աստուածդ աշխարհիս բոլոր ազգերէն զերազանց պիտի ընէ քեզ :
- 2 **Ս** Եւ թէ որ քու Տէր Աստուծոյդ խօսքին Հնազանդիս, բոլոր սա օրհնութիւնները քու վըրայդ դալով՝ քեզի պիտի հասնին : Վաղաքի մէջ օրհնեալ, ու դաշտի մէջ օրհնեալ պիտի ըլլաս .
- 3 **Վ** Եւ որովայնիդ պտուղը, քու երկրիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը օրհնեալ պիտի ըլլան .
- 4 **Վ** Եւ կողովդ ու տաշտդ օրհնեալ պիտի ըլլան .
- 5 **Մ** Եւ ատեանդ օրհնեալ, ու ելած ատեանդ օրհնեալ պիտի ըլլաս .
- 6 **Վ** Եւ վրայդ ելող թշնամիներդ՝ Տէրը քու առջեկդ ջարդել պիտի տայ . անոնք քու վրայ մէկ ճամբով պիտի գան, եւ քու առջեկդ եօթը ճամբով պիտի փախչին :
- 7 **Տ** Երբ քու շտեմարաններուդ ու ամէն ձեռք զարնելու բաներուդ օրհնութիւն պիտի խրկէ, եւ քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկրին մէջը՝ քեզ պիտի օրհնէ :
- 8 **Թ** Եւ որ քու Տէր Աստուծոյդ հրամանները պահելով՝ անոր ճամբաներուն մէջը քալես, Տէրը քեզի երդում ըրաս .

ծին պէս, քեզ իրեն սուրբ ժողովուրդ պիտի ը-  
 նէ. Ու երկրիս ամէն ժողովուրդները պիտի 10  
 տեսնան որ Տէրոջը անունը քու վրայ կրկոչուի,  
 ու քեզմէ պիտի վախնան: Աւ Տէրը բարիքնե- 11  
 րով քեզ պիտի լեցունէ. քու որովայնիդ պտու-  
 ղը, քու անասուններուդ պտուղը ու քու երկ-  
 րիդ պտուղը պիտի շատցունէ ան երկրին վրայ,  
 որն որ Տէրը քու հայրերուդ երդում ըրաւ քե-  
 ղի տալու: Աւ Տէրը իր բարութեան գանձը 12  
 այսինքն երկինքը քեզի պիտի բանայ, որ քու  
 երկրիդ անձրեւը ստննովը տայ, ու քու ձեռ-  
 քիդ ամէն գործը օրնէ. գուն շատ ազգերու  
 փոխ պիտի տաս. բայց գուն փոխ պիտի չառ-  
 նես: Տէրը ժողովուրդնէրդ գլուխ պիտի ը- 13  
 նէ քեզ, և չէ թէ պոչ. գուն միշտ վրայ պիտի  
 ելլես, ու բնաւ վար պիտի չիյնաս, թէ որ քու  
 Տէր Աստուծոյդ պատուիրանքները պահես ու  
 կատարես, որոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ.  
 Աւ օտար աստուածներուն ետեւէն երթալու հա- 14  
 մար, ու անոնց ծառայութիւն ընելու համար,  
 աջ կողմը կամ ձախ կողմը չխոտորիս ան խօս-  
 քերէն՝ որոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ:

Բայց թէ որ քու Տէր Աստուծոյդ խօսքին 15  
 չհնազանդիս, և չպահես ու չընես բոլոր անոր  
 պատուիրանքները ու կանոնները՝ որոնք ես այս-  
 օր քեզի կը պատուիրեմ, ան ատենը աս ամէն  
 անէծքները քու վրայ դալով՝ քեզի պիտի հաս-  
 նին: Վաղաքի մէջ անիծեալ, ու դաշտի մէջ 16  
 անիծեալ պիտի ըլլաս. Աղօլովդ ու տաշտդ ա- 17



- 18 անիծեալ յիտի ըլլայ , Քու որովայնիդ պտուղը , երկրիդ պտուղը , կովերուդ ճնունդը ու ոչխարներուդ հօտերը անիծեալ յիտի ըլլան .
- 19 Գուն քու մտած ու ելած ատենդ՝ անիծեալ պիտի ըլլաս :
- 20 Եւ Տէրը՝ քու ամէն ձեռք զարկած գործքիդ մէջը՝ անէծք , տառապանք ու նզովք պիտի խրկէ քեզի՝ քու չար գործքերուդ՝ ու զիս ձգելուդ համար , մինչև որ շուտով բնաշնչ ըլլաս ու կորսուիս :
- 21 Տէրը քեզի ժանտախտը պիտի փակցունէ , մինչև որ քեզ հատցունէ ան երկրին վրայէն , ուր որ դուն կրմտնաս անիկայ ժառանգելու :
- 22 Եւ Տէրը ծիւրական ակտով՝ հրատազնապ տենդով , ջերմով , ու այրող տաքութիւնով , <sup>\*</sup> սուրով , խորշակահարութեամբ ու արճաբէտաց դալուկով քեզ պիտի զարնէ . և ասոնք պիտի հալածեն քեզ , մինչև որ կորսուիս :
- 23 Եւ գլխուդ վրայի երկինքը պղինձէ , ու տակդ եղած երկիրը՝ երկաթէ պիտի ըլլայ :
- 24 Տէրը անձրևի տեղ՝ հող ու փոշի պիտի տայ քու երկրիդ , ու երկինքէն քու վրայ պիտի իջնան ,
- 25 մինչև որ դուն բնաջինջ ըլլաս : Տէրը քու թըշնամբներուդ առջևը քեզ ջարդել պիտի տայ . անոնց գէժ մէկ ճամբով պիտի ելլաս , և անոնց առջևէն եօթը ճամբով պիտի փախչիս . ու երկրիս բոլոր թագաւորութեանց մէջը թափառական
- 26 պիտի ըլլաս . Եւ քու մարմինդ՝ երկինքին բոլոր թռչուններուն ու երկրիս գաղաններուն կերակուր պիտի ըլլայ . և զանոնք վաբնտող մը պի-

\*Սուր երաշտութեամբ

տի չըլլայ : Տէրը՝ Ազիպտոսի ուսնցքներով, <sup>27</sup>  
 տեսաւ տեսութեամբ , քոստտութեամբ ու եռքով  
 պիտի զարնէ քեզ , որ անոնցմէ չկարենաս բժրչ-  
 կուիլ : Տէրը՝ ապշուածիւնով , կուրուածիւնով <sup>28</sup>  
 ու սրտագողով պիտի զարնէ քեզ . Ալ ինչպէս որ <sup>29</sup>  
 կոյրը խաւարի մէջ ձեռքովը կը խարխտի , դուն  
 ալ կէս օրուան առեւնը անանկ պիտի խարխա-  
 փես . ու գործքերուդ մէջը բարեբաղդութիւն  
 պիտի չունենաս . և միշտ զըկանք ու յափշտա-  
 կութիւն պիտի քաշես . ու քեզ ազատող պիտի  
 չըլլայ : Վուն կնկան մը պիտի նշանուիս , ու <sup>30</sup>  
 անոր հետ ուրիշ պիտի պառկի . տուն պիտի  
 շինես , ու անոր մէջը դուն պիտի չընակիս . այ-  
 դի պիտի տնկես , ու անոր խաղողը պիտի չժող-  
 վես . Վու եզդ՝ քու աչքիդ առջևը պիտի մոր- <sup>31</sup>  
 թուի , բայց դուն անկից բնաւ պիտի չուտես .  
 քու էշդ քու առջևէդ պիտի յափշտակուի , ու  
 քեզի ետ պիտի չտրուի . հօտերդ քու թշնա-  
 միներուդ պիտի մատնուի , ու անոնք քեզի ա-  
 զատող պիտի չըլլայ : Վու տղաքներդ ու աղ- <sup>32</sup>  
 ջիկներդ՝ մէկ ուրիշ ժողովուրդի մը պիտի  
 տրուին , և աչքերդ պիտի տեսնան , ու ամէն  
 օր անոնց վրայ նայելով՝ պիտի մաշին . և ձեռքդ  
 պիտի չհասնի օգնելու : Վու երկրիդ արդիւն- <sup>33</sup>  
 քը ու բոլոր քու աշխատութիւնդ քեզի ան-  
 ծանօթ եղած ժողովուրդ մը պիտի ուտէ , և  
 դուն ամէն օր միայն զըկանք ու ճնշում պի-  
 տի քաշես . Ալ աչքերուդ տեսած բաներէն <sup>34</sup>  
 պիտի խենթենաս : Տէրը քու ծունկերդ ու <sup>35</sup>

- 36 ազդերքդ , ու ոտքիդ թաթէն մինչև գլխուդ  
 գազաթը գէշ պալարներով պիտի զարնէ , ու  
 չկրնաս բռնկուիլ ինչ գանել : Տէրը պիտի տա-  
 նի քեզ՝ և քու վրայդ դրած թագաւորդ՝ ա-  
 նանկ ազգի մը՝ որ ոչ դուն ճանչցած ես , ոչ ալ  
 քու հայրերդ . և հոն օտար աշտուածներու՝ փայ-  
 37 տի ու քարի ծառայութիւն պիտի ընես : Եւ  
 դուն զարմանքի , ու առակի , և կատակի ենթա-  
 կայ պիտի ըլլաս , բոլոր ան ժողովուրդներուն  
 38 մէջը , ուր որ Տէրը քեզ պիտի տանի : Երտիդ  
 մէջը շատ սերմ՝ պիտի ցանես , ու քիչ արդիւնք  
 պիտի ժողովես . քանզի անիկայ մաքախները պի-  
 39 տի ուտեն : Եւ գինեւ պիտի տնկես , ու անոնք  
 պիտի դարմանես , բայց գինին պիտի չխմես , ու  
 անոնք պիտի չժողովես . քանզի անիկայ որդերը  
 40 պիտի ուտեն : Քու ամէն սահմաններուդ մէջը՝  
 ձիթ ենիներ պիտի ունենաս , բայց եղով պիտի  
 չօծուիս . քանզի քու ձիթ ենիներդ իրենց պարտե-  
 41 պիտի թափեն : Տղաքներ ու աղջիկներ պիտի  
 ծնանիս , բայց քուկդ պիտի չըլլան . քանզի ա-  
 42 նոնք գերութեան պիտի երթան : Բոլոր ծա-  
 ւերդ ու երկրիդ պտուղները՝ խառնիճը պիտի  
 43 ուտէ : Չեր մէջը եղող օտարականը՝ քեզմէ գե-  
 րազանց պիտի ըլլայ , և շատ պիտի բարձրանայ ,  
 44 ու դուն շատ վար պիտի իջնաս . Ենիկայ քեզի  
 փոխ պիտի տայ , բայց դուն անոր փոխ պիտի չը-  
 տաս . անիկայ գլուխ պիտի ըլլայ , բայց դուն պոչ

\*Ամ արունքներդ

†Ամ թրթուրը

պիտի ըլլաս : Աւ բոլոր առ անէճքները քու վրայ 45  
 պիտի գան , քեզ պիտի հալածեն , ու քեզի պի-  
 տի հասնին , մինչև որ դուն բնաջինջ ըլլաս .  
 որովհետև քու Տէր Աստուծոյդ խօսքին շա-  
 զանգութիւն չըրիր , և քեզի հրաճայած պա-  
 տուիրանքները ու կանոնները չպահեցիր . Աւ ա- 46  
 նոնք քու վրայ ու քու զաւկներուդ վրայ նը-  
 շան ու հրաշք պիտի ըլլան յաւիտեան : Որով- 47  
 հետև դուն՝ ամէն բանին առատութեանը համար՝  
 ու բարութեամբ և յօժար սրտով քու Տէր Աս-  
 տուծոյդ ծառայութիւն չըրիր , Անոր համար դուն 48  
 անօթութիւնով , ծարաւով , մերկութիւնով , ու  
 ամէն բանի կարօտութիւնով , ծառայութիւն պի-  
 տի ընես քու թշնամին՝ բռն , որոնք Տէրը քու  
 վրայ պիտի խրկէ . և քու վիզը երկսթէ լուծ  
 պիտի դնէ , մինչև որ բնաջինջ ընէ քեզ : Տէ- 49  
 րը քու վրայ հեռուէն՝ երկրիս ծայրէն՝ արծիւի  
 թռչելու պէս մէկ ազգ մը պիտի բերէ . անանկ  
 ազգ մը՝ որ դուն անոր լեզուն չես հասկընար .  
 Պինտերես ազգ մը , որ ձերոց պատիւ պիտի 50  
 չընէ , ու աղայոց վրայ դուժ պիտի չունենայ .  
 Աւ անիկ այ քու անասուններուդ պատուը՝ ու երկ- 51  
 րիդ պտուղը պիտի ուտէ , մինչև որ դուն բնա-  
 ջինջ ըլլաս . որովհետև քեզի ցորեն , գինի , եղ ,  
 կովերուդ ճնուեղները ու սշխարներուդ հօտե-  
 րը պիտի չթողու , մինչև որ բնաջինջ ընէ քեզ .  
 Աւ անիկայ բոլոր քաղաքներուդ մէջը պիտի 52  
 պաշարէ քեզ , մինչև որ կործանեն քու երկրիդ  
 մէջը եղած բոլոր ան բարձր ու պարսպաւոր

- բերդերդ , որոնց դուն ապուխներ ես . և քու ամէն քաղաքներդ պիտի պաշարէ ան երկրին մէջը , որն որ քու Տէր Աստուածդ քեզի կուտայ :
- 53 Աւ պաշարման մէջը , և քու թշնամիներէդ շատ նեղութիւն քաշած ատենդ՝ քու որովայնիդ պըտուղը՝ քու Տէր Աստուծոյդ քեզի տուած տղաք-
- 54 ներուն և աղջիկներուն միտը պիտի ուտես : Չեր մէջը խիտ քնքուշ ու փափուկ մարդը՝ իր եղբորը ու իր ծոցի կնկանը և իր ողջ մնացած զաւ-
- 55 կրներուն ծուռ աչքով պիտի նայի . Արպէս զի իր ուտելու զաւկրներուն միտէն՝ անոնց մէկուն չտայ . քանզի պաշարման մէջը՝ ու քու թշնամիդ ամէն քաղաքներուդ մէջը քեզ խիտ նեղը ձգած
- 56 ատենը՝ ուրիշ բան մը պիտի չմնայ անոր . Չեր մէջը խիտ քնքուշ ու փափուկ եղող կնիկը՝ որ իր փափուկութենէն ու քնքուշ ըլլալէն՝ ոտքը գետնի վրայ կոխելու սորված չէր , իր ծոցի էրկանը , իր
- 57 տղուն , իր աղջկանը , և իր ոտքերուն մէջ տեղէն ելող աղու ընկերին , ու իրմէ ծնած զաւակներուն ծուռ աչքով պիտի նայի . քանզի պաշարման ատենը՝ ու քու թշնամիդ քու քաղաքներուդ մէջը քեզ խիտ նեղած ատենը՝ ամէն բանին պակասելուն համար՝ զանոնք ծածկաբար պիտի ուտէ :
- 58 Թէ որ դուն աս գրքիս մէջը գրուած՝ աս օրէնքիս ամէն խօսքերը զգուշութեամբ չկատարես , և աս՝ Գ Ո Ւ Խ Ի Ը Ո Ս Ե Յ Ե Ո Տ Ո Ւ Ծ Ո Յ Դ պատուական ու սոսկալի անունէն չվախնաս ,
- 59 Տէրն ալ՝ անսովոր հարուածներով , մեծ ու երկարատև հարուածներով , գէշ ու երկայն

Հիւանդութիւններով պիտի զարնէ քեզ և քու  
 զաւակներդ : Ու Եգիպտոսաց բոլոր հիւան- 60  
 դութիւնները՝ որոնցմէ դուն կը վախնաս , անոնք  
 քու վրայ պիտի դարձունէ . ու անոնք քեզի պի-  
 տի փակչին : Ասե աս օրինաց գրքին մէջը 61  
 չգրուած ամէն հիւանդութիւնը ու ամէն հա-  
 բուածը՝ Տէրը քու վրայ պիտի բերէ , մինչև որ  
 դուն բնաջինջ ըլլաս . Աւ քու Տէր Աստուծոյդ 62  
 խօսքին չնազանդութիւն չընելուդ համար , դուք  
 որ՝ շատութեան կողմանէ երկինքի աստղերուն պէս  
 էիք , խիստ սակաւութիւ պիտի մնաք . Աւ ինչ- 63  
 պէս որ Տէրը ձեզի աղէկութիւն ընելով ու ձեզ  
 շատցունելով՝ ձեր վրայ ուրախացաւ , անոնի ալ  
 ձեզ կորսընցունելով ու բնաջինջ ընելով՝ ձեր  
 վրայ պիտի ուրախանայ . և պիտի ջնջուիք ան  
 երկրին վրայէն , ուր որ հիմա կերթաք զանիկայ  
 ժառանգելու . Աւ Տէրը՝ երկրիս մէկ ծայրէն 64  
 մինչև մէկալ ծայրը՝ բոլոր ժողովուրդներուն մէջ  
 պիտի ցրուէ քեզ , ու հոն ծառայութիւն պիտի  
 ընես օտար աստուածներու՝ փայտի ու քարի ,  
 որոնք ոչ դուն ճանչցեր ես՝ իչ ալ քու հայրերդ .  
 Աւ ան ազգերուն մէջը հանգստութիւն պիտի 65  
 չգտնաս , ու ոտքիդ թաթին կենալու տեղ պի-  
 տի չըլլայ . և հոն Տէրը քեզի գողացող սիրտ ,  
 աչքի կուրութիւն , ու հոգիի տրամուծիւն պի-  
 տի տայ . Աւ քու կեանքդ քու առջև կախման 66  
 մէջ պիտի ըլլայ , ու գիշեր ցորեկ պիտի վախ-  
 նաս , և քու կեանքիդ վրայ ապահով պիտի չըլ-  
 լաս . Ու սրտիդ ահ ու դողէն , և աչքերուդ տեսած 67

բաներէն , առաւօտուն պիտի ըսես . Արանի՛ թէ  
 իրիկուն ըլլար , ու իրիկունն ալ պիտի ըսես .  
 68 Արանի՛ թէ առտու ըլլար : Աւ Տէրը նաւերով  
 Ազիպտոս պիտի դարձունէ քեզ ան ճամբայով ,  
 որ ես քեզի ըսի , թէ՛ անիկայ մէյ մըն ալ պի-  
 տի շահնաս . և հոն ծառաներու ու աղախիննե-  
 րու պէս ձեր թշնամիները ձեզ պիտի ծախեն .  
 բայց ծախու առնող պիտի չըլլայ :

Գ Լ . Ի Թ

1 Սոլես հնազանդութեան կըյորդորէ զանոնք , անոնց տե-  
 սած գործքերը յիշատակելով : 10 Ամէնքը կըներկայանան  
 Աստուծոյ առջևը անոր հետ ուխտ ընելու : 18 Իր շարու-  
 թեանը մէջ հանդարտ սրտով կեցողին վրայ գալու բարկու-  
 թիւնը : 29 Ծածուկ բաները Աստուծոյ կըլերարերին :

1 **Ս**ոնք են ան ուխտին խօսքերը , որ Տէրը  
 Սոլեսին հրահայեց՝ Խորայէլի որդւոցը հետ  
 ընելու Սոլարի երկրին մէջը , անոնց հետ Քո-  
 բբի վրայ ըրած ուխտէն զատ :

2 Ուստի Սոլես բոլոր Խորայէլը կանչելով՝  
 անոնց ըսաւ . Ի՞նչ տեսաք ան ամէնը՝ որ Տէրը  
 ձեր աչքերուն առջևը Ազիպտոսի երկրին մէջ  
 ըրաւ Փարաւօնին և անոր բոլոր ծառաներուն ,

3 ու անոր բոլոր երկրին . Այսինքն՝ ան մեծ փոր-  
 ձութիւնները , նշանները ու մեծ հրաշքները ,

4 որոնք զուն քու աչքերովդ տեսար . Աւ Տէրը  
 մինչև այսօր չտուաւ ձեզի անանկ սիրտ մը՝ որ  
 իմանաք , և ո՛չ աչքեր՝ որ տեսնէք , ո՛չ ալ ա-

կանջներ՝ որ լռէք . Ու ես քատուն տարի անա- 5  
պատին մէջ ձեզ պտրտոցուցի , ձեր վրայի լա-  
թերը չհինցան , ու կօշիկներդ <sup>Օ</sup> չմաշեցան . Հայ 6  
չկերպք ու գինի կամ օղի չխմեցիք , որ ճանչ-  
նաք , թէ ես ձեր Տէր Աստուածն եմ : Ու աս 7  
տեղս որ եկաք՝ Ասերունի Սեհուն թագաւորը  
և Բասանի Ուլգ թագաւորը մեր առջևը ելան  
մեզի հետ պատերազմելու , ու մենք զարկինք ա- 8  
նոնք , Աւ անոնց երկիրը առինք , ու անիկոյ  
Ուրբենեանց , Գաղեանց ու Սանասէի կէս ցե- 9  
ղին ժառանգութիւն տուինք : Ուստի աս ուխ-  
տին խօսքերը պահէք ու կատարէք , որ ձեր ա-  
մէն գործքին մէջը յաջողութիւն գանէք :

Այսօր դուք ամէնքդ ձեր Տէր Աստուծոյն 10  
առջևը կրկոյնիք . ձեր †ցեղերուն իշխանները՝  
Տերերը , սօտիկանները ու բոլոր Իորայէի մար-  
գիկները , Չեր աղաքները , կնիկները , ու բա- 11  
նակիդ մէջը եզրղ օտարականդ , քու փայտ կըտ-  
րողէդ մինչև քու ջրկիրդ . Որ այսօր քու Տէր 12  
Աստուծոյդ բեզի հետ ըրած ուխտին ու երգումին  
մէջը մանաս , Որ քեզ այսօր իրեն ժողովուրդ 13  
հաստատէ , և ինքը քու Աստուածդ ըլլայ , ինչ-  
պէս որ քեզի ըսաւ , ու ինչպէս որ քու հայրերուդ՝  
Աբրահամին , Իսահակին ու Յակոբին երգում  
ըրաւ : (Ու ես աս ուխտը և աս երգումը մինակ 14  
ձեզի հետ չեմ ըներ , Հապս այսօր մեզի հետ 15  
մեր Տէր Աստուծոյն առջևը հոս կայնողներուն  
հետը , և այսօր մեզի հետ հոս չեղողներուն հետն

\*ՆԺԴ . քու սօրերէդ չմաշեցան

†ՆԺԵ . ձեր իշխանները , ձեր ցեղերը



- 16 ալ : ) Վանգի դուք գիտէք , թէ ի՞նչպէս բնականցանք Ազխատոսի երկրին մէջը՝ և ի՞նչպէս ան-
- 17 ցանք ան ազգերուն մէջէն՝ որ անցաք . Աւանոնց քովը եղած անոնց գարշելի բաները , և անոնց փայտէ , քարէ , արծաթէ ու ոսկիէ կուռ-
- 18 քերը տեսաք : Չըլլայ որ՝ ձեր մէջը էրիկ մարդկամ կնիկ մարդ , կամ ազգատոհմ , կամ ցեղ մը գանուի , որ իր սիրտը այսօր մեր Տէր Աստուծոյ մէջ խտորեցունելով , երթայ ան ազգերուն աստուածներուն ճառայութիւն ընէ . չըլլայ որ՝ ձեր մէջը թոյն ու դառնութիւն բերող արմատ
- 19 մը գտնուի . Աւ չըլլայ որ՝ մէկը աս անէծքին խօսքերը լսելուն՝ սրտին մէջը իրեն օրհնութիւն տալով՝ ըսէ . Աս իմ սրտիս ցանկութեանն ալ հետեւիմ՝ , ինծի խաղաղութիւն կըլլայ . և այսպէս անիկայ իր ծարուսութեանը վրայ գինովութիւն
- 20 աւելցունէ : Տէրը պիտի շննայէ անոր , ու ան տանը Տէրոջը բարկութիւնը ու նախանձը ան մարդուն վրայ պիտի բորբոքի , և աս գրքիս մէջը գրուած ամէն անէծքը անոր վրայ պիտի իջնայ , ու Տէրը անոր անունը երկինքին տակէն բնա-
- 21 ջինջ պիտի ընէ . Աւ Տէրը աս օրինաց գրքիս մէջը գրուած ուխտին ամէն անէծքներուն համեմատ՝ անոր վրայ չարիք հասցունելու համար
- 22 Խորայէլին բոլոր ցեղերէն պիտի զատէ , Աւ պիտի ըսէ յետագայ ազգը՝ այսինքն ձեզմէ ետքը եղող զաւակներնիդ՝ ու հետեւ երկիրէ եկող օտարականը , երբոր տեսնան ան երկրին հա-

\* Եւր . յամսութեանը մէջ քալիմ

բուսածնեքը , ու անոր հիւանդութիւնները , որ  
 րոնցմով Տէրը զանհկոյ պիտի նեղէ : Ու իբր 23  
 որսնան ինչ բոլոր ան երկիրը՝ ծծումք , աղ ու սյ-  
 րած ըլլալով , հոն բան մը չցանուիր , ու պտուղ  
 մը չբերեր , և խոտ մը չբուսնիր . Սողոմոն , Գո-  
 մորին , Եդմային ու Սերոյիմին աւերմանը պէս ,  
 որոնք Տէրը իր բարկութեամբը ու սրտմտու-  
 թեամբը բնաջինջ ըրաւ . Ու նոսե ամէն ազգե- 24  
 րը պիտի ըսեն . Ինչո՞ւ համար Տէրը աս երկրին  
 սյւպէս ըրաւ . աս մեծ սրտմտութեան ու բար-  
 կութեան պատճառը ի՞նչ է : Աւ անոնց պիտի 25  
 ըսեն . Պատճառը աս է որ անոնք մերժեցին ի-  
 րենց հարցը Տէր Ատուծոյն ուխտը , որն որ  
 անոնց հետը ըրեր էր , զանոնք Ազխպոսէն հա-  
 նած ատենը . Աւ գացին ուրիշ աստուածներու 26  
 ծառայեցին ու անոնց երկրպագութիւն ըրին , ա-  
 նանկ աստուածներու՝ որ իրենք բնաւ չէին ճանչ-  
 ցած , և որ Տէրը որոշած չէր՝ անոնց : Աւ 27  
 պատճառաւ Տէրոջը բարկութիւնը ան երկրին  
 դէմ բորբոքեցաւ , որ աս գրքիս մէջը գրուած  
 ամէն անէծքները անոր վրայ բերէ . Աւ Տէրը 28  
 իր բարկութեամբը՝ սրտմտութեամբը ու մեծ  
 զայրացմամբը զանոնք իրենց երկրէն արմատաբի-  
 խլելով՝ մէկ ուրիշ երկիր մը ձգեց , ինչպէս որ  
 սյսօր իբր որսնան : Ծածուկ բաները մեր Տէր 29  
 Ատուծոյն իբր իբրեւ ինչ , բայց յայտնուած բա-  
 ները՝ միշտ մեզի ու մեր որդւոցը որոստ ինչ ,  
 որ աս օրէնքիս ամէն խօսքերը կատարենք :

\*Սա որոնք բան մը տուած չէին

Գ Լ · Լ

1 Ապաշխարողներուն խոստացուած մեծ ողորմութիւնները :  
 11 Պատուիրանքներուն դիւրիմանալի ըլլալը : 15 Սահմանափակ ժողովուրդին առջևը կը դրուի :

- 1 **Ո**ւ երբոր աս քեզի ցըցուցած բաներս՝ թէ ա-  
 նէճքը և թէ օրհնութիւնը՝ քու վրայ գան ,  
 ու դուն անոնք քու սրտիդ մէջը նորէն յիշես բո-  
 լոր ան ազգերուն մէջը , ուր որ քու Տէր Աս-
- 2 տուածդ քեզ պիտի ցրուէ , Աւ դուն քու Տէր  
 Աստուծոյդ դաննաս՝ և բոլոր սրտով ու բոլոր  
 հոգիով անոր խօսքին նազանդիս՝ թէ դուն և
- 3 թէ քու զաւակներդ , ինչպէս որ ես այսօր քե-  
 զի պատուիրեցի , Քու Տէր Աստուածդ ալ քեզ  
 գերութենէն դարձունելով՝ պիտի ողորմի քեզի ,
- 4 ու նորէն պիտի ժողվէ քեզ ան ամէն ազգերէն ,  
 որոնց մէջը քու Տէր Աստուածդ քեզ ցրուեր էր :  
 Թէ որ մինչև երկինքին ծայրը ցրուած ալ ըլ-
- 5 լաս , քու Տէր Աստուածդ քեզ անկից պիտի ժող-  
 վէ , ու անկից պիտի առնէ քեզ . Աւ քու Տէր  
 Աստուածդ քու հայրերուդ ժառանգած երկիրը
- 6 պիտի դարձունէ քեզ , ու անիկայ պիտի ժառան-  
 գես , և քեզի ազէկութիւն ընելով՝ քու հայրե-  
 րէդ աւելի պիտի շատցունէ քեզ . Աւ քու Տէր  
 Աստուածդ քու սիրտդ ու զաւակներուդ սիրտը
- 7 պիտի թըխատէ , որպէս զի քու Տէր Աստուածդ  
 բոլոր սրտովդ ու բոլոր հոգիովդ սիրես որ ապ-  
 րիս : Աւ քու Տէր Աստուածդ՝ բոլոր աս ա-

նէճքները՝ քու թշնամիներուդ վրայ , քեզ ա-  
 տողներուն ու հալածողներուն վրայ պիտի դար-  
 ձունէ : Եւ դուն պիտի դառնաս , քու Տէր Աս- 8  
 տուծոյդ խօսքին նազանդիս , ու կատարես ա-  
 նոր բոլոր պատուիրանքները՝ որոնք ես այսօր  
 քեզի կը պատուիրեմ . Եւ քու Տէր Աստուածդ 9  
 քու բոլոր ձեռացդ գործքերը՝ որովայնիդ պտու-  
 ղը՝ անասուններուդ պտուղը , ու երկրիդ պտու-  
 ղը շատցունելով՝ քեզի յաջողութիւն պիտի տայ .  
 քանզի Տէրը աղէկութիւն ընելով՝ նորէն պիտի  
 ուրախանայ քու վրայ , ինչպէս որ քու հայրե-  
 բուդ վրայ ուրախացաւ , Երբ որ դուն քու Տէր 10  
 Աստուծոյդ խօսքին նազանդիս , ու աս օրինաց  
 դրքին մէջը գրուած անոր պատուիրանքները ու  
 կ'անոնները պահես , եւ բոլոր սրտովդ ու բոլոր  
 հոգիովդ քու Տէր Աստուծոյդ դառնաս :

Քանզի աս պատուիրանքը որ ես այսօր քեզի 11  
 կը պատուիրեմ , քեզի անիմանալի չէ , ու քեզմէ  
 հեռու ալ չէ : Անիկայ երկինքը չէ , որ ըսես 12  
 թէ , Սեզի համար ո՞վ պիտի ելլայ երկինքը ,  
 եւ անիկայ մեզի պիտի բերէ , որ ըսե՛ք ու ընենք .  
 Եւ անիկայ ծովին ան դի՛ի կողմն ալ չէ , որ ըսես 13  
 թէ , Սեզի համար ծովին ան դի՛ի կողմը ո՞վ  
 պիտի անցնէ , ու զանիկայ մեզի պիտի բերէ ,  
 որ ըսենք ու ընենք . Քանզի աս խօսքը քեզի 14  
 շատ մօտ է , քու բերնիդ ու սրտիդ մէջն է ,  
 որ դուն անիկայ կատարես :

‘Այլ՛ , ես այսօր՝ կեանքը ու բարին , մա- 15  
 հը ու չարը քու առջևդ դրի . Որովհետեւ ես 16

- այսօր քեզի կրպատուիրեմ, որ քու Տէր Աստուածդ սիրես, անոր ճամբաներուն մէջը քալես, ու անոր պատուիրանքները, կանոնները ու դատաստանները պահես, որ սպրիս ու շատնաս, և քու Տէր Աստուածդ քեզ օրհնէ ան երկրին մէջը, ուր որ կերթաս ժառանգելու համար:
- 17 Եւ այց թէ որ սիրտդ դարձունելով նազանդութիւն չընես, ու մօլորելով՝ ուրիշ աստուածներու երկրպագութիւն ընես, ու անոնց պաշտօն մատուցանես, Չեզի այսօր կը ճանուցանեմ, որ անպատճառ պիտի կորսուիք, ու երկան կեանք պիտի չունենաք ան երկրին վրայ, ուր որ մշտնապէս ու անիկայ ժառանգելու համար՝ Յորդանանէն կանցնիք: Այսօր երկիրքը ու երկիրը վըկայ կը բռնեմ ձեզի, որ կեանքը ու մահը, օրհնութիւնը ու անէծքը ձեր առջևը դրի. ուրեմն կեանքը ընտրէ որ սպրիս՝ դուն և քու սնունդդ. Քու Տէր Աստուածդ սիրելով, անոր խօսքին նազանդութիւն ընես ու անոր յարիս, վասն զի քու կեանքդ՝ ու օրերուդ երկայնութիւնը ան է, որ դուն բնակիս ան երկրին վըրայ, որն որ Տէրը քու հայրերուդ՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին երգում ըրաւ անոնց տալու:

## Գ Լ . Լ Ե

1 Մովսէս կը յորդորէ ժողովուրդը , 7 ու Յեսուն : 9 Օրէն-  
քը քահանաներուն կը յանձնէ՝ որ եօթնեցորդ տարիին ժո-  
ղովուրդին ականջին կարգան : 14 Եստուած Յեսուին պա-  
տուէր կուտայ , 19 ու երգ մը՝ որ ժողովուրդին վկայութիւն  
մը ըլլայ : 24 Մովսէս օրինաց զիբքը՝ Վետացոց կը յանձնէ՝  
որ պահեն . 28 ու ծերերուն հրապարակաւ գալու բանե-  
րուն վկայով ծանուցում կընէ :

Եւ Մովսէս գնաց բոլոր Իսրայէլին զրուցեց 1  
աս խօսքերը : Ու անոնց ըսաւ . Ես այսօր 2  
հարիւր քսան տարուան եմ . ալ ելլալու ու մըտ-  
նալու կարողութիւն չունիմ . և Տէրը ինծի ը-  
սաւ . Գուն աս Յորդանանէն պիտի չանցնի՞ս :  
Բու Տէր Եստուածդ ինքը քու առջևդ պիտի 3  
անցնի , ու աս ազգերը քու առջևէդ ինքը պիտի  
կորսընցունէ , և դուն անոնց պիտի յաղթես , ու  
Տէրօջը ըսածին պէս , Յեսուն պիտի անցնի քու  
առջևդ : Եւ Տէրը անոնց այնպէս պիտի ընէ , 4  
ինչպէս որ Եմօրհացոց Սեհոն ու Ովզ թագա-  
ւորներուն և անոնց երկրին ըրաւ , զանոնք  
բնաջինջ ընելով . Եւ Տէրը անոնք ձեր ձեռքը 5  
պիտի տայ , ու դուք իմ բոլոր պատուիրածիս  
պէս պիտի ընէք անոնց : Ու ժողովք , ու քանջ 6  
եղիք , մի՛ վախնաք , ու անոնց առջևէն մի՛ փախ-  
չեք . քանզի քու Տէր Եստուածդ ինքը քեզի  
հետ կերթայ , անիկայ քեզ չթողուր , ու բնա-  
քեզ կրեսէ չձգեր :

Եւ Մովսէս՝ Յեսուն կանչեց , ու բոլոր Իս- 7

- քայլէլին առջևը անոր ըսաւ . Ուժովցիր , ու քաջ  
 եղիր . քանզի աս ժողովուրդը դուն պիտի տա-  
 նիս ան երկիրը , որն որ Տէրը անոնց հայրերուն  
 երգում ըսաւ անոնց տալու . ու անիկայ դուն պիտի
- 8 ժառանգեցունես անոնց : Աւ քու առջևէդ դա-  
 ցողը՝ նոյն լնքն Տէրն է , անիկայ քեզի հետ  
 պիտի ըլլայ , անիկայ քեզ պիտի չթողու , ու  
 քեզ երեսէ պիտի չըձգէ . մի՛ վախնար , ու մի՛  
 զարհուրիր :
- 9 Երդ՝ Մովսէս աս օրէնքը գրեց՝ և անիկայ  
 Տէրոջը ուխտին տալանակը վերցունող Ղևտա-  
 ցի քահանայից , ու Իսրայէլի բոլոր ձերերուն
- 10 տուաւ . Աւ Մովսէս անոնց պատուիրելով ը-  
 սաւ . Ըմէն եօթներորդ տարիին՝ թողութեան
- 11 տարիին ատենը՝ տաղաւարահարաց տօնին , Արբ-  
 որ բոլոր Իսրայէլը կուգայ քու Տէր Աստուծոյդ  
 առջևը երեսնալու , անոր ընտրած տեղը . անա-  
 տենը բոլոր Իսրայէլին առջևը աս օրէնքը պիտի
- 12 կարդասք , որ լինն : † Ժողովեցէք ժողովուրդը ,  
 էրիկները , կնիկները , տղաքները , ու քաղաք-  
 ներդ եզոզ օտարականդ , որ լինն , և սորվելով՝  
 ձեր Տէր Աստուծմէն վախնան , ու աս օրէնքիս
- 13 բոլոր խօսքերը պահեն ու կատարեն . Աւ անոնց  
 չգիտցող տղաքները լսելով , ձեր Տէր Աստուծ-  
 մէ վախնալ սորվին , բոլոր ան օրերուն մէջը , որ-  
 չափ որ պիտի ապրիք ան երկրին վրայ , որն որ  
 ժառանգելու համար Յորդանանէն կանցնիք :

\* ԱԲԲ . կարգաս ,

† ԱԲԲ . ժողովէ՛

Եւ Տէրը Մովսէսին ըսաւ . Ընչա՛ մեռնելու է՞  
 օրերդ մօտեցաւ . Յետո՛ւն կանչէ՛ , ու ժողովքի  
 խորանին մէջը ներկայացէ՛ք , որ անոր պատուէր  
 տամ : Աւաթի Մովսէսը ու Յետո՛ւն դային ժո-  
 ղովքի խորանին մէջը ներկայացան : Եւ Տէրը<sup>15</sup>  
 ամպի սիւնով խորանին մէջը երեցաւ , ու ամպի  
 սիւնը խորանին դրանը վրայ կայնեցաւ : Եւ Տէ-<sup>16</sup>  
 րը Մովսէսին ըսաւ . Ընչա՛ դուն քու հայրերուդ  
 հետ պիտի ննջես , ու աս ժողովուրդը պիտի ել-  
 լայ , ու իր գացած երկրին օտար աստուածնե-  
 րուն ետեէն երթալով՝ շնութիւն պիտի ընէ ,  
 և զես պիտի թողու ու իրեն հետ ըրած ուխտս  
 պիտի խափանէ : Եւ ան օրը իմ բարկութիւնս<sup>17</sup>  
 անոնց վրայ բոլորօքելով՝ զանոնք պիտի մերժեմ ,  
 ու երեսս անոնցմէ պիտի զարձուենեմ , ու բնա-  
 ջինջ պիտի ըլլան . և շատ հարուածներու ու  
 նեղութիւններու հանդիպելով՝ ան օրը պիտի  
 ըսեն . Մեր Ըստուածը մեր մէջը չըլլալուն հա-  
 մար չէ՞ որ մենք աս նեղութիւնները կը քաշենք :  
 Եւ ան օրը՝ ես իմ երեսս բոլորովին պիտի ծած-<sup>18</sup>  
 կեմ , անոնց ըրած բոլոր շարութեանը համար ,  
 որովհետեւ ուրիշ աստուածներու դարձան :  
 Աւաթի հիմա աս երգը գրեցէ՛ք , ու Խորայէլի<sup>19</sup>  
 որդւոցը սորվեցուցէ՛ք , անիկայ անոնց բերանը  
 գնելով , որպէս զի աս երգը Խորայէլի որդւոցը  
 մէջ ինձի վկայութեան համար ըլլայ : Քանզի<sup>20</sup>  
 անոնք պիտի տանիմ ան կաթ ու մեղր բղտոյ  
 երկիրը , որուն համար ես անոնց հայրերուն կը-



- գում ըրի . և անոնք պիտի ուտեն ու կշտա-  
 նան և գիրնան . ու ետքը ուրիշ աստուածնե-  
 րու գառնալով և անոնց ծառայութիւն ընե-  
 րով , զիս պիտի սրդողցունեն ու իմ ուխտս պի-  
 21 տի խափանեն : Իսկ երբոր անոնք շատ հա-  
 րուածներու ու նեղութիւններու հանդիպին ,  
 աս երգը անոնց առջևը վկայութիւն պիտի տայ .  
 որովհետև անոնց զուակներուն բերնէն պիտի  
 չմոռցուի . վասն զի իմ երգումով խոստացած  
 երկիրս զանոնք չտարած , ես այսօր անոնց չար  
 22 խորհուրդը գիտեմ : Ուստի Մովսէս նոյն օրը  
 աս երգը գրեց , ու Խորայէլի որդւոցը սորվե-  
 ցուց անիկայ :
- 23 Եւ Տէրը 'Նաւէի որդին Յեսուին պատուի-  
 րելով ըսաւ . Օջորացիր ու քանջ եղիր . քանզի  
 Խորայէլի որդիքը դուն պիտի տանիս ան երկի-  
 րը , որուն համար անոնց երգում ըրի . ու ես  
 քու հետդ պիտի ըլլամ :
- 24 Ու երբոր Մովսէս աս օրէնքին բոլոր խօսքե-  
 25 րը մէկ գրքի մը մէջ գրեց լմնցուց , Տէրոջը  
 ուխտին տապանակը վերցունող Ղևտացիներուն  
 26 պատուիրեց Մովսէս ու ըսաւ . Ես օրէնքին գիր-  
 քը առէք , ու անիկայ ձեր Տէր Եստուծոյն ուխ-  
 տի տապանակին քովը դրէք , որ հոն քեզի դէմ  
 27 վկայութեան համար ըլլայ . Քանզի ես քու ա-  
 պատամբութիւնդ , ու քու պարանոցիդ խստու-  
 թիւնը գիտեմ . ահա այսօր որ տակաւին ես ձե-  
 ղի հետ ողջ եմ , դուք Տէրոջը դէմ ապատամ-  
 քութիւն կընէք , ալ որքան աւելի իմ մեռնե-

լէս ետքը : Չեր ցնդերուն բոլոր ձերերը՝ ու 28  
 ձեր ոստիկանները իմ առջև ժողովեց՝ք , որ ա-  
 նոնց աս խօսքերը զրուցեմ , որ լսեն . և երկին-  
 քը ու երկիրը վկայ բունեմ անոնց . Վանգի գի- 29  
 տեմ որ իմ մեռնելէս ետքը՝ գուք անշուշտ <sup>օ</sup>ան-  
 օրէնութիւն պիտի ընէք՝ , ու իմ պատուիրած  
 ճամբայէս պիտի խոտորիք . ու ետքի օրերը չա-  
 րիքներու պիտի հանգիպիք . որովհետև Տէրօջը  
 առջևը չարութիւն պիտի ընէք , ու ձեր ձեռ-  
 քերուն գործքերովը զանիկայ պիտի սրդողցու-  
 նէք : Ուստի Մովսէս աս երգին խօսքերը ՚ամ- 30  
 բողջ զրուցեց , ու Խարայէլին բոլոր ժողովուրդը  
 ականջ կը դնէր՝ :

## Գ Լ . Լ Բ

1 Եստուծոյ ողորմութեանը ու վեճիմեղբութեանը վրայով  
 Մովսէսին երգը : 46 Մովսէս կը յորդորէ ժողովուրդը որ Խ-  
 բենց սիրտը ասոր վրայ դնեն : 48 Եստուած՝ Նարաւ լեռը  
 կը խօսէ Մովսէսը , որ երկիրը տեսայ , ու մեռնի :

Ո՛վ երկինք ականջ դրէք՝ որ խօսիմ . 1  
 Ու երկիրը իմ բերնիս խօսքերը թող մա՛կ  
 ընէ :

Իմ խրատս անձրևի պէս պիտի կաթի , 2  
 Իմ խօսքս ցօղի նման պիտի իջնայ ,  
 Ենձրևի պէս կանանչեղէնի վրայ ,  
 Ու առատ անձրևներու պէս խոտի վրայ .

\*Նէր . պիտի ապահանիք

†Նէր . Խարայէլն բոլոր ժողովուրդին ականջներուն ամբողջ  
 զրուցեց

- 3 Քանզի Տէրոջը անունը պիտի կանչեմ .  
 Մեր Ետուծոյն պատիւ տուէք :
- 4 \*Ետուծոյ գործը կատարեալ է .  
 Քանզի անոր ամէն ճամբաները՝ իրաւունք են .  
 Ետուած հաւատարիմ է , ու անիրաւութիւն  
 չունի .  
 Ընկիայ արդար ու ուղիղ է :
- 5 Եւոն\* անոր առջևը †անօրէնութիւն գործեցին՝ .  
 Ընոնց արատը՝ անոնց որդւոցը չէ՛ .  
 Ըսկիայ մէկ խոտորած ու ծռած ազգ մըն է :
- 6 Տէրոջը ըրած հատուցումնիդ ատկեա՛յ է .  
 Ո՛վ յիմար ու անմիտ ժողովուրդ՝  
 Ընկիայ քու հայրդ չէ՞ , որ քեզ ստացաւ ,  
 Քեզ ստեղծեց , ու քեզ հաստատեց :
- 7 Հին օրերը մի՛տքդ բեր .  
 Ընցած դարերուն տարիները մտմտա՛ .  
 Քու հօրդ հարցո՛ւր ու թո՛ղ քեզի պատմէ ,  
 Ու ճերերուդ հարցո՛ւր ու թո՛ղ քեզի ըսեն .
- 8 Երբոր Բարձեալ Եսոսո՞ւջը ազգերուն ժա-  
 ոանդութիւն բաժնեց ,  
 Ու Եգամի որդիքը տարածեց ,  
 Եզգերուն սահմանները  
 Իտրայէլի որդւոց թուովը դրաւ .
- 9 Քանզի Տէրոջը բաժինը իր ժողովուրդն է ,  
 Ու իր ժառանգութեան վիճակը՝ Յակոբն է :
- 10 Օգանկիայ՝ անկոխ , ահազին ու ամայի

\*Եւոն . վէժն

†Եւոն . ապականեցաւ .

Ընապատի մէջ <sup>Պ</sup>գտաւ .

Չանկիկայ պաշտպանեց , խրատեց ,  
Ու իր աչքին բիրին պէս պահեց :

11

Ինչպէս որ արծիւը իր բոյնը կը գրգռէ ,  
Կըշարժի իր ձագերուն վրայ ,  
Թեւերը կը տարածէ ,  
Ու զանոնք վրան կառնէ ; ու թեւերովը կը  
վերցունէ .

12

Ընանկ ալ Տէրը միայն զանկիկայ պաշտպուց ,

Ու անոր հետը օտար աստուած չկար :

13

Օանկիկայ երկրիս բարձր տեղերուն վրայ † հա-  
նեց ,

Որ արտերուն պտուղը ուտէ .

Ու անոր՝ վէմէն մեղը ,

Ու ապառաժ վէմէն՝ եղ ճճեւ տուաւ .

Ընոր՝ կովերուն իւղը , ու ոչխարներուն կաթը <sup>14</sup>  
կերցուց .

Պառներուն , ու Խաասնի խոյերուն , և նա-  
խազներուն ճարպովը ,

Ու ցորենին ընտիր ալիւրովը .

Եւ խաղողին արիւնը՝ գինին խմեցիր :

15

Ու <sup>\*\*</sup>Խորայէլը գերնալով աբացեց .

(Գիրցար , հասարցար , եղ կապեցիր .)

Ու իր Երօրիչ Եստուածը թողուց ,

Եւ իր փրկութեան Վէմը արհամարհեց :

\*Ստ՝ հողաց .

†Եբ . հեծցուց ,

\*\*Եբ . Եստերունը

16 Օտար ~~աստուծո~~ շներով անոր նախանձը գրո-  
գուցին ,

Ու գարշելի բաներով զանիկայ սրդողջուցին :

17 Գեերուն զոհ մատուցին , և ոչ Աստուծոյ .

Իրենց չգիտցած աստուածներուն ,

‘Սոր’ ու մօտերս եկողներուն ,

Որ ձեր հայրերը անոնցմէ չվախցան :

18 Գուն քեզ ճնող Վէմը մոռցար ,

Ու քեզ ստեղծող Աստուածը միտքէդ հանեցիր :

19 Եւ Տէրը տեսնալով զուեցաւ ,

Որովհետեւ իր տղաքները ու աղջիկները զէն-  
քը սրդողջուցին .

20 Ու ըսաւ . Անոնցմէ երես ծածկեմ ,

Ու տեսնեմ թէ անոնց վերջը ի՞նչ պիտի ըլլայ .

Վասն զի անոնք ծուռ ազգ մըն են ,

Անհաւատ որդիներ են .

21 Անոնք չաստուածներով իմ նախանձս գրգուցին ,

Ու իրենց սնտոի բաներովը զիս սրդողջուցին .

Ես ալ անպիտան ժողովրդով մը անոնց նախան-  
ձը պիտի գրգուեմ ,

Ու անմիտ ազգով մը զանոնք պիտի սրդող-  
ջունեմ .

22 Բանգի իմ բարկութենէս կրակ վառեցաւ ,

Ու դժոխքին մինչև ներքին տեղուանքը պի-  
տի այրէ .

Գետինը , և անոր արմտիքը պիտի ուտէ ,

Ու լեռներուն հիմերը պիտի բռննկցունէ :

23 Անոնց վրայ չարիքներ պիտի դիզեմ ,

- Իմ նետերս անոնց վրայ նիւթէլուլ պիտի հատ-  
ցունեմ :
- Ընթաթութենէ պիտի մաշին , 24  
Ու ջերմախտութենէ և դառն ժանտախտէ  
պիտի հատնին ,  
Ու անոնց վրայ դազաններու ակռաները ,  
Ու երկրի վրայ սողացողներուն թոյնը պիտի  
խրկեմ :
- Գուրսէն սուրը , ու <sup>25</sup> ներսէն վախը՝ 25  
Նրիտասարդները ու կոյս աղջիկները ,  
Կաթնիկեր տղաքները ,  
Ու ալեօր ծերերը պիտի ջարդեն :
- Ըսի որ , զանոնք աշխարհիս ամէն կողմը ցրուեմ , 26  
Ընոնց յիշատակը մարդոց մէջէն վերցունեմ ,  
Սխայն թէ թշնամիին բարկութենէն վախցայ , 27  
Չըլլայ որ՝ անոնց հակառակորդները հպար-  
տանան •
- Չըլլայ որ ըսեն , թէ՛ բոլոր սա բանը ընողը  
Սեր բարձր ձեռքն է , և ոչ թէ՛ Տէրը :  
Քանզի անոնք խորհրդակորոյս ազգ մըն են , 28  
Ու անոնց մէջ իմաստութիւն չկայ :
- Նրանի՛ թէ իմաստուն ըլլային , ու սա բանը 29  
հասկընային ,  
Եւ իրենց վախճանը մտմտային :
- Սէկ մարդ մը հազարը ի՞նչպէս կը հալածէր , 30  
Ու երկու մարդ տասը հազարը ի՞նչպէս կըր-  
նար փախցունել ,

Թե որ անոնց վէճը զանոնք չճախէր ,

Ու Տէրը զանոնք չմատնէր :

31 Քանզի անոնց վէճը մեր վէճին պէս չէ ,

Ու մեր թշնամիները աս բանիս դատաւոր ըլ-  
լան :

32 Ինչու որ անոնց որթը Սողոմի որթէն է ,

Ու Գոմօրի արտէն է .

Ընոնց խաղողները \*լեղի խաղող է ,

Ու անոնց ողկոյզները դառն են .

33 Ընոնց գինին վեշապներուն բարկութիւնը՝

Ու իժերուն մահառիթ թոյնն է :

34 Եսիկայ իմ քովս շտեմարաններուս մէջը

կնքուած ու պահուած չէ՞ արդեօք .

35 Իմն է վրէժխնդրութիւնը ու հատուցումը .

Ընոնց ոտքը ատենօք պիտի գլորի .

Ինչու որ անոնց կորստե սն օրը մօտ է ,

Ու անոնց գլխուն գալիքները պատրաստ են :

36 Քանզի Տէրը իր ժողովուրդը պիտի դատէ ,

Ու իր ծառաներուն վրայ պիտի գծայ ,

Որովհետեւ կըտեսնայ անոնց տկարութիւնը ,

Երբոր գոցուած ու ձգուած չկայ .

37 Եւ պիտի ըսէ . Ո՛ւր են անոնց աստուածները ,

Ըն վէճը , որուն վրայ իրենց յոյօը դրեր էին ,

38 Ընոնց զոհերուն ճարպը ուտողները ,

Ու թափելու նուէրներուն գինին խմողները ,

Թո՛ղ ելլան ու ձեզի օգնեն .

Եւ ձեզի թիկունք ըլլան :

39 Իմն նայեցե՛ք , որ †միայն Ե Ո Ե Մ<sup>ն</sup>

\*Ս-է թուանաւոր

†Նքր . ես՝ ես եմ

Ու ինձմէ ուրիշ Եօտուած չկայ .

Ես կրմեոցունեմ, ու ես կապրեցունեմ,

Ես կըզարնեմ, ու ես կըբժշկեմ,

Ու իմ ձեռքէս ազատող մը չկայ :

Քանզի ձեռքս երկինքը վերցունելով կըսեմ . 40

Ես յաւիտեան կենդանի եմ .

Թէ որ փայլակի պէս սուրս սրեմ, 41

Ու ձեռքս դատաստանի երկընցունեմ,

Իմ թշնամիներուս վրէժխնդրութիւն պիտի ընեմ,

Եւ զիս առողներուն հատուցում ընեմ :

Սպաննուածներուն ու զերիններուն արիւնէն՝ 42

Թշնամեաց իշխաններուն գլխէն՝

Իմ նետերս արիւնով պիտի արբեցունեմ,

Ու իմ սուրս միս պիտի ուտէ :

Ով ազգեր՝ անոր ժողովուրդին ուրախակից եղիք, 43

Քանզի իր ծառաներուն արեան վրէժը պիտի խնդրէ ,

Իր թշնամիներէն վրէժ պիտի առնէ ,

Եւ իր երկրին ու ժողովուրդին քաւութիւն պիտի ընէ :

Ուստի Մովսէս՝ Վաւէի տղուն Յեսուին հետեւ 44

տը եկաւ , ու սա երգին բոլոր խօսքերը ժողովուրդին ահանջներուն զրուցեց : Ու երբոր Մովսէս սա խօսքերուն ամէնը Խարսյէլին զրուցեց

լմէնցուց , Ենոնց ըսաւ . Չեր սրտին մէջը դրէք 46

ամէն սն խօսքերը՝ որոնք այսօր ձեզի վկայութիւն բերի . որ անոնք ձեր տղոցը պատուի-



րէք որ աս օրէնքիս ամէն խօսքերը պահեն ու  
 47 կատարեն : Քանզի ասիկայ ձեզի պարապ բան  
 մը չէ . որովհետեւ ձեր կեանքն է . ու աս բանովը  
 երկայնակեաց պիտի ըլլաք ան երկրին վրայ , ո-  
 րուն համար Յորդանանէն կանցնիք՝ անիկայ ժա-  
 ոանդելու :

48 Եւ Տէրը նոյն օրը խօսեցաւ Վովսէսին՝ ու ը-  
 49 սաւ . Ետ Երարիմ լեռը ելի՛ր՝ Վովսէի երկրին  
 մէջը եղող Արեփովին գիմացի՝ Աարաւ լեռը , ու  
 տես Քանանու երկիրը , որն որ Իսրայէլի որդ-  
 50 ւոցը կալուածք պիտի տամ . Եւ դուն ան քու  
 ելած լեռանդ վրայ մեռնի՛ս , ու քու ժողովուր-  
 դիդ խառնուիս , ինչպէս որ քու Եհարօն եղ-  
 51 ղովուրդին խառնուեցաւ . Որովհետեւ Իսրայէլի  
 որդւոցը մէջ՝ Սին անապատը , Աագեսի հսկա-  
 ոակութեան ջուրերուն վրայ՝ ինծի դէմ անձա-  
 ղանդ եղաք . քանզի Իսրայէլի որդւոցը մէջ զիս  
 52 չփառաւորեցիք : Ուստի ան երկիրը † հետուէն  
 պիտի տեսնաս . բայց դուն հոն պիտի չմտնաս ,  
 ան երկիրը , որ ես Իսրայէլի որդւոցը կուտամ :

\* Եբ . ջուրեցիք :

† Եբ . գիմացն :

## Գ Լ . Լ Գ

1 Եստուծոյ վնհափառութիւնը : 6 Տաներկու ցեղերուն օրհնութիւնները : 26 Խորայէլի երջանկութիւնը :

Եւ աս է օրհնութիւնը՝ որով Եստուծոյ մար- 1  
դը Սովսէս իր մեռնելէն առաջ Խորայէլի 2  
որդիները օրհնեց : Ու ըսաւ .

Տէրը Սինայէն եկաւ ,

Ու Սէիբէն անոնց երեցաւ ,

Եւ Փառան լեռնէն փայլեցաւ ,

Ու բիւրաւոր սուրբերով եկաւ .

Եւ անոր աջ ձեռքէն՝ օրինաց կրակը շլա- ա-  
նոնց :

Եւ յի՛ , անիկայ ժողովուրդները կրօիրէ . 3

Բոլոր սուրբերը քու ձեռքդ են .

Ու անոնք քու խօսքերդ ընդունելու համար ,

Բու ոտքերդ կընստին :

Սովսէս մեղի տուաւ օրէնքը , 4

Որ՞ որ Յակոբին ժողովրդեանը ժառանգու-  
թիւնն է :

Ու հրբոր ժողովուրդին գլխաւորները 5

Խորայէլի ցեղերուն հետ մէկտեղ ժողովուեցան ,

Ինքը \* Խորայէլի իշխան՝ եղաւ :

Սուրէնը թող ապրի ու չմեռնի , 6

Եւ անոր ժողովուրդը շատուր ըլլան :

Եւ Յուդային համար աս բանը ըսաւ . 7

\* Եբր . Յեսուրունի թագաւոր

Ո՛վ Տէր՝ Յուդային ձայնը լսէ՛ ,  
 Ու զանիկայ իր ժողովուրդին տա՛ր .  
 Ընոր ձեռքերը իրեն բաւական ըլլան ,  
 Եւ անոր թշնամեացը դէմ՝ օգնական եղի՛ր :

8

Ու Ղ Լ ինն համար ըսաւ .  
 Քու թուովմի՞դ ու Ուրիմի՞դ քու սուրբ մարդուդ  
 ըլլայ ,  
 Որ զանիկայ Մասայի մէջ փորձեցիր ,  
 Ու Մերիսայի ջուրին վրայ անոր հետ վիճե-  
 ցար :

9

Ըն որ իր հօրը ու մօրը համար՝  
 Չանիկայ չտեսայ ըսաւ ,  
 Եւ իր եղբայրները չճանչցաւ ,  
 Ու իր որդիքը չգիտցաւ .  
 Արովհետեւ անոնք քու խօսքիդ զգուշութիւնը  
 ըրին ,

Ու քու ուխտդ պահեցին :

10

Քու դատաստաններդ Յակոբին ,  
 Եւ քու օրէնքդ Խարայէլին անոնք պիտի սոր-  
 վեցունեն .

Քու առջևդ խունկ՝

Ու քու սեղանիդ վրայ ողջակէզ պիտի մա-  
 առցանեն :

11

Ո՛վ Տէր՝ անոր զօրութիւնը օրհնէ՛  
 Ու անոր ձեռքին գործքը ընդունէ՛ .  
 Ընոր վրայ ելողներուն , ու անոր թշնամիներու  
 մէջքը կտարէ՛ ,  
 Որ մէյմըն ալ չեւան :

Բենիամինին համար ըսաւ .

12

Տէրոջը սիրելին՝

Ընոր քովը ապահովութեամբ բնակի .

Եւ անոր օուսերուն մէջը բնակի :

Ու անոր օուսերուն մէջը բնակի :

Ու Յովսէփին համար ըսաւ .

13

Ընոր երկիրը Տէրոջմէն օրհնուած ըլլայ ,

Երկինքին ընտիր պարգևներովը , ցօղովը ,

Ու վարի ջուրերուն անդունդներովը ,

Եւ արեգակէն յառաջ եկած ընտիր բերքերովը , 14

Ու խամիսներուն ընտիր արդիւնքներովը :

Եւ հին լեռներուն շէնտիր պտուղներովը՝ , 15

Ու մշանջինաւոր բլուրներուն ընտիր պարգևներովը ,

Եւ երկրիս ու անոր առատութեանը ընտիր պարգևներովը .

Սորենիին մէջը բնակողին բարեհաճութիւնը

Յովսէփին գլխուն վրայ ,

Ու անոր եղբայրներուն մէջ երեւելի եղողին

գազաթին վրայ թնոյ գոյ :

Ընկեայ իր ցուլին առջինեկին պէս գեղեցկու 17

թիւն ունի ,

Ու իր եղջիւրները միեղջերուի եղջիւրներուն

կէսնանի .

\* Եւստ սահմաններուն

† Եւստ . լուսիններուն

‡ Եւստ . գլխովը ,

Ենանցմով պիտի զարնէ ժողովուրդները

Մինչև երկրիս ծայրերը .

Եսոնք են Եփրեմին բիւրաւորները ,

Ու Սանասէին հազարաւորները :

18 Եւ Չարուղոնին համար ըսաւ .

Ուրախացի՛ր ո՛վ Չարուղոն՝ քու ելած ատենդ ,

Ու դուն ո՛վ Խտաքար քու վրաններուդ մէջը :

19 Ժողովուրդները լեւը հրաւիրելով՝

Հոն արդարու թեան զոհեր պիտի մատուցանեն .

Քանզի անոնք ծովերուն առատութիւնը

Ու աւազին ծածուկ գանձերը պիտի ծծեն :

20 Ու Գադին համար ըսաւ .

Գադը ընդարձակողը օրհնեալ ըլլայ .

Սատակ առիւծի պէս կընստի ,

Ու թեեր և գլուխներ կը փատատէ .

21 Եւ անիկայ՝ Էփրեմ առաջին մասը իրեն յարձաք  
տեսաւ .

Քանզի հոն՝ Օրէնագիրին արտաբերութիւնին

մէջը պահուեցաւ ,

Եւ ժողովուրդին գլխաւորներովը գալով՝

Տէրոջը արդարութիւնը ու անոր դատաս-  
տանները

Իտրայէլի հետ ՚ի գործ գրաւ :

22 Եւ Գանին համար ըսաւ .

Գանը առիւծի ձագ է .

Ենիկայ Բասանէն պիտի ցաթկէ :

Ու Նեփթաղիմին համար ըսաւ .

Նեփթաղիմը Լստուծոյ շնորհքովը կշապցած ,

Եւ Տէրոջը օրհնութիւնովը լցուած ,

Երեմուտքը ու հարաւը պիտի ժառանգէ :

Ու Եսերին համար ըսաւ .

Եսերը որդւոցմէ օրհնուի ,

Իր եղբայրնե՛րուն հաճոյ ըլլայ ,

Ու ոտքը եղի մէջ թաթխէ :

Քու \*կօշիկներդ երկատէ ու պղինձէ ըլլան ,

Եւ քու ուժդ քու օրերուդ չափ ըլլայ :

Իսրայէլի Լստուծոյն պէս չկայ .

Ընկիայ քեզի օգնութիւն ընելու համար ,

Իր մեծ վայելչութեամբը երկինքներու ,

Ու ամպերու վրայ կընստի :

Յաւիտենական Լստուածը †-դէ ապաւէն է ,

Ու անոր յաւիտենական բազուկները † †-դէ

պաշտպան են .

Քանզի թշնամիները քու առջևէդ պիտի վաքնտէ ,

Ու Օչանոն\* կոտրէ , պիտի ըսէ .

Եւ Իսրայէլը ապահովութեամբ առանձին պիտի

ընակի .

Յակորին աղբիւրը ցորենի ու գինիի երկրին

մէջ պիտի ըլլայ ,

Ու անոր երկինքէն ցօղ պիտի կատի :

Երանի՛ քեզ ո՛վ Իսրայէլ . ո՞ր ժողովուրդը քե -

զի պէս

\*Ու՛մ կղպակներդ

†Եբբ . տակն են .

Տէրոջը ձեռքովը պաշտպանուած է .  
 Սան զի քու օգնութեանդ վաճանք  
 Ու յաղթութեանդ սուրը անիկայ է .  
 Գուն քու թշնամիներուդ պիտի յաղթես  
 Ու անոնց բարձր տեղուանքը պիտի կոխես :

## ԳԼ . ԼԳ

1 Մովսէս Կարաւ լեռնէն երկիրը կը գննէ, 5 ու հոն կը վախ-  
 Խանի : 6 Ընոր թաղումը, 7 ու կենացը օրերը : 8 Դողո-  
 վուրդը երեսուն օր սուգ կը բռնէ անոր համար : 9 Յետոն  
 անոր տեղը կը յաջորդէ : 10 Մովսէսին զովարանութիւնը :

- 1 **Եւ** Մովսէս Մովարի դաշտերէն՝ Կարաւ լե-  
 րանը վրայ Երիքովին գիմացի փասգային  
 դադաթը ելաւ . և Տէրը անոր ցըցուց բոլոր  
 2 Գաղաադի երկիրը մինչև Գանը, Կաւ բոլոր  
 Կեփթաղիմին ու Եփրեմին ու Մանասէին եր-  
 կիրը, և բոլոր Յուդային երկիրը մինչև արև-  
 3 մտեան ծովը, Եւ հարաւային կողմը, ու Ե-  
 րիքովի հովիտին դաշտը, ու արմաւենեաց քա-  
 4 ղաքը մինչև Սեգովը : Եւ Տէրը անոր ըսաւ .  
 Ըսէ ան երկիրը՝ որուն համար Եբրահամին, Ի-  
 սահակին ու Յակոբին երգում՝ ըրի ու ըսի,  
 թէ՛ Քու զաւակներուդ պիտի տամ անիկայ .  
 ահա անիկայ քու աչքերուդ ցըցուցի . բայց դուն  
 հոն պիտի չանցնիս :
- 5 Ուստի Տէրոջը ծառան Մովսէս՝ հոն Մովարի  
 6 երկրին մէջ Տէրոջը ըսածին պէս՝ մեռաւ . Եւ  
 զանիկայ Բեթփեգովըին գիմացը՝ Մովարին եր-

կիրը՝ ձորի մը մէջ թաղեց . ու մինչև աս օրս  
անոր գերեզմանը մարդ մը չգիտցաւ : Այլ Մովսէս 7  
սէս իր մեռած ատենը հարիւր քսան տարեկան  
էր . անոր աչքերը բնաւ չտկարացան , ու անոր  
ոյժը չգնաց : Այլ Իսրայէլի որդիքը Մովսէսի 8  
դաշտերուն մէջը՝ Մովսէսին համար երսուն օր  
լացին . ու Մովսէսին համար սուգի լացի օրերը  
լմրնցան :

Այլ՝ Եսաէի որդին Յեսուն խնաստութեան հո- 9  
գիով լցուեցաւ , որովհետև Մովսէս իր ձեռքե-  
րը անոր վրայ դրեր էր . ու Իսրայէլի որդիքը  
անոր շնորհակցութիւն ըրին , և Տէրը ինչ որ  
Մովսէսին պատուիրեր էր , անանկ ըրին :

Այլ անկից ետքը Տէրոջը երես առ երես ճանչ- 10  
ցած Մովսէսին պէս՝ Իսրայէլի մէջ մարգարէ մը  
չելաւ , Բոլոր ան նշաններով ու հրաշքներով , 11  
որ Տէրը խրկեց զանիկայ Ագիպտոսի երկրին  
մէջը ընելու Քարաւօնին ու անոր ամէն ծառա-  
ներուն և անոր բոլոր երկրին , Աւ բոլոր ան 12  
զօրաւոր ձեռքով և մեծ ստեղծումով՝ որ Մովսէս  
ըրաւ բոլոր Իսրայէլին աչքին

առջևը :



# ԱՐԻՊԵԿ

Ե Ր Ե Ս	Տ Թ Ղ	Ս Խ Ե Լ	Ո Ի Ղ Ի Ղ
13 .	21 .	իննսունըհինգտարի	իննսունըհինգ տարի
17 .	1 .	տեսակ ն	տեսակին
23 .	22 .	ուխաբ	յաւխտենական ուխաբ
26 .	5 .	Վճաթացին	Վճաթացին
30 .	16 .	բոլբ	բոլբ
39 .	18 .	աղախին	Եղիպտացի աղախին
49 .	27 .	աղ ջկդ	աղ ջկդ
74 .	25 .	զբաւ	զբաւ
75 .	1 .	Ստրով	Ստրովթ
103 .	2 .	բոնութեան	բոնութեամբ
158 .	22 .	ճոխի բ ըբէբ	ճոխի կ ըբէբ
176 .	5 .	ցասաբ	ցամաբ
11 .	13 .	ու նոցողք	ունեցողք
247 .	14 .	պխտի ,	պխտի
249 .	26 .	անոնց	անոբ
253 .	17 , 18 .	վը-բաց	վը-բայ
290 .	24 .	կամիրեն	կարմիրեն
304 .	5 .	այնին	այնին
340 .	20 .	վըայ	վըայ
348 .	2 .	անոբ	անոբ
358 .	6 .	պ տի	պիտի
385 .	13 .	օրբ	մօրբ
390 .	23 .	տղան	տղան
398 .	27 .	ոբ	նոբ
408 .	1 .	սուբբ .	սուբբ
409 .	23 .	Վճի նադարին որդի	Վճինադարին որդին
426 .	23 .	որդին ալ	որդին ալ
475 .	5 .	հարին	հարիւբ
503 .	12 .	ինչի բ	ինչի բ
504 .	16 .	դաշտին մէջ	դաշտին մէջ
510 .	17 .	Եղիպտար	Եղիպտար քահանան
512 .	22 .	հինգ	հինգ

Ե Ր Ե Ս	Տ Ո Վ.	Ե Ի Յ Լ.	Ո Ի Վ. Ի Վ
529 .	15 .	ռրդւոց	ռրդւոց
530 .	5 .	մարդիկնե-	մարդիկնե-
547 .	8 .	կանգուն	կանգուն
564 .	21, 22 .	Յա-յիբ	Յա-յիբ''
563 .	23 .	ժամանակին՝	ժամանակին՝
570 .	1 .	կուռք	կուռք
581 .	25 .	31	13
588 .	3 .	հաց	հաց
593 .	25 .	Եղիպտացւոց	Եղիպտացւոց
648 .	27 .	դունամէն	դուն ամէն .
654 .	16 .	Խորայէլի	Խորայէլի
665 .	19 .	Բարձրեալ	Բարձրեալ
669 .	28 .	նայեցէ՛ք	նայեցէ՛ք









